Վ. Ղազախեցյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1929-1937

ԵՐԵՎԱՆ

Սասնայ Ս.

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

В. Н. КАЗАХЕЦЯН

ИСТОРИЯ КОЛХОЗНОГО КРЕСТЬЯНСТВА АРМЕНИИ (1929—1937)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Ն. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (1929—1937)

Ա 61580
6442

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐՍԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978

9 (С 43) 2
Ղ 15

Աշխատությունը ներկայացնում է Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության ձևավորման պատմությունը։ Կարևոր տեղ է հատկացված գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, դասակարգային պայքարի, կուլակության վերացման, գյուղի քաղաքական-կուլտուրական կյանքի, կոլտնտեսային աշխատավորության սոցիալիստական վերադաստիարակության հարցերին։

Պատասխանատու խմբագիր
Պատմական գիտությունների թեկնածու
Գ. Մ. ԴԵՂԱՄՅԱՆ

Գիրքը նրատարակության են նրաշխավորել գրախոսներ՝
պատմ. գիտ. դոկտոր-պրոֆեսորներ Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆԸ և
Կ. Ս. ԽՌԻԴԱՎԵՐԴՅԱՆԸ

Ղ $\frac{10604}{703\ (02)-78}$ 33—78 © *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978*

ԱՌԱՋԱԲԱՆ

Սովետական կոլտնտեսային գյուղացիությունը, որի անբաժան աղբյուրն ջոկատներից է և Սովետական Հայաստանի գյուղացիությունը, ունի հարուստ և հերոսական պատմություն։ Դա սովետական գյուղի սոցիալիստական վերափոխման, կոլտնտեսային գյուղացիության՝ որպես սոցիալիստական հասարակության դասակարգի ձևավորման ու զարգացման, կոմունիզմի կառուցման ակտիվ մասնակիցների պատմությունն է։ Այն ցույց է տալիս, թե ինչպես է իրականացել ֆեոդալական ու կապիտալիստական շահագործման վերացումը, ինչպիսի դժվարությունների հաղթահարման ուղիով ու զրկանքների գնով է ձեռք բերվել կոլտնտեսային գյուղացիության, այսօրվա գյուղատնտեսական բանվորության և բանվոր դասակարգի ու մտավորականության ղեկավարման մասի և, ընդհանրապես, ամբողջ սովետական ժողովրդի ազատ ու երջանիկ կյանքը։

Սովետական գյուղացիության պատմության ուսումնասիրությունը գյուղի աշխատավորներին և սովետական բոլոր մարդկանց օգնում է ճիշտ ճանաչել անցյալը, գնահատել ներկան և պայքարել վաղվա է՛լ ավելի երջանիկ կյանքի համար։

Սոցիալիստական գյուղի կառուցման փորձն ունի միջազգային նշանակություն։ Այն ցույց է տալիս ամեն տեսակի շահագործումից և չքավորությունից ու տգիտությունից աշխատավոր գյուղացիության ազատագրման և ունևոր, ազատ ու կուլտուրական կյանքի ստեղծման ուղին և օրինաչափությունները։ Սովետական Միությունը օրինակ է ծառայում սոցիալիզմ կառուցող բոլոր երկրների համար։

Իմպերիալիզմի լծից ազատագրված և զարգացման ոչ կապիտալիստական ուղին ընտրած աշխարհի շատ երկրներ հաշվի են առնում սոցիալիստական պետությունների փորձը և կիրառում գյուղատնտեսության զարգացման և ազգարային-գյուղացիական հարցի լուծման նրանց պրակտիկայից բխող միջոցառումներ։ Դրանցից են ֆեոդալական-կալվածատիրական հողատիրության և հողի մասնավոր սեփականու-

թյան վերացումը, ագրարային վերափոխումները, գյուղատնտեսական կոոպերատիվների և պետական տնտեսությունների կազմակերպումը, պետական օգնությունը և այլն։

Բուրժուական պատմագրությունը և պրոպագանդան քիչ ջանքեր չեն գործադրում աղավաղելու և կեղծելու համար սովետական գյուղի հեղափոխական վերափոխումների նշանակությունը։ Բուրժուական կեղծարարները և հակասովետիզմի ու հակակոմունիզմի ջատագովները հատկապես ճգնում են ժխտել ագրարային-գյուղացիական հարցի լուծման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և գյուղական շահագործող դասակարգի ու շահագործման վերացման փորձի միջազգային նշանակությունը։ Բուրժուական կեղծարարները հատկապես ձգտում են չափազանցնել մեր սխալներն ու թերությունները, հետապնդելով սոցիալիզմի ձգողական ուժը թուլացնելու և, ընդհանրապես, սոցիալիզմը վարկաբեկելու նպատակը։ Սովետական Հայաստանի գյուղացիության պատմության ներգափոխումով զբաղվել են նաև հայ բուրժուական նացիոնալիստները՝ դաշնակցական հեղինակները։

Այս ամենից հետևում է, որ սովետական գյուղացիության պատմության ուսումնասիրությունը՝ գյուղի զարգացման սովետական փորձի ընդհանրացումն ունի գիտական և քաղաքական կարևոր նշանակություն։ Այն շարունակում է մնալ սովետական պատմագիտության առաջնահերթ խնդիրներից մեկը։ Կոմունիստական կուսակցությունը մեծ նշանակություն է տալիս սովետական ժողովրդի հեղափոխական և վերափոխող գործունեության փորձի ուսումնասիրությանը, դա համարելով սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության կարևոր միջոց։ 1969 թ. ՍՄԿԿ Կենտկոմը պատմաբանների առաջ խնդիր դրեց հետազոտել սովետական բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության պատմության պրոբլեմները[1]։ Սովետական հասարակության սոցիալական կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասիրությանը մեծ նշանակություն տվեցին ՍՄԿԿ XXIV և XXV համագումարները։ «Էական կարևորություն է ներկայացնում այն հարցերի խոր ուսումնասիրությունը,— նշեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը կուսակցության XXV համագումարին տված զեկուցման մեջ,— որոնք վերաբերում են մեր հասարակության, նրա արտադրողական ուժերի զարգացման տենդենցներին։ Այդ հարցերից են, օրինակ, աշխատանքի բնույթն ու բովանդա-

---

[1] Տե՛ս «Вопросы истории КПСС», 1969, № 4, стр. 3—4.

կությունը հասուն սոցիալիզմի պայմաններում, սոցիալական կառուցվածքի փոփոխությունները...»[2]:

Սովետական գյուղացիության ազգային ջոկատների պատմության ստեղծումը օգնում է պրոբլեմի ամբողջական լուծմանը, նպաստում թեմայի ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրությանը: «Հասարակական պայմանների պատմականորեն ձևավորված բազմազանությունը և դրանցով պայմանավորված տարբեր ազգային շրջաններում կենսագործված սոցիալ-տնտեսական վերափոխումների ձևերի, մեթոդների ու տեմպերի էական առանձնահատկությունները սոցիալիզմի շինարարության սովետական փորձին տալիս են հատուկ, համաշխարհային-պատմական նշանակություն»[3]: *Սույն գիրքը Սովետական Հայաստանի գյուղացիության օրինակով ըստ էության ցույց է տալիս, թե լենինյան կոոպերատիվ պլանի և կոմունիստական կուսակցության քաղաքականության կենսագործման շնորհիվ ֆեոդալական-կապիտալիստական շահագործման մեջ տառապած գյուղը ինչպես է վերջ տվել հետամնացությանը, ամեն տեսակի շահագործմանը և հասել ունևոր ու երջանիկ կյանքի:*

Սովետական գյուղացիության պատմության կարևոր ժամանակաշրջաններից է գյուղի սոցիալիստական վերակառուցման նախապատրաստման և դրա իրագործման համար մղված պայքարի, կոլտնտեսային գյուղացիության ձևավորման ժամանակաշրջանը, երբ ավարտվեց անցումը կապիտալիզմից սոցիալիզմին, մեր երկրում հաղթանակեց սոցիալիզմը: Ներկա աշխատությունը, մեր նախորդ մենագրության[4] *հետ միասին ներկայացնում է Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում: Սույն գիրքն ընդգրկում է բուն կոլեկտիվացման տարիները՝ 1929—1937 թթ.: Դնահատելով 1929 թ. երկրորդ կեսին երկրի մի շարք շրջաններում տեղի ունեցած համատարած կոլեկտիվացման նշանակությունը, Համկ(բ)կ Կենտկոմի նույն թվականի նոյեմբերյան պլենումը նշեց, որ «դա իրենով նշանավորում է կապիտալիզմից սոցիալիզմին*

---

2 *Ն. Ի. Բուխարին. ՍՍԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հիմնական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում: Երևան, 1976, էջ 119—120:*

3 «Советское крестьянство. Краткий очерк истории (1917—1970)», М., 1973, стр. 5.

4 *Տե՛ս Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920—1929 թթ., Երևան, 1975:*

անցնելու ժամանակաշրջանի նոր էտապ, նոր շրջան»[5]։ Այդ տարիներին ծավալվեց գյուղի համատարած կոլեկտիվացումը, վերացվեց մեր երկրի վերջին և ամենաբազմամարդ շահագործող դասակարգը՝ կուլակությունը, փոշիացած մանրագյուղացիական տնտեսություններին փոխարինելու եկավ սոցիալիստական հասարակության նոր դասակարգ՝ կոլտնտեսային գյուղացիությունը։ Այդ պատմական ժամանակաշրջանը բաժանվում է երկու փուլի։ Առաջին փուլում (1929—1932 թթ.) էական տեղաշարժեր են կատարվել գյուղի սոցիալ-դասակարգային կառուցվածքում, հաղթանակել է կոլտնտեսային կարգը, վերացվել կուլակությունը, լուծվել ով՝ ումի հարցը։ Երկրորդ փուլում (1933—1937 թթ.) ավարտվել է գյուղացիության կոոպերացումը, կուլակության մնացորդների վերացումը, կոլտնտեսային գյուղացիության՝ սոցիալիստական հասարակության դասակարգի ձևավորումը։

Գրքում (վերջաբանում) համառոտ գծերով անդրադարձել ենք նաև նախապատերազմյան տարիների (1938—1941 թ. հունիս) պատմությանը, տարիներ, երբ սկսվում է նոր ժամանակաշրջան սովետական հասարակության պատմության մեջ՝ սոցիալիստական հասարակության զարգացման շրջանը։ Պատմական այս փուլից առանձին-առանձին ուսումնասիրվել է Հայրենական պատերազմի և հետպատերազմյան տարիների գյուղացիության պատմությունը։ Իսկ 1938—1941 թթ., պատմական առանձին ժամանակաշրջան չհանդիսանալով, չեն կարող դասնալ (կամ չի կարելի դարձնել) հատուկ հետազոտության թեմա։ Ուստի այդ տարիները պատմագրությունից դուրս չթողնելու նպատակով նպատակահարմար համարեցինք դրանք ներառնել սույն գրքի մեջ։ Բացի դրանից այդպիսի միավորումը արդարանում է նաև այն պատմական փաստով, որ հիշյալ տարիներին է Հայաստանում լրիվ ավարտվել գյուղատնտեսության կոլեկտիվացումը։

Սովետական Միության կոլտնտեսային գյուղացիության պատմության վերաբերյալ գոյություն ունի մեծաքանակ գրականություն, որոնց բոլորի մասին անհնար է, և հարկ էլ չկա, խոսել[6]։ Առաջին նշանավոր ուսումնասիրություններից է Մ. Կրաևի գիրքը, որն ընդգրկում է գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման և կուլակության որպես դասակարգի վերացման հարցերը[7]։ Կոլտնտեսային գյուղացիության

---

5 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», II մաս, Երևան, 1955, էջ 788։

6 Մանրամասն այդ հարցի մասին տե՛ս В. Погудин, Путь советского крестьянства к социализму. Историографический очерк, М., 1975.

7 Տե՛ս М. Краев, Победа колхозного строя в СССР, М., 1954.

ձևավորման հարցերը, որոնք մշակված են պատմական գիտության նորագույն նվաճումների հիման վրա, իրենց արտահայտությունն են գտել սովետական գյուղացիության պատմությանը նվիրված կոլեկտիվ ուսումնասիրության մեջ, որն ունեցել է երկու հրատարակություն[8]: Կոլտնտեսային գյուղացիության ամբողջական պատմությունն է տալիս Վ. Օսարովսկու մենագրությունը[9]: Հատուկ ուսումնասիրություններ են հրապարակ եկել նաև գաստակարգային պայքարի և կուլակության, որպես դասակարգի, վերացման հարցի վերաբերյալ: Ն. Իվնիցկու գիրքը, չնայած մամուլում նրա մի շարք կարծիքների քննադատությանը, հարուստ նյութերի հիման վրա տալիս է դասակարգային պայքարի և համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության, որպես դասակարգի, վերացման պատմությունը (1929—1932 թթ.), լուսաբանում է դրա էտապների և կուլակների թվի հետ կապված հարցերը[10]: Ի. Տրիֆոնովի վերջին ուսումնասիրությունը նվիրված է շահագործող դասակարգերի վերացման պրոբլեմին՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում: Մասնավորապես հետաքրքիր և արժեքավոր են հեղինակի տեսակետները Սովետական Միության մի շարք ազգային շրջաններում կուլակության, որպես դասակարգի, վերացման ձևերի ու եղանակների վերաբերյալ[11]: Կոլտնտեսային գյուղի պատմությանն են նվիրված նաև Մ. Վիլցանի աշխատությունները, որոնք ընդգրկում են 30-ական թվականները, ներառյալ նախապատերազմյան տարիները[12]:

Միութենական հանրապետություններից առայժմ Ուկրաինայում և Կիրգիզիայում է պատրաստվել գյուղացիության ամբողջական պատմությունը[13]: Իսկ առանձին պրոբլեմների վերաբերյալ բոլոր հանրապետություններում էլ գոյություն ունի մեծաթիվ գրականություն: Դրան-

---

8 Տե՛ս «Советское крестьянство. Краткий очерк истории», М., 1970, М., 1973.

9 Տե՛ս *В. Островский*, Колхозное крестьянство СССР, Саратов, 1967.

10 Տե՛ս *Н. Ивницкий*, Классовая борьба в деревне и ликвидация кулачества как класса (1929—1932 гг.), М., 1972.

11 Տե՛ս *И. Трифонов*, Ликвидация эксплуататорских классов в СССР, М., 1975.

12 Տե՛ս *М. Вылцан*, Укрепление материально-технической базы колхозного строя во второй пятилетке (1933—1937 гг.), М., 1959; *его же*, Советская деревня накануне Великой Отечественной войны (1938—1941 гг.), М., 1970.

13 Տե՛ս «История крестьянства Украинской ССР», т. 1, 2, Киев, 1967 *(ուկր. լեզվով)*; «История советского крестьянства Киргизстана», Фрунзе, 1972.

ցից անհրաժեշտ ենք համարում հիշատակել Պ. Լոմաշվիլու մենագրությունը, որը նվիրված է Անդրկովկասի հանրապետություններում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պատմությանը, ավելի ճիշտ, դրա մի քանի հարցերին և հատկապես տեղական առանձնահատկությունների բացահայտմանն ու լուսաբանությանը[14]: Հեղինակը նորովի է ներկայացրել կոլեկտիվացման գործընթացի մեջ տեղի ունեցած բեկման, համատարած կոլեկտիվացման, կուլակության որպես դասակարգի վերացման ձևերի հարցերը, հարուստ նյութերով լուսաբանել է գյուղում դասակարգային պայքարի պատմությունը: Պետք է, սակայն, նկատել, որ Պ. Լոմաշվիլու աշխատության մեջ Հայաստանին վերաբերող նյութերը համեմատաբար աղքատ են: Տեղ են գտել նաև առանձին թերություններ ու փաստական սխալներ:

Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ բավականին գրականություն է հրատարակվել նաև Հայաստանում: Հանրապետության գյուղի սոցիալիստական վերափոխման պատմության գիտական հետազոտությունը հիմնականում սկսվել է 50-ական թվականների սկզբից: Դրա առաջին նախաձեռնողներից է Հ. Կարապետյանը, որը դեռևս 1950 թ. գիտական մամուլում հրատարակած իր հոդվածում զգալի տեղ է տվել նաև կոլեկտիվացման հարցերին: Դրանք ավելի լայն ծավալով զարգացված են հեղինակի մի այլ աշխատանքում, որը տպագրվել է «Հոկտեմբերի գրոշի ներքո» հոդվածների ժողովածուում: Նշված հոդվածի լայն տարբերակը լույս է տեսել 1958 թ. Սովետական Հայաստանի պատմության ուրվագծերում[15]: Ուրվագծերի երրորդ պրակում տեղ է գտել Ս. Աղայանի ուսումնասիրությունը, որտեղ շոշափվում են գյուղատնտեսության զարգացման հարցերը 30-ական թվականների երկրորդ կեսին[16]:

Հայաստանի կոմկուսի կոլեկտիվացման տարիների պատմության

---

14 Տե՛ս П. Ломашвили, Великий переворот, Тбилиси, 1972.

15 Տե՛ս Հ. Կարապետյան, Սովետական Հայաստանը գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղվող պայքարի ժամանակաշրջանում (1930—1934 թթ.), «Տեղեկագիր», հաս. գիտ., 1950, № 7։ Նույնի՝ Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, «Հոկտեմբերի գրոշի ներքո» (հոդվածների ժողովածու) գրքում, Երևան 1957։ Տե՛ս Վ. Մելիքսեթյան, Հ. Կարապետյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երկրորդ պրակ. (1926—1934 թթ.), Երևան, 1958։

16 Տե՛ս Ս. Աղայան, Ն. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երրորդ պրակ (1935—1945 թթ.), Երևան, 1960։

առաջին հետազոտողներից է Բ. Օհանջանյանը, ապա նաև Ա. Նսայանը[17]: Կոլտնտեսային շինարարության հարցերին է նվիրված Ա. Մարությանի հոդվածը, որտեղ համառոտ կերպով տրվում է կոլեկտիվացման ընթացքը[18]: Ս. Հարությունյանի գրքում հիմնականում կրկնվում է նախորդ ուսումնասիրությունների պատմական նյութը[19]: Ա. Դավթյանը առանձին հետազոտել է կոլտնտեսությունների ամրապնդման և այլ հարցեր[20]: Կոլեկտիվացման գործում կոմերիտականների մասնակցության մասին է պատմում Հ. Պողոսյանի գիրքը, ինչպես նաև ավելի ուշ հրատարակված Հայաստանի կոմերիտմիության պատմության կոլեկտիվ աշխատությունը[21]:

Նշված գրքերի և հոդվածների հեղինակները մամուլի, արխիվների և այլ նյութերի հիման վրա հետազոտել են գյուղատնտեսության կոլեկտիվացման բնորոշ ընթացքը Հայաստանում: Դրանք հիմնականում նույն սխեմայով գրված գործեր են, որոնք կրկնում են նույն տեսակետները, երբեմն քիչ չափով տարբերվելով միմյանցից նաև փաստական նյութի ընդգրկման տեսակետից: Կոլեկտիվացման ընթացքը հիմնականում հասցվում է մինչև առաջին հնգամյակի վերջը կամ մինչև

---

17 Տե՛ս Բ. Օհանջանյան, Հայաստանի կոմունիստական պարտիան գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին, Երևան, 1955: Ա. Նսայան, Հայաստանի կոմունիստական պարտիայի պայքարը սոցիալիզմի կառուցման համար առաջին հնգամյակի տարիներին, Երևան, 1958:

18 Տե՛ս Ա. Մարության, Կոլտնտեսային կարգերի հաղթանակը, «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.» (Երևան, 1960) գրքում:

19 Տե՛ս Ս. Հարությունյան, Կոլտնտեսային կարգերի զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1960: Այն վերամշակվել և հրատարակվել է երկրորդ անգամ՝ Ս. Հարությունյան, Ան. Տիրանյան, Դրվագներ Հայաստանի գյուղատնտեսության զարգացման պատմությունից, Երևան, 1966:

20 Տե՛ս Ա. Դավթյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի պայքարը կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման համար, «Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու», 1959, № 7, էջ 231—266: Նույնի՝ Գյուղատնտեսական արտելի կանոնադրության ընդունումը և նրա կենսագործման առաջին արդյունքները Հայաստանում, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1959, № 3: Նույնի՝ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի աճը սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում: «Բանբեր Հայաստանի արխիվների», 1960, № 1, էջ 165—177:

21 Տե՛ս Հ. Պողոսյան, Հայաստանի կոմերիտմիությունից (1927—1933 թթ.), Երևան, 1961: «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն», Երևան, 1968:

1934 թ.։ Նրանցում պակասում է քննական և ստեղծագործական մոտեցումը, որը պայմանավորված է նաև տվյալ ժամանակաշրջանի պատմական գիտության մակարդակով։ Համեմատաբար քիչ է ուսումնասիրվել 30-ական թվականների երկրորդ կեսի պատմությունը։ Այնուամենայնիվ սովետահայ հեղինակների նշված գործերը նպաստեցին ստեղծելու նոր և բարձրարակ աշխատություններ։ 60—70-ական թվականներին հրապարակ եկան նոր գործեր, որոնք հիմնականում մի քայլ առաջ են կատարում նախորդների համեմատությամբ։ Դրանց մի մասը նվիրված է բուն գյուղատնտեսության կոլեկտիվացման պատմությանը։ Վերջին շրջանի հաջողված գործերից է Հ. Վարդանյանի գիրքը, որը գրված է Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության տեսանկյունից[22]։ Նրա առավելությունը այն է, որ հեղինակը աշխատել է օգտագործել նոր նյութեր և իր եզրակացությունները կառուցել փաստական նյութի ու տվյալների վրա։ Մասնավորապես ճիշտ է հեղինակի տեսակետը կոլեկտիվացման տեմպի արագացման (1929—1930 թթ. ձմեռ) գնահատման, իսկական մասսայական կոլեկտիվացման ժամանակաշրջանը (1931 թ.) որոշելու հարցերում։ Իր գրական կողմերով հանդերձ Հ. Վարդանյանի գիրքը զերծ չէ նաև թերություններից ու առանձին սխալներից։ Նրանում համեմատաբար քիչ տեղ են գրավում կուսակցական աշխատանքի, գյուղատնտեսության կոլեկտիվացման ավարտման հարցերը։ Անհարկի շատ է խոսվում գյուղատնտեսության զարգացման հարցերի մասին։ Թույլ է լուսաբանված դասակարգային թշնամու դիմադրությունը ճնշելու, կուլակության վերացման հարցը, անտեսված է պատմական պրոցեսի պարբերացումը և այլն։

Լենինյան կոոպերատիվ պլանի կենսագործմանն է նվիրված Դ. Դավթյանի գիրքը[23]։ Չնայած աշխատությունը լույս է տեսել ավելի ուշ և պետք է որ վեր կանգներ իր նախորդներից, սակայն գիրքն ունի մի շարք էական թերություններ։ Նախ, անհաջող է գրքի կառուցվածքը, ինչպես նաև հարցերի ու նյութի խմբավորումը։ Օրինակ, առաջին հնգամյակի հաներդրումարտների մասին խոսվում է գրքի վերջում, իսկ

---

22 Տե՛ս Հ. Վարդանյան, Հայաստանի կոմպարտիայի պայքարը գյուղում սոցիալիզմի հաղթանակի համար, Երևան, 1967։ Տե՛ս նաև՝ О. Вартанян, Коммунистическая партия Армении в борьбе за построение социализма в деревне (1927—1937 гг.). (Автореферат докт. дис.), Ереван, 1968.

23 Տե՛ս Դ. Դավթյան, Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լենինյան տեսության կենսագործումը Հայաստանում, Երևան, 1971։

երկրորդ հնգամյակի մասին՝ նախորդ էջերում: Փաստորեն չեն լուսաբանվել կոոպերատիվ շարժման հարցերը երկրորդ հնգամյակում, կուլակության վերացման խնդիրը: Անբավարար է քննարկվել կոլեկտիվացման, ինչպես նաև այդ ուղղությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության և Համկ(բ)կ Անդրկովկասի գործունեությունը: Հայաստանի ինդուստրացման հարցերը բարձրացված են ինքնանպատակ, առանց թեմայի հետ սերտ կապակցության: Շարադրանքից ստացվում է այն տպավորությունը, թե իբր Հայաստանում առանձին էր կառուցվում սոցիալիզմի հիմքը (էջ 204): Նշելով երկրորդ հնգամյակում Միկոյանի շրջանի նվաճումների մասին, նա հանգում է այն սխալ եզրակացությանը, որ «գյուղն այն օրերին դեռ ստացավ մեր այսօրվա սոցիալիստական քաղաքի տեսքն՝ իր բոլոր կողմերով» (էջ 159) և այլն: Աշխատության մեջ տեղ են գտել նաև փաստական սխալներ և այլ թերություններ:

Հայաստանի նյութերի հիման վրա գյուղում դասակարգային պայքարի հարցին է նվիրել իր գիրքը Ե. Հովհաննիսյանը[24]: Նա գիտական շրջանառության մեջ է դրել զգալի փաստեր ու տվյալներ: Սակայն այս աշխատությունը ևս զերծ չէ մի շարք էական թերություններից ու սխալներից, որոնց մասին խոսք կլինի նաև գրքի հետագա էջերում: Հեղինակի մոտ հստակ չեն սահմանազատված կուլակության սահմանափակման և նրան որպես դասակարգ վերացնելու ժամանակաշրջանները: Նա նշում է, թե 1929 թ. երկրորդ կեսից հետո կտրուկ շրջադարձ կատարվեց դեպի կուլակության նկատմամբ նոր քաղաքականությունը[25]: Հանրահայտ է, որ այդ անցումը տեղի է ունեցել 1929 թ. վերջին—1930-ի սկզբին: Դասակարգային պայքարի հիմնական ձևերից էր բանդիտիզմը, որը, սակայն, հեղինակի կողմից չի ուսումնասիրվել: Նույն ձևով նա անտեսել է նաև կուլակային-բանդիտական պայքարը ճնշելու պատմությունը, չի անդրադարձել կոմունիստական ջոկատների, բանվոր դասակարգի ակտիվ գործունեության հարցերին: Ե. Հովհաննիսյանի մոտ հարցը ներկայացված է այնպես, թե իբր Հայաստանում կուլակությունը որպես դասակարգ վերացվել է միայն համատարած կոլեկտիվացման հիման վրա: Սակայն, ինչպես կտեսնենք, բոլորովին էլ այդպես չէ: Ընդ որում պետք է նկատել, որ Հայաստանում կուլակու-

---

24 Տե՛ս Ե. Հովհաննիսյան, Դասակարգային պայքարը գյուղում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում (ՀՍՍՀ-ի նյութերով), Երևան, 1969:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 134։

թյան վերացման հարցը ըստ էության չի լուսաբանված նաև մյուս հեղինակների մոտ։

Պատմական գիտության զարգացման նոր շրջանի հաջողված գործերից է Ս. Ալավերդյանի ուսումնասիրությունը, որը նվիրված է կոլտնտեսային կարգի հաղթանակի գործում բանվոր դասակարգի խաղացած դերին[26]։ Նույն գնահատականին է արժանի նաև բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքին նվիրված Ա. Բաղմանյանի աշխատությունը, որն ընդգրկում է կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանը[27]։

Ա. Հայրապետյանի գրքում առանձին քննարկվում է նաև գյուղատնտեսական կադրերի պատրաստման հարցը[28]։ Նախապատերազմյան տարիների գյուղատնտեսության զարգացման հարցերին է անդրադարձել Մ. Սաֆարյանը Հայաստանի կոմկուսի տվյալ շրջանի պատմության մասին իր աշխատության մեջ[29]։

Գյուղացիության կոոպերացման հարցերին որոշ տեղ է հատկացված նաև Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծերում և հայ ժողովրդի պատմության ակադեմիական բազմահատորյակում[30]։ Կոլեկտիվացման հարցերը գիտական բարձր մակարդակով են լուսաբանված Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծերում[31]։ Անհրաժեշտ ենք համարում ընդգծել երկրի ազգային շրջաններում գյուղատնտեսության կոլեկտիվացման առանձնահատկությունների պատշաճ լուսաբանումը, որ արված է ՍՍՀՄ ժողո-

---

26 Տե՛ս С. Аллахвердян, Роль рабочего класса в победе колхозного строя в Армении, Ереван, 1969.

27 Տե՛ս Ա. Բաղմանյան, Հայաստանի կոմկուսը բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման համար մղված պայքարում, Երևան, 1976։

28 Ա. Հայրապետյան, Սոցիալիզմի կառուցումը և կադրերի պատրաստումը Հայաստանում. Երևան, 1974։

29 Տե՛ս Մ. Սաֆարյան, Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռեսպուբլիկայում սոցիալիզմի զարգացման ու ամրապնդման համար (1937 թ.—1941 թ. հունիս), Երևան, 1966։

30 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967։ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. VII, Երևան, 1967։

31 Տե՛ս «Очерки истории коммунистических организаций Закавказья», часть 2-ая, Баку, 1971.

վուրդների պատմության և հատկապես ՍՄԿԿ պատմության բաղմահատորյակներում[32]։

Այսպիսով, Սովետական Հայաստանում դդալի աշխատանք է կատարվել գյուղի սոցիալիստական վերակառուցման պատմությունը ուսումնասիրելու բնագավառում։ Այնուամենայնիվ տեղը բաց է մնում այնպիսի հետազոտության համար, որը լայն փաստական նյութի բազայի վրա հանրագումարի բերեր սովետական պատմագրության նվաճումները և բաղմակողմանիորեն ներկայացներ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը՝ մասնավորապես նրա ձևավորման ժամանակաշրջանում։ Այդ բացը վերացնելու նպատակ է հետապնդում սույն մենագրությունը։

---

32 Տե՛ս «История СССР», том VIII, М., 1967, том IX, М., 1971, «История КПСС», том. IV, кн. 2-ая, М., 1971.

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԿՈԼՏՆԵՏԵՍԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵԾ ՎԵՐԵԼՔԸ (1929—1932 ԹԹ.)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՐԱԳԱՑՈՒՄԸ (1929—1930)

1. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ: ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՕԴՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ

Քսանական թվականների վերջերին ղգալի առաջադիմություն էր կատարվել Սովետական Հայաստանի գյուղի սոցիալիստական վերափոխումը նախապատրաստելու ուղղությամբ: Այդ աշխատանքներն ավելի ուժեղացան հատկապես Համ(բ)Կ XV համագումարից (1927 թ) հետո, որը պատմական որոշում ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացման կուրսին անցնելու մասին:

Հաջողությամբ կենսագործվում էր լենինյան կոոպերատիվ պլանը: Գյուղի աշխատավորական անտեսությունների կեսից ավելին ընդգրկվել էր գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ: Այն հատկապես մեծ հեղինակություն և նշանակություն էր ստացել բամբակագործների, ծխախոտագործների, շերամապահների և այլ մշակույթներով (որոնք տալիս էին բարձր ապրանքային արտադրություն) զբաղվողների շրջանում: Հենց այստեղ էլ առաջինը սկսվեց անցումը գյուղատնտեսական կոոպերացիայի արտադրական ձևերին: Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կոոպերացիան բացեց սովետական գյուղի սոցիալիստական զարգացման ուղին:

Գյուղի սոցիալիստական վերափոխումը նախապատրաստվում էր սովետական իշխանության և կոմունիստական կուսակցության բաղմա-

կողմանի գործունեությամբ։ Այդ նպատակին էին ուղղված կուսակցության տնտեսական և ագրարային քաղաքականությունը, ամբողջ հասարակական-քաղաքական և կուլտուրական աշխատանքը։ Հենվելով չքավոր գյուղացիության վրա և ամրապնդելով դաշինքը միջակի հետ, սովետական իշխանությունը աստիճանաբար ուժեղացնում էր հարձակումը կուլակության դեմ, նրա նկատմամբ վարելով սահմանափակելու և արտամղելու քաղաքականություն։ Գյուղի աշխատավորներն ավելի էին համախմբվում սովետական իշխանության և կոմունիստական կուսակցության շուրջը։ Նրանք աստիճանաբար համոզվում էին, որ անհրաժեշտ է բռնել նոր կյանքի ստեղծման ճանապարհը։

Սովետական գյուղի պատմության մեջ հիշարժան դարձավ 1929 թ., երբ գյուղացիության հոծ զանգվածները սկսեցին շրջվել դեպի կոլտնտեսությունները։ Արմատական բեկում կատարվեց աշխատավոր գյուղացիության տրամադրության մեջ, հատկապես նշանակալից էր միջակի շրջադարձը դեպի կոլեկտիվացումը։ 1929 թ. երկրորդ կեսին սովետական գյուղը թևակոխեց պատմական զարգացման նոր շրջան՝ համատարած կոլեկտիվացման, և դրա հիման վրա կուլակության որպես դասակարգի վերացման ժամանակաշրջանը։ Այդ նվաճումներն ամփոփվեցին Համկ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումում, որը միաժամանակ մշակեց կոլտնտեսային շարժման զարգացման նոր խնդիրները։ Պլենումը նշեց, որ երկրի մի շարք հացահատիկային շրջաններում կոլեկտիվացումը վերածվել է ամբողջ շրջանների և օկրուգների համատարած կոլեկտիվացման, որ այն գործնական խնդիր է դարձել նաև առանձին մարզերի համար։ Այդ նվաճումներով սովետական երկիրը թևակոխեց գյուղի «ծավալուն սոցիալիստական վերակառուցման և խոշոր սոցիալիստական հողագործության ստեղծման շրջանը»[1]։ Գյուղի չքավորա-միջակային մասսաների շրջադարձը, ինչպես գնահատեց պլենումը, նշանակում էր «նոր պատմական էտապ մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործում»[2]։ Ի տարբերություն առաջավոր շրջանների, որտեղ զարգանում էր համատարած կոլեկտիվացումը, պլենումը Արևելքի ազգային շրջանների համար դրեց կոլեկտիվացման գործին ամեն կերպ նպաստելու խնդիրը։

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը իրագործելու համար պլենումը մշակեց միջոցառումների լայն ծրագիր։ Անհրաժեշտ էր մեքենա-

---

1 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում»։ II մաս, Երևան, 1955, էջ 813։

2 Նույն տեղում, էջ 786։

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

տրակտորային կայանների թիվը։ Առաջիկա ամիսներին գյուղ էին մեկնելու կազմակերպական-քաղաքական աշխատանքի բավականաչափ փորձ ունեցող 25 հազար բանվորներ, ինչպես նաև ղեկավարման գործի ընդունակ հազար պատասխանատու աշխատողներ։ Նոր խնդիրներին համապատասխան վերակառուցվում էր կուսակցական, սովետական, կոմերիտական և բոլոր հասարակական կազմակերպությունների աշխատանքը։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման, ինչպես և ամբողջ սոցիալիստական շինարարության գործն առաջ տանելու տեսակետից կարևոր նշանակություն ունեին պլենումի կողմից աջ օպորտունիստների նկատմամբ կիրառած կազմակերպական միջոցառումները։

Կոլտնտեսային շինարարության զարգացման ուղղությամբ զգալի նվաճումներ էր ձեռք բերել նաև Սովետական Հայաստանը, որտեղ կոլտնտեսությունների կազմակերպմանը ձեռնամուխ էին եղել միայն կուսակցության XV համագումարից հետո։ Ընդամենը երկու տարվա ընթացքում հանրապետությունում ծնունդ առան 245 կոլտնտեսություններ (որոնցից 100-ը բամբակագործական շրջաններում), ուր ընդգրկված էին 6300 չքավոր և միջակ տնտեսություններ, որը կազմում էր գյուղի աշխատավոր տնտեսությունների 3,9 տոկոսը (տվյալները բերվում են ըստ 1929 թ. հոկտեմբերի 1-ի դրության)։ Կարճատև ժամանակաշրջանի համար դա մեծ նվաճում էր։

Հայաստանում կոլտնտեսային շարժման ավանդարդում էին բամբակագործական շրջանները, իսկ նրանց մեջ առաջինը՝ Ղուրդուղուլիի (Հոկտեմբերյանի), ապա Ղամարլուի (Արտաշատի) և այլ շրջաններ։

Կոլտնտեսային շինարարության վերելքի պայմաններում պահանջ դրվեց արագացնել կոլեկտիվացման տեմպը։ 1929 թ. հուլիսի վերջին հանրապետության կոլտկենտրոնի վարչության 2-րդ նստաշրջանը, նշելով հնգամյակի առաջին տարվա պլանների հաջող կատարման ընթացքը, որոշեց վերանայել հնգամյա պլանը, իսկ 1929 թ. աշնանը հարյուր գյուղ լրիվ ընդգրկել կոլտնտեսությունների մեջ։ Նույն տարվա աշնանացանի կամպանիայի կապակցությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմը շրջաբերական նամակով դիմեց կուսակցության բոլոր գավառային ու շրջանային կոմիտեներին։ Հիշատակելով Սովետական Ռուսաստանի նվաճումները, ՀԿ(բ)Կ Կենտկոմը առաջարկում էր կամպանիայի ընթացքում զարգացնել կոլտնտեսային շարժումը, խոշորացնել գոյություն ունեցող կոլտնտեսությունները, հնարավորության դեպքում կոլեկտիվացման ենթարկելով ամբողջ գյուղեր, ստեղծել նոր կոլտնտե-

սությունները, իսկ բամբակագործական շրջաններում, որտեղ հաջողություններն ավելի մեծ էին, ծավալել մասսայական կոլեկտիվացման աշխատանք։ Հոկտեմբերի առաջին օրերին ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի պլենումում խոսվում էր «Ռուսաստանում մեծ չափով կիրառվող առանձին շրջանների ամբողջական կոլեկտիվացման փորձը մեզանում ևս կենսագործելու ուղղությամբ» գործնական քայլերի դիմելու մասին[3]։

Ամփոփելով կոլեկտիվացման հանրագումարները, ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումը արձանագրեց, որ կոլտնտեսային շարժումը, որն սկզբում դյուղավորապես ընդգրկում էր չքավորներին, արդեն վերաճել է չքավոր և միջակ գյուղացիության լայն մասսայական շարժման[4]։ Պլենումը կուսակցական կազմակերպություններից պահանջեց դիմավոր ուշադրություն բևեռել գյուղի կոլեկտիվացման վրա, ներգրավելով չքավորների և միջակների լայն շերտերին, ընդհուպ մոտենալով ամբողջ շրջանների լրիվ կոլեկտիվացմանը[5]։ Որպես կոլտնտեսային շինարարության հիմնական խնդիր առաջադրվեց Երևանի գավառի Հրազդանի, Վաղարշապատի, Ղամարլուի և Լենինականի գավառի Դուզքենդի շրջանների համատարած կոլեկտիվացումը առաջին հնգամյակի ընթացքում, իսկ Երևանի գավառի Ղուրդուղուլի շրջանում, որտեղ գործն ավելի լավ էր նախապատրաստվում, կոլեկտիվացումը նախատեսվեց ավարտել ավելի վաղ՝ 1931 թ.[6]։ Այսպիսով, նոյեմբերյան պլենումի որոշումների մեջ առաջին անգամ նշվեցին հանրապետության համատարած կոլեկտիվացման ենթակա շրջանների անունները[7]։

Կոլեկտիվացմանը լայն թափ էր տրվելու նաև լեռնային ու նախալեռնային շրջաններում։ Ելնելով ձեռք բերված հաջողություններից և 1928/29 տնտեսական տարվա կոլեկտիվացման առաջադրանքների գերակատարման փաստից, որոշվեց վերանայել առաջին հնգամյա պլանը՝ այն ավելի ծավալելու նպատակով։ Կոլեկտիվացմանը նպաստող

---

3 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1929 թ. հոկտեմբերի 6։

4 Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՅԱ), ֆ. 1, ց. 13, գ. 22, թ. 114։

5 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 13, գ. 11, թ. 58։

6 Տե՛ս նույն տեղում, գ. 22, թ. 58, 115։

7 Սխալ է ոմանց այն պնդումը, թե իբր Անդրկովկասում առաջինը համատարած կոլեկտիվացման շրջան կոնկրետ հայտարարվել է Դուզքենդը, Լենինականի գավառի 1929 թ. դեկտեմբերի 17-ի որոշումով։ Տե՛ս П. Ломашвили, Великий переворот։ Тбилиси, 1972, стр. 187.

կարևոր դրծոն էր առաջին հնգամյակի համար նախատեսվող երեք մեքենա-տրակտորային կայանների կազմակերպումը։ Դրանցից առաջինը արդեն հիմնվում էր Ղուրդուղուլիի շրջանում՝ Սարդարապատում։ Պլենումը լայն միջոցառումներ մշակեց նաև կադրերի պատրաստման, բանվորական շնչական աշխատանքի ուժեղացման և գյուղի սոցիալիստական վերակառուցումը նախապատրաստող. այլ նախադրյալների ստեղծման ուղղությամբ։

Պլենումը պահանջեց ուժեղացնել կուսակցական-քաղաքական աշխատանքը գյուղական շրջաններում և կոլտնտեսություններում։ Խոշոր կոլտնտեսություններում ստեղծվելու էին կուսակցական կազմակերպություններ՝ արտադրական սկզբունքով։ Անհրաժեշտ է, ասված է պլենումի համապատասխան բանաձևում, անողոք պայքար մղել կոլտնաշինարարության ասպարեզում կուսակցական գծի բոլոր տեսակի խեղաթյուրումների, առաջին հերթին աջ օպորտունիստական գաղափարախոսության և նրա կոնկրետ արտահայտությունների ու պրակտիկայի դեմ[8]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումի քննարկած բոլոր հարցերը (գյուղատնտեսության զարգացումը և սոցիալիստական վերակառուցումը, կոլտնտեսային շինարարության հերթական խնդիրները, գյուղատնտեսական կոոպերացիայի հերթական խնդիրները, վարկային կոոպերացիայի դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում) ուղղված էին միևնույն նպատակին՝ արագացնել գյուղատնտեսության կոլեկտիվացման նախապատրաստումը։ Միաժամանակ պետք է նշել, որ պլենումի որոշումների մեջ փրկեց արտահայտություն գտան շտապողականություն և առանց բավարար նախապատրաստության կոլեկտիվացման բարձր տեմպեր վերցնելու ձգտումը, իսկ գործնական կյանքում դրանք հանգեցրին կոպիտ սխալների։

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ևս, որոշ բացառությամբ, Հայաստանում կոլեկտիվացումը զարգանում էր նորմալ ընթացքով։ Երկու ամսում կազմակերպվեց 75 նոր կոլտնտեսություն[9], իսկ 1930 թ. հունվարի 1-ին նրանց ընդհանուր թիվը հասավ 303-ի, մոտ 7800 տնտեսություններով, որը կազմում էր հանրապետության բոլոր գյուղացիական տնտեսությունների 4,6 տոկոսը[10]։ Առջևից ընթանում էր Երևանի գա-

---

8 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 13, գ. 22, թ. 115—116։

9 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 224, թ. 24—25։

10 Տե՛ս նույն տեղում, ց. 17, գ. 218, թ. 6։ ՀՍՍՀ Հոկտեմբերյան՝ հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՈՇ ՊԿԱ), ֆ. 163, ց. 1, գ. 2422, թ. 1։ Ֆ. 123, ց. 1, գ. 1510, թ. 9—14։ Ֆ.123, ց. 5, գ. 414, թ. 11։

վառ, կոլեկտիվացման 9,7 տոկոսով (1929 թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ)[11]։

Դեկտեմբեր ամսին կոլեկտիվացման սխալներ թույլ տրվեցին հիմնականում Երևանի գավառի առանձին շրջաններում, որտեղ անցել էին համատարած կոլեկտիվացման իրականացմանը։ Այսպես, դեկտեմբերի 19-ին Ղուրդուղուլիի շրջանի Մեծ և Փոքր Շահրիար գյուղերը մրցման պայմանագիր ստորագրեցին, կոլեկտիվացումը շուտ ավարտելու համար։ Հաջորդ օրը նրանց ներկայացուցիչները ամփոփելով պայմանագրի կատարման արդյունքները, արձանագրեցին, որ «ապահովել են» համատարած կոլեկտիվացումը իրենց գյուղերում[12]։

1930 թ. հունվարի 5-ին կայացած խորհրդակցությունում Ղուրդուղուլիի շրջգործկոմի նախագահը զեկուցելով համատարած կոլեկտիվացման ընթացքի մասին, հայտնում էր, որ այն սկսվել է դեկտեմբերի 5-ին, երբ Երևանից շրջան էին մեկնել վեց ընկերներից բաղկացած բրիգադը։ Նախապես, փորձնական ձևով, համատարածը սկսվել էր Փոքր Շահրիար գյուղում, որտեղ այն ավարտվել էր երեք օրում, ապա նրան հետևել էին Ջալադարխը (Շենավան), Արմթլուն (Տանձուտ) և Աղջաբիը (Արևիկ)[13]։

Կոլեկտիվացման այսպիսի խազերը մինչև 1929 թ. վերջերը առանձին բացառություններ էին, այն էլ Երևանի գավառի որոշ շրջաններում և կապված էին դեկտեմբեր ամսում գավառում համատարած կոլեկտիվացում հայտարարելու հետ։ Հիմնականում մինչև 1929 թ. վերջերը Հայաստանում գյուղատնտեսության կոլեկտիվացումը նորմալ է ընթացել։

Պատմագիտական որոշ ուսումնասիրություններում ճիշտ չի ներկայացվել 1929 թ. վերջի կոլեկտիվացման ընթացքը։ Նշվել է, թե իբր 1930 թ. հունվարի 1-ին կոլեկտիվացումը Հայաստանում հասնում էր 27 տոկոսի, որից 23 տոկոսի աճը իբր տեղի էր ունեցել 1929 թ. վերջին 15 օրվա ընթացքում[14]։ Նման եզրակացության համար հիմք է ծառայել մի սխալ և անվստահելի արխիվային փաստաթուղթ։ Բազմաթիվ ակզբնաղբյուրներ վկայում են, որ 1930 թ. հունվարի 1-ին կոլեկտիվացումը, ինչպես վերևում նշվեց, կազմում էր ընդամենը 4,6 տոկոս,

---

11 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 224, թ. 10։

12 Տե՛ս «Մաճկալ», 1929 թ. դեկտեմբերի 26։

13 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. հունվարի 7։

14 Տե՛ս С. Аллахвердян, Роль рабочего класса в победе колхозного строя в Армении, стр. 71.

իսկ 27 տոկոսը վերաբերում է ոչ թե հունվարի 1-ին, այլ հունվարի 28-ին[15]։

Տնտեսագետ Հ. Թումանյանի մոտ տեղ է գտել այսպիսի աղավաղում։ Նա 1930 թ. փետրվարի իրավիճակը, երբ հարկադրական կոլեկտիվացումը լայն չափեր էր ընդունել, ներկայացրել է որպես հունվարի 1-ի տվյալներ և եզրակացություն արել, թե՝ 1929 թ. դեկտեմբերի վերջին կոլեկտիվացումը (խոսքը նրա նորմալ ընթացքի մասին է) մեծ վերելք էր ապրում, հասնելով 33,5 տոկոսի։ Նրա շարադրանքից օբյեկտիվորեն բխում է այն եզրակացությունը, որ կոլտնտեսային շարժման սխալներ ու խոտորումներ սկսվելու անմիջական նախօրյակին Հայաստանում փաստորեն կոլտնտեսությունների մեջ էր ներգրավված գյուղացիական տնտեսությունների մեկ երրորդը[16]։

Ճիշտ չեն նաև այն հեղինակները, ովքեր կոլտնտեսային շարժման նորմալ և առողջ զարգացման ընթացքը հասցնում են մինչև 1930 թ. հունվարի կամ փետրվարի վերջը[17]։

Մեր կարծիքով ճիշտ չէ նաև «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերում» տրված եզրակացությունը։ Խոսելով Սովետական Միության առաջավոր շրջաններում դեպի կոլտնտեսությունները գյուղացիության կատարած արմատական շրջադարձի, 1929 թ. երկրորդ կեսին ծավալված համատարած կոլեկտիվացման, միջակ գյուղացիության հիմնական մասսայի կողմից ցուցաբերած կոլեկտիվացման ցանկության մասին, այնուհետև գրքի հեղինակները նշում են, որ «այդ պատկերը ընդհանուր առմամբ բնորոշ էր նաև Հայաստանի համար»[18]։

Հայաստանում աշխատավոր գյուղացիության հիմնական մասսայի շրջադարձը դեպի կոլտնտեսությունները, ինչպես հետո կտեսնենք, կատարվել է ավելի ուշ։ Այստեղ, ինչպես նաև Անդրկովկասի մյուս եզ-

---

15 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 224, թ. 10։ ՀՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ, ֆ. 42, ց. 1, գ. 381, թ. 132 և այլն։

16 Տե՛ս Հ. Թումանյան, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, Երևան, 1962, էջ 98—99 (այստեղ սխալ են ցույց տրված նաև թվական տվյալների արխիվային հիմքերը)։

17 Տե՛ս Հ. Կարապետյան, Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, «Մեծ Հոկտեմբերի դրոշի ներքո» գրքում, էջ 198։ Վ. Մելիքսեթյան, Հ. Կարապետյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երկրորդ պրակ, էջ 102—103։

18 «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 417։

բայրական հանրապետություններում մասսայական կոլեկտիվացման նախադրյալները հասունանում էին ավելի դանդաղ։ 1929 թ., հատկապես տարվա երկրորդ կեսի ընթացքում, զգալի թվով չքավոր և միջակ տնտեսություններ ընդգրկվեցին կոլտնտեսություններում։ Հայաստանում կոլեկտիվացման տեմպը արագացավ (մանավանդ տեխնիկական բույսերի շրջանում), սակայն այն դեռևս չէր հասունացել իսկական մասսայական, առավել ևս համատարած կոլեկտիվացման վերածելու համար։ «Անդրկովկասի պատմական զարգացման առանձնահատկությունների պատճառով այստեղ գյուղի կապիտալիստական տարրերի դեմ վճռական հարձակման պայմանները հասունանում էին ավելի դանդաղ, քան երկրի մի շարք այլ շրջաններում»[19]։

* * *

Սովետական Միությունում գյուղատնտեսության կոլեկտիվացման ծրագրի կենսագործումը պահանջում էր լուծել մի շարք հարցեր, որոնք վերաբերում էին կոլեկտիվացման տեմպերին, մեթոդներին ու ձևերին։ Այդ նպատակով Համ(բ)Կ Կենտկոմի Բաղբյուրոն 1929 թ. դեկտեմբերին կազմեց հատուկ հանձնաժողով, որը մշակեց համապատասխան որոշման նախագիծ[20]։ 1930 թ. հունվարի 5-ին Համ(բ)Կ Կենտկոմն ընդունեց որոշում «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարությանը պետության կողմից օգնություն ցույց տալու միջոցառումների մասին»[21]։ Հաշվի առնելով կոլեկտիվացման պայմանների նախապատրաստման անհամաչափությունը, Համ(բ)Կ Կենտկոմը երկիրը բաժանեց գոտիների, դրանց համար սահմաններով համատարած կոլեկտիվացման ավարտման և այդ հիման վրա կուլակության, որպես դասակարգի, վերացման համապատասխան ժամկետներ։

Առաջին գոտու մեջ մտնում էին կոլեկտիվացման տեսակետից ամենաառաջավոր հացահատիկային շրջանները (Ստորին Վոլգա, Միջին Վոլգա և Հյուսիսային Կովկաս), որտեղ նախատեսվում էր կոլեկտիվացումն ավարտել 1930 թ. աշնանը կամ 1931 թ. գարնանը։ Երկրորդ գոտին ընդգրկում էր մյուս հացահատիկային շրջանները, որտեղ կոլեկտի-

---

19 «Очерки истории коммунистических организаций Закавказья», Баку, 1971, стр. 156.

20 Այդ հանձնաժողովի մասին տե՛ս «О работе комиссии Политбюро ЦК ВКП(б) по вопросам сплошной коллективизации»; «Вопросы истории КПСС», 1964, № 1; «История КПСС», т. IV, книга 2-ая, М., 1971, стр. 49—50.

21 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», II մաս, էջ 840—843։

վացումը կարելի էր ավարտել 1931 թ. աշնանը կամ 1932 թ. գարնանը։ Համկ(բ)կ Կենտկոմը գտնում էր, որ «գյուղացիական տնտեսությունների հսկայական մանր ամանությունների կոլեկտիվացման խնդիրը» կարելի է լուծել հնգամյակի սահմաններում։ Ինչպես մեկնաբանում է Ի. Ստալինը, այս ժամկետում, այսինքն մինչև հնգամյակի վերջը, կոլեկտիվացումը կարող էին երկարաձգել երկրի մնացած մարզերը[22], հետևաբար նաև Հայաստանը, ինչպես նաև Անդրկովկասի մյուս հանրապետությունները։

Ուրեմն որոշման մեջ մյուս շրջանների համար ժամկետ չէր սահմանվում։ Այդպիսի կոնկրետ ժամկետ որոշվեց միայն Համկ(բ)կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1930 թ. դեկտեմբերյան պլենումի կողմից, որը 1931 թ. պլանում նախատեսեց կոլեկտիվացնել սպառող գոտու հացահատիկագործական տնտեսությունների 20—25 և բամբակագործական ու ճակնդեղագործական տնտեսությունների ոչ պակաս 50 տոկոսը[23]։

Այսպիսով 1930 թ. հունվարի 5-ի, ինչպես նաև 1929 թ. նոյեմբերյան պլենումի որոշումներում Համկ(բ)կ Կենտկոմը հաշվի էր առնում երկրի համապատասխան շրջաններում կոլտնտեսային շարժման համեմատաբար դանդաղ տեմպի փաստը (հունվարի 5-ի որոշման մեջ նույնիսկ նշվում էր, որ անհատական հողաշինարարությունը չպետք է հետաձգել որոշ ազգային շրջաններում և սպառողական գոտու առանձին վայրերում, որտեղ կոլեկտիվ շարժումը դեռևս լայն ծավալ չէր ստացել) և չէր պահանջում շտապել համատարած կոլեկտիվացման անցնելու համար։

Այդ տեսակետից կարևոր նշանակություն ուներ Կենտկոմի խիստ նախազգուշացումը տեղական կազմակերպություններին՝ կոլեկտիվացումը արհեստական կերպով արագացնելու փորձերի դեմ։ Ինչպես նշված է որոշման մեջ, կոլտնտեսային շարժումը վերևից «դեկրետավորելը» կարող էր «կոլտնտեսությունների կազմակերպման իսկական սոցիալիստական մրցությունը կոլեկտիվացման խաղով փոխարինելու վտանգ ստեղծել»[24]։

Համկ(բ)կ Կենտկոմը կոլեկտիվացման հիմնական ձև համարեց գյուղատնտեսական արտելը։ Հանրային տնտեսության արտելային ձևը ավելի էր համապատասխանում ինչպես պետական-հասարակական, այնպես էլ կոլտնտեսականների անձնական շահերին։

---

22 Տե՛ս Ի. Ստալին, Երկեր, հ. 12, էջ 234։

23 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, Երևան, 1955, էջ 97։

24 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», II մաս, էջ 843։

Համկ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի որոշումը ամրապնդեց անցումը համատարած կոլեկտիվացման և այդ հիման վրա կուլակության, որպես դասակարգի, վերացման քաղաքականությանը։

Համատարած կոլեկտիվացմանն անցնելը նշանակում էր, որ սկսվում էր կոլտնտեսային շարժման, լենինյան կոոպերատիվ պլանի իրականացման նոր ժամանակաշրջան։

Այսպիսով, 1929 թ. վերջին և 1930 թ. սկզբին սովետական գյուղացիությունը թեւակոխեց իր պատմության նոր փուլը։ Գյուղը վերակառուցվում էր սոցիալիստական հիմունքներով, վերացվում էր գյուղական բուրժուազիան՝ մեր երկրի վերջին և ամենաբազմամարդ շահագործող դասակարգը։ Արագացավ կոլտնտեսային գյուղացիության՝ սոցիալիստական հասարակության նոր դասակարգի ձևավորման պրոցեսը։

Համատարած կոլեկտիվացմանն անցնելը, որ նշանակում էր ծավալուն սոցիալիստական հարձակում նաև գյուղում, օբյեկտիվ անհրաժեշտություն էր և սոցիալիզմի կառուցման օրինաչափությունը։ Այն անհրաժեշտ էր սոցիալիստական արդյունաբերության և մասնավոր սեփականության վրա հիմնված (բացառությամբ հողի, որն ազգայնացված էր) մանրատված գյուղատնտեսական արտադրության միջև գոյություն ունեցող հակասությունները վերացնելու, գյուղատնտեսության ավելի ու ավելի նամանալը հաղթահարելու, գյուղատնտեսության մեջ հանրային արտադրության անցնելու և նրա ընդլայնված վերարտադրությունն ապահովելու համար։ Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը լրացնում էր ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիզմի հարձակման ամբողջական ճակատի ստեղծումը, ապահովում էր մեր երկրի վերջին շահագործող դասակարգի վերացումը, գյուղի միլիոնավոր չքավորների ու բատրակների ազատագրումը կուլակային շահագործումից ու կախումից, գյուղի բոլոր աշխատավորների նյութական-կուլտուրական կյանքի վերելքը, սոցիալտնտեսական հարաբերությունների արմատական վերակառուցումը, առանց որի անհնար էր սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում։

Հացի երկրի ներքին պայմաններից և օրինաչափություններից գյուղի սոցիալիստական վերափոխումը առնչվում էր նաև միջազգային իրադրության հետ։ Սովետական Միության կապիտալիստական շրջապատումը և պատերազմի սպառնալիքը թելադրում էին ամրապնդել երկրի պաշտպանունակությունը, ունենալ բանակին ու բնակչությանը

պարեն և արդյունաբերությանը հումք մատակարարող սոցիալիստական գյուղատնտեսություն։

1929 թ. վերջին և 1930 թ. սկզբին գյուղի սոցիալիստական ծավալուն շինարարությանը համատարած կոլեկտիվացմանն անցնելը պայմանավորված էր Սովետական Միության ձեռք բերած նվաճումներով։ Հաջողությամբ իրականացվում էր երկրի սոցիալիստական ինդուստրացումը։ Նախադրյալներ էին ստեղծվում գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու և կոլտնտեսություններն ու սովխոզները նորագույն տեխնիկայով զինելու համար։ Գյուղում նոր քաղաքականությանն անցնելը կապված էր նաև կոլտնտեսությունների ու սովխոզների հաջողությունների հետ։ 1929 թ. նրանք տվեցին ավելի շատ ապրանքային հաց, քան կուլակները 1927 թ.։ Սովետական պետությունը ստեղծել էր հացի արտադրության հուսալի բազա։ Նշանակում է արդեն կարելի էր հացի կապիտալիստական (կուլակային) արտադրությունը փոխարինել սոցիալիստական արտադրությամբ։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունը հաշվի էին առնում, որ գյուղատնտեսության վերակառուցումը շատ բարդ և դժվարին գործ է, ուստի այն նախապատրաստվում էր տարիներ շարունակ։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակից 12 տարի հետո միայն հնարավոր դարձավ սկսելու գյուղատնտեսության մասսայական փոխադրումը սոցիալիստական ուղու վրա։ Կոլեկտիվացման դժվարությունը նախ և առաջ պայմանավորված էր անհատական գյուղացիական տնտեսության բնույթով։ Դարերի սովորությամբ մենատնտեսություն վարող և մագնավոր սեփականատիրության հոգեբանությամբ դաստիարակված գյուղացին, կտրված իր հողակտորից, դժվարությամբ էր հրաժարվում նրանից։ Դրա համար հարկավոր էր, որ նա համոզվեր կոլեկտիվ տնտեսաձևի առավելության մեջ, իսկ դա ժամանակի հարց էր։ Մյուս դժվարությունը կապված էր երկրի ընդհանուր տնտեսատեխնիկական հետամնացության, գյուղատնտեսական տեխնիկայի ու կադրերի պակասության հետ։ Այլ կարգի դժվարություն էր կոլեկտիվացման փորձի բացակայությունը։ Սովետների երկիրը աշխարհում առաջինն էր հարթում սոցիալիզմի ճանապարհը և իրականացնում գյուղի սոցիալիստական վերափոխումը, երբ նոր հասարակարգի ստեղծման տեսական դրույթները ճշտվում և ստուգվում էին պրակտիկայում, իսկ շատ հարցեր էլ հարկ էր լինում լուծել միայն կենդանի կյանքում։

Այս ամենին, ագրարային շրջաններում ու հանրապետություններում,

ալնանում էին տեղական առանձնահատկությունների հետ կապված լրացուցիչ դժվարություններ, որոնք դանդաղեցնում էին կոլեկտիվացման տեմպերը։ Ինչպես վերևում նշվեց, կոլեկտիվացման զարգացման տեսակետից ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումի, ապա նաև հունվարի 5-ի որոշումների մեջ տարբերություն էր դրվում հայտահատիկային և սպառողական գոտու ու ազգային շրջանների միջև։ Սակայն այդ դժվարությունները, ինչպես հետո կտեսնենք, տեղերում հաշվի չառնվեցին և կոլեկտիվացման գործում թույլ տրվեցին կոպիտ սխալներ ու կուսակցության գծի ծռումներ։ Հետագայում ևս, այդ սխալներն ուղղելու առիթով, կուսակցության Կենտկոմը պահանջում էր խստորեն հաշվի առնել ազգային շրջանների տեղական առանձնահատկությունները։

Առանձնահատկություններով հանդերձ երկրի ազգային շրջաններում ևս գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը նախապատրաստվում և ընթանում էր ամբողջ երկրի համար ընդհանուր օրինաչափություններով։

Խոսելով կոլեկտիվացման դժվարությունների և սոցիալիզմի արագ կառուցման անհրաժեշտության մասին, ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը կոլտնտեսականների համամիութենական երրորդ համագումարում արտասանած ճառում նշել է. «Մեր կուսակցությունը լավ էր պատկերացնում կոլեկտիվացման ճանապարհի դժվարությունները և ամենից առաջ այնպիսիք, ինչպիսիք են երկրի տեխնիկատնտեսական հետամնացությունը և գյուղացու մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը։ Նա նաև հաշվի էր առնում այն պայմանների բարդությունը, որոնց մեջ գտնվում էր մեր երկիրը՝ այն ժամանակ աշխարհում միակ՝ պրոլետարիատի դիկտատուրայի երկիրը։ Կապիտալիստական շրջապատումը, ռազմական հարձակման մշտական սպառնալիքը պահանջում էին սոցիալիստական վերափոխումներ կատարել հնարավոր կարճ ժամկետներում»[25]։ Նույն հարցի կապակցությամբ Լ. Ի. Բրեժնևը Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին նվիրված զեկուցման մեջ նշում էր, որ գյուղի սոցիալիստական վերակառուցումը «չափազանց դժվարին խնդիր էր։ Պետք էր հաղթահարել մանր սեփականատիրոջ սովորության դարավոր ուժը, նրա հետաքրքրությունների և կյանքի նկատմամբ ունեցած հայացքների նեղությունը, փոխել նրա հոգեբանությունը։ Հարկավոր էր գյուղացի-ինդիվիդուալիստին դարձնել կոլեկտիվ աշխատանքի ու հասարակական կյանքի

25 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հատ. 2, Երևան, 1970, էջ 662—663։

ակտիվ մասնակից... Կոլեկտիվացումը սոցիալիստական հեղափոխության կարևորագույն բաղկացուցիչ մասերից մեկն էր։ Ինչպես և ամեն մի հեղափոխական գործ, այն անցնում էր սուր պայքարում։ Պահանջվում էր ընկճել վերջին և առավել բազմամարդ շահագործող դասակարգի՝ կուլակության դիմադրությունը։ Գյուղում տիրող սոցիալական իրադրության բարդությունը, տեխնիկայի քչությունը, հանուն ինդուստրացման՝ գյուղի շատ կարիքները ժամանակավորապես գոհարերելու անհրաժեշտությունը՝ այս ամենը ստեղծում էր ոչ քիչ դժվարություններ։ Սակայն կուսակցության նպատակասլաց աշխատանքը, աշխատավոր գյուղացիության և բանվոր դասակարգի ակտիվ ջանքերը հնարավորություն ստեղծեցին հաղթահարելու այդ դժվարությունները»[26]։

* * *

1929 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1930 թ. հունվար ամիսներին Անդրկովկասի և Հայաստանի ղեկավար կուսակցական մարմինները, ուժեղացնելով գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման նախապատրաստման և անցկացման աշխատանքները, միաժամանակ կուրս վերցրին անցնելու գյուղի այնպիսի արագ և շուտափույթ կոլեկտիվացմանը, որպիսին չէր համապատասխանում տեղական հնարավորություններին ու պայմաններին և այդ գործի պատրաստության աստիճանին։

1929 թ. դեկտեմբերի 4-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը հաստատեց Կենտկոմին կից գյուղական խորհրդակցության առաջիկա պլենումի օրակարգը, որի հարցերից մեկը վերաբերում էր «հնգամյակի ընթացքում մեքենատրակտորային կայանների ցանցի ընդարձակմանը և ամբողջ շրջանների գյուղատնտեսության կոլեկտիվացմանը»[27]։

1929 թ. դեկտեմբերի 15-ին ՀամԿ(բ)Կ Անդրբյուրոն որոշում ընդունեց գարնանացանի կամպանիայի նախապատրաստման և անցկացման մասին։ Անդրբյուրոն պահանջում էր գործադրել այլ հանրապետություններում գործնականորեն ստուգված մասսայական կոլեկտիվացման ձևերը և համատարած կոլեկտիվացման մեջ ընդգրկել ամբողջական գյուղեր ու շրջաններ։ Հայաստանի համար տրվում էր մեկ գավառի և երկու շրջանի համատարած կոլեկտիվացման և մեկ հզոր գյուղատնտեսական-արդյունաբերական կոմբինատ կազմակերպելու առաջադրանք (այն ծրագրվեց Սարդարապատում)։ Գարնան գյուղատնտե-

26 Նույն տեղում, էջ 117—118։

27 ՏԿ՝ ՄԿԻ ՀՅԱԿ, ֆ. 1, ց. 13, գ. 34, թ. 253։

սական կամպանիային մասնակցելու, գյուղի արտադրական օգնությունը և կոլեկտիվացման աշխատանքներն ուժեղացնելու համար Անդրկովկասի գյուղերն էին մեկնելու հազար մարդուց բաղկացած բանվորական բրիգադներ։ Անդրեևիչը պահանջում էր 1930 թ. գարնանացանի կամպանիայի ընթացքում բնկում ստեղծել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման տեմպի մեջ[28]։

Եթե ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումը նախատեսել էր համատարած կոլեկտիվացումն իրագործել առաջին հնգամյակի ընթացքում, ապա Անդրեևիչը խիստ արագացրեց այդ տեմպերը և ավելացրեց համատարած կոլեկտիվացման ենթակա շրջանների թիվը։

ՀԿ(բ)Կ Երևանի գավկոմը 1929 թ. դեկտեմբերի 11-ին որոշում ընդունեց գավառի բամբակաբուծական շրջանների համատարած կոլեկտիվացումն արագացնելու մասին։ Ղուրդուղուլի շրջանում այն ավարտվելու էր գարնանացանի կամպանիայի ընթացքում, իսկ Վաղարշապատի, Հրազդանի, Ղամարլուի և Վեդիի շրջաններում՝ մինչև 1930 թ. վերջը, այն դեպքում, երբ նոյեմբերյան պլենումը սահմանել էր ավելի տևական ժամկետներ, իսկ Վեդիի շրջանը համատարածի մեջ չէր նախատեսել։ Գավառի շրջկոմներին հանձնարարվեց անմիջապես մշակել համատարած կոլեկտիվացման կենսագործման և մյուս շրջաններում կոլտնտեսությունների զարգացման հարցերը[29]։

Դեկտեմբերի 31-ին Երևանի գավկոմը հաստատեց 1930 թ. գարնանացանի ստուգիչ թվերը և միաժամանակ հանձնարարեց նորից մեծացնելու մի շարք շրջանների (Թալին, Դարալագյազ, Կոտայք, Մեղրի) կոլեկտիվացման առաջադրանքները։ «Համաձայնվել,— ասված է նույն օրվա որոշման մեջ,— ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշման հետ և ամբողջ Երևանի գավառում համատարած կոլեկտիվացման անցնելու հարցը գտնել միանգամայն ժամանակին ու հասունացած»[30]։

Ամբողջ հանրապետությունում կոլեկտիվացումն էլ ավելի ծավալելու և գարնանացանի կամպանիան հաջող կազմակերպելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1930 թ. հունվարի 6-ին ընդունեց առանձին որոշում։ Որոշման մեջ նշվում էր, որ զեկավարվելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումների որոշումներով, առաջիկա գարնան գյուղատնտեսական կամպանիան պետք է վճռական դեր խաղա «մանրատված գյուղացիական տնտեսությունները ոչ միայն մեծ

28 Տե՛ս «Заря Востока», 17 декабря 1929 г.

29 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 4, ց. 1, գ. 1418, թ. 105։

30 Նույն տեղում, թ. 111։

խմբերով, այլև ամբողջ գյուղերով ու համատարած շրջաններով մասսայաբար լայն կոլեկտիվացման ռելսերի վրա փոխադրելու գործում»։ Գյուղատնտեսության մեջ շեշտակի վերելքի անհրաժեշտությունը պահանջում է լայնորեն ծավալել աշխատանքները մասսայական կոլեկտիվացման ուղղությամբ։ Մոտակա պրակտիկ խնդիրն էր ծավալել ամբողջ Երևանի գավառի և Բասարգեչարի ու Դուզքենդի շրջանների համատարած կոլեկտիվացումը։ Հանրապետության մյուս շրջաններում կոլտնտեսությունարարության տեմպը վճռականորեն ուժեղացնելու հետ միաժամանակ Կենտկոմը անհրաժեշտ էր համարում «Հայաստանի ամբողջ գյուղատնտեսության համատարած կոոպերացումը, թույլ կոլեկտիվացման շրջաններում գյուղական ընկերությունների ցանցի լայն ծավալման միջոցով»։

Հաստատելով գարնան գյուղատնտեսական կամպանիայի պլանի ստուգիչ թվերը որպես ելակետային, Կենտկոմը դրանք համարեց նվազագույն և առաջարկեց ճշտել ու մինչև փետրվարի 10-ը կառավարության հաստատմանը ներկայացնել վերջնական պլանը։ Ընդ որում կոլտնտեսությունների և կուսակցության գավկոմներին առաջարկվում էր անմիջապես աշխատանքը ծավալել այնպես, որ այդ նվազագույն առաջադրանքները 1930 թ. ընթացքում գերազանցվեն։

Հողժողկոմատին և Կոլտնտեսներին առաջարկվեց մշակել ծրագիր արտադրության միջոցների հանրայնացման չափերը մեծացնելու, գերազանցապես բարձր տիպի կոլեկտիվ տնտեսություններ (արտել, կոմունա) կազմակերպելու ուղղությամբ[31]։

Այսպիսով, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումից հետո Կենտկոմը նոր քայլ կատարեց կոլտնտեսային շարժման տեմպերը ավելի բարձրացնելու ուղղությամբ։ Դրան հաջորդեցին տեղական կուսակցական կազմակերպությունների նորանոր սխալները։

Միաժամանակ պետք է նշել, որ պատմական դասականության մեջ վերոհիշյալ որոշման բովանդակությունը ճիշտ չի մեկնաբանվել, աղավաղվել է։ Այսպես, նշվել է, թե իբր Կենտկոմը հունվարի 6-ին որոշում ընդունեց «Հանրապետության բոլոր շրջաններում անմիջապես համատարած կոլեկտիվացման անցնելու մասին[32]»։ Ինչպես վերևում տե-

---

31 Տե՛ս ՄԼԻ ՀՍՍ, ֆ. 1, ց. 13, գ. 34, թ. 558—564։

32 «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր»։ Երևան, 1967, էջ 425։ Տե՛ս նաև ռուսերեն հրատարակությունը՝ Երևան, 1964, էջ 306։ Այստեղից սխալն անցել է նաև այլ գրքերի մեջ։ Տե՛ս П. Ломашвили, Великий переворот, Тбилиси, 1972, стр. 191.

սանք, իրականում որոշման մեջ խոսվում է ոչ թե այդ մասին, այլ գյուղատնտեսական կոոպերատիվ ցանցը լայնորեն ծավալելու մասին՝ հատկապես թույլ կոլեկտիվացման շրջաններում, ինչպես նաև մյուս վայրերում։

Ելնելով կուսակցության դիրեկտիվներից հանրապետության կառավարությունը 1930 թ. հունվարի 11-ին հաստատեց գարնանացանի վերաբերյալ անհրաժեշտ ձեռնարկումների պլանը։ Առաջադրանք տրվեց 1930 թ. սոցիալիստական հատվածի մեջ ընդգրկել բոլոր ցանքատարածությունների 10,4 տոկոսը՝ գարնանը և 26 տոկոսը՝ մինչև բերքահավաքը։ Կոլտնտեսություններն ընդգրկելու էին բամբակի բոլոր ցանքատարածությունները (չհաշված սովխոզների ցանքը)[33]։ Նշանակում է, բամբակագործական բոլոր շրջանները լրիվ կոլեկտիվացվելու էին։

1929/30 թ. ստուգիչ թվերի համաձայն գարնանացանի կամպանիայի ընթացքում Հայաստանում կոլեկտիվացվելու էր բոլոր գյուղացիական տնտեսությունների (161 հազար) 30,8 տոկոսը (առաջին հնգամյա պլանով հնգամյակի վերջի համար նախատեսված 17,2 տոկոսի դիմաց)։ Համատարած կոլեկտիվացում էր իրագործվելու Ղուրդուղուլիի, Վաղարշապատի, Ղամարլուի և Հրազդանի շրջաններում՝ 90 տոկոսով, Աշտարակի և Մեղրիի շրջաններում՝ 50 և Վեդու շրջանում՝ 40 տոկոսով (բոլորը Երևանի գավառում, ուր առայժմ համատարածից դուրս էին մնում Դարալագյազի, Թալինի և Կոտայքի շրջանները)։ Մյուս գավառներից համատարած կոլեկտիվացումն ընդգրկելու էր Դուզքինդի (Լենինական) ու Բասարգեչարի (Սևան) շրջանները՝ 50 տոկոսով և Ստեփանավանի շրջանը (Լոռի)՝ 36,1 տոկոսով[34]։ Որոշմն նախատեսվում էր համատարած կոլեկտիվացման ենթարկել բոլոր բամբակագործական և առանձին այգեգործական, հացահատիկային ու անասնապահական շրջաններ կամ ընդամենը 10 շրջան (ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումը նախատեսել էր 5 շրջան)։

1930 թ. հունվարի 15-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Երևանի կոմիտեն հանդես եկան դիմումով՝ «Բոլոր կոլտնտեսություններին, բոլոր աշխատավոր գյուղացիներին», ուր կոչ էր արվում համատարած կոլեկտիվացման միջոցով վերջնական հարված տալ դասակարգային թշնա-

---

33 Տե՛ս «ՀՍԽՀ բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1930, № 1, հոդ. 11։

34 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 181, թ. 4 և գ. 224, թ. 24—25։

ման, վերացնել կուլակությունը որպես դասակարգ[35]։ Սա առաջին փաստաթղթերից մեկն է, որտեղ դիրեկտիվ էր տրվում Հայաստանի համատարած կոլեկտիվացման շրջաններում անցնելու կուլակության որպես դասակարգի վերացմանը։ Որոշ ուսումնասիրություններում, վերևում բերված օրինակի նման, ներկայացվել է այնպես, թե իբր խնդիր էր դրվում «ամբողջ հանրապետությունում միանգամից անցկացնել համատարած կոլեկտիվացում»[36]։ Մինչդեռ, մեր կարծիքով, ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Երևանի կոմիտեն համատարած կոլեկտիվացման և այդ հիման վրա կուլակին որպես դասակարգ վերացնելու կոչ էին անում միայն Երևանի գավառում։

Մի քանի օր անց, հունվարի 19—22-ին կայացավ ՀամԿ(բ)Կ Անդրբերկրյան պլենում, որտեղ լսվեց նաև Անդրկովկասյան ֆեդերացիայի հողժողկոմի տեղակալ Ար. Երզնկյանի զեկուցումը կոլտնտեսային շինարարության վերաբերյալ կուսակցության դիրեկտիվների կատարման գործնական միջոցառումների մասին։ Զեկուցողը նշեց, որ առաջիկա գարնանը համատարած կոլեկտիվացումը ընդգրկելու է ոչ պակաս 5 շրջան՝ Վրաստանում, 9 շրջան՝ Ադրբեջանում և 4 շրջան՝ Հայաստանում։ Բացի դրանից, յուրաքանչյուր հանրապետությունում «պետք է ապահովել անցումը համատարած կոլեկտիվացման մի շարք գավառներում»[37]։ Երևանի գավառի կոլեկտիվացումը ավարտվելու էր գարնանացանի կամպանիայի ժամանակ։ Այսպիսով, փաստորեն դիրեկտիվ էր տրվում համատարած կոլեկտիվացումը ավելի ընդարձակելու և արագացնելու ուղղությամբ։

Անդրբերկրյան պլենումի հունվարի 22-ի բանաձևում ճիշտ կերպով նշվում էին Անդրկովկասի առանձին շրջանների ազգային, տնտեսական և քաղաքական առանձնահատկությունների մասին[38]։ Սակայն այդ ճիշտ դիտողությունները, ինչպես կտեսնենք, անտեսվեցին և հաշվի չառնվեցին պրակտիկայում՝ գյուղատնտեսության կոլեկտիվացման և կուլակության վերացման ժամանակ։ Սխալ էր և կուսակցության նոր քաղաքականությունից չէր բխում պլենումի որոշման այն մասը, թե իբր կուլակների վերացման հետ միասին վերացվելու է նաև նոր բուրժուա-

---

35 Տե՛ս նույն տեղում, գ. 214, թ. 24։ Տե՛ս նաև «Մամկալ», 1930 թ. հունվարի 16 (կոչի մի մասը)։

36 «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», էջ 426։

37 «Заря Востока», 25 января 1930 г.

38 Տե՛ս նույն տեղում։

դիան (նկատմամբ): Բանաձևում հստակ չէր ձևակերպված նաև կուլակության նկատմամբ կիրառվող քաղաքականությունը: Խոսվում էր «կուլակներին առաջին հերթին (ընդգծումը մերն է—Վ. Ղ.) համատարած կոլեկտիվացման շրջաններից» արտաքսելու մասին, իսկ թե ինչպես պետք էր վարվել կուլակների հետ մյուս շրջաններում, ոչինչ չէր ասված:

Այսպիսով, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը սոցիալիստական գյուղի զարգացման բնկումնային շրջանում մշակեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լայն ծրագիր: Մի շարք շրջանների համար ուսել համարվեց համատարած կոլեկտիվացումը հենց առաջիկա գարնանացանի ընթացքում: Գարնանացանի կամպանիան վերածվեց մասսայական կոլեկտիվացումը ծավալելու պլանի: Նախատեսելով կոլեկտիվացման խիստ արագ տեմպեր, Անդրֆեդերացիայի և Հայաստանի ղեկավար կուսակցական մարմինները հաշվի չնստեցին այն բանի հետ, թե որքանով են հասունացել պայմանները դրա համար, անտեսվեցին ազգային շրջանների առանձնահատկություններն ու դժվարությունները: Կոլեկտիվացման տեմպերի և մյուս հարցերում խախտվեցին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի որոշումները: Անցնելով արագացված կոլեկտիվացման ծրագրի գործնական իրականացմանը, հանրապետության ղեկավար և տեղական մարմինները չառաջնորդվեցին նույնիսկ մշակված ծրագրով: Փաստորեն հենց հունվարին նրանք վերցրին ամբողջ Հայաստանում համատարած կոլեկտիվացման կուրս: Հանդես գալով հունվարի 23—24-ին կայացած ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի պլենումում, Կենտկոմի և Երևանի կոմիտեի քարտուղար Ա. Խանջյանը նշեց, որ կոլեկտիվացումն արագորեն առաջադիմում է ինչպես Երևանի գավառում, այնպես էլ ամբողջ հանրապետությունում: Գավառներից ու շրջաններից ստացվող տեղեկությունները վկայում են, որ կյանքը ետ է թողնում նույնիսկ ամենալավատեսական ենթադրությունները: Ամեն օր նորանոր գյուղեր են բռնում համատարած կոլեկտիվացման ուղին: Կոլտնտեսությունների գաղափարը համակել է աշխատավոր գյուղացիության հրակայտական մեծամասնությանը, ուստի, եզրափակում է Ա. Խանջյանը, կարելի է հաստատապես պնդել, որ «Հայաստանի սոցիալիստականացման տասնհորդ տարեդարձը կվերածվի ողջ երկրի համատարած կոլեկտիվացման տոնի»[39]: Այդպիսի կուրս ընդունեց նաև ՀամԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրային կոմիտեն:

---

39 «Խորհրդային Հայաստան», 1930 թ. հունվարի 26:

Չնայած թույլ տրված սխալներին և կուսակցական դծի ծռումներին, գործնական մեծ աշխատանք կատարվեց գյուղի սոցիալիստական վերակառուցման ծրագիրը իրականացնելու, գյուղի կապիտալիստական տարրերի դիմադրությունը ճնշելու համար։

* * *

1930 թ. սկզբին ավելի ուժեղացվեց գարնանացանի կամպանիայի նախապատրաստման և կոլեկտիվացման ծավալման աշխատանքը։ Այդ կապակցությամբ Անդրերկոմը հանրապետական կենտկոմներին դիրեկտիվ տվեց 2—3 ամսով գյուղական շրջաններն ուղարկելու համար առանձնացնել ղեկավար աշխատողներ, իսկ երկրային կազմակերպություններից նույն գործի համար նախատեսվում էին 10—20 պատասխանատու աշխատողներ[40]։

Ելնելով գավառներն ու շրջանները գյուղատնտեսական ղեկավար կադրերով ամրապնդելու մասին Համկ(բ)կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումի որոշումից, Անդրերկոմը հանրապետական կենտկոմներին հանձնարարեց այդ նպատակի համար ընտրել 150 պատասխանատու կուսակցական, արհմիութենական և տնտեսական աշխատողներ, որոնք նշանակում էին ստանալու և տեղերն էին մեկնելու մինչև հունվարի 15-ը։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը մեծ աշխատանք ծավալեց գարնանացանի և կոլեկտիվացման կամպանիան կադրերով ապահովելու, ինչպես նաև կադրերի պատրաստման բնագավառում։

1930 թ. հունվարի 8-ին Հկ(բ)կ Կենտկոմը որոշումներ ընդունեց գարնանացանի կամպանիայի, կադրերի պատրաստման դասընթացներ կազմակերպելու և այլ հարցերի մասին։ Դասընթացներում պարապելու և կոլտնտեսություններին օգնելու համար առանձնացվում էին համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկումների բարձր կուրսերի ուսանողները։ Մոբիլիզացվում էին ագրոնոմները, 50 պատասխանատու աշխատողներ՝ հունվարի 25-ից տեղերում լինելու և տեղական կազմակերպություններին օգնելու համար, ինչպես նաև 60 հաշվային աշխատողներ։ Համապատասխան միջոցառումներ էին նախատեսվում բանվորական բրիգադների անդամների ընտրության, Ադրբեջանից և Հայաստանից 100-ական

---

40 Տե՛ս «Заря Востока», 3 января 1930 г.

բանվորներ հավաքագրելու և այլ հարցերի ուղղությամբ։ Գավառային կոմիտեներին առաջադրանք տրվեց քսանհինգհազարականների հաշվին ընտրել 60 բանվորներ[41]։ Լայն միջոցառումներ էին իրականացվում գարնանացանի կամպանիայի ընթացքում քաղաքական մասսայական աշխատանքը ծավալելու ուղղությամբ[42]։ Հանրապետության Ժողկոմխորհը հունվարի 11-ին որոշեց անմիջապես ձեռնամուխ լինել կոլտնտեսությունների ու սովխոզների հողերի կենտրոնացման և հողաշինարարության աշխատանքներին։ Մոբիլիզացվեցին բոլոր գյուղատնտեսական կադրերը, կազմակերպվեցին կոլտնտեսությունների ղեկավար ու հաշվային աշխատողների, ագրոլիազորների, չբավորամիջակային ակտիվիստների պատրաստման, խրճիթվարների և այլ աշխատողների դասընթացներ։ Արագացվեց ՄՏԿ-ների կազմակերպումը և այլն[43]։

Գյուղի սոցիալիստական վերափոխման հզոր լծակ դարձան մեքենատրակտորային կայանները։ Հաշվի առնելով Սովետական Միության առաջին ՄՏԿ-ների դրական փորձը ԽՍՀՄ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը 1929 թ. հոկտեմբերի 5-ին որոշում ընդունեց ՄՏԿ-ների կազմակերպելու մասին։ Նրանք դարձան կոլտնտեսությունների տեխնիկական սպասարկման հիմնական ձև և կոլտնտեսային շարժման կազմակերպման կարևոր լծակ։

ՄՏԿ-ների կազմակերպումն ուներ տնտեսական և քաղաքական մեծ նշանակություն։ Այն տեխնիկապես ապահովում էր գյուղի սոցիալիստական զարգացումը, թեթևացնում և հեշտացնում էր մարդկանց աշխատանքը, տեխնիկապես վերազինում ամբողջ գյուղատնտեսությունը և ամրապնդում քաղաքի ու գյուղի արտադրական կապը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Հանրապետության անդրանիկ ՄՏԿ-ի կազմակերպման մասին որոշումը ՀԿ(բ)Կ Կենտկոմն ընդունել էր 1929 թ. օգոստոսի 29-ին։ Նրա տեղադրման վայր ընտրվեց Սարդարապատի դաշտը Ղուրդուղուլու շրջանում, 14 հազար հեկտար վարի կարողությամբ։

Մասսայական կոլտնտեսային շարժման առաջին գարնանը դաշտ դուրս եկան Սարդարապատի ՄՏԿ-ի տրակտորները, 7—8 բրիգադով։ Ղեկի մոտ նստել էին 130 տրակտորիստներ, որոնք Ղուրդուղուլիի շրջանի կոլտնտեսականներ էին և մասնագիտական դասընթացներ էին անցել հենց կայանում։ Ղուրդուղուլիից բացի կայանը աշխատանքներ էր

41 ՏԵ՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 13, գ. 34, թ. 507, 540, 543, 556։

42 ՏԵ՛ս նույն տեղում, թ. 553 և ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 905, թ. 8, 9։

43 ՏԵ՛ս «ՀՍՍՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1930, № 1, հոդ. 11։

կատարել նաև Հանրապետության ութ այլ շրջանների 46 կոլտնտեսություններում, նույնիսկ հեռավոր Ուզունլարում, Ջոդի սովխոզում, Լենինականում։ Իսկ Ղուրդուղուլիում նա ապահովել էր 16 կոլտնտեսությունների և գրեթե բոլոր մեքենատրակտորների վարը։

Սարդարապատի ՄՏԿ-ի գործունեության շնորհիվ ավելի արագացավ Ղուրդուղուլիի շրջանի աշխատավոր գյուղացիների ընդգրկումը կոլտնտեսությունների մեջ։ Կյանքը գյուղացիներին համոզում էր, որ նորագույն տեխնիկայի վրա հիմնված կոլեկտիվ տնտեսությունը, համատեղ աշխատանքը մեծ առավելություն ունեն մասնավոր անհատական տնտեսության նկատմամբ, որ հարկավոր է վերացնել միջնակները և պայմաններ ստեղծել տրակտորի արդյունավետ և լայնածավալ աշխատանքի համար։ ՄՏԿ-ները դառնում էին կոլտնտեսային շարժման ծավալման հենակետեր։

Հողժողկոմատի տվյալներով 1930 թ. Հայաստանում կար 263 տրակտոր (Երևանի գավառում՝ 195, Լենինականում՝ 35, Սևանում՝ 17, Լոռիում՝ 13, Զանգեզուրում՝ 3), որոնք կենտրոնացած էին ՄՏԿ-ներում, ինչպես նաև սովխոզներում ու գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերություններում[44]։

Հաշվի առնելով տրակտորների ցրված օգտագործման աննպատակահարմարությունը, որոշվեց դրանք կենտրոնացնել։ Այսպես, բամբակագործական միությունը 105 տրակտորներով կազմակերպեց չորս մեքենատրակտորային շարասյուն՝ Վաղարշապատում (Էջմիածին), Ուլուխանլուում (Մասիս), Ղամարլուում (Արտաշատ) և Դավալուում (Արարատ)։ Լոռու գավառում տրակտորները կենտրոնացվեցին Վորոնցովկայում (Կալինինո)։ Կազմակերպվեցին նաև մեքենաձիային և եղների շարասյուններ։

Միայն 1930 թ. Հանրապետության գյուղատնտեսությունն ստացավ 160 նոր տրակտոր, նախորդ տարվա 25-ի դիմաց։ Ստացվեց նաև 8 հաղար գութան, 1700 տափան, մոտ հազար ցանիչ մեքենա, 500 սերմալտիչ, 1550 կուլտիվատոր և գյուղատնտեսական այլ տեխնիկա[45]։

1930 թ. գարնանացանի կամպանիայի համար նախատեսված 3,5 միլիոն ռուբլի վարկի փոխարեն իրացվեց մոտ 3,7 միլիոն ռուբլի, որի մեծ մասը հատկացվեց կոլտնտեսություններին[46]։ Գոմաբի մեծ մասը ծախսվում էր մեքենայացման գծով։

---

44 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 43, թ. 8։

45 Տե՛ս նույն տեղում, ց. 19, գ. 173, թ. 31—33։

46 Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 79, թ. 7—9։

Կուսակցության XV համագումարին հաջորդող չորս տարվա ընթացքում (1928—1931 թթ.) հանրապետության գյուղը ստացավ 3,5 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ, որի ավելի քան երկու երրորդը (2,6 միլիոն ռուբլի) բաժին էր ընկնում վերջին երկու տարվան: Նույն ժամանակամիջոցում գյուղին հատկացվեց մոտ 30,0 հազար գութան, ավելի քան 7700 փոցխ, 2600 շարքացան և այլ գործիքներ[47]:

Կոլտնտեսային շարժման զարգացմանը նպաստում էր նաև սովխոզային շինարարությունը: Մասսայական կոլեկտիվացման նախապատրաստման խնդիրը նոր պահանջներ առաջադրեց նաև գյուղատնտեսական պետական ձեռնարկություններին:

Սովխոզային շինարարությունը ծավալվում էր մի կողմից նրանց ցանցի լայնացման, մյուս կողմից նրանց ագրոնոմիական օգնության ընդարձակման ուղղությամբ: 30-ական թվականների առաջին տարիներին կազմակերպվեցին բազմաթիվ նոր սովխոզներ, որոնք հիմնականում ունեին այգեգործական, դաշտավարական և անասնաբուծական ուղղություն: 1930 թ. սկսեցին գործել Հոկտեմբերյանի և Վեղիի բամբակագործական սովխոզները: 1929 թ. վերջին կազմակերպվել էր Արագածի ոչխարաբուծական սովխոզը: Անասնաբուծական սովխոզներ կազմակերպվեցին նաև Աղբաբայում, Բաղարշայում, Արազդայանում: Լենինականի ճակնդեղահացահատիկագործական սովխոզը 1930 թ. աշնանը զգալի վարուցանք էր կատարել կոլտնտեսություններում: Նա նախատեսել էր ստել 500 ցենտներ սերմ: Ջոդի սովխոզը ստել էր 300 ցենտներ:

Կոլտնտեսություններին ավելի շոշափելի օգնություն ցույց տրվեց 1931 թ.: Նրանց համար կատարվեց 2150 հեկտար բամբակի վար, ցանվեց 915 հեկտար տարածություն: Բավական աշխատանք էր տարել Լամբալուի ծխախոտագործական սովխոզը: Սովխոզների միջոցով կազմվել էին տասնյակ կոլտնտեսությունների արտադրական պլանները և այլն:

Դեռևս 1929 թ. հունիսի 27-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում էր ընդունել գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպական կառուցվածքի մասին[48]: Հայգյուղկոոպի համար այդ որոշումը կոնկրետաց-

---

47 Տե՛ս Ա. Խանջյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը VIII համագումարին, Երևան, 1932, էջ 68:

48 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства. Важнейшие постановления Коммунистической партии и Советского правительства. 1927—1935 гг.», М., 1957, стр. 183—186.

վեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի կողմից, նույն թվականի սեպտեմբերի 13-ին[49]։ Դրա հիման վրա հանդես եկան երկու նոր մասնագիտական (ճյուղային) կոոպերատիվ միավորումներ՝ հացահատիկա-ֆուրաժային կոոպերատիվների միությունը և ծխախոտագործական ու մետաքսագործական կոոպերատիվների միությունը։ Պանիրյուղկենտրոնը վերակառուցվեց կաթնատնտեսական կոոպերատիվների միության, իսկ բամբակամիությունը և այգեգինկոոպը պահպանվեցին նախկին ձևով։ Կոոպերացիայի ստորին ցանցը կազմում էին շրջանային միությունների մեջ ընդգրկված գյուղական արտադրական ընկերությունները[50]։

Վերջիններս, ինչպես նախատեսում էր կուսակցությունը, աստիճանաբար ուժեղացնելով անտեսության հանրայնացման տարրերը, «պետք է բաղա դառնային խոշոր կոլտնտեսությունների շինարարության համար»[51]։

Նոր պայմաններում, երբ ավելի էր ուժեղանում հարձակումը գյուղի կապիտալիստական տարրերի դեմ, երբ նրանք զրկվում էին ձայնի իրավունքից գյուղական հողային հասարակություններում, կոմունիստական կուսակցությունը որոշեց սովետներում ընտրական իրավունքից զրկված կուլակներին և ոչ աշխատավորական տարրերին ձայնի իրավունքից զրկել նաև բոլոր տեսակի կոոպերատիվներում։

Համատարած կոլեկտիվացման պայմաններում 1930 թ. սկզբին գյուղատնտեսական կոոպերացիան նոր վերակառուցում ապրեց։ Կոլտնտեսային մարմինների հետ միասին նա զբաղվում էր գերազանցապես կոլեկտիվացման գործով։ Կոոպերացիայի ստորին ցանցը ձուլվեց կոլտնտեսությունների ցանցի հետ։ Նորաստեղծ շրջանային միությունները դարձան կոլտնտեսային միություններ։ Հանրապետական մասնագիտական միավորումները զբաղվում էին իրենց ենթակա շրջանների կոլեկտիվացման հարցերով։ Իսկ կոլտնտեսենտրոնի կողքին կոլտնտեսային շարժման նոր ղեկավար կազմակերպություն դարձավ գյուղատնտեսական կոոպերատիվների միությունների միությունը։ Կոոպերատիվ ցանցը փաստորեն դադարեց գոյություն ունենալուց։ Այսպիսով ստացվեց զուգահեռ կոլտնտեսային կազմակերպական ցանց, որի վերացումը և միասնական ու միաձույլ ղեկավարության ստեղծումը դարձավ օրա-

---

49 Տե՛ս ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 13, գ. 27, թ. 5, 56։

50 Տե՛ս նույն տեղում. ֆ. 1, ց. 17, գ. 218, թ. 1—8։ Տե՛ս նաև Центральный государственный архив народного хозяйства СССР (այսուհետև՝ ЦГАНХ СССР), ф. 3983, оп. 9, д. 150, л. 7—12.

51 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 184.

կարգի հարց։ Սակայն այդ հարցը դեռևս իր լուծումը չէր ստացել, երբ, ինչպես կտեսնենք, բացահայտվեցին և սկսեցին ուղղվել համատարած կոլեկտիվացման հետ կապված սխալները, և գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքները վերակառուցվեցին նոր պայմանների համեմատ։

Գյուղատնտեսական ապրանքների մթերման կոնտրակտացիայի ձևը, որը կոոպերացիայի գործունեության կարևոր բնագավառներից էր և մեծ նշանակություն ուներ գյուղացիությանը կոլտնտեսային շինարարության մեջ ներգրավելու համար, նույնպես վերակառուցում ապրեց։ Այդ մասին հատուկ որոշում ընդունեց ՀՍԽՀ ԺողԿոմխորհը 1930 թ. փետրվարի 15-ին։ Նախատեսվում էր կոնտրակտացիան տարածել կոլտնտեսությունների, գյուղական արտադրական միությունների և հողային հասարակությունների վրա։ Այդ նշանակում է, որ կոլտնտեսությունների մեջ գյուղացիների ներգրավումը նախապատրաստվում էր կատարել ամբողջ գյուղերով։ Կուլակների ապրանքային արտադրանքի գնումը նախատեսվում էր կատարել առանձին կարգով, նրանց վրա դրվող գրավոր պարտավորություններով[52]։

Մինչև 1930 թ. մայիսի 10-ը կոնտրակտացվել էր բամբակի ամբողջ ցանքը (20 հազար հեկտար), 21 հազար հեկտար հացահատիկ և 724 հեկտար ծխախոտ։ 1929/30 տնտեսական տարում պայմանագրային եղանակով մթերվել էր 242 հազար ցենտներ խաղող, 1500 ցենտներ բուրդ, 2100 տուփ դրենա (շերամի սերմ), 93 հազար ցենտներ կաթ, զգալի քանակությամբ անասուններ և այլ գյուղատնտեսական մթերքներ[53]։

* * *

Գյուղի կոլեկտիվացումը առաջ մղելու համար մոբիլիզացվեցին կուսակցության, բանվոր դասակարգի, կոմերիտմիության և մյուս հասարակական կազմակերպությունների ուժերը։ Սովետական գյուղը երբեք բազաբի օգնությունը այնպես չէր զգացել, ինչպես կոլեկտիվացման ծավալման շրջանում։

Կոմունիստական կուսակցությունը մոբիլիզացրեց իր լավագույն ուժերին, որոնք մեկնեցին շրջաններն ու գյուղերը առաջիկա գարնանա-

---

52 Տե՛ս «ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1930, № 2, հոդ. 28։

53 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 14, գ. 79, թ. 7—9։ «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928/29—1929/30)», Երևան, 1931, էջ 61։

ցանը և կոլեկտիվացումը կազմակերպված անցկացնելու, ինչպես նաև թույլ տված սխալներն ուղղելու նպատակով։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1930 թ. հունվարի 16-ին հաստատեց 51 պատասխանատու աշխատողների ցուցակը, որոնք մեկ ամսով մեկնեցին շրջանները։ Տանձինով մարդուց բաղկացած պատասխանատու աշխատողների մի այլ խումբ, Կենտկոմի հունվարի 30-ի որոշմամբ, ամրացվեց գավառներին, երկու շաբաթ ժամանակով։ Փետրվարի 23-ին որոշում ընդունվեց գավառներում և շրջաններում մշտական աշխատանքի համար 25 և երկու ամսով լրացուցիչ 20 մարդ մոբիլիզացնելու մասին։ Մարտին մի նոր որոշումով 23 պատասխանատու աշխատողներ մոբիլիզացվեցին որպես խոշոր կոլտնտեսությունների նախագահներ, և ևս 47 մարդ՝ մինչև գարնանացանի վերջը։ Շրջանները և գյուղերը մեկնեցին նաև մեծ թվով հաշվային աշխատողներ, գյուղատնտեսներ և այլ մասնագետներ։ Կառավարությունը որոշեց իրենց մասնագիտությամբ չաշխատող բոլոր ադրոնոմներին հաշվի առնելու և համապատասխան աշխատանքի ուղարկելու մասին։

ՀԿ(բ)Կ VIII համագումարին Կենտկոմի ներկայացրած հաշվետու զեկուցման մեջ նշված է, որ մշտական աշխատանքի համար կենտրոնից շրջանները և մասամբ գյուղերն են ուղարկվել 200 աշխատողներ[34]։

Լայն ծավալ ընդունեց կադրերի պատրաստումը։

1929 թ. դեկտեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմը հաստատեց կոլտնտեսային կադրերի պատրաստման պլանը։ Միայն ձմռան ընթացքում տարբեր տիպի դասընթացներ անցան ավելի քան 7500 մարդ (ոչ լրիվ տրվյալներով)։ Հայաստանի բոլոր շրջաններում կազմակերպվել էին կոլտնտեսային և գյուղական ակտիվիստների, ագրոլիազորների, խրճիթվարների, հաշվային աշխատողների, տրակտորիստների, ինչպես նաև կոլտնտնախագահների և այլ դասընթացներ։

Մասսայական կոլտնտեսային կադրերի պատրաստումը ավելի կազմակերպված և լայն բնույթ ընդունեց 1931 թ., երբ կոլտնտեսային շարժումը բավական առաջադիմել էր։ 1931 թ. փետրվարի 9-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը հավանություն տվեց կադրերի պատրաստման պլանին և կառավարությանը հանձնարարեց ապահովել դասընթացների կազմակերպումն ու նորմալ աշխատանքները։ Այդ հարցին Կենտկոմը նորից անդրադարձավ հունիսին, ընդգծելով հատկապես անասնաբուծական կադրերի պատրաստման կարևորությունը։

---

34 Ա. Խանչյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը VIII համագումարին, Երևան, 1932, էջ 98։

Կոլտնտեսությունների գծով կազմակերպված տարբեր դասընթացներում 1931 թ. սովորել էին մոտ 15 հազար կոլտնտեսականներ, ինչպես նաև աշխատավոր մենատնտեսներ, պլանով նախատեսված 12.800-ի փոխարեն: Լենինականի, Վաղարշապատի և Բաքվի կոլտնտեսությունների մեկամյա դպրոցներում սովորել էր 121 մարդ, որոնց մի մասը հանրապետությունում բնակվող ադրբեջանցիներ էին: Մոտ 1400 մարդ, որից 181 ադրբեջանցիներ, անցել էին հաշվային աշխատողների դասընթացները: Գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով կարճատև դասընթացներ կազմակերպվեցին ավելի քան 10 հազար բամբակագործների համար: Մի քանի հազար մարդ եղավ բրիգադավարների դասընթացներում: Ավելի մեծ էր անասնապահության գծով սովորողների թիվը:

1931 թ. ՄՏԿ-ների համար ավելի շատ կադրեր պատրաստվեցին, քան 1930 թ.: ՄՏԿ-ները համալրվում էին բրիգադավարների, վարորդների, մեխանիկների, փականագործների, զոդողների և այլ մեխանիզատորական կադրերով: Նրանց ընդհանուր թիվը հասնում էր 421-ի, 1930 թ. 113-ի դիմաց:

1932 թ. գարնանը 9000 կոլտնտեսականներ գյուղատնտեսական գիտելիքներ էին ձեռք բերում տարբեր դասընթացներում: Կոլտնտեսությունների նախագահների մեկամյա դպրոցը նախորդ տարվա 121-ի դիմաց ավարտեց 217 մարդ:

Կոլտնտեսային կարգերը լայն ասպարեզ բացեցին երիկվա բատրակների, չքավորների ու միջակների մասնագիտական ու քաղաքական զարգացման համար: Ձևավորվեց ակտիվ կոլտնտեսականների բանակը:

Կոլտնտեսային ակտիվ աշխատողներից շատերը, այդ թվում նաև կանայք, առաջ էին քաշվում ավելի բարձր աշխատանքի:

1931 թ. ամռանը 64 շարքային կոլտնտեսականների վստահվեց շրջանային ու հանրապետական պատասխանատու աշխատանք:

1931 թ. հոկտեմբերին անդրկովկասյան, հանրապետական և շրջանային մասշտաբով աշխատանքի համար առաջադրվեցին 38 կոլտնտեսուհիներ: Երկամյա դասընթացներում սովորելուց հետո նրանցից ութը աշխատանքի նշանակվեցին Անդրկովկասյան ֆեդերացիայի ժողկոմատներում, 10-ը՝ հանրապետական ժողկոմատներում և 20-ը՝ շրջաններում:

Արխիվային վավերագրերից մեկում բերված են առաջքաշման ամփոփ տվյալներ, սակայն ժամանակը չի նշված: Մեր կարծիքով այն վե-

բաբերում է 1931 թ. վերջին։ Ըստ այդ փաստաթղթի Հայաստանում կոլտնտեսական ակտիվիստներից առաջ էր քաշվել 281 մարդ, որոնցից 8-ը՝ անդրկովկասյան, 59-ը հանրապետական, 171-ը շրջանային և 43-ը՝ գյուղական մասշտաբով։

Մեծ աշխատանք կատարվեց նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի պատրաստման բնագավառում։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1930 թ. հունվարի 6-ին որոշում ընդունեց պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը առանձին ինստիտուտ դարձնելու մասին, որը տեղի ունեցավ 1930/31 ուսումնական տարում (այդ ժամանակ կատարվեց բուհերի ընդհանուր վերակառուցում)։ Վերակառուցվեց բոլոր գյուղատնտեսական տեխնիկումների, կոոպերատիվ տեխնիկումի, բանվորական ֆակուլտետների գործունեությունը։ 1930/31 ուստարում գործում էին Երևանում՝ այգեբանջարաբուծական, բամբակագործական, ադրբեջանական գյուղատնտեսական, Լենինականում՝ դաշտավարական, անասնապահական, Ստեփանավանում՝ անասնապահական մասնագիտական տեխնիկումները։

ՀՍԽՀ Կենտգործկոմը և Ժողկոմխորհը 1930 թ. հոկտեմբերի 4-ին որոշում ընդունեցին ժողովրդական տնտեսության համար տեխնիկական կադրեր պատրաստելու մասին։ Պետպլանին հանձնարարվեց առաջին հնգամյակի ընթացքում ավելացնել արդյունաբերության և գյուղատնտեսության համար անհրաժեշտ ինժեներների, ագրոնոմների և տեխնիկների թիվը՝ ըստ ժողովրդական տնտեսության պահանջի։

1931 թ. բացվեցին 20 նոր տեխնիկումներ և մասնագիտական դպրոցներ։ Եթե 1930 թ. հանրապետությունում գոյություն ուներ 11 տեխնիկում և մասնագիտական դպրոց, 891 ուսանողներով, ապա 1931 թ. նրանց թիվը հասավ համապատասխանաբար 33-ի և 3127-ի։ Բացի Երևանից, Լենինականից և Ղարաքիլիսայից (Կիրովական), ամենարազմազան տիպի գյուղատնտեսական տեխնիկումներ ու դպրոցներ էին գործում հանրապետության շատ ու շատ շրջաններում՝ Ղուրդուղուլիում (Հոկտեմբերյան), Վաղարշապատում (Էջմիածին), Ղամարլուում (Արտաշատ), Մեղրիում, Օշականում, Դիլիջանում, Իջևանում, Ստեփանավանում, Գորիսում, Նոր Բայազետում, Ներքին Ախտայում (Հրազդան), Քեշիշքենդում (հետո Միկոյան, այժմ Եղեգնաձոր), Ապարանում և Սիսիանում (Ղարաքիլիսա գյուղում)։

ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. սեպտեմբերի 21-ի որոշման համաձայն նույն թվականի հունվարին կազմակերպված Սովետական Հայաստանի կոմունիստական համալսարանը ևս վերակառուցվեց բարձրա-

գույն գյուղատնտեսական դպրոցի։ Նույն թվականին կազմակերպվեց հեռակա գյուղատնտեսական ինստիտուտ։ 1931 թ. գոյություն ուներ նաև հեռակա անասնաբուժական ինստիտուտ։ 1932 թ. հունվարին առաջին շրջանավարտները տվեց Երևանի Անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտը։ Ինստիտուտն ավարտեցին 52 երիտասարդներ։ 1930—1932 թթ. գյուղատնտեսական ինստիտուտի գծով շրջանավարտների թիվը կազմեց 189, բոլոր տեխնիկումների գծով՝ 529։ 1932 թ. Երևանի և Լենինականի բանվորական ֆակուլտետներում սովորում էր 422 մարդ։

Առանձին ուշադրություն էր նվիրվում ազգային փոքրամասնությունների գծով կադրերի պատրաստմանը։ 1931 թ. ադրբեջանական տեխնիկումներ էին կազմակերպվել Երևանում և Ստեփանավանում։ Երկու տարում Հայաստանից Բաքվի կոլտնտեսագահների դասընթացներն ավարտեցին 42 ադրբեջանցիներ։ 1931 թ. պատասխանատու աշխատանքի առաջ քաշվեցին հանրապետական մասշտաբով՝ 19 և շրջանային մասշտաբով՝ 81 ադրբեջանցիներ, ռուսներ և այլ ազգի ներկայացուցիչներ։

* * *

Սովետական բանվոր դասակարգը ջերմորեն արձագանքեց գյուղ մեկնելու և կոլեկտիվացմանը օժանդակելու կոմունիստական կուսակցության կոչին։ Կոմունիստական կուսակցության կողմից նախատեսված 25 հազարի փոխարեն գյուղ մեկնեցին 35 հազար բանվորներ, որոնք մեծ դեր խաղացին կոլտնտեսային շարժման զարգացման և կոլտնտեսությունների ամրապնդման գործում։

Անդրերկրամը որոշեց Անդրկովկասի գյուղերն ուղարկել հազար բանվորներ, հետևյալ բաժանումով. Ադրբեջան՝ 500, Վրաստան՝ 350 և Հայաստան՝ 150[55]։

25-հազարականների, ինչպես նաև բանվորական բրիգադների նախապատրաստումը անմիջապես իրականացնում էին արհմիութենական կազմակերպությունները։ Հայաստանի արհեստակցական միությունների խորհուրդը (ՀԱՄԽ) 1929 թ. դեկտեմբերի 16-ին իր կենտրոնական վարչություններին և գավառային բյուրոներին հրահանգեց 300 դաղդահի բանվորներ ընտրելու և նրանց նախապատրաստելու մասին։

---

55 Տե՛ս «Մամկայ», 1929 թ. դեկտեմբերի 19։

ՀԱՄԽ-ին առընթեր գյուղական հանձնաժողովը որոշեց Ադրբեջանից սպասվող 100 բանվորներին (այդ մասին որոշում էր ընդունել Անդրերկոմը) տեղում ավելացնել ևս 50 բանվորներ և նրանց բաժանել 27 բրիգադների, որոնք մինչև գյուղ մեկնելը պետք է անցնեին համապատասխան կարճատև դասընթացներ։

Անդրերկոմը բանվորների առաջին խումբը, որը ոչ պակաս մեկ տարով կամավոր մեկնելու էր գյուղերը, սահմանեց 300 մարդու չափով, այդ թվում. Ադրբեջան՝ 120, Վրաստան՝ 120 և Հայաստան՝ 60։ Երեքշաբաթյա դասընթացներից հետո 1930 թ. փետրվարի 1-ից նրանք մեկնելու էին տեղերը[56]։ Ադբյուրներից մեկի տվյալներով Բաքվի բանվորությունը Հայաստան և Վրաստան ուղարկեց 200 մարդուց բաղկացած ագիտացիոն-վերանորոգող բրիգադներ։ 25-հազարականների հաշվին միայն Բաքուն տրամադրեց 477 մարդ, որոնցից վերջնականապես իրենց տեղում ամրացան 376-ը[57]։

Կուսակցության որոշմանը հանրապետությունում առաջինը արձագանքեց Լենինականի երկաթուղային դեպոյի կոլեկտիվը, որը կոչով դիմելով Հայաստանի բոլոր արդյունաբերական ձեռնարկություններին, պարտավորվեց իր լավագույն բանվորներին ուղարկել գյուղ՝ «չքավորությանն ու միջակներին օգնելու՝ իրենց տնտեսությունները սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու գործում և ավելի ուժեղացնելու հարձակումը գյուղի կապիտալիստական տարրերի վրա»[58]։

Ընդունելով մրցահրավերը Ալավերդու պղնձաձուլական գործարանի կոլեկտիվը որոշեց գյուղ ուղարկել երեք բանվորների (մշտապես), մի քանի բրիգադ և վերցնել Ուղունլարի (Օձուն) կոլտնտեսության շեֆությունը, նրան նվիրելով մեկ տրակտոր։

Նվիրատվություններով և հունվար ամսվա հանգստյան օրերի աշխատանքով հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները զգալի գումար հավաքեցին կոլեկտիվացման ֆոնդի համար։

Բանվորական բրիգադները սկսեցին գյուղ մեկնել 1930 թ. հունվար ամսին, իսկ 25-հազարականները՝ փետրվարի սկզբին։ Բանվորական բրիգադները ակտիվորեն մասնակցում էին գարնանացանի նախապատրաստությանը, վերանորոգում էին գյուղատնտեսական գործիքնե-

---

56 Տե՛ս «Заря Востока», 3 января 1930 г.

57 Տե՛ս «Отчет Азербайджанского Совета профессиональных союзов к VII съезду профсоюзов (1928 г. — 1.1.1932 г.)», Баку, 1932, стр. 74.

58 «Բանվոր», 1929 թ. դեկտեմբերի 27։

բը և տեխնիկան և, որ շատ կարևոր է, պրոպագանդա էին մղում կոլտնտեսությունների օգտին և անձամբ մասնակցում դրանց կազմակերպմանը: Իսկ 25-հազարականները հիմնականում գյուղ էին մեկնում որպես կոլտնտեսային ղեկավար աշխատողներ:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախնական տվյալներով մինչև 1930 թ. մայիսի կեսերը բանվորական և կոմերիտական բրիգադները կատարել էին հետևյալ աշխատանքը: Երևանի գավառում վերանորոգվել էր 592 գութան, 49 շարքացան, 226 կուլտիվատոր, 409 սայլ և ֆուրգոն, 7 սերմազտիչ: Բաքվից ժամանած բանվորական բրիգադը իր գործունեությունը ծավալել էր Լենինականի գավառի Դուզքենդի (Ախուրյան), Աղբաբայի (Ամասիա) և Ղզլղոչի (Ղուկասյան) շրջաններում: Լոռվա գավառում վերանորոգվել էր 354 գութան, 4 տրակտոր, 20 սերմազտիչ, 458 սայլ[59]: «Ցանքի կամպանիան հաջող անցկացնելու գործում էական դեր են խաղացել բանվորական բրիգադները,— կարդում ենք ՀԿ(բ)Կ Կենտկոմի համապատասխան ամփոփագրերից մեկում,— նրանք մասսայական ագիտացիոն աշխատանք են տարել կոլտնտեսային շինարարության և ցանքի կամպանիայի բնագավառում, նյութական օգնություն են ցույց տվել չքավորներին ու միջակներին, ձրի նորոգելով նրանց գյուղատնտեսական գործիքները»[60]:

Միայն Լոռվա գավառում մինչև 1930 թ. մարտի 10-ը արհմիությունների գծով գյուղ էին մեկնել. 5 օրով՝ 31 բրիգադ և 10 օրով՝ 74 բրիգադ, ընդամենը 688 բանվորներով: Առևտրի աշխատողների արհմիության գծով 11 հաշվային աշխատողներ 15 օր եղել էին կոլտնտեսություններում և օգնել հաշվային դրվածքը կանոնավորելու ու արտադրաֆինանսական պլանները կազմելու գործում[61]:

Հետաքրքիր է, թե Հայաստանում որքան քսանհինգհազարականներ մեկնեցին գյուղ և ինչպիսի պաշտոններ էին նրանք զբաղեցնում: Աղբյուրները տարբեր ժամանակների համար հաղորդում են տարբեր տվյալներ: Տարբերվում են նաև պլանային և փաստական ցուցանիշները: Այս տարբերությունները և հակասությունները տեղ են գտել նաև պատմագիտական գրականության մեջ և հեղինակներից գրեթե ոչ մեկը փորձ չի կատարել պարզելու քսանհինգհազարականների թիվը ժամանակա-

---

59 ՏԼՀ ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 14, գ. 79, թ. 7—9։

60 Նույն տեղում, թ. 7։

61 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 5, գ. 49, թ.87։

գրական կարգով[62]։ ՀՍՄԽ-ի ավյալներով (1930 թ. հունիս) 25-հազարականների հաշվին Հայաստանի կոլտնտեսություններն էին մեկնել 75 բանվորներ, որոնցից 14-ը՝ Բաքվից[63]։ Ավելի վաղ մամուլում հրապարակվել էր Բաքվից 12 բանվորների ժամանելու մասին[64]։ 1930 թ. հուլիսի 15-ին կոլտնտեսենտրոնում հրավիրված խորհրդակցությունում նշվել է 66 քանհինգհազարականների մասին[65]։ Նրանց թիվը այդքան է եղել նաև ապրիլի առաջին կեսին[66]։

Հանրագումարի բերելով քանհինգհազարականների մեկ տարվա աշխատանքը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. մարտի 2-ի իր ինֆորմացիոն ամփոփագրում հայտնում էր, որ Հայաստանում քանհինգհազարականների հաշվին մոբիլիզացվել է 62 մարդ (առաջին հերթի համար նախատեսված 60-ի փոխարեն), այդ թվում Բաքվից 12 մարդ, իսկ 50-ը՝ հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններից։ Պրակտիկ գործունեության ընթացքում 15 մարդ ճանաչվել են տվյալ կոչմանը անհամապատասխան և ետ են կանչվել։ Գյուղում շարունակել են աշխատանքը 47 քանհինգհազարականներ, որոնցից 45-ը կոմունիստներ էին՝ մեկը կոմերիտական, մեկը՝ անկուսակցական։ Նախկին զբաղմունքով նրանք տեքստիլագործներ էին, երկաթուղայիններ, մետաղագործներ, շինարարներ, լեռնագործներ, կաշեգործներ, տպագրիչներ։ Նրանց մեծ մասն աշխատում էր որպես կոլտնտեսության նախագահ[67]։

Քանհինգհազարականների աշխատանքը կոլտնտեսություններում տվել է իր դրական արդյունքները, եղրակացրել է ՀԿ(բ)Կ Կենտկոմը հիշյալ ամփոփագրում։ Առաջին իսկ օրից նրանք ձեռնամուխ են եղել թույլ տված սխալների ուղղմանը և կոլտնտեսությունների ամրապնդմանը[68]։

---

62 Քանհինգհազարականների գործունեության և ընդհանրապես բանվոր դասակարգի օգնության մասին ավելի մանրամասն տե՛ս С. Аллахвердян, նշված աշխ.։ Ս. Ալավերդյանը առաջինն է քննադատել 25-հազարականների թվի վերաբերյալ հեղինակների թույլ տված սխալները և հենվել փաստական տվյալների վրա։ Սակայն նա քանհինգհազարականների թիվը ցույց է տվել միայն մեկ կոնկրետ ժամանակի համար։ Տե՛ս նշված գիրքը, էջ 93։

63 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. հունիսի 13։

64 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. փետրվարի 14։

65 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. հուլիսի 18։ Տե՛ս նաև ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 16, գ. 1, թ. 66։

66 Տե՛ս ЦГАНХ СССР, ф. 7446, оп. 12, д. 58, л. 21.

67 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 17, գ. 166, թ. 36—37։ Քանհինգհազարականների ցուցակը՝ 52 անուն, տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 105, թ. 1—2։

68 Տե՛ս նույն տեղում, ց. 17, գ. 166, թ. 36—37։

Իր տևական և կազմակերպչական գործունեությամբ քանհինգհազարականներից աչքի է ընկել Աշտարակի Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ Սերգո Վարդանյանը (Տոկար Սերգո)։ Արթիկի կոլտնտեսության վարչության նախագահ էր ընտրվել Մկրտիչ Պողոսյանը։ Նրան գյուղ էր ուղարկել Լենինականի երկաթուղային դեպոյի կոլեկտիվը, որտեղ նա աշխատել էր 1922 թ. որպես խառատ և ընդունվել կոմունիստական կուսակցության շարքերը։ 1930 թ. մարտին ՀամԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած նամակում քանհինգհազարական Մկրտիչ Պողոսյանը գրում էր կոլտնտեսության համեստ նվաճումների մասին[69]։ Պատասխան նամակում նշվում էր, որ կոլտնտեսության այդ նվաճումները մեծ նշանակություն ունեն կոլտնտեսային շարժման զարգացման համար։ Մի այլ երկաթուղային՝ Համբարձում Ավդալյանը, կոլտնտեսության նախագահ էր Ջաջուռ գյուղում[70]։

Ղամարլուի շրջանի Յուվա գյուղի կոլտնտեսությունը ղեկավարում էր Աբրահամ Մամիկոնյանը։ Երկար տարիներ Արամ Տոնոյանը գլխավորում էր Աղինի շրջանի կոլտնտեսություններից մեկը։ Միայն Դուզքենդի շրջանում 1930 թ. հուլիսին որպես կոլտնտեսության նախագահ աշխատում էին վեց բանվորներ, որոնցից մեկը կին էր։ Բաքվից ժամանած բանվորներն աշխատում էին Հաջինազարում, Դուզքենդում և Ղարաքիլիսայի (Կիրովական) շրջանի ռուսական գյուղերում։

Բանվորական բրիգադների գործունեությունը մեծ մասամբ կրում էր շեֆական բնույթ։

Շեֆական հիմունքներով էին գործում նաև քաղաքի և գյուղի զոդմանն աջակցող ընկերությունները (ՔԳՋԱ), որոնք կազմակերպվել էին դեռևս 1928 թ.։ Կոլեկտիվացման ծավալման նախօրյակին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշեց (1929 թ. դեկտեմբեր) կոլտնտշարժմանն աջակցող ընկերությունների համար ստեղծել նյութատեխնիկական պայմաններ և ապահովել նրանց անընդմեջ աշխատանքը։ Միայն Երևան քաղաքում 1930 թ. ապրիլին գոյություն ուներ ընկերության 47 բջիջ, 4659 անդամներով, 1928 թ. 11 բջիջի և 1054 անդամի փոխարեն։ 1931 թ. մարտին կայացավ այդ ընկերությունների հանրապետական առաջին համագումարը, որը որոշեց կոլեկտիվացմանն օժանդակել ավելի բազմազան և արդյունավետ։

---

69 Տե՛ս ЦГАНХ СССР, ф. 7446, оп. 12, д. 58, л. 48.

70 Տե՛ս նույն տեղում, թ. 15, 47։

Քաղաքի և գյուղի զորմանն աջակցող ընկերություններն ավելի շատ աշխատանք կատարեցին 1931 թ. գարնանացանի կամպանիայի ժամանակ[71]։ Այդ ընթացքում նրանք գյուղ էին ուղարկել 1658 բրիգադ, որոնց աշխատանքների ծավալը կազմում էր մոտ 170 հազար բանվորական օր[72]։

Գյուղի սոցիալիստական վերակառուցմանը որոշ օգնություն կազմակերպեց նաև Հայաստանի կոլտնտեսային շարժմանն աջակցող գիտատեխնիկական ընկերությունը, որը կազմակերպվել էր 1929 թ. հունիսին և ընդգրկում էր գլխավորապես հասարակության գիտական և տեխնիկական մասնագետներին։ Այն կազմակերպում էր զեկուցումներ ու զրույցներ կոլտնտեսությունների դերի ու նշանակության մասին, բրիգադներով այցելում առանձին գյուղեր։ Այդ ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1930 թ. սեպտեմբերը։

Հայաստանում տեղակայված կարմիր բանակի ստորաբաժանումները ևս (3-րդ և հայկական 76-րդ հրաձգային դիվիզիաներ) անմասն չմնացին գյուղի շնչական աշխատանքից և օգնությունից։ Միայն 1929 թ. վերջին, հայկական դիվիզիայի քաղբաժնի ուժերով, դիվիզիան իր նախաձեռնող խմբերի միջոցով Ղարաքիլիսայի, Ալավերդու և Համամլուի (Սպիտակ) շրջաններում մասնակցել էր 9 կոլտնտեսությունների հիմնադրման (234 տնտեսություններով) և 22 կոլտնտեսությունների խոշորացման (344 տնտեսությունների ներգրավման) աշխատանքներին։ Այդ գյուղերում կոլտնտեսությունների մեջ ընդգրկվել էին 63 զորացրված կարմիրբանակայիններ և 118 փոփոխիկներ[73]։ Դիվիզիան կազմակերպել էր կադրերի պատրաստման դասընթացներ ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ արդյունաբերության համար։ 1930 թ. սկզբին այդ դասընթացներում սովորում էին մոտ 1500 կարմիրբանակայիններ, որոնք զորացրվելու էին առաջիկա աշնանը։ 1930 թ. դիվիզիայի դասընթացները ավարտեցին ըստ մասնագիտության. քաղլուսաշխատողներ՝ 118, կոլտնտեսությունների ղեկավարներ՝ 110, հաշվային աշխատողներ՝ 15, տրակտորիստներ՝ 189, ագրոլիազորներ՝ 15, կոոպերացիայի աշխատողներ՝ 108 մարդ, ինչպես նաև բազմաթիվ մասնագետներ՝ բամբակագործության, անասնապահության և այլ գծերով։ 1930 թ. դասընթացներն ավարտած և զորացրված

---

71 Տե՛ս ՄԼՀ ՀՍԱ, ֆ. 1, ց. 16, գ. 3, թ. 97։

72 Տե՛ս նույն տեղում։

73 Տե՛ս նույն տեղում, ց. 13, գ. 289, թ. 11—23։

կարմիրբանակայիններից 984-ը, որոնցից 30-ը ադրբեջանցիներ էին, մեկնել էին գյուղ[74]։ Գյուղից մեկնած բանակայինները այնտեղ էին վերադառնում քաղաքականապես կազմակերպված ու կոփված և հանդես էին գալիս կոլտնտեսային կարգերի համար մղվող պայքարի ավանգարդում։

Արդյունաբերական ձեռնարկությունների և, ընդհանրապես, քաղաքի շինական գործունեությունը, ինչպես նաև մեքենատրակտորային կայանների ստեղծումը սովետական բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության պատմության փառավոր էջերից են։ Այդ ամենի շնորհիվ ավելի էր ամրապնդվում քաղաքի ու գյուղի արտադրական զոդումը և բանվորագյուղացիական դաշինքը։ Սոցիալիստական բանվոր դասակարգի անմիջական օգնությամբ ծավալվում էր կոլտնտեսային գյուղացիության ձևավորումը։

Վերցնելով կոլտնտեսային շարժման արագացման կուրս, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները միաժամանակ շարունակում էին աշխատանքը կոլեկտիվացման նախադրյալների նախապատրաստման ուղղությամբ։

2. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՏԵՄՊԻ ԱՐԱԳԱՑՈՒՄԸ։ ՊԱՅՔԱՐԸ «ԶԱԽ» ԽՈՏՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Ինչպես նշվել է, Երևանի գավառի առանձին շրջաններում համատարած կոլեկտիվացման գործնական աշխատանքները սկսվեցին 1929 թ. դեկտեմբերին, իսկ հունվարին այն ավելի լայն ծավալ ընդունեց ամբողջ գավառում։ Հունվարի առաջին իսկ օրերին մեծ թվով կուսակցական աշխատողներ և բանվորական բրիգադներ եղան գավառի շրջաններում։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումով հունվարի 3-ից, մեկ շաբաթով, ավելի քան 50 պատասխանատու աշխատողներ մեկնեցին շրջանները գյուղի կուսակցական, սովետական, կոոպերատիվ և մյուս աշխատանքներին ծանոթանալու և տեղում օգնություն կազմակերպելու համար։

Մինչև 1930 թ. հունվարի 10-ը գավառի առաջատար շրջանի՝ Ղուրդուղուլի մի շարք գյուղերում համատարած կոլեկտիվացման հարցն արդեն «լուծվել էր», իսկ ամբողջ շրջանում կոլեկտիվացումը բարձրացել էր 56 տոկոսի։

---

74 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. հունվարի 15։

Ղամարլուի կուսշրջկոմը հունվարը հայտարարեց կոլեկտիվացման ամիս և դրա համար առանձնացրեց հինգ մարդուց բաղկացած բրիգադ։ Վաղարշապատի կուսշրջկոմը հնարավոր և անհրաժեշտ համարեց բոլոր բամբակագործների կոլեկտիվացումը գարնանացանի ընթացքում։ Այդ նպատակով նա կազմակերպեց շրջանի պատասխանատու աշխատողների մի քանի բրիգադ, որոշելով համատարած կոլեկտիվացումը փորձնական ձևով սկսել երեք գյուղում, հունվարի 2-ից և համապատասխան շրջաբերական ուղարկեց բջիջներին։ Շրջանի այս օրերի կյանքի մասին արխիվային վավերագրերից մեկում կարդում ենք. «Գյուղը ուղղակի փոթորկվում, եռում է։ Յուրաքանչյուր գյուղացիական ընտանիքում քննարկվում է կոլտնտեսություն մտնել—չմտնելու հարցը»[75]։ Գյուղացիները արտահայտում էին նաև այսպիսի կարծիք՝ թող կոլտնտեսությունը ցույց տա թե ինչ արդյունքներ է տալիս, ապա նոր կընդունվենք[76]։

Լենինականի գավառից (օկրուգ) համատարածի համար առանձնացված էր միայն Դուզքենդի շրջանը՝ 1930 թ. 50 տոկոս կոլեկտիվացումով, իսկ գավկոմը հունվարի 5-ին որոշեց շրջանում կոլեկտիվացումն ավարտել արդեն 1930 թ. գարնանը, դրան ավելացնելով ևս երկու շրջան՝ Աղբաբան ու Ղզլղոշը (1931 թ. գարնանը կոլեկտիվացումն ավարտելու պլանով)։ Իսկ հունվարի կեսերին թերթը հայտնում էր, թե Լենինականից ու Ղարաքիլիսայից Աղբաբայի, Ղզլղոշի ու Ստեփանավանի անասնապահական շրջաններն են մեկնել «50-ական հոգուց բաղկացած բրիգադներ՝ այդ շրջաններում համատարած կոլեկտիվացում անցկացնելու համար»[77]։ Ավելի ուշ, 1930 թ. մայիսին Լենինականի գավառային կուսակցական կազմակերպության 10-րդ կոնֆերանսում գավկոմի քարտուղարը նշում էր, որ դեկտեմբերին գավառի ակտիվի նիստի ընդունած 18—20 տոկոս կոլեկտիվացման որոշման փոխարեն, և առաջին հաջողություններից արբեցած, սկսեցինք այս կամ այն, այդ թվում նույնիսկ հետամնաց Աղբաբայի շրջանը հայտարարել համատարած, առանց լուրջ նախապատրաստության[78]։

Լենինականի գավառային կոմիտեի բրիգադները հունվարի 12—13-ը մեկնեցին շրջանները, բաժանվեցին ենթաբրիգադների և ծավալե-

---

75 ՄԱԻ ՀՅԱԱ, ֆ. 1, ց. 14, գ. 74, թ. 14։

76 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 224, թ. 32։

77 «Մաճկալ», 1930 թ. հունվարի 14։

78 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. մայիսի 21։

ցին կոլեկտիվացման ու գարնանացանի նախապատրաստության աշխատանքները։ Այդ բրիգադների զեկուցագրերն ու հեռախոսագրերը մանրամասն տեղեկություններ են պարունակում գյուղի իրագրության և կոլտնտեսային շարժման զարգացման, ինչպես նաև Թույլ աված խոտորումների մասին[79]։

Լոռու գավառային կոմիտեն 1930 թ. հունվարի 9-ի որոշումով համատարած կոլեկտիվացման համար Ստեփանավանին ավելացրեց նաև Իջևանի շրջանը և հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ը հայտարարեց կոլեկտիվացման ամիս[80]։ Միամսյակի ընթացքում նախատեսվում էր կոլեկտիվացումը հասցնել 10-ից (Ղարաքիլիսայի շրջանում) մինչև 40 տոկոսի (Ստեփանավանի շրջանում), իսկ ամբողջ գավառում՝ 25 տոկոսի[81]։

Մինչ այդ, հունվարի 7-ին, 2—3 օրով գավառի գյուղերն էին գործուղվել գավկոմի կողմից նշանակված ընկերները և տեղական ակտիվը, գարնանացանի նախապատրաստության և կոլտնտեսաշինարարության ծավալման առաջադրանքով։ Մինչև հունվարի 14-ը միայն Ղարաքիլիսայի (Կիրովական) շրջանում կար 9 կոլտնտեսություն, իսկ Ղշլաղի (Ծդանով) և Հաջիղարայի (Լենինական) կոլեկտիվներն աճում էին մեծ արագությամբ։ Շահալիի երկաթուղային կայարանի երկու բանվորական բրիգադներ աշխատում էին Ղամշկուտ (Եղեգնուտ) և Շահալի (Վահագնի) գյուղերում[82]։

Միամսյակի միայն առաջին տասն օրվա արդյունքների մասին կարելի է կարդալ այսպիսի հաշվետվություն. «Գավառի մեծաթիվ աշխատողների մոբիլիզացիայի (ամբողջ ամսվա համար 30 մարդ), բանվորական և կարմիրբանակային բրիգադների օգնության, շրջանային և գյուղական ակտիվի կազմակերպման շնորհիվ բոլոր շրջաններում ստուգիչ թվերը դերազանցվել են, տենդենց ունենալով դեպի կոլտնտեսությունների հետագա քանակական աճը և գոյություն ունեցող կոլտնտեսությունների ամրապնդումը։ Մինչև հունվարի 25-ը կոլեկտիվացվել է գավառի տնտեսությունների 26 տոկոսը, իսկ Ստեփանավանի և Իջևանի շրջանների 15 գյուղերում անց է կացված համատարած կոլեկտիվա-

---

79 Տե՛ս Մկի ՀՅՍ., ֆ. 1, ց. 14, գ. 74, թ. 20—21, ց. 15, գ. 38, թ. 27—38, 44, 48—49, գ. 172, թ. 7—10։

80 Տե՛ս Մկի ՀՅՍ., ֆ. 1, ց. 13, գ. 207, թ. 20։

81 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 172, թ. 11։

82 Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 79, թ. 28։

ցում»[83]։ Հետագա հինգ օրվա ընթացքում կոլեկտիվացումը բարձրացավ գավառում 40, իսկ Ստեփանավանի շրջանում՝ 70 տոկոսի[84]։

Լոռու գավառի (օկրուգ) Շամշադինի շրջկոմից հունվարի 29-ին հեռագրում էին Երևան. «Վերին Կարմիրաղբյուր գյուղը համատարած կոլեկտիվացման ենթարկվեց։ Մյուս գյուղերում աճման տեմպը հաջող է»[85]։

1930 թ. հունվարի 1-ի տվյալներով Սևանի գավառում (օկրուգ) կոլեկտիվացումը կազմում էր ընդամենը 1,9 տոկոս։ Ստեղծելով գավառի կոլեկտիվացման ստուգիչ թվերին, գավկոմը հնարավոր զբաղավ ավելացնել առանձին շրջանների առաջադրանքները, միաժամանակ դրանք ընդունեց որպես նվազագույն և կուսակցական կազմակերպություններին առաջարկեց «բոլոր միջոցները ձեռք առնել անպայման ընդունված թվերի կատարման և, այնտեղ որ հնարավոր կլինի, գերազանցման համար»[86]։

Հունվարի առաջին կեսի համար գարնանացանի հանրապետական արտակարգ լիազորին ուղարկվել է հետևյալ բովանդակությամբ զեկուցագիր։ Գավառում արագ կերպով առաջ է գնում համատարած կոլեկտիվացումը։ Կամպանիայի ընթացքում կազմակերպվել են 10 նոր կոլտնտեսություններ։ Ստեղծվում են ևս ութը։ Միաժամանակ կատարվում է կոլանտեսությունների խոշորացում։ Բասարգեչարի շրջանում հունվարի 15-ից սկսվել է համատարած կոլեկտիվացումը։ Կենտրոնից գործուղված ընկերների հետ գավառի պատասխանատու աշխատողները մեկնել են Բասարգեչար և մյուս շրջանները[87]։ Արդեն հունվարի վերջին գավառից հեռագրում էին, որ 19 տոկոս կոլեկտիվացման պլանը կատարվել է, իսկ բազմաթիվ գյուղերում իրագործվել է համատարած կոլեկտիվացումը[88]։

1930 թ. հունվարի 23—24-ին տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի պլենումում Կենտկոմի և Երևանի կոմիտեի քարտուղար Ա. Խանջյանը նշեց, որ Երևանի գավառի համատարած կոլեկտիվացման լոզունգը, որպես անմիջական նպատակ, դրվել է հունվարի սկզբին։ Անցած երեք շաբաթները ցույց տվեցին, շարունակում է նա, որ գավառի հա-

---

83 Նույն տեղում, ց. 15, գ. 172, թ. 11։

84 Տե՛ս նույն տեղում։

85 Նույն տեղում, գ. 38, թ. 41։

86 Նույն տեղում, թ. 13—15։ Տե՛ս նաև Ս. Ալավերդյան, նշված աշխ., էջ 76։

87 ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 38, թ. 4։

88 Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 74, թ. 84—85։

մատարած կոլեկտիվացումը կարող է վճռվել առաջիկա ամիսների ընթացքում[89]։

Կոպիտ սխալներ թույլ տրվեցին նաև գյուղացիների արտադրության միջոցների հանրայնացման հարցում։ Դեռևս 1930 թ. հունվարի կեսերին կոլտնտկենտրոնը նշում էր. «Կուրս է վերցվել գնալի բարձր տիպի նոր կոլտնտեսությունների կազմակերպումը, հողը համատեղ մշակող ընկերությունների փոխադրումը գյուղատնտեսական արտելի կանոնադրության, իսկ վերջիններս՝ գյուղատնտեսական կոմունաների կանոնադրության, հանրայնացնելով տնտեսության բոլոր ճյուղերը, կենդանի ու մեռյալ գույքը և գյուղատնտեսական շինությունները»[90]։

Թերթը փետրվարի սկզբին հայտնում էր, որ համատարած կոլեկտիվացումը արդեն կատարված փաստ է բազմաթիվ շրջաններում, ինչպիսիք են Ղուրդուղուլին, Ղամարլուն, Աշտարակը, Մեղրին, Վաղարշապատը (Երևանի գավառ), Ստեփանավանը (Լոռու գավառ), Աղբաբան (Լենինականի գավառ) և այլն։ «Նույնիսկ հեռամնաց ու հեռավոր շրջաններում և գյուղերում կոլտնտշինարարության անմոն արագանում է օրեցօր»[91]։

Արխիվային վավերագրերից մեկում հունվար-փետրվար ամիսների համար կարդում ենք. կուսդծի խեղաթյուրումների բնորոշ փաստերից են կուլակաթափությունը ոչ համատարածի շրջաններում։ Երևանի գավառի որոշ շրջաններում կուլակաթափման աշխատանքները սկսվել են ավելի վաղ, քան կոլեկտիվացման տոկոսի բարձրանալը, ցանկանալով ճնշում գործադրել խուսափողների նկատմամբ (Վեդի, Վաղարշապատ)։ Այնուհետև նշված է, թե, անտեսելով ստուգիչ թվերը, յուրաքանչյուր գավառ կամ շրջան շտապել է հայտարարել համատարած։ Լենինականը և Զանգեզուրը հեռագրել են՝ ձեր ստուգիչ թվերը վերանայեք, հետո են մնում։ Վերջապես, կարդում ենք նույն տեղում. Լենինականի գավառում որոշել են կոլտնտեսություններից հեռացողներին ոչինչ չվերադարձնել՝ հասունությունը կանգնեցնելու համար[92]։

Եվ այսպես, կոլտնտշարժումը «առաջադիմելով», հանրապետությունում 1930 թ. փետրվարի 10-ին հասավ մինչև 62,7 տոկոսի։ Ըստ գավառների (օկրուգ)՝ Երևան՝ 73,1, Լենինական՝ 65,6, Լոռի՝ 67,1, Սևան՝ 50 և Զանգեզուր՝ 30,7 տոկոս[93]։

---

89 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. հունվարի 26։

90 ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 224, թ. 24—25։

91 «Խորհրդային Հայաստան», 1930 թ. փետրվարի 2 (առաջնորդող հոդվածը)։

92 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 224, թ. 7—9։

93 Տե՛ս նույն տեղում, թ. 10։

Այսպիսով, բերված փաստերը և տվյալները ցույց են տալիս, որ 1930 թ. հունվարը սկսվեց գյուղատնտեսության կոլեկտիվացման բուռն աճով, որն ուղեկցվում էր կոպիտ սխալներով և կուսակցության գծի խոտորումներով։ Դրանք շարունակվեցին նաև փետրվարին։ Սխալները և կուսգծի ծռումները հիմնականում հանդում էին հետևյալին։ Հարկադրանք և բռնություն աշխատավոր գյուղացիների և հատկապես միջակի նկատմամբ, կոլեկտիվացման կամավորության լենինյան սկզբունքի կոպիտ խախտում։

Տակավին կուսակցության VIII համագումարում (1919 թ.) Վ. Ի. Լենինը նշում էր. «Չկա ավելի հիմար բան, քան բռնություն գործադրելու բուն միտքը միջակ գյուղացու տնտեսական հարաբերությունների բնագավառում»[94]։ Միջակ գյուղացիության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին նույն համագումարի բանաձևում Լենինի առաջարկությամբ ասված է. «Խրախուսելով միջակ գյուղացիների ամեն տեսակ ընկերությունները, ինչպես և գյուղատնտեսական կոմունաները, Սովետական իշխանության ներկայացուցիչները ամենափոքր հարկադրանք անգամ չպետք է թույլ տան այդպիսիք ստեղծելիս։ Արժեքավոր են միայն այն միավորումները, որոնք անց են կացված իրենց՝ գյուղացիների կողմից նրանց ազատ նախաձեռնությամբ և որոնց օգուտները նրանք ստուգել են պրակտիկայում։ Ձափազանց շտապողականությունը այս գործում վնասակար է, որովհետև ընդունակ է միայն ուժեղացնելու միջակ գյուղացիության նախապաշարմունքները նորամուծությունների դեմ»[95]։

Համագումարը պահանջում էր խստորեն պատժել հարկադրանք թույլ տվողներին։ «Սովետական իշխանության այն ներկայացուցիչները, որոնք իրենց թույլ են տալիս ոչ միայն ուղղակի, այլ թեկուզև անուղղակի հարկադրանք գործադրել՝ գյուղացիներին կոմունաներին միացնելու նպատակով,— կարդում ենք նույն բանաձևում,— պետք է ենթարկվեն ամենախիստ պատասխանատվության և հեռացվեն գյուղում աշխատելուց»[96]։ Սակայն Վ. Ի. Լենինի և կոմունիստական կուսակցության այս ցուցումներն ու զգուշացումները անտեսվեցին և մոռացության տրվեցին 1930 թ. սկզբին, գյուղատնտեսության կոլեկտիվացումը ծավալելու ժամանակ, ինչպես Հայաստանում, այնպես էլ մյուս հանրապետություններում։

---

94 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 251։

95 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», I մաս, Երևան, 1954, էջ 567—568։

96 Նույն տեղում, էջ 568։

Այնուհետև, շատ դեպքերում կուլակությունը ունեզրկվում և, որպես դասակարգ, վերացվում էր ոչ թե համատարած կոլեկտիվացման հիման վրա, այլև մինչև այդ։ Երբեմն էլ կուլակաթափություն էր կատարվում նաև ոչ համատարածի շրջաններում։ Իսկ առավել վատնդավոր էին այն դեպքերը, երբ կուլակների համար նախատեսված ճնշումն ու հարկադրանքը տարածում էին նաև միջակ գյուղացիների, երբեմն էլ չքավորների վրա, կուլակաթափ անելու սպառնալիքով նրանց հարկադրում էին մտնել կոլտնտեսություն։ Տեղի էր ունենում կոլեկտիվացման խիստ արագացում։ Գրեթե ամենուրեք շտապում էին իրենց մոտ ևս ավարտել կոլեկտիվացումը, առանց հաշվի առնելու, թե դրա համար գյուղացիությունը որքանով է պատրաստ, հասունացե՞լ են արդյոք համապատասխան պայմանները։

Մյուս սխալը։ 1930 թ. հունվարի 5-ի որոշման մեջ Համկ(բ)կ Կենտկոմը նշել էր, որ տվյալ ժամանակաշրջանում կոլտնտեսության հիմնական ձևը գյուղատնտեսական արտելն է, որը ենթադրում է միայն արտադրության հիմնական միջոցների հանրայնացում և որը ճշտորեն է հաշվի առնում ինչպես հանրային, այնպես էլ հատկապես միջակ գյուղացիության անձնական շահերը։ Խախտելով այդ որոշումը, ինչպես նաև դրանից հետո հրապարակված գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը և ցատկելով արտելի վրայից, շատ դեպքերում միանգամից կազմակերպվում էին կոմունաներ, հարկադրաբար հանրայնացնում էին բոլոր արտադրական միջոցները։ Միաժամանակ թերագնահատվեցին հողը համատեղ մշակող ընկերությունները (ՀՄԸ), որը անհրաժեշտ աստիճան էր կոլտնտեսային շարժման զարգացման մեջ։

Այսպիսով, ինչպես տեսանք, կոլեկտիվացման բնագավառում սխալներն ու խոտորումները հիմնականում սկսվեցին 1930 թ. հունվարի սկզբին, ավելի մասսայական չափեր ընդունելով ու խորանալով այդ ամսում։

Կոլեկտիվացման սխալները շարունակվեցին նաև փետրվարին, ինչպես նաև հետագայում։ Այսպես, հունվար ամսվա ընթացքում կոլեկտիվացումը 4,6-ից բարձրացել էր 33,5 տոկոսի[97], իսկ փետրվարի առաջին հինգ օրվա ընթացքում այն հասավ 53,5 տոկոսի, այդ թվում Երևանի գավառում՝ 71, Լենինականում՝ 59,5, Լոռում՝ 53, Սևանում՝ 31 և Զանգեզուրում՝ 26,5 տոկոսի[98]։

---

97 Տե՛ս «Մաճկալ», 1930 թ. փետրվարի 3։

98 Տե՛ս «Մաճկալ», 1930 թ. փետրվարի 8։

1930 թ. փետրվարի 10-ին բացվեց Երևանի գավառի կոլտնտեսականների համագումարը, որտեղ որևէ քննադատական խոսք չասվեց կոլեկտիվացման սխալների մասին[99], չնայած Համկ(բ)Կ Կենտկոմը մինչ այդ արդեն առաջին զգուշացումներն էր արել թույլ տված սխալների վերաբերյալ: Նույն օրերին Անդրերկրամը ընդունել էր Երևանի գավառի կոլտնտեսականների պատվիրակությանը, իսկ «Զարյա Վոստոկա» թերթը այդ մասին ասած թղթակցությունում անվերապահորեն էր խոսում գավառի Ղուրդուղուլիի, Վաղարշապատի և Աշտարակի շրջանների գրեթե 100-տոկոսանոց կոլեկտիվացման մասին[100]:

Այսպիսով, 1930 թ. հունվար-փետրվարին Հայաստանում կոլեկտիվացումը դեկրետավորվեց վերևից, հանրապետության և Անդրկովկասյան ֆեդերացիայի ղեկավար մարմինների կողմից, անցկացվեց կամավորության սկզբունքի խախտումով: Թվական ցուցանիշները չեն ներկայացնում իրերի իսկական վիճակը, որովհետև շատ չանցած այդ ցուցանիշները խիստ իջան, սկսվեց տեղատվություն այնպիսի արագությամբ, ինչպես տեղի էր ունեցել կոլեկտիվացման «վերելքը»: Ճիշտ է, ինչպես հետո կտեսնենք, 1930 թ. սկզբին կոլտնտեսությունների մեջ ընդգրկված գյուղացիների, չքավորների մի մասը չհեռացավ նրանցից, սակայն մեծ մասը և հատկապես միջակ տնտեսությունները թողեցին կոլտնտեսությունները:

Եթե ղեկավարվենք զուտ թվական տվյալներով, ապա իսկապես կարելի է խոսել համատարած կոլեկտիվացման հաղթանակի մասին Հայաստանի շրջանների մեծ մասում և մասսայական կոլեկտիվացման մասին մյուս շրջաններում: Սակայն դա իսկական մասսայական կամ համատարած կոլեկտիվացում չէր, հետևաբար ճիշտ չի լինի խոսել Հայաստանում դեպի կոլտնտեսությունները գյուղացիության կատարած շրջադարձի, արմատական բեկման մասին նաև 1930 թ. սկզբի համար:

Այս առնչությամբ համաձայն չենք այնպիսի ձևակերպման հետ, թե 1930 թ. հունվար-փետրվար ամիսները մասսայական կոլտնտեսային շարժման բուռն վերելքի ամիսներ էին, սակայն այդ շարժումը լուրջ դժվարությունների հանդիպեց թույլ տված կոպիտ սխալների ու խեղաթյուրումների հետևանքով[101]: Այսպիսի բնութագրումը տրամաբանական

---

99 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. փետրվարի 11 և 12-ի համարները և ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 1, ց. 15, գ. 81, թ. 3—4։

100 Տե՛ս «Заря Востока», 13 февраля 1930 г.

101 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», էջ 425։

շարունակությունն է այն ոչ ճիշտ գնահատականի, որ տրվել է 1929 թ. երկրորդ կեսի կոլեկտիվացման վերաբերյալ և որի մասին խոսք եղավ վերևում։ Ստացվում է այնպես, որ 1930 թ. առաջին ամիսներին Հայաստանում տեղի էր ունեցել իսկական մասսայական կոլեկտիվացում, որը, սակայն, հանդիպել էր սխալների պատճառով ստեղծված դժվարություններին։ Մինչդեռ իրականությունն այն է, որ այդ «մասսայական կոլեկտիվացումը» տվյալ ժամանակաշրջանում դեկրետավորվել էր վերևից, սկսվել և ընթացել էր սխալներով, բարձր թվերի հետևից ընկնելու արդյունք էր։

Առավել ևս ճիշտ չէ այն բնութագրությունը, երբ տվյալ ժամանակաշրջանի կոլտնտեսային շարժումը ներկայացվում է որպես համատարած կոլեկտիվացման սկիզբ։ Այն ստեղծված էր արհեստականորեն, և շուտով, ինչպես կտեսնենք, ոչ մի շրջան չպահպանեց իր «համատարած կոլեկտիվացումը»։

Նման մոտեցումները սխալ են նաև այն տեսակետից, որ դուրը փակում են իսկական մասսայական և համատարած կոլեկտիվացման մասին խոսելու, կոլտնտեսային շարժման զարգացման իրական ընթացքը ներկայացնելու համար, որի մասին, սակայն, կխոսվի իր տեղում։

* * *

1930 թ. սկզբին գյուղում ստեղծվեց քաղաքական լարված դրություն։ Կոլեկտիվացման սխալները և կուլակի ծռումներն ու խոտորումները դժգոհություն առաջացրին աշխատավոր գյուղացիության և հատկապես միջակների մեջ։ Խիստ սրվեց դասակարգային պայքարը, իսկ ստեղծված դժգոհությունը փորձեցին օգտագործել կուլակները և մյուս հակասովետական տարրերը՝ հատկապես միջակներին իրենց կողմը գրավելու, ինչպես նաև շքավորների վրա ազդելու համար։

Գյուղացիական հարցում թույլ տված սխալներն ու խոտորումները հղի էին լուրջ վտանգով։ Ըստ էության դրանք հակամիջակային խոտորումներ էին, ուստի լուրջ սպառնալիք ստեղծեցին միջակ գյուղացիության հետ բանվոր դասակարգի դաշինքի խախտման համար։ 1930 թ. փետրվարին և մարտին, նշել է Ա. Խանջյանը ՀԿ(բ)Կ VII համագումարում Կենտկոմի հաշվետվության մեջ, «որոշ վայրերում մենք կանգնած էինք միջակի հետ դաշինքի խախտման սպառնալիքի առաջ»[102]։ Նշելով

102 Ա. Խանջյան. Մեծ բեկման շրջանը և մեր խնդիրները (ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը VII համագումարին), Երևան, 1930, էջ 47։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի թույլ տված սխալները և խոտորումները, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների VI համագումարը իր բանաձևում արձանագրեց, որ դրանք «դարձան գլխավոր պատճառ միջակի տատանման և մի շարք շրջաններում ստեղծեցին նրա հետ դաշինքը խզելու ուղղակի սպառնալիք, պատճառ դառնալով միջակների առանձին խմբերի ելույթներին խորհրդային իշխանության դեմ»[103]։

Կոլեկտիվացման ժամանակ տեղի ունեցած սխալներն ու խոտորումները ոչինչ ընդհանուր չունեին կուսակցության և կառավարության քաղաքականության հետ։ Շուտով դրանք բացահայտվեցին և քննադատվեցին կուսակցության Կենտկոմի կողմից։ Կենտկոմը ձեռնամուխ եղավ կոլեկտիվացման սխալների ուղղմանը։

1930 թ. հունվարի 30-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը հեռագրով Անդրերկրամից պահանջեց վերացնել կոլտնտեսինարարության բնագավառում թույլ տված խոտորումները[104]։ Անդրերկրամին և Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունների կենտկոմներին ուղղված նամակում ՀամԿ(բ)Կ Կենտկոմը խստորեն դատապարտում էր կոլեկտիվացման կամավորության սկզբունքի խախտումները և առաջարկում էր ուղղել այդ սխալները կուսակազմակերպությունների ուժերով, թույլ չտալ վարչարարություն և վճռապես պայքարել կուսակցության դեմ ծռումների դեմ[105]։ Կենտկոմը այդպիսի զգուշացումներ արեց նաև կուսակցության այլ կազմակերպությունների։ Հունվարի 30-ին Կենտկոմը տեղերին դիրեկտիվ տվեց նաև կուլակության վերացման հարցի վերաբերյալ, պարզաբանելով, որ արմատապես սխալ է կոլեկտիվացման գործի փոխարեն ամբողջ ուշադրությունը ապակուլակացման վրա կենտրոնացնելը, որպիսի պրակտիկան տեղ էր գտել շատ վայրերում[106]։ «Պրավդա» թերթի փետրվարի 1-ի առաջնորդողը ևս նվիրված էր նույն հարցին։ Կուսակցության կենտրոնական օրգանը ըզգուշացնում էր, որ կուլակության վերացումը պետք է իրականացնել միայն համատարած կոլեկտիվացման հիման վրա, իսկ ոչ համատարա-

---

103 «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների վեցերորդ համագումարը», Երևան, 1930, էջ 191։

104 Տե՛ս «Очерки истории коммунистических организаций Закавказья», часть 2-я, Баку, 1971, стр. 164—165.

105 Տե՛ս «Ленинский кооперативный план и борьба партии за его осуществление», М., 1969, стр. 110.

106 Տե՛ս նույն տեղում, էջ 109։

ծի շրջաններում պետք է շարունակել նախկին քաղաքականությունը, այսինքն կուլակության սահմանափակումը և արտամղումը[107]։

Այդ դիրեկտիվներից ելնելով, Անդրեևկոմը 1930 թ. փետրվարի 6-ին ծավալուն որոշում ընդունեց «ԱՍՖՍՀ-ում կոլեկտիվացման և կուլակության նկատմամբ միջոցառումների մասին»[108]։

«Անդրկովկասում կոլեկտիվացման փորձը և Համկ(բ)Կ Կենտկոմի վերջին դիրեկտիվները,— ասված է որոշման մեջ,— պահանջում են անմիջապես և վճռականորեն ուղղել կոլեկտիվացման գծով կուսակցական որոշումների բոլոր աղավաղումները՝ ԱՍՖՍՀ շրջանների ու հանրապետությունների առանձնահատկությունները հաշվի առնելու տեսանկյունից»։

Անդրեևկոմը առաջարկում էր մինչև փետրվարի 25-ը սահմանել և հրապարակել 1930 թ. գարնանը համատարած կոլեկտիվացման ենթակա գավառներն ու շրջանները, ելնելով դրա համար քաղաքական, կազմակերպական և տնտեսական տեսակետից լրիվ պատրաստ լինելու հանգամանքից։ Որոշվում էին համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակաթափության ձևերն ու պայմանները, ինչպես նաև պահանջվում էր ուժեղացնել մյուս շրջաններում կուլակությանը սահմանափակելու քաղաքականությունը՝ այնտեղ ևս մասսայական կոլեկտիվացումը և կուլակության որպես դասակարգի վերացումը նախապատրաստելու համար։

Նույն օրը Անդրեևկոմը հատուկ որոշում ընդունեց «Վրաստանի և Հայաստանի թուրքական բնակչությամբ շրջաններում կոլեկտիվացումն անցկացնելու մասին»։ Նշվում էր հիշյալ շրջաններում կոլեկտիվացման հատուկ դժվարությունների մասին, որոնք պայմանավորված էին «ինչպես տոհմական հարաբերությունների, այնպես էլ անցյալի աղգամիջյան թշնամության մեծ մնացուկների առկայությամբ»։ Համապատասխան մարմիններից պահանջվում էր այդ շրջաններում կոլեկտիվացման նկատմամբ ապահովել ավելի զգույշ մոտեցում և առաջիկա ժամանակաշրջանում կուլակների նկատմամբ չկիրառել արտաքսում և որևէ բռնի միջոցառում, առանց յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հանրապետական կենտկոմների կողմից հաստատության[109]։

Անդրեևկոմի դիրեկտիվները Հայաստանի համար իրենց կոնկրետ

---

107 *Տե՛ս* «Правда», 1 февраля 1930 г.

108 *Տե՛ս* «Заря Востока», 9 февраля 1930 г., *«Խորհրդային Հայաստան», 1930 թ. փետրվարի 11։*

109 *Տե՛ս* Պ. Լոմաշվիլի, *նշված աշխ., էջ 252։*

արտահայտությունը գտան ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության փետրվարի 11-ի որոշման մեջ[110]։ Կենտկոմը սահմանեց համաձայնված կոլեկտիվացման հետևյալ 11 շրջանները՝ Ղարաբաղի (Հոկտեմբերյան), Ղամարլու (Արտաշատ), Հրազդան, Աշտարակ, Վաղարշապատ (Էջմիածին), Մեղրի (բոլորը Երևանի գավառում), Դուքենդ (Ախուրյան), Մոլլա Գյոբշա՝ Արթիկ (Լենինականի գավառ), Ստեփանավան, Իջևան (Լոռի), Նոր Բայազետ (Սևան)։

Հարկ եղավ ընդունել մի շարք այլ որոշումներ ևս, որպեսզի լրիվ բացահայտվեն կոլեկտիվացման պրակտիկայում թույլ տրված սխալներն ու խոտորումները, ինչպես նաև միջոցառումներ մշակվեն դրանք ուղղելու և վերացնելու համար։

1930 թ. փետրվարի 11—12-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմում կայացավ Սովետական Միության ազգային շրջանների ներկայացուցիչների խորհրդակցություն, որին Հայաստանից մասնակցում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Հ. Կոստանյանը[111]։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն 1930 թ. փետրվարի 20-ին ընդունեց որոշում «Տնտեսապես հետամնաց ազգային շրջաններում կոլեկտիվացման և կուլակության դեմ պայքարելու մասին»[112], որի նախագիծը հավանության էր արժանացել վերոհիշյալ խորհրդակցության կողմից[113]։ Որոշումը տարածվում էր Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Դաղստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Կիրգիզիայի, Բուրյաթ-Մոնղոլիայի, Ղազախստանի և Յակուտիայի վրա։

Քաղբյուրոյի որոշման մեջ նշվում էր, որ երկրի մի շարք ազգային շրջաններում, տնտեսական հետամնացության պատճառով, կոլտնտեսային շարժումը չի կարող ընթանալ այնպիսի տեմպերով, ինչպես առաջավոր հացահատիկային շրջաններում, որ անհրաժեշտ է հատկապես հաշվի առնել «տեղական տնտեսական և սոցիալ-քաղաքական իրադրության յուրահատկությունը»։ Մինչդեռ, ինչպես վկայում էին փաստերը, տեղական կազմակերպությունները, առանց համապատասխան պայմանների նախապատրաստության, մեխանիկորեն իրենց մոտ կի-

---

110 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 905, թ. 34—36։

111 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 7, գ. 18, թ. 137 (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. փետրվարի 21-ի գրությունը ՀԿ(բ)Կ Կենտկոմին)։

112 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 32, թ. 6—12։

113 Որոշ գրքերում այդ խորհրդակցությունը սխալ ձևով ժամանակագրվել է փետրվարի 20, իսկ որոշումը՝ փետրվարի վերջերին։ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, էջ 307.

բառում էին Հյուսիսային Կովկասի, Պովոլժիեի ու համատարած կոլեկտիվացման այլ շրջանների փորձը։ Դրանով իսկ նրանք մասսաների իսկական շարժումը փոխարինում էին վարչարարությամբ, «որը կարող էր միայն արդելակել մասսայական կոլեկտիվացման գործը»։ Կենտկոմը միանգամայն անթույլատրելի էր համարում չքավորների և միջակների անհատական տնտեսությունների տնտեսումը, տնտեսություններ, որոնք ազգային շրջաններում դեռևս գերակշռում էին։ Պահանջվում էր ոչ թե ետին պլան մղել, այլ կարևոր խնդիր դարձնել անհատական տնտեսությունների ապրանքայնության բարձրացումը և գյուղատնտեսական կոոպերացիայի ու կոնտրակտացիայի զարգացումը, բատրակների և չքավորների կազմակերպումը և միջակի հետ նրանց դաշինքի ամրապնդումը, կուլակների դեմ հարձակման ուժեղացումը և այլն, «որոնք կարող են իրական նախադրյալներ ստեղծել այդ շրջանների մասսայական կոլեկտիվացման համար»։

Կենտկոմը ցույց տվեց կուսակցական կազմակերպությունների խնդիրները համատարած կոլեկտիվացման ու ոչ համատարածի, անասնապահական, ոչխարաբուծական, այգեխաղողագործական, ինչպես նաև սահմանամերձ շրջանների համար, կուլակության վերացման և նրա դեմ հարձակումն ավելի ուժեղացնելու հարցում։ Որոշման մեջ նշված է, որ ձևական-բյուրոկրատական մոտեցում է հանդես բերվել առանձին շրջաններ համատարած հայտարարելու կապակցությամբ և առաջարկվում էր վերանայել համատարած կոլեկտիվացման շրջանները, հաշվի առնելով, թե դրա համար իսկապես որքանով է պատրաստ այս կամ այն շրջանը։

Կենտկոմի Քաղբյուրոն տեղական կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեց կոլեկտիվացման տեմպերի հարցում տարբերակված մոտեցում ունենալու հանգամանքի վրա, նույնիսկ տվյալ հանրապետության մեջ, հաշվի առնելով կոլեկտիվացման համար անասնապահական, ոչխարաբուծական և այգեխաղողագործական շրջանների նախապատրաստության տարբերությունները և առանձնահատկությունները։ Առաջարկվում էր մոտակա ժամանակաշրջանում առաջին հերթին հիմնական ուշադրությունը նվիրել բամբակագործական, հատուկ մշակույթների և այլ զարգացած շրջանների կոլեկտիվացմանը, որոնք դրա համար ունեին ավելի լավ նախադրյալներ։

Այս որոշումը նկատի ունենալով «Պրավդան» գրում էր, որ Սովետական Միության շատ շրջաններում 1930 թ. կոլեկտիվացումը ոչ միայն չի ավարտվելու, այլև ըստ էության միայն սկսվելու է և անելու է

իր առաջին լուրջ քայլերը, որտեղ չի առաջադրվում համատարած կոլեկտիվացման և կուլակի, որպես դասակարգի, վերացման քաղաքականությունը։ Այդպիսի շրջան էր, ըստ Թերթի, նաև Անդրկովկասի բավականին զգալի մասը, հատկապես Աջարիան, Աբխազիան, Վրաստանի լեռնային մասը, Նախիջևանի հանրապետությունը և Ադրբեջանի ու Հայաստանի մեծ մասը։ Հայաստանում միայն առանձին շրջաններում էր հնարավոր համարվում անմիջապես համատարած կոլեկտիվացում անցկացնել[114]։

1930 թ. մարտի 2-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումով հրապարակվեց Ի. Ստալինի «Գլխապտույտ հաջողություններից։ Կոլտնտեսային շարժման հարցերի շուրջը» հոդվածը[115]։ Նույն օրը կենտրոնական մամուլում տպագրվեց գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը, որը վերամշակվել և ճշտվել էր[116]։ Հոդվածում պաշտպանվում էին կոլեկտիվացման հիմնական սկզբունքները (կամավորություն, գյուղատնտեսական արտելի կազմակերպում և այլն) և քննադատվում թույլ տված սխալները։

Նշված կանոնադրությունը սահմանում էր, որ տվյալ գյուղի բատրակները, չքավորները և միջակները գյուղատնտեսական արտելում միավորվում են կամավոր կերպով, որպեսզի «արտադրության ընդհանուր միջոցներով և ընդհանուր կազմակերպված աշխատանքով կառուցեն խոշոր կոլեկտիվ տնտեսություն և այդպիսով ապահովեն իսկական և լիակատար հաղթանակը կուլակի, աշխատավորների բոլոր շահագործողների ու թշնամիների նկատմամբ, իսկական և լիակատար հաղթանակը կարիքի ու տգիտության, մանր անհատական տնտեսության հետամնացության նկատմամբ և ստեղծեն աշխատանքի բարձր արտադրողականություն ու կոլեկտիվ տնտեսության բարձր ապրանքայնություն»[117]։

Բոլոր հողերը հանրայնացնելուց հետո կոլտնտեսականներին թույլատրվում էր ունենալ տնամերձ հողամաս (բանջարանոց, այգի)։

Կանոնադրության համաձայն գյուղատնտեսական արտելի անդամ կարող էին լինել 16 տարեկան բոլոր աշխատավորները։ Այդ իրավուն-

---

114 Տե՛ս «Правда», 27 февраля 1930 г.

115 Տե՛ս Ի. Ստալին, Երկեր, հ. 12, էջ 215—224։

116 Տե՛ս «ԽՍՀՄ օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1930, № 21, հոդ. 255։ Կանոնադրությունը «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրվել է 1930 թ մարտի 5-ին, իսկ առաջին տարբերակը՝ փետրվարի 15-ին։

117 «Коллективизация сельского хозяйства...», стр. 282.

քը չունեին կուլակները և ընտրական իրավունքից զրկված բոլոր անձինք։

Հանրապետության կոլտնտեսությունները որոշեց մինչև ապրիլի 1-ը կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներում քննել և ընդունել նոր կանոնադրություններ, ըստ անհրաժեշտության այն հարմարեցնելով տվյալ տնտեսության պայմաններին։

Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության հրապարակ գալը տվյալ պահին կարևոր նշանակություն ունեցավ կոլեկտիվացման սխալները ուղղելու և այն նորմալ հունի մեջ դնելու տեսակետից։ Այդ ուղղությամբ հերթական կարևոր քայլը Անդրկոմի 1930 թ. մարտի 9-ի որոշումն էր «Կոլեկտիվացման ընթացքի և Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների խնդիրների մասին»[118]։

Անդրկոմը, հենվելով Քաղբյուրոյի վերոհիշյալ որոշման և գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության վրա, ցույց էր տալիս կուսակցական կազմակերպությունների խնդիրները՝ սխալներն ուղղելու և կոլտնտեսություններն ամրապնդելու ուղղությամբ։ Նա պահանջեց վերջնականապես ճշտել համատարած կոլեկտիվացման շրջանները, կազմակերպել կոլտնտեսությունների, ինչպես նաև անհատական գյուղացիական տնտեսությունների օգնության գործը։

Անդրկոմը բոլոր կուսակցական կազմակերպություններին հանձնարարեց իրենց ձեռքը վերցնել քննադատության և կուսակցական գծի խոտորումներն ուղղելու նախաձեռնությունը և դրանով իսկ կանխել «սովետական իշխանության թշնամիների և գյուղի կոլեկտիվացման հակառակորդների փորձերը՝ առանձին քայլագյողությունների ու սրխալների համար վարկաբեկելու կոլտնտեսային շարժումը»։

Այս որոշումից մի քանի օր առաջ Անդրկոմի նախագահության նիստում քննարկվել էին կոլեկտիվացման խոտորումների պատճառները և նշվել դրանք ուղղելու միջոցառումները[119]։

Վերոհիշյալ որոշումները կենսագործելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1930 թ. մարտի 10-ին ընդունեց ընդարձակ որոշում՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. փետրվարի 20-ի դիրեկտիվների

---

118 ՏԵՍ ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 32, թ. 23—24, ինչպես նաև «Заря Востока», 11 мая 1930 г.

119 ՏԵՍ «Очерки истории коммунистических организаций Закавказья», часть 2-ая, стр. 168.

կատարման միջոցառումների մասին[120]։ Կոլեկտիվացման սխալներ թույլ տալուց հետո այս ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին որոշումն էր, որը հանգամանորեն շարադրում էր այդ սխալները վերացնելու միջոցները։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը նշում էր, որ կոլտնտեսային շինարարության պրակտիկայում մի շարք շրջաններում թույլ են տրվել լուրջ սխալներ, իսկ առանձին տեղերում կուսակցական դծի բացահայտ աղավաղումներ։ Որոշ շրջաններում համատարած կոլեկտիվացումը, այլ վայրերի օրինակով, կիրառվել էր մեխանիկորեն, առանց լուրջ և համապատասխան նախապատրաստության։ Բազմաթիվ էին կոլեկտիվացման քանակական ցուցանիշների նկատմամբ ընկնելու և կամավորության սկզբունքի խախտման դեպքերը։ Կային որոշ գյուղերի ու շրջանների ձեռնարկներն համատարած կոլեկտիվացման անցնելու փաստեր։ Անթավարար էին հաշվի առնվել առանձին, մասնավորապես սահմանամերձ շրջանների տնտեսական, քաղաքական և կուլտուր-կենցաղային առանձնահատկությունները։

Այդ բոլորի հետևանքով, ասված է որոշման մեջ, տեղի էր ունենում կոլտնտեսությունների քայքայում և կոլտնտեսականների մաղում, անբավարար էր դարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստումը։

Ելնելով դրանից և հաշվի առնելով դասակարգային պայքարի խիստ սրումը, Կենտկոմը պահանջեց բոլոր կուսակցական կազմակերպությունների աշխատանքները վերակառուցել ստեղծված պայմաններին համապատասխան։ Որպես կարևոր խնդիր առաջ քաշվեց պարզագույն տիպի գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը և ամրապնդումը՝ «մասսայական կոլեկտիվացման անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու և նախապատրաստելու համար»։

Մեկ ամիս առաջ հաստատված համատարածի ցուցակից հանվեցին Հրազդանի և Իջևանի շրջանները։ Համատարած կոլեկտիվացման հարցում Կենտկոմը դեռևս լրիվ չէր հաղթահարել ձեռնարկությունը։ Նա շարունակում էր պնդել, թե դրա համար նրանք ունեն բոլոր հիմնական նախադրյալները։ Առաջ անցնելով նկատենք, որ մի քանի օր անց (մարտի 22-ին) Կենտկոմը համատարած կոլեկտիվացման շրջաններից հանեց Դուզքենդը և Մոլլա Գյոքչան[121]։ Դրանով, իհարկե, չսպառվեց

---

120 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 33, թ. 2—4։ Որոշումը, ոչ լրիվ, տպագրվել է «Խորհրդային Հայաստան» թերթի 1930 թ. մարտի 14-ի համարում։

121 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱԱ, ֆ. 1, ց. 13, գ. 35, թ. 34։

համատարած կոլեկտիվացումով տարվելու հրապուրանքը։ Կենտկոմի մայիսի 13-ի որոշման մեջ համատարած կոլեկտիվացման շրջաններից բացառված է նաև Նոր Բայազետը և հիշվում են վեց շրջաններ (Ղուրդուղլի, Մեղրի, Աշտարակ, Վաղարշապատ, Ղամարլու և Ստեփանավան)[122]։ Սա համատարած կոլեկտիվացման շրջանների վերջին հիշատակումն էր։

Կենտկոմը նախատեսում էր բոլոր մանր գյուղերի կոլտնտեսությունները, որոնք ապրանքային արտադրության ընդունակ չէին, որպես կանոն դարձնել պարզագույն տիպի գյուղատնտեսական կոոպերատիվներ (գյուղական ընկերություններ)։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի մարտի 10-ի որոշումը մանրամասն շարադրում էր այն միջոցառումները, որոնք նախատեսվում էին համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակությունը որպես դասակարգ վերացնելու, ոչ համատարածի շրջաններում կուլակության սահմանափակումը և արտամղումը ուժեղացնելու, շքավորության շրջանում աշխատանքը և սովետների, կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունների գործունեությունը աշխուժացնելու, կոլտնտեսություններն ամրապնդելու, կադրերի պատրաստումն առաջ տանելու, կուլտուրական սպասարկումը ծավալելու, գյուղանացման կամպանիան կազմակերպված անցկացնելու և այլ բնագավառներում։

Վերլուծելով Սովետական Միության տարբեր շրջաններում թույլ տված սխալները, 1930 թ. մարտի 14-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց «Կոլտնտեսային շարժման մեջ կուսգծի ծռումների դեմ պայքարի մասին»[123], որը հաջորդ օրը հրապարակվեց կենտրոնական մամուլում (հանրապետական մամուլում տպագրվել է մարտի 18-ին)։ Կենտկոմը նշում էր, որ կոլեկտիվացման իսկական ու ամենալուրջ հաջողությունների կողքին երկրի տարբեր շրջաններում նկատվում են կուսակցական գիծը ծռելու փաստեր և խստագույն ձևով պահանջեց արագացնել դրանց ուղղումը։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. մարտի 14-ի որոշումը վճռական նշանակություն ունեցավ կոլտնտեսային շարժումը սխալներից և աղավաղումներից ազատելու գործում։

---

122 Տե՛ս նույն տեղում, թ. 3։

123 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», II մաս, էջ 844—848։ Այս որոշումը կուսակցական կազմակերպություններին է ուղարկվել մարտի 10-ին։

Կուսակցության որոշումներն ու միջոցառումները պարզություն մացրին գյուղի սոցիալիստական վերակառուցման պրակտիկ հարցերում և սկսեցին կոլտնտեսային շարժմանը հաղորդել նորմալ ընթացք։ Սկսվեց կոլեկտիվացման տեղատվությունը։ Հարկադրաբար կոլտնտեսություն ներդրավված գյուղացիները սկսեցին հեռանալ։ Քայքայվեցին ու ցրվեցին շատ կոլտնտեսություններ։ Շատ տեղերում կոլտնտեսությունների մաղումը առաջացրեց խուճապ, խառնաշփոթություն։ Մարտի 12-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը շրջաբերական ուղարկեց բոլոր գավկոմներին և շրջկոմներին, կուսակցական կազմակերպություններից խստորեն պահանջելով իրենց ձեռքը վերցնել նախաձեռնությունը և մաղումը ղեկավարել ու իրագործել կազմակերպված ձևով, առանց խուճապի մատնվելու։ Հատուկ ձևով զգուշացվում էր արգելք չհարուցել կոլտնտեսություններից հեռացողների նկատմամբ, որպիսի երևույթը օգտագործվում էր հակասովետական տարրերի կողմից հակակոլտնտեսային պրոպագանդայի և ընդհանրապես դասակարգային պայքարը սրելու համար[124]։ Դասակարգային թշնամու կողմից այդպիսի փորձեր էին կատարվել Երևանի գավառի առանձին վայրերում։ Այդպիսի փորձերից էին Վեդիի կուլակային բանդայի գործունեությունը, կանանց ցույցերը Հրազդանում, ցուցադրական ձևով կոլտնտեսություններից հրաժարվելը Աշտարակի, Հրազդանի ու Կոտայքի մի շարք գյուղերում։ Ելնելով դրանից կուսակցության Երևանի կոմիտեն ևս մարտի 14-ին փակ նամակով դիմեց գավառի կազմակերպություններին, նրանց զգուշացնելով նահանջը ղեկավարելու և արգելք չլինելու մասին[125]։

Սխալները վճռաբար ուղղելու և այն խանգարողներին խիստ պատժելու մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմը մարտի 21-ին նոր շրջաբերական ուղղեց գավառային և շրջանային կոմիտեներին[125]։

Առանձին շրջաններում քաղաքական դրությունը բավականին սրվեց, ուստի մի շարք միջոցառումներ ձեռնարկվեցին նաև ըստ առանձին շրջանների։ Այդպիսի շրջաններից էր նաև Վեդին։ Կոլեկտիվացման սխալները հատկապես ուժեղ դժգոհություն առաջացրին շրջանի լեռնային ադրբեջանաբնակ գյուղերում։ 1930 թ. փետրվարի 11-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը քննեց Չիմանբինդ գյուղում ծագած դժգոհության հարցը[127]։

---

124 Տե՛ս ՄԼԻ ՀՊՄ., ֆ. 1, ց. 14, գ. 1, թ. 146։

125 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 214, թ. 25—28։

126 Տե՛ս նույն տեղում, թ. 12։

127 Партийный архив грузинского филиала ИМЛ при ЦК КПСС (ПАГФ ИМЛ), ф. 13, оп. 1, д. 2159, л. 415.

Հաջորդ օրը Կենտկոմը լսեց հանձնաժողովի զեկուցումը շրջանի դրության մասին և դատապարտեց կուսշրջկոմի և շրջգործկոմի թույլ տված սխալները, որոնց հետևանքով ստեղծված դժգոհությունը կարողացան օգտագործել կուլակներն ու դաշնակցականները և իրենց հետից տանել գյուղացիների որոշ մասին։ Կուսգծի աղավաղումների համար աշխատանքից հանվեցին Վեդիի կուսշրջկոմի քարտուղարը և շրջգործկոմի նախագահը, շրջանը համալրվեց ադրբեջանցի կադրերով, մի շարք նոր աշխատողներ ուղարկվեցին շրջանի լեռնային գյուղերը, որոշ միջոցներ նախատեսվեցին առանձին գյուղերում (Զիմանբենդ) ուժեղացած թայֆայարաղությունը վերացնելու համար[128]։ Մեկ ամիս անց Կենտկոմը նորից քննեց Վեդու շրջանի հարցը և նոր միջոցառումներ ձեռնարկեց շրջանի և հատկապես լեռնային գյուղերի կուսակցական ու սովետական օրգանները ամրապնդելու և քաղաքական ու կուլտուրալուսավորական աշխատանքը ուժեղացնելու համար[129]։

Առանձին որոշումներ ընդունվեցին Թալինի շրջանի վերաբերյալ։ Փետրվարի 26-ին, քննարկելով հանձնաժողովի զեկուցումը, Կենտկոմը արձանագրեց, որ չեն կենսագործվել շրջանի մասին նախկինում ընդունած որոշումները և պահանջեց հատուկ ուշադրություն նվիրել կոլտնտեսությունների ամրապնդմանը և կոոպերացիայի զարգացմանը[130]։

* * *

Սխալները բացահայտելու և քննադատելու հետ մեկտեղ կուսակցությունը և կառավարությունը ձեռնարկեցին կոլտնտեսություններին և աշխատավոր գյուղացիներին օգնելու և դարձնացանը հաջողությամբ իրագործելու մի շարք լրացուցիչ միջոցառումներ, որոնց նպատակն էր ամրապնդել կոլտնտեսությունները և խրախուսել նրանց աճը։ Կոլտնտեսությունների համար սահմանվեցին մի շարք արտոնություններ (տե՛ս Համ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. ապրիլի 2-ի որոշումը)։ Երկու տարի հարկից ազատվեցին կոլտնտեսություններում հանրայնացված ամբողջ լծկանը, ինչպես նաև հանրայնացված ու կոլտնտեսականների տնտեսություններում գտնվող կովերը, խոզերը, ոչխարները և թռչունները։ Չլիվ կենսագործվելու էր 1930 թ. կոլտնտեսություններին 500 մի-

---

128 Տե՛ս ՄԱԻ ՀՅԱԱ, ֆ. 1, ց. 13, գ. 35, թ. 58։

129 Տե՛ս ПАГФ ИМЛ, ф. 13, оп. 1, д. 2159, л. 419.

130 Տե՛ս ՄԱԻ ՀՅԱԱ, ֆ. 4, ց. 1, գ. 1584, թ. 32։

լիոն ռուբլով վարկավորելու մասին հունվարի 5-ի որոշումը (այս դիրեկտիվը պետական օրենքի ուժ ստացավ միութենական Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից)[131]։

Համապատասխան միջոցառումներ մշակվեցին նաև հանրապետությունում։ Դրանցից բացի տարեվերջին, Սովետական Հայաստանի 10-րդ տարեդարձի առթիվ արձակած մանիֆեստով հանրապետության կոլտնտեսությունները, կոլտնտեսականները, ինչպես նաև չքավոր ու միջակ մենատնտեսությունները ստացան նոր արտոնություններ՝ զեղչվեցին մի շարք տարիների զանազան հարկային ապառիկներն ու պարտքերը։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը ապրիլի 7-ին լսեց գավառների (օկրուգ) քարտուղարների, գավառներից վերադարձած Կենտկոմի նախագահության անդամների և զարնանացանի լիազորի հաղորդումները զարնանային գյուղատնտեսական կամպանիայի ընթացքի, ինչպես նաև կոլեկտիվացման արդյունքների, կուսակցական գծի ծռումներն ուղղելու մասին և ընդունեց համապատասխան որոշում։

Մեծ օգնություն ցույց տրվեց մենատնտես գյուղացիներին (կոլտնտեսությունից հեռացած և կոլտնտեսություն բոլորովին չմտած)։ Այն կարևոր նշանակություն ուներ նաև Հայաստանի համար, որտեղ կոլտնտեսությունների մաղման պատճառով ավելի ու ավելի էր մեծանում մենատնտեսների թիվը։ Այս բնագավառում առաջնահերթ խնդիրը նրանց ցանքի կազմակերպումն էր և կոլտնտեսությունից դուրս եկողների հետ հաշիվների մաքրումը (հողաբաժնի առանձնացում, հանրայնացված միջոցների վերադարձ և այլն)։ 1930 թ. ապրիլի 12-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը, ինչպես նաև Կենտգործկոմը և Ժողկոմխորհը որոշումներ ընդունեցին մենատնտեսների ցանքը խրախուսելու մասին։

Սպառողական գոտու շրջաններում, որտեղ գյուղացիության ճնշող մեծամասնությունը ցանքը կատարելու էր անհատական հիմունքներով, Կենտկոմը կուսակցական կազմակերպությունների հիմնական խնդիրը համարեց մենատնտեսների ցանքի կազմակերպումը և պլանի կատարումը։ Այդ դիրեկտիվը վերաբերում էր նաև Հայաստանին, որտեղ 1930 թ. մենատնտեսներին բաժին ընկավ բոլոր ցանքերի 82,2 տոկոսը (1929 թ. 96,8 տոկոսի դիմաց)[132]։ Անդրիերկոմ ուղարկած զեկուցագրում ՀԿ(բ)Կ

---

131 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 290—291, 292—293.

132 Տե՛ս «Մեր նվաճումները», Երևան, 1934, V բաժնի 10-րդ աղյուսակը։

Կենտկոմը հայտնում էր, որ դգալի աշխատանք է կատարվել անհատական տնտեսությունների թերագնահատման «ձախ» խոտորումները մերկացնելու, ինչպես նաև չքավորների ու միջակների ցանքը կազմակերպելու ուղղությամբ։ Կոլտնտեսություններից հեռացող գյուղացիներին անմիջապես վերադարձվում էին հողաբաժինը և սերմը։ Կոլտնտեսությունները օգնություն էին ցույց տալիս սակավազոր տնտեսություններին՝ ցանքի պլանը կատարելու համար։ Կոլտնտեսությունների հետ միասին բոլոր մենատնտեսներին պետական ֆոնդից տրվել էր 170 հազար փութ սերմացու։ Չքավորները և միջակները արտադրական նպատակով (տեխնիկա, ցանք, սերմ, լծկան) վարկային կոոպերացիայի միջոցով ստացել էին ավելի քան 400 հազար ռուբլի[133]։ Դեռևս 1930 թ. մարտին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում էր ընդունել չքավոր գյուղացիությանը տընտեսական օգնություն ցույց տալու մասին, որի համաձայն որպես պարեն և սերմացու առանձնացվում էր 100 հազար փութ հացահատիկ[134]։

Միջոցառումներ մշակվեցին տեղերում և հատկապես ազգային փոքրամասնությունների ու սահմանակից շրջաններում կոոպերացիայի աշխատանքն աշխուժացնելու ուղղությամբ։ Շտապ տնտեսական օգնություն էր կազմակերպվում Վեղրի, Գյառնիի (Գառնի), Հրազդանի, Թալինի, Դարալագյազի և սահմանային շրջանների համար։ Այդ օգնությունը տրվում էր ինչպես կոլտնտեսություններին, այնպես էլ անհատներին։ Առանձին օժանդակություն նախատեսվեց այն տնտեսությունների համար, որոնք տուժել էին կուլակային բռնությունից[135]։ Շամշադինի շրջանում կառուցվելու էին ճանապարհներ, զարգացվելու էր կապը, կուլտուրական և տնտեսական շինարարությունը։ Նույնպիսի քայլեր կատարվեցին Մեղրիի և այլ շրջաններում։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը պահանջեց աշխուժացնել սասունցի գյուղացիների դրությունը ուսումնասիրող հանձնաժողովի աշխատանքը, նրանց տնտեսական օգնություն ցույց տալու համար։ Գարնանացանի կամպանիայի ժամանակ նախատեսվեցին նոր միջոցառումներ՝ Թալինի շրջանի սասունցի բնակչությանը տնտեսական օգնություն ցույց տալու համար։ Շրջանին ամրացվեցին մի շարք ղեկավար կուսակցական աշխատողներ[136]։

---

133 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 32, թ. 25—26։

134 Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 368։

135 Տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 3, հոդ. 50։

136 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 13, գ. 12, թ. 12, գ. 35, թ. 33։

Գարնանացանի կամպանիայի ընթացքում շարունակվում էին «ձախ» խոտորումները ուղղելու աշխատանքները։ Դրանք արագացնելու տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. ապրիլի 2-ի դիմումը կուսակցական կազմակերպություններին, որտեղ պահանջվում էր քննադատաբար ընդունել նաև սեփական սխալները։ «Կուսակցական կազմակերպությունների կողմից,— ասված է դիմումում,— հաճախակի են ստեղծված դրությունը կոծկելու և աշխատանքում ունեցած իրենց սխալներն ու թերություններն ընդունելու և ուղղելու փոխարեն ամեն ինչ միջակի տատանման վրա գցելու փորձերը»[137]։ Միայն այդ դիմումից հետո Անդրերկոմը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը խոստովանեցին իրենց սեփական սխալները։ Անդրերկոմը դա կատարեց ապրիլի 10-ի՝ կոլտնտեսային շարժման սխալների մասին, իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմը ապրիլի 15-ի՝ «Կոլտնտեսային շարժման ղեկավարման առպարեղում կատարված սխալների մասին» որոշումներով։ Մինչ այդ ամեն ինչ բարդվում էր միայն տեղական կազմակերպությունների վրա (շրջանային, գյուղական)։ Երկրային կոմիտեն գտնում էր, որ իր և կենտկոմների որոշումներում սխալներ են թույլ տրվել կոլեկտիվացման տեմպի, համատարած կոլեկտիվացման շրջանների ու գավառների դեկրետավորման, երկրամասի առանձնահատկությունները հաշվի առնելու և այլ հարցերում։ Նա մի անգամ ևս խստորեն պահանջեց սխալները վերացնելու համար դիմել վճռական միջոցների[138]։

Հավանություն տալով Անդրերկոմի որոշմանը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը նշեց, որ հունվարի 6-ի իր որոշման մեջ անբավարար են հաշվի առնվել շրջանների առանձնահատկությունները և կոլեկտիվացման պատրաստության տարբերությունները։ Սխալ էր «ամբողջ շրջանների վերից համատարած կոլեկտիվացման ենթակա հրահանգելը գարնան գյուղատնտեսական կամպանիայի հենց սկզբից», արտելների հետ միասին կոմունաների կազմակերպման պահանջը և այլն։ Կենտկոմը միաժամանակ ընդունեց, որ բազմիցս դիրեկտիվներ ու ցուցումներ տալով և տեղական կազմակերպություններին նախազգուշացումներ անելով, ինքը «ոչ բոլոր դեպքերում է հայտնաբերել անհրաժեշտ հաստատակա-

---

137 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, Երևան, 1955, էջ 65 (մեջբերումը վերցրել ենք «Կոլտնտեսային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» կուսակցության XVI համագումարի որոշումներից)։

138 Տե՛ս «Заря Востока», 1 апреля 1930г.

մություն՝ անմիջապես ու վճռաբար արմատախիլ անելու տեղերում թույլ տրված բոլոր սխալներն ու աղավաղումները»[139]։

Կուսակցության Երևանի կոմիտեն մասնավորապես արձանագրեց, որ անտեսել է գավառի ազգային փոքրամասնությունների շրջանների (Վեդի, մասամբ Հրազդան և Ղուրդուղուլի, ուր բնակվում էին ադրբեջանցիներ և քրդեր) առանձնահատկությունները[140]։

Կուսակցական ղեկավար մարմինների կողմից սեփական սխալների ընդունումը նպաստեց սխալների ուղղումը արագացնելու և կոլեկտիվացման նոր վերելք նախապատրաստելու գործին։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը ապրիլի 20-ին հեռագիր ուղարկեց բոլոր գավկոմներին և շրջկոմներին, որով պահանջում էր կարճ ժամանակամիջոցում մաքրել կոլտնտեսություններից հեռացողների հաշիվները, արագացնել կուլակաթափության և ձայնազրկման հետ կապված սխալները ուղղող հանձնաժողովների (հանրապետական և գավառային) աշխատանքները, ինչպես նաև բոլոր միջոցները ձեռնարկել անհատական սեկտորի վարուցանքի կամպանիան հաջողությամբ կենսագործելու համար[141]։

Շուտով լուծվեցին նաև կոլեկտիվացման սխալներն ուղղելու հետ կապված մի շարք այլ հարցեր։ Մայիսի 13-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց ոչ համատարածի շրջաններում ապակուլակացման բնագավառի սխալներն ուղղելու մասին[142]։ Լուծվեց նաև կոլտնտեսություններից հեռացող անձանց հետ փոխադարձ հաշվարկ (փայի վերադարձ, մուտքի վճար, անբաժանելի դրամագլուխ) կատարելու կարգը, ըստ գյուղատնտեսական գոտիների։ Լրացուցիչ կերպով գյուղսովետներին կից կազմակերպվեցին հատուկ հանձնաժողովներ, որոնք հունիս ամսվա ընթացքում ավարտելու էին կոլտնտեսություններից հեռացած գյուղացիների պահանջների քննումը և լուծումը։

1930 թ. մայիսին, ՀԿ(բ)Կ VII համագումարից առաջ տեղի ունեցավ Կենտկոմի պլենում, որը փոխեց կուսակցության ղեկավարությունը։ Հ. Կոստանյանի փոխարեն Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Ա. Խանջյանը։

1930 թ. մայիսի 26-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմում կայացած խորհրդակցությունում, որին մասնակցում էին Կենտկոմի նախագահության ան-

---

139 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. ապրիլի 17։

140 Տե՛ս նույն տեղում։

141 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 4, ց. 1, գ. 1588, թ. 75։

142 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 15, գ. 12, թ. 228։

դամները և գավկոմների քարտուղարները, լսվեց Անդրերկոմի քարտուղար Չապլինի զեկուցումը Անդրկովկասի գյուղում տիրող դրության մասին, նոր միջոցառումներ առաջարկվեցին սխալները մինչև վերջ ուղղելու համար։ Նորից շրջաններ մեկնեցին Կենտկոմի նախագահության և կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի անդամները։ Մոբիլիզացվեցին 40 պատասխանատու աշխատողներ և ուղարկվեցին գյուղ մշտական աշխատանքի։ Գավկոմներին առաջարկվեց գավառային ակտիվի մի մասը ուղարկել գյուղ՝ մշտական կամ ժամանակավոր աշխատանքի[143]։

1930 թ. փետրվարին և հատկապես մարտ-ապրիլ ամիսներին իրականացված կոլեկտիվացման սխալներն ուղղելու պայքարը շուտով տվեց իր դրական հետևանքները։ ՀԿ(բ)Կ VII համագումարը (1930 թ. մայիս) նշեց այդ պայքարի մի քանի նախնական արդյունքները՝ «մի քանի շրջաններում սուր կերպով տատանված միջակ գյուղացիության հանդստացումը, կուլակ և դաշնակ տարրերի հակախորհրդային ակտիվ ագիտացիայի մեկուսացումը, նոր դիմումները դեպի կոլտնտեսությունները, նրանց ամրացումը, անհատական աշխատավորական տնտեսությունների ցանքի պլանի ընդհանուր առմամբ իրագործումը»[144]։

Կոլեկտիվացման սխալների ուղղումը և «տեղատվությունը» հիմնականում շարունակվեց մինչև 1930 թ. կեսերը։ Ճիշտ է, դրանից հետո ևս երբեմն հարկ էր լինում անդրադառնալ սխալների ուղղման հետ կապված հարցերին, սակայն փաստ է, որ տարվա երկրորդ կեսից դրությունը սկսեց ընդունել բավական կայուն բնույթ, ապա աստիճանաբար սկսվեց կոլեկտիվացման վերելքը։

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ի վերջո ինչ արդյունքների հանգեցրեց 1930 թ. առաջին կեսի կոլեկտիվացման փոթորկոտ ժամանակաշրջանը։ 1930 թ. հունվարի 1-ին, այսինքն հարկադրական կոլեկտիվացման անմիջական նախօրյակին, հանրապետությունում կար 303 կոլտնտեսություն[145]։ Փետրվարին դրանց թիվը աճեց մինչև 668-ի, այնուհետև, վարչարարական մեթոդներով ստեղծված և շատ մանր, անկենսունակ կոլտնտեսությունների քայքայումից ու ցրումից հետո, խիստ կրճատվեց և կայուն նվազագույնի հասավ մայիսի կեսին, և կար ընդամենը 410 կոլտնտեսություն կամ դրանց թիվը պակասեց ավելի

143 Տե՛ս ПАГФ ИМЛ, ф. 13, оп. 1, д. 2159. л. 429—430.

144 «Հայաստանի կոմունիստական (բ) կուսակցության VII համագումարի որոշումները», Երևան, 1930, էջ 5։

145 Տե՛ս ՄԱԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 17, գ. 218, թ. 6։

քան մեկ երրորդով: Կոլտնտեսությունների կրճատումը տեղի էր ունենում բոլոր գավառներում: Այսպես, փետրվար-մայիս ժամանակամիջոցում դրանց քանակը պակասեց. Լոռու և Զանգեզուրի գավառներում՝ կիսով չափ, Երևանի և Լենինականի գավառներում՝ մեկ երրորդով և Սևանում՝ մեկ քառորդով[146]: Մինչև հուլիսի վերջը ցրվեցին ևս մոտ 25 կոլտնտեսություններ և օգոստոսի 1-ի տվյալներով նրանց թիվը հաշվվում էր 386:[147]: Իսկ հունվարի 1-ի համեմատությամբ մայիսի 15-ին կար 107-ով ավելի կոլտնտեսություն կամ ամբ կազմում է 35 տոկոս: Ըստ արտադրության միջոցների հանրայնացման աստիճանի հանրապետության 380 կոլտնտեսությունները բաժանվում էին 288 գյուղատնտեսական արտելի, 147 հողը համատեղ մշակող ընկերության և 5 կոմունայի[148]:

Փետրվարին, «առավելագույն հաջողության» ժամանակ կոլեկտիվացումը «բարձրացել էր» մինչև 63 տոկոսի ամբողջ հանրապետությունում[149]: Մաղումից հետո գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը կայուն նվազագույն մակարդակի հասավ մայիսի կեսին՝ 12,4 տոկոս (միայն Զանգեզուրում հուլիսի վերջին)[150]: Ըստ գավառների, մայիսի 15-ի տվյալներով կոլտնտեսային շարժումն ուներ հետևյալ պատկերը. Երևան՝ 14,9, Լենինական՝ 8,9, Լոռի՝ 10,2, Սևան՝ 10,4 և Զանգեզուր՝ 13,6 տոկոս (վերջինում օգոստոսի 1-ի տվյալներով)[151]: Մայիսից հետո տեղի ունեցավ կոլտնտեսությունների անդամների փոքր նվազում (սեպտեմբերի 1-ին կոլեկտիվացման մակարդակը իջավ մինչև 9,6 տոկոսի)[152], սակայն հիմնականում դրությունը կայուն էր և աստիճանաբար ավելանում էր նոր դիմողների և ընդունվողների թիվը: 1930 թ. մայիսի 15-ին հանրապետության կոլտնտեսություններում ընդգրկված էին 21,5 հազար բատրակ, չքավոր և միջակ տնտեսություններ, նույն թվականի հունվարի 1-ի 7800-ի դիմաց[153]: Այդ նշանակում է, որ չնայած կոլեկտիվացման բնագավառում թույլ տված կոպիտ սը-

---

146 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 1, թ. 337:
147 Տե՛ս նույն տեղում, գ. 181, թ. 5:
148 Տե՛ս նույն տեղում, ց. 20, գ. 94, թ. 2:
149 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 224, թ. 10:
150 Տե՛ս նույն տեղում, գ. 181, թ. 5: ՀՍՍՀ ՀՍՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 1, գ. 2422, թ. 15:
151 Տե՛ս ՄԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 181, թ. 5:
152 Տե՛ս նույն տեղում, գ. 219, թ. 27:
153 Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 1, գ. 2422, թ. 2:

խալներին ու խեղաթյուրումներին և մեծ մաղումին, այնուամենայնիվ կոլտնտեսությունների անդամների թիվը հունվարի 1-ի համեմատությամբ ավելի էր երեք անգամ: Դա մեծ նվաճում էր, մանավանդ եթե նկատի ունենանք, որ վերջին մակարդակը ձեռք էր բերվել մի քանի ամսվա ընթացքում, այն էլ գյուղում ստեղծված քաղաքական բարդ պայմաններում, իսկ հունվարի 1-ի մակարդակը գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման պայքարի երկու տարվա արդյունք էր (ինչպես արդեն ասվել է Հայաստանում գյուղատնտեսության կոլեկտիվացումը սկսվել էր միայն կուսակցության XV համագումարից հետո): Դա բեկում էր գյուղատնտեսության կոլեկտիվացման ընթացքում, սակայն այն չհասավ մասսայական, առավել ևս համատարած կոլեկտիվացման մակարդակի:

Վերոհիշյալ տվյալներից բխում է նաև այն եզրակացությունը, որ հարկադրական կոլեկտիվացման հետ միաժամանակ գյուղացիների մի մասը կամավոր, համոզված կերպով էր ընդգրկվել կոլտնտեսությունների մեջ: Դա, իհարկե, չէր նշանակում, թե նրանք բոլորը՝ ովքեր հեռացան կոլտնտեսություններից, միայն հարկադրաբար էին կոլեկտիվացվել: Նրանց մեջ անպայման կային նաև կամավոր կոլեկտիվներին դիմած գյուղացիներ, որոնք տատանումներ ունենալով կամ ենթարկվելով թշնամական ագիտացիային, ժամանակավորապես հեռացան կոլտնտեսություններից: Նրանք, սակայն, շուտով ստուգանաբար հաղթահարելով իրենց տատանումները, սկսեցին շրջվել դեպի կոլտնտեսությունները, այս անգամ վերջնականապես:

Անհրաժեշտ ենք համարում լուսաբանել նաև այն հարցը, թե ի վերջո ինչ արդյունքներ ստացվեցին համատարած կոլեկտիվացում հայտարարված շրջաններում: Վերցնենք այն վեց շրջանները, որոնք մայիսի սկզբին դեռևս շարունակում էին ճանաչվել որպես համատարած կոլեկտիվացման շրջաններ: Նշված շրջաններում փետրվարին կոլեկտիվացումը գրեթե լրիվ «ավարտվել էր», համենայն դեպս 80 տոկոսից ցածր ցուցանիշ չկար: Այս շրջաններում ևս տեղի ունեցավ կոլտնտեսությունների քայքայում և անդամների ուժեղ մաղում: «Համատարած կոլեկտիվացման» ենթարկված շրջանները մայիսի 15-ին ունեին հետևյալ կայուն նվազագույն ցուցանիշները (Մեղրու շրջանը ըստ օգոստոսի 1-ի դրության). Ղուրդուղուլի՝ 23,1, Մեղրի՝ 21,0, Ղամարլու՝ 17,1, Վաղարշապատ՝ 18,4, Աշտարակ և Ստեփանավան՝ 11,7 տոկոս[154]: Այսպի-

154 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 224, թ. 10, գ. 219, թ. 27 և գ. 181, թ.5:

սով, ոչ 1930 թ. գարնանացանի կամպանիայի ընթացքում և ոչ էլ, ինչպես հետո կտեսնենք, ամբողջ տարվա ընթացքում, Հայաստանում ոչ մի շրջան համատարած կոլեկտիվացման չհասավ և նույնիսկ դրան մոտիկ չգտնվեց։ Դա տեղի չունեցավ այն պատճառով, որովհետև համատարածի հայտարարումը իրական և ռեալ չէր, ու դրա համար համապատասխան նախադրյալներ դեռևս չէին ստեղծվել։ Հաշվի առնելով այդ ամենը, ինչպես կտեսնենք, կուսակցությունը շուտով լրիվ հրաժարվեց Հայաստանում, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասում 1930 թ. համատարած կոլեկտիվացման դիրեկտիվից։ Գրականության մեջ որոշ չափով դատապարտվել և չափազանցվել են մի շարք շրջանների հաջողությունները։ Այսպես, նշվել է, իբր «Հանրապետության առաջավոր, համայնական տնտեսության համար զգալի չափով նախապատրաստված Ղուրդուղուլի, Ղամարլուի, Մեղրու, Էջմիածնի շրջաններում, ամբողջ կոլտնտեսությունների տարերայնորեն քայքայման դեպքեր համարյա տեղի չունեցան։ Այդ վայրերում թույլ տրված սխալներն իրենց ծայրահեղ հետևանքները չունեցան[155]»։ Մեր կողմից բերված տվյալները այդպիսի եզրակացությունը չեն հաստատում։

Սխալ է նաև Ե. Հովհաննիսյանի եզրակացությունը, թե իբր, չնայած թույլ տրված վրիպումներին, «գյուղատնտեսության կոլեկտիվացումը և կուլակության որպես դասակարգի լիկվիդացումը հիմնականում ճիշտ է կատարվել»[156]։ Նկատի ունենալով 1930 թ. առաջին ամիսներին Հայաստանում ձևք բերված գյուղատնտեսության կոլեկտիվացման նվաճումները, մի այլ դեպքում նա գրում է, թե «չքավոր և միջակ գյուղացիական զանգվածները հիմնովին շրջվեցին դեպի կոլտնտեսությունները»[157] կամ թե՝ գյուղացիության հիմնական մասը շրջադարձ էր կատարել դեպի գյուղատնտեսության կոլեկտիվացումը[158]։ Կոլեկտիվացման նախադրյալների ստեղծման և ընթացքի տեսակետից նա ոչ մի տարբերություն չի դնում Հայաստանի և Սովետական Միության առաջավոր շրջանների միջև, չի նկատում հանրապետությունում կոլեկտիվացման հաստատման առանձնահատկությունները, ստացվում է այնպես, կարծես տեղի էր ունենում իսկական համատարած կոլեկտիվա-

---

155 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, էջ 309։

156 Ե. Հովհաննիսյան, Դասակարգային պայքարը գյուղում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում, Երևան, 1969, էջ 144։

157 Նույն տեղում, էջ 108։

158 Տե՛ս նույն տեղում, էջ 112։

ցում[159]։ Իրականում, ինչպես տեսանք, գրությունը բոլորովին էլ այնպիսին չէր, ինչպես ներկայացնում է Ե. Հովհաննիսյանը։

Նկատենք, որ հարցի նկատմամբ ճիշտ մոտեցում է ցուցաբերել Հ. Վարդանյանը, որի աշխատությունը լույս է տեսել Ե. Հովհաննիսյանի գրքից առաջ և հաշվի չի առնվել վերջինիս կողմից։ Մենք փաստորեն բաժանեցինք Հ. Վարդանյանի տեսակետը, որ 1930 թ. սկզբին Հայաստանում մասսայական կոլեկտիվացումը ստեղծվել էր արհեստականորեն[160]։ Այս միտքը զարգացնելով իր դոկտորական դիսերտացիայի ավտոռեֆերատում, Հ. Վարդանյանը նշում է, որ այն՝ ինչ տեղի ունեցավ հայկական գյուղում 1930 թ. ձմռանը, ոչինչ ընդհանուր չունի համատարած կոլեկտիվացման քաղաքականության հետ[161]։ Ավելացնենք, որ ավտոռեֆերատում ճիշտ է որոշված նաև կոլեկտիվացման բուռն վերելքի և իսկական մասսայական կոլեկտիվացման ժամանակաշրջանը (1931 թ.)։ Դժբախտաբար այդ մասին նշվում է միայն ավտոռեֆերատում, իսկ գրքում հարցը ըստ էության չի լուսաբանվել։

Այդ ամենը, իհարկե, չեն վերացնում այն նվաճումները, որ ձեռք բերվեցին գյուղի սոցիալիստական վերափոխման բնագավառում 1929 թ. վերջին և 1930 թ. առաջին ամիսներին։ Այդ ցույց տալու համար բերենք մի քանի տվյալներ։ Ինչպես նախորդ տարիներին, 1930 թ. ևս կոլտնտեսությունների զգալի մասը (35,5 տոկոս) բաժին էր ընկնում բամբակագործական շրջաններին[162], ուր դրանց համար կային ավելի նպաստավոր պայմաններ (բարձր ապրանքայնություն և կոոպերացում, մեքենատրակտորային կայան, բատրակների և չքավորների կազմակերպվածություն և այլն)։ Երկրորդ տեղը գրավում էին հացահատիկային շրջանները։ Ստ էին մնում լեռնային-անասնապահական շրջանները, ուր կոլեկտիվացման համար նախադրյալները ավելի դանդաղ էին հասունանում։ Այստեղ նորագույն գյուղատնտեսական տեխնիկան (տրակտոր և այլն) գրեթե մուտք չէր գործել, բացի այդ, անասունները հանրայնացնելու համար հարկավոր էին շինություններ։ Դանդաղ էին կոլեկտիվացման ենթարկվում նաև այգեգործական շրջանների

---

159 Տե՛ս նույն տեղում, էջ 90, 91, 96, 100։

160 Տե՛ս Հ. Վարդանյան. Հայաստանի կոմպարտիայի պայքարը գյուղում սոցիալիզմի հաղթանակի համար, Երևան, 1967, էջ 64։

161 Տե՛ս О.Вартанян, Коммунистическая партия Армении в борьбе за построение социализма в деревне (1927—1937 гг.). (Автореферат докт. дис.), Ереван, 1968, стр. 350.

162 Տե՛ս ՄԼԻ ՀՍՍՀ, ֆ. 1, ց. 17, գ. 135, թ. 54։

տնտեսությունները, այդ գրաղմունքի առանձնահատկությունների և դրանով պայմանավորված գյուղացու անհատապաշտական հոգեբանության և այլ պատճառներով։ Իսկ ընդհանրապես կոլեկտիվացումը Հայաստանում (ինչպես և ամբողջ Անդրկովկասում) ավելի դանդաղ էր նախապատրաստվում համեմատած Սովետական Միության հացահատիկային մարզերի հետ։ Հայաստանում գյուղատնտեսության մեքենայացումը ավելի թույլ էր։ Ցածր էր գյուղատնտեսության մի շարք ճյուղերի (անասնապահություն, հացահատիկի մշակություն) ապրանքայնությունը և դրանով պայմանավորված կոոպերացումը։ Գյուղը և հատկապես ազգային փոքրամասնությունների շրջանները գտնվում էին կուլտուրական ցածր մակարդակի վրա, ուժեղ էր կրոնի պաշտամունքը, իսկ քուրդ ժողովրդի մոտ դեռևս պահպանվում էին կիսաֆեոդալական և ֆեոդալական հարաբերությունների մնացորդները։ Ամբողջությամբ վերցրած Հայաստանում ավելի թույլ էր արտահայտված գյուղի սոցիալ-դասակարգային շերտավորումը։ Գյուղի չքավորները և միջակները հարկավոր չափով համախմբված չէին կուլակի դեմ ուժեղ պայքար մղելու համար։ Դեռևս թույլ էին գյուղական կուսակցական և մյուս կազմակերպությունները։

1930 թ. կեսերին Հայաստանի կոլտնտեսությունների սոցիալական կազմը շարունակում էր մնալ բատրակաչքավորական։ Միջակների տեսակարար կշիռը մի փոքր բարձրանալով հասել էր 30,4 տոկոսի[163]։

Զգալի էին նվաճումները կոլտնտեսությունների խոշորացման բնագավառում։ Կոլտնտեսությունների համապարփակ վիճակագրության տվյալներով (անց է կացվել 1930 թ. մայիսին, առանց Զանգեզուրի) մեկ կոլտնտեսությանն ընկնում էր 52 տնտեսություն, 1929 թ. 26-ի դիմաց, 132 հեկտար վարելահող, նախորդ տարվա 65,5 հեկտարի դիմաց[164]։ Կոլտնտեսություններում հանրայնացված էր նրա անդամների գրեթե ամբողջ լծկանը և ցանքը, կովերի 57,3 տոկոսը[165]։ Եթե, նույն տվյալների համաձայն, ըստ տնտեսությունների կոլեկտիվացումը կազմում էր 11,6 տոկոս, ապա ցանքի գծով այն կազմում էր 9,3 տոկոս։ Կոլտնտեսություններում հանրայնացված էր հանրապետության լծկանների 5,1 և կովերի 4,1 տոկոսը[166]։ Վերջին տվյալները վկայում են կոլտնտեսու-

---

163 Տե՛ս ՄԱԻ ՀՅԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 135, թ. 49։

164 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. հունիսի 3։

165 Տե՛ս «Колхозы в 1930 г. Итоги рапортов XVI съезду ВКП(б)», М.—Л., 1931, стр. 222—223.

166 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. հունիսի 3։

թյունների բատրակային-չքավորական կազմի մասին։ Կոլեկտիվացման նախօրյակին Հայաստանում զգալի թիվ էին կազմում ցանքագործ և քիչ ցանքատեր տնտեսությունները, այսինքն բատրակները և չքավորները[167]։ Կոլտնտեսություններում ցանքը գրավում էր նրանց բոլոր վարելահողերի 74,3 տոկոսը[168]։ Մինչդեռ անհատական տնտեսություններում այն դրանից շատ ցածր էր։ Կոլտնտեսությունները յուրացրել էին 12.705 հեկտար անմշակ հողատարածություններ (յուրաքանչյուրին ընկնում էր 55 հեկտար), որոնք կազմում էին նրանց բոլոր ցանքերի 30 տոկոսը[169]։ Դա խոսում է կոլեկտիվ տնտեսության առավելության մասին։

1930 թ. կեսերին հանրապետությունում գործում էր մեկ մեքենատրակտորային կայան։ Բացի այդ, կոլտնտեսություններն ունեին 30 տրակտոր և այլ տեխնիկա։

1930 թ. մայիսին կայացած ՀԿ(բ)Կ VII համագումարը, որը քննարկեց Կենտկոմի հաշվետու զեկուցումը (զեկ. Ա. Խանջյան) և կոլտնտեսային շինարարության հերթական խնդիրները (զեկ. Ս. Կասյան), ամփոփեց ինչպես սոցիալիստական ինդուստրացման, այնպես էլ գյուղի սոցիալիստական վերակառուցման հանրագումարները։ Համագումարի բանաձևում արձանագրվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում (նախորդ համագումարը կայացել էր 1929 թ. հունվարին) Հայաստանի կոմունիստական կուսակցությանը հաջողվել է «բեկում կատարել գյուղի հիմնական մասսայի շրջանում դեպի գյուղի սոցիալիստական զարգացման ուղին»[170]։ Դա գնահատվեց որպես «կուսակցության խոշորագույն հաղթանակ»։ Հաշվետու ժամանակամիջոցում Հայաստանում կոլեկտիվացումը երկուսից բարձրացել էր 15 տոկոսի[171]։ Միաժամանակ քննադատության և ինքնաքննադատության ենթարկվեցին այն սխալները և կուսակցական գծի ծռումները, որոնք տեղի էին ունեցել գյուղում, տարվա առաջին ամիսներին։ Համագումարը նշեց, որ տվյալ բնագավառում, ինչպես և տվյալ ժամանակաշրջանում հիմնական վտանգ հանդիսացող աջ օպորտունիզմի դեմ հաջող պայքարի գլխավոր պայմանն է «գյու-

167 Տե՛ս Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920—1929 թթ., Երևան, 1975, էջ 229։

168 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. հունիսի 3։

169 Տե՛ս «Колхозы в 1930 г...», стр. 96—97, 168—169 (տոկոսային հաշվումները կատարված են հեղինակի կողմից)։

170 «Հայաստանի կոմունիստական (բ) կուսակցության VII համագումարի որոշումները», էջ 1։

171 Տե՛ս նույն տեղում, էջ 2։

դում կատարված սխալների, միջակի նկատմամբ մեր քաղաքականության աղավաղումների, «ձախ» խոտորումների դեմ անհաշտ պայքարի ծավալումը, սխալների վճռական ու մինչև վերջն ուղղումը»[172]։

Գյուղի դրության հարցերը ավելի հանգամանորեն քննարկվեցին Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների VI համագումարում (1930 թ. հունիս)։ Համագումարի բանաձևում ասված է, որ Անդրկովկասի ղեկավար կուսակցական մարմինները թույլ են տվել կուսակցական գծի կոպիտ խեղաթյուրումներ, քաղաքական խոշոր սխալներ՝ հակառակ Համ(բ)Կ Կենտկոմի ուղղակի և ժամանակին տված ցուցումների։ Այդ սխալները ստեղծեցին հակակոլտնտեսային շարժման ալիք, անկայուն դրություն գյուղում, իրական դարձնելով միջակի հետ բանվոր դասակարգի դաշինքի խզման վտանգը և առաջ բերելով կոլտնտեսային շինարարության ձախողումը Անդրկովկասի մի շարք շրջաններում[173]։ Երկրամասի կուսակցական կազմակերպությունները, կարդում ենք այնուհետև բանաձևում, իրենց առաջ դրեցին անհիրագործելի խնդիր՝ մեկ գյուղատնտեսական կամպանիայի ընթացքում համատարած կոլեկտիվացման ենթարկել ամբողջ գավառներ ու շրջաններ։ Կոլեկտիվացումը կիրառելու ժամանակ Անդրերկրկոմի և հանրապետությունների կենտկոմների սխալ դիրքին գումարվեցին տեղերի բազմաթիվ չափազանցումները[174]։

Համագումարը հատուկ նշեց նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության «մի շարք ամենալուրջ սխալների մասին»՝ հետամնաց շրջանների առանձնահատկությունների անբավարար հաշվի առնելը, կոլեկտիվացման տեմպի ոչնչով չհիմնավորված արագացումը, համատարած կոլեկտիվացման դեկրետավորումը, կուսակցության քաղաքականության ամենակոպիտ աղավաղումները տեղերում։ «Դասակարգային պայքարի սրման և շքավորության մեջ թույլ աշխատանքի պայմաններում,— նշված է այնուհետև բանաձևում,— այդ սխալները դարձան դլխավոր պատճառ միջակի տատանման և մի շարք շրջաններում ստեղծեցին նրա հետ դաշինքը խզելու ուղղակի սպառնալիք, պատճառ դառնալով միջակների առանձին խմբերի ելույթներին խորհրդային իշխանության դեմ»[175]։

---

172 Նույն տեղում, էջ 19։

173 Տե՛ս «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների վեցերորդ համագումարը», Երևան, 1930, էջ 165։

174 Տե՛ս նույն տեղում, էջ 177։

175 Նույն տեղում, էջ 191։

Համագումարը Անդրկովկասի կուսակցական կազմակերպություններից պահանջեց արագացնել գյուղում թույլ տված բոլոր տեսակի սխալների ուղղման ավարտումը և մի շարք միջոցառումներ նշեց գյուղատնտեսության կոլեկտիվացման գործը լրջորեն նախապատրաստելու համար։ Նկատի ունենալով գյուղում անհատական գյուղացիական տնտեսությունների իշխող մեծամասնության փաստը (երկրամասում մինչև 85 տոկոս), համագումարը որոշեց հատուկ ուշադրություն նվիրել գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմանը, որպես աշխատավոր գյուղացիությանը կոլտնտեսությունների կողմը գրավելու կարևոր պայման։

1930 թ. հունիս-հուլիսին կայացավ ՍՄԿԿ XVI համագումարը, որի աշխատանքների մեջ կարևոր տեղ էին գրավում սոցիալիստական ինդուստրացման և գյուղի սոցիալիստական վերակառուցման հարցերը։ Այն հայտնի է որպես ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման համագումար։ Գյուղատնտեսության բնագավառում կուսակցության խորտակիչ հարվածներն էին միջակի շրջադարձը դեպի սոցիալիզմ, համատարած կոլեկտիվացման ծավալումը և կուլակության որպես դասակարգի վերացմանն անցնելը։ Երկրի մի շարք հիմնական հացահատիկային շրջաններում աշխատավոր գյուղացիության 40—50 տոկոսը իր բախտը կապել էր կոլտնտեսությունների հետ։ Տվյալ շրջաններում կոլտնտեսային գյուղացիությունը դարձավ սովետական իշխանության իսկական և կայուն հենարանը։

Այսպիսով, ելնելով համատարած կոլեկտիվացման շրջանների սոցիալ-դասակարգային էական փոփոխություններից, համագումարը այդ շրջանների գյուղի համար ձևակերպեց նոր լոզունգ։ Այժմ գյուղում կուսակցության և բանվոր դասակարգի հենարանը կոլտնտեսային գյուղացիությունն էր։ Բանվոր դասակարգի դաշնակիցներն էին չքավորները և միջակները, որոնք ներգրավվում էին կոլտնտեսությունների մեջ։ Կուլակությունը վերացվում էր որպես դասակարգ։

Համագումարը վերստին դատապարտեց կոլեկտիվացման «ձախ» խոտորումները և ցույց տվեց, որ Կենտկոմի դիրեկտիվների խախտման առանձին կազմակերպությունների դիրքավորումը «առանձնապես անթույլատրելի ու վնասակար էր սպառող գոտու և ազգային հետամնաց հանրապետությունների նկատմամբ»[176]։

Համագումարը Կենտկոմին հանձնարարեց սոցիալիստական շինա-

---

176 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 18։

բարությունը շարունակել արագ տեմպերով, ապահովել հնգամյա պլանի կատարումը չորս տարում և «ամբողջ Սովետական Միությունում համատարած կոլեկտիվացման հիման վրա անշեղորեն կիրառել կուլակության՝ որպես դասակարգի, ընկնիդացումը»[177]։

Ոչ հացահատիկային շրջանների, դրանց մեջ պետք է հասկանալ նաև Հայաստանը, կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում էր «մասսայական կոլտնտեսային շարժման համար նախապատրաստական մեծ աշխատանք ծավալելու անհրաժեշտության վրա»[178]։

Կարևոր նշանակություն ուներ ոչ հացահատիկային շրջաններում մեքենատրակտորների հետ կոլտնտեսությունների փոխհարաբերությունների մասին արված եզրակացությունը։ Համագումարը այդ շրջանների կուսակցական կազմակերպություններին նախազգուշացրեց, որ անհատական տնտեսությունները չպետք է անտեսվեն, քանի որ այդտեղ նրանք համեմատաբար երկար դոյություն կունենան։ Կենսագործելով կոլտնտեսական վրա հենվելու լոզունգը, ասված է համագումարի բանաձևում, պետք է վճռականորեն պայքար մղել չքավորների և միջակների անհատական տնտեսությունները անտեսելու կամ թերագնահատելու տենդենցների դեմ, օգնել նրանց, կազմակերպել չքավորներին, նրանց բոլորին ներգրավելով կոլտնտեսությունների մեջ։

Գնահատելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նշանակությունը, կուսակցության XVI համագումարը նշեց, որ եթե կալվածատիրական հողի բռնագրավումը Հոկտեմբերյան հեղափոխության առաջին քայլն էր գյուղում, ապա կոլտնտեսություններին անցնելը «ներկուրդ և ըստ որում վճռական քայլն է, որը ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակության հիմքի կառուցման գործում կարևորագույն էտապն է բնութագրում»[179]։

Կուսակցության XVI համագումարը կարևոր նշանակություն ունեցավ նաև գյուղում սոցիալիզմի կառուցումը զարգացնելու տեսակետից։

Այսպիսով, 1929 թ. վերջը և 1930 թ. սկիզբը կարևոր ժամանակաշրջան է Հայաստանի և, ընդհանրապես, սովետական գյուղի պատմության մեջ։ Մեծ թափով ծավալվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը։ Բատրակները և չքավորները, կոմունիստների և կոմերիտականների առաջնորդությամբ, առաջինն էին ընդգրկվում կոլտնտեսություն-

177 Նույն տեղում, էջ 25։

178 Նույն տեղում, էջ 68—69։

179 Նույն տեղում, էջ 73։

ների մեջ։ Նրանց հետևից միջակ գյուղացիությունը։ Սակայն կոլեկտիվացման ընթացքում 1930 թ. առաջին ամիսներին կուսակցական, սովետական և կոոպերատիվ-կոլտնտեսային կազմակերպությունների կողմից թույլ տրվեցին կոպիտ սխալներ և կուսգծի ծռումներ ու խեղաթյուրումներ, որոնք վնասեցին և խանգարեցին կոլտնտեսային շարժման առողջ և նորմալ ընթացքը։ Հակամիջակային «ձախ» խոտորումները ուղղվեցին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նախաձեռնությամբ, նրա միջամտության և ջանքերի շնորհիվ։ Ինչո՞ւ թույլ տրվեցին այդքան կոպիտ սխալներ ու խեղաթյուրումներ։ Ո՞րն է դրա պատճառը։ Դա նախ և առաջ պետք է բացատրել կոլեկտիվացման գործի բարդությամբ ու դժվարություններով, փորձի բացակայությամբ ու գործի նորությամբ։ Տեղական մարմիններն ու կազմակերպությունները, ինչպես նաև հանրապետության ղեկավար օրգանները, շտապելով իրենց մոտ ևս ժամ առաջ իրականացած տեսնել կոլեկտիվ տնտեսությունները, սխալ սխալի ետևից գործեցին, իրենք էլ չնենթադրելով, թե դա ինչի կարող է հանգեցնել։ Սխալները պայմանավորվում էին նաև կադրերի անբավարար պատրաստությամբ և այլ պատճառներով։

Կոմունիստական կուսակցությունը մեծ աշխատանք տարավ և ուղղեց թույլ տված սխալներն ու խոտորումները։ Կոլտնտեսային շինարարությունը սկսեց նոր վերելք ապրել։ Այլևս չէր հիշվում համատարած կոլեկտիվացման շրջանների մասին։ Հետագա փաստաթղթերում արդեն խոսք է գնում Հայաստանում, ինչպես նաև Անդրկովկասում մասսայական կամ համատարած կոլեկտիվացումը նախապատրաստելու մասին։

1929 թ. վերջի և 1930 թ. առաջին ամիսների կոլտնտեսային շարժման ժամանակ կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը կուտակեցին աշխատանքի հարուստ և ուսանելի փորձ։ Այդ ժամանակաշրջանի կոլտնտեսային շարժման մեջ կարևոր նշանակություն ունի այդ շարժման դրական փորձը։ «Կոլտնտեսային շինարարության պրոցեսում,— նշել է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը կոլտնտեսականների համամիութենական երրորդ համագումարում արտասանած ճառում 1969 թ. նոյեմբերին,— մենք չխուսափեցինք որոշակի սխալներից։ Բայց դրանք որոնման սխալներ էին, փորձի բացակայությունից բխող սխալներ։ Կուսակցությունն ինքը համարձակորեն բացահայտում էր սխալները, բացեիբաց դրանց մասին ասում ժողովրդին և ուղղում դրանք»[180]։

---

180 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 2, էջ 663։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ: ԱՆՑՈՒՄԸ ԿՈՒԼԱԿՆԵՐԻ ՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

1. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ

Գյուղատնտեսության կոլեկտիվացման վերելքի ժամանակ ավելի սրվեց դասակարգային պայքարը: Կուլակները ուժեղացրին դիմադրությունը: Այն դարձավ ավելի բացահայտ ու կատաղի: Իրենց հակահեղափոխական գործունեությունը ակտիվացրին դաշնակցականները, որոնք կուլակների հետ համատեղ կազմակերպում էին զինված խմբեր և բանդիտական շարժում կոլտնտեսությունների և սովետական իշխանության դեմ: Հանախացան տեռորիստական գործողությունները կուսակցական և կոլտնտեսային ակտիվիստների դեմ: Կոլտնտեսությունների հասցեին տարածվում էին վարկաբեկիչ լուրեր: Ավելի ուշ կուլակների պայքարը ընդունեց կոլտնտեսությունները խցկվելու և այն ներսից պայթեցնելու ու քայքայելու ձև և այլն: Դասակարգային պայքարը սուր բնույթ ընդունեց ինչպես համատարած կոլեկտիվացման, այնպես էլ մյուս շրջաններում: Զգալով կոլտնտեսային կարգի հաղթանակի և իրենց անմիջական կամ մոտալուտ կործանման անխուսափելիությունը, կուլակները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում սոցիալիզմի գործը խափանելու համար: Սովետական իշխանության դեմ պայքարում համախմբվել էին նրա բոլոր թշնամիները: «Գյուղում այժմ սրտաշարժ միասնականություն կա բոլոր հակախորհրդային ուժերի՝ կուլակի, տերտերի, մոլլայի, մենշևիկի, դաշնակի, մուսավաթականի, իթթիհատականի և այլնի միջև»,— ասված է Անդրկովկասի կուսկազմակերպությունների VI համագումարին Անդրերկրամի հաշվետու զեկուցման մեջ (1930 թ. հունիս)[1]:

---

[1] «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների վեցերորդ համագումարը», էջ 140:

1930 թ. առաջին ամիսներին, տված է ՀԿ(բ)Կ VII համագումարին Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ, դասակարգային թշնամի կուլակը կարողացավ օգտագործել կոլեկտիվացման փոփոխ սխալները՝ հակակոլտնտեսային շարժումը ուժեղացնելու համար, իսկ Վեդիի, Դարալագյազի և Շամշադինի շրջաններում կուլակները և դաշնակցականները փորձեցին հակակոլտնտեսային շարժմանը տալ հակասովետական բնույթ[2]։

Երևանի գավառի վերաբերյալ ՀԿ(բ)Կ Կենտկոմի ինֆորմացիոն տեղեկանքում (1930 թ. փետրվարի 5) նշված է. «Կուլակների և հակահեղափոխական տարրերի դիմադրությունը օրեցօր սրվում է»։ Այնուհետև փաստեր են բերված գավառի տարբեր շրջաններից։ Հայտնվում էր նաև այն մասին, որ սահմանային ադրբեջանական գյուղերում կուլակների և ենթակուլակների (կուլակների ազդեցության տակ ընկածների) կողմից նկատվում են սահմանը խախտելու և Թուրքիա փախչելու փորձեր[3]։

Հանրապետության պետքաղվարչության փաստաթղթերից մեկում ամփոփ ձևով տրված է 1930 թ. փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը համատարած կոլեկտիվացման ընթացքի և դասակարգային թշնամու դիմադրության փաստերի հանրագումարը։ Մեկ ամսվա ընթացքում արձանագրվել էր կուլակների և հակասովետական մյուս տարրերի ազդեցության տակ ընկած առանձին մարդկանց խմբերի 9 հակակոլտնտեսային ելույթ Երևանի և 15-ը՝ Լոռու գավառում (օկրուգ)։ Տեղի էր ունեցել կոլտնտեսությունների նախագահների, կոմունիստների ու կոմերիտականների ծեծի 9 դեպք Լոռու, 5-ը՝ Երևանի, 4-ը՝ Սևանի գավառում։ Տարածվել էին հակասովետական թռուցիկներ ու կոչեր (11 դեպք Երևանի, 6-ը՝ Սևանի, 7-ը՝ Լենինականի և 4-ը՝ Լոռու գավառում)։ Մի շարք տեղերում կուլակ-դաշնակցական տարրերի ազդեցության տակ ընկած կանանց և հետամնաց գյուղացիների խմբերը դիմադրություն ցույց տվեցին սովետական իշխանության ձեռնարկումներին՝ կուլակների գույքի բռնագրավման կամ նրանց արտաքսելու ժամանակ (Լոռու գավառի Համզաչիման, Իլմալլու, Ղարա Իսա, Ղարաղալա, Սովուղբուլաղ և այլ գյուղերում)։ Իջևանի շրջանի Ուղտնթալա գյուղում հարձակում էր կատարվել շքավորական ժողովի վրա։ Նույն փաստաթղթում

---

2 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 1, թ. 46։

3 Տե՛ս նույն տեղում, գ. 172, թ. 53—56։

խոսվում է նաև տեսարի դեպքերի և ազրբեջանցի կուլակների կողմից արտասահման փախչելու փորձերի մասին[4]:

Արտասահման փախչելու կամ այլ վայրեր վերաբնակության դիմելու տրամադրությունների հրահրման և փորձերի հեղինակները ազրբեջանցի, ինչպես նաև քուրդ կուլակներն ու ցեղապետներն էին: Օգտագործելով ազրբեջանական և քուրդ ժողովուրդների քաղաքական և կուլտուրական հետամնացությունը, կրոնամոլությունը և կոլեկտիվացման ժամանակ տեղերում թույլ տրված սխալներն ու գոյություն ունեցող դժվարությունները, նրանք մարդկանց առանձին խմբերի տրամադրում էին սովետական իշխանության դեմ, դժգոհություն տարածում և Հայաստանից հեռանալու տրամադրություն ստեղծում: Այդ հակասովետական և հակակոլտնտեսային աշխատանքի մեջ ակտիվ դեր էր խաղում նաև մուսավաթական պրոպագանդան:

1930 թ. հունվարի 18-ի՝ գաղթի տրամադրությունների դեմ պայքարելու մասին որոշումով ՀԿ(բ)Կ Կենտկոմը Լենինականի, Երևանի և Լոռու օկրուգային (գավառային) կոմիտեներին առաջարկեց ավելի ծավալել ագիտացիոն-բացատրական աշխատանքը սահմանային շրջաններում և ուժեղացնել հսկողությունը այդպիսի տրամադրություններ նախաձեռնողների նկատմամբ[5]:

1931 թ. հոկտեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց արտագաղթի շարժումը վերացնելու գործում Վեդու կուսշրջկոմի աշխատանքի մասին: Կենտկոմը նշում էր, որ անհրաժեշտ է ուժեղացնել շրջանի ազրբեջանական գյուղերին ցույց տրվող տնտեսական օգնությունը, մինչև վերջ պայքարել «ձախ» սխալների, ինչպես նաև աջ օպորտունիզմի արտահայտությունների դեմ, խստորեն հաշվի առնել շրջանի առանձնահատկությունները (հետամնացությունը, բանդիտիզմի տարածված լինելը և այլն)[6]:

Կոլեկտիվացման դեմ պայքարն աշխուժացավ նաև ռուսական գյուղերում: Պրիդոնների և բապտիստների կուլակ-մարգարեները կոչ էին անում հեռու մնալ կոլտնտեսություններից: Այդ կրոնական աղանդների ղեկավարները, մի կողմ դնելով իրենց ներքին տարաձայնությունները, միացյալ կերպով սկսեցին հավատացյալներին կազմակերպել կոլտնտեսային շարժման դեմ: Ալեքսանդրովկա գյուղում անցկացվեց եռօրյա պաս, որի ընթացքում մղվում էր հակակոլտնտեսային

4 Տե՛ս նույն տեղում, դ. 224, թ. 38—42։

5 Տե՛ս նույն տեղում, ց. 13, դ. 35, թ. 79։

6 Տե՛ս նույն տեղում, ց. 18, դ. 1, թ. 97—98։

ագիտացիա։ Հայտարարում էին, թե «տեր աստվածը գուշակել է սովետական իշխանության, դրա հետ միասին նաև կոլտնտեսությունների խորտակումը», կամ թե՝ «պետք չէ ցանք կատարել, քանի որ շուտով պատերազմ է սկսվելու» և այլն[7]։ Մագեցին նաև արտադրելու տրամադրություններ, որոնք հորդորվում էին նաև արտասահմանի ազանդավորների կողմից։ ԱՄՆ-ի պրեզիդենտից ստացված մի նամակում կոչ էր արվում միասին վերաբնակություն հաստատել Թուրքիայում[8]։

Դասակարգային թշնամու մերձենայությունների դեմ պայքարելու համար ավելի ուժեղացվեց սովետական և կուսակցական աշխատանքը ազգային փոքրամասնությունների շրջանում և ուշադրությունը նրանց շահերի ու պահանջների նկատմամբ, որի շնորհիվ ազգային փոքրամասնությունների աշխատավոր մասսաները մնացին իրենց բնակավայրերում։ «Հայաստանի սահմաններից դուրս և դեպի Թուրքիա վերաբնակության դիմելու հարցը հիմնականում վերացված է... Իրենց գյուղերը վերադառնալու ընթացքը շարունակվում է։ Այդպիսի ձգտումը ուժեղ է հատկապես թուրքական սահմանը անցածների մեջ։ Սովետական սահմանը անցնելու դեպքեր են եղել նաև բուն Թուրք գյուղացիների կողմից»[9],— կարդում ենք 1932 թ. վերջին ՀԿ(բ)Կ Կենտկոմում կայացած խորհրդակցության նյութերում։

Սակայն դա դուր չէր գալիս դասակարգային թշնամիներին, որոնք ամեն կերպ աշխատում էին արգելք ստեղծել աշխատավորական տընտեսությունների վերադարձի համար։ Իսկ Սարվանլար գյուղում (այժմ գտնվում է Մասիսի շրջանում) կուլակային և հակասովետական տարրերին հաջողվեց, ազդելով նաև անկայուն կոմունիստների ու կոմերիտականների վրա, հավաքել գյուղի բնակիչների ստորագրությունները, որպեսզի սովետական իշխանությունը թույլատրի աքսորից ազատել և գյուղ վերադարձնել արտադրության ամենաակտիվ կազմակերպչին և քաղաքական հանցագործին[10]։

Հանրապետության ադրբեջանաբնակ, ինչպես նաև մյուս շրջաններում դասակարգային պայքարի ձևերից էր նաև թայֆայաբաղությունը[11]։

---

7 Տե՛ս նույն տեղում, ց. 18, գ. 48, թ. 11։

8 Տե՛ս նույն տեղում, թ. 12։

9 Նույն տեղում, ց. 19, գ. 125, թ. 40։

10 Տե՛ս նույն տեղում, ց. 21, գ. 311, թ. 1—14։

11 Տե՛ս նույն տեղում։

Ուժեղացավ հակակոլտնտեսային և հակասովետական ագիտացիան։ Թշնամին պրովոկացիոն լուրեր էր տարածում, թե կոլտնտեսությունում համայնացվելու են նաև կանայք, թե բոլորը քնելու են հարյուր մետրանոց վերմակի տակ, կոչ էր արվում շմտնել կոլտնտեսությունները, քանի որ շուտով դալու են անգլիացիները, կամ՝ թե Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը 15 տարով հետաձգել է կոլեկտիվացումը, իսկ Հայաստանի կոմունիստները անխիղճ մարդիկ են, շարունակում են կոլեկտիվացնել Հայաստանի գյուղը։ Ադրբեջանցի կուլակները ասում էին՝ «Կոլտնտեսություններում հայերին ու ադրբեջանցիներին խառնելով՝ մոռացնելու են հավատը», և այլն[12]։ Զանգեզուրում գործող բանդիտ Կարդաշիանը, որը սպանվեց զինված ընդհարման ժամանակ, հանդիսանում էր, ասված է ՀԿ(բ)Կ Երևանի դավկոմի նամակներից մեկում (նամակն ուղղված էր շրջկոմներին և կուսբջիջներին), դաշնակցականներին և մուսավաթականներին կապող օղակ։ «Հայտնի է,— կարդում ենք նույն նամակում,— որ հայկական տերտերները և մահմեդական մոլլաները խաղաղ կենացկում են միևնույն բանդայում և հաջողություն մաղթում բանդիտների արշավանքին սովետական իշխանության դեմ»[13]։

1930 թ. տեղի ունեցան մի շարք տեռորիստական գործողություններ գյուղի կուսակցական ու կոմերիտական ակտիվիստների և կոլտնտեսային ղեկավար գործիչների դեմ։

1930 թ. հունվարի 4-ի լույս 5-ի գիշերը Աղբաբայի շրջանի Խոզիքենդ գյուղում դահիճ եղավ ակտիվ կոմերիտական Մահմադ Սամադ օղլին։ Գյուղի նորաստեղծ կոմերիտական բջիջը ակտիվ գործունեություն էր ծավալել սովետական իշխանության ձեռնարկումները իրագործելու ուղղությամբ։ Կուլակները դիմեցին վրիժառության։ Փետրվարի 2-ին կուլակ մարդասպանների ղոհը դարձան Ղամարլուի շրջանի Աղբաշ գյուղի այգեգործական ընկերության նախագահ, կուսթեկնածու Արտուշ Միրզոյանը և ընկերության գանձապահ, կոմերիտական Զավեն Սայադյանը։ Փետրվարի 2-ին Յուվա գյուղում տեռորիստների ձեռքով զոհվեց նաև ակտիվ բատրակ և կոմերիտական Թորգոմ Սարգսյանը։ Յուվայի հասարակական ժողովի 500—600 մասնակից չքավոր և միջակ գյուղացիները պահանջեցին խստագույն պատիժը տալ հանցագործներին։

Ապարանի շրջանի Ղարաքիլիսա գյուղի կոլտնտեսությունը, ինչպես գրել է թերթը, դարձել էր կուլակների և հակահեղափոխականների «աչ-

---

12 Տե՛ս «Մաճկալ», 1930 թ. հունվարի 25։

13 ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 13, գ. 282, թ. 3—8։

քի փուշը», և նրանք որոշեցին ֆիզիկապես ոչնչացնել կոլտնտեսության նախագահին և քարտուղարին։ 1930 թ. մայիսի վերջերին Լենինականի Ճանապարհին, Հաջի Խալիլ (Ծաղկահովիտ) գյուղի մոտ դասակարգային թշնամու գործակալները հարձակվեցին քարտուղար Ավետիք Եղիազարյանի վրա և գազանաբար սպանեցին։

Աշտարակի շրջանի Օշական գյուղի ակտիվ կոլտնտեսական, 60-հազարական Բաբկեն Ամատունին 1931 թ. դրծուղվել էր նույն շրջանի Արտաշավան գյուղը, որպես նորաստեղծ կոլտնտեսության նախագահ և մեծ ջանասիրությամբ աշխատում էր կոլտնտեսությունը խոշորացնելու և այն ամրապնդելու ուղղությամբ։ Սակայն դասակարգային թշնամին կտրեց նրա կյանքի թելը։ Կուլակների ձեռքի գործն էր նաև 1931 թ. Ղուրդուղուլի շրջանի Հաջիբայրամ գյուղի կոլտնտեսության նախագահի սպանությունը և Գեչրլուի (Ս՚րգաշատ) կոլտնտեսության տրակտորիստների վրա կատարված մահափորձը։

Տեղի ունեցան նաև մի շարք այլ սպանություններ և մահափորձեր։ Սովետական դատարանը խիստ պատիժ տվեց մարդասպան կուլակներին և նրանց հանցակիցներին։

Դասակարգային պայքարի ձևերից էր նաև քաղաքական բանդիտիզմը։ Բանդիտական շարժման մասնակիցներն էին կուլակները և ենթակուլակները, ապադասակարգային և այլ հակասովետական տարրեր։ Նրա աշխուժացմանը նպաստում էր Հայաստանի սահմանային լինելը և դաշնակցական-մուսավաթական ուղղակի ազդեցությունը, միջամտությունն ու մասնակցությունը դասակարգային պայքարին։

1930 թ. բանդիտական շաժումով վարակված էին Իջևան-Շամշադինը, Դարալագյազը, Վեդին, Բասարգեչարը, Թալինը և այլ շրջաններ։

Շամշադինի շրջանի Ջինջին և Նավուր գյուղերում բանդիտները, ումն դաշնակցականի գլխավորությամբ, բացահայտ ղինված պայքարի էին ելել սովետական իշխանության դեմ (1930 թ. մարտ)։ Կողբ, Լամբալու, Ղալաշա, Դոստլու, Բարանա (Նոյեմբերյան) և այլ գյուղերում (Իջևանի և Ալավերդու շրջաններ) բնակչությանը տեռորի և թալանի էին ենթարկում Սարատիկյանների և Ամիրաղյանների ավազակային բանդաները։ Բարանայում օրը ցերեկով, մասսայի մեջ, բանդիտները գնդակահարեցին գյուղի կոմունիստներից մեկին, իսկ Կողբում կոմունիստներին բանտարկել էին։

Սևանի գավառամի բանաձևում նշված է, որ գավառի Բասարգեչարի շրջանի Գյոզալդարայի ենթաշրջանում «տեղի ունեցած դեպքերը ըստ

ելույթներ են դաշնակցական-կուլակային զինված ելույթ՝ ուղղված սովետական իշխանության դեմ»[14]: Դաշնակցական կազմակերպությունը, կարդում ենք Բասարգեչարի շրջանի կուսկոնֆերանսի բանաձևում, եղել է այդ շարժման փաստական կազմակերպիչը, ոգեշնչողը և ղեկավարը[15]:

Կուլակային-բանդիտական ելույթներ տեղի ունեցան նաև Դարալագյազի շրջանի Գնդեվազ, Ղուշչի (Կեչուտ) և այլ գյուղերում[16]: Այստեղ համեմատաբար թույլ էին կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները, ինչպես նաև սովետները, ուստի դասակարգային թշնամուն հաջողվեց ակտիվանալ և ազդեցություն ունենալ առանձին գյուղացիների վրա:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի հրահանգիչը 1930 թ. մարտին գրում էր, թե կուլակները և դաշնակցականները որոշ ազդեցություն ունեն Մալիշկա, Մարտիրոս, Օրթաքենդ (Գլաձոր) և այլ գյուղերում, իսկ Հասանքենդում (Շատին) շատ թույլ է կուսակցական և կոմերիտական բջիջների աշխատանքը, որոնք փաստորեն ընկել են թշնամու ազդեցության տակ: Մարտիրոս և մի շարք գյուղերում տարածվել էր թշնամու լոզունգը՝ կոլտնտեսությունները առանց կոմունիստների և կոմերիտականների: Օրթաքենդ և այլ գյուղերում ևս փակցրել էին հակասովետական թռուցիկներ: Քաղաքական դրությունը ծանր էր հատկապես շրջանի Ալայազի ձորի ադրբեջանական գյուղերում, որոնք բավական հետամնաց էին տնտեսապես և կուլտուրապես: Այդտեղ և այլ վայրերում ուժեղ էր նախկին բեկերի և մոլլաների ազդեցությունը: Զիվա գյուղում, որտեղ բնակվում էին հայեր և ադրբեջանցիներ, հրահրվում էր ազգային թշնամություն[17]:

1930 թ. հունվարից մեր դասակարգային թշնամիները, գրել է Դարալագյազի կուսշրջկոմի քարտուղարը, սրբովոկացիոն լուրեր են տարածում, թե իբր պատերազմ է սկսվել, որ Նժդեհը հարձակվում է Նախիջևանի, իսկ Յապոնը՝ Զանգեզուրի կողմից: Միաժամանակ կուլակ բանդիտների զինված ելույթ էր սկսվել շրջանի մի շարք գյուղերում: Նրանց միացել էին Նախիջևանի բանդիտները: Բանդիտիզմի տարածման հետևանքով բայքայվեց շրջանի կոլտնտեսությունների մեծ մասը[18]:

---

14 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 141, թ. 26—28:

15 Տե՛ս նույն տեղում, ֆ. 21, ց. 1, գ. 259, թ. 20:

16 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 14, գ. 1, թ. 135, 149, ց. 16, գ. 5, թ. 275:

17 Տե՛ս նույն տեղում, գ. 72, թ. 8—11:

18 Տե՛ս նույն տեղում, թ. 102:

Մարտի կեսերին Զանգեզուրի Ուղ և Ախլաթյան գյուղերում հայտնաբերվեց արտասահմանյան արտադրության ռումբի երկու արկղ հրապատիճ[19], որը վկայում էր ներքին և արտաքին թշնամիների կապի մասին։

Քաղաքական ծանր դրություն էր ստեղծվել մասնավորապես Վեդիի և Հայաստանի մյուս ազգային փոքրամասնությունների շրջաններում։ Դեռևս փետրվարի առաջին կեսին Վեդիի շրջանում սարերն էին հեռացել մի քանի տասնյակ զինված կուլակներ, ընտանիքներով։ Մարտի 4-ին այդ մասին հայտնելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմին, Անդրերկոմը դա պատճառաբանում էր հունվար-փետրվարին կոլեկտիվացման ժամանակ թույլ տրված կոպիտ սխալներով և կուսակցական գծի ծռումներով։ Փետրվարի վերջին շրջանում դրությունը նորից էր վատացել։ Բանդիտները գաղանաբար սպանեցին հաշտության համար իրենց հետ պաշտոնական բանակցություններ վարող կառավարության ներկայացուցիչ Ս. Կ. Շիդլինսկուն։ Նրանց միացել էին նաև հարևան շրջանների կուլակ-բանդիտական տարրերը։ Ղեկավարների մեջ հայտնվել էին ակտիվ դաշնակցականներ[20]։

Հայաստանի բանվորները, չքավոր ու միջակ գյուղացիները, կոլտնտեսականները և մյուս բոլոր աշխատավորները, հայտնելով իրենց զայրույթը դասակարգային թշնամու գործողությունների դեմ, սովետական իշխանությունից պահանջում էին բոլոր միջոցներով վերջ տալ դրանց և ապահովել իրենց հանգիստ աշխատանքը։ Այսպես, Դիլիջանի շրջանի Պողոսքիլիսա գյուղի կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները, աշխատավոր գյուղացիության հետ միասին գումարեցին ընդհանուր ժողով, որտեղ քննարկեցին գյուղի բանդիտական-տեռորիստական գործողությունների հարցը և առաջարկեցին «առավելագույն պատժի ենթարկել բոլոր այն անձանց, ովքեր մասնակցել են հիշյալ սպանություններին և կամ հանդիսացել են դրանց դրդիչներ»։ Ժողովի մասնակիցները հավաստիացնում էին, որ իրենք ամեն կերպ կպայքարեն «բոլոր այն հանցագործ տարրերի դեմ, որոնք կաշխատեն նսեմացնել աշխատավոր գյուղացիության ձեռք բերած Հոկտեմբերի լավագույն նվաճումները կամ խանգարել դրանց ծավալմանը»[21]։

Սովետական իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը

---

19 Տե՛ս Պ. Լոմաշվիլի. նշված աշխ., էջ 330։

20 Տե՛ս նույն տեղում, էջ 328—329։

21 «Մահկալ», 1930 թ. հուլիսի 18։

բոլոր միջոցները ձեռնարկեցին կուլակային-դաշնակցական-բանդիտական խռովություններին և ավազակային ելույթներին վերջ տալու համար։ Ընդ որում, տարբերություն էր դրվում հակասովետական և հակակոլտնտեսային ելույթների կուլակ-դաշնակցական ղեկավարների ու կազմակերպիչների և դրանց մասնակից խաբված չքավոր ու միջակ գյուղացիների միջև։ «Մոլորվածների ու խաբվածների նկատմամբ համոզման միջոցների հետ մեկտեղ, չեկիստները ստիպված եղան պատժիչ միջոցներ ձեռնարկել իսկական թշնամիների՝ ավազակային ելույթների կազմակերպիչների և ակտիվ մասնակիցների դեմ»[22]։ Ամբողջությամբ վերցրած 1930 թ. գարնանը Հայաստանում բանդիտական ելույթներին մասնակցել էր միայն մինչև 2000 գյուղացի[23]։ Զախողվեցին սոցիալիզմի կառուցման գործին և սովետական իշխանությանը համաժողովրդական դիմադրություն ցույց տալու թշնամական բոլոր փորձերը։ Ինքը՝ աշխատավոր ժողովուրդը ոտքի ելավ թշնամուն խորտակելու։ Դասակարգային թշնամու դիմադրությունը ճնշելու համար պետքաղվարչության, միլիցիայի և կարմիր բանակի զորամասերի հետ միասին մեծ դեր խաղացին նաև գյուղական և կոլտնտեսային ակտիվիստները և առաջին հերթին կոմունիստները, որոնցից ոմանք զոհաբերեցին իրենց կյանքը՝ Աշոտ Նիկողոսյանը (Սարուխան գյուղից), Աբաս Կուլի բեկը, Մեհտի օղլին, Միրզոյանը, Սարդարյանը և ուրիշներ։

Անդրերկոմը անհրաժեշտ միջոցառումներ մշակեց Վեդիի, Դարալագյազի և Անդրկովկասի այլ շրջաններում կուլակային-բանդիտական ելույթները վերացնելու համար[24]։ Փետրվարի 9-ին Անդրերկոմը որոշում ընդունեց մինչև մարտի 15-ը բանդիտական շարժման մնացորդները լրիվ վերացնելու մասին։ Մինչև ապրիլի 1-ը անհատական ընտրության կարգով (ոչ մասսայաբար) անց էր կացվելու նաև Հայաստանի ադրբեջանաբնակ սահմանային շրջանների ամբողջ հակահեղափոխական կուլակային ակտիվի մեկուսացում։ Ըստ նոր տվյալների իրականացվելու էր նաև դաշնակցականների (նաև մենշևիկների և հատկապես մուսավաթականների ու իթթիհատականների) լրացուցիչ մեկուսացում[25]։

---

22 Գ. Բաղամյանց, *Հայաստանի արտակարգ հանձնաժողովի՝ պետական անվտանգության կոմիտեի օրգանների 50 տարին*, «Սովետական Հայաստան», 1970 թ. դեկտեմբերի 25։

23 *Տե՛ս ՄԱԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 70, թ. 5.*

24 *Տե՛ս* «Очерки истории коммунистических организаций Закавказья», часть 2-ая, Баку, 1971, стр. 168.

25 *Տե՛ս* Պ. Լոմաշվիլի, *նշված աշխ., էջ 295—296։*

Մարտի 13-ին Անդրիերկոմը հաստատեց Անդրկովկասում բանդիտական շարժման վերացման պրակտիկ միջոցառումների պլանը[26]:

Շուտով Անդրկովկասի մասշտաբով մշակվեց և տեղերին ուղարկվեց «Հրահանգ կոմունիստական ջոկատների կազմակերպման մասին»[27]: ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ հիմնականում գյուղական կոմունիստներից կազմակերպվեցին կոմունարների ջոկատներ, որոնք հաջողությամբ մասնակցեցին մի շարք առաջադրանքների կատարմանը: Այդ ջոկատների ղեկավարումը իրագործում էր պետքաղվարչությունը: Միայն Սևանի գավառի (օկրուգ) Նոր Բայազետի շրջանի կոմունիստներից կազմակերպվել էր 180 մարդուց բաղկացած գոմարատակ, որն ուներ 3 վաշտ[28]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. ապրիլի 10-ի՝ Սևանի գավառի մասին որոշման մեջ նշված է բանդիտական խմբերի վերացման գործում Նոր Բայազետի շրջանի կոմունարների ակտիվ մասնակցության մասին՝ Ադրբեջանի Յաղուբլիի ու Քրդստանի և Հայաստանի Գյոդալդարայի (Բասարգեչարի շրջանում) ու Դարալագյազի շրջաններում[29]: Դեռևս փետրվարամսին Քելբաջարի (Ադրբեջան) և Կարմիրգյուղի (Կրասնոսելսկ) շրջանների, իսկ այնուհետև Վեդիի ու Դարալագյազի դեպքերը, տված է Սևանի գավկոմի 1930 թ. ապրիլի 22-ի գրության մեջ, ստիպեցին մոբիլիզացնել Բասարգեչարի, Կարմիրգյուղի, Մարտունու և մասամբ Նոր Բայազետի ու Ախտայի շրջանների ակտիվը, որը լրացվեց ամբողջ գավառի ակտիվի մոբիլիզացիայով[30]:

Բանդիտական շարժման դեմ տարվող պայքարում Սևանի օկրուգից աչքի ընկավ ընկիսատ Համո Ծատուրովը, Նոր Բայազետի շրջանի միլիցիայի պետ Սերգո Հակոբյանը, կոմունարների № 1 մարտական ջոկատի պետ Ալեքսան Կամարյանը, № 2 ջոկատի պետ Միտյա Մարկոսյանը, № 3 ջոկատի պետ Մովսես Մովսիսյանը, կոմունարներ Հովհաննես Սինանյանը, Արմենակ Հակոբյանը, Դավիդոն Հովհաննիսյանը, Երեմ Թովմասյանը, Աղաբեկ Խոյեցյանը, Լևոն Սահակյանը, Հովհաննես Բունիաթյանը և ուրիշներ: Բոլոր նշված ընկերները, գրել է հանրապետական պետքաղվարչության Սևանի օկրուգային բաժինը, «լինելով կոմունարների ջոկատների անդամներ, կատարել են բաժնի մի շարք մար-

26 Տե՛ս նույն տեղում, էջ 329։

27 Տե՛ս նույն տեղում, էջ 284։

28 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 141, թ. 1։

29 Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 95։

30 Տե՛ս ՀՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 905, թ. 75։

ական խնդիրները և առաջադրանքները։ Մարտական իրադրության մեջ նրանք ցույց են տվել անձնական խիզախություն և կատարել անձնուրաց ու օրինակելի գործ»[31]։

1930 թ. մարտի 16-ին Անդրկովկասը որոշում էր կայացրել Նախիջևանի Ինքնավար Հանրապետության ու Դարալագյազի շրջանի բանդաների և Զանգեզուրի օկրուգի դրության մասին։ Բանդիտիզմի դեմ պայքարելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմին հանձնարարվել էր առանձնացնել 140 կոմունիստներ, իսկ Դարալագյազում գտնվող Զանգեզուրի 140 կոմունիստները վերադառնալու էին այնտեղ։ Գորիսի կոմունարներին օգնության էին գալու Ղափանի և Բաքվի կոմունիստ բանվորները[32]։

1930 թ. մարտի 23-ին ՀԿ (բ)Կ Կենտկոմը մի շարք նոր միջոցառումներ նշեց Դարալագյազի շրջանի բանդիտական խմբերը զինաթափելու և ցրելու համար։ Ավելի վաղ ջախջախվել էր Գնդեվազ գյուղի բանդան։ Կենտկոմի ապրիլի 6-ի նիստում հաղորդում արվեց Դարալագյազում, ինչպես նաև Շամշադինում կուլակային-բանդիտական ելույթների վերացման մասին[33]։ Շամշադինում բանդիտիզմի դեմ մարտական օպերացիան տևել էր մարտի 23-ից մինչև ապրիլի 6-ը։ Դրան նախորդել էին սովետական իշխանության կողմից ձեռնարկված հաշտության խաղաղ միջոցների իզուր ջանքերը[34]։

Շամշադինի, Դիլիջանի, Բարանայի (Նոյեմբերյան), Իջևանի և այլ շրջաններում բանդիտիզմի դեմ վարված պայքարի դուրս եկան 200 կուսակցականներ։ Կոմունարներից աչքի ընկան Ալեքսանդր Մարտիրոսյանը, Կոստյա Ալեքսանյանը, Գալուստ Հարությունյանը, Մուսայել Նազարյանը, Ղազար, Արշակ և Սահակ Սարգսյանները, Հարություն Քամալյանը, Արմեն Անանյանը և ուրիշներ[35]։

Միաժամանակ միջոցառումներ մշակվեցին Դարալագյազի և այլ շրջանների տնտեսական-կուլտուրական զարգացման, քաղաքական-մասսայական աշխատանքը ուժեղացնելու, կուսակցական-սովետական ապարատը ամրապնդելու ուղղությամբ։ Կազմակերպվեց Փաշալուի ենթաշրջան, որը հետո առանձնացավ որպես ինքնուրույն շրջան։ Դա ավելի ուժեղացրեց կուսակցական և սովետական աշխատանքը Դարալագյազի լեռնային գյուղերում։

---

31 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 16, գ. 5, թ. 259—261։

32 Տե՛ս նույն տեղում, թ. 285։

33 Տե՛ս ПАГФ ИМЛ, ф. 13, оп. 1, д. 2159, лл. 420—424.

34 Տե՛ս Պ. Լոմաշվիլի. նշված աշխ., էջ 334—335։

35 Տե՛ս Ն. Նազարյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի պայքարը սոցիալիզմի կառուցման համար առաջին հնգամյակի տարիներին, Երևան, 1958, էջ 162։

Զանգեզուրի գավկոմը ՀԿ(բ)Կ Կենտկոմին հայտնում էր (1930 թ. հունիսի 23), որ բանդիտական շարժման պատճառով Զանգեզուրում կազմակերպվել է կոմունիստական ջոկատ (հրամանատար՝ Զանունց, հրամանատարի տեղակալ՝ Ա. Սարգսյան)՝ հեղափոխական կարգը պաշտպանելու և պետաղվարչության ու բանակային զորամասերին օգնելու համար: Ջոկատում կար 362 կոմունար, որոնցից 342-ը կոմունիստներ էին, 10-ը՝ կոմերիտականներ, 12-ը անկուսակցական կամիր պարտիզաններ: Ջոկատը բաժանված էր երեք վաշտի՝ Ղափանի, Սիսիանի և Գորիսի շրջաններում, որոնք իրենց հերթին, ըստ ենթաշրջանների, բաժանված էին դասակների: «Բոլոր երեք շրջաններում,— ասված է նույն գրության մեջ,— տեղի են ունեցել ռազմական գործողություններ, և հատկապես Սիսիանում, որտեղ կոմունարների ջոկատը ցույց է տվել ակտիվ մասնակցություն»: Այնուհետև գավկոմը նպատակահարմար էր համարում ջոկատի անձնակազմը հասցնել 500 մարդու և օգտագործել առաջիկա գործողություններում ևս[36]:

Մեծ ջանքեր պահանջվեցին նաև Վեդիի բանդիտների պայքարը վերացնելու համար: Մարտի 1-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը մշակեց հատուկ պլան, որի մեջ կարևոր տեղ էր հատկացվում շրջանի չքավոր և միջակ գյուղացիներին ցույց տրվող տնտեսական օգնությանը: Չէր բացառվում նաև կոմունարների և միլիցիայի ուժերի օգտագործումը: Նույն օրը այդ հարցով զբաղվեց նաև Անդրերկրամի քարտուղարությունը, որը պահանջում էր շարունակել ջանքերը խաղաղ միջոցներով կոնֆլիկտը կարգավորելու համար: Սակայն բանդիտները հրաժարվում էին վերադառնալ իրենց բնակավայրերը և շարունակում էին հրաձակումներ գործել սովետական օրգանների վրա, զինաթափել կոմունիստներին ու միլիցիոներներին: Խաղաղ միջոցները սպառելուց հետո միայն Վեդիի բանդիտների դեմ ձեռնարկվեցին խիստ միջոցներ: Այդ օպերացիան սկսվեց մարտի 11-ին և հաջողությամբ ավարտվեց հաջորդ օրը[37]:

Բանդիտիզմին հարած գյուղացիներից շատերը շուտով, գիտակցելով իրենց սխալը, սկսեցին հրաժարվել պայքարելուց: Այսպես, ՀԿ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչը 1930 թ. մարտի 22-ին Քեշիշքենդից (Եղեգնաձոր) գրում էր. «Շատ խաբված գյուղացիներ հանձնում են զենքը և վերադառնում տուն»[38]: Նույն ներկայացուցիչը մի այլ անգամ գրել է.

---

36 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 14, գ. 9, թ. 50։

37 Տե՛ս Պ. Լոմաշվիլի, նշված աշխ., էջ 329։

38 ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 16, գ. 5, թ. 294։

«խաբված գյուղացի-փախստականների մի մասը վերադառնում է տուն և հանձնում զենքը։ Գյուղերի մեծ մասում ամբողջությամբ վերցրած գյուղացիները չեն պաշտպանել և չեն պաշտպանում բանդիտներին։ Դարալագյազում համընդհանուր ապստամբություն (այսինքն խռովություն— Վ. Վ.) բարձրացնելու դաշնակցականների պլանը վերջնականապես տապալվել է»[39]։

Ամռան ընթացքում շարունակվեց առանձին շրջաններում նորից աշխուժացած բանդիտական խմբերի ջախջախումը։ Մայիսի 25-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմում կայացած խորհրդակցությունը որոշեց շտապ և օպերատիվ միջոցառումներով վերացնել բանդիտական շարժումը։ Ամռան ամիսներին Վեդիի և այլ շրջանների, Նախիջևանի հետ միասին, բանդիտական խմբերում հաշվվում էր մոտ 500 մարդ[40]։

Բանդիտական շարժումը ճնշելու վերջին խոշոր գործողությունները տեղի ունեցան Զանգեզուրում, որտեղ լեռնային տեղանքի պայմաններում բանդիտները կարողացան համեմատաբար երկար դիմադրություն ցույց տալ և որտեղ պահանջվեցին օգտագործել զինվորական ուժեր։ Այդ գործողությունների մասշտաբների մասին պատկերացում են տալիս հետևյալ տվյալները։ Զանգեզուրում և Ադրբեջանի Քրդստանի օկրուգում միայն հուլիսի 4—31-ը սպանվել և վիրավորվել էր 39 բանդիտ, գերվել էր 44-ը, կամավոր հանձնվել էին 27 բանդիտներ։ Բացի այդ, տարբեր ժամկետներով դատապարտվել էր 25 մարդ և ձերբակալվել էին 74 բանդիտներ ու հակասովետական այլ տարրեր։ Խլվել էր 742 հրացան, 330 դուխ խոշոր եղջերավոր անասուն, 209 գլուխ ոչխար և 22 ձի[41]։

Ամռանը Հայաստանի կոմունարները ակտիվ մասնակցություն ունեցան նաև Ադրբեջանում գործող բանդիտական խմբերի ջախջախմանը, խմբեր, որոնք երբեմն թափանցում էին նաև սահմանակից շրջանները։ Հունիսի վերջերին Ադրբեջանի Քելբաջարի և Իստիսուի շրջանների բանդիտական խմբերը թալան և սպանություններ էին կատարում նաև Բասարգեչարի (Վարդենիս) շրջանում՝ կողոպտեցին Ջանահմեդ (Գյունաշլի) գյուղի գյուղացիներին, Զոդի սովխոզի ունեցվածքը։ Սևանի գավառի և Քելբաջարի շրջանի կոմունարների ու միլիցիայի համատեղ ուժերով (Հայաստանի կողմից մասնակցում էր 125 մարդ) Իստիսուի շրջա-

---

39 Նույն տեղում, թ. 297։

40 Տե՛ս Պ. Լոմաշվիլի, նշված. աշխ., էջ 339։

41 Տե՛ս նույն տեղում, էջ 341 (հեղինակը սխալմամբ Քրդստանը դիտել է Հայաստանի գավառ)։

նում ջախջախվեցին 500 մարդուց բաղկացած բանդիտական խմբերը։ Բանդիտները տվեցին 57 զոհ[42]։

1930 թ. ամռանը բանդիտների դեմ մղած միջոցառումներից էր նաև Հուլիս-օգոստոս ամիսներին մի շարք կուլակ-բանդիտական տնտեսությունների ունեզրկումը և արտաքսումը Ստեփանավանի, Իջևանի, Կարմիրգյուղի, Դավթանի, Համամլուի շրջաններից[43]։

1930 թ. սեպտեմբերի 15-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը լսեց պետքաղվարչության հաղորդումը գյուղի քաղաքական դրության մասին և նշեց «գյուղացիության տրամադրության մեջ տեղի ունեցած հակայական բեկումը դեպի քաղաքական դրության բարելավումը և վերականգնումը գյուղում»։ Ինչպես նշված է Կենտկոմի որոշման մեջ, 1930 թ. փետրվար-սեպտեմբեր ժամանակամիջոցում կուսակցական կազմակերպությունները և պետական քաղաքական վարչությունը մեծ աշխատանք էին կատարել բանդիտիզմի դեմ պայքարի, դաշնակցական և այլ հակահեղափոխական կազմակերպությունների ջախջախման, ինչպես նաև գյուղում սովետական և կուսակցական աշխատանքը բարելավելու (պայքար գյուղացիության նկատմամբ կուլակի ծռումների դեմ, տեղական ապարատի աշխատանքի և կազմի բարելավում) ուղղությամբ։ Այդ ամենի շնորհիվ մեծ չափով նվազել էին բանդիտիզմը և բանդիտական տրամադրությունը։ Ուժեղ հարված ստացան հակահեղափոխական կազմակերպությունները՝ դաշնակցականները, մուսավաթականները, «խագիգա-օրդուն» և այլն։ Հայտնաբերվեցին և ջախջախվեցին գյուղտնի կազմակերպություններն ու խմբերը, մեկուսացվեցին նրանց ղեկավար գործիչները։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը միաժամանակ միջոցառումներ նշեց գասակարգային թշնամու դիմադրությունը մինչև վերջ հաղթահարելու և գյուղի քաղաքական դրությունը լիովին նորմալացնելու համար, պահանջեց շարունակել պայքարը բանդիտական խմբերի մնացորդների դեմ (Սարատիկովների և Բալա Սարգսի խմբերը Լոռում, Միրուք Կարոյի և Այվազի խմբերը Թալինում, Պարույրի խումբը Դարալագյազում և այլն)։

Պահանջվում էր ուժեղացնել քաղաքական աշխատանքը շրջանների և միջակների մեջ՝ հատկապես բանդիտական շարժումով վարակված շրջաններում և այնտեղ, որտեղ դաշնակցականներին հաջողվել էր

---

42 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 21, ց. 1, գ. 259, թ. 32—34, 41—42.

43 Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 6, գ. 58, թ. 40—46, 50—56, 60, 62—68, ց. 8, գ. 387ա, թ. 168։

առանձին գյուղացիների պրովոկացիայի ենթարկելով, ազդել նրանց վրա (Կոտայք, Ալափարս, Մոլլա Գյոքչա, Դուզքենդ, Սիսիան և այլն)[44]։

* * *

1930 թ. վերջին և 1931 թ. ընթացքում տեղի ունեցավ կոլտնտեսային շարժման նոր վերելք, որի հետևանքով որոշ չափով նորից սրվեց դասակարգային պայքարը։ Բանդիտական առանձին խմբերի ելույթներ եղան Դարալագյազի, Վեդիի, Թալինի և այլ շրջաններում։

Հակակոլտնտեսային-հակասովետական հակահեղափոխական պայքարը սրելու համար դասակարգային թշնամին աշխատեց օգտվել այն քաղաքական կոպիտ սխալներից, որոնք թույլ տրվեցին 1931 թ. գյուղացիական հարցում (կոլեկտիվացում, հարկային քաղաքականություն և այլն)։ Այդ սխալները, նշել է ՀԿ(բ)Կ VIII համագումարը, «օգտագործեցին կուլակ-դաշնակցական տարրերը՝ գյուղում իրենց ազդեցությունն աշխուժացնելու նպատակով (Դարալագյազ, Աշտարակ, Վեդի, Ապարան)»[45]։

1931 թ. Վեդիի լեռնային գյուղերի բանդիտական ղինված խմբերի ելույթները ճնշելու համար մոբիլիզացվեց շրջանի ակտիվը[46]։ Պետքաղվարչության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, կարդում ենք 1931 թ. օգոստոսի 9-ի թվակիր գրություններից մեկում, բնկում է տեղի ունենում Զաղիձորի բնակչության և փախստականների տրամադրության մեջ։ Այդ մասին է վկայում 45 բանդիտների և փախստականների ներկայանալը սովետական իշխանության մարմիններին և զենքը հանձնելը. Շարունակվում էին Քերբալայ Իսմայիլի խմբի քայքայման և վերացման գործողությունները[47]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը միաժամանակ մի շարք միջոցառումներ մշակեց՝ շրջանը ադրբեջանցի կադրերով ամրապնդելու, հարկային և այլ բնագավառներում թույլ տված սխալներն ուղղելու և բնակչության դժգոհությունը վերացնելու համար, դժգոհություն, որն օգտագործում էին սովետական իշխանության թշնամիները՝ դասակարգային պայքարը

---

44 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 70, թ. 5։

45 «Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության VIII համագումարի բանաձևերը», Երևան, 1932, էջ 11։

46 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 14, գ. 1, թ. 82, ց. 16, գ. 3, թ. 3։

47 Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 77։

սրելու, ադրբեջանցիների արտագաղթ հրահրելու և կազմակերպելու նպատակով[48]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը առանձին ուշադրություն էր նվիրում Թալինի շրջանին, որտեղ թշնամական տարրերը ձգտում էին դժգոհություն հրահրել արևմտահայ գաղթականների (սասունցիներ) և քուրդ բնակչության շրջանում։ 1931 թ. սեպտեմբերին Կենտկոմը քննեց շրջանի քաղաքական դրության հարցը և կուսակցության շրջկոմից պահանջեց ավելի սերտորեն համախմբել կոլտնտեսականներին, չքավոր ու միջակ գյուղացիներին և ուժեղացնել պայքարը կուլակների ու դաշնակցականների դեմ, ինչպես նաև ուժեղացնել աշխատանքը քրդերի մեջ[49]։

1931 թ. ընթացքում վերացվեցին բանդիտական խմբերի վերջին մնացորդները՝ Պարույրի (Դարալագյազ) և Միհրանի (Թալին) խմբերը և այլն։ «Այսպիսով,— ասված է ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ՝ կուսակցության VIII համագումարում,— անհաջողության մատնվեց դաշնակների և այս փորձը՝ բանդիտների միջոցով փրկել կուլակությանը մոտալուտ և անխուսափելի կործանումից»[50]։ Բանդիտական այդ խմբերը, ինչպես ցույց է տրված նույն տեղում, անմիջականորեն կապված էին դաշնակցականների Իրանում գտնվող ղեկավար մարմինների հետ և նրանցից ստանում էին հրահանգներ, զենք և այլ միջոցներ[51]։

Առանձին դեպքերում դասակարգային թշնամուն հաջողվում էր իր աղդեցության տակ գցել գյուղական կոմունիստներին, բջիջների կամ սովետների ղեկավարությանը և նրանց օգտագործել սովետական իշխանության ձեռնարկումների դեմ։ Այսպես, 1930 թ. բացահայտվեց Հին Բաշքենդ գյուղի կուսբջիջի (5 անդամ և 3 թեկնածու) կապը բանդիտների հետ, որը ավելի էր բարդացրել գյուղի քաղաքական դրությունը[52]։

1931 թ. օգոստոսին կուսակցության Ալավերդու շրջկոմը ուսումնասիրեց Աքորի և Հագվի գյուղերի կուսբջիջների վիճակը և արձանագրեց «Աքորիի բջիջի և առանձնապես նրա բյուրոյի մի քանի անդամների այլասերումը, նրանց կապը կուլակների հետ և կուլակներին հովանավո-

---

48 Տե՛ս նույն տեղում, ց. 18, գ. 35, թ. 20—22, ց. 20, գ. 101, թ. 1, 2, 3—8։

49 Տե՛ս նույն տեղում, ց. 17, գ. 10, թ. 347։

50 Ա. Խանջյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը VIII համագումարին, Երևան, 1932, էջ 145։

51 Տե՛ս նույն տեղում, էջ 144։

52 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 4, ց. 1, գ. 1590, թ. 24։

բելը»[53]։ Շրջկոմը ցրեց Աբուրիի բջիջի բյուրոն, փոխվեց գյուղսովետի նախագահը, աշխատանքից հեռացվեց Հաղբիի կոլտնտեսության նախագահը և այլն։ Գյուղական կոմունիստների քաղաքական այլասերման փաստեր կային Մեղրու, Ապարանի, Լենինականի, Վեղու և այլ շրջաններում[54]։

Կոմունիստների վերաբերումը և աջ օպորտունիստական պրակտիկան որոշ ազդեցություն ունեցան նաև Դարալագյազի կուսակցական կազմակերպությունում։ Դեռևս 1930 թ. որոշ կոմունիստներ և կոմերիտականներ բացահայտ կերպով թշնամու կողմն էին անցել կամ նրան օգնել Ռինդ, Ելփին, Ջիվա, Աղբաշ, Փաշալու (Ադիրբեկով), Քարագլուխ, Խաչիկ, Գնդեվազ, Ղուշչի (Կեչուտ), Սուլթանբեկ (Բարձրունի) և այլ գյուղերում։ Իսկ Արփա գյուղը և նրա բջիջը փաստորեն չմասնակցեցին թշնամու դիմադրության ճնշմանը և նույնիսկ որոշ օգնություն ցույց տվեցին կուլակ-բանդիտներին[55]։

Դարալագյազի կուսշրջկոմի գործունեության մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. ապրիլի 11-ի որոշման մեջ նշված է, որ առանձին բջիջներ կտրված են մասսաներից, չունեն հեղինակություն, անկարող են իրագործել սովետական իշխանության ձեռնարկումները, տարածված էր խառնակչությունը (թայֆայամոլություն) և այլն։ Այդ բոլորի պատճառը Կենտկոմը համարում էր գյուղական բջիջներում գոյություն ունեցող աջ տարրերին և նրանց դեմ թույլ պայքարը։ Քայքայված և ենթակուլակային տարրերը ազդեցություն ունեին նաև կոմերիտմիության շարքերում[56]։ Դարալագյազի կուսակցական կազմակերպությունը առողջացնելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմը մշակեց մի շարք միջոցառումներ, սակայն չկարողացավ ապահովել դրանց իրականացումը և շուտով շրջանի առանձին բջիջներում առաջացան նոր բարդություններ։

1931 թ. հուլիսի առաջին օրերին Դարալագյազի շրջանի Արփա գյուղում տեղի ունեցավ գյուղացիների խռովություն, որը գլխավորում էր գյուղի բջիջը։ Այն փաստորեն կուլակային-հակահեղափոխական ելույթ էր, որն ուղղված էր կոլտնտեսային կարգի, սովետական իշխանության և կոմունիստական կուսակցության դեմ։ Դա աջ օպորտունիզմի վերաճումն էր բացահայտ հակահեղափոխական ելույթի։ Այդ ելույթը պաշտպանեցին միայն շրջանի Խաչիկ գյուղի կոմունիստները։ Արփայի բջի-

---

53 Նույն տեղում, ֆ. 1, ց. 17, գ. 122, թ. 11։

54 Ա. Խաչիյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը VIII համագումարին, էջ 130։

55 ՏԿՍ ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 17, գ. 89, թ. 9—11։

56 ՏԿՍ նույն տեղում, գ. 122, թ. 6—8։

ջը փորձեց իր կողմը գրավել հարեւան գյուղերի բջիջներին և անկուսակցական գյուղացիներին, սակայն նրա փորձերը ձախողվեցին, հանդիպելով այդ գյուղերի կոմունիստների, կոմերիտականների և կոլտնտեսականների, չքավոր ու միջակ գյուղացիների հակահարվածին[57]։

«Արփայի բջիջի հակակոլտնտեսային, հակահեղափոխության ատիճանի հասած գործունեությունը,— ասված է ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի և ՀԿՎ-ի նախագահության 1931 թ. հուլիսի 11-ի միացյալ նիստի բանաձևում,— իր հիմքում ունենալով դասակարգային կռվի սրվածությունը և կուլակ-դաշնակցական տարրերի հուսահատ դիմադրությունը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման միջոցառումներին (կոլեկտիվացում, մթերումներ և այլն), հիմնականում Դարալագյազի շրջանի կուսակազմակերպության մեջ կուլակության, դաշնակների, կուսակցության ներսում նրանց գործակալ աջ թեքման և վերջինիս նկատմամբ հաշտվողականության դեմ ծավալուն պայքարի բացակայության և այս բոլորի հետևանք հանդիսացող կուսակազմակերպության դասակարգային զգոնության ու մարտունակության բթացման արդյունք է»[58]։

Արփայի կուսբջիջի հակահեղափոխական գործունեությանը «պարարտ հող էր մատակարարել» կուսակցական-քաղաքական աշխատանքի չափազանց թույլ լինելը շրջանում, ինչպես նաև կուսգծի աղաղակող խայտառակությունները և «ձախ» խոտորումների պրակտիկան տնտեսական քաղաքականության մեջ։ Հատկապես խայտառակ խեղաթյուրումներ էին տեղի ունեցել հարկադրման և մթերումների բնագավառում։ Անտեսվել էին առանձին գյուղերի առանձնահատկությունները, ուժից վեր հարկ և մթերումներ էին դրվել չքավոր-միջակային տնտեսությունների վրա և այլն։ «Այս բոլորը,— կարդում ենք Կենտկոմի նույն որոշման մեջ,— լայն չափով օգտագործվել է հակահեղափոխական նպատակներով՝ Արփա գյուղի բջիջի աջ ուկլոնիստների և նրանց թիկունքում թաքնված դաշնակների կողմից»[59]։

Շուտով պետքաղվարչության զորքերը մատն Արփա, որի բնակիչները հեռացել էին լեռները։ Կարճատև բանակցություններից հետո խաբված ու մոլորված գյուղացիները, հանձնելով զենքը, վերադարձան գյուղ[60]։

---

57 Տե՛ս նույն տեղում, գ. 89, թ. 5—37։

58 Նույն տեղում, ց. 14, գ. 9, թ. 340—348։

59 Նույն տեղում։

60 Տե՛ս «Երեկոյան Երևան», 1967 թ. նոյեմբերի 23։

Ցրվեցին Դարալագյազի կուսակցական և կոմերիտական շրջկոմները, Արփա և Խաչիկ գյուղերի կուսակցական և կոմերիտական բջիջները։ Անցկացվեց շրջանի կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների ստուգում և զտում։ Ջնջվեց շրջանի կոմունիստների 40 տոկոսը։ Միայն օգոստոս-սեպտեմբերին կուսակցության մեջ ընդունվեցին 100 ակտիվ կոլտնտեսականներ և չքավոր ու միջակ գյուղացիներ[61]։ Հոկտեմբերին կայացավ շրջանային կուսակազմակերպության արտահերթ կոնֆերանս, որն ընտրեց շրջկոմի նոր կազմ։ Փոխվեց շրջանի ամբողջ ղեկավարությունը։ Փոխվեցին գյուղսովետների շատ նախագահներ։ Մինչև սեպտեմբերի կեսը Կենտկոմը 26 պատասխանատու կուսակցական աշխատողներ ուղարկեց Դարալագյազ՝ շրջանային և գյուղական աշխատանքի։ Կենտրոնից ուղարկվեցին նաև 17 կոմերիտականներ[62]։ Սկսեց հրատարակվել Դարալագյազի շրջկոմի և շրջգործկոմի օրգան «Կոլխոզնիկ» թերթը։ Շուտով Դարալագյազը բաժանվեց Քեշիշքենդի (Միկոյան, այժմ Եղեգնաձոր) և Փաշալուի (Ապիզբեկով) շրջանների։ Դա ղեկավարությունը ավելի մոտեցրեց գյուղերին, կոլտնտեսություններին և աշխատավոր մասսաներին։

Վերանայվեցին մթերումների պլանները։ Վերացվեց պլանը մինչև չքավոր և միջակ տնտեսությունները հասցնելու սխալ պրակտիկան։

Իրականացվեցին մի շարք այլ միջոցառումներ՝ շրջանի տնտեսական դրությունը բարելավելու համար։ Նախատեսվեց ճանապարհների շինարարություն։ Որոշվեց Ջերմուկի հանքային ջրերը օգտագործել բուժման նպատակով, այն դարձնել առողջարան և այլն։

1932 թ. ապրիլին ՀԿ(բ)Կ Կենտկոմը անդրադարձավ Դարալագյազի դեպքերի առթիվ իր 1931 թ. հուլիսի 11-ի, օգոստոսի 4-ի և Անդրերկոմի 1931 թ. հուլիսի 27-ի որոշումների կատարման ընթացքին և արձանագրեց Քեշիշքենդի ու Փաշալուի շրջանների դրության բարելավման որոշ հաջողությունները[63]։ Մասնավորապես Քեշիշքենդի շրջանի մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բրիգադը նշեց. «Ընդհանուր քաղաքական դրությունը, անցյալ տարվա համեմատությամբ, անհամեմատ կայուն է»։ «Շրջանի գյուղացիության և մասնավորապես։ Ալայազի ձորի թուրք գյուղացիության քաղաքական տրամադրությունը բարենպաստ է, խորհրդային իշխանության կողմն է»[64]։

---

61 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. հոկտեմբերի 8։

62 Տե՛ս ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 1, ց. 17, գ. 122, թ. 17—19։

63 Տե՛ս նույն տեղում, ց. 19, գ. 17, թ. 167—168։

64 Նույն տեղում, ց. 17, գ. 102, թ. 13։

* * *

Կուլակային պայքարի ձևերից էր նաև կոլտնտեսային գույքի փչացումը և ոչնչացվածքի հրկիզումը, անասունների մորթը և այլն։ Միայն 1931 թ. կոլտնտեսային սեփականության հրկիզումները ներկայանում են այսպիսի տվյալներով. հունվար-փետրվարին՝ 4, մարտ-ապրիլին՝ 3, մայիս-հուլիսին՝ 2, օգոստոսին՝ 3 և սեպտեմբերին՝ 14 դեպք[65]։ Մի այլ աղբյուրի տվյալներով մինչև 1931 թ. հունիսի 1-ը տեղի էր ունեցել հրկիզումների՝ 34, անասունների թունավորման՝ 67, գյուղատնտեսական մեքենաների փչացման՝ 25 դեպք։ Արձանագրվել էր գյուղական ակտիվիստների դեմ հարձակում գործելու 106 դեպք[66]։ Բշնամու կողմից սոցիալիստական սեփականության ոչնչացման նման փորձերը հաճախացան նաև 1932 թ.։ Վերջին ժամանակներս, գրել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը, շրջկոմների քարտուղարներին ուղղված գրության մեջ (1932 թ. օգոստոսի 23), դասակարգային թշնամու կողմից կոլտնտեսային հացի և խոտի հրկիզումների դեպքերը ընդունել են մասսայական բնույթ։ 1932 թ. հրկիզումների փաստերը ցույց են տալիս, որ դասակարգային թշնամին փոխում էր պայքարի տակտիկան։ Նա դրանք մեծ մասամբ իրագործել էր փոքրահասակների միջոցով[67]։

Սոցիալիստական սեփականությունը բանդիտների ու դիվերսանտների հարձակումներից պաշտպանելու համար ձեռնարկվեցին համապատասխան միջոցառումներ, ուժեղացվեց կարևոր օբյեկտների պահակային ծառայությունը։ 1930 թ. մարտի 5-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց պահակային ու հակահրդեհային հսկողությունը ուժեղացնելու մասին։ Ապրիլի 10-ին Անդրերկրկոմը հանրապետական կենտկոմներին դիրեկտիվ տվեց կարևոր նշանակություն ունեցող օբյեկտները հսկելու համար դրուժինաներ կազմակերպելու մասին[68]։ Ելնելով դրանից ՀԿ(բ)Կ Կենտկոմը դավկոմներին տվեց համապատասխան ցուցումներ[69]։

Հաճախացել էին նաև հակահասարակական տարրերի կողմից կատարվող կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության, ինչպես նաև

---

65 Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 437—440։

66 Տե՛ս ЦГАНХ СССР, ф. 7446, оп. 14, д. 205, л. 25.

67 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 14, գ. 9, թ. 280։

68 Տե՛ս Պ. Լոմաշվիլի, նշված աշխ., էջ 333—334։

69 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 12, թ. 169։

տրանսպորտով փոխադրվող բեռների հափշտակության (գողության) դեպքերը։ Հաշվի առնելով աշխատավորների պահանջը, ՍՍՀՄ Կենտգործկոմը և Ժողկոմխորհը 1932 թ. օգոստոսի 7-ին որոշում ընդունեցին «Պետական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների ու կոոպերացիայի գույքը պաշտպանելու և հանրային (սոցիալիստական) սեփականությունը ամրապնդելու մասին»[70]։ Որոշումը միաժամանակ դատական խիստ պատիժ էր նախատեսում նաև այն կուլակների ու հակահասարակական տարրերի նկատմամբ, ովքեր կոլտնտեսությունները քայքայելու նպատակով բռնություն և ահաբեկում էին գործադրում կոլտնտեսականների նկատմամբ։ Այս որոշումը իր խստությամբ հանդերձ կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսային սեփականությունը դասակարգային թշնամիներից ու գողերից պաշտպանելու, ինչպես նաև կոլտնտեսությունները ամրապնդելու տեսակետից։

Կոլեկտիվացմանը և, ընդհանրապես, գյուղատնտեսությանը մեծ վնաս հասցրեց անասունների անխնա մորթը, որն սկսվեց 1930 թ. սկզբին։ Որպես կոլեկտիվացման դեմ պայքարի միջոց կուլակները սկսեցին մորթել իրենց անասունները, դրդելով աշխատավոր գյուղացիությանը մորթել անասունները, ապա մտնել կոլտնտեսություն։

Չնայած ձեռնարկված միջոցառումներին, այնուամենայնիվ անասունների անխնա մորթը բավական ծավալ ընդունեց։

1929 թ. սկսված անասունների գլխաքանակի նվազումը շարունակվեց մինչև 1933 թ.։ Այդ ընթացքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 892,1 հազարից իջավ մինչև 603,9 հազարի կամ պակասեց 30 տոկոսով։ Մինչև 1934 թ. մանր եղջերավոր անասունների գլխաքանակը պակասեց գրեթե կիսով չափ[71]։

Անասնաբուծության անկումը ժամանակին բացատրվել է (դա արտահայտվել է նաև գրականության մեջ) հիմնականում վերակառուցման սկզբնական շրջանում դասակարգային պայքարի սրումով, երբ կուլակներն անխնա կոտորում էին անասունները և նույնը դրդում միջակներին ու չքավորներին։ ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. հունիսի 15-ի որոշման մեջ նշված է, որ հանրապետության մի շարք վայրերում անխնա կերպով մորթում են գյուղատնտեսության համար պիտանի և լավագույն անասունները, որ այդպիսի դեպքերը «տեղի են ունենում կուլակների վնասարար գործողությունների և դրդումների ազդեցու-

70 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողվածու», 1932, № 62, հոդ. 360։ Տե՛ս նաև «Коллективизация сельского хозяйства...», стр. 423—424.

71 Տե՛ս ՄԼԻ ՀՍՍ, ֆ. 1, ց. 25, գ. 278, թ. 40։

թյան տակ», ինչպես նաև «նույնիսկ չքավոր ու միջակ տնտեսությունների և կոլտնտեսություն մտնող այլ անձանց կողմից»[72]։ Այդ երևույթը, որն ընդհանուր էր ամբողջ սովետական երկրի համար, Համկ(բ)Ի XVII համագումարը պատճառաբանեց անասնաբուծական ճյուղերի խոշոր կուլակային տարբերով հագեցվածությամբ և անասունները կոտորելու՝ ուժեղ կուլակային ագիտացիայով[73]։

Սովետական պատմաբանները և տնտեսագետները ցույց են տվել, որ տվյալ հարցում գերագնահատվել է կուլակային ագիտացիայի բացասական նշանակությունը։ Նրանք որպես լրացուցիչ պատճառներ առաջ են քաշել գյուղի սոցիալիստական վերակառուցման սկզբնական շրջանի դժվարությունները, գյուղացիության մասնավոր սեփականատիրական մնացուկների առկայությունը, կոլտնտեսային շինարարության ընթացքում թույլ տված «ձախ» խոտորումները, մթերման քաղաքականության թերությունները և այլն[74]։ Այդ ամենի պատճառով տեղի ունեցավ անասնաբուծության տևական անկում, որը կանգ առավ միայն երկրորդ հնգամյակի առաջին տարիներին և որից հետո սկսվեց վերելքի ժամանակաշրջանը։

Այսպիսով 1930—1931 թթ. դասակարգային պայքարը խիստ սրվեց։ Բացահայտ ղինված պայքարում կուլակները, դաշնակցականները և նրանց բոլոր կողմնակիցները ջախջախիչ հակահարված ստացան և պարտվեցին։ Տապալվեցին սովետական իշխանության դեմ մասսայական դժգոհություն և դիմադրություն հրահրելու թշնամական պլանները։ Պրոլետարիատի դիկտատուրայի մարմինները, գյուղի և քաղաքի աշխատավորների ամենաակտիվ մասնակցությամբ ճնշեցին կուլակային-դաշնակցական-բանդիտական բոլոր ելույթները։ Թշնամու գործողությունները, դժվարացնելով գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման գործը, անկարող էին արգելակել նրա հաղթական ընթացքը։

Հայաստանում, ինչպես նաև մի շարք այլ հանրապետություններում, դասակարգային պայքարը ընդունեց սուր բնույթ։ Սխալ կլինի դրա պատճառը որոնել կոլեկտիվացման ժամանակ թույլ տված սխալների մեջ։ Դրանք այս կամ այն չափով ազդում էին այդ պայքարի վրա, սա-

---

72 Տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 8, հոդ. 150։

73 Տե՛ս Ի. Ստալին, Երկեր, հ. 13, էջ 361։

74 Տե՛ս *В. Погудин*, Путь советского крестьянства к социализму. Историографический очерк, М., 1975, стр. 163—164; *Н. Немаков*, Коммунистическая партия—организатор массового колхозного движения (1929—1932 гг.), М., 1966, стр. 259—260.

կայն հիմնական պատճառ հանդիսանալ չէին կարող։ Դասակարգային պայքարի սրվելու գլխավոր պատճառը ամբողջ ճակատով սոցիալիզմի հարձակման դեմ շահագործող դասակարգերի դիմադրությունն էր, նրանց թշնամական վերաբերմունքը կոլտնտեսային կարգերին, որոնք գալիս էին վերջնականապես արմատախիլ անելու շահագործումը գյուղում, մեկընդմիշտ վերջ տալու մարդու կողմից մարդու շահագործմանը և շահագործում ծնող պատճառները։ Իսկ շահագործող դասակարգերը չէին ցանկանում անձնատուր լինել և ավելի էին ակտիվանում, ուժեղացնում դիմադրությունը գյուղի սոցիալիստական վերակառուցմանը։

Դասակարգային պայքարին ակտիվորեն մասնակցեցին դաշնակցականների՝ բուրժուանացիոնալիստական կուսակցության, մնացորդները, որոնք վերջնականապես դեռևս չէին վերացվել և իրենց գոյությունը պահպանում էին։ Նրանք կապեր ունեին նաև արտասահմանի հետ և իրենց կուսակցության ղեկավարությունից ստանում էին ցուցումներ ու օժանդակություն։

Դասակարգային պայքարը հատկապես սուր բնույթ էր կրում ադրբեջանական շրջաններում։ Ընդ որում այն բավական ուժեղ էր նաև Ադրբեջանում և Նախիջևանում, Դաշնակցականները և մուսավաթականները շատ վայրերում բանդիտական խմբերը կազմակերպում և ղեկավարում էին անձամբ։

Դասակարգային պայքարին նպաստում էր նաև Հայաստանի պետական սահմանին մոտ գտնվելը։

Առանձին ուսումնասիրողներ փորձել են ըստ դասակարգային պայքարի սրության՝ կատարել Սովետական Միության շրջանների խմբավորում։ Երկիրը բաժանվել է երեք խմբի։ Հայաստանը մտցվել է երկրորդ խմբի մեջ[75]։

2. ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ։ ԱՆՑՈՒՄԸ ԿՈՒԼԱԿՆԵՐԻ ՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Սովետական Միության գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացմանն անցնելը միաժամանակ նշանակում էր իրականացնել կու-

---

75 *Տե՛ս Н. Новицкий.* Классовая борьба в деревне и ликвидация кулачества как класса, М., 1972, стр. 257.

լակների որպես դասակարգի վերացումը։ Գյուղական շահագործողների դասակարգի վերացումը ենթադրվում էր իրագործել համատարած կոլեկտիվացման հիման վրա։

Մինչև 1929 թ. վերջերը կուլակության նկատմամբ տարվում էր սահմանափակելու և արտամղելու քաղաքականություն։ Այդ նշանակում էր՝ պայքարել գյուղական շահագործողների դեմ, ճնշում գործադրել նրանց վրա՝ ընտրական ձայնից զրկելու, բարձր հարկադրության և այլ ձևերով, թույլ չտալով, որ նրանք անարգել շահագործեն գյուղի աշխատավորներին։ Սահմանափակման քաղաքականությունը չէր արգելում և չէր կանխում կուլակների առաջացումը, չնայած առանձին դեպքերում տեղի էր ունենում նրանց վերացում, այսինքն չդիմանալով ճնշմանը և սահմանափակումներին, նրանց որոշ մասը դուրս էր մղվում արտադրությունից։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման առաջադիմության, կոլտնտեսային-սովխոզային շինարարության զարգացման շնորհիվ աստիճանաբար հասունացան կուլակության որպես դասակարգի վերացմանն անցնելու պայմանները։ 1929 թ. կոլտնտեսությունները և սովխոզները տվեցին այնքան ապրանքային հաց, որքան կուլակները 1927 թ.։ Իսկ 1930 թ. ենթադրվում էր, որ գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը արտադրելու էր զգալի չափով ավելի համախառն և ապրանքային հաց։ Այդ նշանակում էր, որ կուլակային հացի արտադրությունը արդեն կարելի էր փոխարինել կոլտնտեսությունների ու սովխոզների արտադրությամբ։ Մյուս կողմից, 1929 թ. կոլեկտիվացման բարձր տեմպերը հանդեցրին ամբողջ շրջանների ու մարզերի համատարած կոլեկտիվացմանը։ Բատրակներին ու չքավորներին հետևելով, զանգվածորեն դեպի կոլտնտեսությունները շրջվեցին միջակ գյուղացիները։ Հաջողությամբ կենսագործվում էր ամբողջ ճակատով կապիտալիզմի դեմ սոցիալիզմի հարձակումը։ Սովետական հասարակության մեջ տեղի էին ունեցել էական դասակարգային տեղաշարժեր։ Այդ ամենը հասունացրեց համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության որպես դասակարգի վերացմանն անցնելը։ Սա նոր քաղաքականություն էր, որը սկզբունքորեն տարբերվում էր նախկինից։ Այժմ վերջ էր տրվում երկրի վերջին և ամենաբազմամարդ շահագործող դասակարգին՝ կուլակությանը, վերանում էին մարդու կողմից մարդու շահագործում ծնող պատճառները, փակվում դրա բոլոր ճանապարհները։

Անդրադառնալով սոցիալիստական հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո հողագործության մեջ կապիտալիստական տնտեսա-

տերերի կամ խոշոր գյուղացիների վերացումը բացառելու և այն նախապատրաստելու պայմանների հարցին, Վ. Ի. Լենինը գրել է. «Խոշոր գյուղացիների էքսպրոպրիացիան ոչ մի կերպ չի կարող լինել հաղթանակած պրոլետարիատի անմիջական խնդիրը, որովհետև այդպիսի տնտեսություններին հանրայնացման համար դեռևս տակա չեն նյութական, մասնավորապես տեխնիկական, իսկ այնուհետև նաև սոցիալական պայմաններ»[76]:

Կուլակության նկատմամբ նոր քաղաքականության անցնելու մասին առաջին անգամ խոսք եղավ 1929 թ. դեկտեմբերին, մարքսիստ-ագրարագետների կոնֆերանսում, Ի. Ստալինի արտասանած ճառում («Ագրարային քաղաքականության հարցերի շուրջը ՍՍՀՄ-ում»)[77]: Այն կուսակցական որոշման ձև և ուժ ստացավ 1930 թ. հունվարի 5-ին, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարության պետության կողմից օգնություն ցույց տալու միջոցառումների մասին» հայտնի որոշման մեջ[78]:

Կուլակության վերացման ձևերի և մեթոդների հարցը կոնկրետ-պատմական հարց է և հիմնականում կապվում էր սոցիալիզմին կուլակների ցույց տված դիմադրության չափի, դասակարգային պայքարի սրության և, ընդհանրապես, սոցիալիզմի կառուցման պայմանների հետ: Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները տեսականորեն հնարավոր են համարել նաև գյուղի շահագործողների ներգրավումը սոցիալիստական շինարարության մեջ, առանց նրանց արտադրության միջոցների բռնագրավման: Այսպես, «Գյուղացիական հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում» աշխատության մեջ Ֆ. Էնգելսը գրել է, թե հնարավոր է, որ մենք հրաժարվենք խոշոր գյուղացիների բռնի սեփականազրկումից[79]:

Ռուսաստանի փորձը սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հենց առաջին տարիներին ցույց տվեց կուլակների թշնամությունը և կատաղի դիմադրությունը պրոլետարիատի դիկտատուրային և սոցիալիզմի գործին: Անդրադառնալով այդ փորձին, Վ. Ի. Լենինը ՀամԿ(բ)Կ VIII համագումարում (1919 թ.) նշել է. Ֆ. Էնգելսը «նույնիսկ վստահություն էր արտահայտում, որ, թերևս, խոշոր գյուղացիության նկատմամբ ևս կհաջողվի կառավարվել առանց ռեպրեսիաների և առանց ճնշման միջոցներ գործ դնելու: Ռուսաստանում այդ ենթադրու-

76 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 182:

77 Տե՛ս Ի. Ստալին, Երկեր, հ. 12:

78 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», II մաս, էջ 811:

79 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 22, М., 1962, стр. 523.

թյունը չարդարացավ. մենք կուլակների հետ ուղղակի քաղաքացիական պատերազմի մեջ ենք եղել, կանք և կլինենք։ Այդ անխուսափելի է։ Մենք այդ տեսել ենք գործնականում»[80]։ Կուլակները մեր մոլի թշնամիներն են, գրել է Վ. Ի. Լենինը, ուստի նրանց դեմ պետք է գործադրել միայն բռնության զենքը[81]։

Դասակարգային թշնամու դիմադրությունը նոր ուժով դրսևորվեց սոցիալիզմի ծավալուն հարձակման ժամանակաշրջանում։ Կուլակները կատաղի պայքար սկսեցին կոլտնտեսային շինարարության և սովետական իշխանության բոլոր ձեռնարկումների դեմ։ Նման պայմաններում կուլակության վերացման ուղին դարձավ նրանց ապակուլակացումը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա։

Հունվարի 6-ին, այսինքն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վերոհիշյալ որոշման հրապարակման օրը ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը (հարցման կարգով) անդրադարձավ կուլակության հարցին։ Երևանի գավառում համատարած կոլեկտիվացմանն անցնելու կապակցությամբ Կենտկոմն առանձնացրեց հանձնաժողով, որին հանձնարարվեց շտապ ուսումնասիրել կուլակների, ինչպես նաև այգիների մասին հարցերը[82]։ Մի քանի օր անց (հունվարի 10-ին, դարձյալ հարցման կարգով) Կենտկոմի քարտուղարությունն ընդունեց հատուկ որոշում կուլակության մասին։ Վերոհիշյալ հանձնաժողովին հանձնարարվեց տաս օրվա ընթացքում քննել հարցը և մշակել կոնկրետ միջոցառումներ կուլակությունը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանն անցնելու մասին։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դիրեկտիվները կենսագործելու համար։ Հանձնաժողովը քննարկելու էր նաև այն հարցերը, որոնք կապված էին կուսակցության քաղաքականությանը (կոլեկտիվացման տեմպի արագացում, մթերումներ, հարկում և այլն) կուլակների կողմից ցույց տրվող դիմադրության ուժեղացման հետ։ Ի փոփոխումն և որպես լրացում հունվարի 6-ի որոշման, նախ մեծացվեց հանձնաժողովի կազմը, ապա նշվեց համատարած կոլեկտիվացման մասին ոչ միայն Երևանի գավառում, այլ նաև մի շարք այլ շրջաններում[83]։ Հունվարի 13-ին Կենտկոմի նախագահությունը հաստատեց քարտուղարության հունվարի 10-ի որոշումը։ Նկատի ունենալով կոլեկտիվացման ղգալի արագացման, բամբակի,

---

80 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 182—183։

81 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 9։

82 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 13, գ. 34, թ. 543։

83 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 172, թ. 15։

հայի մթերումների և անհատական հարկադրման կուսակցության քաղաքականության դեմ կուլակության ակտիվ դիմադրության փորձերի ուժեղացումը (տեռոր, ելույթներ կոլտնտեսությունների, շքավորների ու բատրակների դեմ և այլն), դատական-քննչական, պատժիչ և պետքաղվարչության մարմիններից պահանջվեց «ավելի վճռականորեն պայքարել կուլակային տարրերի դեմ»։ Կենտկոմն ընդգծում էր լայն ցուցադրական դատավարության օգտագործման անհրաժեշտությունը[84]։

Այդ օրերին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը մշակեց «Միջոցառումներ համատարած կոլեկտիվացման և կուլակաթափության մասին», ուր խոսվում է համատարած կոլեկտիվացման շրջաններում ապակուլակացման, ինչպես նաև այդիների հարցի մասին[85]։ Կենտկոմի քարտուղարության այս առաջարկությունը, սակայն, որոշում չդարձավ[86]։ Այդ հարցի մասին համապատասխան որոշում ընդունվեց, ինչպես կտեսնենք, մի փոքր ավելի ուշ։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Երևանի կոմիտեն 1930 թ. հունվարի 15-ին Երևանի գավառի բոլոր կոլտնտեսականներին և աշխատավոր գյուղացիներին ուղղված կոչում նշում էին, թե համատարած կոլեկտիվացման

---

84 Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 1, թ. 170։

85 Տե՛ս ПАГФ НМЛ, ф. 13, оп. 1, д. 2159, л. 412.

86 ՀԿ(բ)Կ Կենտկոմի նշված փաստաթուղթը գրականության մեջ օգտագործվել է սխալ մեկնաբանություններով։ Այսպես, Պ. Լոմաշվիլին գրել է, թե իբր նախագիծը առաջարկում էր «կուլակաթափ» անել այն միջակ տնտեսություններին, որոնք կոլտնտեսություն չէին մտնում, հետևաբար կուլակաթափվող տնտեսությունների մեջ կարող էին ընկնել «մեծ քանակությամբ գյուղացիական տնտեսություններ», թե իբր արտադրության հիմնական միջոցներից բացի նախատեսվում էր խլել նաև «առկա մթերապաշարը» և այլն։ Տե՛ս П. Ломашвили, Великий переворот. Тбилиси, 1972, стр. 237—238. Իրականում նախագծվում էր այդեղծական համատարած կոլեկտիվացման շրջաններում անհատույց բռնագրավել կուլակների այդիները։ Հողաշինարարության ժամանակ կոլտնտեսությունների տերիտորիան ամբողջականացնելու նպատակով փոխանակվելու էին նրանց սահմաններում ընկած այն միջակ տնտեսությունների այդիները, որոնք դեռևս կոլտնտեսություն չէին ընդունվում։ Կոլտնտշարժման դեմ ակտիվ կերպով պայքարող կուլակները արտորվելու էին համատարած կոլեկտիվացման շրջաններից, իրենց տնտեսություններով, իսկ նրանց դույքը բռնագրավվելու էր։ Կուլակաթափված տնտեսությունները նոր հողարաժին էին ստանալու նույն կամ այլ շրջանում, ոչ պիտանի հողային ֆոնդի հաշվին։ Ունեցվածքի բռնագրավումը կատարվելու էր այն հաշվով, որ կուլակները դրվեին աշխատավորական տնտեսության վիճակում։ Դրավվելու էր նաև նրանց մթերապաշարի տպրանքային ավելցուկը։ Կուլակային տնտեսությունները որոշվում էին 1929 թ. անհատական հարկադրման ցուցակների համաձայն, դրանք շրջգործկոմներում հաստատելուց հետո։

միջոցով պետք է վերջնական հարված տալ դասակարգային թշնամուն. վերացնել կուլակությանը որպես դասակարգ[87]: Կուլակության վերացման մասին որոշումներ ընդունեցին նաև համատարած կոլեկտիվացման շրջանների զեկավար մարմինները: Այսպես, հունվարի 15-ին Երևանի գավառի Աշտարակի կուսշրջկոմը որոշեց «ապակուլակացման ենթարկել շրջանի ողջ կուլակներին, առաջին հերթին այդիգործական գյուղերում, բաժանելով այդպիսիներին (կուլակներին- Վ. Ղ.) երկու հիմնական կատեգորիայի»[88]: Իսկ Վաղարշապատի կուսշրջկոմը հունվարի 26-ին որոշեց կուլակաթափության աշխատանքներն ավարտել մինչև փետրվարի 5-ը և այդ նպատակի համար առանձնացրեց 6 մարդուց բաղկացած հանձնաժողով: Նրանց հանձնարարվեց անմիջապես մեկնել գյուղերը և հաշվի առնել կուլակային տնտեսությունների ունեցվածքը, որպեսզի նրանք չկարողանան այն «չարամիտ կերպով ոչնչացնել կամ պահել»[89]: Հունվարի 31-ին Հանրապետության կոլտնտեսությունների «Ապակուլակացման մասին» շրջաբերական ուղարկեց կոլտնտեսությունների ավտոնոմ սեկցիաներին, գավառային և խմբակային միությունները, որտեղ նշվում էր ապակուլակացման ժամանակ բռնագրավվող արտադրական միջոցները ցուցակագրելու, գնահատելու և դրանք գյուղսովետների միջոցով կոլտնտեսություններին հանձնելու մասին[90]:

Այսպիսով, 1930 թ. հունվար ամսվա ընթացքում Հանրապետության կուսակցական մարմինները կոնկրետ միջոցառումներ մշակեցին համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության որպես դասակարգի վերացման համար և անցան դրա իրականացմանը համապատասխան շրջաններում (Երևանի գավառում և մի քանի այլ շրջաններում):

1930 թ. հունվարի 30-ին Համ(կ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն որոշում ընդունեց «Համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակային տնտեսությունների վերացման միջոցառումների մասին»: Ըստ որոշման կուլակները բաժանվում էին երեք կատեգորիայի: Առաջին կատեգորիային պատկանում էին հակասովետական ելույթների և տեռորիստական գործողությունների կազմակերպիչները, որոնք դատական մար-

87 Տե՛ս ՄԼԻ ՀՆԱ, ֆ. 1, ց. 15, գ. 214, թ. 24։

88 Տե՛ս նույն տեղում, թ. 45։

89 Տե՛ս նույն տեղում, ֆ. 14, ց. 1, գ. 13, թ. 4։

90 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 15, գ. 224, թ. 3։

մինների որոշմամբ ենթակա էին մեկուսացման: Երկրորդ կատեգորիան կազմում էին խոշոր կուլակները և նախկին կիսակալվածատերերը, որոնք արտաքսվում էին երկրի սակավաբնակ շրջանները: Երրորդ կատեգորիան ամենաբազմամարդն էր. դրանք այն կուլակներն էին, որոնք վերաբնակեցվում էին կոլտնտեսությունների սահմաններից դուրս գտնվող հողերում: Համ(բ)կ Կենտկոմի Քաղբյուրոն նշում էր, որ ապակուլակացման ժամանակ պետք է ելնել կուլակների փաստացի քանակից, որը փաստորեն միջակներին կուլակների հետ չխառնելու և չապակուլակացնելու նախազգուշացում էր[91]: Հունվարի 30-ի որոշման հիմքում դրված էին Համ(բ)կ Կենտկոմի Քաղբյուրոյի կողմից ստեղծված հատուկ հանձնաժողովի առաջարկությունները, որոնք մշակվել էին նույն ամսում[92]:

1930 թ. փետրվարի 1-ին միութենական Կենտկոմը և Ժողկոմխորհը ընդունեցին որոշում «Համատարած կոլեկտիվացման շրջաններում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ամրապնդելու և կուլակության դեմ պայքարելու միջոցառումների մասին»[93]: Երկրամասային, մարզային և ավտոնոմ հանրապետությունների իշխանություններին իրավունք տրվեց համատարած կոլեկտիվացման շրջաններում գործադրելու կուլակության դեմ պայքարի հետ կապված բոլոր անհրաժեշտ միջոցառումները, ընդհուպ մինչև նրանց գույքի լրիվ բռնագրավումը և նրանց արտաքսումը տվյալ շրջանից ու մարզից: Կուլակների բռնագրավված գույքն ընդունվում էր նրանց պարտքերի դիմաց և հանձնվում կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդին, որպես կոլտնտեսություն ընդունվող չքավորների ու բատրակների անդամավճար: Համատարած կոլեկտիվացման շրջաններում վերացվեց կուլակային տնտեսություններում հողի վարձակալության և բանվորական ուժ վարձելու թույլտվության մասին օրենքը: Այն թույլատրվում էր միայն միջակ գյուղացիներին, տեղական իշխանությունների հսկողությամբ: Որոշումը կենսագործելու համար փետրվարի 4-ին Կենտգործ-

---

91 Տե՛ս «История КПСС», т. IV, М., 1971, стр. 54.

92 Տե՛ս *М. Богденко*, К истории начального этапа сплошной коллективизации сельского хозяйства СССР: «Вопросы истории», 1963, № 5, стр. 31; *М. Вылцан, Н. Ивницкий, Ю. Поляков*, Некоторые проблемы истории коллективизации в СССР: «Вопросы истории», 1965, № 3, стр. 16.

93 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 9, հոդ. 105: Տե՛ս նաև «Коллективизация сельского хозяйства...», стр. 267.

կոմը և ԺողԿոմխորհը համատարած կոլեկտիվացման շրջաններն ուղարկեցին հատուկ հրահանգ[94]։

Համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության վերացման հարցին հանդամանորեն անդրադարձավ ՀամԿ(բ)Կ Անդրերկրամը 1930 թ. փետրվարի 6-ի «ԱՍՖՍՀ-ում կոլեկտիվացման և կուլակության նկատմամբ միջոցառումների մասին» որոշման մեջ[95]։ Որոշման մեջ միաժամանակ շեշտվում էր, որ ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններում պետք է շարունակել կուլակության սահմանափակման քաղաքականությունը, ուժեղացնելով հարձակումը նրա դեմ։ Անդրերկրամը նաև պահանջում էր ծավալել մենշևիկների, դաշնակցականների, մուսավաթականների ու իթթիհատականների կուսակցությունների հակահեղափոխական և կուլակային էության մերկացումը, կոսակցություններ, որոնք սրվող դասակարգային պայքարի և Սովետական Միության դեմ իմպերիալիստների պատերազմական պատրաստությունների պայմաններում աշխուժացրել էին իրենց թշնամական գործունեությունը։

Ի լրացումն 1930 թ. հունվարի 30-ի որոշման, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քարտուղարությունը փետրվարի 20-ի «Տնտեսապես հետամնաց ազգային շրջաններում կոլեկտիվացման և կուլակության դեմ պայքարելու մասին» որոշման մեջ անդրադարձավ համատարած կոլեկտիվացման շրջանները՝ նրանց պատրաստության տեսանկյունից վերանայելու, համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության՝ վերացման հարցերին։

Հակահեղափոխական կուլակային ակտիվ տարրերը՝ բանդիտիզմի և հակահեղափոխական կազմակերպությունների կազմակերպիչները, մասնակիցները և կողմնակիցները, որոնք առանձնացվում էին առաջին կատեգորիայի մեջ, ենթակա էին մեկուսացման համակենտրոնացման ճամբարներում, իսկ առավել վտանգավորների նկատմամբ նախատեսվում էր կիրառել պատժի բարձրագույն չափը։ Առաջին կատեգորիայի մեջ ենթադրվում էր մտցնել սահմանափակ թվով կուլակներ՝ ազգային շրջաններում ընդամենը 3000 մարդ, այդ թվում Անդրկովկասում 1200 մարդ։ Երկրորդ և երրորդ կատեգորիայի կուլակները, ի տարբերություն հացահատիկային շրջանների, միավորվում էին մեկ կատեգորիայի մեջ։ Նախատեսվում էր նրանց հանել իրենց բնակավայրերից և ցրել տվյալ հանրապետության սահմաններում, պետական սահմանից հե-

94 Տե՛ս «Вопросы истории КПСС», 1962, № 4, стр. 68.

95 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 32, թ. 2—5։

ում, վատ հողերում։ Ոչ բնիկ ազգությունների կուլակային տնտեսությունները պարտադիր կարգով արտաքսվելու էին տվյալ հանրապետությունից։ Նրանց մոտավոր թիվը ենթադրվում էր Միջին Ասիայի համար 400 և Անդրկովկասի համար 200 ընտանիք։ Բոլոր երեք կատեգորիաներին պատկանող կուլակային տնտեսությունների թիվը, որոնց նկատմամբ կիրառվելու էին նշված միջոցառումները, չպետք է գերազանցեր բոլոր գյուղացիական տնտեսությունների 2—3 տոկոսից, ի տարբերություն հացահատիկային շրջանների 3—5 տոկոսի։ Համ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն պահանջում էր հատուկ զգուշություն ցուցաբերել կուլակային տնտեսությունների այն անդամների նկատմամբ, ովքեր ակտիվ կերպով մասնակցել էին կոմսոմոլական ջոկատներին և բանդիտիզմի դեմ մղվող պայքարին[96]։

Կուլակության վերացման հարցերը իրենց արտահայտությունը գտան նաև Հկ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. մարտի 10-ի որոշման մեջ (Համկ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի վերոհիշյալ որոշման կենսագործման միջոցառումների մասին)։ Ըստ այդ որոշման նախատեսվում էր առաջին կատեգորիայի կուլակներին ապակուլակացնել և արտաքսել Հայաստանից։ Գետաբազմարբերությանը հանձնարարվում էր որոշել լրացուցիչ մեկուսացման և արտաքսման ենթակա առաջին կատեգորիայի կուլակների թիվը և Կենտկոմի քարտուղարության հետ համաձայնեցնելուց հետո իրականացնել այն տասն օրվա ընթացքում։ Նրանց ընտանիքների անդամները և մնացած բոլոր կուլակները (երկրորդ և երրորդ կատեգորիա) հեռացվում էին համատարած կոլեկտիվացման շրջաններից և տարաբնակեցվում Սևանի դավառի Բասարգեչարի ու Կարմիրգյուղի (Կրասնոսելսկ) շրջաններում։ Նրանց ապակուլակացումը կարող էր տեղի ունենալ միայն գյուղի չքավորների ու միջակների ընդհանուր ժողովի որոշումով, որը հաստատվում էր գավդործկոմի կողմից։ Հաշվառման էին վերցվելու նաև մինչ այդ որոշումը համատարած կոլեկտիվացման շրջաններից արտաքսված կուլակները։ Նոր վայրերում դեռևս չտեղավորված կուլակները ևս փոխադրվում էին հիշյալ շրջանները։ Բասարգեչարի և Կարմիրգյուղի շրջաններում կուլակները վերաբնակեցվելու էին խմբերով, 6—8 տնտեսություն միասին՝ բնակելի գյուղերում և 35—40 տնտեսություններով՝ նոր բնակավայրերում։ Վերաբնակեցված

---

96 ՏԼ՚ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 32, թ. 6—12։ *М. Вылцан, Н. Ивницкий, Ю. Поляков.* Некоторые проблемы истории коллективизации в СССР: «Вопросы истории», 1965, № 3, стр. 18.

բոլոր կուլակներին սովետական իշխանությունը հատկացնում էր հող և օգնում էր գույքով ու սերմով, որպեսզի նրանք կարողանային զբաղվել վարուցանքով։ Սա վկայում էր նախկին շահագործողների նկատմամբ սովետական իշխանության հումանիստական մոտեցման և նրանց աշխատանքային վերադաստիարակության մասին։ Հայաստանում ևս ապակուլակացման ենթակա տնտեսությունների թիվը չպետք է անցներ համատարած կոլեկտիվացման շրջանների տնտեսությունների 2—3 տոկոսից[97]։

Այսպիսով, համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակության որպես դասակարգի վերացման միջոցառումները կոնկրետացվեցին միայն 1930 թ. հունվարի 30-ի և փետրվարի 1-ի որոշումներով։ Անդրկովկասի հանրապետությունների և Հայաստանի համար կոնկրետ և լրացուցիչ միջոցառումներ մշակվեցին 1930 թ. փետրվար-մարտ ամիսներին։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը պահանջում էր ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններում ուժեղացնել հարձակումը կուլակների դեմ, նրանց նկատմամբ առավելագույն սահմանափակման քաղաքականություն կենսագործելու համար։ Այսպես, կուլակների վրա դրվում էր ցանքի և ապրանքային արտադրանքի վաճառքի կայուն առաջադրանք։ Նրանց կողմից չմշակված հողերը թույլատրվում էր հանձնել կոլտնտեսություններին կամ անհատական գյուղացիական տնտեսություններին՝ ցանք կատարելու պայմանով։ Կուլակների գույքն օգտագործվելու էր չքավոր տնտեսությունների կողմից՝ ցանք կատարելու համար։ Սովետական իշխանությունը խստորեն հետևելու էր հողի վարձակալության և բանվորական ուժի վարձման օրենքների կենսագործմանը, պաշտպանելով աշխատավոր գյուղացիների շահերը։ Շարունակվելու էր կուլակների անհատական հարկադրումը, որը 1930 թ. տարածվեց բոլոր կուլակների վրա (մինչ այդ անհատական հարկման էր ենթարկվում կուլակների ունևոր վերնախավը)։ Այս բոլորի նպատակն էր տվյալ շրջաններում ևս նախապատրաստել համատարած կոլեկտիվացումը և կուլակների դասակարգի վերացումը։

Հայաստանում կուլակության վերացման գործնական քայլերը սկսվել են 1930 թ. հունվարին։ Հունվարի 28-ին Լենինականի գավկոմը ՀԿ(բ)Կ Կենտկոմին հայտնում էր Դուզքենդի, Հաջիխալիլի, Աղբաբայի,

---

97 Որոշ հեղինակներ այս ցուցանիշը համարել են որպես կատարված փաստ։ Տե՛ս Ն. Հովհաննիսյան, նշված աշխ., էջ 140։

Ղզլղոշի և Մալա Գյոքչայի շրջաններում կուլակաթափության արդյունքների մասին։ Գավկոմը միաժամանակ նշում էր, որ մյուս շրջաններից տեղեկություններ չկան[98]։

1930 թ. փետրվարի կեսերին Երևանի գավառի Վաղարշապատի շրջանում արդեն կուլակաթափվել էին 110 տնտեսություններ, որոնցից 45-ը վտարվել էին շրջանի սահմաններից[99]։ Փետրվարի 13-ին կայացած Երևանի գավառի կոլտնտեսականների համագումարում Աշտարակի շրջանի ներկայացուցիչը հայտարարեց, որ շրջանում ապակուլակացվել են 108 կուլակային տնտեսություններ, որոնցից բռնագրավված գույքի արժեքը կազմում էր 1,5 միլիոն ռուբլի։ 44 կուլակային տնտեսություններ արտաբռվել էին շրջանից[100]։ Նույն օրը Եղվարդի ենթաշրջանից ուղարկված զեկուցագրում նշվում էր, որ չքավորական խորհրդակցություններում քննության են ենթարկվել վտարման և ապակուլակացման ենթակա տնտեսությունների ցուցակները[101]։ Մինչև փետրվարի 24-ը Մեղրու շրջանում ապակուլակացվել էին 23 տնտեսություններ, իսկ բոլոր քաղաքականապես վտանգավոր տարրերը մեկուսացվել էին։ Ոմանք հասցրին փախչել Իրան։ Կուլակաթափությանը հաջորդել էր կոլեկտիվացման ծավալումը շրջանի 23 գյուղերում։[102] Մի այլ աղբյուրի տվյալներով նույն ժամանակամիջոցում Մեղրու շրջանում ապակուլակացվածների թիվը հասնում էր 37-ի, որոնցից 21-ը շրջանից արդեն վտարվել էին։ Ցույց է տրված նաև նրանցից բռնագրավված գույքի արժեքը, ըստ տնտեսությունների։ Նշված են նաև այն ութ միջակ տնտեսությունները, որոնք սխալ կերպով «միջակաթափվել» էին և որոնց գույքը վերադարձվել էր[103]։

Աղբաբայի շրջանից հայտնում էին, որ կուլակաթափվել են շրջանի կուլակային տնտեսությունները, որոնց մի մասին հաջողվել է փախչել Թուրքիա, իրենց հետ տանելով ձիերը և այլ հարստություններ[104]։ Մինչև հունվարի 26-ը շրջանի Գյուլլի, Զիվինլի, Կուզիքենդ,

---

98 Տե՛ս Պ. Լոմաշվիլի. նշված աշխ., էջ 241։

99 Տե՛ս «Заря Востока», 13 февраля 1930 г.

100 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 81, թ. 3—4։

101 Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 72, թ. 7։

102 Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 4, թ. 614—615։

103 Տե՛ս նույն տեղում, թ. 616։

104 Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 79, թ. 26—27։

Գյուլլիջա, Ղարանամաղ (Ենի-Յոլ) և Մաղարաջուղ գյուղերից անհայտացել էին 30 կուլակներ[105]։

Մինչև երեք կատեգորիայի բաժանելու մասին որոշման ընդունումը Հայաստանում կուլակներին բաժանում էին երկու կատեգորիայի։ Կուլակների մի խումբը ապակուլակացումից հետո թողնվում էր տեղում, իսկ մյուս խումբը արտաքսվում էր տվյալ շրջանից (սակայն ոչ Հանրապետությունից)։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի ինֆորմացիոն տեղեկանքում բերված են հետևյալ տվյալները։ Մինչև 1930 թ. փետրվարի վերջերը Երևանի գավառի 5 շրջաններում (Ղամարլու, Ղուրդուղուլի, Կոտայք, Վաղարշապատ, Հրազդան), որտեղ հայտարարվել և իրագործվում էր համատարած կոլեկտիվացումը, ապակուլակացվել էին 623 կուլակներ, որոնց մի մասը արտաքսվել էր տվյալ շրջաններից[106]։ Արդեն ասվել է, որ 1930 թ. մարտ ամսին ունեզրկված կուլակների վերաբնակեցման համար ընտրվեցին Սևանի գավառի Բասարգեչարի և Կարմիրգյուղի շրջանները (ավելի վաղ, 1930 թ. փետրվարի 3-ին ՀՍԽՀ ԺողԿոմխորհի որոշմամբ համատարած կոլեկտիվացման շրջաններից կուլակներին արտաքսելու համար նախատեսվել էին Դարալագյազի, Մարտունու, Կարմիրգյուղի և Աղբաբայի շրջանները՝ ընդամենը 200 տնտեսության համար)[107]։ Իսկ մինչ այդ, ինչպես նաև դրանից հետո կուլակների մի մասը բնակություն հաստատեց Հանրապետության և Անդրկովկասի այլ քաղաքներում և տարբեր շրջաններում։

Հայաստանում կուլակային տնտեսությունների կուլակաթափումը տեղի էր ունենում 1930 թ. առաջին ամիսներին, համատարած կոլեկտիվացման կենսագործման ժամանակ։ Սա Հայաստանում կուլակության վերացման սկիզբն էր։ Չնայած Հայաստանում ի վերջո փաստորեն 1930 թ. համատարած կոլեկտիվացում չստացվեց, սակայն ապակուլակացումը մնաց որպես կատարված փաստ։

Կուլակների, ինչպես նաև սխալ կերպով որոշ թվով միջակների ունեզրկում տեղի ունեցավ նաև ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններում։ Ինչպես նշել ենք, ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1930 թ. մայիսի 13-ին որոշում ընդունեց ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակաթափության սխալներն ուղղելու մասին։ Հանրապետության Կենտ-

---

105 Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 224։

106 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 1, թ. 53—56։

107 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 905, թ. 80։

գործկոմին և ժողկոմխորհին հանձնարարվեց որոշում կայացնել ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններում ապակուլակացված և այնտեղից արտաքսված կուլակներին իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու թույլտվություն տալու մասին: Կենտգործկոմի հանձնաժողովներին հանձնարարվեց նաև արագացնել սխալ կերպով ունեզրկված գյուղացիների բողոքների քննարկումը: Բոլոր շրջաններում կարճ ժամանակամիջոցում միջակ տնտեսություններին վերադարձվելու էր նրանցից բռնագրավված գույքը[108]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը միաժամանակ պատասխան էր տալիս այն հարցին, թե որոնք էին համատարած կոլեկտիվացման շրջանները, ուր, բնականաբար, արտաքսված կուլակային տնտեսությունների վերադարձ տեղի չէր ունենալու: Այդ վեց շրջաններն էին Ղուրդուղուլին, Մեղրին, Աշտարակը, Վաղարշապատը, Ղամարլուն (Երևանի գավառ) և Ստեփանավանը (Լոռու գավառ): Չնայած այդ շրջաններում փաստորեն համատարած կոլեկտիվացում տեղի չունեցավ և նրանցից շատերը կոլեկտիվացման ցածր մակարդակով չէին տարբերվում շատ այլ շրջաններից, այնուամենայնիվ նրանց կուլակաթափությունն ընդունվում էր որպես օրինական իրողություն:

ՀՍԽՀ Կենտգործկոմը և ժողկոմխորհը ոչ համատարած կոլեկտիվացման շրջանների մասին համապատասխան որոշում ընդունեցին 1930 թ.մայիսի 14-ին: «Կոլեկտիվացման ընթացքում,— ասված է որոշման մեջ,— տեղի են ունեցել ապակուլակացման և այդ գծով վտարման դեպքեր ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններից»: Այդ սխալներն ուղղելու համար գավգործկոմներին առաջարկվում էր իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու թույլտվություն տալ բոլոր անձանց ու ընտանիքներին, որոնք վտարվել էին ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններից (ապա թվարկվում են ոչ համատարած կոլեկտիվացման 25 շրջանները, հանրապետությունում կար ընդամենը 31 շրջան)[109]:

Թե ինչպես էր իրագործվում ոչ համատարածի շրջաններում ապակուլակացման սխալների ուղղումը, կարելի է ցույց տալ գավառներից մեկի օրինակով: Լենինականի գավգործկոմը 1930 թ. ապրիլի 29-ին հանրապետության Կենտգործկոմ ուղարկած գրության մեջ նշում էր, որ գավառում, ըստ վերադաս մարմինների որոշման, ապակուլակա-

---

108 Տե՛ս ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 1, ց. 15, գ. 12, թ. 228:

109 Տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 5, հոդ. 88:

ցում պետք է կատարվեր միայն Դուրբինդի և Մոլլա Գյորչայի համատարած կոլեկտիվացման շրջաններում. Սակայն, ի վերջո, այնտեղ համատարած կոլեկտիվացում չտարվեց, իսկ ապակուլակացում կատարվեց ոչ միայն այդ, այլ նաև գավառի մյուս շրջաններում: Միաժամանակ հայտնվում էր, որ այդ ընթացքում թույլ են տրվել խոշոր սայթաքումներ, որոշ դեպքերում ոտնձգվել են նաև միջակ տնտեսությունները:

Այնուհետև, անցնելով սխալների ուղղմանը, գավգործկոմը տեղեկացնում էր, որ իր հատուկ հանձնաժողովը վերանայել և ստուգել է ապակուլակացված տնտեսությունների ցուցակները, որ միջակներին վերադարձվել են բռնագրավված իրերը: Գավգործկոմը խնդրում էր հայտնել, թե ինչպես պետք է վարվել նախկին կուլակների հետ, քանի որ գավառում արդեն համատարած կոլեկտիվացման շրջան գոյություն չունի:

Կենտգործկոմը պարզաբանեց, որ ոչ համատարածի շրջաններում բոլոր գյուղացիներին թույլատրվում է վերադառնալ իրենց բնակավայրերը, ոտնձգված միջակներին վերադարձվում են նրանց բոլոր իրերը և ապրանքները, իսկ ապակուլակացված կուլակների գույքի վերադարձման հարցը քննում են գավառային հանձնաժողովները, սակայն, բոլոր դեպքերում պետք է վերադարձնել ամբողջ տնային իրերը, հագուստները և կահկարասին[110]:

Վերադարձած նախկին կուլակներին հնարավորություն էր տրվում վարելու աշխատավորական տնտեսություն: Այդ կապակցությամբ կարող ենք փաստեր վկայակոչել Աշտարակի շրջանից: 1930 թ. մայիսի 31-ին ՀԿ(բ)Կ Երևանի գավկոմը լսել է Աշտարակի շրջկոմի քարտուղարի հաղորդումը կուլակաթափվածների վերանայման հանձնաժողովի աշխատանքի մասին: Վերադարձող կուլակները, նշել է գավկոմը, «ապահովվում են արտադրության միջոցներով՝ ավյալ վայրի չքավոր տնտեսությունների միջին մակարդակից ոչ բարձր», ընդ որում հողամասերի և այգիների հատկացումը կատարվում էր կոլտնտեսությունների և գյուղսովետների կողմից, համատեղ[111]:

Ոչ համատարած շրջանների ապակուլակացված կուլակային տնտեսությունները, չնայած հնարավորություն ստացան վերադառնալու իրենց բնակավայրերը, այնուամենայնիվ ստացան ջախջախիչ հարված: Որ-

110 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 905, թ. 74:

111 Տե՛ս նույն տեղում, թ. 96:

պես կանոն վերադարձվում էր նրանց արտադրության միջոցների մի մասը։ Փաստորեն նրանք դրվեցին աշխատավորական տնտեսության վիճակի մեջ։

Այժմ փորձենք լուսաբանել հետևյալ հարցերը. ո՞ր շրջաններն ընդգրկեց կուլակաթափությունը և որքա՞ն տնտեսություններ ենթարկվեցին ապակուլակացման։

Ի կատարումն ՀՍԽՀ Կենտգործկոմի 1930 թ. մարտի 28-ի որոշման և դրանից բխող մարտի 31-ի շրջաբերականի, շրջգործկոմները կազմել և ուղարկել են կուլակաթափված տնտեսությունների ցուցակները, որոնք կարևոր աղբյուր են առաջադրված հարցերի պատասխանը ստանալու համար։ Մի շարք շրջաններ հայտնել են, թե իրենց մոտ ապակուլակացում տեղի չի ունեցել։ Դրանց թվում են Գորիսի և Ղափանի շրջանները՝ Զանգեզուրի, Կարմիրգյուղի և Ալավերդու շրջանները՝ Սևանի, Ղազարեանի՝ Լենինականի, Թալինը՝ Երևանի գավառներում[112]։ Բացի այդ, Սևանի գավշրջգործկոմը 1930 թ. ապրիլի 28-ին գրում էր, թե «Նոր Բայազետում ապակուլակացում տեղի չի ունեցել»[113], չնայած դրանից մի քանի օր առաջ շրջգործկոմը ուղարկել էր 14 ապակուլակացված տնտեսությունների ցուցակ[114]։ Ըստ երևույթին նրանց բոլորի գույքը վերադարձվել էր և գավգործկոմը այլևս նրանց չէր համարում կուլակաթափված։ Բասարգեչարի շրջանում ունեզրկվել էր ընդամենը 4, իսկ Մարտունու շրջանում (միայն մեկ գյուղում)՝ 2 կուլակային տնտեսություն, որոնք բոլորը վերադարձել էին գյուղ և ստացել բռնագրավված գույքը[115]։ Երևանի գավառի Դարալագյազի շրջգործկոմը ապրիլի 6-ին գրում էր. «Շրջանում կուլակաթափված տնտեսություններ չկան, իսկ եղածները համարվում են անօրինական, որոնց գույքը վերադարձված է իրենց»[116]։ Այդպիսի տնտեսությունների թիվը հասնում էր 21-ի՝ շրջանի 5 գյուղերում[117]։ Իսկ Լոռու գավառի Ալավերդու շրջգործկոմը, չներկայացնելով պահանջված ցուցակը, պատճառաբանում էր, թե «շրջանում ապակուլակացման են ենթարկված եղել 48 տնտեսություն, որոնց բոլորին Կենտգործկոմի հատուկ հանձնաժողովը վերականգնել է և նրանցից

---

112 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 3, գ. 385, թ. 12—13, 24, 28, 111։

113 Տե՛ս նույն տեղում, թ. 159։

114 Տե՛ս նույն տեղում, թ. 162—163։

115 Տե՛ս նույն տեղում, թ. 156, 174—175։

116 Նույն տեղում, թ. 113։

117 Տե՛ս նույն տեղում, թ. 116։

բռնագրավված ամբողջ գույքը վերադարձված է իրենց»[118]։ Նույն գավառի Շամշադինի շրջանում ընդամենը 5 և Իջևանի շրջանում 6 տնտեսությունների ունեզրկումը հիմնականում կապված էր բանդիտիզմի դեմ պայքարի հետ։

Ուրեմն, հանրապետության 6 շրջանում 1930 թ. ապակուլակացում տեղի չունեցավ, իսկ 7 շրջանում այն տարածվեց սակավաթիվ տնտեսությունների վրա, կամ եթե այդպիսիք մի քիչ ավելին էին, ապա, համենայն դեպս, նրանք բոլորը վերականգնվեցին և տվյալ շրջանները փաստորեն դուրս եկան ապակուլակացումից։

Կուլակաթափության վերաբերյալ ոչ մի տվյալ չունենք հանրապետության երկու շրջանի համար։ Դրանք Համամլուի և Ղարաքիլիսայի շրջաններն են Լենինականի և Լոռու գավառներում։ Եթե սրանք ևս աղատ են մնացել հիշյալ կամպանիայից, որը քիչ հավանական չէ, ապա ստացվում է, որ փաստորեն կուլակաթափություն չունեցան 15 շրջան (երկուսի վերապահությամբ)։

Ունեզրկումը շոշափեց հիմնականում Երևանի և Լենինականի գավառների շահագործող տնտեսություններին, ընդգրկելով հանրապետության այլ 16 շրջաններ։

Ապակուլակացման ենթարկվեցին, ըստ Կենտգործկոմում ստացված ցուցակների, 1930 թ. ապրիլ ամսվա դրությամբ (միայն Վաղարշապատի շրջանի համար այլ տվյալներով և փետրվարի վիճակով)՝ Երևանի գավառում՝ 738, Լենինականում՝ 213, Լոռում՝ 92, Սևանում՝ 35 և Զանգեզուրում՝ 17 կամ ընդամենը 1095 տնտեսություն[119], որը կազմում էր (ըստ մեր հաշվումների) Հայաստանի բոլոր գյուղացիական տնտեսությունների 0,6 տոկոսը։

Ապակուլակացման բնագավառում թույլ տված սխալների (միջակների ունեզրկում, ապակուլակացում համատարած կոլեկտիվացման չանցած շրջաններում) ուղղումը պետք է որ հանգեցներ այդ տվյալների նվազմանը։ Թե որքանով են զտվում ապակուլակացված տնտեսությունների ցուցակները, դժվար է ասել՝ տվյալների անբավարարության պատճառով։ Սակայն կարող ենք բերել հետևյալ փաստերը։ Լոռու գավառանձնաժողովը Իջևանի շրջանի 70 ապակուլակացված տնտեսությունները

---

118 ՀՍՍՀ ՀՊԱ, ֆ. 112, ց. 3, գ. 385, թ. 19։

119 Տե՛ս նույն տեղում, թ. 19—24, 33—54, 66—84, 100—110, 116—117, 120—122, 129—150, 154—156, 163, 167, 169, 171, 176, 182։ «Заря Востока», 13 февраля 1930 г.

ներից վերականգնել է 64-ին, Շամշադինի շրջանում՝ 28 տնտեսությունից՝ 23-ին[120]: Կենտրոնական հանձնաժողովը Ստեփանավանի շրջանում ապակուլակացման ենթարկված տնտեսությունների ցուցակից հանից 41-ին (74-ից)[121]: Վերևում արդեն խոսք եղավ Ալավերդու շրջանի բոլոր 48 տնտեսությունները վերականգնելու մասին և այլն:

ՀՍԽՀ Կենտրոնական կազմված մի փաստաթղթի տվյալներով 8 շրջանում (Դարալագյազ, Ղուրդուղուլի, Մոլլա Գյոքչա, Ալավերդի, Իջևան, Շամշադին, Ստեփանավան, Կարմիրգյուղ) ապակուլակացման ենթարկված 446 տնտեսությունից վերականգնվել և իրենց ամբողջ գույքը ետ էին ստացել 256 տնտեսություններ[122]: Վավերագրերի ուսումնասիրությունը բերում է այն համոզմանը, որ նախկին կուլակային տնտեսությունները իրենց ամբողջ ուժով չեն վերականգնվել և ոչ մի տեղ: Այնուհետև, տնտեսությունների վերականգնումը հիմնականում բաժին էր ընկնում ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններին, որտեղ ընդհանրապես քիչ տնտեսություններ էին ունեզրկվել և որը վերաբերում էր միջակներին: Վերջապես, կուլակաթափության բարձր ցուցանիշները կապված էին համատարած կոլեկտիվացման շրջանների հետ, որոնց ցուցակներում քիչ փոփոխություններ են կատարվել: Հետևաբար պետք է ենթադրել, որ վերոհիշյալ տվյալները շատ հեռու չեն ճշմարտությունը ներկայացնելուց: Մեծ սխալ գործած չենք լինի, եթե նշենք, որ 1930 թ. հունվար-փետրվարին Հայաստանում փաստորեն կուլակաթափվեց մոտավորապես 800—900 կուլակային տնտեսություն կամ բոլոր գյուղացիական տնտեսությունների (183 հազար)[123] մոտ 0,5 տոկոսը:

Այժմ փորձենք պարզել Հայաստանի բոլոր կուլակային տնտեսությունների թիվը (ճշգրիտ վիճակագրական տվյալներ գոյություն չունեն)՝ ունեզրկված տնտեսությունների տեսակարար կշիռը որոշած լինելու նպատակով: Դրա համար կարող են հիմք ծառայել անհատական հարկման տվյալները: Սակայն հայտնի է, որ բոլոր կուլակային տըն-

---

120 Տե՛ս ՀՍՍՀ ՀԱՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 8, գ. 203, թ. 17, 20—21:

121 Տե՛ս նույն տեղում, թ. 22—24:

122 Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 3, գ. 385, թ. 8:

123 ՀՍԽՀ պետպլանը 1931 թ. ճշտել է հանրապետության բոլոր գյուղացիական տնտեսությունների (183.626), այդ թվում 168.855 կոլեկտիվացման ենթակա, կոլեկտիվացման ոչ ենթակա 6013 ձայնազուրկ և գյուղից բացակա 8758 տնտեսությունների թիվը, մինչ այդ սխալ կերպով ընդունված կոլեկտիվացման ենթակա 157 հազար տնտեսության դիմաց: Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. հունիսի 19:

տնտեսությունների վրա անհատական հարկադրումը տարածվեց միայն 1930/31 թ., իսկ մինչ այդ նման կարգով հարկվում էր միայն նրանց վերնախավը, ավելի ունևոր մասը։ Հետևաբար կարելի է 1930/31 թ. հարկվածներին (2092) գումարել 1930 թ. կուլակաթափված տնտեսությունները։ Այս ձևով համատարած կոլեկտիվացման և կուլակության նկատմամբ նոր քաղաքականությանն անցնելու նախօրյակի համար ստացվում է մոտ 3000 տնտեսություն (1929/30 հարկային տարվա 2382 անհատական հարկման ենթարկված տնտեսությունների դիմաց)։ Իսկ դա կազմում էր հանրապետության բոլոր գյուղացիական տնտեսությունների 1,65 տոկոսը։ Տվյալներից հետևում է, որ 1930 թ. սկզբին վերացվեց բոլոր կուլակային տնտեսությունների 28 տոկոսը, այսինքն ավելի քան մեկ քառորդ մասը։

Պարզենք նաև համատարած կոլեկտիվացման շրջանների ապակուլակացման պատկերը։ Վերցնում ենք միայն Երևանի գավառը. համատարած կոլեկտիվացումը և կուլակության վերացումը հիմնականում այստեղ էր կենսագործվում հետևողական կերպով։ Մեր մոտավոր հաշվումներով գավառում ապակուլակացվել էր գյուղացիական տնտեսությունների (66 հազար) 1,1 տոկոսը։

Համադրության համար հարկ ենք համարում բերել Անդրկովկասին վերաբերող հետևյալ տվյալները։ 1930 թ. մարտի 12-ին Անդրերկրամը ՀամԿ(բ)Կ Կենտկոմին հայտնել է, որ «ԱՍՖԽՀ-ում ապակուլակացումը շոշափել է համատարած կոլեկտիվացման շրջանների տնտեսությունների 1—2 տոկոսը»[124]։ Բերելով հիշյալ վկայությունը և այլ փաստարկներ, Պ. Լոմաշվիլին այն կարծիքն է հայտնել, որ Անդրկովկասում 1930 թ. հունվար և փետրվար ամիսներին ապակուլակացման միջոցով վերացվեց կուլակային տնտեսությունների 20—25 տոկոսից ոչ ավելի[125]։ Մանրամասնության կարգով նշենք, որ այդքան էին կազմում Սովետական Միության համատարած կոլեկտիվացման շրջաններից 1930 թ. սկզբից մինչև 1932 թ. աշունը արտաքսված կուլակային տնտեսությունները[126]։

Այսպիսով, կուլակաթափության վերաբերյալ Անդրկովկասի և Հայաստանի տվյալները գրեթե համընկնում են։

Այստեղ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև կուլակության քանակական պատկերը ըստ տարիների, մինչ այդ պատասխան

---

124 Պ. Լոմաշվիլի, նշված աշխ., էջ 265։

125 Տե՛ս նույն տեղում։

126 Տե՛ս «История СССР», т. VIII, М., 1967, стр. 572.

տալով այն հարցին, թե որոնք էին կուլակային տնտեսությունների բնորոշ հատկանիշները, որոնց հիման վրա նրանք ճանաչվում էին որպես այդպիսին և որոնցով հատկապես ղեկավարվում էին ֆինանսական մարմինները՝ սովետական իշխանության հարկային քաղաքականությունը կենսագործելու համար։

Անհատական կարգով հարկելու համար կուլակային տնտեսության հատկանիշներն էին (դրանցից որևէ մեկը կամ մի քանիսը ունենալու դեպքում)՝ սիստեմատիկ վարձու աշխատանք կիրառելը, երբ այդպիսի վարձակալությունը գերազանցում էր սահմանված առավելագույն չափը, արդյունաբերական ձեռնարկություններ (մեքենայական շարժիչով) ունենալը, որոշակի եկամուտ ստացող աղացատները, բարդ գյուղատնտեսական մեքենաները, ինչպես նաև սարքավորված շենքերը սիստեմատիկ վարձով տալը, հողը կապալով վերցնելը (ստրկացուցիչ պայմաններով), առևտրով ու վաշխառությամբ զբաղվելը և այլն։

1930/31 թ. ընդլայնվեցին կուլակային տնտեսությունների բնորոշ հատկանիշները, նրանց բոլորին հայտնաբերելու և անհատական հարկման ենթարկելու համար։

Ֆինանսական մարմինների հարկային տվյալներով գյուղի շահագործողների թիվը ներկայացնում է այսպիսի պատկեր։ Անհատական կարգով հարկադրվել էր 1928/29 թ.՝ 2623, իսկ 1929/30 թ.՝ 2382 հարստատ վերնախավի կուլակային տնտեսություն։ Իսկ նույն կարգով հարկվող բոլոր կուլակային տնտեսությունների թիվը կազմում էր 1930/31 թ. 2092 և 1932 թ. 1987 տնտեսություն։ Բոլոր գյուղացիական տնտեսությունների մեջ կուլակային տնտեսությունները գրավում էին հետևյալ տեսակարար կշիռը. 1928/29 թ.՝ 1,5, 1929/30 թ.՝ 1,4, 1930/31 թ.՝ 1,2 և 1932 թ.՝ 1,1 տոկոս[127]։ Այս տվյալները փոքր չափով կնվազեն, երբ ելակետ ընդունենք բոլոր գյուղացիական տնտեսությունների քանակի

---

127 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 17, գ. 187, թ. 28—29։ (Մինչև 1931 թ. հարկային տարին հաշվում էր մայիսից մինչև մյուս տարվա ապրիլը)։ Այլ տվյալներով 1929/30 թ. անհատական կարգով հարկված ակնհայտ կուլակային տնտեսությունների թիվը կազմում էր 1,8 տոկոս (տե՛ս «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928/29—1929/30 թթ.», Երևան, 1931, էջ139)։ Հարկային օրենքներով նախատեսվում էին, որ անհատական կարգով հարկվող տնտեսությունների թիվը չպետք է գերազանցեր բոլոր գյուղացիական տնտեսությունների 3 տոկոսը՝ 1929/30 թ. (տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1929, № 4, էջ 100—127), մինչև 2 տոկոսը՝ 1930/31 թ. (տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 3, հոդ. 58)։ 1931 թ. սկսած այլևս այդպիսի նորմաներ չէին սահմանվում։

մասին 1931 թ. ճշտված տվյալները։ Այս դեպքում կունենաք կուլակների այսպիսի տեսակարար կշիռ. 1928/29 թ.՝ 1,4, 1929/30 թ.՝ 1,3, 1930/31 թ.՝ 1,1 և 1932 թ.՝ 1,0 տոկոս։

1931 թ. համար գոյություն ունի մի աղբյուր ևս, որը նվիրված է հանրապետության ազգաբնակչության սոցիալական կազմի (նաև ըստ սեռի, ազգության ու գրագիտության) լուսաբանությանը, շրջաններով։ Այդ վիճակագրական հաշվարկները կատարված են ՀՍԽՀ կենտվիճվարչության կողմից, որոնց համաձայն Հայաստանում 1931 թ. սեպտեմբերի 1-ին կուլակների թիվը (ընտանիքի անդամներով) կազմում էր 13.591 մարդ[128]։ Ընտանիքի միջին կազմը 6—7 անձ ընդունելու դեպքում, որը պետք է որ ճիշտ արտացոլի իրականությունը, տնտեսությունների թիվը կհամընկնի վերևում բերված հարկային տվյալների հետ (2092 տնտեսություն)։

Այժմ կուլակաթափության մի վերջին հարցի՝ բռնագրավված գույքի մասին։ 1930 թ. անցկացված կոլտնտեսությունների հարցման (կուսակցության XVI համագումարին ներկայացված զեկույցների) տվյալների համաձայն Հայաստանում կոլտնտեսություններին հանձնված կուլակաթափված տնտեսությունների գույքի արժեքը հասնում էր 1843,7 հազար ռուբլու, որը կազմում էր կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդի 51 տոկոսը։ Կուլակային արտադրամիջոցներով համալրվել էր կոլտնտեսությունների 42,5 տոկոսը[129]։ Կուլակներից բռնագրավված գույքի մյուս մասը վճարվել էր նրանց պարտավորությունների դիմաց, ինչպես նաև բաժանվել էր չքավորների միջև։ Ամբողջ բռնագրավված գույքի մասին վստահելի տվյալներ չունենք։ Չնայած այդ մասին տվյալներ կան կուլակաթափության ցուցակներում, սակայն թվական ցուցանիշների անբավարար մշակվածության պատճառով խուսափում ենք դրանց դիմել։

Ընդհանուր տվյալներ չունենք նաև արտաքսված (չնայած հատուկ որոշում էր եղել նրանց հաշվի առնելու մասին) և տեղում մնացած տնտեսությունների քանակի մասին։ Կարող ենք բերել, սակայն, հետևյալ տվյալները և փաստերը։ Մեղրու շրջանում ապակուլակացված տնտեսությունների մեծ մասը արտաքսվել էր շրջանից։ Ղամարլուի շրջանից արտաքսվել էին 120 տնտեսություններ, իսկ 36-ը թողնվել էին տեղում։

---

128 Տե՛ս ՀՍՍՀ ՀԱՄԿ ՊԿԱ, ֆ. 163, ց. 2, գ. 2022, թ. 2։

129 Տե՛ս «Колхозы в 1930 г. Итоги рапортов колхозов XVI съезду ВКП(б)», М.—Л., 1931, стр. 223.

Այստեղ 16 մարդ ձերբակալվել էր պետքաղվարչության կողմից։ Դուզքենդի շրջանում ևս մեծամասնությունը ենթակա էր արտաքսման։ Նույն կատեգորիայի մեջ էին Աղբաբայի և Ստեփանավանի շրջանների գրեթե բոլոր կուլակաթափված տնտեսությունները[130]։ Սևանի գավառի ունեզրկված տնտեսությունները հիմնականում թողնվել էին տեղում, իսկ փոքր մասը փոխադրվել էր ավյալ շրջանի այլ գյուղեր կամ հարևան շրջան։ Կարծում ենք, որ ի վերջո հիմնականում Սևանի գավառի Բասարգեչարի, Մարտունու, Նոր Բայազետի, Կարմիրգյուղի շրջաններում և այլ գավառներում, ինչպես նաև Հանրապետության քաղաքներում ու նրանից դուրս վերաբնակվեց կուլակաթափված տնտեսությունների մեծ մասը։ Տեղում մնաց ավելի փոքր մասը։ Մեզ առանձին փաստեր են հայտնի նաև Հայաստանից դուրս (Սովետական Միության հյուսիսային և այլ շրջաններ) աքսորելու մասին[131]։

Սովետական իշխանությունը հոգ տարավ ինչպես տեղում մնացած, այնպես էլ արտաքսված տնտեսությունների մասին, որպեսզի նրանք ստանան հողաբաժին, ունենան վարուցանքի միջոցներ, մի խոսքով, վարեն աշխատավորական տնտեսություն, ի վերջո ներգրավվեն սոցիալիստական շինարարության մեջ, վերադաստիարակվեն որպես սոցիալիստական երկրի քաղաքացիներ։

ՀՍԽՀ Կենտգործկոմը 1930 թ. ապրիլի 14-ին քննեց Սևանի գավառ աքսորված ընտանիքների տեղավորման հարցը և հողժողկոմատին առաջարկեց հատուկ հանձնաժողովի միջոցով արագացնել նրանց բնակեցման հետ կապված հարցերի լուծումը[132]։ Նույն թվականի նոյեմբերի 17-ին Կենտգործկոմը լսեց հողժողկոմատի զեկուցումը ապակուլակացման կարգով վտարվածներին այլ գյուղերում մշտական բնակության համար տեղավորելու և հողով բավարարելու ուղղությամբ կատարած աշխատանքների մասին[133]։

Այսպիսին են Հայաստանում կուլակության որպես դասակարգի վերացման քաղաքականության կենսագործման հիմնական հանրագումարները։

Այսպիսով, 1930 թ. առաջին ամիսներին կուլակությանը հասցվեց ջախջախիչ հարված, իսկ նրա մի զգալի մասը վերացվեց որպես շահագործող տարր։

---

130 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 3, գ. 385, թ. 52—54, 117, 147, 150։

131 Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 421, թ. 196, գ. 448, թ. 1, ց. 6, գ. 59, թ. 53։

132 Տե՛ս նույն տեղում, գ. 239, թ. 6։

133 Տե՛ս նույն տեղում, գ. 299, թ. 3, 6։

1930 թ. կեսերից կուլակությանը սահմանափակելու և արտամղելու քաղաքականությունը ուժի մեջ էր ամբողջ Հայաստանում։ Ուժեղացվեց հարձակումը կուլակության դեմ։ Ձեռնարկվեցին նոր սահմանափակող միջոցառումներ։ Այսպես, ՀՍԽՀ ժողկոմխորհը 1930 թ. փետրվարի 20-ին որոշում ընդունեց ցանքատարածություններն ընդարձակելու միջոցառումների մասին, որի համաձայն կուլակների և ունևորների կողմից չցանված հողերը վերցվում և հանձնվում էին կոլտնտեսություններին։ Իսկ եթե վերջիններս ի վիճակի չէին ապահովելու այդ հողերի մշակումը, ապա դրանք բաժանվում էին հողազուրկ տնտեսություններին[134]։

Կուլակների վրա դրվում էին ցանքի և գյուղատնտեսական մթերքներ հանձնելու կայուն առաջադրանքներ։ Այն չկատարելու և սաբոտաժի ենթարկելու դեպքում նրանք դատապարտվում էին։ Հաճախ տեղի էին ունենում ցուցադրական դատավարություններ։

1930 թ. վերջերին Վեդիի ժողովրդական դատարանը մի շարք ցուցադրական դատավարություններ կազմակերպեց «բամբակի բերքը դիտավորյալ կերպով փչացնողների և մթերման պայմանագրերը դիտավորյալ կերպով վիժեցնողների նկատմամբ»։ Մի քանի կուլակ և ձայնազուրկ տարրեր դատապարտվեցին 6—8 տարվա և այլ ժամկետներով ազատազրկման։ 1931 թ. հունվարին Բասարգեչարում հայտնի կուլակներից մեկը 9 տարվա ազատազրկման դատապարտվեց այն բանի համար, որ դիտավորյալ կերպով չէր ցանել 6 հեկտար հողամաս, խուսափել էր մթերումներից (թաքցրել էր 40 ցենտներ հացահատիկ և այլ մթերքներ), շարամտորեն փչացրել էր 20 խոշոր և 160 գլուխ մանր եղջերավոր անասուն, թաքցրել էր 3 հրացան։ Բռնագրավվեց նաև նրա ամբողջ գույքը։ Ժողովրդական դատարանը երկու տարով ազատազրկեց Դիլիջանի շրջանի Պողոսքիլիսա գյուղի երկու կուլակների, որոնք գարնանացանի առաջադրանքը կատարել էին միայն 10—15 տոկոսով։ 1932 թ. դատական պատասխանատվության ենթարկվեցին Վաղարշապատի շրջանի Փարաքար գյուղի երեք կուլակներ՝ բամբակի բերքը թաքցնելու համար։ Երկուական տարով ազատազրկվեցին Ղուրդուղուլի շրջանի Մարգարա, Ջաֆարապատ (Արգավանդ), Քյալաղարխ (Շենավան) և Ջանֆիդա գյուղերի 11 կուլակ-ուռճացած տնտեսատերեր, որոնք հրաժարվել էին 1932 թ. բամբակի կայուն առաջադրանքից[135]։

---

134 Տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 3, հոդ. 41։

135 Տե՛ս «Խորհրդային Հայաստան» թերթի 1930—1932 թթ. մի շարք համարներ։

Նման դատավարությունները, որ հաճախ էին ուղեկցվում գույքի բռնագրավումով, փաստորեն հանգեցնում էին կուլակաթափության։

Փորձելով խուսափել սահմանափակման քաղաքականության ճնշումից, կուլակները զանազան ճանապարհներով ձգտում էին վերացնել այն արտաքին հատկանիշները, որոնցով իրենց ճանաչում էին որպես շահագործող տարրեր։ Տնտեսական ճնշման հետևանքով նրանք հրաժարվում էին հողօգտագործման իրավունքից ու հողաբաժնից, թողնում-հեռանում էին գյուղից և շրջանից։ Այսպիսի փաստեր է արձանագրել Կոտայքի շրջգործկոմը 1931 թ. սեպտեմբերի 21-ին Կենտգործկոմ ուղարկած գրության մեջ[136]։ Նման դեպքեր տեղի էին ունենում նաև այլ շրջաններում։ Հատկապես 1930 թ., ինչպես նաև հետագայում, կուլակներն ակսեցին իրենց ջրաղացները հանձնել փոկերին կամ հրաժարվել բատրակներ վարձելուց։

1930 թ. ապրիլի 21-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմ և ՀՍԽՀ Կենտգործկոմ ուղարկած գրության մեջ հողանտառամիությունը հայտնում էր՝ կուլակը, ելնելով օրենսդրության խստությունից, փոխել է իր վերաբերմունքը բանվորական ուժ վարձելու նկատմամբ, դիմելով նոր փորձերի, ինչպես շրավորների ու միջակների մեջ խցկվելը՝ նրանց հետ համատեղ հովիվ-տավարած վարձելով, այնպես էլ երկարատև օրավարձ բանուժից օգտվելը, որը վերջին շրջանում տարածված երևույթ է դարձել[137]։ «Այս գարնանը բատրակների վարձման ժամանակ անհատական բատրակների վարձումը, բացի մասնավոր դեպքերից, համարյա թե վերացել է»[138]։ Հողանտառամիությունը կոնկրետ առաջարկներ էր անում բատրակների շահերը խստորեն պաշտպանելու և կուլակների դեմ հարձակումը, «Աշխատանքի օրենսգիրքը» հետևողականորեն կիրառելու վերաբերյալ։ Այդ առաջարկների ոգով մայիսին հանրապետության Կենտգործկոմը հաստատեց դիրեկտիվ-նամակ («Բատրակների աշխատանքի պաշտպանության մասին»), որն ուղարկեց տեղական իշխանությունների մարմիններին ի գիտակցություն։ Կենտգործկոմը միաժամանակ տեղերն ուղարկեց համապատասխան շրջաբերական։ Պահանջվում էր կազմել գյուղի սոցիալական խմբերի ցուցակները՝ «Աշխատանքի օրենսգիրքը» կուլակային տնտեսությունների և «Ժամանակավոր կանոնները»՝ աշխատավորական տնտեսությունների նկատմամբ ճշտորեն կիրառելու համար։

---

136 Տե՛ս ՀՍՍՀ ՀԱՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 8, գ. 330, թ. 18։

137 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 521, թ. 7—9։

138 Նույն տեղում, թ. 7։

Հասարակական հովիվ-տավարածներ վարձելու դեպքում սահմանվում էր չքավորների, միջակների ու կուլակների տարբերակված վճար։ Հաշվի առնելով օրավարձ բանուժի տարածվածությունը՝ պահանջվում էր նման դեպքերում ևս կնքել աշխատանքային պայմանագիր[139]։

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. հոկտեմբերի 13-ի «Կուլակային տնտեսություններում կիրառվող վարձու աշխատանքի մասին» որոշումը, որը վերաբերում էր ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններին, ավելի էր սահմանափակում վարձու աշխատանքի օգտագործումը և ուժեղացնում բատրակների շահերի պաշտպանությունը։ Աշխատանքային օրենսդրքի պահանջները հետևողականորեն կենսագործվում էին տվյալ շրջանների բոլոր կուլակային տնտեսություններում[140]։ Մի այլ որոշումով սահմանվում էին անհատական (աշխատավորական և կուլակային) գյուղացիական տնտեսություններում վարձու բանվորների սոցիալական ապահովագրության պայմանները (համապատասխանաբար աշխատավարձի 6 և 22 տոկոսի չափով)։ Աշխատավորական գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատողների ապահովագրության կամավորությունը դարձավ պարտադիր[141]։ 1931 թ. մարտի 4-ին ԽՍՀՄ Կենտգործկոմը և Ժողկոմխորհը որոշում ընդունեցին բատրակների և հովիվների աշխատանքային վեճերը քննելու կարգի մասին, որի համաձայն դատարանները խստությամբ պաշտպանում էին վարձու բանվորների շահերը[142]։ Իշխանության բարձրագույն մարմինների մի նոր որոշումով (1930 թ. նոյեմբերի 18) կուլակները և սովետներում ընտրական իրավունքից զրկված մյուս անձինք զրկվեցին կոլտնտեսությունների հետ միասին նաև գյուղատնտեսական այլ կոոպերատիվների, արհեստագործական կոոպերատիվ ընկերությունների և սպառողական կոոպերացիայի անդամ լինելու իրավունքից[143]։

Այսպիսով, սովետական իշխանության մարմինները աշխատում էին բացահայտել կուլակների «ինքնավերացման» փորձերը, ապահովելով սահմանված օրենքների կիրառումը, մասնավորապես անհատական հարկադրումը։ Ուժեղացավ կուլակության սահմանափակումը, նրա

---

139 Տե՛ս նույն տեղում, թ. 2։

140 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 53, հոդ. 551։

141 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 52, հոդ. 546, 548։

142 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1931, № 15, հոդ. 144։

143 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 56, հոդ. 592։ Տե՛ս նաև «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1931, № 15, հոդ. 148։

տնտեսական ու իրավական ճնշումը, ինչպես և բատրակների շահերի պաշտպանությունը։

Կուլակության դեմ հարձակման ուժեղացումը առավել ուժով դրսևորվեց հատկապես հարկային քաղաքականության բնագավառում։ ԱՍՖԵՀ ԺողԿոմխորհը 1930 թ. հունվարի 16-ին որոշում ընդունեց անհատական հարկման մասին։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղի ամենահարուստ վերնախավի անհատական հարկադրումը լրիվ իրեն արդարացրել էր, որոշվեց այն տարածել գյուղի բոլոր կուլակային տնտեսությունների վրա[144]։ 1928—1929 թթ. անհատական հարկման էին ենթարկվում միայն կուլակության վերին, ամենահարուստ խավերը, իսկ 1930 թ.՝ այն բոլոր տնտեսությունները, որոնք, ըստ իրենց հատկանիշների, ճանաչվում էին որպես շահագործող, կուլակային տնտեսություններ, անկախ եկամտի չափից[145]։

1930 թ. մեկ կուլակային տնտեսության գյուղատնտեսական հարկը բարձրացավ 300, իսկ 1931 թ.՝ 380 ռուբլու, այն դեպքում, երբ 1928—1929 թթ. այն 230—240 ռուբլի էր[146]։ 1929/30 ֆինանսական տարում կուլակները վճարել էին գյուղմիասհարկի ամբողջ գումարի 50,5 տոկոսը։ Հարկ վճարող միջակներին (բոլոր տնտեսությունների 39 տոկոս) բաժին էր ընկել ամբողջ հարկի 49,5 տոկոսը, իսկ չքավորները և սակավազոր միջակ տնտեսությունները (56,6 տոկոս) նախկինի նման ազատվում էին հարկից[147]։

Եթե 1928—1929 թթ. կուլակի միայն գյուղատնտեսական հարկը կազմում էր նրա եկամտի 21—22 տոկոսը, ապա 1930—1931 թթ. այն բարձրացավ մինչև 33—35 տոկոսի[148]։ Մինչդեռ աշխատավորական տնտեսությունում այն հասնում էր 1930 թ.՝ 3,9 և 1931 թ.՝ 7,0 տոկոսի[149]։ Կուլակների վրա էր ընկնում նաև ինքնահարկի զգալի մասը։ Նրանք հարկադրվում էին գյուղմիասհարկի 200 տոկոսի չափով։ Նույնը վերաբերում է նաև կուլտհարկին։ Նկատի ունենալով այն հանգամանքը,

---

144 Տե՛ս ՀՍՍՀ ՀԱՍԾ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1545, թ. 15—17։

145 Տե՛ս 1930 թ. և հաջորդ տարիների գյուղմիասհարկի կանոնադրությունները. «ՀՍՍՀ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 3, հոդ. 58, 1931, № 2, հոդ. 135, 1932, № 2, հոդ. 66 և այլն։

146 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 17, գ. 187, թ. 28։

147 Տե՛ս «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր (1928/29—1929/30 թթ.)», Երևան, 1931, էջ 139։

148 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 17, գ. 187, թ. 28։

149 Տե՛ս նույն տեղում, թ. 31.

որ գյուղատնտեսական հարկը կուլակային տնտեսություններում կազմում էր նրանց եկամտի մինչև մեկ երրորդ մասը, ինչպես նաև նրանց վրա դրվող ինքնահարկի ու կուլտհարկի չափերը, դժվար չէ եզրակացնել, որ միայն նշված երեք հարկերը գերազանցում էին կուլակային տնտեսության եկամուտը (1929/30 թ. մեկ կուլակային տնտեսության միայն ուղղակի հարկերը և վճարումները կազմում էին 900 ռուբլի)[150]։ Մինիմալական տվյալներով 500—1000 ռուբլի եկամուտ ունեցող մեկ կուլակային տնտեսության հարկերը (գյուղմիասհարկ, ինքնահարկ, կուլտհարկ) 1931 թ. կազմում էին նրա եկամտի 60—84 տոկոսը։ Իսկ 1500—7000 ռուբլի եկամուտ ունեցողի հարկերը ղդալի չափով գերազանցում էին նրա եկամուտը, կազմելով 106—162 տոկոսը։ Եթե կուլակը վճարում էր միջին հաշվով 314 ռուբլի գյուղհարկ, ապա կոլտնտեսականը վճարում էր ընդամենը 3, իսկ աշխատավորական գյուղացիական տնտեսությունը՝ 31 ռուբլի[151]։ 1932 և 1934 թ. անհատական գյուղացիական տնտեսությունների վրա դրվեց նաև միանվագ հարկ, որը կուլակային տնտեսությունների համար դարձյալ սահմանվեց գյուղհարկի 200 տոկոսի չափով։

Կուլակների նկատմամբ ճնշումը ուժեղացնելու հետ մեկտեղ այս տվյալները վկայում են հարկային քաղաքականության միջոցով գյուղատնտեսության կոլեկտիվացումը խրախուսելու, հեշտացնելու մասին։

Եթե այս ամենին ավելացնենք ցանքի և գյուղատնտեսական մբթերքների կայուն առաջադրանքները, ապա ավելի պարզ կդառնա այն ծանր տնտեսական ճնշումը, որին ենթարկվում էր գյուղական շահագործողը։ Այդպիսի ճնշումը դժվար էր դիմանալ և շատ դեպքերում կարճ ժամանակում այն հանգեցնում էր կուլակի՝ ոչ միայն արտադրամիջոցներից, այլև տարիների ընթացքում շահագործման արդյունքով կուտակած գումարներից զրկվելուն։ Արտադրության միջոցների բռնագրավումը կատարվում էր, իհարկե, դատական կարգով՝ հարկային օրենքները և կայուն առաջադրանքները խախտելու մեղադրանքով։ Այս ձևով կուլակը զրկվում էր շահագործելու հնարավորությունից և դադարում շահագործող լինելուց։ 1930 թ. կեսերից, երբ ամբողջ հանրապետությունում ուժի մեջ էր կուլակության սահմանափակման և արտամղման քաղաքականությունը, և քանի դեռ դանդաղում էր համատա-

150 Տե՛ս Գ. Լոմաշվիլի, նշված աշխ., էջ 421։

151 Տե՛ս М. Залесский, Налоговая политика Советского государства в деревне, М., 1940, стр. 97—98.

բած կոլեկտիվացումն ու նրա հաղթանակը, տնտեսական ճնշումը դարձավ կուլակային տնտեսության վերացման հիմնական եղանակ։

Այս տեսակետից բացառություն կարող է կազմել Ղուրդուղուլին, որը Հայաստանում միակ շրջանն էր, որ ավարտել էր համատարած կոլեկտիվացումը 1931 թ., ինչպես նաև առանձին գյուղեր։ Հիմնականում ավարտելով կոլեկտիվացումը, «կուսակազմակերպությունը և կոլտնտեսական լայն մասսաները,— կարդում ենք Ղուրդուղուլիի շրջանի կուսկոնֆերանսի (1932 թ. հունվար—Վ. Ղ.) նյութերում,— այդ հիման վրա ձեռնարկել են կուլակի, որպես դասակարգի, վերացման գործին»[152]։ Սակայն, ի տարբերություն 1930 թ., այժմ այստեղ կուլակությունը վերացվեց ոչ միանգամից, այլ աստիճանաբար և տարբեր եղանակներով, այսինքն և անմիջական ունեզրկման և տնտեսական ճնշման միջոցով։

Հայաստանում կուլակության վերացման տարբեր եղանակների գործադրումը հաստատող դիտողություններ կան նաև փաստաթղթերում։ Այսպես, գյուղատնտեսական հարկի 1928—1931 թթ. հանրագումարների մասին արխիվային վավերագրում համապատասխան տվյալներից հետո բերված է հետևյալ եզրակացությունը. «Կուլակային տնտեսությունների աստիճանական նվազումը կուլակաթափության և հարկային ու այլ միջոցառումների կիրառման հետևանքով արտադրության միջոցներից նրանց զրկվելու արդյունք է»[153]։

Կուլակության վերացումը տարբեր մեթոդներով էր ընթանում նաև Սովետական Միության այլ շրջաններում, որտեղ դեռևս չէր իրագործվել համատարած կոլեկտիվացումը։ Այդ հարցի կապակցությամբ Ի. Տրիֆոնովը, որն ուսումնասիրել է ՍՍՀՄ-ում շահագործող դասակարգերի վերացման հարցը, հանգել է հետևյալ եզրակացությանը. «Այն շրջաններում, որտեղ չէր ծավալվել համատարած կոլեկտիվացումը, կուլակության ուժեղացված սահմանափակումը և արտամղումը հանդիսանում էր կոմունիստական կուսակցության և սովետական պետության քաղաքականության բաղկացուցիչ մասը, քաղաքականություն, որն ուղղված էր գյուղի սոցիալիստական վերակառուցմանը և դեպի շահագործման բոլոր աղբյուրները գյուղի կապիտալիստական տարրերի մուտքը փակելուն։ ՍՍՀՄ մի շարք շրջաններում կուլակության զգալի մասը դեռևս մինչև համատարած կոլեկտիվացմանն անցնելը դուրս էր մղվել իր սո-

---

152 «Խորհրդային Հայաստան», 1932 թ. հունվարի 12։

153 ՄԼԻ ՀՍՍՀ, ֆ. 1, ց. 17, գ. 187, թ. 28։

ցիալ-տնտեսական դիրքերից և դաղարեցրել շահագործական գոյությունը»[154]։

Սովետական երկրի այդպիսի շրջաններից էր նաև Հայաստանը։

Այս հարցի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ գրականության մեջ արտահայտված համապատասխան տեսակետներին։ Հ. Վարդանյանը գրել է. «Հայկական ՍՍՀ-ում կուլակության հիմնական մասը էքսպրոպրիացիայի է ենթարկվում 1930 թ. (նկատի ունի առաջին ամիսները — Վ. Ղ.)։ Կուլակության մնացած մասը, թվով մոտ հազար տնտեսություն, վերացվում է 1931—1932 թվականների ընթացքում»[155]։ Նախ, հեղինակը ըստ էության չի պարզաբանել այն հարցը, թե ինչպես վերացվեց «կուլակության հիմնական մասը», որքան էր դրա թիվը։ Երկրորդը, վստահելի չէ նրա բերած տվյալը հազար տնտեսության մասին։ Իրականում նրանց թիվը, ինչպես վերևում ցույց տրվեց, ավելի մեծ էր։ Այնուհետև, անհայտ է մնում նաև թե ինչպես իրականացվեց նրանց վերացումը։ Կոնկրետ չէ և ոչինչ չենք ասում այդ կապակցությամբ Հ. Վարդանյանի հետևյալ տողերը. «Այսպես, վճռական պայքար մղելով կուլակության դեմ, հաղթահարելով բոլոր խոչընդոտները ու դժվարությունները, կոմունիստական պարտիան իրագործեց գյուղատնտեսության կոոպերացումը, որի ճանապարհին էլ կուլակությունը, որպես դասակարգ, վերացվեց»[156]։ Այս եզրակացությունը փաստերով չի հիմնավորված։ Այնուամենայնիվ պետք է նշել, որ հեղինակը հիմնականում ճիշտ է որոշել Հայաստանում կուլակության վերացման ժամանակաշրջանը։

Ե. Հովհաննիսյանը խոսելով 1931—1932 թթ. առանձին շրջաններում կուլակային տնտեսությունների հաշվառման արդյունքների մասին, այնուհետև նշում է, թե այդպիսի «ուսումնասիրություններ անց են կացվել Հայաստանի բոլոր շրջաններում, որից հետո միայն հնարավոր է եղել հայտնաբերված կուլակային տնտեսությունների նկատմամբ լիկվիդացման քաղաքականությունը կենսագործել»[157]։ Սակայն հեղինակը չի լուսաբանում, թե ինչպես է իրականացել այդ լիկվիդացիան։

154 *Н. Трифоков,* Ликвидация эксплуататорских классов в СССР, М., 1975, стр. 369.

155 Հ. Վարդանյան, *Հայաստանի կոմպարտիայի պայքարը գյուղում սոցիալիզմի հաղթանակի համար, Երևան, 1967, էջ 77—78։*

156 *Նույն տեղում, էջ 78։*

157 Ե. Հովհաննիսյան, *Դասակարգային պայքարը գյուղում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում, Երևան, 1969, էջ 146—147։*

Բացի այդ, տնտեսությունների հաշվառումը նրանց վերացմանն անցնելու հետ առնչություն չունի։ Այն արվում էր անհատական հարկման և կայուն պարտավորությունների, այսինքն կուլակության սահմանափակման և արտամղման քաղաքականությունը կենսագործելու կապակցությամբ։ Աշխատության մի այլ էջում անդրադառնալով դասակարգային պայքարի փաստերին (1933 թ.), նա նորից արձանագրում է, որ «կուլակները որպես դասակարգ վերացված էին, բայց որպես անհատներ նրանք մնում են, ապրում և պայքարում են»[158]։ Վերջապես, որպես իր շարադրանքի ամփոփում (1936 թ. համար) հեղինակը գրում է, որ Հայաստանի կոմունիստները, անշեղորեն կենսագործելով Վ. Ի. Լենինի պատգամներն ու ցուցումները, իրականացրին «համատարած կոլեկտիվացումը և նրա հիման վրա կուլակության՝ որպես դասակարգի լիկվիդացիան»[159]։ Այսպիսով, Ե. Հովհաննիսյանը պարզ չի պատկերացրել, թե երբ և ինչպես է տեղի ունեցել կուլակության որպես դասակարգի վերացումը։ Նա այն հասցնում է մինչև 1932 թ., ապա նաև մինչև 1936 թ.։ Մյուս կողմից, նա կուլակության վերացումը կապում է, իհարկե, առանց հիմնավորելու, միայն համատարած կոլեկտիվացման հետ։ Իրականում, ինչպես վերևում ցույց տրվեց, Հայաստանում կուլակության որպես դասակարգի վերացումը կենսագործվել է բաղմաստան ձևերով։ Այն տեղի է ունեցել ոչ թե համատարած կոլեկտիվացման հիման վրա, որը հիմնականում իրականություն դարձավ միայն 30-ական թվականների կեսերին, այլ նախորդել է դրան։

Նկատենք, որ սովետահայ հեղինակների մոտ կուլակության որպես դասակարգի վերացման հետ կապված սխալների արմատը թաքնված է այն բանի մեջ, որ նրանք բոլորը, գրեթե առանց բացառության, կուլակության վերացումը ենթադրել են միայն համատարած կոլեկտիվացման հիման վրա։

Այնուհետև, ԵՄԿԿ պատմության բաղմահատորյակում նշված է, որ Անդրկովկասի բամբակագործական շրջաններում կուլակությունը որպես դասակարգ վերացվել է 1932 թ., երբ Անդրերկոմը առանձին որոշումով (ապրիլի 10) հնարավոր համարեց տեխնիկական մշակույթների շրջաններում անցնելու համատարած կոլեկտիվացման ավարտմանը և կուլակության որպես դասակարգի վերացմանը[160]։

---

158 Նույն տեղում, էջ 155։

159 Նույն տեղում, էջ 168։

160 Տե՛ս «История КПСС», т. IV, кн. 2-ая, М., 1971, стр. 178.

Հայաստանում համատարած կոլեկտիվացումը, ինչպես նշվեց, կենսագործվել էր միայն Ղուրդուղուլիի շրջանում, որտեղ և սկսվեց կուլակության որպես դասակարգի վերացումը: Մյուս երեք բամբակագործական շրջաններում (Վաղարշապատ, Ղամարլու, Վեդի) Անդրերկոմի որոշումը չիրագործվեց:

Բաղմահատորյակում գրված է նաև, թե երկրամասի մյուս շրջաններում կուլակության վերացումը տեղի էր ունենում «համատարած կոլեկտիվացման ծավալմանը համապատասխան»[161]: Հայաստանի համար այս տեսակետը ճիշտ չէ, որովհետև տվյալ ժամանակաշրջանում, ինչպես նաև հետագայում գրեթե ամբողջ Հանրապետությունում, կրկնում ենք, կուլակության վերացումը իրագործվել էր համատարած կոլեկտիվացումից անկախ:

Այսպիսով, Հայաստանում կուլակներին սահմանափակելու և արտամղելու քաղաքականությունից նրանց որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանն անցնելը տեղի ունեցավ 1930 թ. հունվարին: Հունվար-փետրվար ամիսներին իրագործվեց կուլակների որպես դասակարգի վերացումը համատարած կոլեկտիվացման հիման վրա: Կուլակաթափություն տեղի ունեցավ նաև ոչ համատարած կոլեկտիվացման շրջաններում: Կուլակաթափությունը շոշափեց միայն կուլակության մի մասը: Կոլեկտիվացման սխալներն ուղղելուց հետո Հանրապետությունում համատարած կոլեկտիվացման շրջաններ այլևս չկային: Համատարած կոլեկտիվացման, հետևաբար նաև կուլակության որպես դասակարգի վերացման լոզունգը ժամանակավորապես հանվեց, իսկ կուլակաթափությունը մնաց որպես իրականություն:

Թույլ տրված սխալների ու խոտորումների շտկումից հետո ամբողջ Հայաստանում ուժի մեջ մնաց կուլակության սահմանափակման և արտամղման, համատարած կոլեկտիվացումը և դրա հիման վրա կուլակության որպես դասակարգի վերացումը նախապատրաստելու քաղաքականությունը:

1931 թ. համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտել էր միայն Ղուրդուղուլիի շրջանը, որի հիման վրա սկսվեց կուլակների վերացումը: Այն ընթանում էր աստիճանաբար: Ամբողջ Հանրապետությունում շարունակվում էր կուլակության վերացումը նրա սահմանափակման և արտամղման քաղաքականության միջոցով:

---

161 Նույն տեղում, էջ 179:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԳՅՈՒՂԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. ՍՈՎԵՏՆԵՐԻ ԴՈՐՄՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑՈՒՄԸ ԵՎ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ

Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացմանն անցնելը նոր խնդիրներ և պահանջներ էր դնում գյուղական սովետների և կուսակցական կազմակերպությունների առջև։ Նրանց աշխատանքները վերակառուցվեցին նոր պայմաններին համապատասխան։ Այդ խնդիրները շարադրված են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումի, ապա կոմունիստական կուսակցության XVI համագումարի (1930 թ. հունիս) որոշումներում։

Համատարած կոլեկտիվացման շահերը պահանջում էին ղեկավարումը ավելի մոտեցնել գյուղական շրջաններին, ուժեղացնել վերջիններիս ղեկավարությունը և օգնությունը։ Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ օկրուգների վերացումը, որի մասին համապատասխան որոշում ընդունեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմը, 1930 թ. հուլիսի 15-ին[1]։ Իսկ կուսակցության XVI համագումարը հավանություն տվեց Կենտկոմի որոշմանը «օկրուգները վերացնելու և շրջանը, որպես գյուղում սոցիալիստական շինարարության հիմնական օղակ, ամրապնդելու վերաբերյալ, որը պետք է կուսակցական-սովետական ապարատը վճռականորեն մոտեցնի գյուղին, կոլտնտեսություններին, մասսաներին»[2]։

ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. օգոստոսի 5-ի որոշումով վերացվեցին հանրապետության գավառները (օկրուգ)։ Գավառային սովետների ֆունկցիաներն անցան շրջաններին, իսկ գյուղսովետներում կազմակերպվում էին ինքնուրույն բյուջեներ։ Մինչ այդ գոյություն ունեցող վարչատնտեսական բաժանման եռաստիճան սիստե-

---

[1] *Տե՛ս* «Правда», 16 июля 1930 г.

[2] *«ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 23։*

մի (սովետ, շրջան և գավառ կամ օկրուգ) փոխարեն գործողության մեջ դրվեց երկաստիճան սիստեմը (սովետ և շրջան)։ Հինգ գավառի (օկրուգ) և դրանց մեջ մտնող 31 շրջանի փոխարեն հանրապետությունը բաժանվեց 25 շրջանի։ Հետագայում կազմակերպվեցին նորանոր շրջաններ և դրանց թիվը Հայրենական պատերազմի նախօրյակին հասավ 37-ի։ 30-ական թվականների սկզբին Հայաստանում գոյություն ուներ մոտ 500 գյուղսովետ։

Բարձրացավ իշխանության տեղական մարմինների՝ սովետների դերն ու նշանակությունը, ընդլայնվեցին նրանց իրավունքները և գործունեության սահմանները։ Ընդունվեցին գյուղական սովետների, ինչպես նաև սովետների շրջանային համագումարների ու շրջգործկոմների նոր կանոնադրություններ։

Վերացված գավառային կուսակցական ու սովետական մարմինների կադրերի մեծ մասը ուղարկվեց շրջանները։ Մոբիլիզացիայի և այլ միջոցներով զգալիորեն ամրապնդվեցին նաև գյուղական սովետները։ Շրջաններին ու գյուղերին տրամադրվեց գավառային աշխատողների (ընդամենը 530 մարդ) 90 տոկոսը։ Նախատեսվում էր առաջիկայում հեռախոսային կապով ապահովել բոլոր շրջանային կենտրոնները։ Մշակվում էր նաև ճանապարհային շինարարության լայն ծրագիր[3]։

Այսպիսով, 1930 թ. վարչատնտեսական վերակառուցումը և գավառների (օկրուգների), որպես միջանկյալ օղակի, վերացումը ավելի ուժեղացրեց շրջանը, բարձրացրեց տեղական կուսակցական և սովետական մարմինների դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման պայքարում և, ընդհանրապես, սոցիալիզմի կառուցման գործում։

Ընդլայնվեց գյուղական և շրջանային սովետների կազմը։ Ավելի մեծ թվով կոլտնտեսականներ, չքավոր ու միջակ գյուղացիներ էին ընդգրկվում իշխանության մարմիններում և կառավարման գործին։

1930 թ. փետրվարին տեղի ունեցավ սովետական աշխատողների հանրապետական խորհրդակցություն, որը քննարկեց վերակառուցման շրջանում գյուղսովետների անելիքների և գյուղսովետների մասնակի վերընտրությունների մասին զեկուցումները։ Խորհրդակցությունը վճռականորեն դատապարտեց համատարած կոլեկտիվացման շրջաններում գյուղսովետները վերացնելու և նրանց իրավասությունը կոլտնտեսություններին հանձնելու մտայնությունը, դիտելով այն որպես դասակարգային թշնամու ցանկություններին արտահայտություն։ Խորհրդակ-

---

3 Տե՛ս ՀՍՍՀ ՀԱՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 2307, թ. 56։ Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1930 թ. սեպտեմբերի 16։

ցությունը ընդգծեց, որ գյուղսովետների գործունեության նշանաբանը պետք է լինի «Երևաններս դեպի կոլեկտիվացում» լոզունգը[4]:

Նույն թվականի փետրվար-մարտին անցկացվեցին գյուղսովետների արտահերթ և մասնակի վերընտրություններ, որոնց նպատակն էր բարձրացնել սովետների դերն ու մարտունակությունը համատարած կոլեկտիվացման ծրագիրն իրականացնելու պայքարում[5]: Վերընտրություններ տեղի ունեցան միայն Երևանի, Լենինականի ու Լոռու գավառների ընդամենը 85 գյուղսովետներում: Զանգեզուրի և Սևանի գավառներում այդպիսիք չկայացան «մի շարք օբյեկտիվ անհարմար պայմանների» պատճառով[6]: Պետք է նշել, որ գյուղում ստեղծված քաղաքական բարդ իրադրության պատճառով սովետների 1930 թ. մասնակի վերընտրություններին չվիճակվեց էական դեր խաղալ ինչպես կոլտնտեսային շարժման կազմակերպման, այնպես էլ սովետների պատմության մեջ:

1930 թ. վերջին և 1931 թ. սկզբին տեղի ունեցավ սովետների հերթական հաշվետու-վերընտրական կամպանիան, որը առաջինն էր վարչական ռեֆորմից հետո:

Գյուղական սովետների հաշվետու ժողովներին մասնակցեց բոլոր ընտրողների 51,3 տոկոսը, իսկ ընտրական ժողովներին մասնակցեցին ավելի մեծ թվով ընտրողներ: Ընտրական ժողովների մասնակիցները կազմում էին 62,8 տոկոս, ուր կանայք կազմում էին 43,2 տոկոս: Ջայնաղուրկների տեսակարար կշիռը 3,5 տոկոս էր[7]: Այն զգալի չափով պակաս էր նախորդ հաշվետու ընտրական կամպանիայի (1928—1929 թթ.) համեմատությամբ, որը վկայում է կուլակության և մյուս հակասովետական տարրերի թվի կրճատման մասին: Գյուղսովետներում ընտրվեցին 18.348 մարդ, այդ թվում 2776 կին: Սովետների կազմի 25,7 տոկոսը կոլտնտեսականներ էին (այդ ցուցանիշը զգալի չափով բարձր էր կոլեկտիվացման մակարդակից), 52,3 տոկոսը՝ մենատնտեսներ (չքավորներ և միջակներ), իսկ մյուսները՝ բանվորներ և ծառայողներ: Գյուղսովետների նախագահություններում կոլտնտեսականների տեսակարար կշիռը հասնում էր 35,9, իսկ գյուղսովետների նախագահների թվի մեջ՝ 44,8 տոկոսի[8]: Այդ տվյալները ցույց են տալիս, որ կոլտնտեսականները սկսում էին մեծ դեր խաղալ գյուղի կյան-

---

4 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 142, թ. 1—20:

5 Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 79, թ. 81—85:

6 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 203, թ. 103—105:

7 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 23, գ. 186, թ. 59—96:

8 Տե՛ս նույն տեղում, ց. 17, գ. 187, թ. 13—22:

քում և տեղական իշխանության գործունեության մեջ։ Գյուղսովետների կազմում կուլակագյականները և կոմերիտականները կազմում էին մոտ 38 տոկոս։ Նրանց թիվը ավելի մեծ էր գյուղսովետների նախագահների կազմում, հասնելով մինչև 81 տոկոսի[9]։ Կոմունիստները և կոմերիտականները առաջատար դեր էին խաղում սովետներում և նրանց ղեկավարության մեջ։

Սովետների հաշվետու-վերընտրական կամպանիան սերտորեն շաղկապվում էր օրվա հրատապ հարցերի, և առաջին հերթին կոլտնտեսային շարժման նոր վերելքի կազմակերպման հետ[10]։ Այդ կամպանիան ընթանում էր սուր դասակարգային պայքարի պայմաններում։ «Գյուղում աշխուժացել էին կուլակային և հակահեղափոխական տարրերը, որոնք ամեն կերպ ձգտում էին ակտիվ պայքարով ձախողել այնքան կարևոր և քաղաքական նշանակություն ունեցող այդ կամպանիան,— կարդում ենք ընտրությունների ընթացքի մասին ինֆորմացիայում,— նրանք գործում էին իրենց կողմնակիցների՝ դասակարգային տեսակետից անկայուն չքավորամիջակային տարրերի, իսկ առանձին դեպքերում նաև կանանց միջոցով։ Երբեմն դիմում էին բացահայտ ղեմագոգիական ելույթների, գործադրելով ահաբեկման մեթոդներ ու տարածելով ամեն տեսակի պրովոկացիա։ Չէին խնայում նաև իրենց միջոցները քեֆեր սարքելու, հյուրասիրություններ, կնունք ու հարսանիք կազմակերպելու համար...»[11]։ Սակայն դասակարգային թշնամու դիմադրությունը ճնշվեց։ Ձախողվեցին նրա բոլոր փորձերը հաշվետու և ընտրական ժողովները խափանելու և իրենց կողմնակիցներին ու թեկնածուներին սովետներում անցկացնելու ուղղությամբ։

Հաշվետու-վերընտրական կամպանիան, որն ավարտվեց սովետների նոր կազմի ընտրությամբ, կարևոր դեր խաղաց չքավորների և միջակների նոր զանգվածներ կոլտնտեսություններ ներգրավելու գործում։

1931 թ. փետրվարին կայացավ հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների նորընտիր սովետների VII համագումարը, որը քննարկեց ԱՍՖԽՀ և ՀՍԽՀ կառավարությունների հաշվետվությունները, լուսժողկոմատի՝ ընդհանուր պարտադիր ուսման ու անգրագիտության վերացման և հողժողկոմատի՝ գյուղատնտեսության վերելքի ու սոցիալիստական վերակառուցման մասին զեկուցում-

---

9 Տե՛ս նույն տեղում, ց. 23, գ. 186, թ. 59—96։

10 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 7, գ. 111, թ. 1—4։

11 Նույն տեղում, թ. 4։

ները և այլ հարցեր[12]։ Շրջանային համագումարներում հանրապետական համագումարի համար ընտրվել էին 476 պատգամավորներ (1929 թ. նախորդ համագումարի 399 պատգամավորների դիմաց)։ Պատգամավորների մեջ բանվորներ էին 29,2, գյուղացիներ՝ 26,9 (կոլտնտեսականներ և մենատնտեսներ), ծառայողներ՝ 36,6 տոկոսը[13]։ Շրջաններից եկած պատգամավորները բարձրացնում էին գյուղի և կոլեկտիվացման զարգացման հրատապ հարցեր[14]։

Համագումարի հասցեով ուղարկած իրենց զեկույցներում գյուղի աշխատավորները պատմում էին կոլեկտիվացման և արտադրական նրվաճումների մասին և խոստանում էին բազմապատկել իրենց հաջողությունները։ «Մենք,— ասված է Ղուրդուղուլիի շրջանից ստացված զեկույցում,— ամուր ու հաստատ քայլերով դիմում ենք դեպի համատարած կոլեկտիվացում և այդ հիման վրա նախապատրաստում ենք կուլակության վերացումը որպես դասակարգ»[15]։

Այսպիսով, 1930—1931 թթ. սովետների հաշվետու-վերընտրական կամպանիան և սովետների շրջանային ու հանրապետական համագումարները բարձրացրին կոլտնտեսականների, չքավոր ու միջակ գյուղացիների քաղաքական-հասարակական ակտիվությունը, կարևոր դեր խաղացին կոլտնտեսային նոր վերելքի նախապատրաստման գործում։

Սովետների գործունեության ամրապնդմանը նպաստեց նաև սովետական պետական ապարատի ստուգումը և զտումը, որն իրականացվեց 1930—1932 թթ.։ Այդ կամպանիայի մեջ ընդգրկվեց ընդհանուր առմամբ մինչև 100 հազար մարդ։ Մինչև 1932 թ. սկիզբը պետական ապարատից զտվեց մոտ 500 մարդ, որոնք սովետական աշխատանքի համար խորթ, անհարազատ և բյուրոկրատական տարրեր էին։ Այս նույն կամպանիայի ժամանակ պետական կենտրոնական ապարատում աշխատելու համար առաջ քաշվեցին 70 կոլտնտեսականներ[16]։ Այդ ամենի շնորհիվ բարձրացավ աշխատավոր մասսաների հսկողությունը սովետների և պետական ամբողջ ապարատի վրա, նրանց հեղինակությունն ու պատասխանատվությունը։

---

12 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 817, 818 (համագումարի սղագրությունը)։

13 Տե՛ս ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 1, ց. 17, գ. 187, թ. 13—22։

14 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. փետրվարի 18։

15 «Խորհրդային Հայաստան», 1931 թ. փետրվարի 14։

16 Տե՛ս Ա. Խանջյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը VIII համագումարին, էջ 117—118։

2. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Կոլտնտեսային շարժման զարգացման նոր պայմաններին համապատասխան իրենց աշխատանքները վերակառուցեցին գյուղի կուսակցական, կոմերիտական, բոլոր հասարակական կազմակերպությունները։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման վերելքին զուգընթաց աճում և ամրապնդվում էին գյուղական կուսակցական կազմակերպությունները, որոնք հանդիսանում էին կոլեկտիվացման գործի անմիջական կազմակերպողները և կենսագործողները, ինչպես նաև գյուղի հասարակական-քաղաքական կյանքի ղեկավարները։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ծավալելու կապակցությամբ առաջին պլանի վրա մղվեց գյուղական կուսակցական կազմակերպությունների ամրապնդման խնդիրը։ «Այդ կազմակերպության քանակական և որակական ամրապնդումը, ուժեղ կուսակցական բջիջների ստեղծումը սովխոզներում ու կոլտնտեսություններում, սովխոզները և կոլտնտեսությունները գյուղում կուսաշխատանքի հենակետեր դարձնելը, կուսակցության մեջ գյուղատնտեսական բանվորների, բատրակների ու լավագույն կոլտնտեսականների ներգրավումը, չքավորության, կոլտնտեսություններում կանանց ու երիտասարդության մեջ կատարվող աշխատանքը պատշաճ բարձրության վրա դնելը,— ասված է ՍՄԿԿ XVI համագումարի բանաձևում,— դառնում է գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ կուսակցության հաջող աշխատանքի անհրաժեշտ նախադրյալը»[17]։

Մինչև համատարած կոլեկտիվացմանն անցնելը գյուղական կազմակերպությունները կառուցված էին տերիտորիալ սկզբունքով։ 1929 թ. վերջերին հարց բարձրացվեց խոշոր կոլտնտեսություններին կից կուսկազմակերպություններ ունենալու մասին։ Կոլեկտիվացման աճի և կոլտնտեսությունների խոշորացման հետ միասին աճեց նաև կոլտնտեսային (արտադրական) կազմակերպությունների թիվը, որոնք զբաղվում էին միայն կոլտնտեսությունների հարցերով, իսկ տերիտորիալ կազմակերպությունները՝ գյուղին վերաբերող մնացած հարցերով։ 1931 թ. փետրվարին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը հաստատեց կոլտնտեսային կուսբջիջ-

---

17 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 22։

ների կանոնադրությունը[18]։ Դրա հիման վրա ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշեց կոլտնտեսություններին կից կազմակերպել կուսբջիջներ[19]։

1930 թ. շարունակվեց և ավարտվեց նախորդ տարում կուսակցության XVI կոնֆերանսի որոշումով սկսված կուսշարքերի զտումը, որը օգնեց բարձրացնելու կուսկազմակերպությունների մարտունակությունը և հաջողությամբ պայքարելու գյուղացիական հարցում դրսևորված թերությունների դեմ։ Ըստ ՀԿ(բ)Կ ԿՎՀ-ի վերջնական տվյալների և ՀԿ(բ)Կ VII համագումարին (1930 թ. մայիս) նրա ներկայացրած հաշվետվության, Հայաստանի կուսակցական կազմակերպությունից հեռացվեց 1506 մարդ, այդ թվում 905-ը կամ 60 տոկոսը բաժին էր ընկնում գյուղական բջիջներին։ Հեռացվածների մեծ մասը կուսակցության համար խորթ տարրեր էին, կուսակցության դասակարգային գիծը խեղաթյուրողներ, խորթ տարրերին հովանավորողներ, խառնակիչներ և ուրիշներ[20]։

Հենց այն ամիսներին, երբ շարունակվում էր կուսշարքերի ստուգումը և զտումը, ինչպես նաև գյուղում թույլ տված հակամիջակային սխալների ուղղումը, գյուղական կուսակցական կազմակերպությունները ավելի աճեցին ու բազմացան։ Միայն 1930 թ. երկրորդ եռամսյակում գյուղական բջիջներն ընդունեցին 1540 անդամ-թեկնածու։ 1930 թ. հուլիսի 1-ին գյուղում հաշվվում էր 8.058 կոմունիստ[21]։ Գյուղական կոմունիստների աճը վկայում էր այն մասին, որ սխալներն ուղղելու ուղղությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը դրական արդյունքներ էր տալիս և գյուղում նրա հեղինակությունը բարձրանում էր։ ՀԿ(բ)Կ VII համագումարից մինչև VIII համագումարը, այսինքն մեկ և կես տարում (1930 թ. մայիսից մինչև 1932 թ. փետրվարը), երբ կոլեկտիվացումը զգալի վերելք ապրեց, գյուղի կուսակազմակերպությունները համալրվեցին 3129 նոր անդամներով[22]։ Դա մեծ նվաճում էր Հայաստանի կոմունիստական կուսակցության համար։

1929 թ. 368-ի դիմաց 1932 թ. սկզբին գյուղում գործում էին 670 կուսբջիջներ, որից կոլտնտեսային էին (արտադրական) 129-ը և գյուղական (տերիտորիալ)՝ 507-ը։ Նրանցից 29-ը կազմակերպված էին

---

18 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 363—370.

19 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 16, գ. 1, թ. 197։

20 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. մայիսի 29։

21 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. օգոստոսի 16։

22 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 19, գ. 4, թ. 75։

սովխոզներում, իսկ 5-ը՝ ՄՏԿ-ներում[23]։ 1931 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ գյուղական բջիջների անդամ-թեկնածուների թիվը հասնում էր 9.293-ի, որը կազմում էր Հանրապետության բոլոր կոմունիստների 47,5 տոկոսը։ Նրանցից 6530-ը կամ 60 տոկոսը գտնվում էին գյուղական, իսկ 2355-ը կամ 25 տոկոսը՝ կոլտնտեսային բջիջներում։ Սովխոզային բջիջներն ունեին ընդամենը 340 և ՄՏԿ-ներինը՝ 68 կոմունիստ[24]։ Կուսակցության շարքերի ամրապնդման մյուս միջոցը նրա պրոլետարացումն էր։ Գյուղում ավելի ու ավելի մեծ թվով բատրակներ, ինչպես նաև կոլտնտեսականներ էին ընդունվում կուսակցության մեջ։ 1929 թ. հունվարի 1-ից մինչև 1931 թ. հունվարի 1-ը, այսինքն երկու տարվա ընթացքում Հայաստանի կոմկուսի մեջ պրոլետարական կորիզը 42,3-ից բարձրացավ 49,8 տոկոսի։ Գյուղացիության տեսակարար կշիռը պահպանվեց (39—40 տոկոս)։ Իսկ կոմունիստ գյուղատնտեսական բանվորների և բատրակների թիվը կազմում էր ընդամենը 621 մարդ՝ 1931 թ. հունվարի 1-ի դրությամբ[25]։ Դա բավական քիչ է, եթե նկատի ունենանք, որ բատրակների թիվը, ըստ որոշ տվյալների, հասնում էր մինչև 15 հազարի։ 1931 թ. ապրիլին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց լավագույն բանվորներին, բատրակներին, կոլտնտեսականներին ու չքավորներին կուսակցության մեջ ընդունելու մասին[26]։ Այդ որոշման նպատակն էր ավելի ուժեղացնել Հայաստանի կոմունիստական կուսակցության պրոլետարական կորիզը։

Կուսակցական-կազմակերպական աշխատանքը գյուղում ուղեկցվում էր քաղաքական-մասսայական և բացատրական աշխատանքի ուժեղացումով, որի գլխավոր նպատակը գյուղի աշխատավորների քաղաքական մակարդակի բարձրացումը և կամավոր կոլտնտեսային շարժման զարգացումն էր։

1929/30 քաղաքական ուսումնական տարում Հանրապետությունում գործում էր 386 դպրոց ու խմբակ, ավելի քան 10 հազար ունկնդիրներով, իսկ հաջորդ ուստարում՝ 424 դպրոց, ավելի քան 12 հազար ունկընդիրներով։ Կուսակցական ուսուցման ցանցում գյուղական կոմունիստների ընդգրկումը 30-ից բարձրացավ 50 տոկոսի[27]։ 1932 թ. Հա-

---

23 Տե՛ս նույն տեղում։

24 Տե՛ս նույն տեղում, ց. 17, գ. 151, թ. 14։

25 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 151, թ. 2—3։

26 Տե՛ս «Մաճկալ», 1931 թ. ապրիլի 25։

27 Տե՛ս ՄԼի ՀՅԱ, ֆ. 1, ց. 18, գ. 1, թ. 143—145։ Տե՛ս նաև «Լենինյան ուղի», 1931, № 7—8, էջ 70—73։

յաստանում գործում էին նաև երկու կոմունիստական համալսարան, չորս շրջանային կուսդպրոց, դասընթացներ։ Կարճատև դասընթացներն ավարտել էին 275 գյուղբջիջների քարտուղարներ[28]։

Գյուղի կուսակցական-կազմակերպական և քաղաքական-մասսայական աշխատանքներին նոր զարկ տրվեց Անդրկովկասի կուսկազմակերպությունների աշխատանքի մասին Համ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշման շնորհիվ, որի մասին կխոսվի աշխատության հաջորդ գլխում։

Գյուղում կուսակցական աշխատանքի ամրապնդման նոր միջոցառումներից էր հենակետային բջիջների կազմակերպումը։ 1931 թ. հոկտեմբերի 31-ի հայտնի որոշման մեջ Համ(բ)Կ Կենտկոմը Անդրերկրամի և աղգային կոմկուսների կենտկոմների ուշադրությունը հրավիրեց գյուղի կուսկազմակերպությունների ստեղծման ու ամրապնդման վրա և պահանջեց առաջին հերթին սովխոզներում, ՄՏԿ-ներում և խոշոր կոլտնտեսություններում կազմակերպել մի շարք ամուր հենակետեր, որոնք ապահովելու էին գյուղական բջիջների իսկական բոլշևիկյան ղեկավարումը։

Հենակետային կուսակցական կազմակերպությունները ընդգրկելով շրջակա կուսբջիջները, նպատակ ունեին ուժեղացնել քաղաքական-մասսայական աշխատանքը և ամրապնդել կոլտնտեսային շարժումը։ 1932 թ. հունիսին գյուղում գոյություն ունեին 360 կոլտնտեսային, 45 հենակետային, 35 սովխոզային և 7 մեքենատրակտորային կայանների կուսակցական բջիջներ, 404 կուսխմբակներով և 1653 կուսկազմակերպիչներով։

Վերակառուցվեց նաև լենինյան կոմերիտմիության գործունեությունը։ Հայաստանի կոմերիտական կազմակերպությունները մեծ աշխատանք կատարեցին ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման գործը առաջ տանելու ուղղությամբ։ 1930 թ. Հանրապետության կոմունիստական երիտասարդական միության մեջ հաշվվում էր 40 հազար պատանի և աղջիկ, որից 30 հազարը գտնվում էր գյուղում[29] և ընդգրկված էր 750 բջիջներում[30]։ Կոլեկտիվացման տեսակետից առաջավոր Ղուրդուղուլի շրջանում 1930 թ. վերջին կոլտնտեսականներ էին

---

28 Տե՛ս ՄԿԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 19, գ. 12, թ. 35—44։

29 Տե՛ս «Ավանգարդ», 1930 թ. դեկտեմբերի 24։

30 Տե՛ս «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն», Երևան, 1968, էջ 146։

բոլոր կոմերիտականների 80, Շամշադինի շրջանում՝ 47 տոկոսը[31]։ 1930 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ՀԼԿԵՄ VII համագումարը, որը լսեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանի զեկուցումը, քննարկեց Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի հաշվետվությունը, կոլտնտեսային շարժումը և կոմերիտմիության աննլիրները զեկուցումը և այլ հարցեր։ Համագումարին մասնակցում էին 364 պատգամավորներ, որոնցից 170-ը բանվորներ էին, 49-ը բատրակներ, 98-ը չքավոր և 13-ը միջակ գյուղացիներ։ Համագումարը հանրապետության պղնձարդյունաբերության և էլեկտրակայանների շինարարության շեֆությունը դրեց կոմերիտմիության վրա։ Քննադատելով 1930 թ. ձմռանը և գարնանը կոլեկտիվացման ժամանակ թույլ տված սխալները, համագումարը պահանջեց գործնականում կիրառել բոլոր կոմերիտականներին կոլտնտեսություններում և գյուղատնտեսական ընկերություններում ընդգրկելու ծրագիրը։ Որոշվեց առաջիկայում իրականացնել բանվոր և բատրակ երիտասարդությանը լրիվ կոմերիտմիության մեջ ընդունելու լոզունգը, ուժեղացնել առաջավոր կոլտնտեսական և չքավոր երիտասարդների ընդունելությունը։ Խիստ քննադատության ենթարկվեցին երիտասարդ կուլակին կոմերիտմիության մեջ վերադասդիարակելու աջ օպորտունիստական տրամադրությունները։

1931 թ. ընթացքում Հայաստանի կոմերիտմիության անդամների թիվը ավելացավ 18 հազարով, իսկ 1932 թ. առաջին երկու ամսում՝ 1735-ով։ Նույն թվականի հունիսին, երբ կայացավ ՀԼԿԵՄ VIII համագումարը, նրա շարքերում կար 60 հազար անդամ-թեկնածու[32]։ 1932 թ. կոմերիտական բջիջներ ունեին հանրապետության 677 կոլտնտեսություններ, ուր ընդգրկված էր գյուղի կոմերիտականների մեծ մասը։ 1933 թ. կոլտնտեսությունների 250 նախագահներ և 1845 բրիգադավարներ կոմերիտականներ էին[33]։ Կոմունիստների հետ միասին նրանք զեկավար դեր էին կատարում գյուղում և կոլտնտեսային կյանքում։

Գյուղի կոմերիտական կազմակերպությունները ակտիվորեն մասնակցում էին նաև ինդուստրացման դժվարին գործին։ Հարյուրավոր կոմերիտականներ մշտական կամ ժամանակավոր աշխատանքի մեկնեցին Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը, Քանաքեռի և Զորագետի հիդրոէլեկտրակայանների, Դավալուի (Արարատ) ցեմենտի, Ղարաքիլիսա-

---

31 Տե՛ս «Ավանգարդ», 1930 թ. դեկտեմբերի 24 և 27-ի համարները։

32 Տե՛ս «Ավանգարդ», 1932 թ. հունիսի 18։

33 Տե՛ս «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն», էջ 151։

յի (Կիրովական) քիմիական գործարանների շինարարությունները և այլ արդյունաբերական օբյեկտներ։

* * *

Կանանց քաղաքական ակտիվության բարձրացումը կոլտնտեսային շարժման զարգացման կարևոր գրավականն էր։ Կուսակցության XVI համագումարը նշեց, որ գյուղում կանանց մեջ տարվող աշխատանքը դեռևս թույլ է և չի համապատասխանում կոլտնտեսային շարժման զարգացման պահանջներին։ Կուսակցական և հասարակական կազմակերպություններին հանձնարարվեց ուժեղացնել իրենց գործունեությունը աշխատավոր կանանց լայն զանգվածներին մոբիլիզացնելու ուղղությամբ[34]։

Աշխատավոր կանանց շրջանում քաղաքական աշխատանքի կարևոր ձևը բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովներն էին։

1929/30 թ. ընտրվեցին 437 պատգամավորական ժողովներ, մոտ 14 հազար պատգամավորուհիներով, իսկ 1930/31 թ. նրանց թիվը համապատասխանաբար կազմեց 626 և մոտ 22 հազար։ Դրանց մեծ մասը բաժին էր ընկնում գյուղին, ուր պատգամավորական ժողովները գործում էին կոլտնտեսություններին և գյուղսովետներին կից[35]։

Ինչպես ցույց տվեց 1930 թ. գարնանացանի և կոլտնտեսային շինարարության փորձը, ասված է գեղջկուհիների մեջ կուսակցական աշխատանքի մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. ապրիլի 10-ի որոշման մեջ, ամենալ էր աշխատավոր գեղջկուհիների քաղաքական ակտիվությունը և պատգամավորական ժողովների դերը գյուղի հասարակական կյանքում։ Այնտեղ, ուր թերագնահատվել էր կուսակցական ղեկավարման գործը, պատգամավորական ժողովները թույլ էին աշխատել, չէին ապահովել չքավոր և միջակ գեղջկուհիների համախմբումը իրենց շուրջը, որը և հնարավորություն էր տվել դասակարգային թշնամուն կանանց տրամադրելու կոլտնտեսությունների դեմ կամ հրահրել նրանց հակակոլտնտեսային ցույցերի (Զորագյուղ, Բասարգեչար, Հայդարբեկ, ստորական Դվին և այլ գյուղերում)։ Հաշվի առնելով այդ ամենը, ՀԿ(բ)Կ

---

34 Տե՛ս «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 22։

35 Տե՛ս ՄԼԻ ՀՍԱ, ֆ. 1, ց. 21, գ. 335, թ. 21—24։

Կենտկոմը մանրամասն միջոցառումներ մշակեց գեղջկուհիների մեջ կուսակցական աշխատանքը ուժեղացնելու համար[36]։

Աստիճանաբար աճում և ամրապնդվում էին պատգամավորական ժողովները։ Բարձրանում էր նրանց ակտիվությունը և դերը գյուղի հասարակական-տնտեսական կյանքում և կոլտնտեսային շարժման մեջ։ Պատգամավորուհիների ժողովները բավականին նվաճումներ ձեռք բերեցին 1931 թ. գարնանացանի և կոլտնտշարժման նոր վերելքի ժամանակ։ «Որոշակի բեկում է կատարվել աշխատավոր գեղջկուհիների մեջ գեպի կոլտնտեսային շարժման ծավալման գործը,— կարդում ենք ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. ապրիլի 28-ի որոշման մեջ,— պատգամավորուհիների ժողովներին կից կոլտնտշարժման և գարնանացանին օժանդակող բրիգադները նպաստել են ստեղծելու նոր հոսանք գեպի կոլտնտեսությունները»[37]։ Ապա որոշման մեջ բերված է Խաթունարխ գյուղի կին պատգամավորների ժողովի աշխատանքի դրական օրինակը, որտեղ կարողացել էին կոլտնտեսություն ներգրավել 35 մենատնտեսների։ Շամշադինի շրջանում կոլտնտեսությունների մեջ էին ընդունվել 50 տնտեսություններ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշման մեջ շարադրված են այն խնդիրները, որոնց կատարման շնորհիվ կարելի էր վերացնել թերությունները և զարգացնել գեղջկուհիների ակտիվությունը[38]։

1931 թ. ապրիլի 1-ին Համ(բ)Կ Կենտկոմը առանձին որոշում ընդունեց կոլտնտեսուհիների շրջանում տարվող աշխատանքի մասին։ Կուսակցության Կենտկոմը պահանջում էր կոլտնտեսային շարժման նոր վերելքը ամրապնդել կոլտնտեսուհիների շրջանում մասսայական աշխատանքի ծավալման միջոցով և այն օգտագործել մենատնտես գեղջկուհիներին կոլեկտիվացման շուրջը մոբիլիզացնելու համար։ Ոչ համատարած կոլեկտիվացման շրջանների համար կարևոր նշանակություն էր տրվում գյուղսովետներին կից կանանց արտադրական խորհրդակցությունների աշխուժացմանը՝ որպես կոլտնտեսուհիների շուրջը և նրանց ղեկավարությամբ մենատնտես գեղջկուհիներին համախմբելու միջոց։ Առաջվա նման մեծ դեր էր հատկացվում կին պատգամավորական ժողովների գործունեությանը[39]։ Վերջիններիս թիվը Հայաստանում 1931 թ. հասավ 626-ի, ուր ընդգրկված էին 21,9 հազար պատգամավո-

---

36 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. ապրիլի 16։ Տե՛ս նաև ՀԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 13, գ. 35, թ. 19 և 24—25։

37 ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 16, գ. 3, թ. 98։

38 Տե՛ս նույն տեղում։

39 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 383—384.

բուհիներ։ Նորը այն էր, որ այժմ այդ ժողովների զգալի մասը (277) գործում էր կոլտնտեսություններին կից, ավելի քան 7 հազար պատգամավորուհիներով։

Վերակառուցում կատարվեց նաև չքավորների և բատրակների շրջանում տարվող աշխատանքներում։ Համատարած կոլեկտիվացմանն անցնելու պահին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց չքավորության կազմակերպման մասին[40]։ Իսկ կուսակցության XVI համագումարը ընդգծեց, որ չքավորական խմբերի աշխատանքը պետք է բարելավել և ուժեղացնել կոլտնտեսությունների սկզբնական ձևերում, քանի որ «միայն չքավորության վրա հենվելով կարելի է ապահովել պարզագույն միավորումների անցումը կոլեկտիվացման բարձրագույն աստիճանին»։ Չքավորական խմբերը պաշտպանելու էին ոչ միայն չքավորության անմիջական շահերը, այլև աջակցելու էին միջակի հետ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդմանը[41]։

1930 թ. փետրվար-մարտին Հայաստանում կայացան շրջանային և գավառային բատրակային-չքավորական խմբերի կոնֆերանսներ, որոնց խնդիրն էր այդ խմբերի աշխատանքի վերակառուցումը գյուղի նոր պայմանների ու պահանջների համաձայն։ Այսպես, Սևանի գավառի կոնֆերանսների մասին ինֆորմացիայում ասված է, որ դրանք ավարտվել են մինչև փետրվարի 19-ը և քննարկել են չքավորական խմբերի աշխատանքների վերակառուցման, միջակի հետ դաշինքը ամրապնդելու և կուլակի դեմ հարձակումն ուժեղացնելու, գարնանացանի նախապատրաստության և այլ հարցեր։ 1930 թ. առաջին երեք ամսում Սևանի գավառում կուսակցության մեջ ընդունված 53 կոլտնտեսականների մեծ մասը չքավոր գյուղացիներ էին։ Նույն ժամանակամիջոցում կուսակցության մեջ էին ընդունվել 76 բատրակներ։ Կոնֆերանսները ցույց տվեցին նաև չքավորների մեջ տարվող աշխատանքի թերի կողմերը։ Թույլ աշխատանքի արդյունք համարվեց Բասարգեչարի (Վարդենիս) շրջանում կոլտնտեսությունների դեմ չքավորների ելույթները, Գյոզալդարա գյուղում դաշնակցական-կուլակային տարրերի զինված ելույթին առանձին չքավորների հարելը և այլն։ Բասարգեչարի և Ալափարսի շրջաններում անբավարար էր կազմակերպված բատրակների տնտեսական-իրավական շահերի պաշտպանությունը և այլն[42]։

---

40 Տե՛ս «Справочник партработника», вып. 7, ч. II, М., 1930.

41 Տե՛ս, «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 73։

42 Տե՛ս ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 1, ց. 14, գ. 72, թ. 93—95։

Աշտարակի շրջանի չքավորական կոնֆերանսի (1930 թ. մարտի 9) օրակարգում դրված էր գյուղատնտեսության կոլեկտիվացման անհրաժեշտության հարցը։ Կոնֆերանսը արձանագրեց, որ կոլեկտիվացումը բխում է գյուղի բոլոր աշխատավորների շահերից և պահանջեց «ոչ մի ջանք չխնայել կոլեկտիվացման գործի հաջողության համար, կազմակերպել բատրակներին, չքավորներին ու միջակներին և անխնա պայքար մղել կուլակների ու նրանց պաշտպանների պրովոկացիաների դեմ»[43]։ Նույնպիսի բանաձև ընդունեց նաև Վաղարշապատի շրջանի չքավորական կոնֆերանսը (ապրիլի 5), միաժամանակ նշելով շրջանի բատրակային-չքավորական խմբերի պասսիվությունը (Հայթաղ, Աղջաղալա, Աղավնատուն և այլ գյուղեր)։ Այդ հանգամանքը, ինչպես նաև դասակարգային թշնամու գործունեությունը ազդեցին որոշ կոլտնտեսությունների բայրայման (Աղջաղալա, Հաջիլար՝ այժմ Մրգաստան, Դողս) և կոլտնտեսություններից գյուղացիների մի մասի հեռանալու վրա (Հայթաղ, Հաջիղարա՝ Այգեշատ, Ցրանդանց, Վերին Խաթունարխ)[44]։

Չքավորական խմբակներ սկսեցին կազմակերպվել նաև կոլտնտեսություններին կից, որը նպաստում էր կոլեկտիվացման զարգացման և կոլտնտեսությունների ամրապնդման գործին։ Սակայն չքավորների հետ տարվող աշխատանքը շարունակում էր ետ մնալ օրվա խնդիրներից ու պահանջներից։ ՀԿ(բ)Կ VIII համագումարը ևս (1932 թ. հունվար) նշեց, որ գյուղում աշխատանքի ամենաթույլ տեղամասը համարվում էր հիշյալ բնագավառը[45]։

Կուսակցությունը կարևոր տեղ էր տալիս նաև բատրակների կազմակերպման ու նրանց շրջանում առանձին աշխատանք տանելու գործին։ Կուսակցության XVI համագումարը նշեց գյուղատնտեսական և առանձնապես սովխոզների բանվորների միության անընդհատ աճող դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման մեջ։

1930 թ. մարտին կայացավ Հայաստանի գյուղատնտեսության և անտառային աշխատողների միության V համագումարը։ Այդ ժամանակ բատրակների մեծ մասը ընդգրկված էր կոլտնտեսություններում, սակայն մաղումից հետո բատրակ-կոլտնտեսականների թիվը խիստ նվազեց։ 1930 թ. կեսերին 230 բատրակներ սովորում էին տրակտորիստների, 250-ը՝ սովխոզային, 300-ը անտառային աշխատողների

---

43 Տե՛ս նույն տեղում, ֆ. 14, ց. 1, գ. 35, թ. 16։

44 Տե՛ս նույն տեղում, թ. 18—19։

45 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 19, գ. 4, թ. 50։

դասընթացներում։ 70 բատրակներ պատրաստվում էին ընդունվելու համալսարան[46]։ 1931 թ. ընթացքում (մինչև հոկտեմբերի 20-ը) սոցիալիստական շինարարության տարբեր բնագավառներում աշխատանքի էին տեղավորվել (համապատասխան մասնագիտացումից հետո) 3305 բատրակներ, այդ թվում 1204-ը՝ արդյունաբերության, 1453-ը՝ շինարարության մեջ, 648-ը՝ սովխոզներում[47]։ 1930 թ. բատրակների ճնշող մեծամասնությունը (11.500 մարդ) ընդգրկված էր արհմիություններում (գյուղատնտեսություն)[48], որոնք մեծ աշխատանք էին կատարում բատրակների շահերի պաշտպանության ուղղությամբ։ Որոշ տվյալներով 1930 թ. բատրակների ընդհանուր թիվը հասնում էր 16 հազարի[49]։

30-ական թվականների սկզբին գյուղում ձևավորվեց կոլտնտեսային ակտիվը, կոլտնտեսային արտադրության ու կոլտնտեսային շարժման առաջատար ու կազմակերպող ուժը։ Նրանք կոլտնտեսությունների ու գյուղսովխոզների վարչությունների նախագահներն ու դրանց անդամներն էին, կոլտնտեսությունների բրիգադավարները, ֆերմաների վարիչներն ու օգակավարները, ագրոնոմներն ու զոոտեխնիկները, տրակտորիստներն ու մյուս մեխանիզատորները, ուսուցիչները, կուսակցական բջիջների ու կոմիտեների քարտուղարները, կուսակազմակերպիչները, բոլոր կուսակցականներն ու կոմերիտականները, թերթերի թղթակիցները, արհմիութենական գործիչները և ուրիշներ։ Նրանց միջոցով էր կազմակերպվում և աշխուժանում գյուղի հասարակական-քաղաքական կյանքը։ Գյուղի բոլոր ուժերը մոբիլիզացվում էին կոլտնտեսային շարժման նոր վերելքի համար[50]։

Այսպիսով, քաղաքական նոր խնդիրներին համապատասխան վե-

---

46 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. հունիսի 12։

47 Տե՛ս ՄԱԻ ՀԴԱ, ֆ. 1, ց. 17, գ. 187, թ. 48։

48 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 160, թ. 6—8։

49 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. մարտի 4։

50 1931 թ. հանրապետության Կենտգործկոմը ՀՍԽՀ Աշխատանքի դրոշի շքանշանով պարգևատրեց կոլտնտեսային գյուղի մի խումբ ակտիվ գործիչների, «կոլտնտեսային շարժման պիոներների»։ Նրանց թվում էին Սարդարապատի (Հոկտեմբեր) կոլտնտեսության նախագահ Արտուշ Սահակյանը, Թուսկյուլուի կոլտնտեսության նախագահ Աղարեկ Ղազարյանը, Կոլտնտկենտրոնի վարչության անդամ Ներսես Սարգսյանը, ինչպես նաև Ուլուխանլուի ՄՏԿ-ի տրակտորիստ Սահակ Խանգելդյանը (տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1931, № 4, հոդ. 269)։ Սրանք կառավարական պարգևի արժանացած առաջին կոլտնտեսականներն են Հայաստանում։

բակառուցվեցին գյուղի կուսակցական, սովետական և բոլոր հասարակական կազմակերպությունների աշխատանքները։ Նրանք մեծ գործ կատարեցին աշխատավոր գյուղացիներին համախմբելու և մասսայական կոլեկտիվացումը զարգացնելու ուղղությամբ։ Գյուղի հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումը նպաստում էր աշխատավոր գյուղացիության սոցիալիստական գիտակցության զարգացմանը։ Դեպի կոլեկտիվ, սոցիալիստական տնտեսություններն էին շրջվում բատրակների, չքավորների ու միջակների նորանոր զանգվածներ։ Կոլտնտեսային գյուղացիությունը, որը չնայած գյուղում դեռևս մեծամասնություն չէր կազմում, սակայն կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների ղեկավարությամբ վճռական դեր էր խաղում գյուղի հասարակական-քաղաքական կյանքում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԲԵԿՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1930 թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ–1931 թ.)

1. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հաշվի առնելով հնգամյակի առաջին երկու տարվա նվաճումները, ՍՄԿԿ XVI համագումարը որոշեց վերանայել գյուղատնտեսության ամբողջ հնգամյա պլանը։ Կենտկոմի Քաղբյուրոն 1930 թ. հուլիսի 25-ին հաստատեց 1930/31 տնտեսական տարվա ստուգիչ թվերը, որտեղ, ելնելով անցած փորձից, որոշվեցին կոլեկտիվացման առաջադրանքները, ըստ գոտիների։ Շրջանների առաջին խմբում (զարգացած հացահատիկային շրջաններ) կոլտնտեսությունների մեջ ընդգրկվելու էր գյուղացիական տնտեսությունների 65—75 տոկոսը, երկրորդ խմբում (մյուս հացահատիկային շրջաններ)՝ 35—45 տոկոսը, փակ երրորդ խմբում, որի մեջ մտնում էին ոչ հացահատիկային և տնտեսապես հետամնաց ազգային շրջանները՝ 15—20 տոկոսը[1]։ Երրորդ գոտու մեջ հասկացվում է նաև Հայաստանը և ամբողջ Անդրկովկասը։

Համկ(բ)կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1930 թ. դեկտեմբերյան միացյալ պլենումը ճշտեց հնգամյակի երրորդ տարվա՝ 1931 թ.[2] առաջադրանքները։ Որոշվեց շրջանների առաջին խմբում կոլեկտիվացման մակարդակը բարձրացնել ոչ պակաս 80 տոկոսի։ Այդ նշանակում էր համատարած կոլեկտիվացման և կուլակների դասակարգի վերացման ավարտում։ Երկրորդ խմբում հարկավոր էր ապահովել գյուղացիական տնտեսությունների 50 տոկոսի կոլեկտիվացումը։ Իսկ սպառողական գոտում կոլտնտեսությունների մեջ ընդգրկվելու էր հացահատիկային տնտ-

---

[1] *Տե՛ս* «Ленинский кооперативный план и борьба партии за его осуществление», стр. 116—117.

[2] *ԽՍՀՄ ԿԳԿ-ը և ԺԿԽ-ը 1930 թ. սեպտեմբերի 20-ին որոշում ընդունեցին 1931 թ. տնտեսական տարին հոկտեմբերի 1-ից փոխադրել հունվարի 1։*

տնտեսությունների 20—25 և բամբակագործական ու ճակնդեղագործական տնտեսությունների ոչ պակաս 50 տոկոսը։ Ամբողջ երկրում 1931 թ. կոլեկտիվացվելու էր գյուղացիական տնտեսությունների ոչ պակաս քան կեսը[3]։

Ղեկավարվելով կուսակցության XVI համագումարի որոշումներով, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները ավելի ուժեղացրին քաղաքական աշխատանքը, կուրս վերցնելով դեպի մասսայական կոլեկտիվացման նախապատրաստումը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն 1930 թ. օգոստոսի 23-ին ընդարձակ որոշում ընդունեց «Գյուղում թույլ տրված սխալներն ուղղելու ընթացքի և կոլտնտեսային շինարարության հերթական խնդիրների մասին»[4]։ Միջոցառումներ մշակվեցին «համատարած կոլեկտիվացման անցկացման պայմանները նախապատրաստելու և կապիտալիզմը արմատախիլ անելու համար»։

Կուսակցական և պետական մարմինները 1931 թ. սահմանեցին հետևյալ առաջադրանքները. կոլտնտեսություններում ընդգրկել հանրապետության բոլոր աշխատավոր գյուղացիական տնտեսությունների 20—25 տոկոսը և ցանքերի 30 տոկոսը։ 25 հազար հեկտար բամբակի ցանքատարածության կեսը (12 հազար հեկտար) բաժին էր ընկնելու կոլտնտեսային սեկտորին։ Դրա համար հարկավոր էր կոլտնտեսությունների մեջ ընդգրկել բամբակագործական տնտեսությունների կեսը (Ղուրդուղուլի՝ 50, Վաղարշապատ՝ 40, Ղամարլու՝ 35 և Վեդի՝ 20 տոկոս)[5]։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման նոր պայմաններում համապատասխան ձևով վերակառուցվեց գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեությունը։ Այս բնագավառում հիմնական թերությունն այն էր, որ կոոպերացիան կտրվել էր գյուղացիական մասսաներից և անբավարար էր սպասարկում նրանց։ Մյուս կողմից նա դեռևս չէր կարողացել կազմակերպել կոլտնտեսությունների կազմակերպման ու տնտեսական ղեկավարման գործը։ Կոլեկտիվացման զարգացման շահերը պահանջում էին վերակառուցել և ուժեղացնել կոոպերացիայի գործունեությունը։ ՀամԿ(բ)Կ XVI համագումարը որոշեց շրջանում կոլտնտեսությունների կազմակերպական-արտադրական ղեկավարման ֆունկցիաները կենտրոնացնել միասնական շրջանային կոլտնտեսու-

3 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 97։

4 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 70, թ. 1—2։

5 Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 200 և «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1931, N 1, հոդ. 48։

թյուններում։ Իսկ անհատական գյուղացիական տնտեսությունների արտադրական սպասարկումը, ղեկավարումը, մթերումների ֆունկցիաները կենտրոնացվում էին շրջանային գյուղատնտեսական կոոպերատիվ միության մեջ[6]։ Այդ վերակառուցման կազմակերպական սկզբունքները կոնկրետ սահմանվեցին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հուլիսի 30-ի որոշման մեջ (կոլտնտեսային-կոոպերատիվ սիստեմի վերակառուցման մասին)[7]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը համապատասխան որոշում ընդունեց 1930 թ. օգոստոսի 23-ին[8]։ Մինչ այդ Հայաստանում գոյություն ուներ չորս կոոպերատիվ միություն, այժմ նախատեսվում էր ունենալ երեք միություն՝ դաշտամշակական, կաթնատնտեսական և այգեգինեկոոպ (բամբակ-միության ընկերությունները ընդգրկվում էին դաշտագործականի մեջ)։ Մելիորատիվ կոոպերատիվ ընկերությունները հանձնվում էին Հայջրտնտեսությանը։ Շրջանների թվին համապատասխան կազմակերպվելու էին 25 շրջկոոպմիություններ։ Կոլտնտեսությունների գործերով զբաղվելու էին շրջանային կոլտնտմիությունները, բացառությամբ այն շրջանների, ուր կոլեկտիվացումը 10 տոկոսից ցածր էր (Մեղրի, Ալավերդի, Ղարաքիլիսա, Աղբաբա, Վեդի և Բասարգեչար)։ Այդ շրջանների կոոպերատիվ միություններում ստեղծվում էին կոլտնտեսությունների ինքնավար սեկցիաներ։ Կոլտնտմիություններին ղեկավարում էր կոլտրնտկինատորը, որն ստեղծվել էր դեռևս 1928 թ.։ Ըստ գյուղատնտեսության հիմնական ճյուղի շրջանները բաժանվում էին համապատասխան հանրապետական կոոպերատիվ միությունների միջև։ Հանրապետական միությունների գործունեությունը համաձայնեցնում և կոորդինացնում էր Միությունների միությունը (որը փոխարինել էր Հայգյուղկոոպին)։ ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից գոյություն ուներ կոոպերատիվ խորհուրդ (նախկինում կոչվել է հանձնաժողով), որպես կուսակցական ղեկավար մարմին։ Ընդունվեց կոոպերացիայի ստորին բջիջի՝ գյուղական արտադրական ընկերության նոր կանոնադրություն, որը հարմարեցված էր կոլտնտեսային շինարարության զարգացման նոր պայմաններին։ Նոր օրենսդրության համաձայն արգելվում էր կուլակներին ընդունել կոոպերատիվ ընկերությունների անդամ[9]։

---

6 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 72։

7 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 314—315.

8 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 14, թ. 101—102։

9 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1930 թ. օգոստոսի 31։

Մինչև 1930 թ. վերջերը հիմնականում ավարտվեց կոոպերատիվ-կոլտնտեսային ցանցի վերակառուցումը։ Դաշտագործական գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունների միությունը (դաշտագործական միություն) սպասարկում էր բուսաբուծության զարգացման գործը (բամբակ, ծխախոտ, հացահատիկ, շաքարի ճակնդեղ և այլն) Հանրապետության 9 շրջաններում[10]։ 1931 թ. բամբակագործության սպասարկումը հանձնվեց այգդինկոոպին։ Կաթնաանասնապահական միությունն ընդգրկում էր շրջանային միությունները և գյուղական կոոպերատիվները Հանրապետության 13 շրջաններում, որտեղ տնտեսության հիմնական ճյուղը անասնապահությունը, կաթի և մսի արտադրությունն էր[11]։ Միությունն ուներ 188 արտադրական ընկերություն (332 գյուղերում), 24.142 անդամներով, որոնց 56,8 տոկոսը չքավորներ էին, իսկ 43,2 տոկոսը՝ միջակներ[12]։ Այգեգինեգործական, պտղաբանջարաբուծական և շերամապահական կոոպերատիվների միությունը (այգդինկոոպ), որը գոյություն ուներ դեռևս 1927 թ., ղեկավարում էր Հայաստանի վեց շրջանների կոոպերացման և աշխատավոր գյուղացիների արտադրության կազմակերպման, մատակարարման, վաճառահանման ու մթերումների գործը։ Այն ընդգրկում էր 87 գյուղարտադրական ընկերություն, 112 հազար անդամներով[13]։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման զարգացմանը զուգընթաց կոոպերացիան ենթարկվեց նոր փոփոխությունների։ 1931 թ. Միությունների միությունը վերացվեց։ Նրա ֆունկցիաները, բացառությամբ մթերումների կազմակերպման գործի, ստանձնեց Հողժողկոմատը։ Այնուհետև տեղի ունեցան նոր վերակառուցումներ, որոնց հետևանքով վերացվեց կոոպերատիվ-կոլտնտեսային սիստեմի գոյություն ունեցող կազմակերպական կառուցվածքը, իսկ շրջանային ու հանրապետական միությունների բոլոր ֆունկցիաներն իրենց վրա վերցրին տեղական իշխանությունները և Հողժողկոմատը։

Կոլեկտիվացման նոր վերելքի կազմակերպման գործում կարևոր նշանակություն ունեցան կոլտնտեսությունների նվաճումների պրոպագանդան, նրանց հաշվետու-վերընտրական կամպանիան, Հայաստանում սովետական իշխանության հաստատման 10-րդ տարեդարձը։

---

10 Տե՛ս «Մաճկալ», 1930 թ. նոյեմբերի 29։

11 Տե՛ս նույն տեղում։

12 Տե՛ս «Մաճկալ», 1930 թ. դեկտեմբերի 18, 20 և 23-ի համարները։

13 Տե՛ս «Մաճկալ», 1930 թ. նոյեմբերի 29։

Մամուլի էջերում նյութեր հրապարակվեցին հանրապետության մի շարք առաջավոր կոլտնտեսությունների նվաճումների մասին, որոնք ուժեղ տպավորություն և ազդեցություն էին գործում անհատական տնտեսությունների վրա։ Այսպես, Դիլիջանի շրջանի Թթուջուր գյուղի կոլտնտեսության անդամները «Խորհրդային Հայաստան» թերթին հասցեագրած զեկույցում և հանրապետության բոլոր կոլտնտեսականներին, բատրակ, չքավոր և միջակ գյուղացիներին ուղղված դիմումում պատմում էին, որ 1928 թ. կազմակերպված և 27 տնտեսություն ընդգրկող կոլտնտեսությունը, առանց քայքայվելու, անդամների թիվը հասցրել է 43-ի, որը կազմում էր գյուղի բնակչության 33 տոկոսը։ Կոլտնտեսության անդամներից 17-ը կոմունիստներ էին, իսկ 23-ը՝ կոմերիտականներ։ Այն ստացել էր 11 հազար ռուբլու մաքուր եկամուտ։ Մեկ կոլտնտեսականի եկամուտը մոտ երկու անդամ ավելի էր անհատական տնտեսատիրոջ համեմատությամբ։ Ընդ որում, կոլտնտեսությունը չուներ ոչ տրակտոր, ոչ էլ այլ առաջավոր տեխնիկա, բայց հավաքական ուժերով կարողացել էր երկու անդամ ավելացնել ցանքատարածությունները։

Նույն շրջանի Ներքին Աղդան գյուղի կոլտնտեսությունը զբաղվում էր ծխախոտագործությամբ։ Նա բերքը պետությանն էր հանձնել կոնտրակտացիայի համաձայն և ուներ բավական եկամուտ։ Հայաստանի 10-ամյակի նախօրյակին կոլտնտեսություն էին ընդունվել 14 նոր տնտեսություններ։ Բարձր եկամուտ էին ստացել նաև Կոթիգեղի կոլտնտեսականները։ Նրանք գրում էին՝ բանդիտները հույս ունեին իրենց վնասարարությամբ ազդել մեր տրամադրությունների վրա, սակայն նրանց ցանկությունները մնացին օդում կախված։ Կոլտնտեսությունը աճում և ամրապնդվում է։

Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղում, որը հայտնի է իր հեղափոխական և կոմունիստական շարժման անցյալով, կազմակերպվել էր 250 տնտեսություն միավորած գյուղատնտեսական արտել։ Կոլտնտեսությունն ուներ տրակտոր, կալող մեքենա, 25 գութան և արտադրության այլ միջոցներ։ Կուլակները նրան հասցրել էին մեծ վնաս։ Ի պատասխան դասակարգային թշնամու, կոլտնտեսությունն իր ունեցվածքը հասցրեց 150 հազար ռուբլու և կոլտնտեսականները մենատնտեսների համեմատությամբ կրկնակի եկամուտ ստացան։

Ուղունլարը (Օձուն) Հայաստանի խոշոր գյուղերից է։ Նրա կոլտնտեսությունը 1930 թ. վերջին միավորում էր 110 բատրակ, չքավոր և միջակ տնտեսություններ։ Այստեղ կազմակերպվել էին մանկապարտեզ

և մանկական հրապարակներ։ Օգնել էին անհատական տնտեսություններին, տրակտորով վարելով 50 հեկտար հող։ Մի շարք տնտեսությունների տրամադրել էին դութաններ։

Իրենց հերթին կոլտնտեսությանը օգնության էին հասել գյուղի մենատնտեսները, աշխատանքների եռուն պահին կազմակերպելով շաբաթօրյակներ։ Ուղունլարի Մայիսի 1-ի անվան կոլտնտեսության մեջ էին գյուղի բոլոր կուսակցականները (28 մարդ) և 110 կոմերիտականներ կամ բոլոր կոմերիտականների կեսը։

Ղամարլուի շրջանի Բեջաղլու (Ոստան) գյուղի կոլտնտեսականները, միանալով Թիֆլիսի կոլտնտեսականների կոչին, նույնպես հայտնում էին իրենց նվաճումների մասին։ Նրանք ստացել էին 59 հազար ռուբլու մաքուր եկամուտ, որպիսին երբեք չէին տեսել, ինչպես իրենք էին գրում։ Մեր երկու տարվա փորձը, եզրափակում էին կոլտնտեսականները, համոզել է մեզ, որ կարիքից ու տգիտությունից դուրս գալու միակ ելքը խոշոր, կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումն է։

Աշտարակի Շահումյանի անվան կոլտնտեսությունը հայտնի էր ոչ միայն շրջանում, այլև ամբողջ Հանրապետությունում։ Թերթի սեփական թղթակիցը հայտնում էր, որ կոլտնտեսությունը, քսանհինգհազարական Սերգո Վարդանյանի ղեկավարությամբ, ձեռք է բերել մեծ նվաճումներ։ 1931 թ. հունվարին կոլտնտեսությունն ուներ 214 անդամ, նախորդ տարվա 11-ի դիմաց։ Չքավոր գյուղացի կոլտնտեսականի ընտանիքը վաստակել էր 490 ռուբլի, 66 փութ ցորեն, 48 փութ խաղող և այլ մթերքներ, կարդում ենք թղթակցությունում։ Կոլտնտեսությունն ուներ 25 կոմունիստ և 50 կոմերիտական։

Կոլեկտիվացումը նշանակալի վերելք ունեցավ Ղափանի շրջանում։ ԱՍՖՍՀ Ժողկոմխորհի տվյալներով Շիկահողի ենթաշրջանի ութ գյուղերի կոլտնտեսությունները նոյեմբերի կեսերին ընդգրկում էին 546 տնտեսություն կամ գյուղական բնակչության 70 տոկոսը[14]։ Այդ նշանակում է, որ տվյալ գյուղերը հանրապետությունում առաջիններից մեկը կենսագործեցին համատարած կոլեկտիվացման խնդիրը։ Սակայն շրջանում կոլեկտիվացման մակարդակը դեռևս ցածր էր (1931 թ. հունվարի 1-ի տվյալներով այն կազմում էր միայն 20 տոկոս)[15]։ Նույն աղբյուրի տվյալներով բարձր ցուցանիշ ունեցող կոլտնտեսություններ կային նաև Ղուրդուղուլիի, Աշտարակի, Ղամարլուի և այլ շրջաններում։

Մեղրու շրջանի Լիճք գյուղի կոլտնտեսությունը իր նվաճումները

---

14 Տե՛ս ЦГА ГССР, ф. 634, оп. 1, д. 4033, л. 101—104.

15 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ., ֆ. 1, ց. 17, գ. 167, թ. 26։

պրոպագանդում էր բերքի և կոլեկտիվացման տոնի առթիվ կազմակերպված ցուցահանդեսում։ Կոլտնտեսությունը 1930 թ. գարնանը մաղում չէր ունեցել և ընդգրկում էր գյուղի տնտեսությունների մոտ 40 տոկոսը։ Մալև, Ալիղոտա, Վանք և այլ գյուղեր պահանջեցին իրենց մոտ ևս կազմակերպել հանրային տնտեսություն։ Իսկ շրջանի Վահրավար գյուղի Սպանդարյանի անվան կոլտնտեսությունը թերթի միջոցով զեկուցում էր «չտեսնված հաջողություններ», ինչպես նաև համատարած կոլեկտիվացումը և կուլակության վերացումը նախապատրաստելու մասին։ Հայաստանում բերքի և կոլեկտիվացման տոնը անցկացվեց հոկտեմբերի վերջին։ Ամենուրեք չքավորներից և միջակներից դիմումներ էին ստացվել կոլտնտեսություն ընդունելու մասին։

Բասարգեչարի (Վարդենիս) շրջանում հայտնի էր Թուսկյուլու գյուղի կոլտնտեսությունը, որը կազմակերպվել էր 1928 թ. մարտին. ուներ մեկ տրակտոր, երկու քամհար և մեկ կալսող մեքենա ու այլ տեխնիկա։ «Աշխատում ենք բոլորս միասին,— գրում էին կոլտնտեսականները իրենց զեկույցում,— հաճոկ եղած դեպքում փոխարինում միմյանց, իսկ գիշերները, հրացանները ձեռքներիս, պաշտպանում մեր կալը, խոտը, դարմանի դեղերը կուլակի ոտնձգություններից»։ Նախորդ տարվա համեմատությամբ մեկ կոլտնտեսականի եկամուտը եռապատիկ ավելացել էր։

Կոլտնտեսային շարժման ծռումները ուղղելուց հետո Բասարգեչարի շրջանում, ըստ կուսշրջկոմի տվյալների, մնաց միայն 7 կոլտնտեսություն, 265 տնտեսություններով։ Իսկ 1930 թ. աշնանը կազմակերպվեց ևս 20 նոր կոլտնտեսություն և նրանց թիվը հասավ 27-ի, որոնք ընդգրկում էին 1072 տնտեսություններ։

Հանրապետության կոլտնտկենտրոնի և կենտվիճվարչության նախնական տվյալներով 1930 թ. յուրաքանչյուր երեք կոլտնտեսականի եկամուտը կազմում էր 600—700 ռուբլի, իսկ անհատական սեկտորում յուրաքանչյուր երեք շնչինը՝ 400 ռուբլի, կամ, կոլտնտեսությունում եկամուտը միջին հաշվով ավելի էր 50—75 տոկոսով[16]։

Այդ ամենը բարձրացնում էր կոլտնտեսությունների հեղինակությունը և ուժեղացնում չքավորների ու միջակների ձգտումը դեպի հանրային տնտեսությունը։

Հայաստանում 1930 թ. երկրորդ կեսին և հատկապես վերջին ամիսներին գյուղատնտեսության կոլեկտիվացումը ունեցավ հետևյալ ըն-

---

[16] Տե՛ս ЦГА ГССР, ф. 634, оп. 1, д. 4033, л. 101—104.

թացքը։ Մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը ցրվեցին 28 կոլտնտեսություններ և հեռացան 5400 տնտեսություններ։ Այդ կոլտնտեսությունների կեսը և տնտեսությունների զգալի մասը բաժին էր ընկնում Զանգեզուրին և Մեղրուն, որտեղ կոլեկտիվացման սխալների ուղղման կամպանիան անցկացվեց համեմատաբար ավելի ուշ։ Այնուհետև մաղումը լրիվ դադարեց և սկսվեց վերելքի ժամանակաշրջանը, հատկապես կոլտնտեսություններում բերքի բաշխումը կատարելուց և հաշվետու-վերընտրական կամպանիային անցնելուց հետո։ Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում հանրապետության կոլտնտեսությունների թիվը ավելացավ 32-ով, իսկ մինչև դեկտեմբերի 15-ը՝ ևս 50-ով, իսկ կոլտնտեսության անդամների թիվը համապատասխանաբար՝ 1395 և 2047 տնտեսություններով։ Դեկտեմբերի 15-ին հանրապետությունում հաշվվում էր 461 կոլտնտեսություն, ավելի քան 19 հազար տնտեսություններով և 11,5 տոկոս կոլեկտիվացման մակարդակով[17]։

1930 թ. նոյեմբերին սկսվեցին կոլտնտեսությունների հաշվետու ժողովները, իսկ 1931 թ. հունվարից՝ վերընտրությունները, որոնք նոր ալիք առաջացրին կոլտնտեսային շարժման մեջ։ Ահա մի քանի օրինակներ։ Դուլքենդի շրջանում հաշվետու ժողովներ անցկացվեցին ինչպես 36 կոլտնտեսություններում, այնպես էլ կոլտնտեսություն չունեցող 15 գյուղերում։ Բատրակները և չքավորները բոլոր գյուղերում ակտիվ վերաբերմունք էին ցույց տալիս։ Հաշվետու կամպանիայի ընթացքում կազմակերպվեցին վեց կոլտնտեսություններ, իսկ եղածները համալրվեցին 88 նոր անդամներով։ Թերթը հաղորդում էր ամեն օր նոր դիմումներ ստացվելու մասին։

Հաշվետու-վերընտրական կամպանիան զգալի վերելք է առաջ բերել կոլտնտեսություններում, հայտնում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի բրիգադը Վաղարշապատի շրջանից։ Հունվարի 1—25-ը ընդունվել էին 403 նոր տնտեսություններ և կոլտնտեսություններ էին կազմակերպվել Մուղանջուղ, Հաջիլար (Մրգաստան), Ռանչպար և Ռահիմաբադ գյուղերում։

Փետրվարի վերջերին ավարտվեց կոլտնտեսությունների հաշվետու-վերընտրական կամպանիան և սկսվեցին շրջանային համագումարները,

---

17 Տե՛ս ՄԿԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 15, գ. 219, թ. 27 և գ. 169, թ. 17։ Գրականության մեջ տեղ են գտել մի շարք շրջաններում 1930 թ. դեկտեմբերին կոլեկտիվացման մակարդակի փրուն տվյալներ (42—50 տոկոս)։ Տե՛ս Ա. Նասյան, նշված աշխ., էջ 166։ Իրականում այդ շրջաններում կոլեկտիվացումը գտնվում էր 18, 1—26,4 տոկոս մակարդակի վրա։ (Տե՛ս ՄԿԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 17, գ. 167, թ. 26—27)։

իսկ մարտի 5—8-ը դումարվեց կոլտնտեսությունների հանրապետական երկրորդ համագումարը։ Առաջին համագումարից (1928 թ. նոյեմբեր) անցել էր 2 տարի և 3,5 ամիս։ Այդ ժամանակամիջոցում կոլտնտեսային շարժումը ապրել էր էական տեղաշարժեր, որոնց մասին խոսվեց Կոլտնտկենտրոնի հաշվետվությունում (զեկ.՝ վարչության նախագահ Արաքս Մուրադյան) և կոլտնտեսությունների անասնաբուծության զարգացման ու կադրերի պատրաստման խնդիրների մասին զեկուցումներում, ինչպես նաև պատգամավորների ելույթներում։ Առաջին համագումարի պահին Հայաստանում կար 80 կոլտնտեսություն, 1800 տնտեսություններով, որը կազմում էր գյուղացիական տնտեսությունների ընդամենը 1,1 տոկոսը[18]։ Մինչև երկրորդ համագումարը (1931 թ. մարտի 10-ի տվյալներով) կոլտնտեսությունների թիվը աճել էր 8, իսկ անդամների թիվը՝ 17 անգամ։ Կոլեկտիվացումը ընդգրկել էր գյուղացիական տնտեսությունների 18,1 տոկոսը[19]։ Համագումարը քննարկած հարցերի առթիվ ընդունեց համապատասխան որոշումներ և ընտրեց կոլտնտկենտրոնի զեկավար մարմիններ (վարչություն և վերստուգիչ հանձնաժողով)։ Հայաստանի և Վրաստանի կոլտնտեսությունների համագումարները սոցիալիստական մրցության պայմանագիր ստորագրեցին գարնանացանը հաջողությամբ անցկացնելու համար[20]։

Վամարլուի շրջանի Յուվա գյուղի կոլտնտեսության ընդհանուր ժողովը, ողջունելով կոլտնտեսությունների հանրապետական համագումարը, 1931 թ. մարտի 2-ին կոչով դիմեց Հայաստանի բոլոր մենատնտես աշխատավոր գյուղացիներին՝ գարնանացանը դիմավորել կոլտնտեսությունները խոշորացնելով։ Յուվայի կոլտնտեսությունը 1931 թ. առաջին երկու ամսվա ընթացքում անդամների թիվը կրկնապատկել էր, 70-ից հասցնելով 140-ի։ Նրա անդամները 1921 թ. ակտիվորեն մասնակցել էին դաշնակցականների խռովության ջախջախմանը։ Յուվայի կոլտնտեսությունը և կոմունան միասին ընդգրկում էին գյուղի տնտեսությունների կեսը[21]։

1930 թ. վերջի և 1931 թ. սկզբի կոլեկտիվացման նոր վերելքը 1931 թ. ընթացքում ավելի խորացավ ու մասսայական դարձավ։

---

18 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 20, գ. 79, թ. 37—38։

19 Տե՛ս նույն տեղում, թ. 35։

20 Համագումարի նյութերը տե՛ս. «Խորհրդային Հայաստան», 1931 թ. մարտի 6, 10, 11-ի և «Մահկալ», մարտի 10, 12 և 14-ի համարներում։

21 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. մարտի 5։

2. ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման հարցը շարունակում էր գտնվել կուսակցության և կառավարության ուշադրության կենտրոնում: Ամեն ինչ արվում էր կոլեկտիվացման սկսված վերելքը զարգացնելու, այն մասսայական դարձնելու համար:

Համկ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. գարնանացանի նախապատրաստության կապակցությամբ նշում էր, որ անհրաժեշտ է աշնանը սկսված կոլտնտեսային շարժման նոր վերելքը դարձնել իսկական հզոր հոսանք դեպի կոլտնտեսությունները[22]: Այսպիսի հոսանք կազմակերպելու խնդիրները Անդրերկոմը ավելց փետրվարի 12-ի ընդարձակ որոշման մեջ[23]: Հնգամյակի երրորդ տարվա առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար Անդրերկոմը կուսակցական կազմակերպություններին հանձնարարեց շարունակել պայքարը երկու ճակատում՝ հիմնական վտանգ հանդիսացող աջ օպորտունիզմի, կոլտնտեսային շարժումը կազմակերպելուց և գլխավորելուց հրաժարվելու կամ դրանք թերագնահատելու պրակտիկայի ու տրամադրությունների, ինչպես նաև «ձախ» շեղումների դեմ: Այդ թերությունների հաղթահարումով միայն, ասված է որոշման մեջ, կարելի է կոլտնտեսային շարժման սկսված վերելքը դարձնել Անդրկովկասի գյուղի տասնյակ և հարյուր հազարավոր չքավորամիջակային մասսաների ակտիվ շարժում՝ հանուն գարնանացանի պլանների կատարման ու գերակատարման, հանուն գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, հանուն համատարած կոլեկտիվացման և այդ հիման վրա կուլակների դասակարգը վերացնելու համար բոլոր պայմանների նախապատրաստության:

Կոլտնտեսային շարժումը զարգացնելու տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ Սովետների համամիութենական VI համագումարը, որը կայացավ 1931 թ. մարտին: Նա կարևոր որոշումներ ընդունեց կոլտնտեսային շինարարության հարցերի վերաբերյալ[24]: Համագումարը բնութագրեց այն սոցիալ-տնտեսական և քաղաքական տեղաշարժերը, որոնք կատարվել էին սովետական երկրում սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման շնորհիվ:

---

22 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 354.

23 Տե՛ս «Заря Востока», 13 февраля. 1931 г., տե՛ս նաև ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 20, գ. 79, թ. 50—51:

24 Տե՛ս «Решения партии и правительства по хозяйственным вопросам», т. 2, М., 1967, стр. 276—293.

Ելնելով երկրի ներքին ու միջազգային դրությունից և սոցիալիզմի արագ կառուցման շահերից, համագումարը որոշեց հետագայում ևս ապահովել սովետական իշխանության վեցրած ինդուստրացման և կոլեկտիվացման տեմպերը: Սահմանվեց, որ «ՍՍՀ Միության կոլեկտիվացման ավարտման խնդիրը կարող է և պետք է լուծվի հնգամյակի վերջում»[25]: Յուրց տալով կոլտնտեսությունների գլխավոր թերությունները (եկամտի բաշխումը ըստ շնչի, գործարքային սիստեմի անբավարար կազմակերպումը և այլն), համագումարը մշակեց կոլտնտեսային շարժման հիմնական խնդիրները: Մեծացվում էր կոլտնտեսություններին ցույց տրվող օգնությունը: 1931 թ. գյուղատնտեսությունն ստանալու էր 120 հազար տրակտոր, կազմակերպվելու էր 1040 նոր ՄՏԿ, առաջին անգամ գյուղ էր ուղարկվելու 7 հազար բեռնատար և մարդատար ավտոմոբիլներ և այլն[26]: Տեսական և գործնական մեծ նշանակություն ունեին գյուղի դասակարգային տեղաշարժերի մասին արված եզրակացությունները: «Կոլտնտեսություն մտնող միջակը,— կարդում ենք համագումարի նյութերում,— կոլտնտեսականի՝ նախկին բատրակի և չքավորի հետ միասին դառնում է սովետական իշխանության իսկական և ամուր հենարանը գյուղում»[27]: «Դրանով իսկ հսկայական չափով ամրապնդվում է բանվոր դասակարգի զոդումը գյուղացիության հետ, ընդլայնվում է բանվորա-գյուղացիական իշխանության հիմքը, որի համար այսուհետև գյուղում հիմնական և գլխավոր հենարանը հանդիսանում է կոլտնտեսային գյուղացիությունը»[28]:

Հիմնական հացահատիկային շրջաններում կոլտնտեսականները կազմում էին չքավոր և միջակ տնտեսությունների երեք քառորդը, մյուս հացահատիկային շրջաններում՝ 40, իսկ սպառողական և ազգային շրջաններում՝ 22 տոկոսը[29]: Գյուղի աշխատավորական տնտեսությունների 37 տոկոսը համատարած կոլեկտիվացման երկրորդ գարունը դիմավորում էր սոցիալիստական տնտեսություններում[30]: Սովետական Միությունը դառնում էր առաջավոր, սոցիալիստական գյուղատնտեսության երկիր:

---

25 Նույն տեղում, էջ 290:

26 Նույն տեղում, էջ 287:

27 Նույն տեղում:

28 Նույն տեղում:

29 Տե՛ս նույն տեղում, էջ 284:

30 Տե՛ս նույն տեղում:

1931 թ. երևան եկան գյուղատնտեսության կոլեկտիվացման նոր ձևեր ու մեթոդներ։ Դրանք էին նախաձեռնող խմբերը, հավաքագրող հանձնաժողովները, «կարմիր խնամախոսները» և այլն։ Իսկ նոր կոլտնտեսություններին օգնելու համար հին կոլտնտեսությունները ամբողջ երկրի մասշտաբով առանձնացրին 20 հազար կազմակերպիչ-կոլտնտեսականներ[31]։ Ինչպես նշել է «Պրավդան», 1931 թ. գարնանը կոլտնտեսականները կազմակերպել էին հազարավոր բրիգադներ՝ կոլտնտեսությունների մեջ նոր անդամներ ներգրավելու և անհատական տնտեսությունների շրջանում աշխատանք կատարելու համար։ Հին կոլտնտեսություններն իրենց անդամների միջոցով օգնում էին ետ մնացող շրջաններին։ Բարմաղան էր մենատնտեսների շրջանում տարվող աշխատանքը։ Ծավալվում էր իրենց՝ կոլտնտեսականների նախաձեռնությունը։ Վերջապես, կոլտնտեսությունները մեծ օգնություն էին ցույց տալիս աշխատավոր գյուղացիներին։ «Այս բոլորը վկայում են,— կարդում ենք «Պրավդա»-յում,— որ մենք կոլտնտեսականների շարքերում ունենք կոլեկտիվացման հազարավոր կոփված իսկական դրոշակակիրներ»[32]։

Հայաստանում կոլեկտիվացման տեմպերով շարունակում էին աչքի ընկնել բամբակագործական շրջանները։ Կոլեկտիվացումն արագ տեմպերով առաջ էր գնում նաև մյուս շրջաններում։ Բացի Սարդարապատի ՄՏԿ-ից 1931 թ. Արարատյան դաշտում սկսեցին գործել նաև Վաղարշապատի, Ղամարլուի (Արտաշատ), Դավալուի (Արարատ) ՄՏԿ-ները։ Հայաստանում կար ընդամենը չորս մեքենատրակտորային կայան, 266 տրակտորով, իսկ 1932 թ. նրանց թիվը հասավ 7-ի (ավելացան Ստեփանավանի, Ախտալայի և Լենինականի կայանները), իսկ տրակտորներինը՝ 365-ի, մոտ 52 հազար հեկտար հողային տարածության ընդգրկումով[33]։ Կայանները հիմնականում գործում էին բամբակագործական շրջաններում։ 1931 թ. Հայաստանի կոմերիտականները 35 հազար ռուբլի հավաքեցին կոմերիտական տրակտորաշարասյուն կազմակերպելու համար[34]։ Միայն 1931 թ. հանրապետության գյուղատնտեսությունն ստացավ 12,8 միլիոն ռուբլու

---

31 Տե՛ս «Решения партии и правительства по хозяйственным вопросам», т. 2, стр. 290.

32 «Правда», 15 марта 1931 г.

33 Տե՛ս ՍԱԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 19, գ. 17, թ. 54—55 և ց. 29, գ. 284, թ. 27։

34 Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 3, թ. 129։

արտադրության միջոցներ, որից 2,9 միլիոն ռուբլու գյուղատնտեսական գործիքներ[35]: 1931 թ. որոշում ընդունվեց նաև մեքենա-խոտհնձող կայաններ կազմակերպելու մասին (Ստեփանավանի և Աղբաբայի շրջաններում), որոնց նպատակն էր խոտհնձի մեքենայացումը և անասնապահական շրջանների կոլեկտիվացման զարգացումը: 1931 թ. հունիսին մեքենատրակտորային կայաններն սպասարկում էին հանրապետության կոլտնտեսությունների ավելի քան մեկ հինգերորդ մասին[36]:

1931 թ. հունվարի 17-ին ՀամԿ(բ)Կ Անդրերկրամը որոշում ընդունեց Ղուրդուղուլիի շրջանի կազմակերպության աշխատանքի մասին[37]: Շրջանի բարվոք վիճակը դրական դեր էր խաղում բամբակագործական շրջանների և ամբողջ հանրապետության համար: ՀԿ(բ)Կ Կենտկոմի մարտի 26-ի որոշման մեջ նշվում էր, որ բամբակագործական շրջանների կուսկազմակերպությունները պետք է արագացնեն կոլեկտիվացման տեմպը, իրենց ետ մնալը հաղթահարելու և 1931 թ. բամբակի ցանքի և կոլեկտիվացման առաջադրանքները կատարելու համար[38]:

1931 թ. ապրիլին կայացած բամբակագործական շրջանների կուսքարտուղարների խորհրդակցությունում Ղուրդուղուլիի շրջանը զեկուցեց, որ կատարել է կոնսակցության առաջադրանքը: Ապրիլի 8-ին կոլտնտեսություններում ընդգրկված տնտեսությունների թիվը հասավ 3289-ի, որը կազմում էր շրջանի տնտեսությունների 51,4 տոկոսը[39]: Խորհրդակցությունում ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը հայտարարեց, որ Ղուրդուղուլին թեւակոխել է կոլտնտեսային շարժման այն փուլը, երբ «առանց չափազանցության կարող է համատարած կոլեկտիվացման շրջանի առաջին թեկնածուն համարվել Հայաստանում»[40]:

Երկու ամիս անց կայացավ նույն շրջանի կոլտնտեսականների հավաքը: Շրջանի չորս հազար կոլտնտեսականների անունից հավաքը ընդունեց կոչ՝ ուղղված Հայաստանի և Անդրկովկասի բոլոր չքավոր ու միջակ անհատական տնտեսություններին: Զեկուցելով շրջանի նվաճումների մասին, նշվում էր, որ կոլեկտիվացումը արդեն ընդգրկել է շրջանի տնտեսությունների երկու երրորդը և ցանվել է 11,2 հազար հեկտար

---

35 Տե՛ս նույն տեղում, ց. 19, գ. 375, թ. 3։

36 Տե՛ս ЦГАНХ СССР, ф. 7446, оп. 14, д. 205, л. 20.

37 Տե՛ս «Заря Востока», 18 января 1931 г.

38 Տե՛ս «Մամկոլ», 1931 թ. մարտի 31։

39 Տե՛ս «Մամկոլ», 1931 թ. ապրիլի 11։

40 «Խորհրդային Հայաստան», 1931 թ. ապրիլի 11։

բամբակ, նախորդ տարվա 6,3 հազարի դիմաց[41]։ «Մեր շրջանը,— կարդում ենք կոչում,— ուր ցարիզմի ժամանակ արյուն-քրտինքով վարում էինք մեր անհատական տնտեսությունները և մեր աշխատանքի պտուղը տալիս կապիտալիստին, կուլակին ու չարչուն. ուր դաշնակների օրով եղբայրասպան պատերազմն արյունաքամ էր անում հայ, թուրք և քուրդ աշխատավորությանը, այդ շրջանում այժմ տարածվում են կոլտնտեսությունների ընդարձակ արտերը, հիմնվել են վեց սովխոզներ, փայտե չթին փոխարինել են տրակտորների պողպատե ջոկատները, հիմնվել է նոր բամբակաղտիչ գործարան, համատարած անգրագիտությունը փոխվել է պարտադիր ուսումով»[42]։

Ղուրդուղուլիի շրջանի կոլտնտեսականները Հայաստանի և Անդրկովկասի աշխատավոր գյուղացիներին կոչ էին անում կազմակերպել նախաձեռնող խմբեր՝ նոր կոլտնտեսություններ ստեղծելու համար։

Ղուրդուղուլիի շրջանի կոլտնտեսականների հավաքին ուղղված ՀԿ(բ)Կ Կենտկոմի ողջույնում առաջ էր քաշվում հետևյալ լոզունգը՝ յուրաքանչյուր կոլտնտեսական մինչև բերքահավաքը կոլտնտեսություն է բերում մի անհատ տնտեսատիրոջ, իսկ բամբակացանի նոր կամպանիան, այսինքն 1932 թ. գարունը, բամբակագործական շրջանները պիտի դիմավորեն որպես համատարած կոլեկտիվացման շրջաններ[43]։

Այսպիսով, ավելի քան մեկ տարվա դադարից հետո բամբակագործական շրջանների համար նորից առաջ քաշվեց համատարած կոլեկտիվացման լոզունգը, որպես օրակարգի պրակտիկ խնդիր։

Ղուրդուղուլիի շրջանում կային շատ գյուղեր, որոնք համատարած կոլեկտիվացումը իրականացրին կամ ընդհուպ մոտեցան դրան արդեն 1931 թ. ընթացքում։ Իսկ 1932 թ. հունվարին շրջանի կուսակցական կոնֆերանսը ՀԿ(բ)Կ Կենտկոմին ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Ղուրդուղուլիի կուսակազմակերպությունը, բարձր պահելով Լենինի դրոշը, անողոք պայքար մղելով կուլակության և նրա գաղափարախոս դաշնակցության, ինչպես և աջ ու «ձախ» թեքումների դեմ, շրջանի աշխատավոր գյուղացիության 82 տոկոսը ընդգրկել է կոլտնտեսությունների մեջ, որով մեր շրջանում հիմնականում ավարտված է համատարած կո-

---

41 Տե՛ս «Մաճկալ», 1931 թ. հունիսի 30։ Այլ տվյալներով կոլեկտիվացման մակարդակը եղել է դրանից ցածր։

42 «Մաճկալ», 1931 թ. հունիսի 30։

43 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. հունիսի 26։

լեկտիվացումը»[44]։ Համեմատության համար նշենք, որ մեկ տարի առաջ, 1931 թ. հունվարի 1-ին կոլեկտիվացված էր շրջանի տնտեսությունների միայն մեկ քառորդ մասը (26,4 տոկոս)[45]։ Այսինքն, 1931 թ. ընթացքում կոլտնտեսական ընտանիքների թիվը աճել էր երեք անգամ։

Այսպիսով, Ղուրդուղուլի շրջանը, առաջինը ամբողջ Հայաստանում և բամբակագործական շրջանների թվում, 1931 թ. ընթացքում իրականացրեց համատարած կոլեկտիվացումը։

Տատանումներ և տարբերություններ կան նաև մյուս բամբակագործական շրջանների կոլեկտիվացման տվյալների մեջ։ Այնուամենայնիվ պարզ է, որ բամբակագործական տնտեսությունների կեսը կոլեկտիվացնելու առաջադրանքը Հայաստանում կատարվեց որոշ ուշացումով, կարելի է ասել, աշնան սկզբին։ 1931 թ. հոկտեմբերի 1-ին կոլտնտեսությունների մեջ էր այդ շրջանների չքավոր և միջակ տնտեսությունների 54 տոկոսը[46], հունվարի 1-ի 18,0 և մարտի 1-ի 25,3 տոկոսի դիմաց[47]։ 1932 թ. հունվարի 1-ին Վաղարշապատի շրջանի կոլտնտեսություններում ընդգրկված էր գյուղացիական տնտեսությունների կեսը՝ 50,6 տոկոսը, Ղամարլուի շրջանում 64,2 և Վեդիում՝ 21,9 տոկոսը[48]։ Մեկ տարվա ընթացքում կոլեկտիվացման մակարդակը համապատասխանաբար բարձրացել էր 2,8, 4,2 և մոտ 4,0 անգամ[49]։

Այս շրջանների առանձին գյուղեր հասել էին ավելի մեծ նվաճումների։ Այսպես, Ղամարլուի կուսշրջկոմը 1931 թ. օգոստոսի վերջին ՀԿ(բ)Կ Կենտկոմին և «Խորհրդային Հայաստան» թերթին հայտնել է, որ 20 օրվա ընթացքում (օգոստոսի 10—29-ը) կոլտնտեսություններում միավորվել են ևս 1900 տնտեսություններ, որ «շրջանի 15 գյուղերում հիմնականում ավարտված է համատարած կոլեկտիվացումը»[50]։ Այդպիսի գյու-

---

44 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1932 թ. հունվարի 9։ 1931 թ. օգոստոսի 2-ի որոշման մեջ Համ(բ)Կ Կենտկոմը պարզաբանեց, որ այս կամ այն շրջանի կամ մարզի կողմից հիմնականում համատարած կոլեկտիվացման ավարտման չափանիշը ոչ թե չքավորա-միջակային տնտեսությունների 100 տոկոսանոց կոլեկտիվացումն է, այլ կոլտնտեսությունների մեջ գյուղացիական տնտեսությունների 68—70 տոկոսի ներգրավումը, ցանքի 75—80 տոկոսի ընդգրկումով։ Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 398.

45 Տե՛ս Մի՛ ՀՊԱ, ֆ. 1, ց. 17, գ. 167, թ. 26։

46 Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 495։

47 Տե՛ս նույն տեղում, գ. 198, թ. 24։

48 Տե՛ս նույն տեղում, գ. 244, թ. 2։

49 Տե՛ս նախորդ աղբյուրի համադրումը նույն տեղի գ. 167, թ. 26-ի տվյալների հետ։

50 «Խորհրդային Հայաստան», 1931 թ. օգոստոսի 30։

ղերից էին Երանոսը, Արփավարը, Մեհրաբլուն, Աղջաղշլաղը, Նոր Կողբը, Զոհրաբլուն, Դվինը և այլն։ Նույն օրերին շրջանում ստեղծվել էին երեք նոր կոլտնտեսություններ[51]։ 1931 թ. օգոստոս-սեպտեմբերին Վաղարշապատի շրջանում լրիվ կոլեկտիվացել էին Արբաթ, Ջաֆարապատ (Աբգավանդ), Վերին Խաթունարխ, Ներքին Խաթունարխ, Աղջաղալա, Դողս և այլ գյուղեր[52]։ Նոյեմբերի վերջին թերթը հաղորդում էր. Վաղարշապատի շրջանում բատրակների, չքավորների և միջակների մեջ ուժեղ բեկում է առաջացել դեպի կոլտնտեսությունները։ Անը ավելի մեծ էր սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին[53]։

Հայաստանի բամբակագործական շրջաններում միջին հաշվով կոլեկտիվացումը 1931 թ. հունվարի 1-ի 18,0 տոկոսից 1932 թ. հունվարի 1-ին բարձրացավ 55,6 տոկոսի, որը նշանակում է աճ ավելի քան երեք անգամ[54]։ Բոլոր նախադրյալները ստեղծվում էին բամբակագործական շրջանների կոլեկտիվացումը լրիվ ավարտելու համար։ 1931 թ. կոլտնտեսությունները կատարեցին բամբակի ամբողջ ցանքի 50,6 տոկոսը (13.464 հեկտար)[55]։ Բամբակագործական շրջանները ժամանակին կատարեցին ցանքի կոլեկտիվացման նախատեսված առաջադրանքը։

Դեռևս 1931 թ. մայիսի 5-ի որոշման մեջ ՀամԿ(բ)Կ Անդրերկոմը արձանագրեց, որ Անդրկովկասի բամբակագործական շրջաններն արդեն ապահովել են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1930 թ. դեկտեմբերյան պլենումի առաջադրանքների հաջող կատարումը, չքավոր և միջակ տնտեսությունների կոլեկտիվացումը հասցնելով 50 տոկոսի (Հայաստանում այդ խնդիրը, ինչպես տեսանք, կատարվեց մի փոքր ավելի ուշ՝ աշնանը)։ «Դրանով իսկ,— կարդում ենք Անդրերկոմի որոշման մեջ,— անհրաժեշտ պայմաններ են ստեղծվում Անդրկովկասի հիմնական բամբակագործական շրջաններում համատարած կոլեկտիվացմանն անցնելու և դրա հիման վրա կուլակության, որպես դասակարգի, վերացման կուսակցության գլխավոր լոզունգը կյանքում պրակտիկորեն իրագործելու համար»[56]։ Այդ ժամանակ Հայաստանում մասնավորապես ետ էին մնում Ղամարլուի և հատկապես Վեդու շրջանները։ Տվյալ հարցի կապակցությամբ քննելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի

---

51 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. օգոստոսի 26։

52 Տե՛ս «Բամբակի համար», 1931 թ. սեպտեմբեր ամսվա համարները։

53 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1931 թ. նոյեմբերի 29։

54 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 17, գ. 244, թ. 2 և գ. 167, թ. 26։

55 Տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողվածու», 1931, № 4, հոդ. 281։

56 «Заря Востока», 5 июня 1931 г.

հրահանգիչների խմբի ստուգման արդյունքները, ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. մայիսի 8-ին ընդունել էր համապատասխան որոշում և միջոցառումներ մշակել բամբակագործական շրջանների վերաբերյալ կուսակցական վերադաս մարմինների դիրեկտիվների կատարումը ապահովելու համար[57]։

Վերևում բերված փաստերին ու տվյալներին տրամաբանորեն հակառակ է գրականության մեջ արտահայտված, իհարկե առանց հիմնավորման, այն տեսակետը, թե խբր հանրապետության բամբակագործական շրջաններն արդեն 1931 թ. ամռանը դարձել էին համատարած կոլեկտիվացման շրջաններ[58]։

1931 թ. նշանակալից նվաճումների տարի էր նաև Հայաստանի նախալեռնային ու լեռնային շրջանների համար։

1931 թ. օգոստոսին Ղարաքիլիսայում (Կիրովական) կայացավ հանրապետության 11 լեռնային շրջանների անասնապահական կոլտնտեսությունների հավաք, որն ընդունեց անասնաբուծությունը զարգացնելու սոցիալիստական մրցման կոչ և միաժամանակ առաջարկեց 20 օրվա ընթացքում հավաքագրել կոլտնտեսային աշխատանքի փորձ ունեցող առնվազն 300 հարվածային կոլտնտեսականներ, նրանցից կազմակերպել 60 բրիգադ և ուղարկել ետ մնացող շրջաններն ու գյուղերը՝ կոլտնտեսային շարժման վերելքին օժանդակելու համար[59]։ Մինչ այդ հանրապետության կոլտնտեսություններին, սովխոզներին և անհատական տնտեսություններին դիմում էր ուղղել Նոր Բայազետի, Ախտայի, Մարտունու և Բասարգեչարի շրջանների հարվածային կոլտնտեսականների համագումարը։ «Սեփական փորձով մենք տեսանք,— ասված է դիմումում,— թե ինչպես կոլեկտիվ տնտեսությունը մեզ փրկում է այն բազմաթիվ կարիքներից, որոնք մեզ կաշկանդել էին անհատական տնտեսություններում եղած ժամանակ»։ Մենատնտեսներին կոչ էր արվում «թողնել մանր փոշիացած տնտեսությունները և միանալ խոշոր սոցիալիստական տնտեսություններին»[60]։ Համագումարում մեծ տպավորություն թողեց կոլեկտիվացումն ավարտած Թուսկյուլուի կոլտնտեսության զեկուցումը։ Համագումարի ընթացքում բազմաթիվ գյուղացիներ դիմում տվեցին կոլտնտեսություն ընդունվելու համար[61]։

---

57 Տե՛ս ՄԿԻ ՀՖԱ, ֆ. 1, ց. 16, գ. 3, թ. 106—107։

58 Տե՛ս Հ. Վարդանյան, Հայաստանի կոմպարտիայի պայքարը գյուղում սոցիալիզմի հաղթանակի համար, էջ 155։

59 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. օգոստոսի 26։

60 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. օգոստոսի 19։

61 Տե՛ս «Մաճկալ», 1931 թ. օգոստոսի 20։

1931 թ. ընթացքում կոլեկտիվացման բարձր տեմպերի հասան հանրապետության գրեթե բոլոր նախալեռնային ու լեռնային շրջանները։ 1932 թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատավոր տնտեսությունների կեսից ավելին կոլտնտեսություններում ընդգրկված էին Իջևանի, Գորիսի, Ղափանի և Մեղրու շրջաններում, ընդ որում Մեղրու շրջանում կոլեկտիվացումը հիմնականում մոտենում էր ավարտին։ Տնտեսությունների մեկ երրորդը և մի քիչ ավելին (33—43 տոկոս) կոլտնտեսությունների մեջ ներգրավել էին 11 շրջաններ, այդ թվում Աշտարակը, Լենինականը, Բասարգեչարը, Նոր Բայազետը, Մարտունին, Վարաքիլիսան, Ստեփանավանը, Դիլիջանը, Կոտայքը և այլն։ Մյուս շրջաններում կոլտնտեսությունների մեջ էին տնտեսությունների մեկ քառորդը կամ դրանից մի փոքր ավելի կամ պակաս մասը։ Համեմատաբար ետ էր մնում Թալինի շրջանը։ Վերոհիշյալ շրջաններում կոլեկտիվացման միջին մակարդակը կազմում էր 36,1 տոկոս[62]։

Դեռևս 1931 թ. սեպտեմբերին կոլտնտեսություններում գյուղացիների ընդգրկումը հիմնականում ավարտվել էր Կոտայքի շրջանի Ծլղոտվան (Կոտայք), Աղաձոր (Կաթնաղբյուր), Մհուբ (Բալահովիտ), Բաշգյուղ (Ակունք) և Բեղաքլու գյուղերում, իսկ ամբողջ շրջանում կոլեկտիվացումը կազմում էր 38 տոկոս[63]։ Նույն ամսում ավելի քան 80 տնտեսություններ ընդունեց Բասարգեչարի (Վարդենիս) շրջանի Ղոխբուլաղի (Ակունք) կոլտնտեսությունը, որը հիմնադրվել էր 1928 թ., 20 տնտեսությամբ։ Այժմ նա ընդգրկում էր 182 տնտեսություն կամ գյուղի տնտեսությունների երեք քառորդը[64]։ Սակայն կոլեկտիվացման այսպիսի առաջավոր օրինակները դեռևս մասնակի էին և բնորոշ չէին ամբողջ հանրապետության համար։

Կոլեկտիվացման վերելքի կազմակերպման հետ միաժամանակ հետևողական պայքար էր մղվում այն սխալների ու կուսակցության գծի աղավաղումների դեմ, որ Հայաստանում դեռևս թույլ էին տալիս առանձին հանրապետական, շրջանային ու գյուղական կազմակերպություններ ու մարմիններ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը շարունակում էր պարբերաբար քննարկել կոլտնտեսաշարժման հարցերը և կենսագործել նրա ամրապնդման շահերից բխող միջոցառումներ։

Կոլեկտիվացման վերելքի կազմակերպման և ծռումների դեմ անո-

62 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 17, գ. 244, թ. 2։

63 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 682, ց. 1, գ. 32, թ. 12.

64 Տե՛ս նույն տեղում, թ. 21—22։

ղոք պայքար կազմակերպելու հարցերը բազմակողմանիորեն քննարկվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1931 թ. հուլիսյան միացյալ պլենումում[65]։ Հանրագումարի բերելով կոլեկտիվացման նոր վերելքի ընթացքը և արդյունքները, պլենումը նշեց, որ նրա տեմպը դեռևս անբավարար է, որ այն ետ է մնում հատկապես անասնապահական շրջաններում։ Պլենումը կոլեկտիվացման անբավարար դրության հիմնական պատճառը համարեց կուսակցության գյուղավոր դծի աջ օպորտունիստական աղավաղումները, ինքնահոսի պրակտիկան, ինչպես նաև «ձախ» խոտորումները։ Մի շարք կուսակցական կազմակերպություններ կանգնել էին 1930 թ. կամավորության սկզբունքի կոպիտ խախտումներն ուղղելու աջ օպորտունիստական և ինքնահոսի պրակտիկայի ճանապարհի վրա, որը նշանակում էր կամավորության սկզբունքի պաշտպանության անվան տակ հրաժարվել իսկական կոլտնտեսային վերելքի կազմակերպումից և կոլտնտեսային շարժման ղեկավարումից։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը արձանագրեց կուսդծի աղավաղումների և սխալների ու թերությունների այնպիսի փաստեր, ինչպիսիք էին կուլակության դեմ անբավարար պայքարը և չքավորության կազմակերպման ու նրա ակտիվության բարձրացման թերագնահատումը, ազգային փոքրամասնությունների և հատկապես քրդերի թույլ ընդգրկումը կոլտնտեսություններում, աշխատանքի անբավարար կազմակերպումը։ Պլենումը հատկապես խիստ քննադատության ենթարկեց հողժողկոմատի և կոլտնտեկենտրոնի կողմից շրջանների և գյուղերի համար ստուգիչ թվեր սահմանելու պրակտիկան, այն համարելով քաղաքական սխալ։

Կոպիտ սխալներ էին թույլ տրվել Բասարգեչարի, Վաղարշապատի, Նոր Բայազետի, Աշտարակի և այլ շրջաններում[66]։

Միջակ գյուղացիության նկատմամբ կուսակցության քաղաքականության կոպիտ խոտորումներ և սխալներ բացահայտվեցին գյուղատնտեսական հարկի և մթերումների բնագավառում։ Ինչպես նշված է ՀԿ(բ)Կ VIII համագումարին (1932 թ. հունվար) տրված Կենտկոմի հաշվետվության մեջ, չքավորների նկատմամբ վարչական հարկադրանքի փաստերը 1931 թ. ընդհանուր երևույթ էին դարձել Դարալագյազի, Վեդու և այլ շրջաններում։ Մթերող կազմակերպությունները թափանցած զանազան բախտախնդիրներ ու խորթ տարրեր, կարդում ենք նույն

65 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. օգոստոսի 7 և 16-ի համարները։ Տե՛ս նաև ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 17, գ. 5, թ. 8—37, 42—46 և գ. 10, թ. 217—220։

66 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 16, գ. 3, թ. 38, 43—46, 80, ց. 19, գ. 184, թ. 1—5։ «Խորհրդային Հայաստան», 1931 թ. նոյեմբերի 17։

հաշվետվության մեջ, այդ մարմինների բյուրոկրատական վերաբերմունքի և կուսակցական-սովետական մարմինների անուշադրության ու կոնկրետ ղեկավարության բացակայության պայմաններում կարողացան ամենասյլանդակ ձևով խախտել կուսակցության քաղաքականությունը գյուղում, ծաղրուծանակի ենթարկել միջակին և ճնշում գործադրել նրա նկատմամբ։ Որպես դրա ցցուն օրինակ բերված է Դարալագյազի շրջանը, որտեղ Արփա գյուղում, ինչպես տեսանք, փորձ կատարվեց աշխատավոր գյուղացիության մեջ առաջացած դժգոհությունը օգտագործել հակասովետական նպատակներով (1931 թ. հուլիս)[67]։

Գյուղատնտեսական մթերքների մթերումների սխալներն ուղղվեցին պլանները իջեցնելու միջոցով։ Ամբողջ Անդրկովկասի համար հացահատիկի մթերման պլանը 95 հազար տոննայից իջեցվեց 82 հազար տոննայի[68]։ Դարալագյազում զգալի չափով կրճատվեցին հացահատիկի, կաթնամթերքների և ձվի մթերումների պլանները, իսկ թռչունը լրիվ հանվեց պլանից[69]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Անդրերկոմը մի շարք որոշումներ կայացրին և միջոցառումներ մշակեցին նշված և մյուս սխալներն ուղղելու համար։ Դեռևս ապրիլին կուսակցության կենտրոնական օրգան «Պրավդա» թերթը հանդես եկավ Անդրկովկասում թույլ տրված կոպիտ սխալների (կոլտնտեսային շարժման դեկրետավորում, շրջանների և գյուղերի համար ստուգիչ թվերի պրակտիկա և այլն) քննադատությամբ։

Սակայն, պետք է նշել, որ սխալների բացահայտումը, մերկացումը և ուղղումը ՀԿ(բ)Կ Կենտկոմի կողմից կատարվում էր ոչ բավարար խորությամբ ու արագությամբ։ Այս դեպքում ևս հանրապետության և Անդրերկովկասի կուսակցական կազմակերպություններին օգնության հասավ Համկ(բ)Կ Կենտկոմը։ 1931 թ. հոկտեմբերի 31-ին կուսակցության Կենտրոնական կոմիտեն որոշում ընդունեց «Համկ(բ)Կ Անդրերկոմի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կենտկոմների ղեկուցումների առթիվ»[70]։ «Կենտկոմը գտնում է,— ասված է որոշման մեջ,— որ Անդրբ-

67 Տե՛ս ՄԼԻ ՀՄՍ, ֆ. 1, ց. 19, գ. 4, թ. 47։

68 Տե՛ս նույն տեղում, ց. 17, գ. 245, թ. 22։

69 Տե՛ս նույն տեղում, գ. 122, թ. 17—19։

70 Տե՛ս «Գործի վերածենք լենինյան շտաբի հոկտեմբերի 31-ի որոշումը (Համկ(բ)Կ ԿԿ հոկտեմբերի 31-ի որոշումը և Համկ(բ)Կ Անդրերկոմի ու ՀԿ(բ)Կ ԿԿ որոշումներն այդ որոշումը կիրառելու միջոցների մասին)»։ Երևան, 1932, էջ 3—17։ Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1931 թ. նոյեմբերի 11։ Որոշումը թերթը տպագրել է երկրորդ անգամ՝ առաջին տպագրության մեջ (նույն թերթի նոյեմբերի 4-ի համարը) աղավաղումներ և բացթողումներ թույլ տալու պատճառով։

երկոմի և ազգային կոմկուսների կենտկոմների աշխատանքի մեջ թույլ են տրվել լուրջ քաղաքական սխալներ, որոնցից հիմնականը հանդիսանում է գյուղացիական հարցում կատարված սխալը»։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման բնագավառում նրանք առավել ուշադրություն դարձնելով գործի տեխնիկական կողմին, չէին ապահովել աշխատավոր գյուղացիության «ճիշտ քաղաքական ղեկավարումը»։ Սխալների կոնկրետ արտահայտություններն էին հացամթերումների մեջ թույլ տրված «մի շարք ամենակոպիտ շեղումները», առանց բավարար նախապատրաստական աշխատանքի կոլեկտիվացման անցկացումը մի շարք շրջաններում, որից օգտվելով, կուլակային և հակասովետական տարրերը հնարավորություն էին ստացել աշխուժացնելու իրենց ազդեցությունը գյուղում, չնայած Անդրկովկասի գյուղացիության հիմնական զանգվածները շրջադարձ էին կատարել դեպի կոլտնտեսությունները։ Համկ(բ)Կ Կենտկոմը նշում էր, որ Անդրերկոմը և հանրապետական կենտկոմները չեն բացահայտել և ժամանակին չեն ուղղել սխալները։ Կենտկոմը արձանագրեց նաև գյուղական կուսակցական կազմակերպությունների թուլության փաստը, և անհրաժեշտ համարեց հատուկ ուշադրություն նվիրել դրանց ուժեղացմանը և ամրապնդմանը։

Համկ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշումը քաղաքական-ծրագրային նշանակություն ունեցող փաստաթուղթ էր Անդրկովկասի կուսակցական և պետական մարմինների համար։ Անդրերկոմը մշակեց նրա կենսագործումն ապահովող միջոցառումներ[71], իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմի գործնական ծրագիրը իր արտացոլումը գտավ 1931 թ. նոյեմբերի 19-ի որոշման մեջ[72] և նոյեմբերի 22-ին հաստատված պլանում[73]։

Գյուղի նկատմամբ թույլ տրված նոր սխալների ուղղումը կարևոր նշանակություն ունեցավ գյուղատնտեսության կոլեկտիվացման վերելքի կազմակերպման և զարգացման գործում։

---

71 Տե՛ս նույն տեղում, էջ 18—49։ Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1931 թ. դեկտեմբերի 14։

72 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1932 թ. հունվարի 4։

73 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 18, գ. 1, թ. 79։

Գրականության մեջ հոկտեմբերի 31-ի և նոյեմբերի 22-ի որոշումները սխալ կերպով դիտվել են որպես Համկ(բ)Կ Կենտկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումների որոշումներ։ Տե՛ս Ա. Նսայան, նշված աշխ., էջ 185—186։

1931 թ. ապրիլի 27-ին Զանգեզուրում (և Նախիջևանում) տեղի ունեցավ երկրաշարժ, որն ղգալի ավերածություններ առաջացրեց Սիսիանի, Գորիսի, Ղափանի, մասամբ նաև Մեղրու շրջաններում։ Ավերվեցին կամ վնասվեցին հաղարավոր տներ ու արտադրական կառույցներ։ Եղան նաև մարդկային զոհեր։ Այդ ամենը ազդեց նաև կոլեկտիվացման արդյունքների վրա։

Զեռնարկվեցին արտակարգ միջոցառումներ բնակչությանը շտապ օգնություն ցույց տալու և տներն ու շինությունները նորոգելու կամ նորը կառուցելու համար։ Ստեղծվեց կառավարական արտակարգ հանձնաժողով, Հանրապետության ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Երզնկյանի նախագահությամբ, որը երկու օր անց ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի նիստում զեկուցեց շտապ ձեռնարկված միջոցառումների մասին[74]։ Միութենական կառավարությունը ապրիլի 29-ի որոշումով 2 միլիոն ռուբլի առանձնացրեց, այն դնելով ԱՍՖՍՀ կառավարության տրամադրության տակ[75]։ Անդրկովկասյան ֆեդերացիայի ժողկոմխորհը և Կենտգործկոմը որոշում ընդունեցին Հայաստանի և Նախիջևանի երկրաշարժից տուժած բնակչությանն օգնելու և ավերված շրջանները վերականգնելու ձեռնարկումների մասին։ Երկրաշարժից տուժած չքավոր ու միջակ տնտեսություններն ազատվեցին 1931 թ. գյուղատնտեսական հարկից։ Օգնության և վերականգնման համար բաց թողնվեց մեկ միլիոն ռուբլի, 100 հազար խորանարդ մետր շինափայտ և այլն[76]։

Զանգեզուրի բնակչությանն օգնության հասավ ամբողջ սովետական ժողովուրդը։ Մամուլում մեծաքանակ նյութեր են հրապարակված սովետական հանրապետությունների ու մարզերի պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների կողմից Հայաստանի ու Նախիջևանի աղետյալներին օգնելու մասին։

1931—1932 թթ. ընթացքում Զանգեզուրի շրջաններին տրամադրվեց 800 սայլ, առանձնացվեցին 800 շինարար վարպետներ, անցկացվեց 80 կիլոմետր միջգյուղային ճանապարհ։ Նույն ժամանակամիջոցում կառուցվեց 1500 և վերանորոգվեց 2500 տուն, ղգալի թվով դպրոցներ, բաղնիքներ, կուլտուր-լուսավորական, բուժական-պրոֆիլակտիկ հիմնարկությունների շենքեր, ինչպես նաև անասնագոմեր ու այլ շինություններ։ Ընդհանուր առմամբ Զանգեզուրի գյուղերի վերականգնման

---

74 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 17, գ. 9, թ. 403։

75 Տե՛ս «ԱՍՀՄ օր. և կարգ. ժողվածու», 1931, № 26, հոդ. 211։

76 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. մայիսի 9։

համար հատկացված և նվիրաբերած գումարը հասավ մոտ 11 միլիոն ռուբլու[77]։

Սովետական իշխանության հոգատարության և սովետական ժողովուրդների եղբայրական բարեկամության շնորհիվ Զանգեզուրը բուժեց իր վերքերը։ Կարճ ժամանակամիջոցում վերականգնվեցին բնակելի և մյուս շինությունները, Ղափանի արդյունաբերության նորմալ գործունեությունը։ Զանգեզուրի գյուղացիությանը ցույց տված օգնությունը նպաստեց նաև գյուղատնտեսության կոլեկտիվացման զարգացման գործին։

1931 թ. վերջին Հայաստանում գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը բարձրացավ 39,9 տոկոսի[78], նույն թվականի հունվարի 1-ի 12,1 տոկոսի դիմաց[79]։ Կոլտնտեսություններում ընդգրկվել էին 67,3 հազար բատրակ, չքավոր և միջակ տնտեսություններ։ Մեկ տարվա ընթացքում կոլտնտեսությունների մեջ ընդունվել էին 47 հազար տնտեսություններ, մինչև 1931 թ. հունվարի 1-ը ընդունված 20,3 հազարի դիմաց[80]։

1931 թ., ինչպես նշվել է, ճշտվեցին բոլոր գյուղացիական տընտեսությունների և կոլեկտիվացման ենթակա տնտեսությունների թվական տվյալները։ Ըստ ՀՍԽՀ Պետպլանի 1931 թ. հարկային վիճակագրության տվյալների, գյուղացիական տնտեսությունների թիվը կազմում էր 183.626։ Նրանցից ձայնազուրկ էին (կուլակներ և ուրիշներ) 6.013-ը և գյուղից հեռացել էին 8.758-ը, որոնք կոլեկտիվացման ենթակա չէին։ Իսկ կոլեկտիվացման ենթակա տնտեսությունների թիվը հասնում էր 168.855-ի, մինչև այդ ընդունված 157 հազարի դիմաց (այդ փոփոխության պատճառով տեղի ունեցավ կոլեկտիվացման տոկոսների փոքր նվազում)[81]։ Ելնելով այդ ճշտումից, ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. հունիսի 8-ին որոշում ընդունեց կոլեկտիվացման մակարդակը որոշելու ելակետային տվյալների մասին[82]։

1931 թ. ընթացքում հանրապետության կոլտնտեսությունների թիվը 495-ից հասավ 897-ի։ Նրանցից 811-ը գյուղատնտեսական արտել-

---

77 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 19, գ. 18, թ. 80։

78 Տե՛ս նույն տեղում, ց. 17, գ. 244, թ. 2։

79 Տե՛ս նույն տեղում, գ. 198, թ. 33։

80 Տե՛ս նույն տեղում, ց. 19, գ. 205, թ. 73։

81 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ. հունիսի 19։

82 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 14, գ. 1, թ. 117։

ներ էին, 82-ը հողը համատեղ մշակող ընկերություններ և միայն չորսը՝ կոմունա[83]։ 1931 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կոլտնտեսությունների սոցիալական կազմը հետևյալն էր՝ 10,5 տոկոս բատրակներ, 47,0 տոկոս չքավորներ և 42,5 տոկոս միջակներ։ 1930 թ. հունիսի համեմատությամբ միջակների տեսակարար կշիռը բարձրացել էր 12 տոկոսով[84]։ Սակայն պետք է նկատել, որ արտադրության միջոցների հանրայնացման մակարդակը բավական ցածր էր, հատկապես կաթնամթերատու անասունների գծով։ Այսպես, հանրապետության կոլտնտեսությունների տվյալներով 1931 թ. հուլիսի 1-ի դրությամբ տնտեսությունների գծով 25,4 տոկոսով կոլեկտիվացման պայմաններում (միջակների 35 տոկոսի կոլեկտիվացումով), հանրայնացվել էր բանող անասունների 12,1 և մթերատու անասունների (կով, գոմեշ) 6,3 տոկոսը, և դա այն դեպքում, երբ, ինչպես տեսանք, կոպիտ սխալներ էին թույլ տրվել գյուղացիների մեկական կովերի հանրայնացման գծով։ Ղարաքիլիսայի և Համամլուի շրջաններում մթերատու անասունները բոլորովին չէին հանրայնացվել, իսկ բամբակագործական շրջաններում այն կազմում էր միայն մեկ տոկոս[85]։ Դրա հիմնական պատճառը մինչև կոլտնտեսություն մտնելը հատկապես կաթնամթերատու անասունները մորթելն էր, ինչպես նաև որոշ տնտեսությունների կողմից անասունները թաքցնելը։ Դա ծանր վիճակ ստեղծեց անասնաբուծության բնագավառում և ազդեց կոլտնտեսությունների հզորության վրա։

1931 թ. մի շարք հանրագումարներ պերճախոս կերպով վկայում էին մասնավոր, անհատական տնտեսությունների նկատմամբ կոլեկտիվ տնտեսությունների առավելությունների մասին։ Կոլտնտեսականների եկամուտն ավելի բարձր էր, քան համագյուղացի մենատնտեսներինը։ Կոլտնտեսություններում մեկ լծկանին ընկնում էր 2,4 հեկտար վար, իսկ անհատական տնտեսություններում՝ 1,3 հեկտար։ Բամբակագործական շրջաններում մեկ մենատնտես ընտանիքն ուներ 0,7 հեկտար ցանք, իսկ կոլտնտեսականի ընտանիքը՝ 1,2 հեկտար և այլն[86]։

Այսպիսով, հանրագումարի բերելով 1931 թ. արդյունքները, կարող ենք նշել, որ մեծ շրջադարձ կատարվեց Հայաստանի գյուղի չքավորա-միջակային բնակչության մեջ՝ դեպի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ 1931 թ. հանրապետությունում դարձավ մաս-

83 Տե՛ս նույն տեղում, ց. 19, գ. 205, թ. 73։

84 Տե՛ս նույն տեղում, ց. 20, գ. 94, թ. 3։

85 Տե՛ս նույն տեղում, ց. 18, գ. 50, թ. 2—11։

86 Տե՛ս նույն տեղում, ց. 17, գ. 5, թ. 32։

սայական կոլեկտիվացման ժամանակաշրջան, որն առանձին շրջաններում ու վայրերում վերածվեց համատարած կոլեկտիվացման։ Այդ ժամանակաշրջանը բեկումնային էր նաև ամբողջ Անդրկովկասի համար[87]։ Սակայն, ի տարբերություն Ադրբեջանի ու Վրաստանի, Հայաստանում համատարած կոլեկտիվացումն առայժմ ընդգրկում էր սահմանափակ տերիտորիա՝ ընդամենը մեկ շրջան (Դուրդուղուլի) և որոշ շրջաններ (Դամարլու, Վաղարշապատ, Մեղրի, Զափան)՝ մասամբ։ Հայաստանում բեկման մյուս առանձնահատուկ կողմն այն է, որ համեմատած Սովետական Միության մի շարք շրջաններում 1929 թ. երկրորդ կեսին տեղի ունեցած բեկման հետ, նա այնուհետև անընդմեջ զարգացում չունեցավ, ընդհատվեց։ Հանրապետությունում համատարած կոլեկտիվացման հաղթանակը ձգձգվեց և, ինչպես կտեսնենք, տևեց մինչև 30-ական թվականների կեսերը և երկրորդ հնգամյակի վերջը։

1931 թ. մեծ նվաճումների տարի էր նաև ամբողջ Սովետական Միության համար։ Արդեն այդ տարվա կեսերին կոլեկտիվացումը հիմնականում ավարտել էին Հյուսիսային Կովկասը, Ստորին Վոլգան, Միջին Վոլգան, Ուկրաինան, Ղրիմը, Ուրալը և Մոլդավիան։ Ելնելով դրանից Համկ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. օգոստոսի 2-ին որոշում ընդունեց կոլեկտիվացման հետագա տեմպերի և կոլտնտեսությունների ամրապնդման խնդիրների մասին[88]։ Արձանագրելով հիշյալ հացահատիկային շրջաններում կոլեկտիվացման ավարտումը, Համկ(բ)Կ Կենտկոմը սահմանեց մյուս շրջանների ժամկետները։ Մյուս հացահատիկային շրջաններում, ինչպես նաև Միջին Ասիայի, Ղազախստանի և Անդրկովկասի բամբակագործական և երկրի ճակնդեղագործական շրջաններում կոլտնտեսությունների մեջ գյուղացիների ընդգրկումը նախատեսվում էր հիմնականում ավարտել 1932 թ.։ Սովետական Միության մնացած, այդ թվում սպառող գոտիներում Կենտկոմն առաջարկում էր կոլեկտիվացումը հիմնականում վերջացնել 1932—33 թ.։ Կենտկոմը միաժամանակ խիստ կերպով զգուշացնում էր թույլ չտալ, որ գյուղացիներին կոլտնտեսությունների մեջ ներգրավելու պայքարը վերածվի «կոլեկտիվացման տոկոսների ետևից ընկնելու անառողջ վազքի», փքուն տոկոսների ձևաբերման։

---

87 Տե՛ս П. Ломашвили, Великий переворот, Тбилиси, 1972.

88 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 398—399. Այս որոշումը «Խորհրդային Հայաստան» թերթում (1931 թ. օգոստոսի 4-ի համարում) հրապարակվել է կոպիտ աղավաղումներով։

Չնայած այդ զգուշացումներին, այնուամենայնիվ, ինչպես տեսանք, Հայաստանում, նաև Անդրկովկասում, տեղի ունեցան այդ որոշման խախտումներ և կոլեկտիվացում՝ առանց լուրջ նախապատրաստության, այն արագացնելու և տոկոսների հաշվից ընկնելու ձգտումներ ու փորձեր։

Կոլեկտիվացումն ավարտած շրջանների համար կարևոր խնդիր էր դառնում կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդումը։ Մյուս շրջանների համար Կենտկոմը պահանջում էր ամրապնդել կոլեկտիվացման ձեռք բերած հաջողությունները և ուժեղ պայքար ծավալել կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպական ամրապնդման, տնտեսական-շինարարական աշխատանքները բարելավելու ուղղությամբ։

Այսպիսով, Հայաստանում կոլեկտիվացումը ավարտվելու էր բամբակագործական շրջաններում՝ 1932 թ., իսկ ամբողջ Հանրապետությունում՝ 1932—33 թ., այսինքն առաջին հնգամյակի վերջում։

Անդրկոմը 1931 թ. դեկտեմբերի 29-ի՝ կոլտնտեսային շինարարության դրության և խնդիրների մասին որոշումով նախատեսեց 1932 թ. երկրամասում կոլտնտեսությունների մեջ ապահովել չքավոր ու միջակ տնտեսությունների առնվազն 50—55 տոկոսը, իսկ հիմնական բամբակագործական շրջաններում ավարտել համատարած կոլեկտիվացումը[89]։

Գյուղի սոցիալիստական վերակառուցման և սոցիալիստական ինդուստրացման նվաճումները հանրագումարի բերվեցին ՀԿ(բ)Կ VIII համագումարում, որը կայացավ 1932 թ. հունվարին։ Համագումարը քննարկեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը, անասնապահության սոցիալիստական վերակառուցման խնդիրների մասին զեկուցումը և այլ հարցեր։ Համագումարը բանաձևում արձանագրեց, որ հաշվետու ժամանակաշրջանը «նշանակալից էր ծավալուն սոցիալիստական արշավով կապիտալիստական տարրերի դեմ և չքավոր ու միջակ գյուղացիության վճռական շրջադարձով դեպի սոցիալիզմը»[90]։ Համագումարը հան-

---

89 Տե՛ս «Справочник партработника Закавказья», выпуск третий, 1932, стр. 92.

90 «Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության VIII համագումարի բանաձևերը», Երևան, 1932, էջ 6։

Գրականության մեջ կոպիտ սխալներ ու աղավաղումներ են թույլ տրվել ՀԿ(բ)Կ VIII համագումարի հարցերի լուսաբանության կապակցությամբ։ Բ. Օհանջանյանը գրել է, թե իբր համագումարը պարտավորեցրեց անշեղորեն կենսագործել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հուլիսի 3-ի «Անասունները բռնի կերպով հանրայնացնելու մասին» որոշումը։

ամանորին անդրադարձավ նաև գյուղացիական հարցում թույլ տված քաղաքական սխալների վերացման, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի համապատասխան դիրեկտիվների կենսագործման հետ կապված հարցերին։ Համագումարի որոշումները կարևոր նշանակություն ունեցան կոլտնտեսությունների ամրապնդումը և կոլտնտեսային շարժման հետագա վերելքը կազմակերպելու տեսակետից։

1932 թ. դարձավ կոլեկտիվացման սխալներն ուղղելու և կոլտնտեսությունների ամրապնդման տարի։ Կոլտնտեսային շարժման վերելքը ժամանակավորապես ընդհատվեց, իսկ դրա փոխարեն ծավալվեցին կոլտնտեսությունների քաղաքական և տնտեսական-կազմակերպական ամրապնդման աշխատանքները։ Միաժամանակ լուծվում էին կոլտնտեսային հանրային արտադրության ստեղծման հարցերը։ Որպես նոր երևույթ այդ հարցերը (աշխատանքի կազմակերպումը՝ բրիգադների և օղակների ստեղծումը, վարձատրությունը և այլն) լուծվում և արմատավորվում էին ստատիճանաբար, որոնումների և դժվարությունների հաղթահարելու ճանապարհով։

Կոլտնտեսություններն ամրապնդելու կարևոր միջոցառումներից էր դրանց մաքրումը դասակարգային խորթ, թշնամական տարրերից։ 1932 թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին Հայաստանում կոլտնտեսություններից զտվեց 1186 կուլակային տնտեսություն[91]։ Ամբողջ տարվա ընթացքում կոլտնտեսություններից զտվեց 1300 տնտեսություն, իսկ բոլոր հեռացած տնտեսությունների թիվը հասավ 7800-ի։ Դրա փոխարեն կոլտնտեսությունների մեջ ներգրավվեցին 2200 տնտեսություններ[92]։ Ցամաք, ինչպես նաև մաղման հետևանքով հանրապետությունում կոլեկտիվացումը 1932 թ. հունվարի 1-ի 39,9-ից 1932 թ. սեպտեմբերի 1-ին իջավ 36,9 տոկոսի[93] և մինչև տարեվերջ մնաց դրեթե

Այնուհետև նա շարադրել է այդ որոշման բովանդակությունը։ Տե՛ս Բ. Օհանջանյան, Հայաստանի կոմունիստական պարտիան գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին (1930—1934 թթ.), Երևան, 1955, էջ 134։ Իրականում դա վերաբերում է նույն վերնագրով՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. մարտի 26-ի որոշմանը, որը, բնականաբար չէր կարող հիշատակվել և քննարկվել երկու ամիս առաջ կայացած համագումարում։ Այնուհետև, հեղինակը որպես նշված որոշման աղբյուր ցույց է տվել «Պրավդա» թերթի 1931 թ. հուլիսի 4-ի համարը, որտեղ նման բան գոյություն չունի և չէր էլ կարող լինել։

91 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1932 թ. նոյեմբերի 1 (առաջնորդող հոդվածը)։

92 Տե՛ս «ՀԿ(բ)Կ IX համագումարի սղագրական հաշվետվություն։ 1934 թ. 10—13 հունվարի», Երևան, 1935, էջ 71։

93 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 19, դ. 174, թ. 6։

նույն մակարդակի վրա (1933 թ. հունվարի 1-ին կոլեկտիվացումը կազմում էր 37,0 տոկոս)[94]։

Կոլտնտեսությունների ստեղծումը և զտումը տեսական միջոցառում էր, որը շարունակվեց նաև հետագա տարիներին։

Կոլտնտեսությունների ամրապնդման ուղղությամբ ձեռք էին բերվել միայն առաջին հաջողություններ։ Դրանք կարևոր դեր խաղացին կոլտնտեսությունների մեջ շքավոր և միջակ գյուղացիների նորանոր զանգվածներ ներգրավելու համար։

1933 թ. հունվարին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը ամփոփեց առաջին հնգամյա պլանի ժամկետից շուտ կատարման հանրագումարները և նշեց, որ այդ պլանի հաջող կատարման ու ինդուստրացման շնորհիվ Սովետական Միությունը ագրարային երկրից վերածվել է ինդուստրիալ երկրի, որ «հետամնաց, մանրագյուղացիական երկրից, ինչպիսին հին Ռուսաստանն էր, ՍՍՀՄ-ն առաջ շարժվեց ու կանգնեց տեխնիկատնտեսական տեսակետից առավել զարգացած երկրների առաջին շարքում»[95]։ Ստեղծվել էր սեփական տեխնիկական բազա՝ ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերակառուցելու համար։

Երկրի կարևոր շրջաններում (հացահատիկային, տեխնիկական մշակույթների և այլն) հիմնականում ավարտվել էր համատարած կոլեկտիվացումը և կուլակության որպես դասակարգի վերացումը։ «Ոչնչում» հարցը լուծվել էր սոցիալիզմի օգտին՝ ինչպես գյուղում, այնպես էլ քաղաքում։

Գյուղի շքավոր և միջակ զանգվածները վերջնականապես շրջադարձ կատարեցին դեպի սոցիալիզմը։ Սովետական Միությունը, նշեց ՍՄԿԿ XVII կոնֆերանսը (1932 թ. հունվար-փետրվար), մանր-հողագործական երկրից դարձավ աշխարհում ամենախոշոր հողագործական երկիրը[96]։ Բազմամիլիոն գյուղացիական տնտեսությունները միավորվեցին 211. 700 խոշոր սոցիալիստական տնտեսություններում (1932 թ. վերջին), որոնք ընդգրկում էին բոլոր գյուղացիական տնտեսությունների 61,5 և ցանքատարածությունների 77,7 տոկոսը (1932 թ. հուլիսի 1-ի դրությամբ)։ Կազմակերպվել էր 4337 սովխոզ։ Գյուղատնտեսու-

---

94 Տե՛ս նույն տեղում, ց. 25, գ. 278, թ. 42։

95 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում...», III մաս, էջ 218։

96 Տե՛ս նույն տեղում, էջ 185։

թյանը ի սպաս դրվեց նորագույն տեխնիկական բազան, ի դեմս 2446 մեքենատրակտորային կայանների[97]:

Ձևավորվեց կոլտնտեսային գյուղացիությունը, որպես սոցիալիստական հասարակության նոր դասակարգ: Նա դարձավ գյուղի կենտրոնական դեմքը: Նոր բովանդակություն ստացավ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը: Լայնացավ սովետական իշխանության հենարանը գյուղում:

Առաջին հնգամյա պլանի կենսագործման շնորհիվ կառուցվեց սոցիալիզմի նյութատեխնիկական հիմքը: Սովետական ժողովուրդը թևակոխեց պատմական զարգացման նոր ժամանակաշրջան, երբ խնդիր էր դրվում ավարտել սոցիալիզմի կառուցումը մեր երկրում: Դրան էր կոչված երկրորդ հնգամյա պլանը: Առաջին հնգամյակի ընթացքում մեծ վերելք ապրեց նաև Սովետական Միության անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանը: Ագրարայինից նա դարձավ ագրարային-ինդուստրիալ երկիր: Վճռական նվաճումներ ձեռք բերվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում: Կոլտնտեսությունների մեջ միավորվեց աշխատավոր գյուղացիության ավելի քան մեկ երրորդը: Կոլտնտեսային գյուղացիությունն աստիճանաբար դառնում էր գյուղի կենտրոնական դեմքը: Եթե շատ հանրապետություններում համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտվել էր, ապա Հայաստանում (ինչպես նաև Վրաստանում) այդ խնդրի կատարումը հասունացավ միայն երկրորդ հնգամյակի տարիներին: Փաստորեն Հայաստանի համար ուժեղ չստացվեց կոլեկտիվացումը առաջին հնգամյակի ընթացքում ավարտելու պլանը: Այնուամենայնիվ մեծ չափով դերազանցվեցին առաջին հնգամյա պլանով սկզբնապես սահմանված կոլեկտիվացման առաջադրանքները:

---

97 Տե՛ս «Народное хозяйство СССР», Статистический сборник, Госстатиздат, М., 1956, стр. 99—100.

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ (1933—1937 ԹԹ.)

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊԱՅՔԱՐԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ (1933—1934 ԹԹ.)

1. ՔԱՂԱՔԱԿԻՆՆԵՐԸ ԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ I ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ժամկետից շուտ ավարտելով առաջին հնգամյա պլանի կենսագործումը, սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ նոր հնգամյա պլանի կատարմանը: Երկրորդ հնգամյակի խնդիրներն էին՝ ավարտել ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը, վերացնել կապիտալիստական տարրերի մնացորդները, մարդու կողմից մարդու շահագործում ծնող ու հասարակությունը շահագործող և շահագործվող դասակարգերի բաժանող պատճառները: Սովետական Միությունը թևակոխեց պատմական նոր ժամանակաշրջան, երբ ավարտվելու էր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը:

Հնգամյա պլանի կարևոր խնդիրներից մեկը գյուղատնտեսական արտադրության վերելքի կազմակերպումն էր: Սակայն նորաստեղծ կոլտնտեսությունների գործունեության մեջ գոյություն ունեին մի շարք թերություններ, որոնք արգելակում էին կոլտնտեսային գյուղատնտեսության զարգացմանը և կոլտնտեսությունների առավելությունների դրսևորմանը:

Կոլտնտեսությունները դեռևս կազմակերպորեն թույլ էին, վատ էր կազմակերպված աշխատանքը, հաշվառումը, նրանցից շատերը դեռևս

շահութաբեր չէին, չէր ստեղծվել և ամրապնդվել հանրային աշխատանքային կարգապահությունը։ Բացի այդ, ջախջախված կուլակության մնացորդները թափանցելով կոլտնտեսությունները, ձգտում էին դրանք քայքայել ներսից։ Նրանց օգնության էին գալիս ծուլերը և կոլտնտեսային հարստության գողերն ու հափշտակիչները, կոլտնտեսություններում տեղ գտած հակասովետական ու թշնամական տարրերը։ Թերություններից մեկն էլ կուսակցական ու անկուսակցական ակտիվի թուլությունն էր և կոլտնտեսային կադրերի անփորձությունը՝ նոր տեխնիկան վարելու և խոշոր սոցիալիստական արտադրություն կազմակերպելու ու ղեկավարելու գործում։

Այդ ամենից բխում էր կոլտնտեսությունները տնտեսապես, կազմակերպորեն ու քաղաքականապես ամրապնդելու անհրաժեշտությունը։ Ելնելով այդ ամենից ԽՍՀՄ Կենտգործկոմի VI գումարման III նստաշրջանը 1933 թ. հունվարին որոշում ընդունեց կոլտնտեսություններն ամրապնդելու մասին[1]։

Կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպական և քաղաքական ամրապնդումը դարձավ կուսակցության առաջնահերթ խնդիրը կոլտնտեսային շինարարության տվյալ ժամանակաշրջանում։ Կոլտնտեսությունները և սովխոզները ամրապնդելու նպատակով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թ. հունվարյան պլենումը որոշեց կազմակերպել քաղաքական բաժիններ մեքենատրակտորային կայաններին և սովխոզներին կից։ Քաղբաժինները արտակարգ կուսակցական մարմիններ էին, որոնք ստեղծվեցին սուր անհրաժեշտության պահանջով և իրենց խնդիրը կատարելուց հետո պետք է վերացվեին։

Քաղբաժինների կազմակերպումը հիմնականում ավարտվեց 1933 թ. կեսերին։ Սովետական Միությունում ՄՏԿ-ներին կից ստեղծվեց 3368 քաղբաժին, ուր աշխատանքի ուղարկվեց 17 հազար կոմունիստ[2]։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը հանրագումարի բերելով քաղբաժինների գործունեության առաջին արդյունքները, 1933 թ. հունիսի 15-ին որոշում ընդունեց «ՄՏԿ-ների քաղբաժինների աշխատանքի, կոլտնտեսային բջիջի և քաղբաժինների ու շրջկոմների փոխհարաբերությունների մասին»։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշեց կոլտնտեսական կոմունիստներին առանձ-

---

1 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 445—452.

2 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 328։

նացնել գյուղական տերիտորիալ կազմակերպություններից և ամենուրեք ստեղծել կուսակցական կոլտնտեսային արտադրական սկզբնական բջիջներ։ Կոմունիստների սակավության կամ բացակայության դեպքում կազմակերպվում էին թեկնածուական կամ համակրողների խմբեր։ Մշտական արտադրական բրիգադներում ստեղծվում էին կուսակցական խմբեր կամ առանձնացվում էին կուսակազմակերպիչներ։ Քաղբաժիններն ունենալու էին իրենց թերթերը[3]։

Քաղբաժինների գործունեությունը ծավալելու համար Կենտկոմը կարևոր նշանակություն էր տալիս կոլտնտեսային կուսակցական բջիջներին։ «Գյուղում աշխատանքի նոր պայմանները, կոլտնտեսային շինարարության հարցերի նկատմամբ կոնկրետ մոտեցումը,— ասված է հիշյալ որոշման մեջ,— պահանջում են որպեսզի կոլտնտեսություններում ստեղծվեն ամուր արտադրական կուսակցական բջիջներ, որոնք սերտորեն կապված լինեն կոլտնտեսային մասսաների հետ, անմիջապես մասնակցեն արտադրության մեջ և ընդունակ լինեն իրագործելու կոլտնտեսության արտադրական կյանքի ամենօրյա ղեկավարումը»[4]։

Ավելի վաղ, 1933 թ. մարտի 22-ին ընդունած որոշման մեջ «Իսկրա» և «Վպերյոդ» կոլտնտեսությունների (Կենտրոնական Սևահողային մարզի Սոլնցևի շրջան և Դնեպրոպետրովսկի մարզի Նովո-Մոսկովսկի շրջան) օրինակով ՀամԿ(բ)Կ Կենտկոմը ցույց էր տվել այն խնդիրները, որոնք նոր պայմաններում դրվում էին կոլտնտեսային արտադրական բջիջների առջև[5]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. փետրվարյան պլենումը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հունվարյան պլենումի ոգով վերլուծեց կուսակցական աշխատանքների դրությունը Հայաստանի գյուղում և ընդունեց որոշում առաջիկա խնդիրների մասին։ Պահանջվում էր ուժեղացնել կոլտնտեսությունների և գյուղատնտեսության կուսակցական ղեկավարումը, կազմակերպված անցկացնել կոլտնտեսությունների զտումը[6]։ Անդրկովկասի գյուղում կուսակցական կազմակերպություններն ավելի ամրապնդելու հարցին էր նվիրված նաև ՀամԿ(բ)Կ Անդրկովկասի և ԿՎՀ-ի 1933 թ. ապրիլյան միացյալ պլենումը։ Նույն թվականի հուլիսին Ան-

---

3 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства...», стр. 459—462. Տե՛ս նաև՝ «Խորհրդային Հայաստան», 1933 թ. հունիսի 17։

4 «Коллективизация сельского хозяйства...», стр. 460.

5 Տե՛ս նույն տեղում, էջ 455—459։

6 Տե՛ս ՄԱԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 19, գ. 7, թ. 41—44։

գրերիկոմը քննեց գյուղական կուսակազմակերպությունների աշխատանքն ըստ արտադրական սկզբունքի վերակառուցելու հարցը[7]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը և տեղական կուսակցական կազմակերպությունները լայն աշխատանք ծավալեցին կոլտնտեսությունների ամրապնդման, գյուղի կուսակազմակերպությունների կազմակերպական վերակառուցման ուղղությամբ։

1933 թ. ապրիլին ՀԿ(բ)Կ Կենտկոմը ամփոփեց Ղամարլուի շրջանի Մ. Գորկու անվան և Ստեփանավանի շրջանի Ուռուտ գյուղի Ս. Սպանդարյանի անվան կոլտնտեսությունների կուսբջիջների դրական աշխատանքի փորձը, որոշեց հիշյալ բջիջները դարձնել օրինակելի և բոլոր շրջկոմներին ու քաղբաժիններին առաջարկեց նույն ձևով վերակառուցել կոլտնտեսային բոլոր բջիջների աշխատանքը[8]։

Անդրկովկասի մի շարք լավագույն կազմակերպությունների թվում Անդրերիկոմը պրոպագանդում էր Ղամարլուի շրջանի Բեջաղլուի (Ոստան) կոլտնտեսության բջիջի աշխատանքը[9]։ Բեղենչուկցիների օրինակով այստեղ աշխատանքը կենտրոնացվել էր բրիգադներում։ Կազմակերպվել էր հողի որակի հսկողություն։ Առաջավոր կոլտնտեսականներից առանձնացվել էին ադրոավագներ։ Սահմանվել էր յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի ամենօրյա հաշվառում։ Բրիգադներում պարբերաբար անց էին կացվում արտադրական խորհրդակցություններ։ Հանձնաժողովների միջոցով փոխադարձաբար ստուգվում էին սոցմրցման պայմանագրերը։ Առանձին աշխատանք էր տարվում ետ մնացող կոլտնտեսականների հետ։ Բրիգադներում գործում էին պատի թերթեր, «կարմիր» և «սև» տախտակներ, ընկերական դատարան։ Կազմակերպվել էին քաղօրեր, թերթերի ընթերցանություն, զրույցներ՝ անմիջապես դաշտում ու բրիգադներում։ Կոլտնտեսությունից հեռացվել էին խորթ տարրերը, փոխվել էր կուսակցական ղեկավարությունը[10]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը և տեղական կուսակցական մարմինները ամեն կերպ օգնում էին հիշյալ բջիջներին՝ նրանց աշխատանքը վերակառուցելու և բարելավելու, դրական փորձը տարածելու համար[11]։

---

7 Տե՛ս «Очерки истории коммунистических организаций Закавказья», ч. 2, стр. 237.

8 Տե՛ս ՄԿԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 19, գ. 18, թ. 179—182։

9 Տե՛ս «Партработник Закавказья», 1933, № 2—3.

10 Տե՛ս ՄԿԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 20, գ. 79, թ. 52—56։

11 Տե՛ս նույն տեղում, ց. 19, գ. 172, թ. 16։

Կուսակցական աշխատանքի վերակառուցման և կոլտնտեսությունների ամրապնդման նպատակով գյուղ ուղարկվեցին մեծ թվով կուսակցական աշխատողներ։ Չնայած կադրերի պատրաստման բնագավառում ձեռք բերած նվաճումներին, այնուամենայնիվ գյուղում դեռևս զգացվում էր որակյալ կուսաշխատողների մեծ պահանջ։ Այս դեպքում ևս գյուղին օգնության եկան հանրապետության քաղաքների և հատկապես Երևանի կուսկազմակերպությունները։ Մինչև 1933 թ. հուլիսը կենտրոնից ուղարկվեց 130 մարդ՝ շրջանային և գյուղական կուսակցական աշխատանքի և 400 մարդ՝ սովխոզական-մտնեսական ապարատը ամրապնդելու համար[12]։ Նորացվեցին և ամրապնդվեցին Քեշիշքենդի, Սիսիանի, Կոտայքի, Զարաբխիսայի և այլ շրջանային ու գյուղական բջիջների կուսղեկավարությունները։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը բոլոր շրջկոմներից պահանջում էր կոլտնտեսային արտադրական բջիջները ապահովել կայուն և պատրաստված քարտուղարներով[13]։ 1934 թ. հունվարի 1-ից մինչև օգոստոսի 1-ը շրջանները և գյուղերն ուղարկվեցին 67 մարդ, որից 10-ը որպես կուսշրջկոմների, 14-ը՝ կոմերիտմիության շրջկոմների քարտուղարներ, 29-ը՝ հրահանգիչներ, 4-ը՝ կուսկոմիտեների քարտուղարներ։ Նրանցից 7-ը ադրբեջանցիներ էին։ Նույն թվականի առաջին եռամսյակում որպես սկզբնական կազմակերպությունների քարտուղարներ գյուղ մեկնեց 20 մարդ, այդ թվում ութ ադրբեջանցի և մեկ ռուս[14]։

Հայաստանում քաղբաժիններ կազմակերպվեցին հետևյալ յոթ մեքենատրակտորային կայաններում (չհաշված սովխոզները)՝ Սարդարապատի, Ուլուխանլուի, Վաղարշապատի, Վեդիի, Լենինականի, Ախտայի և Ստեփանավանի։ Քաղբաժինն ուներ իր պետը, որը միաժամանակ ՄՏԿ-ի դիրեկտորի տեղակալն էր քաղաշխատանքի գծով, պետի երկու տեղակալներ՝ ընդհանուր կուսակցական աշխատանքի և կոմերիտական աշխատանքի գծով։ 1933 թ. վերջերից քաղբաժիններն ունեին նաև կանանց շրջանում աշխատանք տանող հրահանգչուհիներ։ Հանրապետության քաղբաժինների պետ են եղել Ն. Կուրղինյանը, Պ. Պետրոսյանը, Ռ. Վելիբեկովը, Յա. Մարտիրոսյանը, Գ. Եսայանը, Ա. Մուրադյանը և ուրիշներ։

---

12 Տե՛ս նույն տեղում, դ. 18, թ. 117—120։

13 Տե՛ս նույն տեղում։

14 Տե՛ս նույն տեղում, ց. 21, դ. 102, թ. 29։

Իրենց գործունեության առաջին ամիսներին քաղբաժինները հիմնականում զբաղվում էին գարնանացանի և կոլտնտեսությունների ղեկավարման հարցերով: Նրանց գործունեությունն ավելի աշխուժացավ 1933 թ. հուլիսից, երբ քաղբաժինների կազմը հաստատվեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից և հունիսի 15-ի որոշումով ավելի կոնկրետացան նրանց խնդիրները:

Ղուրդուղուլիից հայտնում էին, որ մարտի 10-ին ավարտվել է շրջանի կոլտնտեսությունների և գյուղական ղեկավար մարմինների անձնակազմի ստուգումը: Նախնական տվյալներով կոլտնտեսություններից հեռացվել էին 140 տնտեսություններ, որոնց ավելի քան կեսը կուլակային և ուռճացած տնտեսություններ, նախկին դաշնակցականներ ու առևտրական տարրեր էին[15]: Փաշալուի կուսշրջկոմը ՀԿ(բ)Կ Կենտկոմին գրում էր, որ շրջանի կոլտնտեսություններում հայտնաբերվել են 13 թաքնված կուլակային տնտեսություններ[16]: Մինչև մարտի 27-ը Ստեփանավանի շրջանում գյուղսովետներից, նրանց ղեկավարություններից և կոլտնտեսությունների վարչություններից հեռացվել էր 140, իսկ գյուղական կուսմարմիններից ու կազմակերպություններից 22 մարդ՝ դասակարգային թշնամիներին հովանավորելու, հարբեցողության, լոդրության, գյուղից երկարատև բացակայելու, յուրացումների ու շարաշահությունների և այլ պատճառներով[17]: Փետրվար-հուլիս ժամանակամիջոցում Վաղարշապատի շրջանում կոլտնտեսություններից հեռացվել էին 328 տնտեսություններ, որոնցից 36-ը նախկին կուլակներ, 12-ը առևտրականներ, 6-ը ոստիկանության աշխատակիցներ, 32-ը այլ հակահեղափոխական տարրեր, իսկ 123-ը կոլտնտեսությունների հետ կապ չունեցողներ էին[18]:

1933 թ. մայիսին հանրապետության ԿՎՀ-ԲԳՏ-ն որոշում ընդունեց կոլտնտեսությունների հաշվետարների, գանձապահների, տնտեսվարների ու պահեստապետների զտում անցկացնելու մասին[19]: 1933 թ. ընթացքում (մինչև նոյեմբերի սկիզբը) կոլտնտեսություններից հեռացվեց մոտ 800 կուլակային ու ենթակուլակային տնտեսություն[20]:

---

15 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 թ. մարտի 27:

16 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 14, գ. 9, թ. 218, 220:

17 Տե՛ս նույն տեղում, ց. 21, գ. 147, թ. 43:

18 Տե՛ս նույն տեղում, գ. 248, թ. 20—50:

19 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. մայիսի 17:

20 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 թ. նոյեմբերի 2:

Քաղաքաժինների, շրջկոմների և մյուս կուսակցական կազմակերպությունների գործունեության մեջ նկատվում էին չափազանցություններ։ Երբեմն սխալ էին մարդկանց բնութագրում կուլակ կամ ենթակուլակ։ Հաշվի չառնելով տնտեսական հնարավորությունները և գյուղատնտեսական մթերքների մթերումների պլանները կատարելու դժվարությունները, երբեմն առանձին կոլտնտեսությունների ղեկավարությունները անհիմն կերպով մեղադրվում էին հակապետական արարքների մեջ։ Ճիշտ չէր նաև մեծ թվով մարդկանց կոլտնտեսություններից հեռացնելը։

1933 թ. երկրորդ կեսից քաղաքաժինները ավելի ուժեղացրին կոլտնտեսականների քաղաքական-դաստիարակչական աշխատանքը և միայն ծայրահեղ դեպքերում էին դիմում կոլտնտեսություններից հեռացնելու մեթոդին։ Ուժեղացվեց նաև կուսակցական-կազմակերպական աշխատանքը, վերակառուցվեց կուսակցական-կոմերիտական կազմակերպությունների գործունեությունը՝ ըստ արտադրական սկզբունքի, որն արվում էր կոլտնտեսություններն ամրապնդելու, նրանց նկատմամբ կուսակցական ղեկավարությունն ավելի ուժեղացնելու համար։

Սարդարապատի ՄՏԿ-ն և քաղաքաժինը ընդգրկում էին Ղուրդուղուլիի 27 կոլտնտեսություններից 26-ը։ Վերակառուցումից հետո շրջանում գործում էին 16 կուսակցական, 16 կոմերիտական կոլտնտեսային արտադրական բջիջներ։ Մյուս կոլտնտեսություններում կազմակերպվել էին կուսթեկնածուական խմբեր կամ կուսակցական-կոմերիտական կորիզներ։ Բոլոր արտադրական բրիգադներում կային կուսակցական և կոմերիտական կազմակերպիչներ[21]։ 1933 թ. վերջին շրջանի կոլտնտեսություններում կար 231 կուսակցական, որից 201-ը աշխատում էին արտադրության մեջ։ 292 կոմերիտականներից 283-ը նույնպես կապված էին արտադրության հետ։ Քաղաքաժնի գործունեության ընթացքում (հիմնականում հուլիս ամսից սկսած) կոլտնտեսություններից հեռացում էր եղել և ընդունվել էին 200 նոր տնտեսություններ։ Շրջանում միայն յոթ գյուղերում դեռևս կոլտնտեսություններ չկային։ Քաղաքաժնի ակտիվ գործունեության և կոլտնտեսականների հարվածային աշխատանքի շնորհիվ շրջանը կատարել և գերակատարել էր գյուղատնտեսական բոլոր մթերքների (բամբակ, հացահատիկ, կաթնամթերք, սոխ և այլն) պետական պարտավորությունը և ՄՏԿ-ի բնա-

---

21 ՏԼ՚ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 14, գ. 9, թ. 358—360։

վարձ[22]։ 1934 թ. կեսերին Սարդարապատի քաղաքաժինը ընդգրկում էր շրջանի բոլոր 28 բամբակագործական կոլտնտեսությունները։ Մյուս գյուղերում ևս ստեղծվել էին կոլտնտեսություններ, բացառությամբ Բերքաշատի և Ամասիայի, որոնք նոր էին բնակեցվել[23]։

Վաղարշապատի շրջանն ուներ 37 գյուղական տերիտորիալ կուսակցական բջիջ, 400 կոմունիստուհի։ Համկ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. հունիսի 15-ի որոշումից հետո շրջանում կազմակերպվեց 22 կոլտնտեսային բջիջ, 10 թեկնածուական խումբ և 12 կուսկոմերիտական կորիզ, 293 կոմունիստներով։ Նրանցից 37-ը կոլտնտեսությունների նախագահներ էին, 68-ը՝ բրիգադավարներ։ Արտադրական բրիգադներում գործում էին 17 կուսխմբեր, 177 կուսկազմակերպիչներ և 87 կոմերիտական խումբ։ 44 կոմերիտական արտադրական բջիջներն ունեին 739 անդամ, որոնցից 579-ը աշխատում էր արտադրության մեջ։ 27 կոմերիտականների վստահվել էր բրիգադավարի պատասխանատու պաշտոնը։ Հյուսիսային Կովկասի օրինակով Վաղարշապատի շրջանում կազմակերպվել էին պիոներական ջոկատներ, որոնք բերքը պաշտպանում էին դասակարգային թշնամուց, հափշտակողներից ու գողերից։

Վաղարշապատի շրջանի կոլտնտեսություններում քաղաքական ուսուցման 52 խմբակներում ընդգրկված էին բոլոր կոմունիստները, կոմերիտականները և շատ անկուսակցական երիտասարդներ։ Անկուսակցական ակտիվ երիտասարդների համար գործում էր ևս 12 խմբակ, որտեղ նրանք ուսումնասիրում էին ընթացիկ քաղաքականությունը և կոմերիտմիության կանոնադրությունը։ Քաղբաժինը հրատարակում էր իր օրգանը՝ սկզբում «Հարվածային տրակտորիստ», ապա «Կոլխոզ ֆրոնտ» անունով։ Իրենց թերթերն ունեին նաև հանրապետության մյուս քաղբաժինները։

1933 թ. վերջին Վաղարշապատի շրջանում կոլեկտիվացումը կազմում էր 47,5 տոկոս, իսկ բամբակագործական գյուղերում՝ 79,9 տոկոս. այսինքն շրջանի բամբակագործները հիմնականում ընդգրկվել էին կոլտնտեսությունների մեջ։ Համատարած կոլեկտիվացումը իրագործվել էր 14 գյուղերում, այդ թվում 10-ը՝ դեռևս 1932 թ., իսկ 4-ը՝ 1933 թ. ընթացքում[24]։

---

22 Տե՛ս նույն տեղում, ց. 21, գ. 248, թ. 6—11։

23 Տե՛ս նույն տեղում, ց. 22, գ. 211, թ. 45—48։

24 Տե՛ս նույն տեղում, ց. 21, գ. 248, թ. 20—50։

1933 թ. հունվարի 31 կոլտնտեսություններ կատարեցին պետությանը բամբակ հանձնելու պլանը, իսկ նախորդ տարում պլանը կատարել էին միայն 13 կոլտնտեսություն[25]։

Քաղբաժնի գործունեության շնորհիվ զգալիորեն բարելավվեցին նաև աշխատանքները Ստեփանավանի շրջանի կոլտնտեսություններում (ՄՏԿ-ն սպասարկում էր 25 կոլտնտեսություն)։ Այստեղ ստեղծվել էին 15 կոլտնտեսային սկզբնական բջիջ, 7 թեկնածուական խումբ և 2 կուսկոմերիտական կորիզ, իսկ արտադրական բրիգադներում՝ 15 կուսխումբ և առանձնացվել էին 63 կուսկազմակերպիչներ։ 82 արտադրական բրիգադներից 38-ում բրիգադավարները կոմունիստներ էին։ Կոլտնտեսություններում կար 170 կոմունիստ, որոնց կեսից ավելին զբաղված էր անմիջապես արտադրության ոլորտում։ Կոմերիտական արտադրական բջիջներ կային գրեթե բոլոր կոլտնտեսություններում, 368 կոմերիտականներով։

Ստեփանավանի ՄՏԿ-ի քաղբաժինը զգալի գործ կատարեց կուսշրջկոմի սխալների մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը[26] կենսագործելու, այդ սխալների հետևանքները շտկելու ուղղությամբ։ Շրջանում տեղի էին ունեցել վարչարարության դեպքեր (մթերումների և հարկման բնագավառում), առանձին կոլտնտեսություններում չէին հանրայնացվել որոշ արտադրամիջոցներ (մասնավոր աղյուսի գործարաններ, զանազան արհեստանոցներ և այլն), ինչպես նաև որոշ հողամասեր, վաղուց գյուղերից հեռացած մի շարք տնտեսություններ օգտվում էին կոլտնտեսականների իրավունքներից։

Զգալի չափով նվազեց ետ մնացող կոլտնտեսությունների թիվը։ Աշխուժացան աշխատանքները Վորոնցովկայի (Կալինինո), Հայկական Գյառգյառի, Գյուլագարակի, Նորաշենի և այլ կոլտնտեսություններում։ Ծավալվեց արտադրական օբյեկտների լայն շինարարություն (անասնաշենքեր, պահեստներ, կղմինդրի գործարաններ)[27]։

Ստեփանավանի ՄՏԿ-ի քաղբաժինը մեծ աշխատանք կատարեց նաև հաջորդ տարում։ ՀամԿ(բ)Կ XVII համագումարի որոշումների ոգով վերակառուցվեց կուսակցական-կազմակերպական աշխատանքը, բարձրացավ կուսակցական կազմակերպությունների պատասխանատվությունը արտադրական պլանների կատարման բնագավառում։ ՄՏԿ-ի

---

25 Տե՛ս նույն տեղում։

26 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 թ. օգոստոսի 27։

27 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 21, գ. 248, թ. 54—79։

կողմից սպասարկվող ցանցում, ըստ XVII համագումարի որոշումների, կազմակերպվեց վեց սկզբնական կուսկազմակերպություն, կոմիտեներով, որոնք ընդգրկում էին յոթ սկզբնական կուսկազմակերպություն՝ կուսկազմակերպիչներով, վեց թեկնածուական խումբ և մեկ կուսակցական-կոմերիտական խումբ։ Կոմունիստների թիվն անցնում էր 220-ից։ Ութ կոմունիստներ առաջ քաշվեցին որպես բրիգադավարներ, իսկ 19 կոմունիստներ՝ որպես բրիգադների կազմակերպիչներ։ Թույլ աշխատանքի համար փոխվեցին Վարդաբլուրի, Նորաշենի և Ջուջաքենդի գյուղական կուսկազմակերպիչները։ Հատուկ աշխատանք էր տարվում կոլտնտեսային անկուսակցական ակտիվի դաստիարակության և նրա շարքերի բազմացման համար։ Տասնյակ դիմումներ ստացվեցին Համկ(բ)կ համակրողների խմբակներում ընդունվելու համար։

Աշխատանքների վերակառուցման շնորհիվ 1934 թ. գարնանացանի պլանը կատարվեց ժամանակին և որոշ գերակատարումով[28]։

Գնահատելով մեքենատրակտորային կայանների քաղբաժինների գործունեությունը, Հկ(բ)կ Կենտկոմը 1933 թ. սեպտեմբերին իր որոշումներից մեկում նշեց այն հսկայական դերը, որ նրանք խաղում էին կոլտնտեսությունների ամրապնդման և բոլշևիկացման գործում[29]։

Այսպիսով, 1933 թ., ինչպես նաև 1934 թ. մեծ աշխատանք կատարվեց կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպական և քաղաքական ամրապնդման, ինչպես նաև գյուղական իշխանության մարմինների գործունեությունը բարելավելու, սովետական օրինականության պաշտպանության ուղղությամբ։

* * *

Կոլտնտեսությունների ամրապնդման և կոլտնտեսականների, ինչպես նաև մենատնտես գյուղացիների արտադրական և քաղաքական խանդավառության բարձրացման տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ հարվածային կոլտնտեսականների համամիութենական I համագումարը, որը կայացավ 1933 թ. փետրվարին, Մոսկվայում։ Կոլտնտեսությունների ամրապնդման և գարնանացանի խնդիրների մասին զեկուցեց հողժողկոմ Յա. Յակովլևը։ Ճառերով հանդես եկան կուսակցության ու կառավարության ղեկավարները։ Ելույթ ունեցան տասնյակ

---

28 Տե՛ս նույն տեղում, ֆ. 22, գ. 63, թ. 5—15։

29 Տե՛ս նույն տեղում, ֆ. 19, գ. 18, թ. 84—86։

հարվածային կոլտնտեսականներ։ Համագումարը դիմում ընդունեց՝ ուղղված Սովետական Միության բոլոր կոլտնտեսական գյուղացիներին[30]։ Համագումարը պահանջեց ամրապնդել կոլտնտեսությունները, դրանք դարձնել բոլշևիկյան, վերջնականապես վերացնել կուլակությանը, ստեղծել ամուր աշխատանքային կարգապահություն, պայքարել գողության ու վատնումների դեմ։

Հարվածային կոլտնտեսականների համամիութենական I համագումարին մասնակցեցին Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատվիրակներ Ենոք Վարդանյանը (Ալիքուշակ), Սուքիաս Կարապետյանը (Ղշլաղ), Վասիլի Լուկինովը (Վորոնցովկա), Հարություն Մելիքբեկյանը (Աշաջուր), Սուլեյման Սուլեյմանովը (Ներքին Նեջրլու)։ Համագումարում ելույթ ունեցավ Դիլիջանի շրջանի Ջարխեջի (Կույբիշև) կոլտնտեսության անդամ Ստեփանյանը։ Հանրապետության կոլտնտեսականների անունից ողջունելով համագումարը, նա պատմեց իրենց կոլտնտեսության նվաճումների և ազգային փոքրամասնությունների կոլտնտեսությունների հետ բարեկամական հարաբերությունների, ժողովուրդների բարեկամության մասին[31]։

Հարվածային կոլտնտեսականների համամիութենական I համագումարի որոշումները քննարկվեցին հանրապետական համագումարներում։ Հայաստանի հարվածային կոլտնտեսականների I համագումարը տեղի ունեցավ 1933 թ. հունիսին։ Նրան մասնակցում էին հանրապետության 605 կոլտնտեսությունների 645 հարվածային կոլտնտեսականներ, որոնք հաջողությամբ կատարել էին գարնանացանի առաջադրանքները, ինչպես նաև մենատնտես գյուղացիների և բանվոր դասակարգի ներկայացուցիչները։ Համագումարին ներկա էր նաև Անդրկովկաս այցելած Բեղենչուկի շրջանի կոլտնտեսականների պատվիրակությունը։

Երևան քաղաքի հինգհազարանոց բանվորությունը, կոչով դիմելով համագումարին և ողջունելով սոցիալիստական դաշտերի հարվածայիններին, պարտավորվեց ուժեղացնել շեֆական օգնությունը գյուղին և կոլեկտիվացման գործին։ Միայն 1933 թ. գարնանացանի կամպանիայի ընթացքում Երևանից գյուղ էին մեկնել 330 բանվորական բրիգադներ, մշտական ղեկավար աշխատանքի էր ուղարկվել 35 մարդ, ժամանակավոր՝ 400։ Բացի այդ, գյուղում եղել էին 65 վերանորոգող և 45 հաշվա-

---

30 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 թ. փետրվարի 21։

31 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 թ. փետրվարի 27։

յին աշխատողների բրիգադներ։ Հանրապետության մայրաքաղաքը վերցրել էր Ղամարլուի և Կոտայքի շրջանների շեֆությունը[32]։

Համագումարը բացեց և ճառով հանդես եկավ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանը։ Հայաստանի սովետական գրողների միության անունից համագումարին ողջույնի խոսքով դիմեց անվանի գրող Շիրվանզադեն։ «Մենք՝ գրողներս,— ասաց նա,— ողջունում ենք կոլեկտիվ տնտեսությունների հաղթանակները, որոնք գալիս են վերջնականապես ջախջախելու մասնավոր սեփականությունը, այդ սեփականության ղղվելի կարգերից բխող շահագործումը, նախանձն ու ատելությունը»[33]։

Համագումարում զեկուցումներով հանդես եկան ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը, Հողժողկոմ Ա. Անանյանը և ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Ավագյանը։ Նրանք հանրագումարի բերեցին կոլտնտեսային շարժման նվաճումները և խոսեցին կոլտնտեսություններն ամրապնդելու, դրանք բոլշևիկյան և ունևոր դարձնելու խնդիրների, ինչպես նաև 1933 թ. գարնանացանի արդյունքների ու բերքահավաքի հարցերի մասին։

Այդ ժամանակ Հայաստանում կար 900 կոլտնտեսություն, որտեղ ընդգրկված էին 64 հազար չքավոր ու միջակ տնտեսություններ, որոնցից ավելի քան 3.300-ը կոլտնտեսությունների մեջ էին ընդգրկվել հարվածային կոլտնտեսականների համամիութենական I համագումարից հետո։ Կոլտնտեսությունների եկամուտը 1932 թ. կազմել էր 46,5 միլիոն ռուբլի, նախորդ տարվա 22,5 միլիոն ռուբլու դիմաց կամ աճել էր 107 տոկոսով։ Մեկ կոլտնտեսության միջին եկամուտը ավելացել էր 65 տոկոսով։ Յուրաքանչյուր կոլտնտեսային ընտանիքի եկամուտը 493 ռուբլուց բարձրացել էր 821 ռուբլու։ Մեկ կոլտնտեսային ընտանիքին ընկնում էր 2,5 հեկտար ցանք, մեկ մենատնտես ընտանիքի 1,9 հեկտար ցանքի դիմաց։ Այդ նվաճումներն ավելի ակնառու դարձնելու համար հիշեցնենք, որ նախասովետական Հայաստանում տասնյակ հազարավոր բատրակներ, չքավորներ և որոշ միջակ տնտեսություններ զուրկ էին ցանքից, իսկ յուրաքանչյուր ցանքատեր տնտեսության հասնում էր միայն 1,5 հեկտար։ 1932 թ. հանրապետության կոլտնտեսությունները պետությունից ստացել էին 4,8 միլիոն ռուբլու վարկ (սերմացու, հաց, շինանյութեր և այլն), 1928 թ. 320 հազար ռուբլու դիմաց։ Միայն 1933 թ. գարնանը պետությունը կոլտնտեսություններին հատ-

32 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 թ. հունիսի 14։

33 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. հունիսի 26։

կացրել էր, որպես օգնություն, 350 հազար փութ հացահատիկ (սերմացու և պարեն)։ Զգալի նվաճումներ էին ձեռք բերվել գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման բնագավառում։ Կոլտնտեսությունները և ՄՏԿ-ները ունեին 616 տրակտոր, 7400 դուրան, 1708 շարքացան, 37 կալսիչ մեքենա և այլ գյուղատնտեսական տեխնիկա[34]։

Հարվածային կոլտնտեսականների համագումարը ընդունեց դիմում Հայաստանի բոլոր կոլտնտեսական գյուղացիներին՝ ամրացնել բարձր բերք, ավելացնել հանրային հոտն ու նախիրը, օրինակելի կարգ ու կանոն հաստատել բրիգադում և ամբողջ կոլտնտեսությունում, պայքարել դասակարգային թշնամու բոլոր տեսակի մեքենայությունների, ծուլերի ու լոդրերի դեմ, կատարել պետական պարտավորությունները, ամրապնդել կոլտնտեսությունները՝ հանուն գյուղատնտեսության վերելքի և կոլտնտեսականների ունևոր կյանքի, հանուն գյուղի սոցիալիստական վերակառուցման լիակատար հաղթանակի։ «Մենք երազել ենք շատ թե քիչ մարդավայել կյանք վարել արևի տակ,— կարդում ենք կոչում,— և դառն փորձով համոզվել ենք, որ կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության պայմաններում այդ երբեք հնարավոր չէ»։ Ուստի մեր ուժն ու եռանդը, մեր սիրտն ու հոգին ամուր կապել ենք սովետական իշխանության և կոլտնտեսային կարգերի հետ։ Անվերադարձ բռնելով նոր կյանքի ճանապարհը, «կգլխավորենք հազարավոր ու տասնյակ հազարավոր ազնիվ մենատնտեսների նոր հոսանքը դեպի կոլեկտիվ տնտեսությունները»[35]։

Հարվածային կոլտնտեսականների համագումարները և կոլտնտեսությունների ամրապնդման ու տնտեսական հաջողությունները բարձրացնում էին կոլտնտեսային կարգերի հեղինակությունը աշխատավոր մենատնտեսների շրջանում, նպաստում կոլեկտիվացման զարգացմանը։

* * *

Սակայն, պետք է նշել, որ 1933 թ., ինչպես և նախորդ տարում, կոլեկտիվացման տեմպը շարունակում էր մնալ բավական դանդաղ, իսկ մի շարք շրջաններում (Ստեփանավան, Մարտունի, Շամշադին, Քեշիշքենդ, Թալին և Աշտարակ) նույնիսկ տեղի էր ունեցել կոլեկտիվացման մակարդակի որոշ նվազում[36]։

Դեռևս 1933 թ. հունիսին ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը արձանագրել էր կոլեկտիվացման դանդաղ տեմպը և կոլտնտեսությունների նորմալ

34 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 թ. հունիսի 18 և 24-ի համարները։

35 «Խորհրդային Հայաստան», 1933 թ. հունիսի 18։

36 Տե՛ս նույն տեղում։

աճին խանգարող խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը[37], 1933 թ. սեպտեմբերի 11-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը ծավալուն որոշում ընդունեց «Հայաստանում կոլտնտեսային շինարարության հերթական խնդիրների մասին»։ Որոշման մեջ ամփոփված են այն նվաճումները, որ ձեռք էին բերվել Հայաստանում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թ. հունվարյան պլենումի որոշումների կատարման ուղղությամբ։ Զգալիորեն ամրապնդվել էին կոլտնտեսությունները՝ ինչպես տնտեսապես-կազմակերպորեն, այնպես էլ քաղաքականապես։ Մեծ աշխատանք էր տարվել կոլտնտեսությունները դասակարգային խորթ և թշնամական տարրերից մաքրելու ուղղությամբ։ Ստուգվել և ամրապնդվել էր կոլտնտեսությունների ղեկավար կազմը, ղեկավար աշխատանքի էին առաջ քաշվել հարվածային կոլտնտեսականներ, ամրապնդվում էր աշխատանքային կարգապահությունը և բարձրանում աշխատանքի արտադրողականությունը, ամրացել էին արտադրական բրիգադները։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը այնուհետև նշում էր կոլտնտշինարարության թերությունները և հատկապես կոլեկտիվացման դանդաղ տեմպը ամբողջ Հայաստանում։ Կենտկոմը կոլտնտշինարարության հիմնական խնդիրն էր համարում կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպական և քաղաքական ամրապնդման գործում ձեռք բերված հաջողությունների ամրացումը և այդ հիման վրա կոլտնտեսությունների աճի ուժեղացումը՝ լավագույն աշխատավոր մենատնտեսներին կոլտնտեսությունների մեջ ներգրավելու աշխատանքի ակտիվացման միջոցով[38]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարությամբ քաղաքաժինները և կուսակցական կազմակերպությունները առանձին աշխատանք էին տանում գյուղացիների շրջանում՝ նրանց դեպի կոլտնտեսությունները գրավելու համար։ Այդ գործում կարևոր դեր էր խաղում կոլտնտեսությունների նվաճումների պրոպագանդան, անհատական տնտեսությունների նկատմամբ կոլեկտիվ տնտեսությունների առավելությունների գործնական ցուցադրումը։ 1933 թ. աշնանը կայացան մենատնտես գյուղացիների մի շարք կոնֆերանսներ։ Վաղարշապատի շրջանի աշխատավոր մենատնտեսների կոնֆերանսին մասնակցում էին մոտավորապես 150 հայ և ադրբեջանցի պատգամավորներ։ Կոլտնտշարժման խնդիրների և բերքահավաքի

---

37 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 21, գ. 3, թ. 7—21։ Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1933 թ. հունիսի 17։

38 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 19, գ. 18, թ. 84—86։ Տե՛ս նաև «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. սեպտեմբերի 27։

ընթացքի մասին զեկուցեց շրջանի ՄՏԿ-ի քաղաքաժնի պետ Պ. Պետրոսյանը։ Ելույթ ունեցան մի շարք պատգամավորներ։ Ողջույնի խոսքով հանդես եկան Արբաթի և Վաղարշապատի (Էջմիածին) կոլտնտեսությունների ներկայացուցիչները։ Կոնֆերանսն ընդունեց հանրապետության բոլոր աշխատավոր մենատնտեսներին ուղղված կոչ։ Կոլտնտեսությունները հարթել են լուսավոր կյանքի ուղին, ուստի խնդրում ենք, գրում էին շրջանի մենատնտեսները, մեզ ընդունել կոլտնտեսությունների մեջ[39]։ Նույնպիսի դիմում ստացավ նաև Ղամարլուի շրջանային կոնֆերանսը։ «Մենք համոզվեցինք,— ասված է նրանում,— որ կոլտնտեսային ճանապարհը մեր սրտին մոտ և հարազատ ճանապարհ է»[40]։

Կոտայքի շրջանի մենատնտես գյուղացիների դիմումում կարդում ենք. «Երբ առաջ մենք տատանվում էինք կոլտնտեսություն մտնել՝ դա հասկանալի էր. կոլտնտեսային ճանապարհը փորձված չէր, չգիտեինք, թե ինչ դուրս կգա կոլտնտշինարարությունից։ Այժմ, երբ փաստերն ապացուցում են, որ կոլտնտեսություններն անընդհատ կազմակերպորեն ու տնտեսապես ուժեղանում են, կոլտնտեսականների բարեկեցությունը և կուլտուրական կյանքի պայմանները բարձրանում են..., յուրաքանչյուր աղնիվ ու խորհրդային իշխանությանը նվիրված աշխատավոր մենատնտես պետք է իր լավագույն ապագան փնտրի կոլտնտեսության մեջ»[41]։ Սեպտեմբերի 27-ին նույնպիսի կոնֆերանս կայացավ Թալինում[42]։

Աշխատավոր մենատնտեսների կոնֆերանսներին և կոլտնտեսային բերքի բաշխման կամպանիային հաջորդեց կոլեկտիվացման նոր վերելք, որն այնուհետև ավելի ծավալվեց ՀԿ(բ)Կ IX և ՀամԿ(բ)Կ XVII համագումարների կապակցությամբ։

Մենատնտեսների կողմից մեծ հոսանք է նկատվում դեպի կոլտնտեսությունները, հաղորդում էր թղթակիցը Ստեփանավանից։ 1933 թ. սեպտեմբերի ընթացքում միայն Վորոնցովկայում (Կալինինո) դիմում էին տվել 100 տնտեսություններ։ Նույնքան դիմում էր ստացվել Պոկրովկա (Կույբիշև) գյուղում[43]։ Երկու գյուղերում էլ հիմնականում բնակվում էին ռուսներ։ 1933 թ. վերջին և 1934 թ. առաջին օրերին, ՀԿ(բ)Կ IX համագումարի առթիվ նոր ընդունելություններ եղան Ստեփանավանի,

39 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. սեպտեմբերի 15։
40 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. սեպտեմբերի 16։
41 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. հոկտեմբերի 2։
42 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. հոկտեմբերի 6։
43 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. հոկտեմբերի 8։

Վարդաբլուրի, Սարատովկայի, Շահնազարի, Ագարակի և շրջանի մյուս կոլտնտեսություններում: Նոր կոլտնտեսություններ հիմնադրվեցին Նիկոլաևկա (Կիրով), Ղոթուրբուլաղ (Կութնաղբյուր), Ղըղղալա, Բերդ և Ալեքսանդրովկա (Մաքսիմ Գորկի) գյուղերում[44]:

Կոտայքի շրջանի Արթիկ (Գեղարդ) գյուղի նորաստեղծ կոլտնտեսությունը կոչվեց կուսակցության XVII համագումարի անունով[45]: Իսկ Վաղարշապատի շրջանի Սամաղար, Ֆրանգանոց և այլ գյուղերում գրեթե ավարտվեց համատարած կոլեկտիվացումը[46]: Միայն 1933 թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում շրջանում դիմումների թիվը անցնում էր 100-ից[47]: Հուլիսից մինչև նոյեմբեր Սարդարապատի ՄՏԿ-ի քաղբաժնի գործունեության տերիտորիայի կոլտնտեսությունների անդամների թիվը ավելացավ 200-ով[48]:

1933 թ. ընթացքում, հիմնականում տարվա երկրորդ կեսին, Հայաստանում կոլտնտեսությունների մեջ ընդունվեց 9.000 տնտեսություն: Դրա հետ միաժամանակ տեղի ունեցավ որոշ մաղում, ավելի ճիշտ՝ դուրս: Կոլտնտեսականի իրավունքից զրկվեցին 2700 դասակարգային խորթ և անհարազատ տարրեր (տնտեսությունների հաշվով): Այդ բոլորից հետո կոլեկտիվացման մակարդակը բարձրացավ 3,5 տոկոսով[49]:

Արձանագրելով այդ նվաճումները, ՀԿ(բ)Կ IX համագումարը (1934 թ. հունվար) միաժամանակ նշեց, որ կոլեկտիվացման տեմպը շարունակում է մնալ դանդաղ, որ հանրապետության շրջանների մի մասի կուսակազմակերպությունները բավարար աշխատանք չեն կատարել աշխատավոր մենատնտեսների լավագույն մասին կոլտնտեսությունների մեջ ներգրավելու համար: Ելնելով դրանից համագումարը կուսակցական կազմակերպություններին հանձնարարեց բոլոր շրջաններում գյուղի աշխատավորների լայն խավերում ծավալել մասսայական-քաղաքական աշխատանքը և կազմակերպել կոլեկտիվացման նոր առողջ ալիք[50]:

Ճիշտ արձանագրելով կոլեկտիվացման ետ մնալու փաստը, սա-

44 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1934 թ. հունվարի 10:

45 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1934 թ. փետրվարի 15:

46 Տե՛ս նույն տեղում:

47 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 21, գ. 130, թ. 1:

48 Տե՛ս նույն տեղում, գ. 248, թ. 6—11:

49 Տե՛ս «ՀԿ(բ)Կ IX համագումարի սղագրական հաշվետվություն», էջ 71—72:

50 Տե՛ս «Հայաստանի Կ(բ)Կ IX համագումարի բանաձևը ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվության առթիվ», Երևան, 1934, էջ 3—4:

կայն ամեն ինչ չէ որ արվում էր նրա տեմպը արագացնելու և մեքենատեսակների ավելի մեծ խավեր կոլտնտեսությունների մեջ ներգրավելու համար։ Կոլեկտիվացման դանդաղ ընթացքի պատճառների հարցին, որն ընդհանուր երևույթ էր, անդրադարձավ Համկ(բ)կ Կենտկոմը և ձեռնարկեց համապատասխան միջոցառումներ կոլեկտիվացման ավարտը արագացնելու համար։

2. ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

1933 թ. Հայաստանի լեռնային մի շարք շրջաններում առաջ եկան տնտեսական դժվարություններ, որոնք ծանր ազդեցին բնակչության տրամադրության վրա, ընդհանրապես, և կոլեկտիվացման տեմպերի վրա, մասնավորապես։ Դրությունը հատկապես ծանր էր Սևանի ավազանի շրջաններում՝ Բասարգեչարում, Մարտունիում, Նոր Բայազետում և Ախտայում։

1932—1933 թթ. անբարենպաստ տարիներ էին գյուղատնտեսության համար։ Երկու տարի անընդմեջ անբերրիություն էր՝ կլիմայական վատ պայմանների, երաշտի, բնական պատահարների և այլ պատճառներով։ Խիստ ընկավ բերքատվությունը։ Այն հեկտարից կազմում էր 3—5 ցենտներ, սովորական 8—9 ցենտների փոխարեն։ Առանձին գյուղերում նույնիսկ սերմ չէր ստացվում։

Օբյեկտիվ դժվարություններին ավելացան տվյալ շրջանների ղեկավար օրգանների աշխատանքում տեղ գտած կոպիտ քաղաքական սխալները։ Անբավարար էր գյուղատնտեսության ղեկավարման գործը, պայքարը բերքատվության բարձրացման համար, թույլ էր տրվում վարչարարություն, գյուղատնտեսական մթերքների մթերումների սխալ գանձում և այլն։ Բերքի խիստ անկման պայմաններում շրջանների ղեկավարությունները ձգտում էին կատարել կամ գերակատարել հացամթերումների պլանը։ Այսպես, Ախտայի շրջանում հացամթերումների պլանը 1932 և 1933 թթ. կատարվեց 114 և 82 տոկոսով, Նոր Բայազետի շրջանում՝ 100 և 107 տոկոսով, Մարտունու շրջանում՝ 94 և 80 տոկոսով և այլն[51]։

Այդ ամենի հետևանքով խիստ խախտվեց բնակչության հացաֆուրաժային հաշվեկշիռը՝ ինչպես անհատական տնտեսություններում.

---

51 ՏԼ՚ս ՄԼԻ ՀՅԱ., ֆ. 1, ց. 22, գ. 216, թ. 37։

այնպես էլ կոլտնտեսային ընտանիքներում։ Բնակչության մի մասը սկսեց հեռանալ հիշյալ շրջաններից, նախօրոք մորթելով կամ ծախելով անասունները։ Անասունների գլխաքանակը խիստ պակասեց։ Իսկ մինչ այդ այն կրճատվում էր կոլեկտիվացման կապակցությամբ կուլակային պրովոկացիայի և այլ պատճառներով։ Սևանի ավազանի չորս շրջաններում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում էր 66,3 հազար, 1930 թ. 146 հազարի դիմաց կամ կրճատվեց 55 տոկոսով։ Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը միայն երկու տարում՝ 1932—1934 թթ. պակասեց 73 տոկոսով[52]։ Անասնապահությունը այդ շրջանների տնտեսության կարևոր ճյուղն էր և բնակչության հիմնական զբաղմունքը, ուստի նրա անկումը էլ ավելի ազդեց ու վնասեց գյուղացիության բարեկեցությանը։

Ստեղծված տնտեսական դժվարությունները օգտագործվում էր դասակարգային թշնամու կողմից՝ բնակչությանը սովետական իշխանության դեմ դրդելու և գաղթի տրամադրություններ բորբոքելու համար։ «Կուլակային տարրերի մնացորդները և նրանց գործակալ դաշնակցականները ստեղծված դրությունն օգտագործում են,— նշել են ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Ժողկոմխորհը,— կոլտնտեսություններում և մեքենատրակտորների միջավայրում քայքայիչ աշխատանք տանելու համար»[53]։ Գյուղատնտեսության անկումը և շրջաններում թույլ տված ծռումները (հատկապես մթերումների բնագավառում), որոնք, ինչպես արձանագրել է հարցն ուսումնասիրող հանձնաժողովը, լայնորեն օգտագործվեցին կուլակային, դաշնակցական-մուսավաթական տարրերի կողմից, այդ շրջանների գյուղացիության համար սովորական արտագնացությունը դարձրին վերաբնակության մասսայական շարժում[54]։

Գյուղացիները ընտանիքներով հեռանում էին հանրապետության այլ շրջաններ, արդյունաբերական վայրեր կամ մեկնում այլ հանրապետություններ։ 1933 թ. ընթացքում Մարտունու, Ախտալի, Բասարգեչարի և Նոր Բայազետի շրջաններից հեռացավ 6750 տնտեսություն կամ այդ շրջանների բոլոր տնտեսությունների մեկ քառորդը[55]։

Հեռացողների հիմնական մասը մենատնտես գյուղացիներն էին, իսկ կոլտնտեսականները կազմում էին 9 տոկոս։ Այդ տվյալները վը-

---

52 Տե՛ս նույն տեղում, թ. 28—30։

53 Տե՛ս նույն տեղում, ց. 22, գ. 216, թ. 28—30։

54 Տե՛ս նույն տեղում, թ. 34, 39։

55 Տե՛ս նույն տեղում, թ. 28—30։

կայում են, որ կոլտնտեսությունները ավելի հեշտությամբ էին դիմանում դժվարություններին և հնարավորություն ունեին օգնելու իրենց անդամներին։ Դա ևս իր հերթին վկայում է կոլտնտեսային կարգի առավելությունների մասին։

Սովետական իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը լայն օգնություն կազմակերպեցին Սևանի ավազանի, ինչպես նաև մյուս շրջանները ծանր վիճակից դուրս բերելու և բնակչությանը իրենց բնակավայրերը վերադարձնելու համար։ Ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որն ուսումնասիրեց հանրապետության մի շարք շրջաններում արտադրության ուժեղացման հարցը և դրա պատճառները։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ԺողԿոմխորհը առաջին հերթին միջնորդեցին վերադաս մարմինների առաջ՝ Սևանի ավազանի շրջանները մթերումներից ու հարկերից ազատելու կամ դրանք թեթևացնելու մասին։ Պետությունը մենատնտես գյուղացիներին և կոլտնտեսություններին տրամադրեց զգալի քանակությամբ հացահատիկ՝ որպես սերմ և պարեն։ Միայն Մարտունու շրջանին 1934 թ. հատկացվեց 72 հազար փութ հացահատիկ։ Հացահատիկի մթերման պլանը կրճատվեց 30 հազար, իսկ կաթինը՝ 24 հազար փթով[56]։

1933 թ. նոյեմբերի 25-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց «Բասարգեչարի, Մարտունու, Նոր Բայազետի և Սխտաշի շրջանների մասին»։ Որոշվեց դադարեցնել 1933 թ. մսամթերումները, իջեցնել 1934 թ. մթերումների պլանը, հանել 1934 թ. հացահատիկի պարտադիր հանձնման պլանը, շտապ կարգով 150 հազար փութ հացահատիկ տրամադրել հիշյալ շրջաններին՝ պարեն բաժանելու համար, դադարեցնել աղունավարձը[57]։

Բացի դրանից, այդ ժամանակ իրագործվեցին նաև ընդհանուր միութենական մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն էր ամրապնդել կոլտնտեսությունները, օգնել նրանց արտադրական վերելքի կազմակերպմանը։ Այսպես, միութենական ԺողԿոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը վերացրին բոլոր հանրապետությունների 1933 թ. հացամթերումներից կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների ունեցած պարտքերը և երկարաձգեցին պետության կողմից կոլտնտեսություններին բաց թողնված մի շարք տարիների հացահատիկային

---

56 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1934 թ. հունվարի 4։

57 Տե՛ս ՄԱԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 19, գ. 18, թ. 27—29։

վարկերի (սերմ և պարեն) դանձումը[58]։ Միութենական կառավարության և Կենտկոմի 1934 թ. դեկտեմբերի 23-ի որոշումով վերացվեցին մինչև 1933 թ. հունվարի 1-ը կոլտնտեսություններին հատկացված գյուղատնտեսական վարկի պարտքերը (մոտ 436 միլիոն ռուբլի)։ Հայաստանի կոլտնտեսություններին դիջված վարկային պարտքը կազմում էր 4 միլիոն 849 հազար ռուբլի[59]։ Այդպիսի պարտքեր ունեին հանրապետության բոլոր շրջանները և հատկապես Իջևանը, Նոր Բայազետը, Ղուրդուղուլին, Վաղարշապատը, Ստեփանավանը, Ապարանը[60]։

Այս միջոցառումները մեծ օգնություն էին ոչ միայն լեռնային, այլև հանրապետության մյուս շրջանների կոլտնտեսությունների ու մենատնտեսների համար։

Համկ(բ)կ Անդրերկրամը 1934 թ. մայիսի 21-ին որոշում ընդունեց Նոր Բայազետի, Ապարանի, Մարտունու, Բասարգեչարի և Ախտալի շրջանների դրության մասին և ՀԿ(բ)Կ Կենտկոմին պարտավորեցրեց միջոցառումներ մշակել այդ շրջանների դրությունը բարելավելու համար։ Անդրերկրամի որոշման կենսագործման միջոցառումների վերաբերյալ ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում կայացրեց մայիսի 25-ին։ Ինչպես նշում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմը, նշված շրջանների կոոպերատիվ, սովետական և տնտեսական ղեկավարությունները չկարողացան հիշտ գնահատել իրենց շրջաններում ստեղծված դրությունը և կենսագործել վերադաս մարմինների որոշումները լեռնային շրջանների դրությունը բարելավելու մասին։ Անդրերկրամի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումների հիման վրա աշխատանքից հանվեցին այդ շրջանների բոլոր ղեկավարները և շրջանները ամրացվեցին նոր և կարող կադրերով։ Մի ամբողջ շարք միջոցառումներ նախատեսվեցին Բասարգեչարի, Նոր Բայազետի, Ախտալի, Ապարանի, Մարտունու, ինչպես նաև Փաշալուի, Աղբաբայի և Քեշիշքենդի շրջաններում գյուղատնտեսությունը զարգացնելու, տնտեսական և կուլտուրական շինարարությունը ծավալելու, հարկային արտոնությունների, մատակարարման և այլ ուղղությամբ։

Քննարկելով Անդրերկրամի որոշման կատարման ընթացքը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. հունիսյան պլենումը նշեց, որ Հայաստանի բոլոր կուսակցական կազմակերպությունները պետք է հաշվի առնեն լեռնային շրջանների դասերը և վերակառուցեն իրենց աշխատանքը։ Պլենումը

58 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1934, № 12, հոդ. 72։ Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1934 թ. մարտի 1։

59 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1935, № 1, հոդ. 1։ Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1934 թ. դեկտեմբերի 26։

60 Տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1935, № 1, հոդ. 2։

հավանություն տվեց Կենտկոմի բյուրոյի ձեռնարկումներին՝ լեռնային շրջանները կադրերով ամրապնդելու, գյուղատնտեսությունը բարձրացնելու և կուլտուր-կենցաղային շինարարությունը ծավալելու համար[61]։

Նկատի ունենալով վերջին երկու տարիների անբերրիության պատճառով Ախտայի, Ապարանի, Բասարգեչարի, Նոր Բայազետի, Մարտունու և Փաշալուի շրջաններում աշխատավոր բնակչության համար ստեղծված ծանր դրությունը, ՀՍԽՀ Ժողկոմխորհը 1934 թ. գյուղատնտեսական հարկից ազատեց այդ շրջանների կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտեսներին։ Ժողկոմխորհի 1934 թ. հունիսի 25-ի որոշումով վերջվեցին այդ շրջանների կոլտնտեսություններին ու մենատնտեսներին կառավարության ֆոնդից տրված սերմացուն և պարենային փոխատվությունը։

Կուսակցության և կառավարության բազմակողմանի օգնության շնորհիվ շուտով սկսեց բարելավվել հանրապետության լեռնային շրջանների դրությունը։ Լեռնային շրջանների տնտեսական-քաղաքական դրության բարելավման առաջին արտահայտությունը եղավ հեռացած բնակչության ամբողջաբար վերադարձը։ Մինչև 1934 թ. մայիսի 25-ը Մարտունու, Նոր Բայազետի, Բասարգեչարի և Ախտայի շրջանները վերադարձան 2574 տնտեսություն կամ մեկնածների 38 տոկոսը։ Այդքան էր նաև ամբողջ Հայաստանում իրենց բնակավայրերը վերադարձած տնտեսությունների թիվը[62]։

Գյուղատնտեսական աշխատանքները վերակառուցելու և լավ կազմակերպելու շնորհիվ արդեն 1934 թ. ստացվեց բավարար բերք։ Մտցվեց ցանքաշրջանառություն, հիմնականում դադարեցվեց հանվեց շութը, զտվեց և ախտահանվեց սերմը, պայքար կազմակերպվեց մոլախոտերի և կրծողների դեմ, կիրառվեցին ագրոտեխնիկական այլ միջոցառումներ։ Որոշ աշխատանք կատարվեց ոռոգման կազմակերպման ուղղությամբ։ Բարելավում նկատվեց նաև անասնապահության բնագավառում։ Ավելացավ մատղաշ անասունների գլխաքանակը, կանգ առավ անասունների անկումը։ Բոլոր լեռնային շրջաններում կազմակերպվեցին 125 կոլտնտեսային անասնապահական նոր ֆերմաներ։ Անասունների թիվը սկսեց աճել Բասարգեչարի, Մարտունու, Նոր Բայազետի, Ապարանի և Փաշալուի կոլտնտեսային ֆերմաներում[63]։

1934 թ. նոյեմբերի Ախտայի շրջանի կոլտնտեսականների հավաքը

---

61 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1934 թ. հուլիսի 2։

62 Տե՛ս ՄԱԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 22, գ. 211, թ. 4։

63 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. հունվարի 6։

ընդունեց դիմում՝ ուղղված բոլոր լեռնային շրջանների կոլտնտեսականներին, ուր նրանք պատմում էին իրենց նվաճումների մասին և կոչ էին անում ծավալել սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը։ Մարտունու շրջանի 27 մարդուց բաղկացած կոլտնտեսային պատգամավորությունը ՀԿ(բ)Կ Կենտկոմում հանդիպում ունեցավ Կենտկոմի քարտուղար Ս. Խանջյանի հետ։ «Մենք բաց ճակատով ենք եկել դեկավարի մոտ», հայտարարում էին նրանք և լեռնային շրջանների կոլտնտեսականներին ուղղված դիմումում պարտավորվեցին Մարտունին դարձնել առաջավոր շրջան։ Հոկտեմբերի 28-ին Մարտունիում բացվեց շրջանային գյուղատնտեսական ցուցահանդեսը։ Կայացավ կոլտնտեսականների բազմամարդ ժողով, որտեղ ամփոփվեցին շրջանի գյուղատնտեսական տարվա հանրագումարները։

1934 թ. դեկտեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ս. Խանջյանը ընդունեց նաև Ախտայի շրջանի Ռնդամալի (Հրազդան քաղաքի կազմում) կոլտնտեսության պատվիրակներին, որոնք պատմեցին իրենց նվաճումների և խնդիրների մասին։

Կոլտնտեսությունների նվաճումները, 1934 թ. բերքի բաշխումը և աշխատանքի արժեքի բարձրացումը, կոլտնտեսությունների տնտեսական-քաղաքական ամրապնդումը նոր խթան ստեղծեցին կոլտնտեսային շինարարության տեմպերի արագացման համար՝ ինչպես լեռնային շրջաններում, այնպես էլ ամբողջ Հայաստանում։

«Բերքի բաշխման նախնական արդյունքները ցույց են տալիս,— գրել է «Խորհրդային Հայաստան» թերթը իր առաջնորդողում,— որ մեր կոլտնտեսականների ստվար մասն արդեն բռնել է ունևոր կուլտուրական կյանքի ճանապարհը»։ Հանրապետության շատ կոլտնտեսություններում գերազանցվեցին բերքատվության բարձրացման բոլոր նախատեսումներն ու ակնկալությունները[64]։ 1934 թ. հանրապետությունում միջին հաշվով մեկ աշխատանքի արժեքը բարձրացավ 2 ռուբլի 38 կոպեկի, նախորդ տարվա 1 ռուբլի 82 կոպեկի դիմաց։ Սեզը կազմում էր 31 տոկոս[65]։ «Հատկապես վերջին շրջանում, այս տարվա կոլտնտեսային առատ բերքի բաշխման հետևանքով,— գրել է «Սոցիալիստական գյուղատնտեսություն» թերթը,— մեծ հոսանք է ստեղծվել դեպի կոլտնտեսությունները»[66]։

---

64 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1934 թ. հոկտեմբերի 24։

65 Տե՛ս ՄԱԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 23, գ. 1, թ. 10։

66 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1934 թ. հոկտեմբերի 30։

Նոր Բայազետի շրջանում միայն 1934 թ. դեկտեմբեր ամսին կոլտնտեսություն ընդունվեցին 405 աշխատավոր տնտեսություններ։ Սարուխանում և Ղշլաղում կոլեկտիվացումը հիմնականում ավարտվել էր։

Փաշալուի շրջանի (Ազիզբեկով) գյուղերում ուժեղ հոսանք է առաջացել դեպի կոլտնտեսությունները, դրում էր թերթի հատուկ բրիգադը։ Կոլտնտեսային բերքի բաշխման օրը Զուլ (Արտավան) գյուղում կոլտնտեսություն ընդունվեց 32, Գյաբութում (Կապույտ)՝ 18, Ախտայում՝ 6, Գյոմուրում՝ 8 տնտեսություն։ Նոր կոլտնտեսություններ ստեղծվեցին Իստիսու և Քյուլբեկ գյուղերում։ Կոլտնտեսություններն աճում էին նաև շրջանի հայկական գյուղերում՝ Ղուշչիում (Կեչուտ), Փաշալուում, Մարտիրոսում։

Ղափանի շրջանում բերքի բաշխման օրը կոլտնտեսությունների անդամների թիվը ավելացավ 220-ով և կազմակերպվեցին երեք նոր կոլտնտեսություններ։ Ալավերդում հոկտեմբեր ամսվա ընթացքում ընդունվեցին 53 նոր անդամներ։ Շամշադինի շրջանում բերքի բաշխումը առաջացրեց կոլեկտիվացման լայն ալիք։ Դիմումների թիվը հասավ 335-ի։ Առաջավոր գյուղերից էին Դրդին, Ջինջինը, Նավուրը, Բովուղը, Հախումը, Ղուալին (Այգեձոր), Ջինարին, Ջորաթանը։

Կոլտնտեսություններ ստեղծվել էին Ասպարանի շրջանի Ղուտուբողազ և Քարվանսարա քրդաբնակ գյուղերում։

Բերքի բաշխումը Աշտարակի շրջանի Աղարակ գյուղում կոլտնտեսություն բերեց 25 մենատնտես գյուղացիների։ Մյուս կոլտնտեսությունները ևս աճ ունեցան։

Սիսիանի շրջանի Շաղաթ, Շաքի, Ախլաթյան, Տոլորս, Բնունիս և այլ գյուղերում կոլտնտեսականների թիվը միայն բերքի բաշխման օրերին ավելացավ 150 նոր անդամներով։

Մեծ աճ ունեցան Մեղրու շրջանի Շվանիձոր, Մեղրի, Կարճևան և մյուս գյուղերի կոլտնտեսությունները։ Շրջանում համատարած կոլեկտիվացման խնդիրը հիմնականում լուծվել էր։

Լեռնային շրջաններին ցույց տված օգնությունը զգալի չափով նպաստեց այդ, ինչպես նաև Հանրապետության մյուս շրջանների կոլեկտիվացման վերելքին։ 1934 թ. ընթացքում, հիմնականում կոլտնտեսային բերքի բաժանումից հետո Հայաստանում կոլտնտեսությունների անդամների թիվը ավելացավ 16,6 հազար տնտեսություններով[67]։ Սկիզբ առավ կոլտնտեսային շարժման նոր վերելք։

---

67 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. հունվարի 1։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. դեկտեմբերյան պլենումն ամփոփեց գյուղատնտեսության կոլեկտիվացման արդյունքները և որոշում ընդունեց նրա հետագա զարգացման խնդիրների մասին։ Նա հավանություն տվեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. նոյեմբերյան պլենումի որոշումներին։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումը որոշում ընդունեց պարենավորման քարտային սիստեմը վերացնելու և հացի ու այլ մթերքների ազատ առևտուր մտցնելու մասին։ Քարտային սիստեմն ընդունվել էր առաջին հնգամյակի սկզբում՝ սոցիալիստական ինդուստրիայի աճի, քաղաքային բնակչության զարգացման և տեխնիկական մշակույթների շրջանների գյուղացիության պարենային պահանջները բավարարելու կապակցությամբ։ Հացի և այլ մթերքների լայն առևտրին անցնելը հնարավոր դարձավ կոլտնտեսային կարգի հաղթանակի և գյուղատնտեսության հաջողությունների շնորհիվ։ Պլենումի որոշումը կարևոր նշանակություն ուներ սովետական ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման համար։ Այդ հանգամանքն իր հերթին առավել նպաստավոր պայմաններ էր ստեղծում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն ավարտելու համար՝ այն շրջաններում, ուր այն դեռևս ընթացքի մեջ էր։ Այդպիսի շրջաններից էր նաև Սովետական Հայաստանը։

Պլենումի մյուս կարևոր որոշումը վերաբերում էր ՄՏԿ-ների քաղբաժիններին։ Մոտ երկու տարվա ընթացքում քաղբաժինները հսկայական աշխատանք կատարեցին վերացնելու գյուղական աշխատանքի այն թերությունները, որոնք նշել էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թ. հունվարյան պլենումը։ «Քաղբաժինները, որպես կազմակերպության արտակարգ ձև, հենվելով ամբողջ կուսակցության ուժի ու հեղինակության վրա, ՄՏԿ-ների տնտեսական հզորության վրա, ձեռք են բերել լուրջ հաջողություններ սոցիալիստական շինարարության հետամնաց բնագավառը՝ գյուղատնտեսությունը առաջավոր դարձնելու գործում»[68], ասված է նոյեմբերյան պլենումի որոշման մեջ։ Ելնելով դրանից, պլենումը եկավ այն եզրակացության, որ ՄՏԿ-ների քաղբաժինները կատարել են իրենց հիմնական խնդիրը՝ կոլտնտեսություններն ամրապնդվել են տնտեսապես ու քաղաքականապես, ուստի որոշեց դրանք վերացնել, վերակառուցել և ձուլել շրջկոմների մեջ։ Սահմանվեց քաղաքական աշխատանքի գծով ՄՏԿ-ի դիրեկտորի տեղակալի պաշտոն։ Քաղբա-

68 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 330։

ժիններին վերացումը չէր նշանակում, թե կոլտնտեսություններն ամրապնդելու կարիք այլևս չկա։ Այն շարունակվելու էր նաև հետագայում։

Այսպիսով, 1934 թ. Հայաստանի գյուղն ապրեց որոշ առաջադիմություն։ Շարունակվեց կոլտնտեսությունների ամրապնդումը։ Բարելավվեց լեռնային շրջանների տնտեսական-քաղաքական դրությունը։ Սկիզբ առավ կոլեկտիվացման նոր վերելք, որը շարունակվեց և խորացավ հաջորդ տարիներին։ Մի քանի շրջաններ հիմնականում կատարեցին համատարած կոլեկտիվացման ծրագիրը։

1933—1934 թթ. կոլտնտեսությունների ամրապնդման բնագավառում կուսակցական կազմակերպությունների հետ միասին վճռական դեր խաղացին մեքենատրակտորային կայանների քաղբաժինները։ Մոտ երկամյա իրենց գործունեությամբ այդ արտակարգ կուսակցական մարմինները մեծ աշխատանք կատարեցին կոլտնտեսությունները թշնամական ու խորթ տարրերից մաքրելու, նրանց կազմակերպորեն ու տնտեսապես ամրապնդելու, գյուղում կուսակցության հեղինակությունը և ղեկավար դերը ավելի բարձրացնելու բնագավառում։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ

1. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մինչև 1934 թ. կեսերը (սկսած 1932 թ.) կոլեկտիվացումը դանդաղ էր ընթանում կամ չէր աճում Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում։ Զբաղվելով կոլտնտեսությունների ամրապնդման գործով, կուսակցական և սովետական կազմակերպություններն ու ղեկավար մարմինները քիչ ուշադրություն էին նվիրում մենատնտեսների հետ տարվող աշխատանքին և կոլեկտիվացման վերելքի հարցերին։ Կոլեկտիվացման տեմպերը իջել էին նաև Սովետական Միության այլ շրջաններում։ Դրա պատճառները պարզելու համար 1934 թ. հուլիսին Համ(բ)Կ Կենտկոմում հրավիրվեց խորհրդակցություն, որին մասնակցում էին Կենտկոմի անդամներ, կուսակցության հանրապետական, մարզային ու երկրամասային կոմիտեների քարտուղարներ։ Խորհրդակցությունում ելույթ ունեցան Պ. Պոստիշևը, Մ. Կալինինը, Ի. Ստալինը և ուրիշներ։ Կոլտնտեսային շարժումը նա պահող հիմնական պատճառներից մեկը մենատնտեսների հետ տարվող անբավարար աշխատանքն էր։ Քննադատվեց կուսակցական որոշ ղեկավարների շրջանում տեղ գտած այն սխալ կարծիքը, թե իբր մենատնտես գյուղացիների հետ պետք է զբաղվեն սովետները, իսկ կոլտնտեսությունների գործերով՝ կուսակցական կազմակերպությունները։ Կոլեկտիվացման զարգացմանը խանգարում էին նաև հարկային սիստեմի թերությունները։ Մենատնտեսները գտնվում էին ավելի արտոնյալ, նպաստավոր վիճակում, քան կոլտնտեսականները։ Գյուղատնտեսական հարկ չէր գանձվում բանջարաբուծությունից, պտղաբուծությունից և ոչ երկրագործական նկամուտներից, որոնցով հիմնականում զբաղվում էին կամ սկսեցին զբաղվել մենատնտես գյուղացիները։ Խորհրդակցությունում նշվեց, որ հարկավոր է արագացնել կոլեկտիվացման ավարտումը, խուսափելով վարչարարությունից, շարու-

նակել կոլտնտեսությունների ամրապնդման աշխատանքները, կատարելագործել հարկային սիստեմը՝ ապահովելով կոլտնտեսականների արտոնյալ դրությունը մենատնտեսների նկատմամբ։ Խորհրդակցություն կուսակցության հանրապետական և մյուս կոմիտեներին հանձնարարեց մշակել կոլեկտիվացումն ավարտելու պլան[1]։

Խորհրդակցության նշած տնտեսական և մյուս միջոցառումները իրենց արտացոլումը գտան գյուղատնտեսական հարկի ու մթերումների օրենքներում և կուսակցական կազմակերպությունների գործունեության մեջ։ Այսպես, միութենական կառավարության 1934 թ. օգոստոսի 3-ի որոշումով վերվեց անհատական տնտեսությունների կողմից պետությանը պարտադիր կարգով հացահատիկ հանձնելու կարգը։ Ըստ այդ որոշման հացահատիկի պարտադիր հանձնման մասին օրենքը տարածվում էր նաև այն անհատական տնտեսությունների վրա, որոնց համար ցանքի պլաններ չեն եղել հաստատված, ընդ որում նրանց հանձնման նորման սահմանվում էր 50 տոկոսով ավելի, քան ՄՏԿ-ների կողմից շպասարկվող կոլտնտեսությունների նորման էր։ Պետությանը հացահատիկ էր հանձնվելու նաև անհատական տնտեսություններում պլանից ավելի կատարած ցանքերից[2]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. դեկտեմբերյան պլենումը քննարկեց խորհրդակցության արդյունքները և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. նոյեմբերյան պլենումի որոշումները։ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանի զեկուցման առթիվ պլենումն ընդունեց «Գյուղն ուշադրության կենտրոնում» բանաձևը։ Արձանագրելով կոլեկտիվացման որոշ աճ (որը հիմնականում տեղի էր ունեցել 1934 թ. երկրորդ կեսին), պլենումը նշեց, որ նրա տեմպերը անբավարար են մի շարք շրջաններում, ինչպես Վեդիում, Փաշալուում, Ապարանում, Քեշիշքենդում, Շամշադինում, Ստեփանավանում, Բասարգեչարում, Մարտունիում։ Պլենումը դրա հիմնական պատճառներն էր համարում մենատնտեսների մեջ կատարվող աշխատանքի թուլությունը, առանձին կոլտնտեսությունների ինքնամփոփվելու պրակտիկան, կոլտնտեսություն ընդունվել ցանկացող մենատնտեսների նկատմամբ ծանր պահանջներ առաջադրելը և այլն։ Ելնելով այդ ամենից պլենումը որոշեց ուժեղացնել մենատնտես գյուղացիների շրջանում տարվող մասսայական-բացատրական աշխատանքը[3]։

---

1 Տե՛ս «История КПСС», т. IV, кн. 2, М., 1971, стр. 432—433.

2 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1934, № 40, հոդ. 321։

3 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. հունվարի 1։

Այսպիսով, կոմունիստական կուսակցությունը խնդիր դրեց ավարտել գյուղի սոցիալիստական վերակառուցումը և ցույց տվեց այն ուղիները, որոնցով իրականացվելու էր մշակված ծրագիրը։

Կոլտնտեսային շինարարության արագացման գործում կարևոր դեր էր խաղում գյուղատնտեսության մեքենայացումը։

Համ(բ)Կ XVII համագումարը (1934 թ. հունվար-փետրվար) նշեց, որ երկրորդ հնգամյա պլանով նախատեսված գյուղատնտեսական արտադրության աճը «կարող է ձեռք բերվել միայն կոլեկտիվացումը լիովին ավարտելու և ամբողջ գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումն իրականացնելու հիման վրա»[4]։

Երկրորդ հնգամյակի տարիներին Հայաստանում վճռական հաջողություններ ձեռք բերվեցին գյուղատնտեսությունը տեխնիկապես զինելու, հողագործության հետամնաց եղանակները վերացնելու ուղղությամբ։ Սովետական Միության ինդուստրացումը և գյուղատնտեսական մեքենաշինության զարգացումը լայն բազա ստեղծեցին սովետական բոլոր հանրապետություններում գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման խնդիրը կենսագործելու համար։

Երկրորդ հնգամյակի ընթացքում Հայաստանում կազմակերպվեց ևս 17 մեքենատրակտորային կայան և նրանց թիվը 1937 թ. հասավ 24-ի[5]։ ՄՏԿ-ներ գոյություն ունեին հանրապետության գրեթե բոլոր շրջաններում։ Գյուղատնտեսության մեջ 1932 թ. աշխատում էր 540 (7048 ձիաուժով), իսկ 1937 թ.՝ 1358 (21.884 ձիաուժով) տրակտոր։ Նրանց մեծ մասը կենտրոնացած էր ՄՏԿ-ներում, իսկ մյուսները՝ սովխոզներում ու կոլտնտեսություններում։ Երկրորդ հնգամյակի տարիներին գյուղատնտեսությունն սկսեց համալրվել նաև բերքահավաքի տեխնիկայով՝ կոմբայններով։ Առաջին երկու կոմբայնը կոլտնտեսային դաշտերում երևան եկան 1933 թ., իսկ հնգամյակի վերջում դրանց թիվը հասավ 127-ի[6]։ Գյուղատնտեսության աշխատողների տրամադրության տակ կար 395 բեռնատար ավտոմեքենա, 254 կալսիչ և այլ տեխնիկա[7]։ Սկսվեց նաև բամբակի բերքահավաքի մեքենայացումը։ Կոլտնտեսային դաշտերում աշխատում էին տասնյակ «տուրման-վակուում» մեքենաներ։

---

4 «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 260։

5 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», Статистический сборник, Ереван, 1940, стр. 57.

6 Տե՛ս նույն տեղում, էջ 48։

7 Տե՛ս նույն տեղում։

էլեկտրաէներգիան մուտք գործեց նաև գյուղատնտեսական արտադրության մեջ։ 1937 թ. Հանրապետությունում գործում էր 12 գյուղական էլեկտրակայան։ Էլեկտրիֆիկացվել էր 68 կոլտնտեսություն[8]։ Էլեկտրականությամբ սկսեցին աշխատել կալսիչները, աղացները, նորոգման արհեստանոցները։ Հայաստանը Սովետական Միությունում առաջիններից մեկն իրագործեց խաղողի այգու պլանտաժը (հողի նախապատրաստումը այգի տնկելու համար) էլեկտրաղութանով կատարելու փորձերը (1933 թ.), որոնք տվեցին դրական արդյունքներ, սակայն տարածում չստացան։

1937 թ. մեքենատրակտորային կայանները սպասարկում էին 646 կոլտնտեսությունների, որոնք ընդգրկում էին Հանրապետության բոլոր կոլտնտեսականների թվի և բոլոր կոլտնտեսությունների ցանքատարածությունների մոտ երեք քառորդը[9]։ Գյուղատնտեսական աշխատանքները մեքենայացվել էին՝ գարնանային վար՝ 40,7 ցրտահերկ՝ 62,4, ցել՝ 53,1, աշնանացան՝ 22,7, բամբակի ցանք՝ 47,9, շաքարի ճակնդեղի ցանք՝ 48,4, հացահատիկային մշակույթների բերքահավաքը կոմբայնով՝ 9,3, կալսելը՝ 30,2 տոկոսով և այլն[10]։ Ընդամենը մի քանի տարի առաջ այդ գործողությունները հիմնականում կատարվում էին կենդանի քաշող ուժով կամ ձեռքի աշխատանքով։ Կարճ ժամանակամիջոցում այդպիսի ցուցանիշների հասնելը մեծ նվաճում էր։

Գյուղատնտեսության էներգետիկ հզորության մեջ ավելի ու ավելի էր կրճատվում բանվորական անասունների տեսակարար կշիռը։ Էներգետիկ հզորության աճի շնորհիվ թեթևանում էր գյուղատնտեսության աշխատողների աշխատանքը։ Կոլտնտեսությունների և սովխոզների աշխատանքների մեքենայացումը և ՄՏԿ-ների գործունեությունը կարևոր դեր էր խաղում կոլեկտիվացման զարգացման գործում։

Վերևում բերված տվյալները վկայում են, որ երկրորդ հնգամյակի վերջին Հայաստանում ամենածանր գյուղատնտեսական աշխատանքը՝ վարը մեքենայացված էր մոտավորապես կիսով չափ կամ մի փոքր ավելի, այսինքն հիմնական մեքենայացման աշխատանքները դեռևս շարունակվում էին։ Այն շարունակվում էր նաև երրորդ հնգամյակի տարիներին և ավարտվեց միայն նախապատերազմյան ժամանակաշրջանում։ Նախապատերազմյան տարիներին հիմնական մեքենայացումը

---

8 Տե՛ս նույն տեղում, էջ 44։

9 Տե՛ս նույն տեղում, էջ 57։

10 Տե՛ս նույն տեղում, էջ 60։

ընդգրկել էր միայն բամբակագործական շրջանները։ Երկրորդ և երրորդ հնգամյակների տարիներին զգալի նվաճումներ էին ձեռք բերվել նաև ամբողջ գյուղատնտեսության մեքենայացման բնագավառում, այսինքն դեռևս հիմնական մեքենայացումը չավարտած սկսվել էր կոմպլեքսային մեքենայացման գործը։ Իսկ մի շարք բնագավառներում, ինչպես անասնապահության մեջ, տեխնիկան գրեթե մուտք չէր գործել։ Այնուամենայնիվ 30-ական թվականները ինչպես Հայաստանի գյուղի սոցիալիստական վերափոխման, այնպես էլ գյուղատնտեսության մեքենայացման համար դարձան վճռական տարիներ։ Ավելացնենք նաև այն, որ կոլեկտիվացման տարիներին հանրապետության գյուղատնտեսության մեքենայացման ցուցանիշները որոշ չափով ցածր էին միութենական միջին ցուցանիշներից[11]։ Կարծում ենք, որ դրա հիմնական պատճառը մեքենայացման տեսակետից Հայաստանի աննպաստ բնակլիմայական պայմաններն են (լեռնային բնույթը, տեղանքի կտրտվածությունը, թեք լանջեր և այլն)։ Մեքենայացման այդ դժվարությունները հաղթահարելու համար պահանջվում էր լրացուցիչ ժամանակ։

Գյուղատնտեսության ինդուստրացումը և էլեկտրիֆիկացումը սոցիալիստական ինդուստրացման բաղկացուցիչ մասն էր, որը շարունակվեց նաև հետագայում։ Այն անընդհատ պրոցես է, ինչպես տեխնիկայի ու գիտության զարգացումն ընդհանրապես։ Գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը նշանակում էր բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի և քաղաքի կողմից գյուղին ցույց տրվող օգնության հետագա ամրապնդում։

Երկրորդ հնգամյակի տարիներին որոշ աշխատանք կատարվեց նաև շեֆական օգնության բնագավառում։ Համ(ք)Կ Կենտկոմի 1933 թ. հունվարյան պլենումից և հարվածային կոլտնտեսականների համամիութենական I համագումարից հետո քաղաքային արդյունաբերական ձեռնարկությունները, կուսակցական, կոմերիտական ու արհմիութենական կազմակերպությունները նոր կամպանիա ծավալեցին գյուղին ցույց տրվող պրոլետարական օգնությունն ուժեղացնելու, շեֆական աշխատանքը ծավալելու համար։

Հայաստանի չորս արդյունաբերական քաղաքներում (Երևան, Լենինական, Ղարաքիլիսա, Ալավերդի) կազմակերպվել էր 497 շեֆական բջիջ, որոնք ընդգրկում էին ավելի քան 22 հազար մարդ, այդ թվում

---

11 Տե՛ս М. А. Вылцан, Этапы развития материально-технической базы сельского хозяйства СССР: «Вопросы истории», 1975, № 9, стр. 17—32.

Երևանում՝ 160 բջիջ, մոտ 8400 անդամով և Լենինականում՝ 182 բջիջ, 10 հազար անդամով[12]։ Մինչև մայիսի 15-ը Լենինականի երկաթուղային շենք բջիջները գյուղ էին ուղարկել 132, այդ թվում 7 վերանորոգող, 6 հաշվային աշխատողների, 37 ագիտացիոն, 75 կուլտ-մասսայական և 7 բուժական բրիգադ։ Նրանք 16 ենթաշենք կոլտնտեսություններին տրամադրեցին 25 գումար։ Նալբանդ և Զաջուռ գյուղերի խրճիթ-ընթերցարանները համալրվեցին գրականությամբ[13]։

Կուսակցության Երևանի կոմիտեն սիստեմատիկ օգնություն էր ցույց տալիս Կոտայքի և Ղամարլուի շրջաններին։ 1933 թ. գարնանը 10 կուսակցականներ մեկնեցին գյուղ մշտական աշխատանքի։ 500 կոմունիստներ, կոմերիտականներ և անկուսակցականներ քաղաքական աշխատանք էին տանում հանրապետության տարբեր շրջաններում։ Կոմսոմոլի Երևանի քաղկոմը 1933 թ. փետրվարից մինչև մայիս գյուղ ուղարկեց 330 տարբեր բրիգադներ, որոնք տեղում աշխատանք տարան 3-ից մինչև 15 օր։ Իսկ 150 կոմերիտականներ գյուղ էին մեկնել մեկ ամիս ժամանակով։ Բացի այդ, կոմերիտականները գյուղական գրադարան-ընթերցարաններին հատկացրին 9000 կտոր գիրք, 4000 տետր, կազմակերպեցին 45 ներկայացում, 31 կինոցուցադրում[14]։

Հանրապետության 13 շրջաններում գարնանացանի ընթացքում կոմերիտականների ուժերով հասարակական կարգով զտվեց 2924 և ախտահանվեց 5761 ցենտներ սերմացու հացահատիկ, պարարտացվեց 7865 հեկտար ցանքատարածություն, վերանորոգվեցին 3800 տարբեր գյուղատնտեսական գործիքներ[15]։

Քաղաքի և գյուղի զոդման ընկերությունը 1933 թ. առաջին չորս ամսում կազմակերպեց և գյուղ ուղարկեց 312 բրիգադ, որոնց աշխատանքը ընդհանուր հաշվով կազմեց 3536 մարդ-օր[16]։

Մեքենատրակտորային կայանների բազմացման և նրանց գործունեության զարգացման շնորհիվ ստատիճանաբար նվազեց քաղաքի շեֆական օգնության դերը, հատկապես տեխնիկական սպասարկման բնագավառում։

Գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը և բանվոր դասակարգի ցույց տված բազմակողմանի օգնությունը մեծ դեր խաղա-

---

12 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 21, գ. 133, թ. 46—56։

13 Տե՛ս նույն տեղում։

14 Տե՛ս նույն տեղում, գ. 88ա, թ. 74—76։

15 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 թ. հունիսի 21։

16 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 21, գ. 88ա, թ. 74—76։

ցին գյուղատնտեսության կոլեկտիվացումը ծավալելու և ավարտելու գործում։

* * *

Գյուղատնտեսության կոլեկտիվացման ավարտումը նախապատրաստվում էր դասակարգային պայքարի պայմաններում։ 1930—1932 թթ. դասակարգային հակահեղափոխական տարրերը ջախջախիչ հարված ստացան սովետական իշխանության և աշխատավոր գյուղացիության կողմից։ Կուլակների թիվը խիստ կրճատվեց։ Սակայն կուլակությունը դեռևս չէր վերացվել որպես դասակարգ։ Հայաստանում համատարած կոլեկտիվացման խնդիրը չէր լուծվել։ Այն տեղի ունեցավ միայն երկրորդ հնգամյակում։

Անշուշտ կոլտնտեսային շինարարության նոր փուլում դասակարգային պայքարը չուներ այն սրությունը, որպիսին նախորդ շրջանում։ Ջախջախված կուլակության պայքարի հիմնական ձևը կոլտնտեսությունների դեմ վնասարարության կազմակերպումն էր, կոլտնտեսությունները բայքայելու փորձերը։ Այդ պայքարի ձևերից էր սովետական իշխանության օրենքները սաբոտաժի ենթարկելը։ Տեղի ունեցան նաև տեռորի մի շարք դեպքեր։

Դասակարգային թշնամին ու նրա գործակալները, ասված է Վաղարշապատի ՄՏԿ-ի քաղբաժնի 1933 թ. հաշվետվության մեջ, զբաղվում էին վնասարարությամբ ու պրովոկացիայով[17]։ Սարդարապատի ՄՏԿ-ի քաղբաժինը հայտնում էր (1933 թ.), թե կուլակային-դաշնակցական տարրերը պայքար են մղում կուսակցության ու կառավարության միջոցառումների դեմ։ Գեղրլու (Մրգաշատ) գյուղի կոլտնտեսությունում կուլակային տարրերը ագիտացիա էին տանում բամբակի ցանք կատարելու դեմ։ Նույն գյուղում նրանք հրդեհեցին դպրոցի շենքը, փորձեցին այրել կոլտնտեսության նախագահի և կուսբջիջի քարտուղարի տները։ Այդպես վարվեց թշնամին նաև Մեծ Շահրիար (Նալբանդյան) գյուղի ակտիվ կոմունիստներից մեկի նկատմամբ։ Մարգարա գյուղի կուլակները կոլտնտեսուհիներին հրահրում էին բամբակի բերքը չհավաքել, իսկ կովաղրկության վերացման մասին կառավարության որոշումը մեկնաբանում էին պետության կողմից ավելի շատ միս մթերելու անհրաժեշտությամբ[18]։

---

17 Տե՛ս նույն տեղում, գ. 130, թ. 3։

18 Տե՛ս նույն տեղում, գ. 248, թ. 6—11։

1933 թ. առաջին յոթ ամսվա ընթացքում բացահայտվեց կոլտնտեսային-սովխոզային ունեցվածքի հափշտակության 28 դեպք, որոնց հեղինակները ենթարկվեցին դատական պատասխանատվության: Նույն տարվա ընթացքում դասակարգային թշնամին մի շարք վնասարարական գործողություններ կատարեց Դսեղ, Եղվարդ, Ավշար, Վեղի և այլ գյուղերում[19]: 1933 թ. մարտին Վաղարշապատի ժողովրդական դատարանը խիստ դատապարտեց «Անասնաված» կոլտնտեսության գույքը հափշտակած մի խումբ մարդկանց[20]: Հանրապետության Գերագույն դատարանի տվյալներով մինչև 1933 թ. օգոստոսը կոոպերատիվ-կոլտնտեսային գույքի հափշտակման համար 1932 թ. օգոստոսի 7-ի օրենքով դատապարտվածների ճնշող մասը կուլակներ, ենթակուլակներ և նախկին առևտրականներ էին[21]: ՀԿ(բ)Կ IX համագումարում (1934 թ. հունվար) հանրապետության արդարադատության դատախազ Պ. Բորոսյանը կոնկրետ տվյալներ հրապարակեց գյուղատնտեսական կամպանիաների դեմ պայքարի համար կուլակներին, ենթակուլակներին և այլ տարրերի դատական պատասխանատվության ենթարկելու մասին[22]:

Այս փաստերը և տվյալները վկայում են, որ երկրորդ հնգամյակի տարիներին ևս, նախորդ տարիների նման, Հայաստանում շարունակում էր հետևողականորեն կիրառվել կուլակության սահմանափակման և արտամղման քաղաքականությունը: Կուլակների մի մասը ենթարկվեց տնտեսական և վարչական այնպիսի ճնշման, որի հետևանքը եղավ նրա կուլակաթափությունը:

Միայն 1934 թ. հանրապետության Գերագույն դատարանը լսեց կոլտնտեսություններին վերաբերող 10 գործ և հանրային-սոցիալիստական սեփականության դեմ ոտնձգություն կատարողներին դատապարտեց օգոստոսի 7-ի օրենքով: Անասունների մորթ էր տեղի ունեցել Բասարգեչարի շրջանի Ղարաղոյուն (Ակիզլու) գյուղի կոլտնտեսությունում: Հանրային ունեցվածքի և սեփականության հափշտակություններ ու գողություններ էին կատարվել Լեջան (Ստեփանավանի շրջան), Լալիգյուղ (Իջևանի շրջան), Ղլինճաթաղ (այժմ Սուսեր, Թալինի շրջան). Վերին Ախտա, Բաշքենդ (Գեղարքունիք, Նոր Բայազետի շրջան) գյուղերի կոլտնտեսություններում: Հանցագործները, որոնք կուլակներ, են-

19 Տե՛ս նույն տեղում, գ. 133, թ. 32—35:

20 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. մարտի 10:

21 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1933 թ. օգոստոսի 6:

22 Տե՛ս «ՀԿ(բ)Կ IX համագումարի սղագրական հաշվետվություն: 1934 թ., 10—13 հունվարի», էջ 316:

թակուլակներ և այլ խորթ տարրեր էին, ենթարկվեցին խիստ պատասխանատվության[23]։

1934 թ. դատական մարմինները քննեցին հրկիզումների երկու դեպք, որոնք «հակահեղափոխական նպատակով ուղղված էին կոլտնտեսային կարգի դեմ», կարգում ենք հանրապետության արդարադատության ժողկոմատի և դատախազության հաշվետվության մեջ։ Մեկը Վաղարշապատի շրջանի Այլանլու գյուղում, ուր հրդեհվեց կոլտնտեսության 11,5 հազար խուրձ խոտ, մյուսը՝ 1934 թ. մարտի 5-ին Նոր Բայազետում, ուր դասակարգային թշնամու գործակալներին հաջողվել էր հրկիզել խոտի մեջ թաքցված կոլտնտեսության կալսիչը և երկու քամհար մեքենաները[24]։

1934 թ. հոկտեմբերին հանրապետության կառավարությունը որոշում ընդունեց անասնաբուծության ասպարեզում հանցագործությունների դեմ պայքարելու միջոցառումների մասին։ Արդարադատության մարմիններից պահանջվում էր քրեական խիստ պատասխանատվության ենթարկել կոլտնտեսությունների ու սովխոզների անասունները պահելու և խնամելու գործում անփութություն, անբարեխղճություն ու թափթփվածություն թույլ տվողներին, ուժեղացնել պայքարը անասունների հափշտակության դեմ, անշեղորեն կիրառելով օգոստոսի 7-ի օրենքը[25]։

Կուսակցական և սովետական մարմինները ուժեղացրին պայքարը նաև կոլտնտեսությունների քայքայման, սաբոտաժի, հակակոլտնտեսային ագիտացիայի և դասակարգային թշնամու ու նրա գործակալների մյուս գործողությունների դեմ։ Միայն 1934 թ. ժողովրդական և գերագույն դատարանները լսեցին այդպիսի մի քանի գործ։ Ստեփանավանի ժողդատարանը դատապարտեց Մոլլա Էյուբլու գյուղի (այժմ Էվլու, Կալինինոյի շրջան) սովետի նախկին նախագահին, որի քայքայիչ գործունեության հետևանքով կոլտնտեսությունը ցրվել էր, և բացասական ազդեցություն էր ունեցել նաև հարևան գյուղերի կոլտնտեսությունների վրա։ Գերագույն դատարանը Վորոնցովկայում (Կալինինո) լսեց Դեմուրչիլար գյուղի կոլտնտեսության քայքայման մասին գործը և արձանագրեց, որ դրա համար մեղավոր են այնտեղ խցկված կուլակներն ու նրանց ազդեցության տակ ընկած կոլտնտեսության նա-

---

23 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 22, գ. 270, թ. 9—26։

24 Տե՛ս նույն տեղում, թ. 1—8։

25 Տե՛ս «ՀՍՍՀ օր. և կարգ. ժողվածու», 1934, № 10, հոդ. 121։

խոգահը։ Կոլտնտեսային կարգի թշնամի և խորթ տարրերը սաբոտաժի ենթարկեցին նաև Ստեփանավանի շրջանի Նիկոլաևկա (Կիրով) գյուղի կոլտնտեսության հնձի աշխատանքները, կոլտնտեսությանը գնելով ծանր դրության մեջ։ Խորթ տարրերը քայքայիչ աշխատանք էին տանում նաև Արթիկի շրջանի Ղամամալի գյուղի կոլտնտեսությունում։ 1934 թ. նոյեմբերին Արթիկում կայացած Գերագույն դատարանի նստաշրջանը նրանց դատապարտեց ազատազրկման[26]։

Նշան նաև տեսորի մի քանի դեպքեր։ Բասարգեչարի շրջանի Մաղրայի գյուղսովետի նախագահ, նախկին բատրակ Յաղուբ Ռուստամովը ակտիվորեն պայքարում էր կուլակների շահագործողական ձգտումների դեմ, սովետական իշխանության ու կոմունիստական կուսակցության քաղաքականությունը գյուղում անցկացնելու համար։ Այնուհետև նա առաջարկվեց որպես կուսակցության շրջկոմի հրահանգիչ։ Օգտվելով նրա բացակայությունից, Մաղրայի կուլակները նորից աշխուժացան։ Շրջկոմը հարկադրված եղավ Յաղուբ Ռուստամովին վերադարձնելու Մաղրա, իր նախկին պաշտոնին։ Թշնամի տարրերը 1933 թ. մայիսի 10-ին իրականացրին Յաղուբ Ռուստամովի սպանության պլանը[27]։ Նույն թվականի հուլիսի 21-ի գիշերը Ներքին Խաթունարխ գյուղում իրենց պատում սպանվեցին կոլտնտեսության հաշվետարի բիրքի երկու պահակները[28]։

Ներքին Ախտալի շրջանի Դարաղշլաղ գյուղի կոլտնտեսությունը կազմակերպվել էր կոմերիտական բջջի քարտուղար Իսմայիլ Ռամազան օղլու ակտիվ նախաձեռնությամբ։ Նրա ջանքերով կոլտնտեսությանը հանձնվեցին գյուղի կուլակների լավագույն հողերը, որն ավելի ուժեղացրեց վերջինների թշնամական վերաբերմունքը կոլտնտեսության և կոմերիտական քարտուղարի նկատմամբ։ Դարաղշլաղի կուլակները նախապատրաստեցին և 1934 թ. հունվարի 14-ին դանակի մահացու հարվածով սպանեցին Իսմայիլ Ռամազան օղլուն[29]։

Քաղաքական պայքարի հողի վրա, գրել է Պ. Թորոսյանը, 1934 թ. հուլիսի 5-ին Ալավերդու շրջանի Շամուտ գյուղում, հանդամասից տուն վերադառնալիս հրացանի երեք համազարկով գյուղի հակասովետական և հանցագործ տարրերը, որոնք կատարել էին մի քանի հանցագործություններ, սպանեցին կոմունիստ, կարմիր պարտիզան, կոլտնտեսու-

26 Տե՛ս ՄԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 22, գ. 270, թ. 1—8։

27 Տե՛ս նույն տեղում։

28 Նույն տեղում, ց. 21, գ. 130, թ. 5։

29 Նույն տեղում, ց. 22, գ. 270, թ. 1—8։

թյան նախագահ Մովսես Հովհաննիսյանին, որը սկսած 1926 թ., երբ գյուղսովետի նախագահ էր, ակտիվորեն պայքարում էր շրջանի դասակարգային թշնամի տարրերի դեմ[30]:

Սովետական դատարանը բոլոր մարդասպաններին տվեց իրենց արժանի պատիժը:

Այսպիսով, շահագործող դասակարգը, ավելի ճիշտ նրա մնացորդները շարունակում էին դիմադրությունը հաղթական սոցիալիստական շինարարությանը: Սակայն դասակարգային պայքարն այժմ չուներ այն սրությունը, ինչպես պատմական նախորդ ժամանակաշրջանում, երբ սովետական գյուղում հաղթանակեց կոլտնտեսային կարգը, գյուղում տիրապետող դարձավ արտադրության սոցիալիստական եղանակը, հօգուտ սոցիալիզմի լուծվեց ով-ումի հարցը: Ջախջախիչ հակահարված ստացած դասակարգային թշնամին այլևս ի վիճակի չէր և ուժ չուներ նույն ձևով շարունակելու պայքարը կոլեկտիվացման դեմ: Երկրորդ հնգամյակի առաջին տարիներին գյուղում դասակարգային պայքարը աստիճանաբար թուլանում էր, փակ 30-ական թվականների կեսերին լրիվ մարեց, երբ ամբողջ երկրում և գյուղում հաղթանակեց սոցիալիզմը, վերացվեցին շահագործող դասակարգերի մնացորդները: Սոցիալիզմի հաղթանակի շրջանում դասակարգային պայքարը ոչ թե ուժեղացավ, ինչպես մի ժամանակ ենթադրում էին, այլ, ընդհակառակը, թուլացավ: Հայաստանի գյուղի փաստերը ևս վկայում են այդ մասին:

Կոլտնտեսային շինարարության նոր ժամանակաշրջանում փոխվեցին շահագործող դասակարգերի մնացորդները վերացնելու պայմանները, ուստի դրվեց նաև նոր պայմաններում կուլակության վերացումը նոր ձևով շարունակելու հարցը: Նախորդ շրջանում, երբ աշխատավոր գյուղացիությունը շրջադարձ էր կատարել դեպի կոլտնտեսությունները և Սովետական Միության հիմնական հացահատիկային շրջաններում ծավալվեց համատարած կոլեկտիվացումը, խիստ սրվեց դասակարգային պայքարը, ուժեղացավ կուլակների և նրանց կողմնակիցների դիմադրությունը: Կուլակության պայքարն ընդունեց ամենասուր ձև՝ վնասարարություն, հրկիզումներ, բանդիտիզմ, տեռոր, հակասովետական և հակակոլտնտեսային ագիտացիա և այլն: Այդպիսի պայմաններում սովետական իշխանությունը ստիպված էր կուլակների նկատմամբ վարելու ամենախիստ քաղաքականությունը, ինչպես համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակների որպես դասակարգի

30 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. փետրվարի 22:

վերացումը, նրանց մասսայաբար բնակավայրերից արտաքսելով։ Այնուհետև, կուլակային և մյուս հակատարրերի նկատմամբ բռնության գործադրումը ուժեղացավ, որովհետև հաճախացան կոլտնտեսությունների ու սովխոզների գույքի գողության ու հափշտակության դեպքերը (հատկապես 1932 թ.), որի պատճառով հրապարակ եկավ օգոստոսի 7-ի հայտնի օրենքը։

1930—1932 թթ., նշել են ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և սովետական կառավարությունը, կուլակության վերացման և կոլտնտեսությունների հաղթանակի տարիներ էին։ Կուսակցության մղած պայքարը հանդեցրեց դասակարգային թշնամու ջախջախմանը և սոցիալիզմի դիրքերի վերջնական ամրապնդմանը գյուղում[31]։

Այդ ամենի շնորհիվ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և շահագործող տարրերի մնացորդների վերացումը լրիվ ավարտելու, ինչպես նաև կուլակների մասսայական արտաքսումից և գյուղում բռնության սուր ձևերից հրաժարվելու համար։ Մինչդեռ Սովետական Միության շատ շրջաններում շարունակում էին դատել նախկին ձևով և պահանջում էին թույլ տալ կատարելու զանգվածային արտաքսումներ ու գործադրել բռնության սուր ձևեր։ Այդպիսի մոտեցում կար նաև Հայաստանում։ Այսպես, 1933 թ. ապրիլի 30-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում էր ընդունել հանրապետության բամբակագործական շրջաններից կուլակային տնտեսությունների արտաքսման մասին։ Ըստ այդ որոշման նախատեսվում էր նույն թվականի մայիսի 20—25-ը բամբակագործական շրջաններից 300 տնտեսություն (Վեդի՝ 48, Վաղարշապատ՝ 68, Ղամարլու՝ 116 և Ղուրդուղուլի՝ 68) արտաքսել Անդրկովկասի սահմաններից դուրս[32]։ Արձանագրվել են նաև բռնության սուր ձևերի անհարկի գործադրման, ինչպես նաև սոցիալիստական օրինականության կոպիտ խախտման շատ դեպքեր։

Նկատի ունենալով տեղերում կուլակության մնացորդների վերացման համար ստեղծված նոր պայմանները հաշվի չառնելու, ինչպես նաև սոցիալիստական օրինականության խախտումների փաստերը, ԽՍՀՄ ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1933 թ. մայիսի 8-ին հրահանգ (որոշում) ուղարկեցին բոլոր կուսակցական-սովետական աշխատողներին և պետքաղվարչության ու դատական-դատախազական բոլոր

31 Տե՛ս ՄԱԻ ՀՖԱ, ֆ. 1, ց. 21, գ. 29, թ. 1։

32 Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 1, թ. 20։

մարմիններին։ Ստեղծված նոր նպաստավոր պայմանները, ասված է նրանում, հնարավորություն են տալիս դադարեցնել զանգվածային արտաքսումները որպես կանոն, արտաքսումներ, որոնց կարիքը այլևս չի զգացվում և որոնք «դիպչում են, ինչպես հայտնի է, ոչ միայն կուլակներին, այլև անհատական տնտեսություններին ու կոլտնտեսականների մի մասին»։ Ցուցում էր տրվում արտաքսումը գործադրել միայն բացառիկ դեպքերում և անհատական կարգով, կոլտնտեսությունների դեմ պայքարի կազմակերպիչների ու ղեկավարների, իսկ բանտարկությունները՝ սովետական իշխանության ակտիվ թշնամիների նկատմամբ։ Կուսակցությունը և կառավարությունը թույլատրում էին ամբողջ երկրում արտաքսել ընդամենը 12 հազար տնտեսություն (տեղերի պահանջներով 100 հազարի փոխարեն), այդ թվում ամբողջ Անդրկովկասի համար նախատեսվում էր 500 ընտանիք[33]։

1933 թ. մայիսի 8-ի որոշումը գործնական նշանակություն ուներ նաև Հայաստանի համար, որտեղ դեռևս չէր հաղթանակել համատարած կոլեկտիվացումը և չէր ավարտվել կուլակության որպես դասակարգի վերացումը։ Որոշ փաստաթղթեր օգնում են պարզելու, թե ինչպիսի գործնական դեր է խաղացել սույն որոշումը Հայաստանում։ Ժամկետից շուտ աքսորավայրից գյուղ վերադառնալու մասին դիմել էր Ղամարլուի շրջանի Օղուրբեքլու (Բեռքանուշ) գյուղի նախկին կուլակներից մեկը, որը ընտանիքով Անդրկովկասի սահմաններից արտաքսվել էր որպես կուլակ Անդրպետքաղվարչության 1933 թ. մայիսի 16-ի որոշումով և ուղարկվել Ղազախստան[34]։ Նույնպիսի խնդրանքով 1935 թ. Հոկտեմբերյանի շրջգործկոմին էր դիմել Գեչրլու (Մրգաշատ) գյուղի կուլակներից մեկը, որը ընտանիքով նույնպես արտաքսվել էր Ղազախստան 1933 թ. մայիսին[35]։ Կարծում ենք, որ բերված փաստերը ուղղակիորեն առնչվում են հենց հիշյալ որոշման կենսագործման հետ։ Որոշումը Հայաստանում իրագործելու մասին այլ փաստեր չունենք։ Մեզ հայտնի չէ նաև, թե այդ որոշման համաձայն քանի կուլակային տնտեսություն արտաքսվեց Հայաստանից կամ ամբողջ Անդրկովկասից։

Այսպիսով, դեռևս մինչև համատարած կոլեկտիվացման հաղթանակը Հայաստանում իրականացվում էր կուլակության վերացումը նաև նրա ապակուլակացման և արտաքսման եղանակով, բռնությամբ։

---

33 Տե՛ս նույն տեղում, ց. 21, գ. 29, թ. 1։

34 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 8, գ. 641, թ. 141—144։

35 Տե՛ս նույն տեղում։

Պատմական գրականության մեջ արտահայտվել է այն կարծիքը, թե երկրորդ հնգամյակում կոլեկտիվացումն ավարտելու կուրսի կապակցությամբ Անդրկովկասի հանրապետություններում կուլակության սահմանափակման և արտամղման քաղաքականությունը ստանում է նոր բովանդակություն, ուստի հնարավորություն է հանդես գալիս գեղեցիկ մինչև համատարած կոլեկտիվացման ծավալումը կուլակության տնտեսական հզորությունը հարկման և այլ տնտեսական միջոցառումների միջոցով վերացնելու համար[36]: Դա ճիշտ է: Սակայն, ինչպես ցույց տրվեց, Անդրկովկասում չի բացառվել և (համենայն դեպս Հայաստանում) կիրառվել է նաև կուլակությանը վարչական ճնշմամբ ու բռնությամբ վերացնելու եղանակը: Հետևաբար նշված եզրակացությունը միակողմանի է արտահայտում Անդրկովկասում կուլակության իրական վերացումը:

Կուլակության որպես դասակարգի վերացումը, նշել է Ի. Տրիֆոնովը, իրականացվում էր մի քանի՝ համոզման, տնտեսական-կազմակերպական գործունեության, բռնի ոնեղրկման մեթոդների համատեղման ուղիով[37]: Կուլակության որպես դասակարգի վերացման մեթոդների բազմազանությունը իր արտահայտությունը գտավ նաև Հայաստանում, որտեղ գյուղի սոցիալիստական վերակառուցումն ընդունել էր տևական բնույթ:

Նախորդ տարիների նման երկրորդ հնգամյակում ևս կուլակության, ավելի ճիշտ նրա մնացորդների, վերացման մեթոդներից էր սովետական իշխանության որոշումները (ցանքի ու մթերումների կայուն առաջադրանքներ և այլն) չարամտորեն չկատարողների ոնեղրկումը՝ ապակուլակացումը: Գյուղական շահագործողների սոցիալ-տնտեսական վերացման հիմնական և կարևոր միջոցը սովետական իշխանության հարկային քաղաքականությունն էր: Անհատական հարկման միջոցով ուժեղացնելով տնտեսական ճնշումը, սովետական իշխանությունը արագացնում էր կուլակության մնացորդների վերացումը:

Երկրորդ հնգամյակի տարիներին Հայաստանում, հարկային տվյալների համաձայն, կուլակային տնտեսությունների թիվը ներկայացնում է հետևյալ պատկերը: 1933 թ. անհատական կարգով հարկվել էր ընդամենը 291 կուլակային տնտեսություն, 1934 թ.՝ 26 և 1935 թ.՝ 28

---

36 Տե՛ս Պ. Լոմաշվիլի, նշված աշխ., էջ 330:

37 Տե՛ս И. Трифонов, Ликвидация эксплуататорских классов в СССР, М., 1975, стр. 293.

տնտեսություն[38]։ 1935 թ. կուլակության անհատական հարկման վերջին տարին է։ Այդ տվյալները միաժամանակ վկայում են, որ երկրորդ հնգամյակում կուլակության միայն մնացորդներն էին պահպանվել։ 1933 թ. մեկ կուլակային տնտեսության հարկի չափը կազմում էր 638 ռուբլի, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելի էր մոտ երեք անգամ[39]։ Ինչպես նշել ենք, կուլակների վրա դրվում էր նաև բարձր ինքնահարկ, կուլտհարկ և ջրային տուրք, որոնցից յուրաքանչյուրը նրա գյուղմիասահարկի կրկնակին էր։ Բարձր էին նաև մթերումների առաջադրանքները։ Չդիմանալով տնտեսական ճնշմանը կուլակները դադարում էին զոյություն ունենալ որպես շահագործող տարր, իջնելով աշխատավորական տնտեսության մակարդակին։

«Երկրորդ հնգամյակի վերջում,— կարդում ենք ՍՄԿԿ պատմության բազմահատորյակում,— մի շարք շրջաններում, որտեղ կոլեկտիվացման տոկոսը ցածր էր, պահպանվում էին կուլակային տնտեսությունները։ ՍՍՀՄ-ում կոլտնտեսային կարգի հաղթանակի հետ մեկտեղ պետությունը կուլակության մնացորդների վերացումը սկսեց իրագործել ատիճանաբար։ 1934—1937 թթ. կուլակային տնտեսությունների արտամղումը, որպես կանոն, կատարվում էր տնտեսական բնույթի միջոցներով։ Նրանք ենթարկվում էին բարձր հարկման, իսկ պետական մթերումները չկատարելու դեպքում ենթարկվում էին բռնագրավման»[40]։ Պետք է ավելացնել, որ Հայաստանում կուլակների սոցիալ-տնտեսական արտամղումը կենսագործվում էր նաև մինչև 1934 թ.։

Այսպիսով, երկրորդ հնգամյակի տարիներին Հայաստանում կուլակության մնացորդների վերացումը տեղի էր ունենում ինչպես բռնի, այնպես էլ տնտեսական ճնշման մեթոդների օգնությամբ։ Այն փաստորեն ավարտվեց 1934—1935 թթ.։ 1936 թ., երբ արդեն ամբողջ երկրում ավարտվել էր շահագործող դասակարգերի մնացորդների վերացումը, համապատասխան փոփոխություններ մտցվեցին հարկային օրենքներում։ Անաշխատ եկամուտ ունեցողները, այդ թվում կուլակային տնտեսությունները, հարկադրվում էին ոչ թե անհատական կարգով, այլ «աշխատավորական անհատական տնտեսության համար սահմանված դրույքներով, բայց ոչ թե եկամտաբերության նորմաներով, այլ ըստ

---

38 Տե՛ս Պ. Լոմաշվիլի, նշված աշխ., էջ 439—440։

39 Տե՛ս նույն տեղում, էջ 439։

40 «История КПСС», т. IV, кн. 2, М., 1971, стр. 441.

փաստական նկամուտների»[41]: Ընդ որում այդպիսի հարկադրումը հիմք չէր ծառայում ընտրական իրավունքից զրկվելու համար[42]:

Տվյալներից բխում է այն եզրակացությունը, որ Հայաստանում կուլակության մնացորդների վերացումը տեղի է ունեցել նախքան համատարած կոլեկտիվացման ծավալումը, նրա սահմանափակման ու արտամղման քաղաքականության պայմաններում:

Կուլակության սոցիալ-տնտեսական ջախջախումը դեռևս չէր նշանակում նրա՝ որպես դասակարգի լիակատար վերացում: Քանի դեռ չէր ավարտվել գյուղի սոցիալիստական վերակառուցումը և պահպանվում էին վերջին անհատական գյուղացիական տնտեսությունները, և՛ տնտեսականորեն, և՛ պրակտիկ կերպով հնարավոր էր կուլակների ծնունդը: Հանրապետության բոլոր շրջաններում համատարած կոլեկտիվացումը, ինչպես կտեսնենք, հաղթանակեց միայն երկրորդ հնգամյակի վերջում: Դա նշանակում էր նաև կուլակության որպես դասակարգի վերացում, որը համընկավ այն ժամանակի հետ, երբ Սովետական Միությունում ավարտվեց սոցիալիզմի կառուցումը՝ հիմնականում, երբ վերացվեցին բոլոր շահագործող դասակարգերը և շահագործում առաջացնող պատճառները:

Կուլակության մնացորդների ջախջախումը և վերացումը, որն իրականացվեց երկրորդ հնգամյակի առաջին տարիներին, կարևոր նշանակություն ունեցավ նաև համատարած կոլեկտիվացման նախապատրաստումն արագացնելու և նրա հաղթանակի գործում:

2. ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՐՏԵԼԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԵՎ ԱՎԱՐՏՈՒՄԸ

1935 թ. փետրվարին Մոսկվայում կայացավ հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարը, որը մեծ իրադարձություն էր կոլտնտեսային գյուղացիության կյանքում: Համագումարը լսեց և քննարկեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի գյուղբաժնի վարիչ Յա. Յակովլևի զեկուցումը գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության և միութենական հողժողկոմ Մ. Չերնովի զեկուցումը կանոնադրությունը մշակող հանձնաժողովի գործունեության մասին:

---

41 «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1936, № 40, հոդ. 340:

42 Տե՛ս նույն տեղում, հոդ. 345:

Կոլտնտեսային գյուղի պատվիրակները ակտիվորեն մասնակցեցին կանոնադրության քննարկմանը: Համագումարն ընդունեց գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը՝ կոլտնտեսային կյանքի բարձրագույն և հիմնական օրենքը: Առաջին կանոնադրությունն ընդունվել էր 1930 թ. սկզբին, երբ միայն նոր էր ծավալվել գյուղի սոցիալիստական վերափոխումը: Այժմ հիմնականում ավարտվել էր գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Աշխատավոր գյուղացիության հիմնական զանգվածները թողնելով մանր, անհատական տնտեսությունները, միավորվել էին կոլեկտիվ, սոցիալիստական տնտեսությունների մեջ: Վերացվել էր շահագործող դասակարգը՝ կուլակությունը: Նոր խմբագրությամբ կանոնադրությունը սահմանում էր գյուղատնտեսական արտելի նպատակները: «Գյուղի աշխատավոր տնտեսությունները,— ասված է նրանում,— կամավոր միավորվում են գյուղատնտեսական արտելում, որպեսզի ընդհանուր արտադրության միջոցներով և ընդհանուր կազմակերպված աշխատանքով կառուցեն կոլեկտիվ, այսինքն հասարակական տնտեսություն, ապահովեն լիակատար հաղթանակը կուլակի նկատմամբ, բոլոր շահագործողների և աշխատավորների թշնամիների նկատմամբ, ապահովեն լիակատար հաղթանակը կարիքի ու խավարի նկատմամբ, մանր անհատական տնտեսության հետամնացության նկատմամբ, ստեղծեն աշխատանքի բարձր արտադրողականություն և այդպիսով ապահովեն կոլտնտեսականների լավագույն կյանքը»[43]:

Կանոնադրությունը բաղկացած էր 8 գլխից, 25 հոդվածով, որոնք ներկայացնում էին արտելի նպատակն ու խնդիրները, հողի և արտադրության միջոցների մասին դրույթները, արտելի և նրա վարչության գործունեությունը, անդամության, աշխատանքի կազմակերպման, վարձատրության և կարգապահության, արտելի գործերը վարելու հարցերը:

Հողը, որը ճանաչված է որպես համաժողովրդական պետական սեփականություն, առհավետ ամրացվում էր արտելին, որի համար նրան տրվում էր համապատասխան պետական ակտ:

Կանոնադրությունը զուգակցում էր կոլտնտեսությունների և նրանց անդամների անձնական շահերն այնպես, որ բարձր դասվեն հանրայինը, սոցիալիստականը: Գլխավորը կոլտնտեսային արտադրության բարձրացումն էր, որը ծառայելու էր որպես կոլտնտեսականների նյու-

---

43 «Коллективизация сельского хозяйства...», стр. 531. Կանոնադրությունը տե՛ս նաև «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1935, № 11, հոդ. 82:

թական պահանջների բավարարման հիմնական աղբյուր։ Յուրաքանչյուր կոլտնտեսային ընտանիքի համար առանձնացվում էր ոչ մեծ օժանդակ տնամերձ հողամաս (բանջարանոց, այգի)։ Նա իրավունք ուներ պահելու նաև որոշ քանակությամբ անասուններ։ Ի տարբերություն 1930 թ. կանոնադրության, այժմ օժանդակ տնտեսության չափերը որոշվում էին կոնկրետ։

Ավելի էին հեշտացվում ընդունելության պայմանները։ Լեռնային շրջաններում կոլտնտեսականներին թույլատրվում էր ունենալ ավելի մեծ թվով անասուններ, որը խրախուսում և նպաստում էր այդ շրջանների կոլեկտիվացման ավարտմանը։ Արգելվում էր կոլտնտեսություն մտնել կուլակներին, ձայնազուրկներին։ Բացառություն էր արվում այն կուլակների զավակների նկատմամբ, ովքեր մի քանի տարի զբաղվում էին հասարակական հանրօգուտ աշխատանքով և աշխատում էին բարեխղճորեն, ինչպես նաև այն նախկին կուլակների ու նրանց ընտանիքների անդամների համար, որոնք արտաքսվելուց հետո նոր բնակավայրերում ազնիվ աշխատանքով և սովետական իշխանության միջոցառումներին օգնելով ապացուցել էին, որ փրկանք ուղղվել են։

Արտելի բարձրագույն օրգանը արտելի անդամների ընդհանուր ժողովն էր, որին վերապահվում էր արտելի բոլոր հիմնական հարցերի լուծումը։ Կանոնադրության մեջ արտահայտություն էին գտել սոցիալիստական դեմոկրատիայի և կոոպերատիվ ինքնավարության սկզբունքները։

Գյուղատնտեսական արտելի նոր օրինակելի կանոնադրությունը որոշում էր կոլտնտեսային կյանքի ու գործունեության բոլոր հիմնական սկզբունքային հարցերը։ Նա իրենից ներկայացնում էր հաղթանակած կոլտնտեսային կարգի, գյուղում սոցիալիզմի հաղթանակը վավերացնող կարևոր փաստաթուղթ։ Կանոնադրության հիմնական սկզբունքները հաստատվեցին և ամրապնդվեցին հաղթանակած սոցիալիզմի երկրի նոր սահմանադրության մեջ, որն ընդունվեց 1936 թ.։

Հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարը որոշեց կանոնադրությունը թարգմանել հանրապետությունների մայրենի լեզուներով, որպեսզի երեք ամսվա ընթացքում բոլոր կոլտնտեսությունները օրինակելի կանոնադրության հիման վրա քննարկեն, մշակեն և ընդհանուր ժողովներում ընդունեն իրենց կանոնադրությունները։

Համագումարին մասնակցում էին 1443 պատգամավորներ։ Ներկայացված էին Սովետական Միության 51 ազգությունների ներկայա-

ցուցիչներ[44]։ Սովետական Հայաստանի պատվիրակությունը բաղկացած էր 11 մարդուց։ Համամիութենական համագումարին մասնակցում էին հանրապետության կոլտնտեսությունների ներկայացուցիչներ, հարվածային կոլտնտեսականներ Եղիա Պետրոսյանը (Մեծ Շահրիարի (Նալբանդյան) կոլտնտեսության բրիգադավար, անկուսակցական), Հովհաննես Շահբազյանը (Թոխանջալուի (Մասիս) կոլտնտեսության բրիգադավար, անկուսակցական), Աղա Ալիևը (Մեծ Վեդու կոլտնտեսության նախագահ), Սրապիոն Գրիգորյանը (Ադյամանի (Գետաշեն) կոլտնտեսության հովիվ, անկուսակցական), Յուսուֆ Մամեդովը (Ղարաչանթայի (Ապիդրեկով) կոլտնտեսության նախագահ, կուսակցական), Ավագ Դանիելյանը (Սիսավանի (Սիսիան) կոլտնտեսության նախագահ, կուսակցական), Գլխո Աֆրիկյանը (Ղալթաղչիի (Հարթագյուղ) կոլտնտեսության նախագահ, կոմերիտական), Համբարձում Սահակյանը (Զոլախաչի (Զոլաքար) կոլտնտեսության ֆերմայի վարիչ, կուսակցական), Տատյանա Ժաբինան և Տատյանա Սուղդալցևան (Սարատովկայի կոլտնտեսության կթվորուհիներ), Երվանդ Ղարիբյանը (Վերին Խաթունարխի կոլտնտեսության բրիգադավար, կուսակցական)։ Վերջինս համագումարում հանդես եկավ ճառով և ողջույնի խոսք ասաց Սովետական Հայաստանի կոլտնտեսականների անունից։ Իսկ Ավագ Դանիելյանը մասնակցեց կանոնադրությունը մշակող հանձնաժողովի աշխատանքներին։

Հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարի որոշումների և օրինակելի կանոնադրության քննարկումը վերածվեց կոլտնտեսային գյուղացիության քաղաքական մեծ ցույցի և առաջացրեց աշխատանքային խանդավառության, սոցիալիստական մրցության ու հարվածային շարժման նոր բարձր վերելք։ Ավելի լայն ծավալ ընդունեց մենատնտես աշխատավոր գյուղացիության կոլեկտիվացումը։ Գյուղի աշխատավորների քաղաքական և արտադրական ակտիվության բարձրացումը կապված էր նաև Սովետների համամիութենական VII համագումարի հետ (1935 թ. փետրվար), որը որոշում ընդունեց Սովետական Միության նոր սահմանադրության նախագիծ մշակելու մասին։ Նախագիծը արտացոլելու էր այն վիթխարի սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունները, որոնք իրագործվել էին մեր երկրում հաղթական սոցիալիստական շինարարության շնորհիվ։ Այդ ամենին զումարվեց նաև Հայաստանում սովետական իշխա-

---

44 Տե՛ս «Советское крестьянство. Краткий очерк истории (1917—1970)», изд. 2, М., 1973, стр. 315.

նության հաստատման 15-րդ տարեդարձը արժանավայել դիմավորելու շարժումը։

1935 թ. փետրվարին ՀամԿ(բ)Կ Անդրերկրամը որոշում ընդունեց հարվածային կոլտնտեսականների համագումարի արդյունքներն ուսումնասիրելու և կոլտնտեսությունների կողմից գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունն ընդունելու մասին։ Փետրվարի վերջերին կայացավ ՀԿ(բ)Կ շրջկոմների քարտուղարների խորհրդակցություն, որը միջոցառումներ նշեց հիշյալ հարցի կենսագործման վերաբերյալ։

Օրինակելի կանոնադրությունը թարգմանվեց և տպագրվեց հայերեն։ Մի խումբ ղեկավար պետական-կուսակցական աշխատողներ ուղարկվեցին շրջանները։ Հողժողկոմատը մոբիլիզացրեց հողաշինարարության 100 մասնագետներ, իսկ տեղերում ակտիվ կոլտնտեսականներից պատրաստվեցին հողաչափներ, որոնք իրագործելու էին կոլտնտեսությունների հողաշինարարությունը և կոլտնտեսականների տնամերձ հողամասերի չափում-առանձնացումը։

Երբեք կոլտնտեսային ժողովները այնպես բազմամարդ և աշխույժ չէին եղել, ինչպես այժմ։ Մեծ խանդավառությամբ և ակտիվությամբ կոլտնտեսականները արտահայտվում էին կանոնադրության հոդվածների վերաբերյալ, նշում նրա մեծ նշանակությունը։ Բերում ենք այդ ժողովներից մեկի օրինակը։ Բասարգեչարի շրջանի Գյոդակբուլաղի (Կարճաղբյուր) կոլտնտեսության ընդհանուր ժողովի արձանագրության մեջ ասված է՝ հավանություն տալ գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության բոլոր կետերին։ Ժողովին մասնակցել են 210 կոլտնտեսականներ և 225 կոլտնտեսուհիներ կամ կոլտնտեսության բոլոր անդամների 99 տոկոսը։ Կանոնադրությունն ուսումնասիրել էին նաև բրիգադներում։ Այդ ընթացքում տրվել էր 130 հարց։ Կոլտնտեսականներին բաժանվել էր 200 օրինակ կանոնադրություն։ Միաժամանակ 243 մարդ բաժանորդագրվել էր հանրապետական «Կոլխոզնիկ» թերթին[45]։ Կոլտնտեսականների ակտիվության նույնպիսի բարձր ցուցանիշներ են բերված նաև նույն շրջանի Ղռիբուլաղ (Ակունք), Զոդ, Ջիլ և այլ գյուղերի կոլտնտեսությունների ընդհանուր ժողովների արձանագրություններում[46]։ Յուրաքանչյուր կոլտնտեսություն ընդունում էր իր նոր կանոնադրությունը, որը վավերացվում էր շրջգործկոմում։

Հայաստանում տիրապետում էր կոլտնտեսության հիմնական ձևը՝

---

45 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ., ֆ. 1, ց. 23, գ. 262, թ. 112—113։

46 Տե՛ս նույն տեղում, թ. 114—120։

գյուղատնտեսական արտելը, որոնք կարճ ժամանակամիջոցում քննարկեցին և ընդունեցին իրենց նոր կանոնադրությունը։

Գյուղատնտեսական արտելի կանոնադրության ընդունման և վավերացման հետ միաժամանակ և դրանից հետո իրագործվում էր կոլտնտեսությունների հողաշինարարությունը և կոլտնտեսականների տրնամերձ հողամասերի չափում-զատումը։ Կոլտնտեսությունների հողաշինարարության շնորհիվ նրանց հողերը վենտրոնացվում էին, վերացվում էր շերտընդմիջությունը, հողահեռավորությունը և հողօգտագործման այլ անհարմարությունները։ Հողաշինարարության և հողօգտագործման բարելավման նպատակն էր ստեղծել հողային նպաստավոր պայմաններ սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման, ինչպես նաև բնակավայրերի բարեկարգման համար։ Հողաշինարարության նպատակն էր նաև կոլտնտեսությունների կայուն հողօգտագործման հաստատումը։ Ինչ վերաբերում է կոլտնտեսականների օժանդակ տնտեսությանը, ապա, ինչպես նշվեց, 1930 թ. կանոնադրությունը սահմանել էր միայն դրա հիմնական սկզբունքը, իսկ նոր կանոնադրությամբ կոնկրետ կերպով որոշվում էր կոլտնտեսային ընտանիքի տնամերձ հողամասի չափը և անասունների քանակը։

Հանրապետության զեկավար մարմինները, նշելով նոր կանոնադրությունից, ըստ գոտիների ու շրջանների, որոշեցին օժանդակ տնտեսության սահմանները[47]։ 1935 թ. հունիսին այդ սահմանների մեջ մտցվեցին որոշ ճշտումներ (1939 թ. կատարվեց տնամերձ հողամասերի չափերի նոր ճշտում և ստուգում)[48]։ Նորմայից ավելի լինելու դեպքում նախկին տնամերձ հողամասերից կտրվում էին, իսկ պակաս լինելու դեպքում՝ լրացվում։ Դրանց չափումը և կոլտնտեսականներին տրամադրելը կատարվեց մինչև 1935 թ. գարնանացանը, իսկ ճշտման աշխատանքները՝ նույն թվականի աշնանը։

Կոլտնտեսությունների հողաշինարարությունը իրականացվելու էր 1935—1936 թթ.։ Առաջին տարում հողաշինարարություն կատարվեց 626, իսկ երկրորդ տարում՝ 431 կոլտնտեսություններում։ Երկու տարվա ընթացքում հողաշինարարությունն ավարտվեց բոլոր 1057 կոլտնտեսություններում, 1.399 հազար հեկտար հողատարածությամբ։ Բացի այդ, 1936 թ. կոլտնտեսություններն ստացան ևս 74 հազար հեկտար հողամաս, որոնք պատկանում էին վերացված նախկին սովխոզներին և

---

47 Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 12—18։

48 Տե՛ս «ՀՍՍՀ օր. և կարգ. ժողովածու», 1935, № 6, հոդ. 54։

այլ պետական տնտեսությունների[49]։ Կանոնադրության համաձայն բոլոր կոլտնտեսություններին հատկացվեց պետական ակտ՝ հողը նրանց կողմից անժամկետ (առհավետ) օգտագործելու մասին։

Այդ բոլորը մեծ նշանակություն ունեցան կոլտնտեսությունների ամրապնդման գործում։ Սովետական իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը ամեն ինչ անում էին, որպեսզի կոլտնտեսություններն ավելի ամրապնդվեն՝ ինչպես տնտեսապես, այնպես էլ կազմակերպորեն ու քաղաքականապես, որպեսզի նրանք ավելի լայնորեն դրսևորեն խոշոր սոցիալիստական տնտեսության առավելությունը մանր գյուղացիական տնտեսության, ինչպես նաև խոշոր կապիտալիստական արտադրության նկատմամբ։

Հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարի որոշումները կոլեկտիվացման վերելքի նոր ալիք առաջացրին Հայաստանում։ Ավելի խորացավ մասսայական կոլեկտիվացման այն վերելքը, որն սկսվել էր 1934 թ.։

1935 թ. փետրվարին կայացան մենատնտես գյուղացիների շրջանային ժողովներ, որոնք քննարկում էին հարվածային կոլտնտեսականների համագումարի և Սովետների համամիութենական VII համագումարի որոշումները։ Կիրովականի շրջանային համագումարում ելույթ ունեցան 20-ից ավելի մենատնտեսներ, որոնք սեղմուտեղը դիմում ներկայացրին կոլտնտեսություն ընդունվելու մասին, «Ես Համզաչիմանից եկա Կիրովի բաղաքն իբրև մենատնտես, վերադառնում եմ իբրև կոլտնտեսական», հայտարարեց Ե. Ասլանյանը։ Ստեփանավանի շրջանային ժողովին 29 գյուղերից մասնակցում էին 186 աշխատավոր գյուղացիներ, որոնցից 103-ը անմիջապես ցանկություն հայտնեցին դառնալ կոլտնտեսական և ժողովի կողմից դիմեցին բոլոր աշխատավոր մենատնտեսներին՝ գարնանացանը կատարել հանրային դաշտերում։ Քսան օրվա ընթացքում շրջանում կոլտնտեսություն էին ընդունվել 700 տնտեսություններ։ Գյուլագարակում, Կուրթանում, Վարդաբերդում և այլ գյուղերում գրեթե բոլոր աշխատավոր գյուղացիները կոլտնտեսության անդամ էին։ Ղամարլուի շրջանային ժողովի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին հարվածային կոլտնտեսականների համամիութենական համագումարի պատգամավոր Հովհաննես Շահբաղյանի ելույթը։ Այստեղ ևս շատերը դիմեցին իրենց կոլտնտեսություն ընդունելու։

---

49 ՏԼՀ ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 24, գ. 270, թ. 143—149։

Վերջին օրերս, հայտնում էին Վեդիից, շրջանի կոլտնտեսություններն ընդունվել են 150 մենատնտեսներ։ Լեռնային ադրբեջանական գյուղերում կազմակերպվել է չորս նոր կոլտնտեսություն (Բաղչաջիկ, Ղարաղոյուն (Ադիպլու), Քոթուզ և Մոլլավեդի)։ Մի քանի օրվա ընթացքում միայն Ջանախչի (Սովետաշեն) գյուղում դիմում ներկայացրին 55 մենատնտեսներ։ Բազմաթիվ նոր անդամներով աճեցին Վաղարշապատի շրջանի Արշալույս, Գրամիա, Սարվանլար և մյուս գյուղերի կոլտնտեսությունները։ Շրջանի բամբակագործական գյուղերում համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտվել էր։ Այժմ նրանց հետևում էին այգեգործական գյուղերը։ Կանոնադրությունը քննարկելու և ընդունելու օրը Ղամարլուի շրջանի Ներքին Աղբաշի (Արևշատ) և Միչյանի կոլտնտեսություններն աճեցին 60 նոր անդամներով։ Շատ դիմումներ եղան նաև Թոխանշալու (Մասիս), Արփավար, Արտաշատ, Յուվա (Շահումյան) և այլ գյուղերում։

1935 թ. փետրվարի 14-ի Շամշադինի շրջանի Նավուր գյուղի հասարակական ժողովը քննարկեց Սովետների VII համագումարի և հարվածային կոլտնտեսականների համագումարի որոշումները։ Նույն օրը աշխատավոր մենատնտեսներից ստացվեց 12 դիմում։ Հաջորդ օրը տեղի ունեցան թաղային ժողովներ, որտեղ դիմում տվեցին ևս 23 տնտեսություններ։ Կոլտնտեսության անդամների թիվը մի քանի օրվա ընթացքում 100-ից հասավ 150-ի։ Հունվարի 1-ից մինչև փետրվարի 10-ը Ալավերդու շրջանի Ուղունլար (Օձուն) գյուղում, որը հանրապետության ամենախոշոր գյուղերից է, կոլտնտեսություն մտան 267 նոր անդամներ, որոնք կոլտնտեսություն բերեցին իրենց լծկանները, գյուղատնտեսական գործիքները և սերմացուն։ Դիմումների ստացումը շարունակվում էր։

Փետրվարի 23-ին և 24-ին Լենինականի շրջանի բոլոր գյուղերում կայացան կոլտնտեսականների, հասարակական կամ դրանց համատեղ ժողովներ, ուր քննարկվեց նոր կանոնադրությունը։ Տրվեցին ղդալի թվով դիմումներ։ Համատարած կոլեկտիվացում էր տեղի ունենում Թալինի շրջանի Ղրմզլու (Կարմրաշեն), Մեհրիբան (Կաթնաղբյուր), Թալին, Փիրթիբան, Ոսկեթաս, Սխաղշիկ, Այնալի (Դավթաշեն) և այլ գյուղերում, որոնց մի մասը քրդաբնակ էր։ Մարտունու շրջանում փետրվար ամսվա ընթացքում կոլտնտեսություն ընդունվեցին 1700 մենատնտեսներ, հանրային սեփականություն դարձնելով 814 եզ, 127 գութան, 395 սայլ, ղդալի քանակությամբ սերմացու։ Ջոլաքար, Ալուշալու (Անդվա-

նիստ), Վաղաշեն, Վերին Ագյաման (Վերին Գետաշեն) և այլ գյուղերում համատարած կոլեկտիվացումը մոտ էր իր ավարտին։

Միայն գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը քննարկելու առաջին մեկ ամսում Հայաստանում կոլտնտեսությունների մեջ ընդգրկվեցին 2500 նոր տնտեսություններ[50], իսկ մինչև ապրիլի 1-ը դրանց թիվը հասավ մոտ 21 հազարի[51]։ Ի տարբերություն նախորդ տարիների, 1935 թ. կոլտնտեսային շարժումը վերելք էր ապրում ամբողջ տարվա ընթացքում՝ և գարնանացանի կամպանիայի նախապատրաստման ու անցկացման, և ցանքերը մշակելու ու բերքը հավաքելու, և առավել ևս կոլտնտեսային բերքը բաշխելու ժամանակ։

1935 թ. օգոստոսին Վեդու շրջանից (Արարատ) հայտնում էին, որ գյուղերը մեկյանց ետևից դառնում են համատարած։ Երկու օրվա ընթացքում Զանգիբասարում (Սովետաշեն) կոլտնտեսության անդամ էին դարձել 44, Հորթունում՝ 27, Ջաֆարլիում՝ 17 տնտեսություն։ Մասսայաբար դիմումներ էին ստացվում շրջանի լեռնային ազգաբնակչական գյուղերում՝ Դարբասում, Դաղրլուում (Լանջանիստ), Զովաշենում (Ուրցալանջ), Բիրուլիում (Լանջառ), իսկ Ղաշդայում (Վարդաշատ) բոլոր աշխատավորներն արդեն կոլտնտեսության մեջ էին։ Երևին գյուղը՝ առաջինը Միկոյանի շրջանում (Եղեգնաձոր) հիմնականում ավարտել էր կոլեկտիվացումը։ Դիլիջանի շրջանի Ջարխեջ (Կույբիշև) գյուղում 500 տնտեսություններից 450-ը միասին մշակում էին կոլտնտեսային ցանքը և այգիները[52]։ Կոտայքի շրջանի գյուղերում աճեցվել էր լավ բերք, որը շրջանի բազմաթիվ գյուղերում առաջ բերեց կոլեկտիվացման վերելք, կարգում Լնք Թերթում։ Քսան օրվա ընթացքում դիմում էին ներկայացրել Գյանիում (Գառնի)՝ 170, Արզնիում՝ 80, Ասինջում՝ 25, Գեղադիրում՝ 56 մենատնտեսներ։ Ամբողջ շրջանում դիմումների թիվը հասնում էր 700-ի[53]։

Կոլեկտիվացման բարձր տեմպերի շնորհիվ 1935 թ. հանրապետության շրջանների մեծ մասը իրագործեց համատարած կոլեկտիվացման ծրագիրը։ Ինչպես նշել ենք, այդ բնագավառում առաջնությունը պատկանում էր Ղազրդեղովի շրջանին (Հոկտեմբերյան), որը այդ խնդիրը կատարել էր դեռևս 1931 թ.։ 1932 թ. նրան հաջորդեց Մեղրին, 1934 թ.՝ Գորիսի, Ղամարլուի և Ղափանի շրջանները։ 1935 թ. հոկտեմբերի 1-ի

---

50 Տե՛ս նույն անդամ, ց. 23, գ. 249, թ. 72—77։

51 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1935 թ. մայիսի 24։

52 Տե՛ս «Կոլխոզնիկ», 1935 թ. օգոստոսի 22։

53 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. սեպտեմբերի 11։

ավյալներով համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտել էին հանրապետության 28 շրջաններից 23-ը։ Ընդ որում միայն 1935 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսների բերքահավաքի և բերքի բաշխման ժամանակաշրջանում կոլեկտիվացման մակարդակը բարձրացավ 16,5 տոկոսով՝ 60-ից հասնելով 76,5 տոկոսի, իսկ համատարած կոլեկտիվացման շրջանների թիվը 9-ից հասավ 23-ի։ Մնացած հինգ շրջաններում (Ամասիա, Ապարան, Աշտարակ, Դիլիջան, Բասարգեչար) կոլեկտիվացումը կազմում էր 60—65 տոկոս[54]։ Նրանք համատարած կոլեկտիվացման խնդիրը լուծեցին 1936—1937 թթ.։

Հայաստանի գյուղատնտեսության կոլեկտիվացման ընթացքի համար վճռական էր Համ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. հուլիսյան խորհրդակցությանը հաջորդած ժամանակաշրջանը։ Մինչև 1935 թ. հոկտեմբերի 1-ը կամ մեկ տարի երկու ամսվա ընթացքում կոլտնտեսությունների մեջ ընդգրկվեց այնքան աշխատավորական գյուղացիական տնտեսություն, որքան ընդունվել էր կոլեկտիվացման ամբողջ նախընթաց ժամանակաշրջանում՝ 1928—1934 թթ., 6,5 տարում։ 1934 թ. հուլիսի 1-ին Հայաստանի կոլտնտեսություններում ընդգրկված էին մոտ 72 հազար տնտեսություններ, իսկ 1935 թ. հոկտեմբերի 1-ին՝ 141 հազար։ Կոլեկտիվացման մակարդակը 42,7-ից բարձրացավ 76,5 տոկոսի։ Կոլտնտեսություններ էին կազմակերպվել հանրապետության գրեթե բոլոր գյուղերում (ընդամենը 1046 կոլտնտեսություն՝ 1935 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ)[55]։ 1936 թ. կոլտնտեսություններն ապահովում էին հանրապետության բոլոր ցանքատարածությունների 85,6 տոկոսը[56]։ Այս տվյալները վկայում են, որ 1935—1936 թթ. Հայաստանում հիմնականում լուծվել էր համատարած կոլեկտիվացման խնդիրը։ Բոլոր գյուղացիական տնտեսությունների ավելի քան երեք քառորդը ընդգրկված էին կոլտնտեսությունների մեջ, որոնք մշակում էին բոլոր ցանքատարածությունների հինգ վեցերորդ մասը։

1935 թ. հոբելյանական տարի էր Սովետական Հայաստանի համար։ Նոյեմբերի 29-ին լրացավ Հայաստանում սովետական իշխանության հաստատման 15 տարին։ Այն արտադրական և քաղաքական բարձր նվաճումներով դիմավորեցին քաղաքի և գյուղի բոլոր աշխա-

---

54 Տե՛ս «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1935, էջ 128—129։

55 Տե՛ս ՄԼԻ ՀՍԱ, ֆ. 1, ց. 25, գ. 278, թ. 42։

56 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940)», Ереван, 1940, стр. 42.

տավորները՝ բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը։

1935 թ. նոյեմբերի 29-ին կայացավ ՀՍԽՀ Կենտգործկոմի հոբելյանական նստաշրջանը, որտեղ Սովետական Հայաստանի անցած 15-ամյա փառավոր ուղու, սոցիալիզմի կառուցման հաղթանակների մասին զեկուցումով հանդես եկավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը։ Տոնահանդեսներին մասնակցում էր ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը։ Հանդիսավոր նիստի մասնակից, Ալավերդու շրջանի Արդվի գյուղի կոլտնտեսության ոչխարաբուծական ֆերմայի վարիչ Աբմենակ Վարդանյանը գրել է. «Մեր գյուղը կնյազի գյուղ էր, իսկ մեր կնյազը մեզ նույնիսկ բարևի էլ չէր արժանացնում։ Մինչև այսօր մեր խորհրդային կառավարության պետը, ընկեր Կալինինը եկել է շնորհավորելու մեր տոնը և օպերայի շենքում մեզ մոտիկ նստած քաղցր ժպիտով ժպտում է մեզ... Այսքանն էլ բավական է, որ ամենքն իմանան, թե ինչ է խորհրդային իշխանությունը մեզ համար»[57]։

Ի հավերժացումն Սովետական Հայաստանի 15-րդ տարեդարձի, և հաշվի առնելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, կոլտնտեսային կարգերի ամրապնդման և սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման գործում ցուցաբերած աչքի ընկնող ծառայությունների ու հարվածային աշխատանքը, ՀՍԽՀ Կենտգործկոմը գյուղատնտեսության մի մեծ խումբ աշխատողների արժանացրեց պարգևատրության։ Աշխատանքի հերոսի փոչման արժանացան տասմարդ՝ կոլտնտեսությունների նախագահներ Սերգո Վարդանյանը (Աշտարակ, 25-հաղարական), Ալի Խոջաևը (Գյոլբենդ), Ոսկան Մանուկյանը (Ներքին Գյոզալդարա, այժմ Վարդենիկ), Վարվառա Հակոբյանը (Արալբեխ՝ Վերին Քյոլանլու), Անաստասիա Դիմիտրիևան (Կալինինո), Բամբակաշատի կոլտնտեսության կուսկոմիտեի քարտուղար Արտավազդ Եղիազարյանը, կոմբայնավար Գուրգեն Մարջանյանը (Լենինականի ՄՏԿ), Ադյամանի կոլտնտեսության հովիվ Սրապիոն Գրիգորյանը, Փարաքարի կոլտնտեսության Ամալյա Հովհաննիսյանը և գյուղատնտես Ռուբեն Աբրահամյանը։ 90 մարդ արժանացան ՀՍԽՀ Կենտգործկոմի պատվոգրին, իսկ 32-ը՝ շնորհակալության[58]։

1935 թ. դեկտեմբերի 30-ին Սովետական Միության պետական և կուսակցական ղեկավարությունը Հայաստանի տոնակատարության առթիվ ընդունեց հանրապետության 25 մարդուց բաղկացած պատվիրա-

57 «Խորհրդային Հայաստան», 1935 թ. դեկտեմբերի 2։

58 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. նոյեմբերի 28։

կությանը, որը նրան հանձնեց Սովետական Հայաստանի նվաճումների մասին պատմող նամակ։ Այն ստորագրել էին 150 հազար հարվածային բանվորներ, կոլտնտեսականներ, գիտության ու արվեստի գործիչներ[59]։ Պատվիրակության մեջ էին կոլտնտեսային գյուղի անվանի մարդիկ, որոնք մյուսների հետ միասին պարգևատրվեցին Սովետական Միության շքանշաններով։ Բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի արժանացան Ստեփանավանի կոլտնտեսության նախագահ Մացակ Պապյանը և Վաղարշապատի շրջանի Արշալույս գյուղի կոլտնտեսության օղակավար Բանկագին Մովսիսյանը։ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան ստացան Ն. Սարգսյանը (Ղամարլուի շրջանի Յուվա (Շահումյան) գյուղի կոլտնտեսության նախագահ), Վ. Հակոբյանը (Լենինականի շրջանի Արալբիս (Երազգավորս) գյուղի կոլտնտեսության նախագահ) և Ե. Հակոբյանը (Հոկտեմբերյանի ՄՏԿ-ի դիրեկտոր), իսկ պատվո նշան շքանշան ստացան Ս. Տոնոյանը (Լենինականի ՄՏԿ-ի բրիգադավար), Ա. Առաքելյանը (Սիսիանի ՄՏԿ-ի կալսիչավար), Ա. Խալիլովը (Բասարգեչարի շրջան, կոլտնտեսության նախագահ), Կ. Դարբինյանը (Արթիկի ՄՏԿ-ի տրակտորիստ) և Վ. Անանյանը (կոլտնտեսային թերթի խմբագիր)[60]։

1934—1935 թթ. ծավալված կոլտնտեսային շարժումը, որը հանգեցրեց համատարած կոլեկտիվացման հաղթանակին, բարձր տեմպերով շարունակվեց նաև երկրորդ հնգամյակի վերջին երկու տարիներին։ 1936 թ. ունենք մեծ մակընթացություն դեպի կոլտնտեսությունները, ասված է հանրապետության հողժողկոմատի վավերագրերից մեկում։ Ժողկոմատի տվյալներով ինը ամսվա ընթացքում (հունվար-սեպտեմբեր) կոլտնտեսությունների մեջ ընդունվել էր 18 հազար տնտեսություն, որից 11 հազարը՝ միայն երրորդ եռամսյակում։ 1936 թ. հոկտեմբերի 1-ին Հայաստանի 1070 կոլտնտեսություններում ընդգրկված էր 160 հազար տնտեսություն[61]։ 1937 թ. հուլիսի 1-ի տվյալներով կոլեկտիվացման մակարդակը ըստ տնտեսությունների կազմում էր 88,7, իսկ ըստ ցանքատարածության՝ 92,6 տոկոս[62]։

Կոլեկտիվացումը վերջը դրեց նաև ազգային փոքրամասնությունների շրջանում, եթե 30-ական թվականների առաջին տարիներին այն արագ էր ընթանում ադրբեջանական և ռուսական գյուղերում, ապա

59 Տե՛ս նույն տեղում։

60 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1936 թ. հունվարի 7։

61 Տե՛ս ՀՍՍՀ ՀԱՄՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 4, գ. 13433, թ. 14—17։

62 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», стр. 42.

այժմ սկսեց ընդգրկել նաև քուրդ գյուղացիությանը։ Վերջիններիս համար ստեղծվել էին լրացուցիչ նպաստավոր պայմաններ։ 1934 թ. գյուղատնտեսական հարկի օրենքով հարկից լրիվ ազատվում էին «քոչվորական և կիսաքոչվորական տնտեսություններից կազմված կոլտնտեսությունները՝ այն դեպքում, երբ նրանք նստակյաց կյանքի են անցնում»[63]։ Թալինի շրջանում, որտեղ բնակվում է քուրդ բնակչության զգալի մասը, առաջին կոլտնտեսությունը ստեղծվել էր 1934 թ., Հակկո գյուղում։ Մյուս գյուղերում կոլտնտեսությունները կազմակերպվեցին 1936—1937 թթ., կոլեկտիվացման 70 տոկոս մակարդակով[64], և մասամբ՝ հետագա տարիներին։

Այսպիսով, Հայաստանում հաջողությամբ կատարվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումն ավարտելու մասին երկրորդ հնգամյակի առաջադրանքը։ Եթե հնգամյակի նախօրյակին (1932 թ.) հանրապետության գյուղատնտեսության կոլեկտիվացման մակարդակը զգալի չափով ետ էր մնում Սովետական Միության միջին մակարդակից (համապատասխանաբար 37,9 և 61, 5 տոկոս), ապա հնգամյակի վերջին տարում այդ մակարդակները գրեթե հավասարվեցին (88,7 և 93,0 տոկոս)[65]։ Դա տեղի ունեցավ հնգամյակի տարիներին Հայաստանում կոլեկտիվացման բարձր տեմպեր ապահովելու շնորհիվ։

3. ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ՝ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ

Հայաստանի գյուղում սոցիալիստական մրցումը և հարվածայնությունը տարածվեց կոլեկտիվացման հենց սկզբից և ավելի խորացավ ու տնտեսական-քաղաքական մեծ նշանակություն ստացավ երկրորդ հնգամյակի տարիներին, երբ կոլտնտեսային շարժումը ընդունեց լայն թափ և վերածվեց համատարած կոլեկտիվացման՝ 30-ական թվականների կեսերին։

1933 թ. փետրվարին տեղի ունեցած հարվածային կոլտնտեսականների համամիութենական I համագումարը բոլոր կոլտնտեսա-

---

63 «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1934, № 6, հոդ. 67։

64 Տե՛ս ՄԼԻ ՀՍՍ, գ. 1, ց. 26, գ. 356, թ. 4—17։

65 Տե՛ս «Народное хозяйство СССР. 1922—1972 гг.», Юбилейный статистический ежегодник, М., 1972, стр. 215.

կանանցերին և աշխատավոր գյուղացիներին կոչ արեց արտադրական խանդավառության նոր վերելքով ու սոցմրցության ծավալումով ձեռնամուխ լինել երկրորդ հնգամյա պլանի կատարմանը[66]: Կոչը ջերմ առձագանք գտավ նաև Հայաստանի գյուղացիության մեջ: Ստեփանավանի հարվածային կոլտնտեսականների հավաքը շրջանի կոլտնտեսականների անունից պարտավորվեց պատվով կատարել հարվածայինների համամիութենական համագումարի և երկրորդ հնգամյա պլանի առաջադրանքները: Ախտալայի շրջանի հարվածային կոլտնտեսականների հավաքը որոշեց մտնել համամիութենական սոցիալիստական մրցության մեջ և մրցման հրավիրել Արթիկի շրջանի կոլտնտեսականներին: Համամիութենական համագումարի պատգամավոր Վասիլի Լուկինովը (Ստեփանավանի շրջանի Վորոնցովկայի (Կալինինո) կոլտնտեսության բրիգադավար) նամակով դիմեց նույն համագումարի պատգամավոր Սուլեյման Սուլեյմանովին (Ղամարլուի շրջանի Ներքին Նեջրլուի կոլտնտեսության անդամ, բրիգադի կուսակազմակերպիչ) հարվածային աշխատանքով պատասխանել հարվածայինների համագումարի դիմումին: Իսկ նույն համագումարի պատգամավոր Սուքիաս Կարապետյանը մինչև 1933 թ. սեպտեմբերը վաստակեց 329 աշխոր, նախորդ ամբողջ տարվա 300 աշխորի դիմաց: Կոմերիտականների հանրապետական խորհրդակցությունը ևս կոչով դիմեց հանրապետության բոլոր կոմերիտականներին, երիտասարդ կոլտնտեսականներին, դաշտավարներին, տրակտորիստներին, ագրոնոմներին և սոցիալիստական հողագործության բոլոր մասնագետներին:

Մեծ նշանակություն տալով մրցմանը, «Պրավդա» թերթը նշում էր, որ այն պետք է դարձնել գյուղի միլիոնավոր մասսաների գործը[67]: Համ(բ)Կ Անդրերկրամը և Անդրժողկոմխորհը պարգևներ սահմանեցին արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավորների համար: Հանրապետության Ժողկոմխորհը պարգևատրման ֆոնդ առանձնացրեց բամբակագործական շրջանների լավագույն տրակտորիստների և առաջավոր բամբակագործների համար:

1933 թ. մարտին Անդրկովկասի հանրապետությունների կոլտնտեսականների պատգամավորությունը, որի կազմում էր նաև Ստեփանավանի կոլտնտեսության վարչության նախագահ Մացակ Պապյա-

---

66 Տե՛ս «Материалы 1-го Всесоюзного съезда колхозников-ударников», М., 1933, стр. 160.

67 Տե՛ս «Правда», 19 июля 1933 г.

նը, եղավ Միջին-Վոլգյան երկրամասի Բեղենչուկի ՄՏԿ-ի կողմից սպասարկվող կոլտնտեսություններում՝ նրանց առաջավոր փորձը ուսումնասիրելու համար։ Բեղենչուկցիների պատասխան այցը Անդրբկովկաս տեղի ունեցավ նույն թվականի հունիսին։ Պատգամավորները եղան նաև Հայաստանի կոլտնտեսություններում (Սամադար, Արբաթ, Փարաքար, Ղշլաղ, Համամլու, Ստեփանավան, Վորոնցովկա)։ Ինչպես նաև Լոռու անասնաբուծական սովխոզում և ծանոթացան նրանց նվաճումներին ու փորձին։ Պատգամավորության ընդունելության ժամանակ հողժողկոմ Ա. Անանյանը հայտարարեց, որ, հետևելով բեղենչուկցիներին, Ստեփանավանի, Ղարաքիլիսայի և այլ շրջաններ ձեռք են բերել զգալի նվաճումներ։

Երկրորդ հնգամյակի առաջին տարին լավ արդյունքներով փակեցին հանրապետության ՄՏԿ-ների աշխատողները։ ՄՏԿ-ների գծով բոլոր արտադրական ցուցանիշները ժամկետից շուտ կատարելու և գերակատարելու, ինչպես նաև բամբակի հումքի հանձնման պլանը ժամկետից շուտ ավարտելու համար միութենական հողժողկոմատը պարգևատրեց հանրապետության մի խումբ առաջավոր մեխանիզատորների։ Բամբակի բերքահավաքի և հումքի հանձնման առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար պարգևատրվեցին Ազատաշենի, Գյոյգմբեթի (Գեղանիստ), Արբաթի (Վաղարշապատի շրջան) և այլ կոլտնտեսություններ, ինչպես նաև մի խումբ բրիգադավարներ Վաղարշապատի, Ղուրդուղուլիի, Վեդու և Ղամարլուի շրջաններից։ Վաղարշապատի շրջանը իր պլանները հաջողությամբ էր կատարել նաև գյուղատնտեսության մյուս բնագավառներում (խաղողի մթերում, նոր այգիների հիմնում, շերամապահություն, հացամթերումներ և այլն), որի համար նվաճեց ՀՍԽՀ Կենտգործկոմի փոխանցիկ դրոշը։ Միայնակ հետ մրցող Վաղարշապատի, Ղամարլուի, Ղուրդուղուլիի և Վեդու բամբակագործական շրջանները, ելնելով դրական արդյունքներից, որոշեցին մրցությունը շարունակել նաև 1934 թ.։

Ավելի վաղ (1931 թ.) հանրապետության Կենտգործկոմի նախագահության որոշումով Ուլուխանլուի (Մասիս) ՄՏԿ-ի տրակտորիստ Սահակ Խանդելդյանը պարգևատրվել էր «ՀՍԽՀ աշխատանքի դրոշի» շքանշանով։ Նա Ղամարլուի շրջանի ճանաչված բամբակագործներից էր։

1933—1934 թթ. հացահատիկային մշակույթների լավ բերք աճեցնելու և պետական մթերումները կատարելու համար տասնյակ կոլտնտեսություններ, առանձին բրիգադավարներ ու տրակտորիստներ բարձրացվեցին հանրապետական և ՀամԿ(բ)Կ XVII համագումարի անվան

«Կարմիր տախտակ»-ների, որոնք սահմանվել էին «Խորհրդային Հայաստան» թերթում։ Սահմանվել էին նաև անդրկովկասյան («Զարյա Վոստոկա») և համամիութենական («Պրավդա») «Կարմիր տախտակ»-ներ, որոնցում առաջադրվում էին գյուղատնտեսության զարգացման բնագավառում առավել աչքի ընկնող շրջանները, կոլտնտեսությունները, ՄՏԿ-ները և գյուղսովետները։

1934 թ. գյուղատնտեսության աշխատողների սոցիալիստական մրցություն ծավալվեց Ազով-Սևծովյան երկրամասի Միլոստ-Կուրագինի ՄՏԿ-ի կողմից սպասարկվող կոլտնտեսությունների բրիգադների կոչով։ Քննելով այն, ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց լավագույն կոլտնտեսային ու տրակտորային բրիգադների և բրիգադավարների հանրապետական մրցություն կազմակերպելու մասին[68] Համ Կ(բ)Կ Անդրերկրամը և Անդրկովկասի հողժողկոմատի ՄՏԿ-ների քաղսեկտորը 1934 թ. համար սահմանեցին «Անդրկովկասի կոլտնտեսությունների անվանի մարդկանց կարմիր գիրք»՝ առաջավորների փորձը ամփոփելու համար[69]։

Հանրապետարի բերելով Միլոստ-Կուրագինի շրջանի հետ սոցմրցման նախնական արդյունքները, Անդրհողժողկոմատի ՄՏԿ-ների քաղսեկտորն արձանագրեց, որ այդ մրցությունը «երևան հանեց և առաջ քաշեց կոլտնտեսություններում մարդկանց նոր տիպ՝ հարվածային կոլտնտեսականներ ու կոլտնտեսուհիներ, սոցիալիստական գյուղի իդեոլոգներ»[70]։ Այդ նոր տիպի մարդկանցից էր Արտաշես Ազատյանը։ Նախկին բատրակը կարմիր բանակի շարքերում ակտիվորեն մասնակցել էր սովետական իշխանության հաստատման և նրա պաշտպանության պայքարին։ Լենինականի շրջանի Փոքր Ղարաքիլիսա (Ազատան) գյուղի կոլտնտեսության հիմնադիրներից էր։ Շուտով շարքային կոլտնտեսականին վստահվեց բրիգադի ղեկավարումը։ Լավագույն աշխատանքի համար արժանացել էր միութենական հողժողկոմատի պարգևին, իսկ 1934 թ. նրա անունը գրանցվեց Անդրկովկասյան «Կարմիր գրքում»։

Քննելով Սարգարապատի ՄՏԿ-ի 19-րդ տրակտորային բրիգադի առաջարկը, որը միլոստ-կուրագինցիների դիմումը ուսումնասիրելուց հետո մրցման էր հրավիրել հանրապետության մեխանիզատորներին, «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրությունը թերթի էջում բացեց «Լավագույն տրակտորային բրիգադի, բրիգադավարի, տրակտորիստի և

---

68 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1934 թ. ապրիլի 3։

69 Տե՛ս «Заря Востока», 26 мая 1934 г.

70 «Խորհրդային Հայաստան», 1934 թ. հունիսի 20։

մեխանիկի կարմիր տակտակ»։ Այդ կոչի առաջին արձագանքողներից էին Լենինականի ՄՏԿ-ի բրիգադավարները և կոմբայնավարները, որոնք նամակով դիմեցին Միլոսա-Կուրագինի ՄՏԿ-ի կոլեկտիվին և պարտավորվեցին հաջողությամբ անցկացնել բերքահավաքի կամպանիան։ Լենինականի ՄՏԿ-ն կատարելով իր պարտավորությունները, յուրաքանչյուր արտադրության արտադրողականությունը հասցրեց մոտ 350 հեկտարի և տվեց ավելի քան 13 հազար կիլոգրամ նավթի խնայողություն։

Միլոսա-Կուրագինի շրջանի անասնապահների հետ հանրապետությունում առաջիններից մեկը մրցման դուրս եկան Ղարաբիլիսայի շրջանի անասնապահական բրիգադների բրիգադավարները։

1934 թ. մայիսին Անդրհողժողկոմատը ամփոփեց մրցության առաջին արդյունքները՝ դարնանացանի հանրագումարները։ Պարզվեց արժանացան Ղամարլուի ՄՏԿ-ի տրակտորային բրիգադի բրիգադավար Առաքելյանը, Վաղարշապատի շրջանի Արբաթ գյուղի «Համերաշխ» կոլտնտեսության բրիգադավար Պայծառ Կիրակոսյանը և ուրիշներ[71]։

Կարդալով այդ մրցության արդյունքների մասին, միջազգային կոմունիստական շարժման ակտիվ գործիչ Գեորգի Դիմիտրովը, որը ֆաշիստական դատավարությունից հետո նոր էր ժամանել Սովետական Միություն, 1934 թ. հուլիսի 15-ին շնորհավորական նամակով դիմեց Անդրկովկասի կոլտնտեսային բրիգադավարներին[72]։

Գեորգի Դիմիտրովի նամակը քաղաքական և արտադրական մեծ ոգևորություն առաջացրեց ամբողջ Անդրկովկասում։ «Ավելի շատ բամբակ կտանք պետությանը»,— որոշեց Վաղարշապատի շրջանի Գյոյգրմբեթի կոլտնտեսականների հավաքը։ «Մենք պայքարում ենք քո օրինակով, քեզ պես»,— գրել են նույն շրջանի Ջաֆարապատի (Արգավանդ) կոլտնտեսության Դիմիտրովի անվան բրիգադի անդամները։ Քննարկելով նամակը, Ներքին Խաթունարխի կոլտնտեսության 12-րդ բրիգադի անդամները նամակով Գ. Դիմիտրովին պատմեցին իրենց հաջողությունների և բրիգադի անդամների կյանքի պայմանների բարելավման մասին. «Մենք կոլտնտեսականներս լարված ուշադրությամբ հետևում էինք գերմանական ֆաշիստների միջոցով Լայպցիգում սարքված դավադրությանը։ Մենք անհուն բերկրանքով էինք լցվում, երբ դու մինչև վերջն ասացիր մեր դասակարգային ճշմարտությունը, և երբ դու քայլ առ քայլ մերկացնում էիր գերմանական ֆաշիստների մերենայությունները»[73]։

---

71 Տե՛ս «Заря Востока», 26 мая 1934 г.

72 «Заря Востока», 17 июля 1934 г., տե՛ս նաև «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1934 թ. հուլիսի 20։

73 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1934 թ. հուլիսի 24։

Միջազգային կոմունիստական շարժման ակտիվ գործչի հետ Հայաստանի կոլտնտեսականների կապերը շարունակվեցին նաև հետագայում։ 1935 թ. հունվարին Գ. Դիմիտրովի մոտ եղան Լենինականի շրջանի Փոքր Ղարաքիլիսայի կոլտնտեսության ներկայացուցիչները, որոնք նրան հանձնեցին իրենց կոլեկտիվի նամակը։ Պատասխան նամակը հրապարակվեց մամուլում։ «Ես շատ ուրախ եմ,— գրել է Գ. Դիմիտրովը,— որ դուք համերաշխ, կազմակերպված և բարեխիղճ աշխատանքով կարողացել եք հասնել այդպիսի խոշոր հաղթանակների և որ Դիմիտրովի անունը կրող չորրորդ բրիգադը պարգևատրվել է ԽՍՀՄ հողժողկոմատի քաղվարչության կողմից»։ Նոր հաջողությունները մաղթելով կոլտնտեսության բոլոր անդամներին, նա խնդրում էր իր անունով դուրս գրված աշխատանքները տրամադրել ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարող մարտիկների օգնության ուժեղացման, Գերմանիայի կոմունիստական կուսակցության առաջնորդ Էռնստ Թելմանի ազատագրման ֆոնդին[74]։

1934 թ. նոյեմբերին Անդրկովկասի հարվածային կոլտնտեսականների պատգամավորությունը, որի կազմում էին Հայաստանից Զավեն Քոչարյանը (Ղարաքիլիսայի շրջանի Համզաշիմանի կոլտնտեսության ֆերմայի վարիչ), Ադրբեջանից՝ անվանի կոլտնտեսուհի Բաստի Բաղիրովան և ուրիշներ, այցելեց Միլոստ-Կուրագինի շրջան, նրա փորձին ծանոթանալու համար։ Ազով-Սևծովյան երկրամասի քարտուղար Բ. Պ. Շերոլդաևի հրավերով պատգամավորությունը Ռոստովում մասնակցեց առաջավոր բրիգադավարների երկրամասային հավաքին։ Հավաքի մասնակիցներին ողջունեց Զ. Քոչարյանը[75]։ Նա թերթում հանդես եկավ հոդվածով, որտեղ պատմում էր կուրագինցիների առաջավոր փորձի մասին[76]։

Սոցիալիստական մրցությունն առաջ քաշեց մեծ թվով անասնապահ կոլտնտեսականների, որոնք ոչինչ չէին խնայում հանրային հոտը բազմացնելու, կորուստների դեմ պայքարելու և անասնաբուծական մթերքների արտադրությունը ավելացնելու համար։ 1934 թ. որոշ սահմանային շրջան էր Հայաստանի անասնապահության համար։ Դադարից անասունների գլխաքանակի անկումը, որն սկսվել էր 1930 թ. և սկսվեց անասունների գլխաքանակի կայուն վերելք բոլոր սեկտորներում։

74 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. հունվարի 29։

75 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1934 թ. նոյեմբերի 15։

76 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1935 թ. հունվարի 3։

1933 թ. սեպտեմբերից միմյանց հետ մրցում էին Ղարաբիլիսայի, Դիլիջանի (Հայաստան) և Ղազախի (Ադրբեջան) շրջանները։ 1934 թ. մարտին ստուգելով միջշրջանային մրցության պայմանագրի կատարման ընթացքը, հիշյալ շրջանների ներկայացուցիչները նշեցին «անասնապահության զարգացման գործում ձեռք բերած զգալի հաջողությունները» և որոշեցին մրցումը շարունակել մինչև 1935 թ. վերջը, ստանձնելով նոր պարտավորություններ։ Հաշվի առնելով 1933—1934 թթ. մրցության դրական փորձը, 1935 թ. անասնապահությունը զարգացնելու դծով սոցմրցման պայմանագիր ստորագրեցին Անդրկովկասի երեք հանրապետությունների՝ Բորժոմի, Ղազախի, Թովուզի, Աղբուլաղի, Կիրովականի, Ախտալայի, Իջևանի, Դիլիջանի և Ալավերդու շրջանները։ Ստեփանավանում միջշրջանային սոցմրցման պայմանագիր էին ստորագրել նաև Ամասիայի, Ստեփանավանի (Հայաստան), Բոգդանովկայի, Բաշկիչեթիի, Բորչալուի, Կարանասի և Գուրջանիի (Ադրբեջան) շրջանները։

Սոցիալիստական մրցության ծավալման շնորհիվ 1934 թ. հանրապետության բազմաթիվ շրջաններ, կոլտնտեսություններ, կոլտնտեսականներ ու մեքենատրակտորային կայանների աշխատողներ հասան արտադրական բարձր ցուցանիշների։ Հատկապես աչքի ընկնող նվաճումներ ունեին Ղուրդուղուլիի բամբակագործական և Նոր Բայազետի ու Թալինի անասնապահական շրջանները, որոնք արժանացան Անդրժողկոմխորհի պարգևներին։

Նոր Բայազետի շրջանի կոլտնտեսություններում մեկ տարվա ընթացքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացել էր 39, իսկ մանր եղջերավոր անասուններինը՝ 51 տոկոսով։ Իրենց նվաճումներով ոգևորված, շրջանի կոլտնտեսությունները 1935 թ. ստանձնեցին նոր պարտավորություններ և նամակով դիմեցին հանրապետության բոլոր կոլտնտեսային ֆերմաներին և անասնապահ կոլտնտեսականներին[77]։

1935 թ. դարձավ նշանավոր տարեթիվ սոցիալիստական մրցության պատմության մեջ։ Հանդես եկավ մրցության նոր ձևը՝ ստախանովյան շարժումը։ Դրա նախաձեռնող Ալեքսեյ Ստախանովի օրինակին հետևեցին նաև սոցիալիստական գյուղատնտեսության նորարարները։ Գյուղատնտեսության մեջ ստախանովյան շարժման նախաձեռնողներն էին ճակնդեղագործ Մ. Դեմշենկոն, տրակտորիստներ Ն. Շեստոպալովը, Պ. Անգելինան և ուրիշներ։ Ստախանովյան շարժման ծնունդը սոցիա-

77 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1935 թ. մարտի 4։

լիստական ինդուստրացման և ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման հաջողությունների, աշխատավորների կուլտուրատեխնիկական մակարդակի բարձրացման անմիջական արդյունքն էր։

Նորաբարական շարժման զարգացումը և ստախանովյան շարժումը լայն արձագանք գտան նաև Հայաստանի գյուղատնտեսության աշխատողների մեջ։ 1935 թ. առաջին ամիսներին սոցմրցումը ծավալվեց Հայաստանում սովետական իշխանության հաստատման 15-րդ տարեդարձը արժանավայել նվաճումներով դիմավորելու նշանաբանով։ Հանրապետության բոլոր կոլտնտեսականներին ու կոլտնտեսուհիներին ուղղված կոչով հանդես եկան հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարի Հայաստանի պատվիրակները[73]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը հավանություն տվեց Սովետական Հայաստանի 15-րդ տարեդարձի անվան արտադրական արշավ կազմակերպելու հարվածային կոլտնտեսականների նախաձեռնությանը[74]։

Սոցիալիստական մրցության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ հարվածային կոլտնտեսականների համամիութենական համագումարը և գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության ընդունումը։ Համագումարի պատգամավոր, տրակտորիստ Նիկիֆոր Շեստոպալովը և սոցիալիստական գյուղատնտեսության ուրիշ նորաբարներ գյուղատնտեսության բոլոր աշխատողներին կոչ արեցին հետևելու իրենց օրինակին։ Այդ կոչերն ամենուրեք լայն արձագանք գտան։

«Տրակտորիստ Շեստոպալովը կոչ արեց բոլոր տրակտորիստներին այս տարի բարձրացնել տրակտորների արտադրողականությունը, ավելի որակով կատարել վարը, խնայել վառելանյութը։ Իմ բրիգադի կողմից խոսք եմ տալիս աշխատանքի փայլուն ցուցանիշներով պատասխանել Շեստոպալովի մարտական կոչին և մրցման եմ հրավիրում Հայաստանի բոլոր տրակտորիստներին»[80], կոչ արեց Ներքին Ախտայի ՄՏԿ-ի տրակտորային բրիգադի բրիգադավար Համո Մանուկյանը, որը տաս տարի ի վեր տրակտորիստ էր և նույն ՄՏԿ-ում աշխատում էր 1931 թ.՝ նրա կազմակերպման օրվանից։ Շուտով կոչն ընդգրկեց հանրապետության բոլոր մեքենատրակտորային կայանները։

1935 թ. հունիսի 25—26-ին հարվածային տրակտորիստների հանրապետական հավաքը ամփոփեց դարնանացանի և շեստոպալովյան

---

78 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. ապրիլի 1։

79 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 23, գ. 11, թ. 260։

80 «Խորհրդային Հայաստան», 1935 թ. փետրվարի 26։

մրցության արդյունքները։ Դարնանավարի ընթացքում մեկ տրակտորի միջին արտադրողականությունը կազմել էր 149 հեկտար, նախորդ տարվա 123-ի փոխարեն։ Ապահովելով վարի համապատասխան խորությունը, միաժամանակ տնտեսվել էր 5000 փութ վառելանյութ, այն դեպքում, երբ նախորդ տարում թույլ էր տրվել դերածախս[81]։ Հավաքը դիմեց հանրապետության բոլոր տրակտորիստներին, կոմբայնավարներին և մեքենավարներին՝ նախապատրաստվել բերքահավաքին, պատվով դիմավորելու Սովետական Հայաստանի 15-րդ տարեդարձը։ «Կոմբայնի, տրակտորի, կալսիչի լավ աշխատանքը,— ասված է դիմումում,— նպաստում է կոլտնտեսային կարգի հետագա ամրացմանը, կոլտնտեսությունները բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին ունևոր դարձնելու գործին։ Դրա հետ միասին փոխվում է նաև մեր գյուղի դեմքը։ Կուլտուրան մուտք է գործում առաջավոր կոլտնտեսականի կենցաղի մեջ։ Եվ տրակտորիստների, կոմբայնավարների, մեքենավարների ու մյուսների խնդիրն է պայքարել այդ կուլտուրան գյուղ մտցնելու համար։ Ուրեմն պայքարեցեք հանուն կուլտուրայի, հանուն կոլտնտեսային երջանիկ ու դեղեցիկ կյանքի»[82]։

Բերքահավաքը հաջողությամբ անցկացնելու պարտավորությամբ հանդես եկան Լենինականի ՄՏԿ-ի կոմբայնավարները, որոնք առաջ քաշեցին «Լայն ճանապարհ կոմբայնին» լոզունգը։ Կոմբայնավար-նորարար Գուրգեն Մարջանյանը սահմանեց ռեկորդ՝ 34 օրում հնձելով 516 հեկտար, որի համար ԽՍՀՄ Կենտգործկոմի որոշումով պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Բերքահավաքի արդյունքներն ամփոփեց կոմբայնավարների հանրապետական հավաքը, որտեղ նշվեց նաև այն մասին, որ հաջողությամբ հաղթահարվել է կոմբայնի օգտագործման նպատակահարմարության մասին առանձին տեղերում դրսևորված սխալ մտայնությունը։ Առաջավոր կոմբայնավարներից էին Արամ Մանուկյանը, Աղասի Պողոսյանը, Ռուբեն Հարությունյանը, հանրապետության առաջին կին տրակտորիստ Հայաստան Բաբայանը և ուրիշներ։

1935 թ. հուլիսին հանրապետության մի խումբ տրակտորիստներ այցելեցին Սուրովիկինի մեքենա-տրակտորային կայան (Ստալինգրադի երկրամաս) և ծանոթացան Ն. Շեստոպալովի ու նրա ընկերների աշ-

---

81 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. հունիսի 28։

82 Նույն տեղում։

խստանքային փորձին։ Պատգամավորները եղան նաև Ստալինգրադի տրակտորային և Ռոստովի գյուղատնտեսական մեքենաների գործարաններում։ Իրենց հարուստ տպավորությունները նրանք պատմեցին Հայաստանի կոլտնտեսականներին[83]։

Սովետական Հայաստանի 15-րդ տարեդարձի առթիվ ծավալված սոցմրցության շնորհիվ մեծ նվաճումների հասան գյուղատնտեսության բոլոր ճյուղերի աշխատողները։ 1935 թ. հանրապետության կոլտնտեսականները աճեցրին խաղողի, բամբակի, հացահատիկի և այլ մշակույթների լավ բերք։ Վերելք տեղի ունեցավ նաև անասնապահության մեջ։ Լավ աշխատանքի և բարձր բերքի շնորհիվ բարելավվում էր կոլտնտեսականների նյութական ու կուլտուրական դրությունը, սոցիալիստական նոր ոգուը դառնում էր ունևոր։

«Խորհրդային Հայաստան» թերթի և հողժողկոմատի կողմից հայտարարված դաշտավարական բրիգադների հանրապետական մրցումը տվեց դրական արդյունքներ, որի համար համապատասխան հանձնաժողովի որոշումով պարգևատրվեցին մի խումբ բրիգադավարներ, բրիգադներ, ինչպես նաև շրջանային թերթերի խմբագիրներ։ Նանց զգալի մասը բարձրացվեց հանրապետական «Կարմիր տախտակ»-ին։

Արշալույս գյուղի կոլտնտեսականները ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանին հասցեագրած նամակում հայտնում էին, որ կատարել են գարնանը գյուղում նրան տված խոստումը, առատ բերք աճեցնելու մասին։ Կոլտնտեսությունը ստացել էր բամբակի, խաղողի և հացահատիկի բարձր բերք։ Մեկ տարվա ընթացքում եկամուտը ավելացել էր երեք անգամ և կոլտնտեսությունը դարձել էր միլիոնատեր։ Մեկ աշխատանքի դիմաց տրվում էր 6,5 կիլոգրամ հացահատիկ և 15 ռուբլի դրամ։ Շատ կոլտնտեսականներ կառուցում էին նոր տներ, գնում կահկարասի։

Արտաշատի կոլտնտեսականները նամակով դիմեցին Հայաստանի բոլոր գրողներին, երաժիշտներին, նկարիչներին ու արվեստագետներին, նշելով, որ ունևոր կյանքի հետ միասին, որին իրենք հասել են, հարկավոր են նաև կյանքի կուլտուրական պայմաններ և կոչ էին անում օգնել՝ կեղեցկացնելու իրենց կյանքը, վերաշինելու նոր, սոցիալիստական գյուղը, դաստիարակելու նրա բնակիչներին։ Հայաստանի արվեստի ու գրականության գործիչները շատ բան արեցին սոցիալիստական գյուղի զարգացման և նոր մարդու դաստիարակության համար։

Բարձր բերքի և ունևորության մասին էին պատմում նաև Վեդու

83 Տե՛ս «Коммунист», 2 августа 1935 г.

շրջանի Զանախչի (Սովետաշեն) գյուղի Վորոշիլովի անվան կոլտնտեսության անդամները Կ. Վորոշիլովին ուղղված նամակում[84]։

1935 թ. պետությանը բամբակ հանձնելու պլանը հանրապետությունը կատարեց 114,2 տոկոսով։ Բամբակի միջին բերքատվությունը բարձրացավ 10,2 ցենտների։ ՀՍԽՀ ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի սահմանած հանրապետական փոխանցիկ դրոշը հանձնվեց ամենաբարձր ցուցանիշների հասած Ղամարլուի շրջանին։ Առաջավոր բամբակագործների մի մեծ խումբ և մի շարք կոլտնտեսություններ պարգևատրվեցին դրամով և զանազան նվերներով, որ այդ նպատակի համար հատկացրել էր ԽՍՀՄ ԲԿԲև արդյունաբերության ժողկոմատը։ Բամբակի բարձր բերք աճեցնելու համար համամիութենական մրցանակաբաշխության հանձնաժողովի որոշմամբ Հայաստանի Վաղարշապատի շրջանն արժանացավ երրորդ կարգի մրցանակի (25 հազար ռուբլի)։ Պարգևներ ստացան նաև Երևանի և Հոկտեմբերյանի բամբակապտիչ գործարանները և Վաղարշապատի գնման կայանը։

Հացահատիկային մշակույթների բերքատվության բարձրացման գծով առավել բարձր ցուցանիշների համար հանրապետական փոխանցիկ դրոշի արժանացավ Մարտունու շրջանը, որը երկու-երեք տարի առաջ մեծ դժվարություններ ունեցավ գյուղատնտեսության բնագավառում և խիստ ետ էր մնում։

Շարունակվում էր Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների շրջանների միջև սկսված սոցիալիստական մրցումը անասնաբուծության գծով։ 1935 թ. հունիսին սոցմրցման պայմանագիր ստորագրվեց Անդրկովկասյան ֆեդերացիայի և Հյուսիսային Կովկասի միջև։ Միաժամանակ միմյանց հետ մրցում էին Հայաստանը և Հյուսիսային Օսեթիան։ Մրցության պայմանագիրը ստորագրվեց Երևանում, 1935 թ. հունիսին։ Հյուսիսային Օսեթիայի պատգամավորները եղան նաև Բասարգեչարում ու Մարտունիում և կնքեցին միջշրջանային սոցմրցման պայմանագիր։ Օգոստոսին Հյուսիսային Օսեթիայում եղավ Հայաստանի պատգամավորությունը, որը ծանոթացավ պայմանագրերի կատարման ընթացքին և մասնակցեց ավտոնոմ հանրապետության 15-րդ տարեդարձի տոնակատարություններին։ Զոլաքարի կոլտնտեսության ֆերմայի վարիչ Համբարձում Սահակյանը հանդիպեց իր մրցակից՝ Խոստի գյուղի կոլտնտֆերմայի վարիչ Կալաևի հետ։ Սոցմրցման պայմանագրի կատարման ընթացքը ստուգելու համար դեկտեմբերին

---

84 Տե՛ս «Կոլխոզնիկ», 1935 թ. օգոստոսի 28։

Օրջոնիկիձե մեկնեց Անդրկովկասյան ֆեդերացիայի պատգամավորությունը։ Միութենական հեղժողկոմատի հատուկ ժյուրին ամփոփելով ԱՍՖՍՀ-Հյուսիսային Կովկաս մրցության արդյունքները, նշեց, որ 1935 թ. տվյալների համաձայն առջևից ընթանում է Անդրկովկասյան ֆեդերացիան։

Սոցիալիստական մրցության մեջ լավագույն ցուցանիշների հասնելու համար ՀՍԽՀ Կենտգործկոմը 1935 թ. հունիսին մի խումբ հարվածային անասնապահների պարգևատրեց պատվոգրերով։

Կազմակերպական-տնտեսական և քաղաքական ամրապնդման, արտադրական նվաճումների և պլանները հաջող կատարելու համար Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության 18-րդ տարեդարձի օրը Անդրկենտգործկոմի նախագահության որոշումով «ԱՍՖՍՀ առաջավոր կոլտնտեսությունների պատվո տախտակ»-ին բարձրացվեցին և պատվոգրով պարգևատրվեցին նաև Հայաստանի Ղշլաղ (Ժդանով, Արտաշատ, Փոքր Ղարաքիլիսա (Ազատան). Աստղաձոր, Գեչրլու (Մրգաշատ), Շահնազար, Արշալույս, Ղարաղոյուն (Ավիզլու) և այլ գյուղերի կոլտնտեսությունները։ Նույն որոշումով պատվոգրի արժանացան մի խումբ կոլտնտեսությունների նախագահներ, բրիգադավարներ և շարքային կոլտնտեսականներ։

Պարգևատրվածներից Արտաշատի Սվերդլովի անվան կոլտնտեսությունը, որը կազմակերպվել էր 1928 թ., ընդգրկում էր մոտ 350 տնտեսություն։ Գյուղում մենատնտեսներ գրեթե չկային։ 1935 թ. կոլտնտեսությունն ուներ 210 հեկտար խաղողի այգի, մշակել էր 81 հեկտար բամբակ, 164 հեկտար հացահատիկ։ Մեկ աշխատանքի արժեքն էր՝ 7 կիլոգրամ ցորեն և 16 ռուբլի դրամ (ընդամենը 25 ռուբլի)։ Կառուցվել էր կոլտնտեսային կուլտուրայի ակումբ, ծննդատուն, գյուղը էլեկտրիֆիկացվում և ռադիոֆիկացվում էր, տնկվել էր կուլտուրայի և հանգստի այգի, սկսվել էր գյուղի պլանային վերակառուցումը։ Պատվոգիր էր ստացել նաև Ռնդամալի կոլտնտեսության նախագահ Խաչիկ Զաքարյանը։ Նա ակտիվ կերպով մասնակցել էր քաղաքացիական կռիվներին և պայքարել սովետական իշխանության թշնամիների դեմ։ 1924 թ. ընդունվել էր կոմունիստական կուսակցության մեջ։ Կոլտնտեսության հիմնադիր (1928 թ.) անդամներից էր, իսկ 1933 թ.՝ նրա նախագահը։ Նրա ղեկավարությամբ կոլտնտեսությունն ընդգրկել էր գյուղի բոլոր տնտեսություններին, ամրապնդվել տնտեսապես ու կազմակերպորեն։ Խ. Զաքարյանը ընտրվել էր ՀՍԽՀ Կենտգործկոմի, շրջգործկոմի և կուսշրջկոմի անդամ։ Պարգևատրվածների թվում էին սոցիալիստական նոր գյուղի ակտիվ

կազմակերպիչներ ու ղեկավարներ՝ կոլտնտեսության նախագահներ Լյուդվիգ Սուքիասյանը, Նիկոլայ Ավետիսյանը, Դարեգին Ավագյանը, Վազգեն Մովսիսյանը, կուսակոմիտեների քարտուղարներ Երվանդ Ափինյանը, Վանուշ Հովսեփյանը, Խաչիկ Ղարիբյանը, բրիգադավարներ Գրիգոր Հովհաննիսյանը, Բարդո Արեշատյանը, Սերոբ Սողոյանը, շարքային կոլտնտեսականներ Սիսակ Գրիգորյանը, Վարդուհի Նավասարդյանը, Մաքրուհի Ադամյանը, Անուշ Մուրադյանը, Վերգինե Արտեմյանը, Զավահիր Պետրոսյանը, Ղևոնդ Մարգարյանը և ուրիշներ։

Սոցիալիստական գյուղի առաջավորների ու նորարարների աշխատանքային խանդավառության և ստախանովյան շարժման զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցան նրանց հանդիպումները կուսակցության ու կառավարության ղեկավարների հետ՝ 1935 թ. վերջին և 1936 թ. սկզբին։ Այդ խորհրդակցություններին մասնակցեցին նաև Հայաստանի սոցիալիստական գյուղի անվանի մարդիկ։ Սովետական Միության առաջավոր կոմբայնավարների խորհրդակցությունում ելույթ ունեցավ կոմբայնավար Գուրգեն Մարջանյանը (Լենինականի ՄՏԿ), որը ողջույնի խոսք ասաց Հայաստանի ստախանովական կոլտնտեսականների կողմից։ 1935 թ. հանրապետության դաշտերում աշխատում էր 25 կոմբայն։ Մեկ կոմբայնի արտադրողականությունը կազմում էր 270 հեկտար, պլանով նախատեսված 160-ի փոխարեն։ «Երբ առաջին կոմբայնները Հայաստան հասան,— հայտարարեց նա իր ելույթում,— շատ մասնագետներ գտնում էին, որ Հայաստանի պայմաններում կոմբայնն աշխատել չի կարող և դիմադրում էին մեքենայացված բերքահավաքին»։ Մոսկվայան խորհրդակցության բարձր ամբիոնից նա խոստացավ 1936 թ. աշխատել երկու կոմբայնի վրա և յուրաքանչյուրի արտադրողականությունը հասցնել 700 հեկտարի, միաժամանակ մրցման հրավիրելով եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի կոմբայնավարներին։

Կուսակցության և կառավարության ղեկավարների մյուս հանդիպումը կայացավ հացահատիկային մշակույթների բարձր բերքի վարպետների, տրակտորիստների ու կալսիչավարների հետ։ Հայաստանից մասնակցում էին ստախանովական տրակտորիստներ Գրիգոր Ենոքյանը, Ալեքսան Պողոսյանը, Արշակ Առաքելյանը, Սպիրիդոն Տոնոյանը և ուրիշներ։ Ճառով հանդես եկավ Վաղարշապատի շրջանի Արշալույս գյուղի կոլտնտեսության բրիգադավարուհի, հացահատիկի բարձր բերքի ճանաչված վարպետ Զաբել Բուդաղյանը։ Նախորդ տարվա համեմատու-

թյամբ նրա ղեկավարած բրիգադը աշնանացան ցորենի բերքատվությունը բարձրացրել էր 2,7 անգամ, խաղողինը՝ մեկ երրորդով և բամբակինը՝ ավելի քան երկու անգամ։ Կոլտնտեսությունը դարձել էր միլիոնատեր, իսկ կոլտնտեսականներն՝ ունևոր։ Մեկ աշխատանքային բաժանվել էր 7 կիլոգրամ հացահատիկ, 20 ռուբլի դրամ, 0,5 կիլոգրամ խաղող և այլ գյուղատնտեսական մթերքներ։ Գյուղում չկար ոչ մի կոլաղուրկ տնտեսություն։ Շատերը կառուցում էին նոր տներ, գնում կահկարասի։ Շատ կոլտնտեսուհիներ վաստակել էին ավելի աշխատանքային օր, քան տղամարդիկ։

Հացահատիկի բարձր բերքատվության վարպետներ Գրիգոր Ենոքյանը (Արարատի ՄՏԿ-ի տրակտորիստ), Սերոբ Միրզոյանը (Բասարգեչարի շրջանի Գյոդակբուլաղ գյուղի կոլտնտեսության նախագահ), Միհրան Կարապետյանը (Մարտունու ՄՏԿ-ի ավագ գյուղատնտես) և Զաբել Բուդաղյանը ԽՍՀՄ Կենտգործկոմի որոշումով աշխատանքային հերոսության համար արժանացան բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի։

Կառավարական բարձր պարգևի արժանացան նաև անասնապահության առաջավորների համամիութենական խորհրդակցության Հայաստանի 15 պատվիրակներ (ընդամենը 21 պատվիրակ)։ ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը Լենինի շքանշան հանձնեց Յանբզի սովխոզի անասնապահական ֆերմայի բրիգադավար Գրիգոր Քերոբի խաչատրյանին։ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան հանձնվեց Գրիգոր Գևորգի խաչատրյանին (Համզաշիմանի կոլտնտեսության ձիաբուծական ֆերմայի վարիչ), Լևոն Նալբանդյանին (Ուզունլարի կոլտնտեսության բրիգադավար), Գրիգոր Ներկարարյանին (Կուրթանի կոլտնտեսության ձիաբուծական ֆերմայի վարիչ), Այվազ Խալիլ օղլի Մուստաֆանին (Գիլլի գյուղի կոլտնտեսության հորթապահ), Սմբատ Բաղալյանին (Բուռն գյուղի կոլտնտեսության բրիգադավար)։ Մյուս պատգամավորներին արժանացան Պատվո նշան շքանշանի։ Պարգևատրված ստախանովական անասնապահներին ընդունեց ՀԿ(բ)Կ Կենտկոմը, որտեղ նրանք խոստացան պայքարել նորանոր նվաճումների համար։

Գյուղատնտեսության հարվածայինների և առաջավորների ամենատարբեր մակարդակներով խորհրդակցություններն ամենուրեք դարձան ավանդույթ։ Դրանք օգնում էին համախմբելու աշխատավորների ուժերը գյուղատնտեսության խնդիրները հաջողությամբ կատարելու համար։ Ավելի էր ծավալվում սոցիալիստական մրցումը և հարվածայնությունը, խտանում էին ստախանովականների շարքերը։

1936 թ. սկզբին տեղի ունեցավ հարվածային բամբակագործների հանրապետական խորհրդակցություն, որն ամփոփեց նախորդ տարվա արդյունքները և պարզաբանեց առաջիկա տարվա խնդիրները։ Նույնպիսի խորհրդակցություն կայացավ նաև երկրորդ հնգամյակի վերջին տարում՝ 1937 թ.։ Խորհրդակցության մասնակիցներին իր փորձի մասին պատմեց Ադրբեջանի անվանի բամբակագործ, Լենինի շքանշանակիր Բաստի Բաղիրովան։

1936 թ. փետրվարին կայացավ հացահատիկի բարձր բերքատվության առաջավորների հանրապետական խորհրդակցություն։ Ամփոփելով միկոյանցիների և մյուս շրջանների առաջավորների փորձը, խորհրդակցությունն ընդունեց դիմում, որտեղ բոլոր հացահատիկագործներին և մեխանիզատորներին կոչ էր արվում առաջավորների օրինակով պայքարելու բարձր բերքի համար։

Հացահատիկի բարձր բերքի վարպետների փորձի մասին հանդամանորեն խոսվեց նրանց հանրապետական երկրորդ խորհրդակցությունում, որը կայացավ 1937 թ. փետրվարին և որն ընդունեց դիմում Հայաստանի բոլոր կոլտնտեսականներին, գյուղատնտեսներին և ՄՏԿ-ների աշխատողներին։

Այսպիսով, 30-ական թվականներին և հատկապես երկրորդ հնգամյակի տարիներին Հայաստանում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ուղեկցվում էր կոլտնտեսային գյուղի աշխատանքային խանդավառության վերելքով։ Սոցիալիստական մրցությունը ծավալվեց հանրապետության բոլոր կոլտնտեսություններում և օգնում էր լուծելու գյուղի աշխատավորների առջև դրված արտադրական խնդիրները։

* * *

Համատարած կոլեկտիվացման հարցերը լուծելուց հետո կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը ուժեղացրին ուշադրությունը գյուղատնտեսության և կոլտնտեսային արտադրության զարգացման նկատմամբ։ Ինչպես նշվել է, գյուղի սոցիալիստական վերակառուցման սկզբնական շրջանում խիստ տուժեց անասնաբուծությունը։ Տեղի ունեցավ անասունների անխնա մորթ։

Միջոցառումներ մշակվեցին սոցիալիստական անասնաբուծության կազմակերպման և զարգացման ուղղությամբ։ Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թ. հուլիսի 30-ի որոշումը։ Իր գոյության կարճ ժամանակամիջոցում հանրային անասնապահությունը (սովխոզներ և կոլտնտե-

սային ապրանքային ֆերմաներ) արդեն ստեղծել էր անասունների զգալի հոտ։ Ի դեմս կոլտնտեսային ապրանքային ֆերմաների և ինկուբատորային թռչնակայանների, դտնվել էր հանրային անասնապահության և թռչնաբուծության ստեղծման ձևը, որն ավելի էր համապատասխանում կոլեկտիվ տնտեսության զարգացման արտելային ժամանակաշրջանին ու սովխոզների հետ միասին կարող էր ավելի արագ լուծել խոշոր ապրանքային անասնապահության ստեղծման խնդիրը։ Կուսակցությունը և կառավարությունը անասնապահության սոցիալիստական սեկտորի ստեղծումն ու ամրապնդումը դիտեցին որպես մոտակա ժամանակաշրջանի կենտրոնական խնդիրը գյուղատնտեսության բնագավառում։ 1931—1932 թթ. պետք է դառնային սոցիալիստական անասնապահության վճռական բեկման տարիներ, ինչպիսին էին 1929—1930 թթ. սոցիալիստական հացահատիկային տնտեսության կազմակերպման համար[85]։

Քննարկելով այդ հարցը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. օգոստոսի 4-ին, ապա 13-ին ընդունեց համապատասխան որոշումներ, որոնք միջոցառումներ էին նախատեսում սոցիալիստական անասնապահության կազմակերպման ուղղությամբ[86]։ Մինչև 1931 թ. հոկտեմբերի 1-ը Հայաստանում ոչ մի կոլտնտեսային անասնապահական ֆերմա չի եղել։ Իսկ մինչև 1932 թ. հունիսի 1-ը արդեն կազմակերպվել էին 147 ոչխարաբուծական, 161 կաթնապրանքային, 49 խոզաբուծական, ինչպես նաև մի շարք ձիաբուծական, մեղվաբուծական, մատղաշների աճեցման ֆերմաներ և անասունների արհեստական բեղմնավորման կայաններ[87]։

Ամփոփելով սոցիալիստական անասնաբուծության կազմակերպման և զարգացման ուղղությամբ ձեռք բերված նվաճումները, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը 1934 թ. հուլիսին նշեց, որ ամբողջությամբ վերցրած անասնաբուծության վիճակը շարունակում է մնալ անբավարար, որ նրա զարգացումն ընթանում է խիստ դանդաղ։ Պլենումը մշակեց մի շարք միջոցառումներ, մասնավորապես որոշեց ցանքի պետական պլանի օրինակով կիրառել նաև անասնաբուծության զարգացման պետական պլանի մեթոդը[88]։

---

85 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства. Важнейшие постановления Коммунистической партии и Советского правительства. 1927—1935», М., 1957, стр. 391—398. Տե՛ս նաև «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1931, № 46, հոդ. 312։

86 Տե՛ս ՄԱԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 17, գ. 10, թ. 137—138 և «Մաճկալ», 1931 թ. օգոստոսի 25։

87 Տե՛ս ՄԱԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 19, գ. 184, թ. 11—17։

88 Տե՛ս «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 307—321։

Նույն թվականի վերջին կայացած ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը Ստեփանավանի շրջանի օրինակով քննարկից անասնապահության զարգացման հարցը և հանրապետության բոլոր շրջանային կազմակերպություններին հանձնարարեց մշակել կոնկրետ միջոցառումներ։ Որոշվեց նաև Ստեփանավանի շրջանը դարձնել ցեղական անասնապահության օրինակելի շրջան[89]։

1935 թ. կուսակցության և կառավարության բարձրագույն մարմինները որոշում ընդունեցին Անդրկովկասի հանրապետություններում անասնապահությունը զարգացնելու մասին, որի համաձայն Հայաստանում կազմակերպվեցին շվից ցեղի խոշոր եղջերավոր անասունների պետական (Ստեփանավան) և բալբաս ցեղի ոչխարների հանրապետական (Մարտունի) տոհմաբուծարանները։ Վարկ հատկացվեց կոլտնտեսային անասնաբուծությունը զարգացնելու և կոլտնտեսականների կոլազրկությունը վերացնելու համար[90]։ Միջոցառումներ մշակվեցին նրբագեղմ ոչխարաբուծության զարգացման համար[91]։

Մինչև 1936 թ. սեպտեմբերը Հայաստանում կազմակերպվել էր ավելի քան 1700 կոլտնտեսային ապրանքային ֆերմա, 113,6 հազար գլուխ խոշոր, 400 հազար գլուխ մանր եղջերավոր անասուններով։ Երկու տարվա ընթացքում կոլտնտեսություններում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացել էր 233, մանրերինը՝ 280, խոզերինը՝ 150 և ձիերինը՝ 189 տոկոսով։ Կառուցվել էր 1200 անասնապահական շենք։ 1934—1935 թթ. 25 հազար կոլտնտեսականներ ձեռք էին բերել կովեր ու հորթեր[92]։

Սակայն նվաճումները դեռևս համեստ էին, որովհետև անասնաբուծությունը շարունակում էր մնալ գյուղատնտեսության ետ մնացող ճյուղերից մեկը։ Այդ մասին են վկայում հետևյալ տվյալները։ Հանրապետության գյուղատնտեսության ամբողջ եկամտի մոտավորապես կեսը բաժին էր ընկնում չորս բամբակագործական շրջաններին, իսկ կեսից մի փոքր ավելին՝ մյուս բոլոր շրջաններին, որոնք հիմնականում անասնապահական էին։ Նույնիսկ Ստեփանավանի շրջանում անասնաբուծությունից ստացված եկամուտը կազմում էր ընդամենը 30 տոկոս։

---

89 Տե՛ս «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1935 թ. հունվարի 2։

90 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1935, № 33, հոդ. 269։

91 Տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1936, № 4, հոդ. 23։ ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 24, գ. 274, թ. 1—3 և ց. 25, գ. 64, թ. 74—76։

92 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1936 թ. հոկտեմբերի 4, 9, 10 և 11-ի համարները (ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի նյութերը)։

Ցուցանիշները ցածր էին նաև մյուս անասնապահական շրջաններում[93]։ Այնուամենայնիվ հաջողվեց կանգնեցնել գյուղատնտեսության անկումը և կազմակերպել նրա վերելքը, հատկապես սոցիալիստական սեկտորում։ Երկրորդ հնգամյակի ընթացքում բոլոր կատեգորիաների տնտեսություններում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն աճեց 25, այդ թվում կովերինը՝ 7, մանր եղջերավոր անասուններինը՝ 51 տոկոսով, խոզերինը՝ 2,7 անգամ[94]։ Տվյալները վկայում են, որ անասունների գլխաքանակն ավելի բարձր տեմպերով աճում էր կոլտնտեսություններում[95]։

Անասնաբուծության, ինչպես նաև ամբողջ գյուղատնտեսության վերելքի և ապրանքային արտադրության ավելացման գործում կարևոր նշանակություն ունեցավ մթերումների և գնումների նոր քաղաքականությանն անցնելը, որը տեղի ունեցավ 1932—1933 թթ.։ Վերացվեց գյուղատնտեսական մթերքների և անասնաբուծական ապրանքների գնումների պայմանագրային (կոնտրակտացիա) կարգը, որպես հնացած և այլևս իրեն չարդարացնող ու մտցվեց պետության կողմից հաստատուն գներով մթերումներ և գնումներ կատարելու կայուն պարտավորությունների կարգը, ըստ ցանքատարածությունների պլանի ու անասունների գլխաքանակի։ Ընդ որում այդ պարտավորություններն ունեին հարկի ուժ։ Պայմանագրային սիստեմը պահպանվեց միայն տեխնիկական կուլտուրաների և այգեգործության համար, այն տարբերությամբ, որ այժմ պայմանագրերն ունեին օրենքի ուժ։ Որպես սկզբունք կոլտնտեսականները անհատական տնտեսությունների համեմատությամբ դրվում էին արտոնյալ և նպաստավոր պայմաններում, որի իմաստը ոչ միայն կոլտնտեսականների նյութական դրության բարելավումն էր, այլև կոլեկտիվացման հետագա զարգացումը։ Նոր պայմաններին համապատասխան վերակառուցվեց մթերող կազմակերպությունների ապարատը։ Այն ավելի կրճատվեց ու պարզեցվեց։ 1933—1934 թթ. վերակառուցվեց նաև գյուղատնտեսության ղեկավարումը և հողժողկոմատի կառուցվածքը, որի հիմքում դրվեց ճյուղային-արտադրական սկզբունքը (Համ(բ)Կ XVII համագումարի որոշումներին համապատասխան)։ 1932 թ. վերջին և 1933 թ. սկզբին վերացվեց Կոլտնտեսկենտրոնը (նաև բոլոր հանրապետա-

93 Տե՛ս նույն տեղում։

94 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР». Статистический сборник. Ереван. 1961, стр. 345 (տոկոսային հաշվումները կատարված են հեղինակի կողմից)։

95 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», стр. 80.

կան կենտրոնները, կոլտնտեսությունների շրջանային միությունները ամբողջ երկրում, Կոլտնտեսությունների համամիութենական խորհուրդը, ապա նաև՝ կոլտնտեսականների կոնֆերանսներն ու համագումարները), իսկ կոլտնտեսային շարժման կառավարումը դրվեց հողժողկոմատի և մյուս պետական մարմինների վրա։ Այդ նշանակում է, որ երկրորդ հնգամյակում ավելի մեծ նշանակություն էր տրվում կոլտնտեսային արտադրության կազմակերպման ու զարգացման հարցերին, քանի որ երկրի հիմնական շրջաններում կոլտնտեսային կարգն արդեն հաղթանակել էր։

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ կոլտնտեսային-կոոպերատիվ զեկավար մարմինների վերացման հարցին։ Կոլտնտեսային կարգի հաղթանակով մեր երկրում ավարտվել էր գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպական կառուցվածքի ձևավորումը՝ ներքևից մինչև վերև, այսինքն անհատական տնտեսությունների միավորումից՝ կոլտնտեսություններից մինչև վերջիններիս համաերկրային կազմակերպությունը՝ համամիութենական խորհուրդը։ Միավորվելու ձգտումը բխում է կոոպերացիայի բնույթից, հետևաբար այն վերջինիս զարգացման օբյեկտիվ օրենքն է։ Սակայն, դժբախտաբար, ինչպես նշել է Ս. Տրապեզնիկովը, կոոպերատիվ զարգացման սկզբունքները՝ կոլեկտիվ տնտեսավարումը, դեմոկրատական կառավարումը, հասարակական հսկողությունը ոչ միշտ էին հետևողականորեն կենսագործվում կոլտնտեսային շինարարության մեջ։ «Պրակտիկայում սկսեցին ավելի ու ավելի իշխող դառնալ կոոպերատիվ-կոլտնտեսային կարգի պետականացման, նրա տնտեսական-դեմոկրատական սկզբունքների նեղացման, այն պետական մարմինների բազմակողմանի հսկողությանն ու կառավարմանը ենթարկելու գաղափարները»[96]։ Այդ ամենի հետևանքը եղավ կոոպերատիվ-կոլտնտեսային կարգի ստեղծված կառուցվածքի վերացումը՝ կոլտնտեսություններից վերև։ Դա բացասաբար ազդեց ինչպես կոլտնտեսային դեմոկրատիայի զարգացման, կոլտնտեսականների նախաձեռնության ծավալման, այնպես էլ գյուղատնտեսական արտադրության վրա։ Հետագայում ուղղվեցին կոլտնտեսային շինարարության տվյալ բնագավառում թույլ տված սխալները։

Վերադառնանք գյուղատնտեսության մյուս ճյուղերի նվաճումների լուսաբանությանը։

---

96 *С. Трапезников*, Ленинизм и аграрно-крестьянский вопрос, изд. 2-ое, т. II, М., 1974, стр. 501.

Կոլտնտեսային դարգի և ոռոգման ցանցի ընդարձակման շնորհիվ մեծ չափով ավելացան ցանքատարածությունները, 1937 թ. կազմելով 436,6 հազար հեկտար, որը 1928 թ. համեմատությամբ, երբ նոր էր սկսվել գյուղատնտեսության կոլեկտիվացումը, ավելի էր 31,5 և 1913 թ. համեմատությամբ 26,3 տոկոսով։ Ջդալիորին բարելավվեց դաշտավարության ճյուղային կառուցվածքը։ 1928—1937 թթ. հացահատիկային կուլտուրաների ցանքն աճեց 26, տեխնիկական կուլտուրաներինը՝ 56,8 տոկոսով, իսկ կերաբույսերինը՝ 4,8 անգամ[97]։ Նշված մշակույթների գծով գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը գերակշռել էր տիրապետող։ Կոլտնտեսությունները և սովխոզները դեռևս քիչ արտադրանք էին տալիս անասնաբուծության և այգեգործության գծով։ Այնուամենայնիվ կոլտնտեսականների օժանդակ տնտեսության հետ միասին նրանք գրավում էին վճռական դիրք։ Մեքենատրակտորների բաժինը այդ ճյուղերում ևս խիստ փոքր էր, որը տարեցտարի ավելի էր իջնում և վերացավ 30-ական թվականների վերջերին, կոլեկտիվացման լրիվ ավարտման հետ միասին։ Կոլտնտեսությունները լրիվ տիրապետող դարձան բամբակի, ծխախոտի և շաքարի ճակնդեղի պետական գնումների մեջ։ Նրանց էր պատկանում հացահատիկի հանձնումների 92,5 տոկոսը[98]։

Մեծ ուշադրություն էր նվիրվում այգեգործությանը և տեխնիկական մշակույթներին, որոնք զարգացման լայն հնարավորներ ունեին և եկամտաբեր էին։ 1934 թ. միութենական կառավարությունը որոշում ընդունեց Անդրկովկասի հանրապետություններում այգեգործությունը և խաղողագործությունը զարգացնելու մասին, որով բարձրացվեց կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, ինչպես նաև մեքենատրակտորների շահագրգռվածությունը, մի շարք արտոնություններ նախատեսվեցին խաղողագործական և այգեգործական սովխոզների համար[99]։ Եթե ամբողջ առաջին և երկրորդ հնգամյակների ընթացքում Հայաստանում տնկվել էր ընդամենը 2300 հեկտար խաղողի այգի, ապա միայն երրորդ հնգամյակի առաջին երկու տարիներին հիմնվեց 3100 հեկտար[100]։ Խաղողագործությունը շարժվում էր դեպի նախալեռնային շրջանները։

---

97 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР». Статистический сборник. Ереван, 1961, стр. 56 (տոկոսային հաշվումները կատարված են հեղինակի կողմից)։

98 Տե՛ս Գր. Հարությունյան, Հայաստանի Կ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ XIII համագումարին, Երևան, 1940, էջ 65։

99 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1934 թ. հուլիսի 26։

100 Տե՛ս ՀԿ(բ)Կ XIII համագումարի նշված հաշվետվությունը, էջ 44։

Առաջին հնգամյակի համեմատությամբ բամբակի ցանքատարածությունները կրճատվեցին։ Դրա համար աննպաստ հողերը հատկացվեցին տեխնիկական մյուս մշակույթներին և խաղողին ու պտուղներին։ Ցանքի կրճատման փոխարեն բարձրացավ բամբակի բերքատվությունը և համախառն արտադրանքը։ Միջին բերքատվությունը 1913 թ. 8,8 ցենտների դիմաց 1935 թ. կազմեց 10,5, 1936 թ.՝ 12,7, 1937 թ.՝ 12 և 1938 թ.՝ 17 ցենտներ[101]։ 1937—1939 թթ. բամբակի ցանքերը պակասեցին 1200 հեկտարով, իսկ ապրանքային արտադրանքն ավելացավ 34 տոկոսով[102]։ 1939 թ. բերքատվությունը բարձրացավ 19,2 ցենտների և ժամկետից շուտ կատարվեց երրորդ հնգամյա պլանը։ Այդ տարի Հայաստանում ստացվեց բամբակի ռեկորդային բերք[103]։ Բամբակագործների համար որպես նյութական շահադրդռվածության միջոց սահմանվեց պարգև-հավելում (բամբակի լրացուցիչ պետական գնումների համար)։ Միայն 1938 թ. հանրապետության կոլտնտեսականներն ստացան 15,3 միլիոն և 1939 թ. 20 միլիոն ռուբլի պարգև-հավելում[104]։ Բամբակը գյուղատնտեսության եկամտաբեր ճյուղերից էր։ Պատահական չէ, որ հանրապետության միլիոնատեր կոլտնտեսությունների մեծ մասը բաժին էր ընկնում բամբակագործական շրջաններին։

Առաջին և երկրորդ հնգամյակների ընթացքում ծխախոտի ցանքատարածություններն ավելացան մոտ 6, համախառն արտադրանքը՝ 10, իսկ նրանից ստացվող եկամուտը՝ 38 անգամ[105]։ Շամշադինից բացի, ծխախոտագործությամբ սկսեցին զբաղվել Մարտունու, Բասարգեչարի, Սիսիանի, Կրասնոսելսկի, Ախտայի, հետագայում նաև այլ շրջաններ։ 1939 թ. ծխախոտագործությունն ընդգրկում էր 17, իսկ 1940 թ.՝ 22 շրջան։

Հացահատիկի արտադրությունը դեռևս ետ էր մնում։ Չէին կատարվում բերքատվությունը բարձրացնելու առաջադրանքները։ Ընդհանուր պատճառների հետ միասին բացասական դեր էին խաղում բնական պատահարները (կարկտահարություն, երաշտ և այլն)։ Հատկապես աննպաստ էին երկրորդ հնգամյակի վերջին երկու տարիները։

---

101 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», стр. 67 և ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 326, թ. 110։

102 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 284, թ. 5—6։

103 Տե՛ս ՀԿ(բ)Կ XIII համագումարի նշված հաշվետվությունը, էջ 37։

104 Տե՛ս նույն տեղում։

105 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 340, թ. 56—65։

Այսպիսով, բերված տվյալները և փաստերը վկայում են, որ Հայաստանի լեռնային ու նախալեռնային շրջանների կոլտնտեսությունների մի մասը, որոնց հիմնական ճյուղը դաշտավարությունն էր կամ անասնապահությունը, ետ էին մնում, քիչ եկամուտներ ունեին և զգում էին պետական օգնության կարիք։ Հացահատիկագործական տնտեսությունների ետ մնալը, իհարկե, միայն բնական պատահարներով չի բացատրվում։ Նրանք ցածր բերք և քիչ եկամուտ էին ունենում նաև մյուս պայմաններում և ընդհանրապես թույլ էին։ Կարելի է բերել տվյալներ Ապարանի, Մարտունու, Ախտալի, Ադիդրեկովի, Միկոյանի և այլ շրջանների կոլտնտեսությունների տնականորեն ետ մնալու, ինչպես նաև նրանց զարգացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ։ Կոլտնտեսային արտադրությունը դեռևս ուներ զգալի դժվարություններ ու թերություններ։ Կոլտնտեսային կարգը դեռևս ի վիճակի չէր իր տնտեսական առավելությունները ցուցադրելու ինչպես հարկն է։ Գյուղատնտեսական խոշոր արտադրության կազմակերպման և զարգացման հետ կապված հարցերը լուծվում էին միայն աստիճանաբար։ Արտադրության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող տեխնիկական բազայի ստեղծումը, ինչպես նաև կադրերի պատրաստումը տեղի էին ունենում գյուղի սոցիալական վերափոխման հետ միասին։ Ավելին, սոցիալական վերակառուցման տեմպերը առաջ էին անցնում տեխնիկական վերակառուցման տեմպերից։ Կոլտնտեսային արտադրության կազմակերպիչները և ղեկավարները դեռևս բավարար փորձ ձեռք չէին բերել։ Թերություններ կային մթերումների ու գնումների գործում։ Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ մեր երկրի նախակոլտնտեսային գյուղատնտեսությունը եղել է հետամնաց և ցածր մակարդակի վրա։ Այս և այլ դժվարություններն ու թերությունները հաղթահարելու համար հարկավոր էր ժամանակ և համապատասխան նյութատեխնիկական ու այլ անհրաժեշտ պայմանների ստեղծում։

Չնայած առանձին ճյուղերի ու տնտեսությունների դժվարություններին և գոյություն ունեցող թերություններին ու թույլ տված սխալներին, Հայաստանի գյուղատնտեսությունը և կոլտնտեսային աշխատավորները ինչպես երկրորդ, այնպես էլ երրորդ հնգամյակի տարիներին հասան զգալի նվաճումների։ Այդ հաջողությունները պայմանավորված էին կոլտնտեսային կարգի հաղթանակով և սոցիալիստական մրցությամբ, որն օրեցօր ավելի ու ավելի էր ծավալվում։

Այսպիսով, կոլտնտեսային կարգի հաղթանակը արտադրական վերելքի հզոր խթան ստեղծեց գյուղի աշխատավորների մեջ։ Արտադրա-

կան խանդավառությունը և սոցիալիստական մրցության ծավալումն ու զարգացումը դարձան ոչ միայն կոլտնտեսականների ունևոր կյանքի աղբյուրը, այլև ծառայեցին որպես սոցիալիստական հասարակության դասակարգ կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակության հզոր գործոն։

ԳԼՈՒԽ ՅՈԹՆԵՐՈՐԴ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Երեք 20-ական թվականներին գյուղում տարվող աշխատանքի հիմնական ուղղությունը աշխատավոր գյուղացիների համախմբումն էր կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության շուրջը, իսկ 1929—1932 թթ. պայքար էր մղվում նրանց կոլտնտեսությունների մեջ ներգրավելու, դասակարգային թշնամու դեմ ոտքի հանելու և նրա դիմադրությունը ճնշելու համար, ապա երկրորդ, ինչպես նաև երրորդ հնգամյակների տարիներին նոր պայմանների ու խնդիրների համեմատ փոխվեցին նաև գյուղական կազմակերպությունների աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները։ Այժմ կարևոր խնդիրը գյուղատնտեսության կոլեկտիվացման ավարտումն էր, կոլտնտեսությունների ամրապնդումը, կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական գիտակցության զարգացումը։ Գյուղի կուսակցական, կոմերիտական և հասարակական կազմակերպություններն իրենց գործունեությունը վերակառուցեցին քաղաքական նոր խնդիրներին համապատասխան։

Հայաստանում աշխատավոր գյուղացիների հիմնական զանգվածները կոլտնտեսությունների մեջ ընդգրկվեցին երկրորդ հնգամյակի տարիներին։ Ավելի քան 160 հազար գյուղացիական տնտեսություններ, ընդմիշտ հրաժարվելով անհատական տնտեսավարման եղանակից, իրենց բախտը կապեցին կոլեկտիվ տնտեսությունների հետ, որոնց թիվն անցնում էր հազարից։ Կապիտալիստական-մանրբուրժուական արտադրական հարաբերությունները փոխարինվեցին սոցիալիստական արտադրական հարաբերություններով։ Վերացվեց մեր երկրի ամենաբազմամարդ շահագործող դասակարգը՝ կուլակությունը։ Գյուղում սոցիալիզմի հաղթանակի և սոցիալիստական արտադրական հարաբերու-

թյունների հաստատման շնորհիվ ձևավորվեց սոցիալիստական հասարակության դասակարգ կոլտնտեսային գյուղացիությունը իր նոր հայացքներով ու գիտակցությամբ։

Գյուղի աշխատավորների մեջ սոցիալիստական գիտակցության արմատավորման համար պայքարը սկսվել է սոցիալիստական հեղափոխության հաղթանակով։ Գյուղում վարած իր քաղաքականությամբ կոմունիստական կուսակցությունը աշխատում էր չքավոր ու միջակ գյուղացիներին բացատրել անհատական տնտեսության անշահավետ ու անհեռանկարային լինելը և կոլեկտիվ, սոցիալիստական տնտեսության առավելությունն ու անխուսափելիությունը։ Այդ հիմնական նպատակին էին ծառայում կուսակցության և սովետական պետության ամբողջ գործունեությունը՝ հողային ու հարկային քաղաքականությունը, կոոպերացիայի արմատավորումը, օրինակելի կոլտնտեսությունների ու սովխոզների կազմակերպումը, կուսակցական-կազմակերպական և քաղաքական-մասսայական աշխատանքը։ Գյուղացուն սոցիալիզմի կողմնակից դարձնելը և սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելը բարդ ու տևական գործ էր։ Բացի աղքատացված հողից, արտադրության մյուս բոլոր միջոցները կազմում էին մասնավոր սեփականություն։ Գյուղում տիրապետում էին բուրժուական և մանրբուրժուական արտադրական հարաբերությունները։ Դրան համապատասխան գյուղացին ուներ մասնավոր սեփականատիրական, անհատապաշտական, մանրբուրժուական հոգեբանություն և գիտակցություն։ Առավել մեծ ջանքեր էին պահանջվում միջակ գյուղացիությանը սոցիալիզմի կողմը դրավելու համար։ «Գյուղացիները մի հատուկ դասակարգ են՝,— գրել է Վ. Ի. Լենինը,— իբրև աշխատավորներ, նրանք կապիտալիստական շահագործման թշնամիներ են, բայց միևնույն ժամանակ նրանք սեփականատերեր են։ Գյուղացին հարյուրամյակներով դաստիարակվել է այն ոգով, որ հացը իրենն է, և ինքը ազատ է վաճառելու այն։ Դա իմ իրավունքն է, մտածում է գյուղացին, որովհետև դա իմ աշխատանքն է, իմ քրտինքն ու արյունը։ Նրա հոգեբանությունը արագ փոխել չի կարելի, դա պայքարի երկար ու դժվար ուղի է»[1]։

Լենինյան կոոպերատիվ պլանի կենսագործման և կուսակցության ու կառավարության գործունեության շնորհիվ արդեն 1929—1930 թթ. վճռական շրջադարձ տեղի ունեցավ գյուղացիության մեջ։ Հաղթահարելով իր տատանումները, աշխատավոր գյուղացին անցավ կոլտնտեսու-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 445—446։

թյունների կողմը։ Սկսվեց նոր ժամանակաշրջան գյուղացու հին հոգեբանությունը սոցիալիստական գիտակցությամբ փոխարինելու պայքարում։ Կոլտնտեսականների՝ երեկվա մենատնտես գյուղացիների սոցիալիստական վերադաստիարակությունը դարձավ կոմունիստական կուսակցության կարևոր խնդիրը։

Համ(բ)Կ XVI համագումարը (1930 թ. հունիս), ելնելով Սովետական Միության վճռական շրջաններում համատարած կոլեկտիվացման հաղթանակի փաստից, առաջ քաշեց կոլտնտեսային գյուղացիության վերադաստիարակության հարցը, ցույց տվեց դրա լուծման ուղիները։ «Աշխատում չի ավարտվում, այլ միայն սկսվում է նոր հասարակական կարգապահություն ստեղծելու գործը, գյուղացիներին սոցիալիստական շինարարություն սովորեցնելու գործը, կարդում ենք համագումարի բանաձևում,— Կոլտնտեսություններում գյուղացիները վերջնականապես կազատագրվեն մանր սեփականատիրական հոգեբանությունից, մասնավոր-տնտեսական կուտակման ծարավից, որը ժառանգել են մանր մասնավոր սեփականատերերի սերունդներից, կոլտնտեսությունները խոշոր, մեքենայացված տնտեսության բազայի վրա դնելու տարիների համառ աշխատանքի շնորհիվ միայն, կոլտնտեսականների միջավայրից կադրեր ստեղծելու և կոլտնտեսային ամբողջ մասսայի կուլտուրական վերելքի ուղղությամբ համառ աշխատանքի շնորհիվ»[2]։

Առաջին հնգամյակի ընթացքում ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիզմի վճռական հաղթանակների, շահագործող դասակարգերի վերացման, սոցիալիզմի օգտին ով-ումի հարցը լուծելուց հետո որպես նոր հնգամյակի կարևոր քաղաքական խնդիր Համ(բ)Կ XVII կոնֆերանսի (1932 թ. հունվար-փետրվար) կողմից առաջ քաշվեց կապիտալիստական տարրերի վերջնական վերացումը, դասակարգային տարբերությունները ու շահագործում ծնող պատճառների իսպառ ոչնչացումը և կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը էկոնոմիկայի ու մարդկանց գիտակցության մեջ, երկրի ամբողջ աշխատավոր բնակչության վերածումը սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողների[3]։ Աշխատավորների մեջ բուրժուական և մանրբուրժուական նախապաշարումների հաղթահարումը և նրանց սոցիալիստական վերադաստիարակության ուղղությամբ համառ աշխատանքի կազմակերպու-

---

2 «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 74։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 186—187։

մը կոնֆերանսը համարեց երկրի առաջընթացի կարևոր պայմաններից մեկը[4]։

Համկ(բ)կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թ. հունվարյան պլենումը ևս գյուղում կազմակերպվող քաղաքաժիններին ուշադրությունը հրավիրեց կոլտնտեսային մասսաների դաստիարակության հարցի վրա, նշելով, որ քաղաքաժինների քաղաքական, կազմակերպական-կուսակցական ամբողջ աշխատանքը պետք է ուղղված լինի մի նպատակի՝ վերջնականապես չլատել դասակարգային թշնամու ազդեցությունը կոլտնտեսությունում ու սովխոզում և հաղթահարել երեկվա մենատնտես-սեփականատիրոջ՝ այսօրվա կոլտնտեսականի մանրբուրժուական մնացուկներն ու սեփականատիրական տենդենցները»[5]։

Կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակության հիմնական ուղիներն էին նրա աշխատանքային գործունեությունը, քաղաքական ակտիվության կազմակերպումը, կուլտուրական մակարդակի բարձրացումը և ընդհանրապես արտադրական-քաղաքական ակտիվացումը գյուղում։

Կոլտնտեսությունը, ինչպես նշվեց, նոր պայմաններ ստեղծեց գյուղացիության մանրբուրժուական գիտակցության վերջնական հաղթահարման և սոցիալիստական գիտակցության ձևավորման համար։ Փոխվեց մարդկանց վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ։ Կոլեկտիվ-կոլտնտեսային աշխատանքը դարձավ հասարակական հարստության և յուրաքանչյուր կոլտնտեսային ընտանիքի ունևոր կյանքի ստեղծման հիմնական աղբյուրը։ Գյուղում հաստատվեց ով կաշխատի՝ նա կուտի սոցիալիստական սկզբունքը։ Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը սոցիալիստական (կոոպերատիվ-խմբային) սեփականությամբ փոխարինելը, նոր տիպի արտադրական հարաբերությունների հաստատումը համապատասխան փոփոխություն էին մտցնելու նաև մարդկանց գիտակցության մեջ։ Ինչպիսին մարդկանց կեցությունն է՝ այնպիսին էլ նրանց գիտակցությունն է, կամ որ նույնն է՝ կեցությունն է որոշում գիտակցությունը։ Գյուղատնտեսական արտելը կոլտնտեսային գյուղացիության համար դարձավ կոմունիզմի դպրոց։

Կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակության գործում աշխատանքային-արտադրական գործունեության

---

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 192։

[5] Նույն տեղում, էջ 242։

դերի մասին խոսվեց նախորդ գլխում։ Այժմ կանդրադառնանք գյուղի հասարակական-քաղաքական և կուլտուրական կյանքի ու դրա դերի հարցերին։

* * *

Կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակության, ինչպես նաև գյուղատնտեսության կոլեկտիվացումն ավարտելու գործում մեծ դեր ունեին կատարելու շրջանային և գյուղական կուսակցական և հասարակական կազմակերպությունները։ Կուսակցության XVII համագումարի որոշումների համաձայն վերակառուցվեց կուսակցական-կազմակերպական ամբողջ աշխատանքը՝ այն քաղաքական խնդիրների մակարդակին բարձրացնելու և երկրորդ հնգամյա պլանի առաջադրանքների կատարումը ապահովելու համար։ Համագումարն արձանագրեց, որ կոմունիստական կուսակցությունը և Կենտկոմը ոչ միայն քաղաքական լոզունգներ հռչակեցին, այլև կարողացան «բոլշևիկորեն, պրակտիկ կերպով կազմակերպել մասսաներին այդ լոզունգները կենսագործելու համար, վերակառուցման ժամանակաշրջանի նոր խնդիրներին համապատասխան կազմակերպել և վերակառուցել պրոլետարական դիկտատուրայի բոլոր օրգաններն ու ապարատները»[6]։ Համագումարը պահանջեց էլ ավելի բարձրացնել աշխատանքի որակը, առաջին հերթին կազմակերպական պրակտիկ աշխատանքի բնագավառում[7]։

Համագումարի որոշումների կենսագործման շնորհիվ ավելի աճեցին հանրապետության գյուղի կուսակցական և հասարակական կազմակերպությունները, բարելավվեց աշխատանքի որակը, բարձրացավ նրանց դերը կոլտնտեսային մասսաների և աշխատավոր մենատնտեսների քաղաքական դաստիարակության բնագավառում։

Գյուղի աշխատավոր մասսաների քաղաքական դաստիարակության գործում մեծ աշխատանք կատարեցին կուսակցական կազմակերպությունները և առաջին հերթին ՄՏԿ-ների քաղաքական բաժինները, որոնց մասին արդեն խոսվել է։ Նրանց ղեկավարությամբ իրականացվեց կուսակցական աշխատանքի վերակառուցումը՝ ըստ արտադրական սկզբունքի, որի շնորհիվ ուժեղացավ և կոնկրետացավ կոլտնտեսությունների ու կոլտնտեսային արտադրության կուսակցական ղեկավարումը, ավելի մեծաթիվ ակտիվ ընդգրկվեց կուսակցական և կոմերիտական կազմա-

6 Նույն տեղում, էջ 277։

7 Տե՛ս նույն տեղում, էջ 279—280։

կերպությունների շուրջը։ ՀԿ(բ)Կ IX համագումարի ժամանակ (1934 թ. հունվար) Հայաստանում կար 626 կոլտնտեսային արտադրական բջիջ, 132 կոլտնտեսային թեկնածուական խմբակ և 279 բջիջ գյուղսովետներին կից (տերիտորիալ)[8]։ Բաղմացել էր կուսակցական ակտիվը։ Միայն կուսբջիջների քարտուղարների թիվը հասնում էր 693-ի, կուսկազմակերպիչներինը՝ 2636-ի և խմբակային կազմակերպիչներինը՝ 716-ի[9]։

Երկրորդ հնգամյակի սկզբում զգալիորեն ընդունելությունը կուսակցության մեջ, ուստի կուսշարքերի աճը ժամանակավորապես կանգ առավ։ ՀամԿ(բ)Կ XVI կոնֆերանսի (1929 թ. ապրիլ) որոշման համաձայն 1933 թ. կազմակերպվեց և անցկացվեց կուսանդամների ու թեկնածուների ստուգում-զտում։ Քանի որ ՀԿ(բ)Կ-ի նախորդ զտումը նոր էր ավարտվել, ուստի ամբողջ կազմակերպության նոր զտում տեղի չունեցավ։

1935—1936 թթ. կազմակերպվեց կուսակցական փաստաթղթերի ստուգում և փոխանակում. Այդ ստուգումն օգնեց, ասված է ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. հունվարյան պլենումի բանաձևում, կուսակցության շարքերը մաքրելու թշնամական և պասիվ տարրերից[10]։ Պետք է նշել, սակայն, որ այդ ստուգման ժամանակ պասիվ անվան տակ և քաղաքական անգրագիտության պատրվակով կուսակցությունից հեռացվեցին նաև շատ արժանավոր մարդիկ, իսկ կարիերիստներն ու զրպարտիչներն այդ կամպանիան օգտագործեցին շատ ազնիվ աշխատողների զրպարտելու, նրանց հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով[11]։ Ամենափոքր զանցանքի համար մարդիկ հեռացվում էին կուսակցությունից և աշխատանքից։ Դա հնարավոր դարձավ անհատի պաշտամունքի պայմաններում, որն առաջ եկավ 30-ական թվականների կեսերին։ Այդպիսի պայմաններում տեղի ունեցան նաև սոցիալիստական օրինականության խախտումներ։ Այդ սխալները և խախտումները մեծ վնաս հասցրին սոցիալիստական շինարարության գործին, սակայն անկարող էին արգելակել երկրի առաջընթացը։ Հետագայում կուսակցությունը ուղղեց թույլ տված սխալները և օրինականության խախտումները։

Երրորդ հնգամյակի տարիներին ևս տեղի ունեցավ գյուղական կուսակցական կազմակերպությունների զգալի աճ։ Սովետների երկիրը

---

8 Տե՛ս «ՀԿ(բ)Կ IX համագումարի ստենոգրաֆիկ հաշվետվություն», էջ 141։

9 Տե՛ս նույն տեղում, էջ 143—144։

10 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1936 թ. փետրվարի 1։

11 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 464։

թնակոխել էր պատմական զարգացման նոր ժամանակաշրջան։ Նոր ձևով վերակառուցվեց նաև կուսակցական կազմակերպությունների աշխատանքը։

Ընդունելությունը վերսկսելուց հետո (1936 թ. վերջ) աճեց կուսակցության անդամ-թեկնածուների, ինչպես նաև կազմակերպությունների թիվը։ Միայն 1938 թ. հունվարից մինչև հոկտեմբերը (տաս ամսում) գյուղական կազմակերպություններն աճեցին 2000 մարդով։ Գյուղերում և շրջանային կենտրոններում գործում էին 1027 սկզբնական կուսակազմակերպություններ։ 634 կազմակերպություններին կից գոյություն ունեին համակրողների խմբեր[12]։ Մի շարք շրջանային կազմակերպություններում աճը հասավ 40—50 տոկոսի[13]։ ՀամԿ(բ)Կ XVIII համագումարից (1939 թ. մարտ) հետո հանրապետության 41 շրջաններում ստեղծվեցին 157 նոր սկզբնական կազմակերպություններ[14]։ Միայն Ալավերդու շրջանում կուսակցության մեջ էին ընդունվել կոլտնտեսային գյուղի 147 առաջավորներ, այդ թվում 13 բրիգադավար, 4 ֆերմայի վարիչ[15]։

1940 թ. մարտի 1-ին Հայաստանում կար 778 կոլտնտեսային կուսակցական կազմակերպություն։ 140 կոլտնտեսություններ ունեին կուսակցական-կոմերիտական և թեկնածուական խմբակներ[16]։ Այդ նշանակում է, որ հանրապետության 1079 կոլտնտեսություններից 918-ում քաղաքական-կազմակերպական աշխատանքը անմիջապես ղեկավարում էին կոմունիստները և կոմերիտականները։ Մյուս կոլտնտեսություններում ակտիվ դեր էին խաղում կոմերիտականները։

1941 թ. մայիսին Հայաստանի կոմկուսի մեջ գործում էր 1306 սկզբնական կուսակցական կազմակերպություն, որի մեծ մասը բաժին էր ընկնում գյուղին և կոլտնտեսություններին։ Այդ նույն ժամանակ տեղի ունեցան կուսակազմակերպությունների հաշվետու-ընտրական ժողովներ, որոնք անցան բարձր ակտիվությամբ։ Դրա մասին է վկայում թեկուզ ժողովներում ելույթ ունեցողների մեծ թիվը (մասնակիցների 53 տոկոսը)[17]։

Վերակառուցվեց նաև կուսակցական պրոպագանդայի դրվածքը։

---

12 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1938 թ. նոյեմբերի 14։

13 Տե՛ս «Կուսաշխատող», 1938, № 8, էջ 7—10։

14 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1939 թ. հուլիսի 28։

15 Տե՛ս նույն տեղում։

16 Տե՛ս ՀԿ(բ)Կ XIII համագումարի նշված հաշվետվությունը, էջ 88։

17 Տե՛ս ՄԱԻ ՀՊՄ., ֆ. 1, ց. 30, գ. 26, թ. 183—184։

Ստեղծվեց քաղաքական ուսուցման լայն ցանց, որտեղ հիմնական ուշադրությունը կենտրոնացվեց կուսակցության պատմության ուսումնասիրման վրա։ Լայն ծավալ ընդունեց ինքնուրույն քաղուսման մեթոդը։

Աճեցին կոմերիտական կազմակերպությունները։ Բարձրացավ նրանց դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման և կոլտնտեսային մասսաների քաղաքական դաստիարակության գործում։

1932—1933 թթ. Հանրապետության մի շարք շրջաններում անցկացվեց կոմերիտականների զտում։ Կոմերիմիության շարքերից հեռացվեց 1500 մարդ՝ «կուլակային սաբոտաժի, հանրային գույքի ոչնչացման ու հափշտակման և լոդրության համար»[18]։ Դա ավելի ամրապնդեց գյուղական կոմերիտական կազմակերպությունները։ 1934 թ. սկզբին Հայաստանի լենինյան կոմերիմիության շարքերում հաշվում էր 46 հազար երիտասարդ, որից 4827-ը աղրբեջանցիներ էին, իսկ 244-ը՝ քրդեր[19]։

1932 թ. հունիսից մինչև 1936 թ. փետրվարը (ՀԼԿԵՄ VIII համագումարից մինչև IX համագումարը), մոտ 4 տարվա ընթացքում Հայաստանի կոմերիմիության շարքերն աճեցին 14 հազար անդամ-թեկնածուներով. նրանցից կոլտնտեսականներ էին 3542-ը կամ 40,4 տոկոսը, գյուղատնտեսական բանվորներ՝ 397-ը և մենատնտեսներ՝ 2126-ը։ Մոտ 35 հազար կոմերիտականներ ընդգրկված էին քաղաքական ուսման տարբեր խմբակներում ու դպրոցներում[20]։ 1933—1936 թթ. պիոներական կազմակերպության անդամների թիվը 59 հազարից հասավ 84,5 հազարի[21]։

1937 թ. հոկտեմբերից մինչև 1939 թ. փետրվարը Հանրապետության կոմերիմիության շարքերը խտացան 33 հազար նոր երիտասարդներով[22], իսկ մինչև 1940 թ. սեպտեմբերը՝ ևս 35 հազարով։ Այդ ժամանակ ՀԼԿԵՄ-ը իրենից ներկայացնում էր 93 հազարանոց մի կազմակերպված բանակ, որից կոլտնտեսականներ էին 25,5 հազարը[23]։

Կոմերիմիության աճի և նոր կադրերի ստեղծման շնորհիվ բարձրացավ կոմերիտականների տեսակարար կշիռը գյուղական մտավորականության կազմում։ Կոմերիտականներ և արտամիութենական երի-

---

18 Տե՛ս «ՀԿ(բ)Կ IX համագումարի սղագրական հաշվետվությունը», էջ 146։

19 Տե՛ս նույն տեղում, էջ 145։

20 Տե՛ս «Ավանգարդ», 1936 թ. փետրվարի 15։

21 Տե՛ս նույն տեղում։

22 Տե՛ս «Ավանգարդ», 1939 թ. փետրվարի 26։

23 Տե՛ս «Ավանգարդ», 1940 թ. սեպտեմբերի 28։

տասարդներ էին գյուղական դպրոցի աշխատողների մեծ մասը։ Նրանք մեծ թիվ էին կազմում նաև առողջապահության աշխատողների, գյուղատնտեսության մասնագետների և մյուս մասնագիտությունների մեջ։

Կոմունիստների հետ միասին նրանց օգնական կոմերիտականները դարձան հզոր ուժ սոցիալիստական գյուղի հասարակական-քաղաքական և արտադրական կյանքում։

Կոլտնտեսային մասսաների և գյուղի բոլոր աշխատավորների կոմունիստական դաստիարակության և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում մեծ դեր էր խաղում մամուլը։ Գյուղի աշխատավորների համար հրատարակվում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Մաճկալ» կենտրոնական գյուղացիական օրաթերթը, որն ուներ մասսայական և մեծ հեղինակություն։ 1931 թ. նոյեմբերի 1-ից թերթը վերանվանվեց «Սոցիալիստական գյուղատնտեսություն», իսկ 1935 թ. ապրիլի 1-ից մինչև օգոստոսի վերջը այն կոչվում էր «Կոլխոզնիկ»։ Այնուհետև գյուղի և կոլտնտեսային կյանքի հարցերի պարզաբանումը կենտրոնացավ շրջանային թերթերում։ 1932 թ. հրատարակվում էր 13 անուն շրջանային թերթ, որից 2-ը ադրբեջաներեն, մեկը՝ ռուսերեն-հայերեն, ընդամենը մոտ 30 հազար տպաքանակով։ 1933 թ. առաջին եռամսյակում նրանց թիվը հասավ 18-ի։ Բացի այդ, լույս էին տեսնում 8 ՄՏԿ-ների քաղաքաժինների օրգաններ[24]։ Ազգային փոքրամասնությունների համար հրատարակվում էին ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Կենտգործկոմի օրգան «Կզըլ շաֆակ» (ադրբեջաներեն), «Ռյա թաղա» (քրդերեն, առաջին համարը լույս տեսավ 1930 թ. մարտի 25-ին) թերթերը։ 1934 թ. նշվեց «Կզըլ շաֆակ»-ի տասնամյակը։ 1937 թ. այն վերանվանվեց «Կոմունիստ», իսկ Հայրենական պատերազմի նախօրյակից կրում էր «Սովետ էրմանիստանի» անունը։

Նոր շրջանների հետ միասին ստեղծվում էին նոր օրգաններ։ Այսպես, 1938 թ. փետրվարին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց 11 նորաստեղծ շրջաններում թերթեր ունենալու մասին[25]։ Նույն թվականի ապրիլին Հայաստանում լույս էր տեսնում 27 անուն շրջանային թերթ։ Երեք սովխոզային քաղաքաժիններ հրատարակում էին իրենց օրգանները[26]։

---

24 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1933 թ. մայիսի 5։

25 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 26, գ. 26, թ. 94։

26 Տե՛ս նույն տեղում, գ. 31, թ. 115։

* * *

Կոլտնտեսային շինարարության նոր խնդիրներին համապատասխան վերակառուցվեց նաև իշխանության տեղական մարմինների՝ գյուղսովետների և նրանց սեկցիաների ու հանձնաժողովների գործունեությունը։ Նրանց կարևոր խնդիրը դարձավ կոլտնտեսությունների ամրապնդումը, գյուղատնտեսության զարգացումը, կոլտնտեսային և սովետական լայն ակտիվի կազմակերպումն ու համախմբումը կուսակցության շուրջը։

1934 թ. տեղի ունեցան սովետների հերթական ընտրությունները։ Գյուղսովետների ընտրություններին մասնակցելու իրավունք ուներ մոտ 400 հազար մարդ, որից քվեարկությանը մասնակցեց մոտ 308 հազարը կամ ընտրական ձայնի իրավունք ունեցողների 77,4 տոկոսը, նախորդ ընտրությունների (1931 թ.) 62,8 տոկոսի դիմաց։ Կանանց մասնակցությունը 43,2-ից բարձրացավ 64,9 տոկոսի։ Ընտրողների ակտիվության այդպիսի վերելքը հիմնականում կոլեկտիվացման զարգացման և կոլտնտեսական մասսաների ու գյուղի մյուս աշխատավորների քաղաքական գիտակցության բարձրացման արդյունք էր։ Ընտրական ձայնից զրկված անձանց թիվը 15.215-ից իջել էր 6855-ի, որը համապատասխանաբար կազմում էր 3,3 և 1,7 տոկոս։ Ձայնազուրկների թվի այդպիսի մեծ նվազումը պետք է բացատրել կուլակության կրճատումով։

Նորընտիր 550 գյուղսովետներն ունեին 18.123 անդամ, որից կանայք կազմում էին 18,8 տոկոսը։ Կոլտնտեսականների տեսակարար կշիռը բարձրացել էր 62,1 տոկոսի, նախորդ ընտրությունների 25,7 տոկոսի դիմաց։ Սովետների և նրանց ղեկավարության մեջ կոլտնտեսականների մասնակցությունը բավական բարձր էր կոլեկտիվացման մակարդակից (47,3 տոկոս)։ Դա նշանակում է, որ գյուղի հասարակական-քաղաքական կյանքում կոլտնտեսականները դարձել էին իշխող՝ գյուղի բնակչության մեջ դեռևս մեծամասնություն կազմող անհատական տնտեսությունների նկատմամբ։ Կոմունիստները և կոմերիտականները, որոնք ղեկավարում էին գյուղի հասարակական-քաղաքական կյանքը և իրենց շուրջն էին համախմբել կոլտնտեսականների ու մյուս աշխատավոր գյուղացիների լայն զանգվածները, կազմում էին գյուղսովետների անդամների մոտ 45 տոկոսը, 1931 թ. 37,8 տոկոսի դիմաց[27]։ Գյուղսովետների կազմում ընտրվել էին բավականին ռուս և ազգային

---

27 Տե՛ս ՄԱԻ ՀՅԱԱ, ֆ. 1, ց. 22, գ. 313, թ. 120։ Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», էջ 239։

փոքրամասնությունների ներկայացուցիչներ (ադրբեջանցիներ, քրդեր, հույներ և ուրիշներ), որոնց տեսակարար կշիռը կազմում էր 17,5 տոկոս։ Նրանցից գյուղսովետի նախագահ էր ընտրվել 165 և շրջգործկոմի նախագահ՝ 3, իսկ հանրապետության Կենտգործկոմի կազմում՝ 42 մարդ[28]։

Գյուղական սովետներին կից կազմակերպվել և գործում էին ավելի քան 3000 սեկցիաներ, 23 հազարից ավելի անդամներով, այդ թվում մոտ 4 հազար կին։ Դեպուտատական խմբեր գոյություն ունեին կոլտնտեսություններին, սովխոզներին և մեքենա-տրակտորային կայաններին կից՝ 572 խումբ, ավելի քան 9 հազար անդամներով, որից ավելի քան 2 հազարը կանայք էին։

Այսպիսով, գյուղի տասնյակ հազարավոր աշխատավորներ, որոնց մեծամասնությունը կոլտնտեսականներ էին, մասնակցում էին պետական իշխանության կառավարմանը, ակտիվ դեր կատարում սովետական իշխանության և կոմունիստական կուսակցության որոշումների իրականացման գործում, ինչպես նաև շահագործող դասակարգերի մնացորդների վերացման պայքարում։

1935 թ. հունվարին տեղի ունեցավ հանրապետության Սովետների VIII համագումարը, որին ակտիվորեն մասնակցեցին նաև կոլտնտեսային գյուղացիների ու աշխատավոր մենատնտեսների ներկայացուցիչները։ Համագումարում վճռական ձայնի իրավունքով ներկայացված էին 543 պատգամավորներ[29]։ Համագումարում ելույթ ունեցան կոլտնտեսային գյուղի պատվիրակներ Անիկ Կարապետյանը (գյուղսովետի նախագահ, Ղամարլուի շրջան), Ա. Բաղդասարյանը (Վեդու շրջանի Ղարախաչի կոլտնտեսություն), Մացակ Պապյանը (Ստեփանավանի կոլտնտեսության նախագահ), Գեորգ Սարգսյանը (Կիրովականի շրջան), Միրզա Ասկյարովը (Բասարգեչարի շրջան), Գոգն Ջանգոյին (Թալինի շրջան) և ուրիշներ։ Նրանք խոսեցին գյուղատնտեսությունը զարգացնելու, կոլտնտեսություններն ամրապնդելու, գյուղի կուլտուրական պահանջ-

---

28 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 22, գ. 246, թ. 5։

29 С. Хармандарян, К. Худавердян, Съезды Советов Армении. 1922—1937. Ереван, 1963, стр. 182. Համագումարը քննարկեց նաև գյուղի համար կարևոր նշանակություն ունեցող հետևյալ հարցերը. ՀՍՍՀ կառավարության հաշվետվությունը (զեկուցող՝ ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյան), հողժողկոմատի զեկուցումը անասնապահության զարգացման խնդիրների մասին (զեկուցող՝ ժողկոմ Վ. Մամիկոնյան), կուլտուրական շինարարության հարցերը (զեկուցող՝ լուսժողկոմ Ա. Եղիազարյան)։

ների և այլ խնդիրների մասին[30]։ Համագումարը ողջունեցին Ղամարլուի շրջանի և Վաղարշապատի շրջանի Փարաքար ու Սամաղար գյուղերի հարվածային կոլտնտեսականները, որոնք աճեցրել էին լավ բերք։ Բասարգեչարի շրջանի Գյոդակբուլաղ (Կարճաղբյուր) գյուղի կոլտնտեսականները համագումարի պատգամավորների անունով ուղարկած նամակում պատմում էին այն մասին, թե ինչպես են կատարում լեռնային շրջանների տնտեսական դրությունը բարելավելու մասին կուսակցության որոշումները[31]։

Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության քաղաքական ակտիվությունը վառ կերպով դրսևորվեց հատկապես հաղթանակած սոցիալիզմի սահմանադրության նախագծի քննարկման և ընդունման ժամանակ (1936 թ.)։ Հայաստանում միութենական նոր սահմանադրության նախագծի քննարկմանը մասնակցեց 400 հազար մարդ։ Հանրապետության Սովետների IX արտակարգ համագումարում սոցիալիստական գյուղի ներկայացուցիչները մեծ խանդավառությամբ արտահայտվեցին սոցիալիզմի երկրի և հատկապես գյուղի հաղթանակների ու նոր սահմանադրության նշանակության մասին։ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության ներկայացուցիչներ Մացակ Պապյանը, Կալիփսե Դարբինյանը, Թանկագին Մովսիսյանը և ուրիշներ սովետական բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության առաջավոր մարդկանց հետ միասին բախտ ունեցան մասնակցելու միութենական Սովետների արտակարգ VIII համագումարին, որն ընդունեց Սովետական Միության նոր սահմանադրությունը, սովետների երկրի հիմնական օրենքը։ Այն վավերացրեց սոցիալիզմի հաղթանակը Սովետական Միությունում, կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի ավարտը։ Սովետական պետությունը, որն աշխարհում պրոլետարիատի դիկտատուրայի միակ երկիրն էր այն ժամանակ, կապիտալիստական շրջապատման պայմաններում սեփական ուժերով կարողացավ հաղթահարել ներքին բուրժուազիային, վերացնել բոլոր շահագործող դասակարգերին և ապահովել սոցիալիզմի հաղթանակը։ Դա սոցիալիստական հասարակության կառուցումն էր հիմնականում։

Նոր սահմանադրությամբ արձանագրված ազատ, ուղղակի և հավասար ընտրական սկզբունքի համաձայն 1937 թ. դեկտեմբերի 12-ին

---

30 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. հունվարի 11, 12 և 14-ի համարները։

31 Տե՛ս նույն տեղում։

տեղի ունեցան ԽՍՀՄ Գերագույն սովետի ընտրությունները։ Համկ(բ)Կ Կենտկոմը հանդես եկավ բոլոր ընտրողներին ուղղված դիմումով, կոչ անելով միահամուռ քվեարկել կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին։ Միութենական Գերագույն սովետի դեպուտատներ ընտրվեցին Հայաստանի սոցիալիստական գյուղի առաջավորներ Խաչատուր Սարգսյանը (Ախտալի ՄՏԿ), Կալիփսե Կարապետյանը (Նորագուղի կոլտնտեսություն), Այդին Մամեդովը (Ղարաղոյունի՝ Ազիզլուի կոլտնտեսություն), Բենիամին Ալեքսանյանը (Խզնաուզ՝ Արագած գյուղի կոլտնտեսության նախագահ), Ավետիք Բաբուրյանը (Մելիքգյուղի՝ Ծաղկավանի կոլտնտեսություն), Ծատուր Ծատուրյանը (Փոքր Ղարաքիլիսայի՝ Աղստանի կոլտնտեսություն), Հովհաննես Հովհաննիսյանը (Ղամարլուի ՄՏԿ, հանրապետության Կենտգործկոմի անդամ), Մաթևոս Թամրազյանը (Ջարխեջի՝ Կույբիշևի կոլտնտեսություն) և ուրիշներ։

Հանրապետության Գերագույն սովետում, որի ընտրությունները կայացան 1938 թ. հունիսի 12-ին, ընտրվեց 256 դեպուտատ, որից բանվորներ էին 56-ը՝ կոլտնտեսականներ՝ 145-ը և ծառայողներ՝ 55-ը։ Կոլտնտեսականներից 18-ը կոլտնտվարչությունների նախագահներ էին, 7-ը տրակտորիստներ[32]։ Նույն թվականի հուլիսին Հայաստանի նորընտիր Գերագույն սովետի առաջին նստաշրջանի կողմից ընտրված Գերագույն սովետի նախագահության նախագահ ընտրվեց (1937 թ. հոկտեմբերից այդ նույն պոստում պաշտոնակատար) Ստեփանավանի կոլտնտեսության նախկին նախագահ, ապա Ստեփանավանի շրջգործկոմի նախագահի տեղակալ Մացակ Պապյանը։

Մեկ տարի անց, 1939 թ. դեկտեմբերի 24-ին կայացան աշխատավորների դեպուտատների տեղական սովետների (շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային) ընտրությունները։ Միայն գյուղական սովետներում ընտրվեց 9425 դեպուտատ[33] (ինքը գյուղական ընտրական օկրուգներում տեղի ունեցան լրացուցիչ ընտրություններ՝ հիմնական ընտրությունների ժամանակ դեպուտատության թեկնածուների կողմից ընտրողների ձայների պահանջվող տոկոսը չստանալու պատճառով)։

Այսպիսով, սոցիալիզմի հաղթանակի, նոր սահմանադրության ընդունման և սովետական դեմոկրատիայի զարգացման շնորհիվ ավելի

---

32 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1938 թ. հունիսի 15-ի և հուլիսի 14-ի համարները։

33 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1939 թ. դեկտեմբերի 28։

աշխուժացավ և ծավալվեց գյուղական սովետների գործունեությունը, ավելի մեծ թվով կոլտնտեսականներ ներգրավվեցին իշխանության տեղական, ինչպես նաև բարձրագույն մարմիններում։

2. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և երկրի ինդուստրացումը ուղեկցվում էր կուլտուրական շինարարության ծավալմամբ։ Կուլտուրական հեղափոխության իրականացումը սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի բաղկացուցիչ մասն էր, ուստի կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը հետևողականորեն առաջ էին տանում կուլտուրական շինարարության գործը ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում։ Վ. Ի. Լենինը կոոպերատիվ պլանի կենսագործումը և սոցիալիզմի հաղթանակը անմիջապես պայմանավորում էր կուլտուրական հեղափոխությամբ։ «Կոոպերացիայի մասին» իր նշանավոր աշխատության մեջ Վ. Ի. Լենինը նշել է, որ լիակատար կոոպերացման դեպքում մենք արդեն երկու ոտքով կանգնած կլինենք սոցիալիստական հողի վրա։ «Բայց, —շարունակում է նա,— լիակատար կոոպերացման այս պայմանն ընդգրկում է գյուղացիության (հենց գյուղացիության, իբրև վիթխարի մասսայի) այնպիսի կուլտուրականություն, որ այդ կոոպերացումն անհնարին է՝ առանց մի ամբողջ կուլտուրական հեղափոխության»[34]։

30-ական թվականներին ավելի լայն պայմաններ ստեղծվեցին կուլտուրական շինարարության ծավալման համար։ Կուլտուրական հեղափոխության նոր փուլում փոխվեցին նաև կուլտուրական ճակատի աշխատանքի մեթոդներն ու ձևերը։ Գյուղի սոցիալիստական շինարարության արագացումը պահանջում էր արագացնել նաև կուլտուրական շինարարության տեմպերը։ Գյուղատնտեսության կոլեկտիվացմանը և նոր, սոցիալիստական գյուղին հարկավոր էին խոշոր տնտեսությունները ղեկավարելու ընդունակ, գյուղատնտեսական տեխնիկային տիրապետող կադրեր, գրագետ աշխատավորներ։

30-ական թվականներին ևս անգրագիտության վերացման համար պայքարը շարունակում էր մնալ կուլտուրական ճակատի կարևոր ուղղություններից մեկը։ Անգրագետները և կիսագրագետները դեռևս բնակչու-

---

34 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 365։

թյան կեսից ավելին էին ինչպես բաղաքում, այնպես էլ գյուղում։ 1926 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանի գյուղում գրագիտության մակարդակը հասնում էր միայն 30,5 տոկոսի[35]։

Անգրագիտության վերացման ուղղությամբ էական տեղաշարժ կատարվեց ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբում՝ 1930 թ., երբ մտցվեց ընդհանուր պարտադիր տարրական ուսուցումը։ Դրանով լուծվեց գյուղացահասակ բնակչության անգրագիտության վերացման խնդիրը։ Այնուհետև ամբողջ ուշադրությունը կենտրոնացվեց մեծահասակ բնակչությանը գրագետ դարձնելու վրա։ Այդ հարցը պարբերաբար քննարկվում էր կուսակցական և սովետական ղեկավար մարմինների կողմից և միջոցառումներ էին ձեռնարկվում անգրագիտության վերացման տեմպերը արագացնելու համար։ Սակայն, պետք է նշել, որ երբեմն ընդունվում էին ոչ ռեալ որոշումներ անգրագիտությունը վերացնելու ժամկետների վերաբերյալ[36]։ Իրականում անգրագիտության լրիվ վերացման ընթացքը ձգձգվեց և տևեց մինչև 30-ական թվականների վերջը։

1930/31 ուսումարում Հայաստանում գործում էր 2651 լիկբեզյան, մոտ 79 հազար սովորողներով, որն զգալի չափով բարձր էր նախորդ տարվա ցուցանիշներից[37]։ 1934 թ. վերակազմակերպվեց անգրագիտության վերացման գործը։ Լիկբեզյանների փոխարեն ստեղծվեցին մեծահասակների հանրակրթական դպրոցներ։ Քաղաքներում և քաղաքատիպ վայրերում նրանք երեկոյան էին (երեկոյան), իսկ գյուղական վայրերում՝ հոգեբան (երեկոյան)[38]։

1934 թ. լրացավ Հանրապետության «Կորչի անգրագիտությունը ընկերության» տասն տարին։ Ընկերության նախագահ, ՀՍԽՀ Կենտգործկոմի քարտուղար Ռ. Դաշտոյանը «Կուլտուրական հեղափոխության տասնամյակը» հոդվածում նշում էր այն վիթխարի նվաճումները, որ ձեռք էին բերվել Հայաստանում, այն մասին, որ շուտով կավարտվի ամբողջ բնակչության համատարած գրագիտության ուսուցումը[39]։

---

35 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1970 года, т. III. Уровень образования населения СССР», М., 1972, стр. 570.

36 Տե՛ս «ՀՍԽՀ օր. կարգ. ժողովածու», 1930, № 6, հոդ. 106։ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, դ. 1135, թ. 68, 75 (ՀՍԽՀ Կենտգործկոմի որոշումները)։ ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 1, ց. 19, դ. 18, թ. 178 (ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը)։

37 Տե՛ս ՄԼԻ ՀՖԱ, ֆ. 1, ց. 17, դ. 166, թ. 43—46։

38 Տե՛ս «ՀՍԽՀ օր. և կարգ. ժողովածու», 1934, № 11, հոդ. 118 (ՀՍԽՀ ԺողԿոմխորհի 1934 թ. հոկտեմբերի 21-ի որոշումը)։

39 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1934 թ. դեկտեմբերի 26։

ՀՍԽՀ լուսժողկոմատի տվյալներով սովետական իշխանության գոյության 15 տարում անգրագիտության վերացման ցանցով անցել էր 845 հազար մարդ, որի մոտավորապես չորս հինգերորդը բաժին էր ընկնում 1929/30—1935/36 ուսումնական տարիներին, երբ սոցիալիստական շինարարությունը ծավալվել էր ամբողջ ճակատով։ Լուսժողկոմատի կողմից անցկացված հատուկ հաշվառման տվյալներով, 1935 թ. հուլիսին Հայաստանում դեռևս կար 87,6 հազար անգրագետ և 77,4 հազար կիսագրագետ[40]։ Հանրապետության կառավարությունը 1936 թ. վերջերին որոշում ընդունեց մեծահասակ ազգաբնակչության անգրագիտության և կիսագրագիտության վերացումը արագացնելու մասին[41]։ Անգրագետների թիվը դեռևս զգալի էր նաև սովետական մյուս հանրապետություններում, ուստի 1936 թ. սկզբին Համ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողկոմխորհը որոշում կայացրին անգրագետների և կիսագրագետների ուսուցման աշխատանքների մասին։

1935—1936 թթ. հանրապետության կուսակցական կազմակերպությունները առանձին միջոցառումներ իրականացրին կոմունիստների շրջանում անգրագիտությունը շտապ վերացնելու համար։ 1936 թ. մայիսին Հ(բ)Կ Կենտկոմը քննարկեց անգրագիտության վերացման հարցը Հոկտեմբերյանի և Մարտունու շրջաններում։ Համարելով այն քաղաքական կարևոր հարց, Կենտկոմը շրջանային կուսակցական և սովետական կազմակերպություններին հանձնարարեց ամեն կերպ արագացնել անգրագիտության վերացումը։ Իսկ ՀՍԽՀ Կենտգործկոմը սահմանեց նոր ժամկետ՝ 1937 թ.։ Այդ նույն թվականին պարզվեց, որ անգրագետների թիվը ավելին է, քան հայտնի էր մինչ այդ և որ նրանց համեմատաբար փոքր մասն էր ընդգրկված անգրագիտության վերացման դպրոցներում։ Նրանց թիվը մեծ էր հատկապես ազգային փոքրամասնությունների մեջ, ուստի զարկ տրվեց համապատասխան մանկավարժական կադրերի պատրաստմանը։ 1938 թ. վերջին Հ(բ)Կ Կենտկոմը որոշեց մեծահասակների դպրոցներում ընդգրկել 18—50 տարեկան բոլոր անգրագետներին (36 հազար) և կիսագրագետներին (62 հազար)։ Սակայն այդ որոշումը անբավարար կիրառվեց։ 1939 թ. մարդահամարը ճշտեց և պարզեց, որ Հայաստանում դեռևս կան մոտ 97 հազար անգրագետներ, որոնց գրագիտության ուսուցումը Հ(բ)Կ Կենտկոմը հանձնարարեց 1940/41 ուստարվա խնդիրը։

---

40 Տե՛ս ՄԼԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 24, գ. 358, թ. 57—66։

41 Տե՛ս նույն տեղում, գ. 362, թ. 22—24։

Մարդահամարի տվյալներով 1939 թ. Հայաստանում բնակչության գրագիտությունը կազմում էր 83,9, այդ թվում գյուղական բնակչությանը 80,1 տոկոս (տղամարդիկ՝ 90,9 և կանայք՝ 68,8 տոկոս)։ Այսպիսով, կարելի է նշել, որ 30-ական թվականների վերջերին հանրագիտության քաղաքներում և գյուղերում բնակչության անգրագիտությունը հիմնականում վերացվել էր։ Դա կուլտուրական հեղափոխության կարևոր բնագավառի նվաճումն էր, որը ձեռք բերվեց պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, սովետական իշխանության պայմաններում։ Այդ նվաճումն ավելի ակնառու դարձնելու համար նշենք, որ սովետական իշխանության հաստատման պահին, 1920 թ., Հայաստանում գրագիտությունը կազմում էր միայն 15,3, իսկ գյուղում՝ 8,5 տոկոս (տղամարդիկ՝ 14,2 և կանայք՝ 2,7 տոկոս)։ Ավելացնենք, որ նախասովետական Հայաստանում 1897 թ. մարդահամարի տվյալներով, գրագետ էր 100 մարդուց 9-ը, իսկ գյուղում՝ 5—6-ը[42]։

Անգրագիտության վերացումը կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության մեծ նվաճումն էր։

30-ական թվականներին մեծ վերելք ապրեց սովետական դպրոցական սիստեմը։ Առաջին մեծ նվաճումը ընդհանուր պարտադիր տարրական կրթությանն անցնելն էր, որն իրականացվեց 1930/31 ուսարում։ 1932 թ. արդեն պարտուսի ցանցում ընդգրկված էր դպրոցահասակ երեխաների 96 տոկոսը[43]։ Պարտադիր տարրական կրթության տարածումից հետո հեշտացավ և հնարավոր դարձավ 7-ամյա կրթությանն անցնելը։ Շուտով հանրապետության լուսժողկոմատը որոշում ընդունեց քաղաքներում և բամբակագործական շրջաններում 7-ամյա պարտադիր կրթություն մտցնելու մասին[44]։ Ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում սահմանվեց հանրակրթական դպրոցի երեք տիպ՝ տարրական, 7-ամյա՝ ոչ լրիվ միջնակարգ և 10-ամյա՝ միջնակարգ։ Դպրոցական լուսավորության գործը զարգանում էր ոչ միայն ծավալով, այլև խորությամբ, այսինքն որակի բարձրացման, մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության կատարելագործման տեսակետից։ 30-ական թվականներին մեծ աշխատանք կատարվեց կայուն և որակյալ դպրոցական ծրագրեր ու դասագրքեր ստեղծելու, պոլիտեխնիկական կրթության անցնելու,

---

42 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1970 года, т. III. Уровень образования населения СССР», стр. 570.

43 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1686, թ. 103։

44 Տե՛ս *Կ. Խուդավերդյան*, Культурная революция в Советской Армении. Ереван, 1966, стр. 192.

ուսուցիչների նյութական-կենցաղային դրությունը բարելավելու ուղղությամբ։ Այդ ամենը բխում էր սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, սոցիալիստական շինարարությունը գրագետ և որակյալ կադրերով ապահովելու շահերից։

1929—1941 թթ. պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից (առանց կոլտնտեսությունների) կառուցվեց և շահագործման հանձնվեց 843 դպրոցական շենք, որից 778-ը՝ գյուղում, 128,3 հազար աշակերտական տեղով[45]։ 1940/41 ուսումնական տարում Հայաստանի գյուղում գործում էր 1020 դպրոց, որից 235-ը տարրական, 551-ը 7-ամյա և 234-ը միջնակարգ, ավելի քան 243 հազար սովորողներով։ Դպրոցներում աշխատում էր 8101 դասատու։ Նախասովետական շրջանում (1914/15 ուստարի) Հայաստանի գյուղում կար միայն մեկ 7-ամյա դպրոց, իսկ մյուսները տարրական էին։ Սովետական իշխանության տարիներին գյուղական դպրոցների սովորողների և դասատուների թիվն ավելացել էր 9 անգամ[46]։ 1936 թ. բարձրացվեց ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը։ Գյուղական դպրոցներում կատարած երկարամյա աշխատանքի և մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության բնագավառում ունեցած աջի ընկնող գործունեության համար 1939 թ. միութենական կառավարությունը պարգևատրեց հանրապետության մի խումբ ուսուցիչներ։ Բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի արժանացան չորս մարդ։ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեցին 8, պատվո նշան շքանշանով՝ 9, աշխատանքային արիության համար մեդալով՝ 10 և աշխատանքային գերազանցության համար մեդալով՝ 21 մարդ։

Գյուղական ուսուցչությունը գյուղական մտավորականության ամենաբազմամարդ և առաջավոր ջոկատն էր։ Մեծ էր նրա ծառայությունը ոչ միայն մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության, այլև կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական գիտակցության զարգացման բնագավառում։

* * *

Կոլեկտիվացման վերելքը և նրա ավարտումը մեծ պահանջ էին ներկայացնում կադրերի նկատմամբ։ Ուստի երկրորդ հնգամյակի ընթացքում, ինչպես նաև հետագայում մեծ աշխատանք տարվեց սոցիալիս-

---

45 Տե՛ս «Армения в единой семье народов СССР», Ереван, 1972, стр. 140.

46 Տե՛ս «Культурное строительство Армянской ССР». (Статистический сборник), Ереван, 1962, стр. 18—19.

տական գյուղատնտեսության կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ։ Բարձրագույն ուսումնական հաստատությունները, տեխնիկումները, գյուղատնտեսական դպրոցները թողարկեցին ավելի մեծ թվով մասնագետներ։ Դասընթացների միջոցով պատրաստվում էին մասսայական կադրեր։

1933 թ. մարտին ՀամԿ(բ)Կ Անդրերկրամը որոշում ընդունեց գյուղական կադրերի ստուգման ընթացքի մասին։ Կադրերի հոսունությունը վերացնելու համար հանձնարարվեց շրջանային և ստորին ակտիվի ու խոշոր կոլտնտեսությունների նախագահների պաշտոնները մտցնել հանրապետական կենտկոմների նոմենկլատուրայի մեջ։ Կադրերի պատրաստումը արագացնելու համար հանձնարարվեց որոշ կրճատում կատարել բուհերի, տեխնիկումների և բանֆակների ուսման տևողության մեջ։ Շրջկոմներում մտցվեց կադրերի գծով աշխատողի հաստիք։ Կոլտնտեսային հաշվային աշխատողների որակավորումը բարձրացնելու նպատակով նախատեսվում էր բացի կարճատև դասընթացներից օգտագործել նաև սովետական-կուսակցական դպրոցները։ Անդրերկրամի մի այլ որոշման հիման վրա ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1933 թ. մայիսին կազմակերպեց հանձնաժողով՝ մեքենատրակտորային կայանների և սովխոզների կադրերն ստուգելու, դրանք դասակարգային խորթ տարրերից մաքրելու և կուսակցական-կոմերիտական կադրերով ամրապնդելու համար։ 1933/34 ուսումնական տարվանից ավելացվեց ընդունելությունը կոլտնտեսությունների հանրապետական միամյա դպրոցում։ Դպրոցն ուներ բրիգադավարների ու ֆերմաների վարիչների, հաշվային աշխատողների, կոլտնտեսությունների ու շրջանային կազմակերպիչների բաժիններ։

1933 թ. իրենց աշխատանքները վերակառուցեցին սովետական-կուսակցական դպրոցները։ Նրանք սկսեցին պատրաստել նաև կոլտնտեսային կադրեր։ Վերակառուցման նպատակն էր բարելավել կադրերի պատրաստումը և բավարարել գյուղի կուսակցական ու հասարակական կազմակերպությունների և սովետական կադրերի պահանջը։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ (1933 թ. օգոստոսի 21) սովետական-կուսակցական դպրոցների (նրանց կուսակցական, սովետական և քաղուսավարական բաժիններով) երկամյա ուսման փոխարեն մտցվեց ութամյա ուսուցում։ Շրջկոմների և կուսկոմիտեների ղեկավար կադրեր և մասնագետներ պատրաստելու համար գործող կուսակտիվի շրջանային դասընթացների փոխարեն կազմակերպվեցին մարքսիզմ-լենինիզմի մեկամյա դասընթացներ։ Սովետական-կուսակցական դպրոցներ

բոցներ էին գործում Երևանում, Ստեփանավանում, Ղափանում, Վաղարշապատում և Նոր Բայազետում։ 1936 թ. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումով այդ դպրոցները ենթարկվեցին նոր վերակառուցման։ Նրանք դարձան կոլտնտեսային ղեկավար կադրերի որակավորման բարձրացման մշտապես գործող դպրոցներ։ 1938 թ. գործում էր այդպիսի 5 դպրոց, ուր ընդգրկված էին կոլտնտեսությունների նախագահներ, անասնապահական ֆերմաների վարիչներ ու բրիգադավարներ։ Այդ դպրոցներն ավարտել էին 405 նախագահներ, 395 ֆերմայի վարիչներ և 559 բրիգադավարներ[47]։

Կարևոր նշանակություն ուներ մեխանիզատորական կադրերի պատրաստումը՝ քանի որ արագ տեմպերով բարձրանում էր գյուղատնտեսության մեքենայացման մակարդակը, ավելանում էր ՄՏԿ-ների թիվը, ընդլայնվում նրանց պարկը։ Սոցիալիստական արդյունաբերությունը սկսել էր թողարկել տարբեր մակնիշի տրակտորներ, կոմբայններ, ավտոմեքենաներ և այլ բարդ տեխնիկա, ուստի հարկավոր էր պատրաստել դրանք վարող ու նորոգող մասնագետներ, բարձրացնել նրանց որակավորումը։ Եթե ժողովրդական անտեսության վերակառուցման կապակցությամբ կոմունիստական կուսակցությունը հռչակեց «Տեխնիկան է որոշում ամեն ինչ» լոզունգը, ապա տեխնիկական վերակառուցման հարցը լուծելուց հետո կուսակցությունը հռչակեց «Կադրերն են որոշում ամեն ինչ» լոզունգը, կադրեր, որոնք կարողանային թամբել տեխնիկան և օգտագործել այն ինչպես պետք է։

1934 թ. սկզբին ՀԿ(բ)Կ Կենտկոմը խնդիր դրեց պատրաստել 450 նոր տրակտորիստներ՝ ինչպես նոր կազմակերպվող, այնպես էլ գործող ՄՏԿ-ների համար, ինչպես նաև 90 տրակտորային բրիգադավարներ։ Դասընթացները կազմակերպվելու էին ՄՏԿ-ներում, ընդգրկելով նաև կանանց։ Կադրերի պատրաստումը կատարվում էր գրեթե բոլոր ՄՏԿ-ներում, սակայն հիմնական բաղան հանդիսանում էր Վաղարշապատի տրակտորային դպրոցը։ Այստեղ սկսվեց նաև կոմբայնավարների պատրաստումը։ 1936 թ. կոմբայնի մասնագետների պատրաստումը փոխադրվեց Լենինական և կազմակերպվեց կոմբայնավարների ինքնուրույն դպրոց։ Այնուհետև նրան միացվեց նաև Վաղարշապատի տրակտորային դպրոցը և ստեղծվեց միացյալ դպրոց։ Նկատի ունենալով վերջինիս ապահովվածությունը որակյալ դասատուական ինժեներա-տեխ-

---

47 Տե՛ս Գր. Հարությունյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ XI համագումարին, Երևան, 1938, էջ 58։

նիկական կադրերով և նյութական բազայով, նրան միացվեց նաև Երևանի ավտոմարտական դպրոցը (1940 թ. մեխանիզատորների հանրապետական դպրոցը Լենինականից փոխադրվեց Երևան)։

Հանրապետության գյուղատնտեսական բուհերը և տեխնիկումները շարունակում էին Բողարիել ավելի մեծ թվով բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետներ։ Բարձրագույն կրթությամբ կադրեր էին պատրաստում Երևանի գյուղատնտեսական և անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտները։

1933 թ. գյուղատնտեսության տարբեր մասնագիտությունների գծով Հայաստանում կար 16 տեխնիկում։ Միայն Երևանում գործում էր 7 տեխնիկում, որոնցից մեկը՝ ոռոգաջրանական։ Տեխնիկումներ կային՝ Ղուրդուղուլիում, Օշականում, Լենինականում, Ստեփանավանում, Նոր Բայազետում, Գորիսում, Ղարաքիլիսայում և Իջևանում։ 1934. թ. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Կազմբյուրոյի որոշմամբ վերացվեց գյուղատնտեսական տեխնիկումներում մասնագիտությունների շատ խիստ մանրացումը և հաստատվեցին համեմատաբար խոշոր մասնագիտություններ։ Այդ վերակառուցման նպատակն էր ավելի ճիշտ և նպատակահարմար օգտագործել տեխնիկումների շրջանավարտներին և հեշտացնել կադրերի պրոբլեմի լուծումը։ 1935 թ. սեպտեմբերին ՀՍԽՀ ԺողԿոմխորհը որոշում ընդունեց անասնաբուծական մասնագետներին ըստ իրենց մասնագիտության օգտագործելու մասին։ Մի շարք տեղերում զգալի թվով անասնաբույծ տեխնիկներ աշխատում էին այլ հիմնարկներում, իսկ գյուղատնտեսությունը կադրերի կարիք էր զգում։ Որոշվեց նրանց ազատել աշխատանքից և գործուղել կոլտնտեսություններն ու սովխոզները։

1932 թ. կազմակերպվեց կադրերի պատրաստման նոր օջախ։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ կոմունիստական համալսարանները վերակառուցվեցին բարձրագույն գյուղատնտեսական դպրոցների։ Այդպիսի դպրոց բացվեց նաև Երևանում։ Նա պատրաստում էր սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպիչներ՝ ՄՏԿ-ների, սովխոզների, կոլտնտեսությունների և շրջանային կուսսովետական մարմինների ղեկավար աշխատողներ։ Հայաստանի կոմունիստական բարձրագույն դպրոցն ուներ երկու սեկտոր, երկու բաժնով՝ կոլտնտեսային-սովխոզային-մեքենատրակտորային կայանների շինարարության (երկամյա) և կուսակցական-սովետական շինարարության (եռամյա)։ 1935 թ. հունվարին դպրոցը տվեց իր առաջին շրջանավարտները՝ 120 մարդ։ Նրանցից 55-ը ուղարկվեցին ղեկավար աշխատանքի կուսակցական և սովետական գծով, 25-ը՝ կոլտնտեսությունները, որպես նախագահ։

Հանրապետության բուհերը, տեխնիկումները և դպրոցները պատրաստում էին սոցիալիստական գյուղատնտեսության համար անհրաժեշտ մասնագետներ բոլոր գծերով ու մակարդակներով՝ դաշտավարներ, անասնաբույծներ, այգեգործներ, հողաշինարարներ, կոլտնտեսությունների ղեկավար աշխատողներ (նախագահներ, նրանց տեղակալներ, բրիգադավարներ, ֆերմաների վարիչներ), հաշվային աշխատողներ, մեխանիկներ, տրակտորիստներ, բարդ մեքենաների աշխատողներ, վարորդներ։

Առաջին և երկրորդ հնգամյակների ընթացքում հողժողկոմատի գծով պատրաստվեցին բուհերում՝ 1,5, տեխնիկումներում՝ 2,4, կոլտնտեսային-սովխոզային դպրոցներում՝ 7,5 հազար կադրեր։ Շարքային կադրերի թիվը հասնում էր 78,4 հազարի[48]։ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի մեծ մասի պատրաստումը բաժին էր ընկնում երկրորդ հնգամյակին։ Նախապատերազմյան տարիներին ևս պատրաստվեցին զգալի թվով կադրեր։ Տվյալներ կան երրորդ հնգամյակի առաջին երկու տարիների վերաբերյալ։ Ըստ այդ տվյալների 1938—1939 թթ. բուհական շրջանավարտների թիվը հասնում էր 500-ի։ Տեխնիկումներն ավարտել էին 600 և կոլտնտեսային-սովխոզային դպրոցները՝ 3,4 հազար մարդ, շարքային կադրերը 20,9 հազար[49]։

Սոցիալիստական հասարակության զարգացման նոր փուլում, որն սկսվեց երրորդ հնգամյակով, նոր խնդիրներ դրվեցին նաև կադրերի պատրաստման ու վերապատրաստման բնագավառում։ Սենց պահանջը բոլոր մասնագիտությունների և հատկապես այգեգործների, ինչպես նաև կադրերի որակի նկատմամբ։

1939 թ. դեկտեմբերին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց գյուղատնտեսության մասնագետների օգտագործումը բարելավելու միջոցառումների մասին։ Կադրերի օգտագործման բնագավառում խոշոր թերություններ կային նաև Հայաստանում։ Մեծաթիվ մասնագետներ էին կուտակվել Երևանում և մյուս քաղաքներում, որոնք խուսափում էին շրջաններն աշխատանքի մեկնելուց ու աշխատում էին այլ բնագավառներում։ Հատուկ հանձնաժողովի միջոցով Երևանում ցուցակագրվեց (մինչև 1940 թ. հունվարի 10-ը) 369 մասնագետ։ Նույն ամսում ՀԿ(բ)Կ Կենտկոմը նրանցից 106 մարդու ուղարկեց շրջանները մշտական աշխատանքի։ Միայն հողժողկոմատի 101 մասնագետներից շրջան մեկնեց

---

48 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», стр. 90.

49 Տե՛ս նույն տեղում։

40-ը։ Իսկ մարտ ամսին մեկնեց ևս 45 մարդ։ Նրանք համալրեցին և ամրապնդեցին կոլտնտեսությունները, սովխոզները, մեքենատրակտորային կայանները, հողբաժիններն ու հենակետերը։

Գյուղատնտեսական ինստիտուտի մի խումբ դասախոսներ ու գիտական աշխատողներ ևս կամավոր մշտական աշխատանքի մեկնեցին շրջանները և իրենց օրինակին հետևելու կոչով դիմեցին հանրապետության գյուղատնտեսական, անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտների, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի, գիտահետազոտական հիմնարկների գիտական աշխատողներին ու բոլոր գյուղատնտեսական մասնագետներին։ Կոչը անմիջապես ջերմ արձագանք գտավ։

Ի կենսագործումն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ միջնակարգ գյուղատնտեսական կրթության դպրոցներ կազմակերպելու մասին որոշման (1940 թ. հունիսի 5), ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշեց Հայաստանում կազմակերպել այդպիսի երկու դպրոց՝ Երևանում և Կիրովականում։ Միաժամանակ իրենց անարդյունավետության պատճառով փակվեցին տեխնիկ-դաշտավարների և անասնապահների հանրապետական միամյա և Երևանի կոլտնտեսային ղեկավար աշխատողների որակավորումը բարձրացնող դպրոցները։

1940 թ. հողժողկոմատի սիստեմում գործում էին 11 տեխնիկում, երեք հանրապետական դպրոց և 18 շրջանային կոլտնտեսային դպրոց։ Նրան հանձնվեցին նաև կոլտնտեսային ղեկավար կադրերի որակավորման 4 դպրոցները, որոնք ֆինանսավորվում էին միութենական բյուջեով։ Շրջանային դպրոցներում երրորդ հնգամյակի սկզբում ընդգրկված էր 14.512 մարդ[50]։

Երրորդ հնգամյակի տարիներին կազմակերպվեցին մի քանի նոր ՄՏԿ-ներ։ Գյուղատնտեսությունը համալրվեց տրակտորներով, կոմբայններով, կալսիչներով և այլ տեխնիկայով։ Աճեց նաև կադրերի պահանջը։ 1939 թ. համապատասխան դասընթացներն ու դպրոցներն ավարտեց 1175 մարդ (80 կոմբայնավար, 112 կոմբայնավարի օգնական, 45 բրիգադավար, բարդ մեքենաների 172 վարողներ, 106 վարորդ, 589 տրակտորիստ)։ Վերապատրաստվեցին մի քանի հարյուր մեխանիզատորներ։ 1940 թ. մարտին սովորողների թիվը հասնում էր 840-ի[51]։

---

50 Տե՛ս ՀԿ(բ)Կ XI համագումարի նշված հաշվետվությունը, էջ 57։

51 Տե՛ս ՀԿ(բ)Կ XIII համագումարի նշված հաշվետվությունը, էջ 52—53։

Կոմունիստական կուսակցությունը մեծ նշանակություն էր տալիս կին կադրերի պատրաստմանը գյուղատնտեսության բոլոր ճյուղերի և հատկապես մեքենայացման բնագավառի դծով։ 1939 թ. երկրի առաջավոր կին տրակտորիստները հանդես եկան առանց արտադրությունից կտրվելու տրակտորիստուհիների կադրեր պատրաստելու նախաձեռնությամբ։ Վերջինս զարգացնելու և իրականացնելու բնագավառում մեծ գործ կատարեցին հատկապես կոմերիտական կազմակերպությունները, իսկ հատուկ որոշում ընդունեցին միութենական հողժողկոմատը, ՀամԼԿԵՄ Կենտկոմը և սովխոզների ժողկոմատը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը մի քանի անգամ քննեց սույն որոշման կատարման ընթացքը և օգնեց կոմերիտական կազմակերպություններին այն մինչև վերջ կենսագործելու համար։ Մինչև 1940 թ. մարտը Հայաստանում առանց արտադրությունից կտրվելու տրակտոր վարելու մասնագիտությունը տիրապետել էր 550 կին, կոմերիտմիության պարտավորությամբ ստանձնած 700-ի փոխարեն[52]։ Նրանցից նոր մասնագիտությամբ աշխատում էր 97-ը։ Ուստի վերադաս մարմինների որոշմամբ շուտով նրանց մեծ մասը ստացավ համապատասխան աշխատանք։ «Ավելի շատ կին տրակտորիստներ» առաջնորդող հոդվածում «Խորհրդային Հայաստան» թերթը գրում էր, որ հանրապետությունում զգալի հաջողություններ են ձեռք բերվել, որ անհրաժեշտ է պատրաստել ավելի մեծ թվով տրակտորիստուհիների կադրեր[53]։

Կին կադրերի պատրաստումը, որը բարձրացնում էր նրանց դերը սոցիալիստական գյուղատնտեսության մեջ, ուներ նաև կարևոր քաղաքական նշանակություն։ Այն փաստորեն միաժամանակ պաշտպանական միջոցառում էր։ 1939 թ. սկսված երկրորդ համաշխարհային պատերազմը, որը ուժեղացրեց Սովետական Միության վրա հարձակվելու հնարավորությունը, պահանջում էր ունենալ տղամարդկանց փոխարինող կին կադրեր ժողովրդական տնտեսության, հասարակական-քաղաքական կյանքի և գիտության ու մշակույթի բոլոր բնագավառներում։

Վերակառուցում տեղի ունեցավ նաև շարքային կադրերի պատրաստման բնագավառում։ Այդ կապակցությամբ ընդունված ՀԿ(բ)Կ

---

52 «Խորհրդային Հայաստան», 1940 թ. մարտի 8։ Մի այլ փաստաթղթի տվյալներով 1939 թ. տրակտորիստների դասընթացներն ավարտել էին 492, իսկ մինչև 1940 թ. մարտի 10-ը ավարտելու էին ևս 342 կին։ Տե՛ս ՀԿ(բ)Կ XIII համագումարի նշված հաշվետվությունը, էջ 53։

53 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1940 թ. ապրիլի 18։

Կենտկոմի 1940 թ. նոյեմբերի 29-ի որոշման համաձայն շրջանային կոլտնտեսային դպրոցները վերակառուցվեցին միջշրջանային միամյա դպրոցների։ Հաստատվեց այդ դպրոցների մասնագիտությունների ցանկը։ Կենտկոմը պահանջում էր դպրոցներում ուշադրություն դարձնել կոլտնտեսուհիների ընդգրկման վրա։ Վերակառուցված դպրոցների ուսումնական պարապմունքներն սկսվելու էին 1940 թ. դեկտեմբերին։

Այսպիսով, 30-ական թվականներին և Հայրենական պատերազմի նախօրյակին, գյուղատնտեսության կոլեկտիվացման ծավալման և գյուղի սոցիալիստական վերակառուցումը ավարտելու հետ միաժամանակ տեղի էր ունենում սոցիալիստական գյուղատնտեսության կադրերի պատրաստումը։ Կադրերի պրոբլեմը հիմնականում լուծվեց գյուղի սոցիալական վերափոխման խնդիրը լուծելու հետ միաժամանակ։

1941 թ. հունվարի 1-ի տվյալներով հանրապետության կոլտնտեսություններն ունեին՝ 1309 կոլտնտեսության նախագահ և տեղակալ, անասնապահական ֆերմաների 1590 վարիչ, 594 զոոտեխնիկ և ֆելդշեր, 2346 անասնապահական բրիգադավար, 183 ագրոնոմ և ուռգման տեխնիկ, 3910 դաշտավարական և այգեգործական բրիգադավար, 1627 հաշվապահ ու հաշվետար, 8033 կթվոր, 4957 հովիվ, 420 վարորդ[54]։ Մեքենատրակտորային կայանների կադրերի ու մասնագետների հետ միասին նրանք կազմակերպում և ապահովում էին կոլտնտեսային արտադրությունը և կոլտնտեսային կյանքը։

Կոլտնտեսային գյուղի մեծագույն նվաճումը նրա մտավորականության ստեղծումն էր, որը կուլտուրական հեղափոխության հաղթանակի արդյունքն էր։ Սոցիալիստական գյուղի մտավորական գործիչներն էին կոլտնտեսության և գյուղսովետի ղեկավարները, դպրոցի դասատուները, ինժեներները, տեխնիկներն ու գյուղատնտեսները, անասնաբույծներն ու անասնաբույժները, բժիշկները, ակումբի ու խրճիթ-ընթերցարանի աշխատողները և ուրիշներ։

Նախասովետական Դարղալու գյուղը (Անաստասավան, այժմ Այգեզարդ, Ղամարլուի շրջան) չուներ ոչ մի գրագետ մարդ։ Իսկ 1938 թ. գյուղի դպրոցում սովորում էին դպրոցահասակ բոլոր երեխաները, 25 երիտասարդներ ուսանում էին միջնակարգ դպրոցներում ու տեխնիկումներում, 9-ը՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Գյուղում աշխատում էին 13 ուսուցիչներ, 11 բրիգադավարներ, 2 հաշվապահ, գյուղատնտես, անասնաբույժ, բուժակ, գինեգործ։ Գյուղը

---

54 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», стр. 89.

ավել էր 30 ուսուցիչ, 2 գյուղատնտես, 2 ճարտարապետ, մեկ բժիշկ, կարմիր բանակի հրամանատարներ և այլ մասնագետներ։ Նախասովետական Դարձալուում թերթը պատահականություն էր, իսկ 1938 թ. գյուղում ստացվում էր 7—8 հարյուր օրինակ թերթ ու ամսագիր։ Փարիզի կոմունայի անվան կոլտնտեսության 200 կոլտնտեսականներ կառուցել էին նոր և կահավորված տներ։ Գյուղն ուներ դպրոցի և ակումբի նոր շենքեր։ Բոլոր տներում վառվում էին Իլյիչի լամպերը[55]։

1938 թ. «Պրավդա» թերթը տպագրել է Ղամարլուի շրջանի Ղամարլու (Արտաշատ) գյուղի Սվերդլովի անվան կոլտնտեսության նախագահ Գուրգեն Բաբաջանյանի հոդվածը կոլտնտեսության նվաճումների և նրա մտավորականության մասին։ 1500 կոլտնտեսականներ ունեցող գյուղում կային մինչև 100 մտավորական։

Ղամարլուն Հայաստանի նշանավոր կոլտնտեսություններից էր։ 1938 թ. ստացել էր 22 հազար ցենտներ խաղող, 2200 ցենտներ բամբակ, մոտ հազար ցենտներ ծիրան, դեղձ և այլ մրգեր, 70 ցենտներ մեղր։ Կոլտնտեսության միայն դրամական եկամուտը կազմում էր մոտ 2,3 միլիոն ռուբլի[56]։

Հանրապետության գյուղերում մտավորականները մեծ դեր էին կատարում կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական գիտակցության զարգացման և գյուղատնտեսության վերելքի կազմակերպման գործում։

1935 թ. Երևանում տեղի ունեցավ գյուղական երիտասարդ մտավորականության հանրապետական կոնֆերանս, որտեղ խոսվեց գյուղում աշխատող երիտասարդ մասնագետների դերի ու նրանց խնդիրների մասին։ Կոնֆերանսն ընդունեց կոչ՝ ուղղված գյուղական ուսուցիչներին, բժիշկներին, գյուղատնտեսներին և մշակույթի բնագավառի գործիչներին. «Մեր ամենափայլուն նվաճումներից մեկն այն է,— կարդում ենք կոչում,— որ բարձրացել է գյուղը, որ նա շնչում է նոր կյանքով, որ գյուղը կուլտուրական հսկայական վերելք է ապրում։ Մեր գյուղն այժմ ունի իր սեփական ինտելիգենցիան, ուսուցիչները, բժիշկները, գյուղատնտեսները և կուլտուրայի զանազան բնագավառներում աշխատող այլ գործիչներ։ Մեր գյուղական երիտասարդությունն իր շարքերից տվել և տալիս է հարյուրավոր տրակտորիստներ, կոմբայնավարներ և սոցիալիստական հողագործության ուրիշ որակյալ կադրեր»[57]։

---

55 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1938 թ. հոկտեմբերի 26։

56 Տե՛ս «Правда», 14 октября 1938 г.

57 «Խորհրդային Հայաստան», 1935 թ. դեկտեմբերի 4։

Կոնֆերանսը միաժամանակ դիմեց Հանրապետության գիտնականներին և բուհերի աշխատողներին՝ հետևել և աջակցել գյուղական մտավորականության զարգացմանը, ավելի հաճախ լինել գյուղերում, սերտ կապ ստեղծել կոմերիտական կազմակերպությունների հետ։

* * *

30-ական թվականներին կոլտնտեսային գյուղն ապրեց կուլտուրական մեծ վերելք։ Գյուղում ստեղծվեց խրճիթ-ընթերցարանների, ակումբների, գրադարանների լայն ցանց։ Կինոն և թատրոնը մտան գյուղի բնակչության կենցաղը։ Կուլտուրական հետամնացության դեմ կազմակերպվեց ուժեղ պայքար։

1930 թ. մարտին միութենական Կենտգործկոմը որոշում ընդունեց կուլտուրական շինարարության տեմպերը արագացնելու մասին[58]։

Գյուղում կուլտուրական աշխատանքի կենտրոնը խրճիթ-ընթերցարանները և ակումբներն էին։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ 1933 թ. տեղի ունեցավ խրճիթ-ընթերցարանների վերակառուցում։ Հանդես եկան գյուղական ակումբները, իրենց նոր և կահավորված շինություններով։ Նախկին խրճիթ-ընթերցարանները անկարող էին բավարարել կոլտնտեսային մասսաների աճող կուլտուրական պահանջները։ Ակումբների մեծ մասի ֆինանսավորումը պետությունը վերցրեց իր վրա։ 1940 թ. Հանրապետության գյուղերում գործում էր 797 ակումբ[59]։ Խրճիթ-ընթերցարաններ պահպանվել էին համեմատաբար փոքր գյուղերում։ Գյուղական գրադարանների թիվը հասնում էր 784-ի, 290 հազար կտոր գրականությամբ, մինչդեռ նախասովետական գյուղն ուներ միայն 12 գրադարան և 5 հազար կտոր գիրք։ 1941 թ. տվյալներով կինոսարքավորում ուներ 108 գյուղ[60]։ 1940 թ. հուլիսին ՀԿ(բ)Կ Կենտկոմը գյուղի կինոսպասարկման մասին որոշումով համապատասխան մարմիններին պարտավորեցրեց բարելավել կինոսպասարկման գործը գյուղում։ Կոլտնտեսային գյուղի կուլտուրական նորույթներից էր ռադիոն, որի կետերի թիվը 30-ական թվականներին ավելացավ մի քանի անգամ։

Կուլտուրայի և լուսավորության հիմնարկները որակյալ կադրերով համալրելու նպատակով 1937 թ. Կիրովականում բացվեց կուլտլուսաշ-

---

58 Տե՛ս «ԽՍՀՄ օր. և կարգ. ժողովածու», 1930, № 21, հոդ. 232։

59 Տե՛ս «Культурное строительство Армянской ССР (статистический сборник)», стр. 104.

60 Տե՛ս նույն տեղում, էջ 101, 114։

խաղողների դպրոց։ Դպրոցի առաջին հավաքի համար ունկնդիրներ էին տրամադրելու հանրապետության 15 շրջաններ։

Գյուղի կուլտուրական սպասարկմանը ծառայում էին նաև թատրոնները։ Քաղաքային թատրոնները հաճախ էին մեկնում շրջաններ։ Այդ այցելությունները ջերմորեն էին ընդունվում գյուղի աշխատավորների կողմից։ 1933 թ. Ղամարլուում կազմակերպվեց առաջին նշանավոր կոլտնտեսային թատրոնը՝ ինքնագործ թատերական խմբի բազայի վրա։ Շրջանային թատրոնների աշխատանքը բարելավելու և ֆինանսապես ամրապնդելու նպատակով 1936 թ. կրճատվեց նրանց թիվը և պահպանվեցին յոթը (Կիրովականում, Ալավերդում, Ղափանում, Նոր Բայազետում, Ղամարլուում, Դիլիջանում և Արթիկում), իսկ մյուս պրոֆեսիոնալ թատրոնները վերակառուցվեցին ինքնագործ խմբերի։ Այնուհետև կոլտնտեսային թատերական խմբեր բեմահարթակ ելան նաև Ստեփանավանում և Վաղարշապատում։ 1939 թ. սկսեց գործել Ալագյազի կոլտնտեսային քրդական թատրոնը։ Նույն թվականին Մոսկվայում կազմակերպվեց կոլտնտեսային թատրոնների համամիութենական ստուգատես, որին մասնակցելու իրավունք նվաճեց Կիրովականի թատրոնը։ Մինչ այդ Հայաստանում կայացան շրջանային և հանրապետական ստուգատեսներ։ Հանրապետականին մասնակցեց 9 կոլտնտեսային թատրոն։ Ստուգատեսները հանրագումարի էին բերում կոլտնտեսային մասսաների շրջանում թատրոնների կատարած աշխատանքը։

Կոլտնտեսային գյուղում սկսեցին երևան գալ երգի ու պարի ինքնագործ խմբեր, անհատ կատարողներ։ Նրանց գործունեության մասին որոշ գաղափար են տալիս ավանդույթ դարձած ժողովրդական ստեղծագործության և ինքնագործ արվեստի օլիմպիադաները։ Այսպես, ոչ լրիվ տվյալներով միայն 1938 թ. շրջանային օլիմպիադաներում հանդես էր եկել 10 հազար մարդ, որը կրկնակի չափով ավելի էր նախորդ տարվանից։ Հանրապետական օլիմպիադային միայն շրջաններից մասնակցեցին 1300 լավագույն կատարողներ՝ ժողովրդական տաղանդներ[61], Սովետական իշխանության պայմաններում հաղթանակած կոլտնտեսային գյուղում արվեստն իրոք դարձել էր մասսայական, ծառայում էր ժողովրդին։

* * *

Այսպիսով, գյուղատնտեսության կոլեկտիվացումը, որը զբաղեցրեց ամբողջ 30-ական թվականները, միաժամանակ կոլտնտեսային գյու-

---

61 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1938 թ. նոյեմբերի 14։

ղացիության կուլտուրական զարգացման պրոցես էր։ Արտելային տնտեսության մեջ գյուղացին դարձավ զրաղետ աշխատավոր, ձեռք բերեց արտադրական հմտություններ և կատարելագործվեց՝ այսինքն մասնագիտացավ։ Շարքային կոլտնտեսականների հիմնական զանգվածները աշխատում էին գյուղատնտեսության տարբեր բնագավառներում և ստանում էին ընդհանուր մասնագիտացում։ Հիմնականում կոլտնտեսային գյուղացիության միջից աճեց գյուղական մտավորականությունը, որը կազմակերպում և ղեկավարում էր արտելային արտադրությունը, կազմակերպում գյուղի հասարակական-քաղաքական կյանքը, լուսավորում և կրթում մատաղ սերնդին և ամբողջ բնակչությանը, գյուղացու գիտակցության մեջ արմատավորում և ամրապնդում կոմունիստական գաղափարները։ Սոցիալիստական մրցության լայն ծավալումը, անդրագիտության վերացումը, կադրերի պատրաստման լայն թափը վկայում էին, որ կոլտնտեսային գյուղը ապրում էր արտադրական-քաղաքական ակտիվության բարձր վերելք, որ նախկին մասնավոր սեփականատիրական հոգեբանության տեր գյուղացին դառնում էր սոցիալիստական գյուղի ակտիվ ու գիտակից կառուցողը, կոլտնտեսային կարգերին ու աշխատանքին նվիրված քաղաքացի։ Փոխվեց մարդկանց վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ, այն դարձավ սոցիալիստական։ Անդրագիտության վերացումը, լուսավորության ու կրթության տարածումը, մամուլը, ռադիոն, կինոն, ագիտացիան ու պրոպագանդան, քաղաքական լուսավորության բոլոր միջոցները ծառայում էին ընդհանուր նպատակի՝ կոլտնտեսային կարգերի հաղթանակին ու ամրապնդմանը, գյուղատնտեսության զարգացմանը և կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակությանը։

Բանվոր դասակարգի հետ միասին գյուղի սոցիալիստական վերակառուցմանը ակտիվ մասնակցություն ունեցան գյուղի բոլոր կուլտուրական ուժերը, կոմունիստները, կոմերիտականները և ակտիվ անկուսակցականները։ Կոմունիստական կուսակցությունը բարձր է գնահատել նրանց բոլորի դերը սոցիալիստական գյուղի կերտման մեծ պայքարում։ «Մի քանի տասնամյակ է մեզ բաժանում այն անմոռանալի տարիներից,— նշել է Լ. Ի. Բրեժնևը 1969 թ. նոյեմբերի 25-ին կոլտնտեսականների համամիութենական III համագումարում արտասանած ճառում,— երբ մեր երկրում, մարդկության պատմության մեջ առաջին անգամ, մենք սկսեցինք գյուղում ստեղծել նոր, սոցիալիստական կարգ։ Բայց որքան էլ ժամանակներ ու իրադարձություններ անցած լինեն, որքան էլ սերունդներ փոխված լինեն, ժողովուրդների հիշո-

ղությունից երբեք չեն ջնջվի գյուղի վերակառուցման ակտիվ մարտիկների՝ առաջին կոմունարների, գյուղական կոմունիստների, կոմերիտականների, ուսուցիչների, գյուղբեղեակիցների, խրճիթավարների, քանդհինդհաղարական բանվորների, ՄՏԿ-ների և սովխոզների քաղաքաժինների աշխատողների գործերը։

Դրանք մեծ ճակատամարտի հերոսներն էին»[62]։

Երկրորդ հնգամյակը դարձավ հիշարժան ժամանակաշրջան «մեծ ճակատամարտը» նվաճելու պայքարում։ Հայաստանում հենց այդ տարիներին տեղի ունեցավ աշխատավոր գյուղացիության մեծամասնության ներգրավումը կոլտնտեսությունների մեջ։

Երկրորդ հնգամյա պլանի կենսագործման շնորհիվ Հայաստանը դարձավ Սովետական Միության ինդուստրիալ հանրապետություններից մեկը։ Հաջողությամբ լուծվեցին նաև պլանի խնդիրները գյուղատնտեսության բնագավառում։ Կոլտնտեսություններն ամրապնդվեցին տնտեսապես ու կազմակերպչորեն։ Ամրապնդվեց կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազան, ընդլայնվեց մեքենատրակտորային կայանների ցանցը և տրակտորային պարկը։ Մեքենայացվեց գյուղատնտեսական աշխատանքների զգալի մասը, որը կոլտնտեսությունների նվաճումների հետ միասին կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսային շարժման զարգացման գործում։ Վերացվեցին ամենաբազմամարդ շահագործող դասակարգի՝ կուլակության մնացորդները։ Հիմնականում ավարտվեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և սովետական հասարակության նոր դասակարգի՝ կոլտնտեսային գյուղացիության ձևավորումը։

---

62 Լ. Ի. Բրեժնև, *Լենինյան կուրսով*, հ. 2, էջ 661—662։

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

(ԴՅՈՒՂԸ ՀԱՅՐԵՆԱՍԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ)

Սովետական գյուղի սոցիալիստական վերակառուցման համար մղված պայքարը, որը լայն ճակատով ծավալվեց սկսած 1929 թ., ավարտվեց 30-ական թվականների երկրորդ կեսին, պատմական մեծագույն նշանակություն ունեցող հաղթանակով։ Գյուղում տեղի ունեցան սոցիալտնտեսական արմատական տեղաշարժեր ու փոփոխություններ։ Մանրատված, կոտորակված գյուղացիական տնտեսությունները միավորվեցին սոցիալիստական խոշոր տնտեսությունների՝ կոլտնտեսությունների մեջ։ Վերացվեց մեր երկրի վերջին և ամենաբազմամարդ շահագործող դասակարգը՝ կուլակությունը։ Կապիտալիստական-մանրբուրժուական արտադրական հարաբերությունները փոխարինվեցին նոր՝ սոցիալիստական արտադրական հարաբերություններով։ Գյուղի սոցիալական վերակառուցման հետ միասին ծավալվեց նաև գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը՝ գյուղատնտեսությունը փոխադրվեց ժամանակակից տեխնիկական բազայի վրա։ Սովետական Միությունը դարձավ ամենախոշոր հողագործական երկիրն աշխարհում։ Վերջնականապես լուծվեց ազգարային-գյուղացիական հարցը։

«Արմատապես փոխվեց գյուղացիությունը,— կարդում ենք կուսակցության XVIII համագումարի բանաձևում,— դառնալով միանգամայն նոր գյուղացիություն, որն ազատված է ամեն տեսակ շահագործումից, իր ճնշող մեծամասնությամբ հանդիսանում է կոլտնտեսային գյուղացիություն, որն իր աշխատանքն ու ունեցվածքը խարսխում է ոչ թե մասնավոր տնտեսության, անհատական աշխատանքի և հետամնաց տեխնիկայի վրա, այլ՝ կոլեկտիվ սեփականության, կոլեկտիվ աշխատանքի և ժամանակակից տեխնիկայի վրա»[1]։

Կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիստական հասարակու-

---

1 *«ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 462։*

թյան նոր դասակարգ է, որը հանդես եկավ հին գյուղացիության փոխարեն և, որը բանվոր դասակարգի և մտավորականության հետ միասին կազմում է սովետական հասարակությունը։ «Սոցիալիզմը, արտադրության միջոցների կոլեկտիվ սեփականությունը, կոլեկտիվ աշխատանքը, նշել է Լ. Ի. Բրեժնևը,— ստեղծեցին սովետական գյուղի նոր մարդկանց՝ մեր կոլտնտեսային գյուղացիությանը։ Սովետական բոլոր մարդիկ խորին հարգանքով են արտասանում «կոլտնտեսական» բառը։ Կոլտնտեսային գյուղացիությունը, որը հանդես է գալիս բանվոր դասակարգի հետ անխախտ միասնությամբ, քաղաքական զգալի ուժ է դարձել մեր հասարակության կյանքում։ Այս ամենը մեծ Հոկտեմբերի հսկայական վաստակն է»[2]։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը, որը, Լ. Ի. Բրեժնևի բնութագրությամբ, «սոցիալիստական հեղափոխության կարևորագույն բաղկացուցիչ մասերից մեկն էր»[3], իրականացվեց դասակարգային սուր պայքարում, մեծագույն դժվարությունների հաղթահարումով և զոհողությունների գնով։ Դա տեղի ունեցավ բանվոր դասակարգի ամենաակտիվ օգնությամբ և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը լենինյան կոոպերատիվ պլանի հաղթանակն էր և աշխարհում իրականացվում էր առաջին անգամ։ Այն ունի համաշխարհային-պատմական նշանակություն։

30-ական թվականների կեսերին ավարտվեց սովետական երկրի անցումը կապիտալիզմից սոցիալիզմին, անցում, որը տևեց ընդամենը երկու տասնամյակ։ Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ վերացվեցին մարդու շահագործումը մարդու կողմից և շահագործում ծնող պատճառները։ Սոցիալիզմի հաղթանակը վավերացվեց Սովետական Միության նոր սահմանադրությամբ, որն ընդունվեց 1936 թ.։

Սովետական երկրի կոլտնտեսային գյուղացիության՝ սոցիալիստական հասարակության նոր դասակարգի անբաժան ազգային ջոկատներից մեկն է Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը։ Իր առանձնահատկություններով հանդերձ հայկական գյուղի վերափոխումը ևս իրագործվեց սովետական գյուղին հատուկ օրինաչափություններով։ Պատմական կարճ ժամանակամիջոցում, ընդամենը մոտ մեկ տասնամ-

---

2 Լ. Ի. Բրեժնև. Լենինյան կուրսով, հ. 2, էջ 127։

3 Նույն տեղում, էջ 118։

յակի ընթացքում (հիմնականում 1927—1937 թթ.) հանրապետության գյուղացիական տնտեսությունների հսկայական մեծամասնությունը ընդգրկվեց կոլեկտիվ տնտեսությունների մեջ։ Վերափոխվեց նաև նրա գիտակցությունը։ Մասնավոր սեփականատիրական հոգեբանության տեղը գրավեցին նոր մարդու բարոյաքաղաքական գծերը՝ սոցիալիստական գիտակցությունը։ Կոմունիստական կուսակցությունը, իհարկե, շարունակում էր պայքարել գյուղացու հին հոգեբանության մնացուկների հաղթահարման համար։

Այսպիսով, սոցիալիզմի հիմնական հաղթանակով ավարտվեց Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության ձևավորման պրոցեսը։ Իսկ գյուղի սոցիալիստական վերակառուցումը լրիվ ավարտվեց նախապատերազմյան տարիներին։

* * *

Հիմնականում ավարտելով սոցիալիզմի կառուցումը, Սովետական Միությունը թեւակոխեց պատմական զարգացման նոր ժամանակաշրջան։ Երրորդ հնգամյա պլանով առաջադրված տնտեսական ու քաղաքական խնդիրների լուծման շնորհիվ խոշոր առաջընթաց քայլ էր կատարվելու սոցիալիստական հասարակարգի կառուցումն ավարտելու, զարգացած սոցիալիզմի շինարարության ուղղությամբ։ Գյուղատնտեսության բնագավառում խնդիր դրվեց տնտեսապես ու քաղաքականապես ամրապնդել կոլտնտեսությունները, իրագործել գյուղատնտեսական աշխատանքների կոմպլեքսային մեքենայացումը, բարձրացնել գյուղատնտեսական արտադրության և գյուղի աշխատավորների նյութական-կուլտուրական մակարդակը։

Սովետական բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղան նոր հնգամյա պլանի խնդիրների կատարմանը։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը միջոցառումներ մշակեցին պլանի կենսագործումն ապահովելու ուղղությամբ։ Գյուղատնտեսության բնագավառի խնդիրների կատարման կարևոր նախապայմաններից մեկը կոլտնտեսային կարգի ամրապնդումն էր, գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության անշեղ կենսագործումը։ Այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերը վերաբերում էին կոլտնտեսային հողօգտագործման և նյութատեխնիկական բազայի ամրապնդման. կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման,

գյուղատնտեսության բոլոր ճյուղերի վերելքի կազմակերպման հարցերին։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը լրիվ ավարտելուց հետո, որը տեղի ունեցավ երրորդ հնգամյակի ընթացքում, կոմունիստական կուսակցությունը դիմեց մի շարք միջոցառումների, որոնց անմիջական նպատակը կոլտնտեսային կարգի հետագա ամրապնդումն էր և կոլտնտեսային աշխատավորների կյանքի պայմանների բարելավումը։

Կոմունիստական կուսակցության կարևոր ձեռնարկումներից էր հանրային հողերը շռայլելուց պաշտպանելը։ Համ(բ)Կ Կենտկոմի 1939 թ. մայիսյան պլենումը հավանություն տվեց կոլտնտեսությունների հանրային հողերը շռայլելուց պաշտպանելու միջոցառումների մասին Կենտկոմի և կառավարության որոշման նախագծին[4]։

Հունիսին կայացած Հ(բ)Կ Կենտկոմի պլենումը քննարկեց հիշյալ որոշումը կենսագործելու հետ կապված միջոցառումների հարցը և ընդունեց համապատասխան որոշում։ Ճշտվեցին տնամերձ հողամասերի նորմաները, սահմանվեց, ըստ գյուղատնտեսական գոտիների, աշխարհի պարտադիր նվազագույն նորմա։ Նախապատրաստական քայլեր կատարվեցին սակավահող կոլտնտեսությունների բնակչությանը հողաշատ շրջաններ վերաբնակեցնելու, աշխատուժի օգտագործումը կարգավորելու, կոլտնտեսականների աշխատանքային պայմանները բարելավելու ուղղությամբ[5]։

Տնամերձ հողամասերի չափումը կատարվեց հանրապետության բոլոր 1079 կոլտնտեսություններում, որի հետևանքով կոլտնտեսականների և մյուսների մոտ հայտնաբերվեց 22 հազար 629 հեկտար հողի ավելցուկ։ Դրանք միացվեցին կոլտնտեսային հանրային հողերին, իսկ մի մասն էլ հատկացվեց կոլտնտեսությունների տնամերձի ֆոնդին։ Միաժամանակ կոլտնտեսություններին հատկացվեցին 11 հազար հեկտար կոլտնտեսականների այն տնամերձ հողերը և մենատնտեսների հողաբաժինները, որոնք սխալ հողաշինարարության պատճառով մտել էին կոլտնտեսային հողատարածությունների մեջ[6]։ Կոլտնտեսային հողօգտագործման ամրապնդումը կարևոր քայլ էր հանրային հարստության ավելացման և կոլտնտեսականների նյութական դրության բարելավման ուղղությամբ։

---

4 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 502—510։

5 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 27, գ. 640, թ. 71—72։ Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1939, հունիսի 22։

6 Տե՛ս Հ(բ)Կ XIII համագումարի նշված հաշվետվությունը, էջ 63։

Ավելցուկ հայտնաբերվեց նաև կոլտնտեսականների անձնական անասունների գլխաքանակի գծով, որը գնվեց կոլտնտեսությունների կողմից (մոտ 20 հազար գլուխ խոշոր, 11 հազար գլուխ մանր եղջերավոր անասուն և որոշ քանակությամբ խոզեր, ձիեր ու ավանակներ)[7]։

Ըստ գյուղատնտեսական գոտիների որոշվեց աշխատանքների հետևյալ պարտադիր նվազագույն նորման՝ Ալագյազի, Ազիզբեկովի և Ղարաբաղլարի շրջաններ՝ 60, բամբակագործական շրջաններ՝ 110 և մյուս շրջաններ՝ 80 աշխատանք[8]։ Այս միջոցառման նպատակն էր ամրապնդել աշխատանքային կարգապահությունը, բարձրացնել կոլտնտեսականների պատասխանատվությունը հանրային տնտեսության զարգացման նկատմամբ։ Նվազագույն նորման չկատարողների հանդեպ կիրառվում էր խիստ միջոց՝ հեռացումը կոլտնտեսությունից։ Սակայն այս գործում երբեմն նկատվում էին չափազանցություններ, նորման չկատարելու հարգելի պատճառների անտեսում՝ հաշվի չէր առնվում բազմազավակ մայրերի դրությունը, հիվանդությունը և այլն։ ՀԿ(բ)Կ XIII համագումարը (1940 թ. մարտ) դատապարտեց այդպիսի սխալ պրակտիկան և պահանջեց կարճ ժամանակամիջոցում քննել սխալ հեռացվածների դիմումները։

Անհարգելի պատճառով հեռացումներ տեղի էին ունեցել նաև նախկինում։ Ավելի հաճախ կոլտնտեսականներին կոլտնտեսությունից հեռացնում էին ընտանիքի մյուս անդամների կողմից պետական ձեռնարկություններում ժամանակավոր կամ մշտապես աշխատանքի անցնելու դեպքում և այլ պատճառներով։ Հայաստանում միայն 1937 թ. կոլտնտեսությունից զտվածների թիվը հասնում էր 1285-ի[9]։ Զտման մասսայական դեպքեր էին արձանագրվել Ստեփանավանի շրջանի Շահնազար, Կալինինո, Ղաբաքիլիսա գյուղերում և այլ շրջաններում[10]։ Նկատի ունենալով նման անօրինական դեպքերի տարածված լինելը, ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեցին «Կոլտնտեսականներին կոլտնտեսություններից վտարելն արգելելու մասին» (1938 թ. ապրիլի 19)։ Կուսակցությունը և կառավարությունը պահանջում էին կոլտնտեսությունից վտարելը կիրառել միայն ծայրահեղ դեպքում, երբ սպառված կլիներին գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնա-

---

7 Տե՛ս նույն տեղում, էջ 63—64։

8 Տե՛ս նույն տեղում, էջ 64։

9 Տե՛ս ՄԿԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 33, թ. 93։

10 Տե՛ս նույն տեղում, ց. 25, գ. 70, թ. 386—388։

գրությամբ նախատեսված նախագծուշական-դասակարգչական բնույթի բոլոր միջոցները[11]։

Հայրենական պատերազմի նախօրյակին ձեռնարկված այս միջոցառումները կարևոր նշանակություն ունեցան ամրապնդելու համար աշխատանքային կարգապահությունը և կանոնավորելու աշխատուժի օգտագործումը։

Կոլտնտեսային հողօգտագործման ամրապնդմանը նպաստեց նաև նախկին խուտորային հողօգտագործման վայրերից կոլտնտեսականների վերաբնակեցումը կոլտնտեսային գյուղերում։ Այս հարցի մասին հատուկ որոշում էին ընդունել ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համկ(բ)կ Կենտկոմը, 1939 թ. մայիսի 27-ին։ Ինչպես հայտնի է, Հայաստանում խուտորային հողօգտագործում չի եղել, ուստի ձեռնարկվեցին լեռնային և զարգացման համար աննպաստ պայմաններում գտնվող մանր գյուղերը և ըշլաղները վերացնելու և վերաբնակեցնելու միջոցառումներ[12]։ Վերաբնակեցման գործը ծավալելու համար կարևոր դեր խաղաց միութենական կառավարության և Համկ(բ)կ Կենտկոմի 1940 թ. սեպտեմբերի 6-ի որոշումը Հայաստանում արտադրությունն ու խաղողագործությունը և տեխնիկական մշակույթները զարգացնելու ձեռնարկումների մասին։ Այդ նպատակով նոր ոռոգվող և ցամաքեցվող հողերը յուրացնելու համար որոշվեց վերաբնակեցում կազմակերպել լեռնային շրջանների այն կոլտնտեսություններից, որոնք ունեին ավելորդ բանուժ։ Նախատեսվում էր տեղափոխել 9765 տնտեսություն[13]։ Դրանով լայն հեռանկարներ էին բացվում հանրապետության նա մնացող շրջանների զգալի թվով տնտեսությունների կյանքի պայմանները բարելավելու համար։

Վերաբնակեցումը կատարվում էր համեմատաբար խոշոր գյուղերում և հիմնականում նոր ոռոգվող հողատարածություններում, որոնք յուրացվելու էին Դալմայի և Ղամարլուի (Արտաշատ) նոր շրջանցքների շնորհիվ։ Նորաբնակների համար հիմնվեցին ութ նոր գյուղեր, որից չորսը՝ Երևանի գյուղական շրջանում՝ Դալմայի հողերում։ Դրանք № 1

---

11 Տե՛ս «Решения партии и правительства по хозяйственным вопросам», т. 2, М., 1967, стр. 650—652.

12 1939 թ. հունիսին Հայաստանում կար 60 կոլտնտեսություն, որոնցից յուրաքանչյուրն ուներ մինչև 30 տնտեսություն։ Այդ կոլտնտեսությունների կեսը բաժին էր ընկնում Ղարաբաղլարի և Ղափանի շրջաններին։ Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 26, գ. 340, թ. 66։ Մինչև 50 տնտեսություն ունեին հանրապետության 255 գյուղեր։ Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 26, գ. 326, թ. 118—120։

13 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1940 թ. սեպտեմբերի 15։

(Դավիթաշեն), № 2 (Անաստասավան), № 3 և № 4 (Հաղթանակ) գյուղերն էին, որոնք բնակեցվում էին հիմնականում Ապարանի շրջանի գյուղացիներով։

1939 թ. համար ծրագրվեց վերաբնակեցնել 1400, 1940 թ.՝ 1815, իսկ 1941 թ.՝ 2300 կոլտնտեսային ընտանիք[14]։ Մինչև 1940 թ. համար առանձնացվեց մոտ 14 միլիոն ռուբլու վարկ[15]։ Փաստորեն 1940 թ. իրենց նոր բնակավայրերում տեղավորվեցին լեռնային շրջանների 1985, իսկ 1941 թ.՝ 1637 տնտեսություններ[16]։ Նորաբնակների համար ստեղծվեցին աշխատանքի, ապրելու և սովորելու բարելավված պայմաններ։ Ղափանի շրջանի Կեմանց գյուղի 33 տնտեսություններ բնակություն էին հաստատել Վաղարշապատի շրջանի Փարաքար գյուղում։ 1940 թ. ընթացքում նրանք վաստակեցին 9 հազար աշխատանքային օր։ Անաստասավանի 195 ապարանցի կոլտնտեսականներ սովորեցին այգեղործություն և վաստակեցին մոտ 43 հազար աշխատանքային օր[17]։

Դժվար է գերագնահատել վերաբնակեցման նշանակությունը տնտեսական ու կուլտուրական զարգացման ոչ նպաստավոր պայմաններում գտնվող բնակչության համար։ Վերաբնակեցման ձեռնարկումները Հայաստանի համար ունեին կարևոր նշանակություն։ Այստեղ առավել շատ էին մանր գյուղերն ու գյուղակները, որոնք տեղադրված լինելով հեռավոր լեռնային շրջանների շատ դեպքերում անմատչելի վայրերում, հեռու խոշոր բնակավայրերից ու քաղաքներից, չունեին առաջադիմելու անհրաժեշտ պայմաններ։ Գաղտնիք չէ, որ Ապարանի, Մասիսունու, Ղարաբաղլարի և այլ լեռնային շրջանների կոլտնտեսությունների մի մասը տևականորեն ետ էր մնում, անկարող էր բավարարել կոլտնտեսականների տնտեսական ու կուլտուրական աճող պահանջները։ Փոխադրվելով Վաղարշապատի, Ղամարլուի, Զանգիբասարի, Երևանի գյուղական և այլ շրջաններ, նրանք հնարավորություն ստացան կարճ ժամանակում բարելավելու իրենց կյանքի պայմանները։

Վերաբնակեցումը սոցիալական, տնտեսական և քաղաքական մեծագույն նշանակություն ունեցող միջոցառում էր, որը, սակայն, ընդհատվեց Հայրենական պատերազմի պատճառով։

Երրորդ հնգամյակի տարիներին միջոցառումներ էին իրականացվում կոլտնտեսային աշխատանքների կազմակերպումը կատարելագոր-

---

14 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 28, գ. 24, թ. 347, ց. 29, գ. 47, թ. 52—53 և գ. 42, թ. 34.

15 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1940 թ. հունվարի 20։

16 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 29, գ. 277, թ. 6 և ց. 30, գ. 253, թ. 20։

17 Տե՛ս նույն տեղում, ց. 30, գ. 258, թ. 182—186։

ծելու ուղղությամբ։ Ինչպես պահանջել էր կուսակցության XVIII համագումարը, լայնորեն սկսեց արմատավորվել օղակային սիստեմը։ Հայտնի է, որ կոլտնտեսային շինարարության առաջին տարիներին մշակվեց և կյանք մտավ աշխատանքի կազմակերպման բրիգադային սիստեմը։ Այնուհետև բրիգադների ներսում կազմակերպվեցին օղակներ։ Հանրապետությունում մշտական օղակները առաջինը հանդես եկան բամբակագործության մեջ, երկրորդ հնգամյակի տարիներին, իսկ հնգամյակի վերջում՝ տեխնիկական մյուս մշակույթների գծով։ Գյուղատնտեսության մյուս ճյուղերում հիմնականում գործում էին սեզոնային օղակներ, որոնք նույնպես շուտով դարձան մշտական։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած զեկուցագրերից մեկում ՀԿ(բ)Կ Կենտկոմը հայտնում էր, որ Հայաստանի բոլոր կոլտնտեսություններում մշտական օղակային սիստեմին անցնելը տեղի է ունենալու 1939 թ. աշնանից[18]։ Միաժամանակ բարելավվում էր աշխատանքի ճիշտ հաշվառման, աշխատանքային գրքույկում աշխօրերը ժամանակին գրանցելու գործը։ 1941 թ. մայիսին հաստատվեցին աշխօրի գնահատման և վարձատրության չափի նոր, ճշված նորմաներ[19]։ Աշխատանքի կազմակերպումը և ղեկավարումը հեշտացնելու նպատակով 1938—1941 թթ. կատարվեց մի քանի խոշոր կոլտնտեսությունների ապախոշորացում (Շահնազար, Աշտարակ, Ուզունլար՝ Օձուն, Շնող, Թումանյան՝ Դսեղ, Զանգիբասար, Մեծ Շահրիար՝ Նալբանդյան, Գեղրոտ՝ Մրգաշատ և այլն)։ Կոլտնտեսությունները դեռևս չունեին խոշոր արտադրության կազմակերպման ու ղեկավարման մեծ փորձ, կադրերը՝ համապատասխան պատրաստություն։ Խոշոր գյուղերի կոլտնտեսությունների (400—500 և ավելի ընտանիք ունեցող) ղեկավարումը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Այդ պատճառով նրանք բաժանվում էին առանձին կոլտնտեսությունների։

Աշխատանք էր տարվում կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման ուղղությամբ։ Լավ աշխատող կոլտնտեսականներին խրախուսելը կուսակցության XVIII համագումարը համարում էր կոլտնտեսային շինարարության բնագավառի կարևոր խնդիրներից մեկը երրորդ հնգամյակում։ Կատարելագործվում ու զարգանում էր նաև գյուղատնտեսական մթերքների մթերումների ու գնումների բաղաքականությունը։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1940 թ. մարտյան պլենումը որոշեց փոփո-

---

18 Տե՛ս ՄԱԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 362, թ. 97—98։

19 Տե՛ս նույն տեղում, ց. 29, գ. 54, թ. 226—238 և ց. 30, գ. 26, թ. 43։

խուրյուններ մտցնել մթերումների ու գնումների քաղաքականության մեջ։ Պլենումը նշեց, որ մթերումների ու գնումների գոյություն ունեցող կարգը հնացել է և խանգարում է կոլտնտեսությունների հանրային տնտեսության հետագա աճին ու ամրապնդմանը[20]։ Այդ կարգը գործում էր 1932—1933 թթ., որի հիմքում ընկած էր հարկի ուժ ունեցող կայուն պարտավորությունը (պետական սահմանված գներով)։ Ըստ անասունների գլխաքանակի և ցանքի պլանի պարտադիր մթերումների գործող կարգը այլևս չէր նպաստում հանրային արտադրության զարգացմանը։ Կոլտնտեսություններն աշխատում էին պակասեցնել ցանքատարածության պլանը, չէին ձգտում նոր հողեր յուրացնել։ Զարգացած անասնապահական տնտեսությունները շատ անասնաբուծական մթերքներ էին հանձնում պետությանը, թույլերը՝ քիչ, իսկ անասուն չունեցողները՝ բոլորովին չէին հանձնում և գտնվում էին արտոնյալ վիճակում։ Անասունների գլխաքանակի ավելացումը փաստորեն չէր խրախուսվում։ Ուստի մթերումների հին կարգը վերացվեց և մտցվեց նոր կարգ։ Պետությանը հացահատիկի և անասնաբուծական մթերքների պարտադիր հանձնումը սահմանվեց ըստ կոլտնտեսությանը ամրացված հողատարածության։ Բամբակի, խաղողի և շաքարի ճակնդեղի հանձնումը շարունակվելու էր նախկին կարգով։ Մսի պետական գնումների պլանը ևս հաշվարկվելու էր ըստ հողատարածության։ Պլենումը գտնում էր, որ մթերումների նոր կարգը, ապահովելով թերությունների վերացումը, ծառայելու էր որպես գյուղատնտեսական մթերքների արտադրության զարգացման հզոր լծակ[21]։

Հանրապետության կոլտնտեսությունների համար մշակվեցին նյութական խրախուսման լրացուցիչ միջոցառումներ։ 1941 թ. մարտի 13-ին ՍՍՀՄ Ժողկոմսովետը և Համկ(բ)կ Կենտկոմը որոշում ընդունեցին Հայաստանում գյուղատնտեսական մշակույթների բերքատվությունը և անասնաբուծության մթերատվությունը բարձրացնելու համար կոլտնտեսականների աշխատանքի լրացուցիչ վարձատրության մասին[22]։ Կոլտնտեսային մասսաները ջերմորեն ընդունեցին կուսակցության ու կա-

---

20 Տե՛ս «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, էջ 511։

21 Տե՛ս նույն տեղում, էջ 512։ Մասամբերումների գործող սիստեմը վերացնելու և այն նոր սիստեմով փոխարինելու մասին առաջին անգամ նշվել է կոլտնտեսություններում հանրային անասնաբուծությունը զարգացնելու վերաբերյալ ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համկ(բ)կ Կենտկոմի 1939 թ. հուլիսի 8-ի որոշման մեջ։ Տե՛ս «Решения партии и правительства по хозяйственным вопросам», т. 2, стр. 713—719.

22 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1941 թ. մարտի 20։

ռավարության որոշումը, որը վկայում էր գյուղի աշխատավորների նկատմամբ նրանց ջերմ հոգատարության մասին։ Նույն ամսին կայացած ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը, բարձր գնահատելով սույն որոշումը, աբձանագրեց, որ այն ունի քաղաքական և տնտեսական մեծ նշանակություն Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման, գյուղատնտեսական մշակույթների բերքատվությունը և անասնաբուծության մթերատվությունը բարձրացնելու, ցանքատարածություններն ընդարձակելու, կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, ինչպես նաև կոլտնտեսականների ունևոր կյանքի համար[23]։

Երախտագիտական միջոցառումներ ընդունվեցին մեխանիզատորների համար։ Տրակտորիստների, տրակտորային բրիգադավարների և նրանց օգնականների երաշխավորված դրամական նվազագույնի վճարումը պետությունը վերցրեց իր վրա։ Նրանք վարձատրություն էին ստանում նաև կոլտնտեսությունից[24]։ Այսպիսով, մեխանիզատորներն ունեին յուրահատուկ դասակարգային դրություն։ Նրանք և ՄՏԿ-ների աշխատողներ էին՝ բանվորներ, և կոլտնտեսականներ։ Իսկ կոմբայնավարները լրիվ բանվորներ էին, որովհետև կապված էին միայն ՄՏԿ-ների հետ։

Որոշ փոփոխություններ կատարվեցին հարկային քաղաքականության մեջ։ Ուսումնասիրությունները ցույց էին տալիս, որ մենատնտեսների մի մասը խուսափում էր գյուղատնտեսական հարկից և մթերումներից, որից գոյանում էին մեծ գումարի ապառքներ։ Մենատնտեսների ձիերն առգրավված էին հարկումից, այն դեպքում, երբ դրանք զգալի եկամուտ էին բերում (որովհետև օգտագործվում էին նաև որպես սպեկուլյացիայի և վաստակի միջոց)։ Խախտելով գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը, կոլտնտեսությունների վարչությունները վարձում էին մենատնտեսներին, նրանց վճարելով ավելի բարձր, քան հասնում էր կոլտնտեսականներին ըստ աշխօրերի։ Այս ամենի հետևանքով անհատական տնտեսությունները կոլտնտեսականների համեմատությամբ արտոնյալ վիճակում էին։

Հաշվի առնելով դրա վտանգավորությունը ԽՍՀՄ ԺողկոմխորհՀ և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը հատուկ որոշում ընդունեցին (1938 թ. ապրիլի 19) անհատական տնտեսությունների հարկերի և այլ պարտավորություններ-

23 Տե՛ս ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 29, գ. 24, թ. 136։

24 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1939 թ. հունվարի 16 (կուսակցության և կառավարության որոշումը հացահատիկային մշակույթների գծով ՄՏԿ-ների աշխատանքի բնույթը հաշվելու կարգի մասին)։

ր մասին։ Որոշման մեջ նշված է, որ սովետական և կուսակցական մարմինների կողմից մենատնտեսների նկատմամբ թույլ տրված խոշոր սխալները խախտում են աշխատանքային կարգապահությունը կոլտնտեսություններում, վնաս հասցնում կոլտնտեսությունների մեջ անհատական տնտեսությունների հետագա ներդրավման գործին։ Որոշումը պարտավորեցնում էր խստորեն հետևել հարկերի ու պետական մյուս բոլոր պարտավորությունների ստույգ կատարմանը և անթույլատրելի էր համարում կոլտնտեսականների նկատմամբ մենատնտեսների որևէ արտոնություն։ ԽՍՀՄ Գերագույն սովետը օրենք ընդունեց անհատական տնտեսությունների ձիերի վրա դրվող պետական հարկի մասին։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1938 թ. մայիսի 7-ի որոշման մեջ նշված է, որ նման խախտումներ տեղի են ունեցել նաև Հայաստանում՝ Ապարանի, Աբովյանի, Վեդու, Կիրովականի, Մարտունու և այլ շրջաններում։ Շրջանային գիկավար մարմիններին հանձնարարվեց կարճ ժամանակամիջոցում վերացնել ապառքները և ապահովել մսամթերումների կատարումը[25]։ 1939 թ. ընդունված գյուղատնտեսական հարկի նոր օրենքում ևս կատարվեցին որոշ փոփոխություններ։ Նոր օրենքով կոլտնտեսականների հարկումը կատարվելու էր ոչ թե կայուն դրույքներով, այլ ըստ նրանց ամբողջ եկամտի։ Անհատական տնտեսություններից գանձվելիք հարկը ավելի բարձր էր կոլտնտեսականների հարկից։ Արտոնություն էր սահմանվում այն մենատնտեսների համար, որոնք կընդունվեին կոլտնտեսություն։

Կուսակցության և կառավարության վերջին միջոցառումները, բացառելով անհատական տնտեսությունների արտոնյալ դրությունը, նպաստում էին նրանց կոլեկտիվացմանը։ Այդ միջոցառումները կարևոր նշանակություն ունեին նաև Հայաստանի համար, որտեղ դեռևս կային կոլտնտեսություններից դուրս մնացող զգալի թվով տնտեսություններ։ Այսպես, եթե 1938 թ. հուլիսի 1-ին տնտեսությունների գծով կոլեկտիվացումը կազմում էր 91,9 տոկոս, ապա երկու տարի անց այն բարձրացավ 98,3 տոկոսի[26]։ Միայն 1938 թ. առաջին կիսամյակում կոլտնտեսությունների մեջ ներգրավվել էին 4 հազար տնտեսություններ, իսկ կոլեկտիվացման ենթարկված բոլոր տնտեսությունների թիվը, ըստ ՀամԿ(բ)Կ Կենտկոմ ներկայացված զեկուցագրի, կազմում էր 172.510[27]։

---

25 ՏԻՀ ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 26, գ. 34, թ. 27—28։

26 ՏԻՀ «Социалистическое строительство Армянской ССР». стр. 42.

27 ՏԻՀ ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 27, գ. 628, թ. 146։

1940 թ. կեսերին Հանրապետության 1030 կոլտնտեսություններում ընդգրկված էր 174 հազար ընտանիք[28]։ Դա Հայաստանի կոլտնտեսային ընտանիքների առավելագույն թիվն է։ Այդ նշանակում է, որ Հայրենական պատերազմի նախօրյակին Հայաստանում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը լրիվ ավարտվել էր։ Չպետք է կարծել, իհարկե, թե կոլտնտեսությունների մեջ անհատական տնտեսությունների ընդգրկումը տեղի ունեցավ նրանց արտոնյալ դրության վերացման հետևանքով, որի նշանակությունը չի բացառվում։ Այն կոլտնտեսությունների նվաճումների ու առավելությունների դրսևորման, քաղաքական-մասսայական աշխատանքի արդյունք էր, ընդհանրապես։

Փոփոխություններ կատարվեցին նաև գյուղատնտեսության ղեկավարման մեջ։ Վերակառուցվեց հողժողկոմատի ապարատը։ Վերակառուցման հիմքում դրված էր արտադրական-տերիտորիալ սկզբունքը։

Երրորդ հնգամյակի տարիներին նոր նվաճումներ ձեռք բերվեցին կոլտնտեսությունների նյութական-տեխնիկական բազայի ամրապնդման բնագավառում։

Նորաստեղծ շրջաններում ևս աստիճանաբար կազմակերպվում էին մեքենատրակտորային կայաններ։ 1938 թ. դարձանը և աշնանը սկսեցին աշխատել հինգ նոր ՄՏԿ-ներ։ 1939 թ. դրանց ավելացան Սպիտակի, Նոյեմբերյանի և Շամշադինի կայանները։ Շուտով իրենց կայաններն ունեցան Ալագյազի, Ղարաբաղլարի, Ղափանի և Երևանի գյուղական շրջանները։ 1940 թ. վերջին Հայաստանում կար 33 մեքենատրակտորային կայան, 1937 թ. 24-ի և 1932 թ. 7-ի դիմաց։ Նրանք ունեին 1354 տրակտոր (1727՝ 15 ձիաուժի հաշվով), 286 կոմբայն և այլ տեխնիկա։ ՄՏԿ-ների ամբողջ աշխատանքի ծավալը, վարի վերածած, կազմեց 552 հազար հեկտար։ Կոլտնտեսությունների վարելահողերի 84 տոկոսը սպասարկվում էր նրանց կողմից[29]։ Նշենք, որ կոլտնտեսային շարժման սկզբնական շրջանում (1928 թ.) Հանրապետության գյուղատնտեսության մեջ աշխատում էր ընդամենը 166 տրակտոր։ ՄՏԿ-ները համալրվում էին ՍՏԶ, ԽՏԶ մակնիշի անիվավոր տրակտորներով և այլ նորագույն տեխնիկայով, որն արտադրում էր զարգացող հայրենական ինդուստրիան։ Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածությունը

---

28 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР». Статистический сборник. Ереван, 1961, стр. 8.

29 Տե՛ս նույն տեղում, էջ 450։ «Народное хозяйство Армянской ССР». Статистический сборник, Ереван, 1957, стр. 98.

կարող էր լինել ավելի բարձր, եթե չլիներ Սովետական Հայրենիքի պաշտպանունակությունը արագ ամրապնդելու հրամայական անհրաժեշտությունը։

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մշակեցին և իրականացնում էին այնպիսի միջոցառումներ, որոնց նպատակն էր ամրապնդել կոլտնտեսությունների սոցիալտնտեսական դրությունը և նյութատեխնիկական բազան, նախադրյալներ ստեղծել կոլտնտեսային արտադրության հետագա վերելքի, սոցիալիստական գյուղի զարգացման համար։

* * *

Կոմունիստական կուսակցության XVIII համագումարի կողմից ընդունված երրորդ հնգամյա պլանը արտադրական խանդավառության նոր վերելք առաջացրեց քաղաքի ու գյուղի աշխատավորների մեջ։ Նոր խնդիրների կատարման կարևոր միջոցներից էր, ինչպես ցույց տվեց համագումարը, սոցիալիստական մրցության և ստախանովյան շարժման ամենալայն ծավալումը, սոցիալիստական հասարակությանն արժանի աշխատանքի բարձր արտադրողականության ապահովումը։

Արտադրական վերելքի նոր ալիք առաջացավ նաև Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության մեջ։ Երրորդ հնգամյակում սոցիալիստական գյուղի աշխատավորների մրցման բնորոշ կողմը բարձր բերքի համար պայքարն էր, այսինքն աշխատանքի արտադրողականության բարձրացումը։

Աշտարակի և Եղվարդի կոլտնտեսությունների անդամները նամակով դիմեցին հանրապետության բոլոր կոլտնտեսականներին ու կոլտնտեսուհիներին՝ երրորդ հնգամյակի առաջին տարին բարձր բերքի տարի դարձնելու համար։ Բոլոր մեխանիզատորներին ուղղված նույնպիսի կոչով հանդես եկան Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի և արհեստանոցի աշխատողները։ 1938 թ. վերջին Ախտալայի ՄՏԿ-ի կոլեկտիվը, զեկուցելով իր նվաճումների մասին, սոցիալիստական մրցությունը ծավալելու նոր կոչ արեց։ Իրենց արտադրական պլանները զգալիորեն գերակատարել էին կայանի կոմբայնավար, հանրապետության Գերազույն սովետի դեպուտատ Վահան Կարապետյանը, կալսիչավարներ Գուրգեն Մելքոնյանը, Արզուման Մկրտչյանը և Գեղամ Հարությունյանը։ Հայաստանի մեխանիզատորների շրջանում չափ արձագանք գտավ Ստարոշչերբինսկի մեքենատրակտորային կայանի կոմբայնային բերքահավաքի վարպետ Զադորոժնու նախաձեռնությունը, որն առա-

շարկում էր կոմբայնի նորոգումը կատարել անմիջապես բերքահավաքից հետո։

1939 թ. մեխանիզատորները հասան նոր հաջողություններին։ Տրակտորիստ Սարգիս Խաչայելյանը (Թալինի ՄՏԿ) ՍՏԶ տրակտորով կատարեց 691 հեկտար վար, պլանը գերակատարելով ավելի քան երկու անգամ, տնտեսեց մեծ քանակությամբ վառելանյութ և վաստակեց 833 աշխօր։ Արտադրական պլանները գերակատարել էին նաև Հոկտեմբերյանի, Սպիտակի, Վաղարշապատի, Ալավերդու, Նոյեմբերյանի, Ապինի, Բասարգեչարի, Թալինի և այլ ՄՏԿ-ներ։

Հայաստանի բամբակագործները մրցում էին 40 և ավելի ցենտներ բերք ստանալու համար։ 1938 թ. արդյունքների մասին հաշվետվության մեջ նշված է. «Այնորեն ծավալվել է առաջավոր կոլտնտեսությունների, բրիգադների ու օղակների սոցիալիստական մրցումը։ Նրանք պատվով կատարեցին 40 և ավելի ցենտներ բերք տալու վերաբերյալ իրենց պարտավորությունը»[30]։ Բոլոր բամբակագործական կոլտնտեսությունները գերակատարեցին բամբակի հումքի հանձնման պետական պլանը։ Բերքահավաքի պլանները 200—500 տոկոսով էին կատարում Հրանուշ Բաղդասարյանը, Մելուշ Ապիզյանը, Երանուհի Մուրադյանը և շատ ուրիշներ։ Բամբակագործությամբ զբաղվող 145 կոլտնտեսություններից միլիոնատեր էին 36-ը, նախորդ տարվա 16-ի փոխարեն։

1939 թ. մարտին կայացած հանրապետական խորհրդակցությունում բամբակագործները ստանձնեցին նոր պարտավորություններ։ Միայն Ղամարլուի շրջանում 1939 թ. միլիոնատեր կոլտնտեսությունների թիվը հասավ 20-ի։ Վաղարշապատի շրջանում կային այդպիսի 15 կոլտնտեսություններ (ամբողջ Հայաստանում 1940 թ. նրանց թիվը կազմում էր 53)։ Չնայած անբարենպաստ կլիմայական պայմաններին, այնուամենայնիվ շրջանում բամբակի միջին բերքատվությունը կազմեց 22 ցենտներ, իսկ խաղողինը՝ 70 ցենտներ։ Սկսած 1938 թ. Վաղարշապատի շրջանը մրցում էր Ղամարլուի շրջանի հետ։ Ինչպես նշվել է, 1939 թ. Հայաստանում բամբակի բերքը ռեկորդային էր։ Առանձին կոլտնտեսություններ, բրիգադներ ու օղակներ ահեցրին բարձր բերք։ Միչյանի (Ղամարլուի շրջան), Արմթլուի (Տանձուտ, Հոկտեմբերյանի շրջան), «Անաստված» (Վաղարշապատի շրջան) կոլտնտեսություններն ստացան 23—34 ցենտներ միջին բերք։ 30—50 ցենտներ բերք ստացան Արուս Մելքումյանի, Ալիև Կուլի օղլու և ուրիշների օղակները։ Մանկով

---

30 ՏԵՍ ՄԼԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 26, գ. 310, թ. 51։

50-ցենտներականների սահմանների շարժման մեջ, Վառինկա Փանոսյանը (Զոհրաբլուի՝ Մրգանուշի կոլտնտեսություն), որը մշակում էր 4,5 հեկտար ցանք, կատարեց սոցմրցման իր պարտավորությունը։ Հայաստանում սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված էին 6600 բամբակագործ կոլտնտեսականներ[31]։

Առաջավոր բամբակագործների նվաճումները հնարավոր դարձրին պայքարելու ավելի բարձր արդյունքների հասնելու համար։ Ղամարլուի շրջանի առաջավոր օղակները 1940 թ. սկսած ծավալեցին 50-ցենտներականների շարժումը։ Այն հավանություն գտավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի կողմից, որն այդ հարցի մասին ընդունեց հատուկ որոշում։ Հայաստանում այդ շարժման պիոներներն էին Վառինկա Փանոսյանը, Աշխեն Մովսիսյանը, Նաղիկ Ստեփանյանը և ուրիշներ։

Երրորդ հնգամյակում անասնապահների մրցումն սկսվեց Խարկովի մարզի Խոտենի շրջանի կոլտնտեսականների նախաձեռնությամբ։ Հայաստանում նրանց առաջինն արձագանքեցին Ստեփանավանի շրջանի սահմանովական անասնապահները։ Վերջին 3—4 տարվա ընթացքում շրջանում խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակն աճել էր կրկնակի չափով։ Յուրաքանչյուր կոլտնտեսություն միջին հաշվով ուներ 4 անասնապահական ֆերմա։ Զգալիորեն բարելավվել էր անասունների ցեղայնությունը։ Մեկ ֆուրաժային կովի կաթնատվությունը 1935 թ. 740 լիտրից 1938 թ. բարձրացել էր 1100 լիտրի։ Հանրապետության Գերագույն սովետի պատգամավոր, շրջկենտրոնի կոլտնտեսության կթվորուհի Մարիա Ֆրիշը մինչև 1938 թ. օգոստոս ամիսը յուրաքանչյուր կովից կթել էր 1500 լիտր կաթ։ Նույն կոլտնտեսության անդամ Դանիել Զալարյանը երեք տարում աճեցրել էր 152 ցեղական հորթ։ Շրջանի ճանաչված կթվոր-հորթապահներից էին Արփենիկ Դավթյանը (Ուռուտ) և Շողեր Ներկարարյանը (Կուրթան)։ Կթվորուհի Տատյանա Նովոսելցևան (Կալինինոյի շրջան) մեկ ֆուրաժային կովի միջին կաթնատվությունը հասցրեց 3040 լիտրի։ Աննա Դանիլովան «Զորկա» կովից կթեց 4668 լիտր կաթ։ Արթիկի շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսության հովիվ Սմբատ Մինասյանը 100 մայր ոչխարից ստացավ 170 գառ, Սմբատ Ալավերդյանը (Գորիսի շրջան)՝ 125 գառ և այլն։

1939 թ. հոկտեմբերին կայացավ հարվածային անասնապահների հանրապետական խորհրդակցություն, որը ջերմորեն ընդունելով Ուկրաինայի և Աղրբեջանի առաջավոր անասնապահների կոչը, նամակով դիմեց Հայաստանի բոլոր անասնապահ կոլտնտեսականներին։

31 Տե՛ս ՀԿ(բ)Կ XIII համագումարի նշված հաշվետվությունը, էջ 38։

Սահմանամերձ անասնապահների նույնպիսի խորհրդակցություններ կայացան նաև մյուս շրջաններում։ Ամենուրեք բանաձևեր էին ընդունվում կոլտնտեսություններում հանրային անասնապահությունը զարգացնելու միջոցառումների մասին ԽՍՀՄ ԺողԿոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1939 թ. հուլիսի 8-ի որոշումը կենսագործելու վերաբերյալ։

Շամշադինի և Կրասնոսելսկի շրջանները սոցմրցման պայմանագիր էին ստորագրել Ադրբեջանի Թովուզի շրջանի հետ։ Կոտայքը մրցում էր Լյուբսեմբուրգի, Նոյեմբերյանը և Կիրովականը՝ Ղազախի, Ղուկասյանը՝ Բոգդանովկայի, Նոր Բայազետը՝ Բյալբաջարի շրջանի հետ։

Բարեկամական սերտ կապեր ստեղծվեցին Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների մի շարք առաջավոր կոլտնտեսությունների միջև։ Այդպիսի կապերի լավագույն օրինակ է Նաթանեբի-Մեծ Շահրիար մրցությունը։

Հանրապետական Գերագույն սովետների նախընտրական օրերին Վրաստանի Մախարաձեի շրջանի Նաթանեբի գյուղի կոլտնտեսականները նամակ ուղարկեցին Հայաստանի կոլտնտեսականներին։ Նաթանեբցիներին առաջինն արձագանքեցին Հոկտեմբերյանի շրջանի Մեծ Շահրիար գյուղի կոլտնտեսականները, որոնք իրենց ընդհանուր ժողովում ընդունեցին սոցիալիստական մրցահրավերը։ Կնքվեց սոցիալիստական մրցության պայմանագիր։ Մրցության առաջին տարվա արդյունքները բավական զոհացուցիչ էին։ Շահրիարցիները մեկ հեկտարից ստացան 20,5 ցենտներ հացահատիկ, 20 ցենտներ բամբակ և 85 ցենտներ խաղող։ Կոլտնտեսության եկամուտը կազմեց 1,2 միլիոն ռուբլի, իսկ մեկ աշխօրի արժեքը՝ 17 ռուբլի 15 կոպեկ։ 1938 թ. նոյեմբերին Նաթանեբիի պատգամավորությունը ժամանեց Մեծ Շահրիար՝ մրցության արդյունքներն ամփոփելու համար։ «Խորհրդային Հայաստան» թերթը ընդարձակ տեղ է տվել այդ արդյունքներին։ Նույն ամսին պատասխան այց կատարեցին շահրիարցիները։ Նաթանեբի-Մեծ Շահրիար մրցությունը երկու եղբայրական ժողովուրդների բարեկամության վառ արտահայտությունն է։ Այն շարունակվում է մինչև այսօր։

Վաղարշապատի շրջանի Աղավնատուն գյուղի կոլտնտեսականները մրցության հրավիրեցին Զուգդիդիի շրջանի Օրսանտիա գյուղի կոլտնտեսականներին։ 1939 թ. սոցիալիստական մրցության պայմանագիր ստորագրեցին Կոտայքի շրջանի Քանաքեռ և Լյուբսեմբուրգի շրջանի Ֆախրալո գյուղերի կոլտնտեսությունները։ Մրցության երեք տարվա գրական փորձի մասին էին պատմում երկու կոլտնտեսությունների նա-

խաղահները թերթում տպագրված իրենց հոդվածներում[32]։ Սոցմրցման մեջ մտան նաև Կոտայքի և Լյուքսեմբուրգի շրջանները։

1940 թ. հոբելյանական տարի էր հանրապետության համար։ Սովետական Հայաստանի 20-րդ տարեդարձը արժանավայել նվաճումներով դիմավորելու համար ամենուրեք լայն թափ առավ սոցիալիստական մրցությունը։ Սոցիալիստական գյուղի աշխատավորներին ուղղված կոչով հանդես եկան Դուզքենդի շրջանի կոլտնտեսականները։

Կոլտնտեսային գյուղացիության արտադրական վերելքի առանձին տեղամաս դարձավ ջրանցքների շինարարությունը։

Ոռոգման ցանցի զարգացումը կատարվում էր առավելապես պետության միջոցներով։ 20—30-ական թվականներին Հայաստանում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Էջմիածնի, Շիրակի, Այղրը լճի, Փոքր Սարդարապատի, Արտաշատի, Խարբերդի, Դալմայի և այլ ջրանցքներ։ Դրանցից խոշորագույնը Արտաշատի (Ղուկրի) ջրանցքն է, 60 կիլոմետր երկարությամբ և 22 հազար հեկտար ոռոգելի հողատարածությամբ, որը կառուցվեց կոլտնտեսային գյուղացիության ակտիվ մասնակցությամբ և գործարկվեց 1932 թ.։

Ոռոգման ցանցի ընդարձակումը կարևոր դեր խաղաց գյուղատնտեսության կոլեկտիվացումը նախապատրաստելու, կոլեկտիվ հողօգտագործմանն անցնելու, գյուղատնտեսության զարգացման գործում։ Դեռևս 1921 թ. Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին խորհուրդ էր տալիս «բոլոր ուժերով զարգացնել հարուստ երկրի արտադրողական ուժերը, ապիտակ ածուխը, ոռոգումը։ Ոռոգումը,— շարունակում է նա,— հատկապես կարևոր է հողագործությունն ու անասնապահությունը ինչ գնով էլ լինի բարձրացնելու համար»[33]։

Սևանա լճի օգտագործումը նոր հեռանկարներ բացեց էլեկտրիֆիկացիայի ու ոռոգման զարգացման համար։ 30-ական թվականներին նախագծվեցին մի շարք խոշոր ջրանցքներ, որոնք կառուցվելու էին աստիճանաբար։ Արտաշատի ջրանցքից հետո սկսվեց (Հայրենական պատերազմի նախօրյակին) Ստորին Հրազդանի, Թալինի և Նորքի ջրանցքների շինարարությունը։ 1940 թ. ոռոգվող հողատարածությունները կազմում էին 180 հազար հեկտար։ Դա 1928 թ. համեմատությամբ ավելի էր մոտ 70 հազար հեկտարով, իսկ 1913 թ. համեմատությամբ՝ մոտավորապես կրկնակի[34]։

---

32 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1941 թ. հունվարի 11։

33 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 403—404։

34 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», стр. 62.

Տնտեսական-կազմակերպական ամրապնդման շնորհիվ կոլտնտեսությունները հնարավորություն ստացան իրենց միջոցներով կատուցելու համեմատաբար ոչ մեծ ջրանցքներ։ Երկրորդ և հատկապես երրորդ հնգամյակի տարիներին հանրապետության կոլտնտեսությունները նախաձեռնեցին և իրականացրին մի շարք ջրանցքների շինարարությունը։ Կուսակցությունը և կառավարությունը նրանց օգնում էին մասնագետ կադրերով, շինանյութերով և այլ միջոցներով։ Հաշվի առնելով կոլտնտեսությունների միջոցներով մանր ջրաշինարարական աշխատանքներ կատարելու կարևորությունը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1936 թ. հունիսին հատուկ որոշում ընդունեց այդ գործում կոլտնտեսություններին օգնելու մասին[35]։ Իսկ 1939 թ. մի խումբ կոլտնտեսական ղեկավարներ և մասնագետներ եղան Ուզբեկստանում, այնտեղի փորձը ուսումնասիրելու համար։

Կոլտնտեսային ջրաշինարարության առաջին օրինակը տվեցին սիսիանցիները, 1936 թ.։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը հավանություն տվեց նրանց նախաձեռնությանը և կազմակերպեց համապատասխան օգնություն։ 1939 թ. շրջանի կոլտնտեսականները և կուսակցական ու սովետական կազմակերպությունները հանդես եկան նոր նախաձեռնությամբ։ Որոշվեց Դալիչայ գետից 36 կիլոմետր երկարությամբ ջրանցք հանել, որը ոռոգելու էր Բորիսովկայի, Սպանդարյանի, Անգեղակոթի, Շաքիի, Սիսավանի (Սիսիան), Աղուդիի և այլ կոլտնտեսությունների 2500 հեկտար վարելահողերը և 10 հազար հեկտար ամառային արոտավայրեր։ Հայաստանի կառավարությունը զգալի միջոցներ տրամադրեց այդ շինարարության համար[36]։ Դալիչայի ջրերի օգտագործման մասին սիսիանցիները երազել էին երկար տարիներ։ Այն իրականություն դարձավ միայն սովետական իշխանության և կոլտնտեսային կարգերի շնորհիվ։ Շինարարությանը մասնակցում էին շրջանի 35 կոլտնտեսություններ։ 1940 թ. մայիսին այնտեղ աշխատում էին մոտ 2200 կոլտնտեսականներ, իսկ մինչև օգոստոսի 1-ը կատարվել էր 183 հազար խորանարդ մետր հողային-քարային աշխատանք։ Սիսիանի ջրանցքի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1940 թ. նոյեմբերին Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-րդ տարեդարձի օրերին։ Ջրանցքի կառուցման ժամանակ աշքի ընկած 78 ստախանովական կոլտնտեսականներ

---

35 Տե՛ս ՄԿԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 24, գ. 24, թ. 240։

36 Տե՛ս «ՀԽՍՀ որոշումների և կարգադրությունների ժողովածու», 1939, № 7, հոդ. 66։ Կառուցման ժամանակ ջրանցքի երկարությունը հասցվեց 47 կիլոմետրի։

և մասնագետներ պարգևատրվեցին Հանրապետության Գերագույն սովետի պատվոգրով։

Կոտայքի շրջանի կոլտնտեսականները 1936 թ. լեռնային պայմաններում փորեցին 18 կիլոմետրանոց «Երջանկության» ջրանցքը, որը ջրարբի էր դարձնելու շրջանի ալպյան արոտավայրերը։ Նույն թվականի հուլիսին բացվեց Բասարբեչարի 28 կիլոմետրանոց ջրանցքը, որի կառուցմանը մասնակցել էին շրջանի 36 գյուղեր, օրական տրամադրելով 600—700 կոլտնտեսական շինարարներ։ 1936 թ. Մարտունու շրջանի կոլտնտեսությունները կառուցեցին 14 կիլոմետր երկարություն ունեցող ջրանցք, կատարելով 14,6 հազար խորանարդ մետր հողային և 3,5 հազար խորանարդ մետր ժայռային աշխատանք։ Դա նախկին «Եսիրի» առուն էր, որով 70 տարի առաջ գյուղացիները ջուր էին բերել, սակայն, ինչպես պատմել է տարեց կոլտնտեսական Անտոն Օհանյանը, գյուղի գոռբա Հովան Հակեյանը ջուրը խլել էր գյուղացիներից, իսկ մի կաթիլ ջրի համար առվի վրա շատ զոհեր էին եղել։ «Էն ժամանակվա օրենքն էդպես էր, ո՞վ կարող էր Հակեյանի առաջ խոսել»[37]։

Մեծ նշանակություն ունեցավ Նալբանդի ջրանցքը Սպիտակի շրջանում, որի կառուցման մասին շրջանի կոլտնտեսականները որոշում էին ընդունել 1937 թ.։ Սակայն այդ ժամանակ գործը գլուխ չեկավ։ Հարցը նորից բարձրացավ երրորդ հնգամյակում, երբ նախատեսվեց շրջանում կառուցել շաքարի գործարան։ 1939 թ. սեպտեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Հանրապետության կառավարությունը հավանություն տվեցին շրջանի կոլտնտեսականների ու կուսակցական ակտիվի նոր նախաձեռնությանը և կազմակերպեցին անհրաժեշտ օգնություն[38]։ Ջիշխան գետից սկիզբ առնող 47 կիլոմետրանոց ջրանցքի 120 հազար խորանարդ մետր հողաժայռային աշխատանքները իրականացրին Նալբանդ, Պարնի, Ղալթաղչի (Հարթագյուղ), Ծաղկաշեն (Ծաղկաբեր), Թափանլի, Աղբուլաղ (Լուսաղբյուր), Ղարալ (Կաթնաջուր) և այլ գյուղերի կոլտնտեսականները։ Ջրանցքը, որը ապահովեց 2650 հեկտար շաքարի ճակնդեղի պլանտացիաներ, հանդիսավոր բացվեց 1940 թ. հունիսին։ Շինարարության մասնակից 103 կոլտնտեսականներ և մասնագետներ պարգևատրվեցին Հանրապետության Գերագույն սովետի պատվոգրով և նվերներով։ Սպիտակի շրջանի Նալբանդ և Պարնի գյուղերի կոլտնտե-

---

37 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1936 թ. հուլիսի 5։

38 Տե՛ս ՄԱԻ ՀՅԱ, ֆ. 1, ց. 28, գ. 26, թ. 169—170 և «ՀԽՍՀ որոշումների և կարգադրությունների ժողովածու», 1939, № 1, հոդ. 10։

սականները, ոգևորված իրենց հաջողություններով, դիմեցին Հայաստանի բոլոր կոլտնտեսականներին ու կոլտնտեսուհիներին՝ արձագանքել ուղբեկ եղբայրների և Ֆերղանայի ջրանցքի շինարարների նախաձեռնությանը և նրանց փորձով ծավալել ջրաշինարարությունը։

1939—1940 թթ. կոլտնտեսականների ուժերով մեծ աշխատանք կատարվեց Ղամարլուի և Զանգիբասարի շրջանների ճահճային հողերի չորացման ու գյուղատնտեսական մշակման ուղղությամբ։ Այդ գործը նախաձեռնեցին իրենք՝ կոլտնտեսականները, որը պաշտպանվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի կողմից։ Հարվածային աշխատանքի շնորհիվ մինչև 1940 թ. վերջերը յուրացվեց Ղամարլուի շրջանում՝ 2100 և Զանգիբասարի շրջանում՝ 2034 հեկտար արգավանդ հող։

* * *

Սոցիալիստական մրցության ծավալումը օգնում էր կենսագործելու գյուղատնտեսության բոլոր ճյուղերը զարգացնելու ծրագիրը։

Անասնաբուծության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ հանրային տնտեսության տվյալ ճյուղը կոլտնտեսություններում զարգացնելու մասին միութենական կառավարության և կուսակցության Կենտկոմի 1939 թ. հուլիսի 8-ի որոշումը[39]։ Հայաստանի կուսակցական կազմակերպությունները քաղաքական-բացատրական և կազմակերպական լայն աշխատանք ծավալեցին այդ որոշման նշանակությունը կոլտնտեսային աշխատավորներին հասցնելու և նրա կենսագործումը ապահովելու համար։ Հանրապետության կառավարությունը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը մշակեցին առանձին ձեռնարկումներ[40], որոնք հավանության արժանացան ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1939 թ. օգոստոսյան պլենումի կողմից[41]։

Պատերազմի նախօրյակին Հայաստանի գյուղատնտեսության մեջ ձեռնարկված մյուս խոշոր միջոցառումը վերաբերում է խաղողագործության և այգեգործության զարգացմանը։

1939 թ. նոյեմբերին ՀՍԽՀ Ժողկոմխորհին կից Տնտեսական խորհուրդը որոշում ընդունեց կոլտնտեսություններում խաղողի այգիներ անելու մասին, որի համաձայն մշակվեց Հայաստանում 1940—1943 թթ.

---

39 Տե՛ս «Решения партии и правительства по хозяйственным вопросам», т. 2, стр. 713—719.

40 Տե՛ս «ՀԽՍՀ որոշումների և կարգադրությունների ժողովածու», 1939, № 1, հոդ. 2։

41 Տե՛ս ՄԱԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 640, թ. 85—89։

անկումների պլանը[42]։ Հայկական ՍՍՀ-ում պաղարտուծությունն ու խաղողագործությունը և տեխնիկական մշակույթները զարգացնելու ձեռնարկումների մասին 1940 թ. սեպտեմբերի 6-ի որոշումով միութենական կառավարությունը և կուսակցության Կենտկոմը հավանություն տվեցին հանրապետության կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, ղեկավար կուսակցական ու սովետական մարմինների նախաձեռնությանը և նախատեսեցին մինչև 1944 թ. վերջը ոռոգելի հողատարածությունները ընդարձակել 54 հազար հեկտարով, 1941—1944 թթ. հիմնել 15 հազար հեկտար խաղողի և 20 հազար հեկտար պաղատու այգիներ, 4 հազար հեկտարով ավելացնել բամբակի, 5,5 հազար հեկտարով ծխախոտի և 2,4 հազար հեկտարով շաքարի ճակնդեղի ցանքատարածությունները։ Այս կապակցությամբ, ինչպես նշվեց վերևում, նախատեսվեց իրականացնել նաև կոլտնտեսային բնակչության վերաբնակեցման լայն միջոցառումներ[43]։ Այս որոշումը, որը վկայում էր Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության և ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության ջերմ հոգատարության մասին, լայն հեռանկարներ էին բացում հանրապետության գյուղատնտեսության զարգացման համար։

Մշակվեցին այդ որոշումը իրագործելու կոնկրետ միջոցառումներ, որոնք արժանացան ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի (1940 թ. հոկտեմբեր)[44] հավանությանը։ Հայրենական պատերազմի պատճառով անհնար դարձավ սույն որոշման կենսագործումը։ Չնայած պատերազմի ստեղծած դժվարություններին, այնուամենայնիվ, հաջողվեց կատարել որոշ աշխատանք, որը, սակայն, դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից։

Սոցիալիստական մրցության ծավալման և առաջավոր փորձի տարածման գործում մեծ նշանակություն ունեցավ Մոսկվայի համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը, որի բացումը տեղի ունեցավ 1939 թ. օգոստոսի 1-ին։ Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսության նվաճումները ներկայացված էին առանձին տաղավարում։

1939 թ. ցուցահանդեսին մասնակցեցին հանրապետության 151 կոլտնտեսություն և սովխոզ, 80 ապրանքային անասնապահական ֆերմա,

---

42 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1940 թ. հունվարի 12։

43 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1940 թ. սեպտեմբերի 15։

44 Տե՛ս ՄԿԻ ՀՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 24, թ. 61—78։

գյուղատնտեսության 1517 առաջավորներ և մասնագետներ[45]։ Սոցիալիստական գյուղատնտեսության առաջավոր փորձին ծանոթանալու համար ցուցահանդեսում եղան հանրապետության հազարավոր կոլտնտեսականներ ու սովխոզների բանվորներ։ Այդ փորձի տարածման հարցի վերաբերյալ հատուկ որոշում ընդունեց ՀԿ(բ)Կ Կենտկոմը[46]։

Աշքի ընկնող նվաճումների և բարձր ցուցանիշների համար Ցուցահանդեսային զլխավոր կոմիտեի որոշմամբ 1939 թ. պարգևատրվեցին առաջին աստիճանի դիպլոմով Հայաստանի ութ և երկրորդ աստիճանի դիպլոմով՝ 35 կոլտնտեսություններ, սովխոզներ և անասնապահական ֆերմաներ[47]։ Լավ աշխատանքի օրինակ ցույց տալու համար նույն կոմիտեի որոշումով Ոսկե մեծ մեդալով պարգևատրվեցին 10 և Ոսկե փոքր մեդալով՝ 18 կոլտնտեսությունների նախագահներ, սովխոզների ու ՄՏԿ-ների դիրեկտորներ, գյուղատնտեսության մասնագետներ, առաջավորներ ու կազմակերպիչներ։ Մի խումբ առաջավորներ ստացան Արծաթե մեծ ու փոքր մեդալներ։ 1937—1938 թթ. բերքի բարձր ցուցանիշների համար Միութենական Գերագույն սովետի նախագահության 1940 թ. փետրվարի 20-ի հրամանագրով Վաղարշապատի կոլտնտեսությունն արժանացավ բարձրագույն պատվի՝ Լենինի շքանշանի, իսկ Դարղալուի (Այգեզարդ) Փարիզի կոմունայի անվան կոլտնտեսությունը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի։

Ավելի մեծ էր գյուղատնտեսական ցուցահանդեսի 1940 թ. մասնակիցների թիվը։ Ցուցահանդեսին մասնակցելու իրավունք ստացան 407 կոլտնտեսություն, 6 սովխոզ 2 մեքենատրակտորային կայան, 5 շրջան, 3995 առաջավորներ։ Բոլոր մասնակիցների թիվը հասնում էր 4562-ի։ Դա 2,7 անգամ ավելի էր նախորդ տարվա համեմատությամբ։ Մոսկվա էքսկուրսիայի մեկնեցին գյուղատնտեսության 1607 աշխատողներ[48]։ Առաջին կարգի դիպլոմ հանձնվեց 6 և երկրորդ կարգի՝ 22 կոլտնտեսությունների, սովխոզների ու ֆերմաների։ Մեծ ոսկե մեդալի արժանացան երկու, Փոքր ոսկե մեդալի՝ 12, Մեծ արծաթե մեդալի՝ 33 և Փոքր արծաթե մեդալի՝ 70 առաջավորներ[49]։

Գյուղատնտեսության զարգացման ասպարեզում ձեռք բերած նվաճումների համար մի մեծ խումբ առաջավոր կոլտնտեսականներ պար-

---

45 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», стр. 91.

46 Տե՛ս ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 28, գ. 27, թ. 124—125։

47 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», стр. 93.

48 Տե՛ս նույն տեղում, էջ 91, 95։

49 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1940 թ. նոյեմբերի 20։

գնատրվեցին Սովետական Հայաստանի 20-ամյա հոբելյանի օրերին։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1940 թ. նոյեմբերի 23-ի հրամանագրով Լենինի շքանշանի արժանացան պտղաբույծ Մակար Հակոբյանը, օղակավարներ Ավետիս Հարությունյանը, Վարդուշ Մելիքյանը, Հրանուշ Միքիթարյանը, կթվորուհի Տատյանա Նովոսելցևան, կոլտնտեսության նախագահ Գուրգեն Բաբաջանյանը, ջրատեխնիկ-ինժեներ Նատալյա Մարտիրոսյանը և ուրիշներ։ Շատերը պարգևատրվեցին Աշխատանքային կարմիր դրոշի և Պատվո նշան շքանշաններով, Աշխատանքային արիության համար և Աշխատանքային գերազանցության համար մեդալներով։

Յուցահանդեսի 1941 թ. մասնակցության պայմաններն ավելի խիստ էին։ Դրա համար պահանջվում էին նախորդ չորս տարիների (1937—1940 թթ.) գյուղատնտեսության նվաճումների բարձր ցուցանիշներ։ Այսպիսի պայմաններում լայն ցուցադրման իրավունք ունեցողների և մասնակիցների թիվը 1939 թ. համեմատությամբ աճեց երեք անգամ, որն ակնբախորեն վկայում է սոցիալիստական գյուղի մեծ վերելքի մասին։ Հանրապետության Ժողկոմսովետի տվյալներով Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակիցների և իրենց հաջողությունները ցուցադրողների թվում էին 451 կոլտնտեսություն, 11 սովխոզ, 11 մեքենատրակտորային կայան, 160 անասնապահական ֆերմա, 21 գիտական հիմնարկ, 6177 առաջավորներ։ Բոլորի թիվը հասնում էր 7300-ի[50]։ Լայն ցուցադրման իրավունքի հայտ էր ներկայացվել նաև ամբողջ Հայաստանի համար։ «Վերջին տարիներս,— ասված է հանրապետության Ժողկոմսովետի համապատասխան որոշման մեջ,— ՀՍՍՀ-ն զգալի հաջողություններ է ձեռք բերել գյուղատնտեսական մշակույթների և մասնավորապես խաղողի, տեխնիկական մշակույթների, շերամապահության բերքատվությունը բարձրացնելու, կոլտնտեսային անասնաբուծության ապրանքային ֆերմաների կոմպլեկտավորման և կոլտնտեսային մասսաների նյութական բարեկեցության բարձրացման ընդգծվառներում»[51]։

Մոսկվայի համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը վերսաին իր դռները բացեց 1941 թ. մայիսի 25-ին։ Միայն առաջին օրը Հայաստանի տաղավար այցելեց 80 հազար մարդ։

Նորանոր խմբեր էին պատրաստվում մեկնելու ցուցահանդես, իսկ մի մասը գտնվում էր Մոսկվայի ճանապարհին, երբ 1941 թ. հունի-

---

50 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1941 թ. մայիսի 18։

51 «ՀՍՍՀ որոշումների և կարգադրությունների ժողովածու», 1941, № 6, հոդ. 18։

սի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրուժ հարձակում գործեց Սովետական Միության վրա։ Ընդհատվեց սովետական ժողովրդի խաղաղ, ստեղծագործական կյանքը։ Նոր պահանջներ ու խնդիրներ դրվեցին նաև սոցիալիստական գյուղի աշխատավորների առջև։ Սովետական գյուղացիությունը բանվոր դասակարգի և մտավորականության հետ միասին ելավ Հայրենական մեծ պատերազմի։

Այսպիսով, պատմական նոր պայմաններում կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը, ղեկավարվելով XVIII համագումարի որոշումներով, իրականացնում էին սոցիալիստական գյուղի սոցիալտնտեսական զարգացման ծրագիրը, որի շնորհիվ նոր վերելք էր ապրելու գյուղատնտեսությունը, իսկ կոլտնտեսային գյուղացիության համար ստեղծվելու էին ունևոր ու կուլտուրական կյանքի պայմաններ։ Սովետական երկիրը առաջընթաց քայլ էր անելու սոցիալիստական հասարակության զարգացման, զարգացած սոցիալիզմին հասնելու ուղղությամբ։ Սակայն պատերազմը ընդհատեց խաղաղ ստեղծագործական աշխատանքի ընթացքը։ Սկսվեց նոր ժամանակաշրջան սովետական ժողովրդի և նրա բաղկացուցիչ մասը կազմող կոլտնտեսային գյուղացիության պատմության մեջ։

* * *

1930-ական թվականները սովետական գյուղի պատմության վճռական փուլերից են։ Այդ տարիներին հին գյուղին փոխարինեց կոլտնտեսային գյուղը, վերացվեց մեր երկրի վերջին և ամենաբազմամարդ շահագործող դասակարգը՝ կուլակությունը, սովետական գյուղացիության բոլոր ազգային ջոկատների կազմում ձևավորվեց նաև Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը։

Գյուղացիության կոոպերացումը, լենինյան կոոպերատիվ պլանի հաղթանակը ուներ համաշխարհային-պատմական նշանակություն։ «Եթե կալվածատերերից հողի բռնագրավումը Հոկտեմբերյան հեղափոխության առաջին քայլն էր գյուղում,— նշել է ՍՄԿԿ XVI համագումարը,— ապա կոլտնտեսություններին անցնելը երկրորդ և ըստ որում վճռական քայլն է, որը ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակության հիմքի կառուցման գործում կարևորագույն էտապն է բնութագրում»[52]։ Գյուղացիության սոցիալիստական կոոպերացումը սոցիալիստական հեղափոխության ամենաբարդ և դժվարին խնդիրներից մեկն էր, որը պատ-

52 «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», III մաս, Երևան, 1955, էջ 15։

մական կարճ ժամանակամիջոցում հաջողությամբ իրականացվեց կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և բանվոր դասակարգի ամենաակտիվ աջակցությամբ։ Նա արմատապես փոխեց մանր գյուղացու դարավոր կացութաձևը, հոգեբանությունը, նրա կյանքի պայմանները։ Գյուղական պրոլետարիատը, չքավոր և միջակ գյուղացիությունը վերափոխվեցին կոլտնտեսային գյուղացիության՝ սոցիալիստական հասարակության դասակարգի։ Իսկ գյուղի շահագործողները (կուլակները) վերացվեցին որպես դասակարգ և, վերադաստիարակվելով, ձուլվեցին սոցիալիստական հասարակության մեջ։ «Սովետական գյուղի անցումը խոշոր սոցիալիստական տնտեսության՝ մեծ հեղափոխություն էր տնտեսական հարաբերությունների մեջ, գյուղացիության կյանքի ամբողջ կացութաձևի մեջ։ Կոլեկտիվացումը գյուղը ընդմիշտ փրկեց կուլակային սարկացումից, դասակարգային շերտավորումից, քայքայումից և աղքատացումից։ Լենինյան կոոպերատիվ պլանի հիման վրա գյուղացիական դարավոր հարցը գտավ իր իսկական լուծումը»[53]։

Կոլտնտեսային կարգը իր ծանր քննությունը բռնեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ Կոլտնտեսությունները և սովխոզները սովետական բանակին ու բնակչությանը ապահովեցին պարենով, իսկ արդյունաբերությանը՝ հումքով։ Բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը, սովետական ամբողջ ժողովուրդը, նրա զինված ուժերը կոփեցին հաղթանակը հիտլերյան ֆաշիզմի նկատմամբ, պաշտպանեցին մեր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը, այն ժամանակ աշխարհում միակ սոցիալիստական պետության գոյությունը։

Բանվոր դասակարգի և գյուղի աշխատավորների ջանքերով, նրանց հերոսական աշխատանքով և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ իրագործվեց սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակը, մեր երկիրը թևակոխեց զարգացած, հասուն սոցիալիզմի ժամանակաշրջանը։ Այժմ գյուղի կյանքում տեղի են ունենում սոցիալ-տնտեսական մեծագույն վերափոխումներ։ Սովետական ժողովուրդը հաջողությամբ կենսագործում է կոմունիզմի կառուցման ծրագիրը։

---

53 «Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը», Երևան, 1961, էջ 15։

Ց Ա Ն Կ Ը Ր

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս Կուլի բեկ 91
Աբրահամյան Ռուբեն 230
Աղատյան Արտաշես 235
Աղատյան Մաքրուհի 244
Աղիդյան Մելուշ 298
Ալավերդյան Ս. 14, 21, 46, 52
Ալավերդյան Սմբատ 299
Ալեքսանյան Բենիամին 267
Ալեքսանյան Կոստյա 93
Ալիև Ադա 223
Ալիև Կուլի օղլի 298
Ադայան Ս. 10
Ամատունի Բարեկեն 88
Ամիրաղյաններ 88
Այվազ 96
Անանյան Սրմեն 93, 191, 234
Անանյան Վ. 231
Անդելինա Պ. 238
Առաքելյան Ա. 231
Առաքելյան Արշակ 244
Առաքելյան 236
Ասլանյան Ե. 226
Ասկյարով Մերդա 265
Ավագյան 191
Ավագյան Գարեգին 244
Ավդալյան Համբարձում 47
Ավետիսյան Նիկոլայ 244
Արտեմյան Վերգինե 244
Արևշատյան Բարդո 244
Ափինյան Երվանդ 244
Աֆրիկյան Գլաիո 233
Բաբայան Հայաստան 240
Բարաչանյան Գուրգեն 280, 307
Բաբուրյան Ավետիք 267
Բաղալյան Սմբատ 245
Բաղամյանց Գ. 91
Բալա Սարգիս 96
Բաղդասարյան Ա. 265
Բաղդասարյան Հրանուշ 298
Բաղիրովա Բաստի 237, 246
Բաղմանյան Ա. 14
Բոգդանով 111
Բրեժնև Լ. Ի. 6, 7, 27, 82, 283, 284, 286
Բուդաղյան Զարեհ 244, 245
Բունիաթյան Հովհաննես 92

Գեղամյան Գ. Մ. 4
Գրիգորյան Սիսակ 244
Գրիգորյան Սրապիոն 223

Դանիելյան Ավագ 223
Դանիլովա Աննա 299
Դաշտոյան Ռ. 269
Դավթյան Ա. 11
Դավթյան Արմենիկ 299
Դավթյան Գ. 12
Դարբինյան Կ. 231
Դարբինյան Կալիփսե 266
Դեմչենկո Մ. 238
Դիմիտրիևա Անաստասիա 230
Դիմիտրով Գեորգի 236, 237

Եղիազարյան Ավետիք 88
Եղիազարյան Արտավազդ 230
Եղիազարյան Ա. 265
Ենոքյան Գրիգոր 244, 245
Եսայան Ա. 11, 93, 158, 171
Եսայան Գ. 184
Երզնկյան Ա. 32, 172

Զադրոժնի 297
Զալեսսկի Մ. 130
Զարարյան Խաչիկ 243

Էնգելս Ֆ. 107

Թամրազյան Մաթևոս 267
Թելման Էռնստ 237
Թովմասյան Երեմ 92
Թորոսյան Գ. 212, 214
Թումանյան Հ. 22

Ժաբինա Տատյանա 223

Իսմայիլ Ռամազան օղլի 214
Իսրայելյան Սարգիս 298
Իվնիցկի Ն. 9, 105, 111, 113

Լենին Վ. Ի. 54, 107, 108, 133, 164, 256, 268, 301
Լոմաշվիլի Գ. 10, 19, 30, 59, 90, 91, 93, 94, 95, 102, 109, 115, 122, 130, 175, 218, 219
Լուկինով Վասիլի 190, 233

Խալեյան Ե. 10
Խալիլով Ա. 231
Խանդելոյան Սահակ 149, 234
Խանջյան Ա. 33, 37, 40, 52, 57, 71, 78, 98, 99, 102, 139, 144, 163, 191, 201, 206, 230, 241
Խաչատրյան Գրիգոր Գևորգի 245
Խաչատրյան Գրիգոր Քերոբի 245
Խարմանդարյան Ս. 265
Խոյեցյան Աղարեկ 92
Խոջաև Ալի 230
Խուդավերդյան Կ. Ս. 4, 265, 271

Մատուրյան Ծատուր 267
Մատուրով Համո 92

Կալաև 242
Կալինին Մ. Ի. 205, 230, 245
Կամարյան Ալեքսան 92
Կասյան Ս. 78
Կարապետյան Անիկ 265
Կարապետյան Կալիխան 267
Կարապետյան Հ. 10, 22
Կարապետյան Միհրան 245
Կարապետյան Սուքիաս 190, 233
Կարապետյան Վահան 297
Կարդաշխան 87
Կիրակոսյան Գայծառ 236
Կոստանյան Հ. 60, 71
Կրաև Մ. 8
Կուրզինյան Ն. 184

Հակեյան Հովան 303
Հակոբյան Արմենակ 92
Հակոբյան Ա. Մ. 4
Հակոբյան Ե. 231
Հակոբյան Մակար 307
Հակոբյան Սերգո 92
Հակոբյան Վարվառա 230
Հակոբյան Վ. 231
Հայրապետյան Ա. 14
Հարությունյան Ավետիս 307
Հարությունյան Գալուստ 93
Հարությունյան Գեղամ 297
Հարությունյան Գրիգոր 251, 274
Հարությունյան Ռուբեն 240
Հարությունյան Ս. 11
Հովհաննիսյան Ամալյա 230
Հովհաննիսյան Գրիգոր 244
Հովհաննիսյան Գվիդոն 92
Հովհաննիսյան Ե. 13, 75, 76, 114, 132, 133
Հովհաննիսյան Հովհաննես 267
Հովհաննիսյան Մովսես 215
Հովսեփյան Վանուշ 244

Ղազախեցյան Վ. 7, 78

Ղազարյան Աղարեկ 149
Ղարիբյան Երվանդ 223
Ղարիբյան Խաչիկ 244

Մահմադ Սամադ օղլի 87
Մամեդով Այդին 267
Մամեդով Յուսուֆ 223
Մամիկոնյան Աբրահամ 47
Մամիկոնյան Վ. 265
Մանուկյան Արամ 240
Մանուկյան Համո 239
Մանուկյան Ոսկան 230
Մարգարյան Ղևոնդ 244
Մարկոսյան Միտյա 92
Մարջանյան Գուրգեն 230, 240, 244
Մարտիրոսյան Ալեքսանդր 93
Մարտիրոսյան Յա. 184
Մարտիրոսյան Նատալյա 307
Մարուխյան Ա. 11
Մարքս Կ. 107
Մելիքբեկյան Հարություն 190
Մելիքյան Վարդուշ 307
Մելիքսեթյան Վ. 10, 22
Մելքոնյան Գուրգեն 297
Մելքումյան Արուս 298
Մեհմի օղլի 91
Միհրան 98
Մինասյան Սմբատ 299
Միրզոյան Արտուշ 87
Միրզոյան 91
Միրզոյան Սերոբ 245
Միրուբ Կարո 96
Մխիթարյան Հրանուշ 307
Մկրտչյան Արզուման 297
Մովսիսյան Աշխեն 299
Մովսիսյան Թանկագին 231, 266
Մովսիսյան Մովսես 92
Մովսիսյան Վազգեն 244
Մուստաֆաև Այվազ Խալիլ օղլի 245
Մուրադյան Անուշ 244
Մուրադյան Արաբս 159, 184
Մուրադյան Երանուհի 298

Յակովլև Յա. 189, 220
Յասոն 89

Նազարյան Մուսայել 93
Նալբանդյան Լևոն 245
Նավասարդյան Վարդուհի 244
Նեմակով Ն. 104
Ներկարարյան Գրիգոր 245
Ներկարարյան Շողեր 299
Նժդեհ 89
Նիկոդոսյան Աշոտ 91
Նովոսելցևա Տատյանա 299, 307

Շահբազյան Հովհաննես 223, 226
Շերոլդաև Բ. Պ. 237
Շեստոպալով Նիկիֆոր 238, 239, 240
Շիդլինսկի Ա. Կ. 90
Շիրվանզադե 191

Չալարյան Դանիել 299
Չապլին 72
Չերնով Մ. 220

Պապյան Մացակ 231, 233—234, 265, 266, 267
Պարուր 96, 98
Պետրոսյան Եղիա 223
Պետրոսյան Պ. 184, 194
Պետրոսյան Ջավահիր 244
Պողուդին Վ. 8, 104
Պոլյակով Յու. 111, 113
Պողոսյան Ալեքսան 244
Պողոսյան Աղասի 240
Պողոսյան Հ. 11
Պողոսյան Մկրտիչ 47
Պոստիշև Պ. 205

Ջանգոյան Գոգի 265
Ջանունց 94

Ռուստամով Յաղուբ 214

Սահակյան Արտուշ 149
Սահակյան Համբարձում 223, 242
Սահակյան Լևոն 92
Սայադյան Ջավեն 87
Սարատիկյաններ (Սարատիկովներ) 88, 96

Սարգսյան Ա. 94
Սարգսյան Արշակ 93
Սարգսյան Գևորգ 265
Սարգսյան Թորգոմ 87
Սարգսյան Խաչատուր 267
Սարգսյան Ղազար 93
Սարգսյան Ներսես 149
Սարգսյան Ն. 231
Սարգսյան Սահակ 93
Սարգարյան 91
Սաֆարյան Մ. 14
Սինանյան Հովհաննես 92
Սողլյան Սերոբ 244
Ստալին Ի. 24, 62, 104, 107, 205
Ստախանով Ալեքսեյ 238
Ստեփանյան Նազիկ 299
Ստեփանյան 190
Սուզդալցևա Տատյանա 223
Սուլեյմանով Սուլեյման 190, 233
Սուքիասյան Լյուդվիգ 244

Վարդանյան Արմենակ 230
Վարդանյան Ենոք 190
Վարդանյան Հ. 12, 76, 132, 167
Վարդանյան Սերգո (Տոկար Սերգո) 47, 156, 230
Վելիբեկով Ռ. 184
Վիլցան Մ. 9, 111, 113, 209
Վորոշիլով Կ. 242

Տեր-Գարրիելյան Ս. 191, 265
Տիտանյան Ան. 11
Տոնոյան Արամ 47
Տոնոյան Ս. 231
Տոնոյան Սպիրիդոն 244
Տրապեզնիկով Ս. 250
Տրիֆոնով Ի. 9, 131, 132, 218

Փանոսյան Վասիլիկա 299

Քամալյան Հարություն 93
Քերբալայ Իսմայիլ 97
Քոչարյան Զավեն 237

Օհանյան Անտոն 303
Օհանջանյան Բ. 11, 176, 177
Օստրովսկի Վ. 9

Ֆրիչ Մարիա 299

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արխաղիա 62
Աղյաման (Գնտաշեն) 223, 230
Աղարակ (Ստեփանավանի շրջանում) 195
Աղարակ (Աշտարակի շրջանում) 202
Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ադրբեջան) 32, 34, 43, 44, 60, 62, 92, 95, 105, 175, 237, 238, 242, 244, 246, 299, 300
Աղատաշեն 234
Աղիգրեկով, շրջան 253, 289
Աղով-Սևծովյան Երկրամաս 235
Ալագյազ 282
Ալագյազ, շրջան 289, 296
Ալայազի ձոր 89, 101
Ալավերդի 44, 144, 209, 282
Ալավերդի, շրջան 48, 88, 121, 153, 202, 214, 227, 230, 238, 261
Ալավերդու ՄՏԿ 298
Ալափարս, շրջան 97, 119, 147
Ալեքսանդրովկա 85
Ալեքսանդրովկա (Մարսիմ Գորկի) 195
Ալիգոտա 157
Ալիքուշակ (Քուչակ) 190
Ալուչալու (Արծվանիստ) 227—228
Ախալքյան 90, 202
Ախտա 202
Ախտա, շրջան 92, 167, 196—201, 233, 238, 252, 253, 295
Ախտայի ՄՏԿ 162, 184, 267, 297
Աղաձոր (Կաթնաղբյուր) 168
Աղավնատուն 148, 300
Աղբարա 37
Աղբարա (Ամասիա), շրջան 45, 50, 53, 87, 114—116, 125, 153, 163, 199
Աղբաշ 87
Աղբուլաղ (Ադրբեջանում), շրջան 238
Աղբուլաղ (Լուսաղբյուր) 303
Աղին (Անի), շրջան 47
Աղինի ՄՏԿ 298
Աղխաշ 99
Աղջաբլա 148, 166
Աղջաղլաղ 166
Աղջարխ (Արևիկ) 21
Աղուդի 302
Ամասիա 187
Ամասիա, շրջան 229, 238
Այլանլու 213
Այղրի լճի ջրհան կայան 301
Այնալի (Դավթաշեն) 227
Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ) 86
Անդեղակոթ 302
Անդրկովկասի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն (Անդրկովկաս) 10, 22—24, 28, 29, 32, 43, 59, 62, 63, 72, 75, 77, 79, 80, 82, 91, 92, 112—114, 116, 122, 133, 143, 151, 160, 163, 164, 166, 170—172, 175, 176, 182, 183, 190, 216—218, 233—238, 243, 248, 251, 300
Աշտարակ 47, 156, 230, 292, 297
Աշտարակ, շրջան 31, 53, 56, 60, 65, 66, 74, 88, 97, 115, 117, 118, 148, 156, 168, 169, 192, 202, 229
Աչաջուր 190
Ապարան 42
Ապարան, շրջան 87,, 97, 99, 199, 200, 206, 229, 253, 291, 295
Աջարիա 62

Ամինջ 228
Աստղաձոր 243
Ավշար 212
Արագածի սովխոզ 37
Արաղդայան 37
Արալբխ (Երազգավորս) 231
Արալբխ (Վերին Քյոլանլու) 230
Արարատի ՄՏԿ 245
Արարատյան դաշտ 162
Արրաթ 166, 194, 234, 236
Արդվի 230
Արզնի 228
Արևելք (Սովետական Արևելք) 17
Արթիզ (Դեղարդ) 195
Արթիկ 47, 214, 282
Արթիկ, շրջան 214, 233, 299
Արթիկի ՄՏԿ 231
Արմթլու (Տանձուտ) 21, 298
Արշալույս 227, 231, 241, 243
Արտաշատ, 227, 241, 243
Արտաշատի (Ղաների) ջրանցք 290, 301
Արփա (Արենի) 99, 100, 101, 170
Արփավար 166, 227
Աքորի 98, 99

Բաղարշայ 37
Բաղաջիկ 227
Բամբակաշատ 230
Բաշգյուղ (Ակունք) 168
Բաշկիչեթի (Վրաստանում), շրջան 238
Բաշբենդ (Դեղարքունիք) 212
Բասարգեչար (Վարդենիս), 126, 145, 167, 242
Բասարգեչար (Վարդենիս), շրջան 30, 31, 52, 88, 92, 95, 113, 116, 119, 125, 147, 153, 157, 168, 169, 196—200, 206, 212, 214, 224, 229, 231, 245, 252, 265, 266, 298
Բասարգեչարի ջրանցք 303
Բարանա (Նոյեմբերյան) 88, 93
Բարու 41, 43—46, 93
Բեղաբլու 168
Բեղենչուկ (Միջին-Վոլգյան երկրամասում), շրջան 190
Բեղենչուկի ՄՏԿ 234
Բեջազլու (Ոստան) 156, 183
Բերդ 195
Բերքաշատ 187
Իբրալի (Լանջառ) 228
Բնունիս 202
Բոգդանովկա (Վրաստանում), շրջան 238, 300
Բորժոմ (Վրաստանում), շրջան 238
Բորիսովկա 302
Բորչալու (Վրաստանում), շրջան 238
Բռուն 245
Բուրյաթ—Մոնղոլիա 60

Դեղադիր 228
Դեչրլու (Մրգաշատ) 88, 211, 217, 243, 292
Գերմանիա 107, 308
Գիլլի 245
Գյաբուզ (Կապույտ) 202
Գյառնի (Գառնի) 228
Գյառնի (Գառնի), շրջան 69
Գյոգակրուլաղ (Կարճաղբյուր) 224, 245, 266
Գյոգալդարա 147
Գյոգալդարա, ենթաշրջան 88, 92
Գյոլբենդ 230
Գյոմուր 202
Գյոյգմրեթ (Դեղանիստ) 234, 236
Գյուլագարակ 188, 226
Գյուլլի 115
Գյուլլիջա 116
Գնդեվազ 89, 93, 99
Գորիս 42, 93, 275
Գորիս, շրջան 94, 119, 168, 172, 228, 299
Գրամփա 227
Գուրջանի (Վրաստանում), շրջան 238

Դալիչայ, գետ 302
Դալմայի հողեր 290
Դալմայի ջրանցք 290, 301
Դաղստան 60
Դարաղշլաղ 214

Դարղալու (Անաստասավան, այժմ Այդեղարդ) 279, 280, 306
Դավալու (Արարատ) 36, 144
Դավալուի (Արարատի) ՄՏԿ 162
Դարալագյազ, շրջան 29, 31, 69, 84, 88, 89, 91—93, 95—101, 116, 121, 169, 170
Դեմուրչիլար 213
Դիլիջան 42, 282
Դիլիջան, շրջան 90, 93, 126, 155, 168, 190, 228, 229, 238
Դնեպրոպետրովսկ, մարզ 182
Դոզս 148, 166
Դոստլու 88
Դսեզ 212
Դվին 145, 166
Դուզբենդ (Ախուրյան) 47
Դուզբենդ (Ախուրյան), շրջան 19, 30, 31, 45, 47, 60, 64, 97, 114, 118, 125, 158, 301

Եկեղեան (Կոտայք) 168
Եղիին 99, 228
Եղվարդ 212, 297
Եղվարդ, ենթաշրջան 115
Երանոս 166
Երևան 21, 42, 43, 47, 52, 184, 190, 209, 210, 242, 274—277, 280
Երևան, գավառ (օկրուգ) 19—21, 29—33, 36, 45, 49, 52, 53, 55, 56, 60, 66, 73, 84, 108—110, 115—117, 119, 120, 122, 137
Երևանի գյուղական շրջան 290, 291, 296

Զանգեզուր, գավառ (օկրուգ) 36, 53, 55, 73, 77, 87, 89, 90, 93—95, 119, 120, 137, 158, 172, 173
Զանգիբասար 292
Զանգիբասար, շրջան 291, 304
Զոդ 224
Զոդի սովխոզ 36, 37, 95
Զոլսխաչ (Զոլաքար), 223, 227, 242
Զոհրաբլու (Մրգանուշ) 166, 299
Զովաշեն 228
Զուգդիդի (Վրաստանում), շրջան 300

Թալին 194, 227
Թալին, շրջան 29, 31, 67, 69, 88, 96—98, 119, 192, 212, 227, 232, 238, 265
Թալինի ՄՏԿ 298
Թալինի ջրանցք 301
Թափանլի 303
Թիֆլիս 155, 156
Թոխանշալու (Մասիս) 223, 227
Թովուզ 202
Թովուզ (Ադրբեջանում), շրջան 238, 300
Թումանյան (Դսեզ) 292
Թուսկյուլու 149, 157, 167
Թուրքիա 84, 86, 115
Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Թուրքմենստան) 60

Իլմազլու 84
Իջևան 42, 275
Իջևան, շրջան 51, 60, 64, 84, 88, 93, 96, 120, 121, 168, 199, 212, 238
Իստիսու 202
Իստիսու (Ադրբեջանում) 95
Իրան 98, 115

Լալիգյուղ 212
Լամբալու 37, 88
Լայպցիգ 236
Լենինական 41—44, 47, 50, 88, 209, 210, 274, 275
Լենինական, գավառ (օկրուգ) 19, 31, 36, 45, 50, 53, 55, 60, 73, 84, 120, 137
Լենինական, շրջան 36, 99, 119, 168, 227, 231, 235, 237
Լենինականի ՄՏԿ 162, 184, 230, 231, 236, 240, 244
Լենինականի սովխոզ 37
Լեչան 212
Լիճք 156
Լյուքսեմբուրգ (Վրաստանում), շրջան 300, 301
Լոռի, գավառ (օկրուգ) 31, 36, 45, 52, 53, 55, 60, 73, 84, 96, 117, 119,

120, 137
Լոռու սովխոզ 234

Խաթունարխ 146
Խաչիկ 99, 101
Խարբերդի շրջան 301
Խարկով, մարզ 299
Խզնաուզ (Արագած) 267
Խոստի (Հյուսիսային Օսեթիայում) 242
Խոտան (Խարկովի մարզում), շրջան 299
Խուլիբենդ 87

Նաղկաշեն (Նաղկարեր) 303

Կալինինո 230, 289
Կալինինո, շրջան 213, 299
Կարանաս (Վրաստանում), շրջան 238
Կարճևան 202
Կարմիրգյուղ (Կրասնոսելսկ), շրջան 92, 96, 113, 116, 119, 121, 125
Կեմանց 291
Կենտրոնական Սևահողային մարզ 182
Կիզիրենդ 115
Կիրգիզիա 9, 60
Կիրովական 226, 277, 281, 282
Կիրովական, շրջան 226, 238, 265, 295, 300
Կոթիգեղ (Շավարշավան) 155
Կողբ 88
Կոտայք 66
Կոտայք, շրջան 29, 31. 97, 116, 168, 184, 191, 194, 195, 210, 228, 300, 301, 303
Կրասնոսելսկ, շրջան 252, 300
Կուրթան 226, 245, 299

Հագվի 98, 99
Հակկո 232
Հախում 202
Համամլու (Սպիտակ) 234
Համամլու (Սպիտակ), շրջան 48, 96, 120, 174
№ 1 (Դավիթաշեն) 290—291
№ 2 (Անաստասավան) 291
№ 3 291
№ 4 (Հաղթանակ) 291
Համզաչիման 84, 226, 245
Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Հայաստան) 4—8, 10, 11, 13, 15, 16, 18, 20—24, 28, 30—34, 36, 40, 42—46, 48, 54, 56, 57, 59, 60, 62, 68, 74—78, 81, 82, 85—88, 90,—92, 95, 104, 113, 114, 116, 120—122, 124—126, 131—134, 136, 142—143, 146, 147, 149, 151, 153—155, 157, 159, 162—168, 172—177, 179, 182, 184, 190—193, 195, 196, 199—205, 207—209, 211, 215—220, 223, 224, 226, 228—234, 237—248, 251, 253, 255, 260, 263, 266, 269—272, 275—278, 280, 282, 284, 286, 287, 289—302, 304—308
Հայաստան (նախասովետական) 191, 271, 272
Հայդարբեկ (Սվերդլով) 145
Հայթաղ 148
Հայկական Դյուգյան 188
Հաջիբայրամ 88
Հաջիլար (Մրգաստան) 148, 158
Հաջիղարա (Այգեշատ) 148
Հաջիղարա (Լենինական) 51
Հաջինազար (Կամո, Ախուրյանի շրջանում) 47
Հաջի խալիլ (Նաղկահովիտ) 88
Հաջիխալիլ, շրջան 114
Հասանբենդ (Շատին) 89
Հին Բաշքենդ 98
Հյուսիսային Կովկաս 23, 61, 175, 187, 242, 243
Հյուսիսային Օսեթիա 242
Հոկտեմբերյան 242
Հոկտեմբերյան, շրջան 270, 298, 300
Հոկտեմբերյանի ՄՏԿ 231, 297, 298
Հոկտեմբերյանի սովխոզ 37
Հորիուն 228
Հրազդան, շրջան 19, 29, 31, 60, 64, 66, 69, 71, 116

Զաղիձոր 97
Զորագեսի հիդրոէլեկտրակայան 144
Զորագյուղ 145

Ղազրու (Լանջանիստ) 228
Ղազախ (Ադրբեջանում), շրջան, 238, 300
Ղազախստան 60, 175, 217
Ղալաչա 88
Ղալիաղչի (Հաբիբագյուղ) 223, 303
Ղամարլու (Արտաշատ) 36, 42, 280, 282
Ղամարլու (Արտաշատ), շրջան 18, 19, 29, 31, 47, 53, 60, 65, 74, 75, 87, 116, 117, 124, 134, 152, 156, 159, 165, 166, 175, 183, 191, 194, 210, 216, 217, 227, 228, 231, 233, 234, 242, 265, 266, 279, 280, 291, 298, 299, 304
Ղամարլուի (Արտաշատի) ՄՏԿ 162, 236, 267
Ղամշկուտ (Եղեգնուտ) 51
Ղաշդա (Վարդաշատ) 228
Ղասմալի (Գետափի) 214
Ղարաբաղլար, շրջան 289—291, 296
Ղարա Խուս 84
Ղարալ (Կաթնաջուր) 303
Ղարախաչ 228, 265
Ղարաղալա 84
Ղարաղոյուն (Ազիզլու) 212, 227, 243, 267
Ղարանամաղ (Նոր-Յոլ) 116
Ղարաչանլիա (Ադիբեկով) 223
Ղարաբիլիսա (Կիրովական) 42, 50, 144—145, 167, 209, 275, 289
Ղարաբիլիսա (Կիրովական), շրջան 47, 48, 51, 120, 153, 168, 174, 184, 234, 236—238
Ղարաբիլիսա (Ապարանի շրջանում) 87
Ղարաբիլիսա (Սիսիանի շրջանում) 42
Ղափան 93, 144, 173, 274, 282, 290
Ղափան, շրջան 94, 96, 119, 156, 168, 172, 175, 202, 228, 291, 296
Ղզլզոշ (Ղուկասյան), շրջան 45, 50, 115, 119
Ղըղզալա 195
Ղլիճաթաղ (Սուսեր) 212
Ղշլաղ (Ժդանով, այժմ Կիրովական քաղաքի կազմում) 51, 234, 243
Ղշլաղ (Նոր Բայազետի շրջանում) 190, 202
Ղոնիարբուլաղ (Կաթնաղբյուր) 195
Ղոխբուլաղ (Ակունք) 168, 224
Ղրղի 202
Ղրմզլու (Կարմրաշեն) 227
Ղուլալի (Այգեձոր) 202
Ղուկասյան, շրջան 300
Ղուշչի (Կեչուտ) 89, 99, 202
Ղուսուրողաղ 202
Ղուրդուղուլի 185, 275
Ղուրդուղուլիի (Հոկտեմբերյանի) շրջան 18—21, 29, 31, 35, 36, 42, 49, 53, 56, 60, 65, 71, 74, 75, 88, 116, 117, 121, 126, 131, 134, 139, 143, 152, 156, 163—165, 175, 186, 199, 216, 228, 234, 238

Մաղրա 214
Մախարաձն (Վրաստանում), շրջան 300
Մալե 157
Մալիշկա 89
Մաղարաջուղ 116
Մասիս, շրջան 86
Մարգարա 126
Մարտիրոս 89, 202
Մարտունի 192, 242
Մարտունի, շրջան 92, 116, 119, 125, 167, 168, 196—201, 206, 227, 242, 252, 253, 270, 291, 295, 303
Մարտունու ՄՏԿ 245
Մարտունու տոհմաբուծարան 248
Մելիքգյուղ (Ծաղկավան) 267
Մեծ Շահրիար (Նալբանդյան) 21, 211, 223, 292, 300
Մեծ Վեդի 223
Մեհրաբլու (Վարդաշեն) 166
Մեհրիբան (Կաթնաղբյուր) 227
Մեղրի 42, 202
Մեղրի, շրջան 29, 31, 53, 60, 65, 69,

74, 75, 99, 115, 117, 124, 153, 156, 158, 168, 172, 175, 202, 228
Միլոսա-Կուրագին (Ագոլ-Սեծովյան երկրամասում), շրջան 235—237
Միլոսա-Կուրագինի ՄՏԿ 235, 236
Միկոյան (Եղեկնաձոր), շրջան 13, 228, 253
Միջին Ասիա 113, 175
Միջին-Վոլգյան երկրամաս, 23, 175, 234
Միլյան 227, 298
Մհուր (Բալահովիտ) 168
Մոլդավիա 175
Մոլլա Դյորչա (Արմիկ). շրջան 60, 64, 97, 115, 118, 121
Մոլլա Էյուբլու (Էվլու) 213
Մոլլավերդի 227
Մոսկվա 189, 220, 305—307
Մուղանջուղ 158

Յակուտիա 60
Յաղուբլի (Աղբրիջանում), շրջան 92
Յանցզի սովխոզ 245
Յուվա (Շահումյան) 47, 87, 159, 227, 231

Նախանների 300
Նալրանդ 210, 303
Նալրանդի ջրանցք 303
Նախիջևան 95, 105, 172
Նախիջևանի Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն 62, 89, 93
Նավուր 88, 202, 227
Ներքին Ախտա (Հրազդան) 42
Ներքին Ախտա, շրջան 214
Ներքին Ախտայի ՄՏԿ 239
Ներքին Աղբաշ (Արևշատ) 227
Ներքին Աղդան 155
Ներքին Գյոգալդարա (Վարդենիկ) 230
Ներքին Խաթունարխ 166, 214, 236
Ներքին Նեչրլու 190, 233
Նիկոլաևկա (Կիրով) 195, 214
Նոյեմբերյան, շրջան 300
Նոյեմբերյանի ՄՏԿ 296, 298
Նորագուղ 267
Նորաշեն 188, 189
Նոր Բայազետ 42, 202, 212, 213, 274, 275, 282
Նոր Բայազետ, շրջան 60, 65, 92, 119, 125, 155, 167—169, 196—200, 238, 300

Նոր Կողբ 166
Նորքի ջրանցք 301
Նովո-Մոսկովսկ, շրջան 182

Շահալի (Վահագնի) 51
Շահալի, երկաթուղային կայարան 51
Շահնազար 195, 243, 289, 292
Շամշադին, շրջան 69, 84, 88, 93, 120, 121, 144, 146, 192, 202, 206, 227, 252, 300
Շամշադինի ՄՏԿ 296
Շամուտ 214
Շաքի 202, 302
Շիկահող, ենթաշրջան 156
Շիրակի ջրանցք 301
Շնող 292
Շվանիձոր 202

Ռակեթաս 227

Ջանախչի (Սովետաշեն) 227, 228, 242
Ջիմանբենդ 66, 67
Ջինարի 202
Ջինչին 88, 202
Ջիլչան, գետ 303
Ջիվա 89, 99
Ջիվինլի 115
Ջորաթան 202

Պարնի 303
Պոկրովկա (Կույբիշև) 194
Պողոսբիլիա 90, 126
Պոլոժին 61

Ջանահմեդ (Դյունաշլի) 95
Ջանֆիդա 126

Ջաջուռ 47, 210
Ջարխեջ (Կուլբիշև) 190, 228, 267
Ջաֆարապատ (Արզավանդ) 126, 166, 236
Ջաֆարլի 228
Ջերմուկ 101
Ջիլ 224
Ջուլ (Արտավան) 202
Ջուջարենդ 189

Ռահիմարադ 158
Ռանչպար 158
Ռինդ 99
Ռնդամալ (այժմ՝ Հրազդան բաղաքի կազմում), 201, 243
Ռոստով Դոնի վրա 237, 241
Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն (Ռուսաստան) 18, 19, 107, 178

Սամադար 195, 234, 266
Սարատովկա 195, 223
Սարդարապատ (Հոկտեմբեր) 149
Սարդարապատի ՄՏԿ 35, 36, 162, 184, 186, 195, 211, 235
Սարդարապատի դաշտ 29, 28, 35
Սարվանլար 86, 227
Սարուխան 91, 155, 202
Սևան, գավառ (օկրուգ) 31, 36, 52, 53, 55, 60, 73, 84, 92, 95, 113, 116, 119, 120, 125, 137, 147
Սևանի ավազանի շրջաններ 196—198
Սևանա լիճ 301
Սիսավան (Սիսիան) 97, 223, 302
Սիսիան, շրջան 42, 94, 172, 184, 202, 252
Սիսիանի ՄՏԿ 231
Սիսիանի ջրանցք 302
Սխարշիկ 227
Սոլնցև (Կենտրոնական Սևահողային մարզում) շրջան 182
Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ՍՍՀՄ) 5, 8, 9, 14, 22, 23, 25, 26, 35, 60, 61, 65, 75, 77, 81, 105, 107, 112, 122, 125, 131, 161, 175, 178—181, 190, 205, 207, 208, 215, 216, 219, 220, 222, 223, 230—232, 236, 244, 257, 266, 278, 284—287, 308
Սովուզրուպաղ 84
Սպանդարյան 302
Սպիտակ, շրջան 303
Սպիտակի ՄՏԿ 296, 298
Ստալինգրադ 241
Ստալինգրադի երկրամաս 240
Ստարոշչերբինսկի ՄՏԿ 297
Ստեփանավան 42, 43, 125, 194, 213, 231, 233, 234, 238, 265, 267, 274, 275, 282
Ստեփանավան, շրջան 31, 50—53, 60, 65, 74, 96, 117, 121, 163, 168, 183, 185, 188, 192, 199, 206, 212, 214, 226, 233, 234, 238, 248, 289, 299
Ստեփանավանի ՄՏԿ 162, 184, 188
Ստեփանավանի տոհմարուծարան 248
Ստորին Հրազդանի ջրանցք 301
Ստորին-Վոլգյան երկրամաս 23, 175
Սուլթանրեկ (Բարձրունի) 99
Սուրովիկինի ՄՏԿ (Ստալինգրադի երկրամասում) 240

Վարդավար 157
Վաղաշեն 228
Վաղարշապատ (Էջմիածին) 36, 41, 42, 194, 242, 271, 282, 306
Վաղարշապատ, շրջան 19, 29, 31, 53, 56, 60, 65, 74, 75, 115—117, 120, 126, 134, 148, 152, 158, 165, 166, 169, 175, 185, 187, 193, 195, 199, 213, 216, 227, 231, 234, 236, 242, 244, 266, 291, 298, 300
Վաղարշապատի ՄՏԿ 162, 184, 211, 298
Վանք 157
Վարդաբլուր 189, 195, 226
Վեդի 212, 227
Վեդի, շրջան 29, 31, 53, 66, 67, 69, 71, 84, 88, 90—92, 94, 95, 97, 99, 126, 134, 152, 153, 165, 166, 169,

206, 216, 228, 234, 241—242, 265, 295
Վեդիի ՄՏԿ 184
Վեդիի սովխոզ 37
Վերին Ադյաման (Վերին Գետաշեն) 228
Վերին Ախտա 212
Վերին Կարմիրաղբյուր 52
Վերին Խաթունարխ 148, 166, 223
Վորոնցովկա (Կալինինո) 36, 188, 190, 194, 213, 233,234
Վրացական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Վրաստան) 32, 43, 44, 59, 60, 62, 159, 175, 179, 238, 242, 244, 300

Տոլորս 202

Ուզ 90
Ուզբեկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ուզբեկստան) 60, 302
Ուզունթալա 84
Ուզունլար (Օձուն) 36, 44, 155, 156, 227, 245, 292
Ուլուխանլու (Մասիս) 36
Ուլուխանլուի (Մասիսի) ՄՏԿ 149, 184, 234
Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ուկրաինա) 9, 175, 299
Ուռուտ 183, 299
Ուրալ 175

Փաշալու (Ազիզբեկով) 99, 202
Փաշալու, ենթաշրջան 93
Փաշալու (Ազիզբեկով), շրջան 101, 199, 200, 202, 206
Փարաքար 126, 230, 234, 266, 291
Փիրմիքան 227
Փոքր Ղարաքիլիսա (Ազատան) 235, 237, 243, 267
Փոքր Շահրիար (Նոր Արտագես) 21
Փոքր Սարդարապատի ջրանցք 301

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5

Բաժին առաջին.— Կոլտնտեսային շարժման մեծ վերելքը (1929—1932 թթ.) 16

Գլուխ առաջին.—Գյուղի սոցիալիստական վերափոխման արագացումը (1929—1930 թթ.) 16

1. Մասսայական կոլեկտիվացման նախապատրաստումը։ Բանվոր դասակարգի օգնությունը աշխատավոր գյուղացիությանը . . . 16

2. Կոլեկտիվացման տեմպի արագացումը։ Պայքարը «ձախ» խոտորումների դեմ 49

Գլուխ երկրորդ.—Դասակարգային պայքարի սրումը։ Անցումը կուլակների որպես դասակարգի վերացման քաղաքականությանը 83

1. Դասակարգային պայքարի սրումը 83

2. Կուլակության դեմ հարձակման ուժեղացումը։ Անցումը կուլակների որպես դասակարգի վերացման քաղաքականությանը . . . 103

Գլուխ երրորդ.—Գյուղի հասարակական-քաղաքական կյանքը 135

1. Սովետների գործունեության վերակառուցումը և աշխուժացումը . . 135

2. Կուսակցական-կոմերիտական և հասարակական կազմակերպությունների գործունեությունը 140

Գլուխ չորրորդ.—Բնկում գյուղատնտեսության կոլեկտիվացման ընթացքում (1930 թ. երկրորդ կես—1931 թ.) 151

1. Կոլեկտիվացման նոր վերելքի կազմակերպումը 151

2. Համատարած կոլեկտիվացման սկիզբը 160

Բաժին երկրորդ.—Կոլտնտեսային գյուղացիության ձևավորման ավարտումը (1933—1937 թթ.) 180

Գլուխ հինգերորդ.—Պայքարը կոլտնտեսությունների ամրապնդման համար (1933—1934 թթ.) 180

1. Քաղաքականները և կոլտնտեսությունների ամրապնդումը։ Հարվածային կոլտնտեսականների հանրապետական I համագումարը . . 180

2. Օգնություն լեռնային շրջանների գյուղացիներին 196

Գլուխ վեցերորդ.—Գյուղատնտեսության կոլեկտիվացման ավարտումը . . 205

1. Կոլեկտիվացումն ավարտելու համար 205

2. Կոլտնտեսային արտելի օրինակելի կանոնադրությունը։ Համատարած կոլեկտիվացման ծավալումը և ավարտումը 220

3. Կոլտնտեսային գյուղի արտադրական վերելքը՝ սոցիալիստական մրցության ծավալումը 232
Գլուխ յոթերորդ.—Կոլտնտեսային գյուղի մաքառական և կուլտուրական վերելքը 255
1. Հասարակական-քաղաքական կյանքը 255
2. Կուլտուրական հեղափոխության հաղթանակը 268
Վերջաբանի փոխարեն (գյուղը Հայրենական պատերազմի նախօրյակին) . . 285
Յանկեր 310

ԼՈՒՍԱՎՈՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՈՒՆՉԱՄԵՆՏԱՅԻ ԳՐՍԳԱՆ
ԱԿԱԴԵՄԻՍԻ

ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱՀԱՊԵՏԻ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ
ВЛАДИМИР НАГАПЕТОВИЧ КАЗАХЕЦЯН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԴՅՈՒՂԱՏԻՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (1929—1937)

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ИБ № 62

Հրատարակչական խմբագիր
Ժ. Մ. ԱԴԱՆՑ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐՄԱԿԱԼՅԱՆ
Նկարիչ Հ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Սրբագրիչ Հ. Գ. ՆԱԹԱՆՅԱՆ

ՎՖ 02210 Պատվեր 570 Հրատ. 4807 Տպաքանակ 1000
Հանձնված է շարվածքի 31. 05. 1978 թ.: Ստորագրված է տպագրության. 21. 12. 1978 թ.:
Տպագրական 20,25 մամուլ, պայման. 18,83 մամուլ, հրատ. 16,85 մամուլ:
Թուղթ № 1, 60×84 1/16: Գինը 2 ռ. 70 կ.:
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР, 375019, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան
Типография Издательства АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24.

15

//

II
Ա 61580